

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



Հայաստան-Երևան ՀԱՐՑՆԵՐ

ISSN 1829-4030

1 (25)

ԵՐԵՎԱՆ - 2022

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

YEREVAN STATE UNIVERSITY
INSTITUTE FOR ARMENIAN STUDIES

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՆԴԵՍ

1 (25)

ARMENOLOGICAL ISSUES

BULLETIN

ԵՐԵՎԱՆ – YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ – YSU PRESS
2022

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ
Հրատարակվում է 2014 թվականից

The Bulletin is published thrice a year.
It has been published since 2014

Գլխավոր խմբագիր՝ **Միմոնյան Ա. Հ.**

Խմբագրական խորհուրդ՝

*Ավետիսյան Լ. Վ. (գլխավոր
խմբագրի տեղակալ)*
Ավետիսյան Յու. Ս.
Գասպարյան Ս. Բ.
Դեդեյան Ժ. (Ֆրանսիա)
Եղիազարյան Ա. Ս.
Ջաքարյան Ս. Ա.
Հարությունյան Ս.
Հայրունի Ա. Ն.
Ղարիբյան Ա. Ա.

Մանուկյան Ս. Ա.
Մելքոնյան Ռ. Հ.
Մինասյան Է. Գ.
Մխիթարյան Վ. Գ.
Պետրոսյան Վ. Ս.
*Պողոսյան Վ. Ա. (պատասխա-
նատու քարտուղար)*
Սահակյան Լ. Ս.
Սայադով Ս. Ս. (Ռուսաստան)

Editor-in-chief: **Simonyan A.**

Editorial Board:

*Avetisyan L. (Deputy editor-
in-chief)*
Avetisyan Y.
Dedeyan G. (France)
Gasparyan S.
Gharibyan A.
Haroutyunian S.
Hayruni A.
Manukyan S.
Melkonyan R.

Minasyan E.
Mkhitryan V.
Petrosyan V.
*Poghosyan V. (Executive
Secretary)*
Sahakyan L.
Sayadov S. (Russia)
Yeghiazaryan A.
Zakaryan S.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՄԻՆԵ ՄԱՀԱԿՅԱՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆՈՒՄ ՊԱՀՎՈՂ «ՏԵՂԵԿԱՏՈՒ ԴԻՎԱՆԻ»՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ «ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ»¹

Բանալի բառեր – Հայոց ցեղասպանություն, Հայկական հարց, Երուսաղեմ, Կ. Պոլիս, «Տեղեկատու դիվան», Ձավեն պատրիարք, Գրիգոր Դավիթյան, Կ. Նուրյան, Գ. Գերգերյան, վավերագիր, արխիվ, ցուցակագրում

Արխիվի թվայնացման և ցուցակագրման աշխատանքները

Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության ուսումնասիրության համար աղբյուրագիտական և պատմաքաղաքական բացառիկ արժեք է ներկայացնում Երուսաղեմի Հայոց պատրիարքարանում պահվող մեծածավալ և դեռևս քիչ ուսումնասիրված արխիվը:

Երուսաղեմի Հայոց պատրիարք Տ. Նուրհան արք. Մանուկյանի բարձր հովանավորությամբ, ինչպես նաև ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի նախաձեռնությամբ տողերիս հեղինակը և օսմանագետ Անի Մարգարյանը 2017 և 2018 թթ. չորս այցելությունների ընթացքում (շուրջ երեք ամիս) թվայնացրել են 11 տուփերում պահվող արխիվային վավերագրերը²: Այս ամբողջ հավաքածուն պատրիարք Նուրհան արք. Մանուկյանի անձնական վերահսկողության ներքո է³:

Շուրջ ութ տասնամյակ այս արխիվը հասու չի եղել գիտական լայն շրջանակներին, այնտեղ ուսումնասիրություններ են կատարել մասնագետներից շատ քչերը՝ գիտական շրջանառության մեջ դնելով կարևոր վավերագրեր, սակայն բազմաթիվ էջեր դեռևս կարոտ են հետազոտության և արժևորման: Արխիվի եզակի արժեքի, վավերագրերի բնույթի, ինչպես նաև

¹ Սույն ուսումնասիրությունն իրականացվել է նաև ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ-ի «Երուսաղեմի Հայոց պատրիարքարանում պահվող Հայոց ցեղասպանության վավերագրերի քննական ուսումնասիրությունը» թեմայի շրջանակներում (ծածկագիր 20TTSH-042):

² Արխիվում իրականացված աշխատանքների մասին տե՛ս «Երուսաղեմի Հայոց ցեղասպանության արխիվը Օսմանեան կայսրության ցեղասպան քաղաքականության մի վկայարան», հարցազրոյց բանասիրական գիտ. թեկնածու, թուրքագետ Լուսինե Սահակեանի հետ, վարեց Նանե Աւագեան // «Ասպարեզ», 2020, մայիսի 8 (www.asbarez.am/369367/Երուսաղեմի-Հայոց-Ցեղասպանութեան-Ա/):

³ Պատրիարքարանում այս աշխատանքներին օժանդակելու համար շնորհակալություն ենք հայտնում Կորյուն վարդապետ Բաղդասարյանին, Պողոս սարկավազ Շահանյանին, Գուրգեն սարկավազ Բաղդասարյանին (այժմ՝ Տեր Տաճատ), Հովհաննես սարկավազ Պետրոսյանին:

թվայնացման անհրաժեշտության մասին ժամանակին շեշտել է Պետրոս Տեր-Մաթոսյանը¹: Արխիվը նաև չի ցուցակագրվել, ուստի այն այս առումով մնացել է անմշակ:

Այդ պատճառով գիտական գրականության մեջ այս արխիվի վավերագրերին հղումները տարբեր են և թերի: Յուցակագրման աշխատանքները, որոնք նախաձեռնել է Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, կօգնեն ավելի մեծ թվով մասնագետների հասու դառնալու այս բացառիկ հավաքածուի բովանդակությանը և առավել հեշտությամբ գտնելու անհրաժեշտ վավերագիրը: Փաստաթղթերի՝ նմանատիպ արխիվների սկզբունքով մշակված և ամրագրված մեր ցուցակագրումը կօգնի նաև ուսումնասիրություններում ամբողջական հղումներ կատարելու: Հակառակ դեպքում հղումների տարատեսակությունն անխուսափելիորեն առաջացնում է խառնաշփոթ, քանի որ դուրս են մնում վավերագրերի, տուփերի կամ թղթապանակների համարները:

Մեր մասնագիտական խումբը ձեռնարկել է արխիվի ցուցակագրման ծանր ու պատասխանատու աշխատանքը, և առաջիկայում հրատարակության կհանձնվի ուսումնասիրության առաջին հատորը: Յուցակագրելով յուրաքանչյուր վավերագիր՝ արձանագրվում է թղթապանակի համարը, բովանդակությունը, ստեղծման տարեթիվը, ուղարկողի և ստացողի կամ հեղինակի տվյալները, լեզուն, վիճակը, թղթի տեսակը, էջերի քանակը և այլ մանրամասներ՝ ըստ փաստաթղթի: Այսինքն՝ յուրաքանչյուր վավերագրի համար ստեղծվում է առանձին գիտական անձնագիր, որն օրենքով ամրագրում է նրա գոյությունը և իսկությունը:

Ներկայացնում ենք մեկ նմուշ ցուցակագրումից՝

Տուփ 1, թղթապանակ «Ի (ի)», վավերագիր Հ⁴⁰ Ի 131-170 (Ի 138-ը բացակայում է)

Ցուցակ

«A Primary List of the Chief Instigators and Perpetrators of the Armenian Massacres and Deportations of the Years of the Great War. (1914-1918)»

(«Մեծ պատերազմի տարիներին հայկական կոտորածների և տեղահանությունների գլխավոր հրահրողների և գործադրողների հիմնական ցուցակ (1914-1918)»)

Վավերագրում տրվում են 1915 թ. Ադրիանուպոլսի, Ռոդոստոյի, Չորլուի, Հայրաբոլուի, Իզմիթի, Այդընի, Բուրսայի, Գեմլեիքի, Չենգիլերի, Քիրմասթիի, Մըխալըչի (Միխալիչ), Ինեգյուլի, Բիլեջիկի, Աֆյոն Գարահիսարի, Էսքիշեհիրի, Կաստամոնուի, Չանքըրըի, Բոլուի, Անկարայի, Բալահիսարի, Հայմանայի, Էվերեքի, Բողազլիանի, Յոզգաթի, Քըրշեհիրի, Քեսքին Մադենի, Կեսարիայի, Սիվրի Հիսարի, Կոնիայի, Կոնիա-Էրեղլիի, Ազիզիեի, Բուրդուրի, Աքշեհիրի վարչական ղեկավարների (նահանգապետ և գավառապետ),

¹ Տե՛ս **Der Matossian B.**, The Genocide Archives of the Armenian Patriarchate of Jerusalem // “Armenian Review”, 2011, Vol. 52, № 3-4 (Fall-Winter), p. 19-32:

զինվորական հրամանատարների, սպաների, դատավորների, քաղաքացիական պաշտոնյաների, իթթիհատական կարևոր անձանց, կառավարիչների, «Emval-i metruke»-ի («Լքյալ գույքի» հանձնաժողովի) անդամների, ժանդարմերիայի, ոստիկանության պետերի, գլխավոր չեթենների անունները, որոնք իրականացրել և մասնակցել են հայերի տեղահանությանը, կոտորածներին և կոդոպուտին:

Նշվում է նաև այդ գործողություններին մասնակից կրոնական պաշտոնյաների, Հատուկ կազմակերպության (Teshkilati Mahsouse – Teşkilat-i Mahsuse) խմբավորման ղեկավարների անվանացանկը:

Վլրգ.¹ տեսակ՝ Անվանացուցակ, մեքենագիր, սև թանաք, սև և վարդագույն մտոգր.² համարակալում: Վիճակ՝ լավ: Լեզու՝ անգլ.: 41 էջ:

Երուսաղեմի Հայոց պատրիարքարանում պահվող արխիվի ստեղծման ծանր աշխատանքներն իրականացրել է Կ. Պոլսի պատրիարքարանի «Տեղեկատու դիվանը»: Այն իր գործունեությունը ծավալել է պատմական ու աշխարհաքաղաքական առճակատումների մի բարդ ժամանակաշրջանում, որի կործանարար կիզակետում էր հայտնվել հայ ժողովուրդը: Հայոց ցեղասպանության տարիներին այդպիսի բարդ ու վտանգավոր պայմաններում նման հսկայածավալ վավերագրերի հավաքման աշխատանքը մեծ անձնվիրություն և հերոսություն էր պահանջում:

«Տեղեկատու դիվանի» կազմավորումը, գործառույթներն ու նպատակները

«Տեղեկատու դիվանի» ստեղծումը սերտորեն առնչվում է Կ. Պոլսի Հայոց պատրիարք Զավեն արք. Տեր-Եղիայանի անվան հետ: 1913-1916 և 1919-1922 թվականներին՝ հայ ժողովրդի համար ծանրագույն և ճակատագրական այդ ժամանակաշրջանում, նա ստանձնում է Կ. Պոլսի պատրիարքական աթոռը: Իր հուշերում նա գրում է. «Կ. Պոլսյ Պատրիարքներուն մէջ չէ եղած ուրիշ մը, որ ինձի նման փոփոխական բախտ մը ունեցած եւ փառքի ու անկման օրեր տեսած ըլլայ»³: Պատրիարքն իր կառավարման առաջին իսկ տարիներից գրեթե ամեն օր Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից, Կիլիկիայից և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ շրջաններից ստանում էր նամակներ, թղթակցություններ, խնդրագրեր՝ լի ահազանգերով ու ողբերգական պատմություններով: Նամակագիրներն աղերսագին օգնություն էին խնդրում՝ նկարագրելով հայության օրհասական վիճակը:

Զավեն պատրիարքը բազմաթիվ նախաձեռնությունների հետ տեղեկագրեր, հանցագործությունների մասին ծանուցումներ է գրել օսմանյան

¹ Վլրգ.-վավերագիր:

² Մտոգր.-մատիտագիր:

³ **Զաւեն Արքեպս.**, Պատրիարքական յուշերս, վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947, Նախաբան:

իշխանություններին և մեծ տերությունների կառավարություններին, ուղիներ փնտրել՝ փրկելու հայ ժողովրդին բնաջնջումից: Սակայն, 1915 թ. Հայոց ցեղասպանությանը զուգահեռ, 1916 թ. օսմանյան իշխանությունները լուծարում են Կ. Պոլսի պատրիարքությունը՝ պատրիարքին արտերկրվ Բաղդադ:

Այդ ապօրինի ծրագրի իրականացմանն իր «նպաստն» է բերել երիտթուրք պարագլուխներից Ջեմալ փաշան: Օսմանյան կառավարությունը, ստեղծված իրավիճակն օգտագործելով, ծանր պայմանների մեջ դնելով Կիլիկիայի Սահակ Բ Խափայան կաթողիկոսին, Ջեմալ փաշայի միջնորդությամբ պարտադրաբար ստորագրել է տալիս թուրք կառավարության առաջ քաշած պայմանները¹: Սա այն Ջեմալ փաշան է, որին վերջին շրջանում փորձ է արվում ներկայացնել հայերի և Հայոց ցեղասպանության հարցում մյուս երիտթուրք պարագլուխ ոճրագործներից դրական առումով տարբերվող մոտեցմամբ: Այդ համաձայնությունը նպատակ էր հետապնդում ամբողջովին թուլացնել ու ոչնչացնել հայոց հոգևոր կառույցները²: Հայ ժողովրդի մեծագույն մասին բնաջնջելուց հետո երիտթուրք պարագլուխները տարատեսակ որոշումներով համակարգված ձգտում էին հայկական կառույցները վերջնականապես ոչնչացնել, նաև սրբել հայկականության յուրաքանչյուր հետք: Այդ ծրագրված գործողություններից էր նաև 1916 թ. տեղանունների թուրքացման վերաբերյալ էնվեր փաշայի հրամանագիրը³:

Գրիգոր Գերգերյանը, անդրադառնալով Ջավեն արք. Տեր-Եղիայանի արքարին, գրում է, որ Դեր-Ջորի մյութասարըֆ (կառավարիչ) Սալիհ Ջեֆի բեյը, որը կազմակերպել էր շուրջ 200.000 հայերի սպանությունը⁴, ուստիկանապետ Մուսթաֆա բեյի ու նրա օգնական Բեդրի բեյի հետ ծրագրել էր Բաղդատ տանող ճանապարհին կազմակերպել պատրիարքի սպանությունը,

¹ Գ. Գերգերյանը, այդ մասին խոսելով, ներկայացնում է Սահակ կաթողիկոսին առաջադրված ծանրագույն պայմանները. «ա. Ամբողջովին խզել յարաբերությունները Էջմիածնի հետ: բ. Ջնջել Հայկական սահմանադրությունը եւ հրատարակել նոր կանոնագիր մը պատրաստուած թուրք արդարութեան նախարարութեան կողմէ: գ. Ջնջել Երուսաղէմի եւ Պոլսոյ հայ պատրիարքությունները, ինչպէս նաեւ Կիլիկիոյ եւ Ադրբայճանի կաթողիկոսությունները: դ. Երկու պատրիարքական եւ երկու կաթողիկոսական այթոնները միացուելով Սահակ Խապայեան կ'ըլլար Կաթողիկոս-Պատրիարք Օսմանեան Պետութեան Հայերուն, որոնք արդէն կ'իսովին բնաջնջուած էին: Կաթողիկոս-Պատրիարքը պիտի բնակէր Երուսաղէմ Ս. Յակոբի Վանքը եւ փոխանորդ պիտի ունենար Պոլիս» (**Գրիկեր**, Եռգղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, Նիւ Եորք, 1980, էջ 69-70): Ըստ այդ համաձայնության՝ Սահակ Բ կաթողիկոսը նշանակվում է կաթողիկոս-պատրիարք, իսկ Գարրիել եպ. Ջնախիրճյանը՝ Կ. Պոլսում նրա տեղապահ:

² Այս համաձայնության ծանրագույն հետևանքներին և այլ մանրամասների անդրադարձել է Բյուզանդ Եղիայանը (տե՛ս **Եղիայեան Բ.**, Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս-Լիբանան, 1975, էջ 57-66):

³ Էնվերի այդ հրամանագիրը տե՛ս **Sahakyan L.**, Turkification of the Toponyms in the Ottoman Empire and the Republic of Turkey, Montreal, 2011, p. 14-15 (եռալեզու՝ անգլերէն, հայերէն, ռուսերէն):

⁴ Տե՛ս **Անտոնյան Ա.**, Մեծ ոճիրը, Երևան, 1990, էջ 56:

որը հանձնարարված էր իրականացնել ոստիկանապետի օգնականին: Նախատեսվում էր հարձակվել պատրիարքի կառքի վրա և սպանել նրան, սակայն Անա գյուղավանում տեղի քայմաքանն ընդդիմանում է, և պատրիարքը փրկվում է¹:

1918 թ. հոկտեմբերի 30-ին Անտանտի երկրների և Օսմանյան կայսրության միջև կնքված Մուդրոսի զինադադարից հետո՝ նոյեմբերի 11-ին, բժիշկ Գրիգոր Դավիթյանի ջանքերով վերահաստատվում է 1916 թ. ջնջված հայոց սահմանադրությունը: Անգլիական զորքերը մտնում են Բաղդատ, և Ջավեն պատրիարքը վերադառնում է Կ. Պոլիս՝ իր պաշտոնին²: 1919 թ. փետրվարի 19-ին հասնելով Գում Գափու՝ նա իր ամբողջ ջանքերը ներդնում է փրկելու Հայոց ցեղասպանությունը վերապրած Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Օսմանյան կայսրության այլ բնակավայրերի հայերի վերջին բեկորները:

Պատրիարքի անմիջական հովանու ներքո ստեղծվում են «Հայ որբախնամ ընկերություն», «Հայ Տարագրելոց կեդրոնական յանձնաժողով» ու «Հայ Կարմիր խաչ»³ կազմակերպությունները: 1919 թ. օգոստոսի 17-ին Քաղաքական ժողովի նիստի որոշմամբ կազմավորվում է նաև «Տեղեկատու դիվանը», որը պետք է հավաքեր փաստեր հայերի ժողովրդագրական վիճակի, նրանց հալածանքների, կոտորածների, տեղահանությունների և բռնագրավված ունեցվածքի մասին: Ինչպես գրում է Ջավեն պատրիարքը, «Արդ, դեսպանատանց ուղղեալ գրություններու պատրաստութիւնը, ինչպէս նաև անոնց կողմէ պահանջուած զանազան տեղեկութիւնները հայթայթելու, եւ Համազգային Խորհուրդի քարտուղարութիւնը կատարելու և այլնի համար հարկ տեսնուեցաւ ստեղծել նոր դիւան մը որ կոչուեցաւ Տեղեկատու դիւան»⁴:

«Տեղեկատու դիվանի» գլխավոր հսկողությունը կամ «վերին տնօրինությունը»⁵ ստանձնում է բժիշկ Գրիգոր Դավիթյանը⁶: Այս անձնուրաց գործչին

¹ Գրիկեր, նշվ. աշխ., էջ 69:

² Նույն տեղում, էջ 70:

³ Առաջին այս երկու կազմակերպությունները 1919 թ. փետրվարի 28-ին միավորվեցին, և ստեղծվեց «Հայ Ազգային խնամատարությունը», իսկ «Հայ կարմիր խաչը» իր գոյությունը պահպանեց որպես միջազգային «Կարմիր խաչի» անդամ: 1919 թ. սեպտեմբերի սկզբին, ըստ Ազգային Երեսփոխանական ժողովի ընդունած օրենքի, յուրաքանչյուր հայ պարտավոր էր իր նյութական կարողության չափով «Հայրենիքի տուրք» վճարել՝ հոգալու համար կարիքավոր հայերի հոգսերը: Պատրիարքը նշում է, որ այս տուրքից գրեթե ոչ մի խուսափող չի եղել, անգամ շատերը պատրաստ էին իրենց կարողությունից ավելի շատ գումարներ տալու (տե՛ս **Ջաւէն Արքէպս.**, նշվ. աշխ., էջ 280):

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 302:

⁵ Երուսաղեմի Հայոց պատրիարքարան, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության արխիվ (այսուհետև՝ ԵՀՊ ՀՀՀՅԱ), տուփ 1, թղթապանակ M360, վավերագիր Հ⁴ Բ 900-Բ903:

⁶ Բժիշկ, հասարակական-քաղաքական հայտնի գործիչ Գրիգոր Դավիթյանը ծնվել է 1866 թ. Սեբաստիայում, սովորել Կ. Պոլսի Ռոբերտ քոլեջում, 1885-1888 թթ. Փարիզում մասնակցել է բժշկական համալսարանի դասընթացներին: 1895 թ. Կ. Պոլիսում նա զբաղվել է հանրանվեր աշխատանքներով՝ անդամակցելով Բերայի Աղքատախնամին՝ որպես բժիշկ-ատենապետ, Բերայի

եր պատկանում դիվանի ստեղծման գաղափարը և կազմավորումը: Անգամ իր հրաժարականից հետո Դավիթյանը շարունակում է հսկել դիվանի աշխատանքները:

1920 թ. հայերեն վավերագրերի պատասխանատու է նշանակվում Արշակ Ալպոյաճյանը¹: Վերջինիս պետք է օգնեին Ջորա Ջորայանը, Ասատուր Նավարյանը, իսկ արխիվի վարիչ Կարապետ Նուրյանը ստանձնում է ֆրանսերեն և անգլերեն վավերագրերի հավաքման պատասխանատվությունը²: Ավելի ուշ դիվանի աշխատանքներում ընդգրկվում է Առաքել Չաքրյանը՝ որպես որբահավաքության հարցերի պատասխանատու: Դիվանի բյուջեն 1921 թ. ամսական 2000 թուրքական ոսկի էր³:

Չավեն պատրիարքը, կանխատեսելով Կ. Պոլիս քեմալականների մուտքը, արխիվում հավաքված 24 հաստափոր ծրարները 1922 թ. նոյեմբերին ուղարկում է Մանչեստր⁴՝ ի պահ տալով Գրիգորիս եպս. Բալաքյանին⁵: Նույն թվականի դեկտեմբերի 9-ին թողնելով պատրիարքական աթոռը՝ նա ստիպված հեռանում է Թուրքիայից: Որոշ ժամանակ մնում է Լառնակայում (Կիպրոս), 1926 թ. տեղափոխվում Եգիպտոս, իսկ 1927 թ. մարտի 16-ին հաստատվում Բադրատում⁶: 1927 թ. Գրիգորիս Բալաքյանը, ընտրվելով Մարսելի Հայոց հոգևոր

ազգային վարժարանների հոգաբարձության ու թաղական խորհրդին: 1908-1921 թթ. դարձել է Ազգային հիվանդանոցի բժշկապետ և Ազգային Կենտրոնական վարժարանի հոգաբարձուների ժողովի անդամ: 1911-1912 թթ. մասնակցել է Կ. Պոլսի Հայ բժշկական միության հիմնադրմանը: 1908-1914 թթ. վարել է Ազգային Կենտրոնական վարժարանի խնամակալության, իսկ 1913 թ. Քաղաքական ժողովի ատենապետի պաշտոնը: 1915 թ. աքտորից ազատվել է հրաշքով: Մեծ դեր է ունեցել զինադադարից հետո Ազգային Սահմանադրության վերահաստատման հարցում: 1919 թ. նշանակվել է Քաղաքական ժողովի ատենապետ, սակայն տարաձայնությունների պատճառով 1919 թ. հունիսին հրաժարվել այդ պաշտոնից: Նա նաև Քաղաքական ժողովի արտաքին հարաբերությունների պատասխանատուն էր: Նրա նախաձեռնությամբ է ստեղծվում Տեղեկատու դիվանը: Իր հասարակական գործունեության վերջին փուլում մասնակցում է Ազգային Խնամատարության աշխատանքներին: 1924 թ. նա մահացել է Ֆրանսիայում (տե՛ս Հայ հանրագիտակ, խմբագրեց՝ Հ. Մկրտիչ Վրդ. Պոտուրեան, գիրք Դ, Պուքրեշ, 1939, էջ 608-609):

¹ Բանասեր, հրապարակագիր Արշակ Ալպոյաճյանը ծնվել է Կ. Պոլսում 1879 թ. հունիսի 7-ին, սովորել Բերբերյան վարժարանում, ապա Կենտրոնական վարժարանում: 1908-1918 թթ. «Բիզանդիոն» թերթում զբաղեցրել է վարչական պաշտոն: 1915-1922 թթ. դասանավաղել է Բերայի Եսայան վարժարանում, իսկ 1919-1922 թթ. եղել է նաև պատրիարքարանի «Տեղեկատու դիվանի» տնօրենը: Հունաստանում ուսուցչությամբ է զբաղվել Քորֆուի «Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի» որբանոցում: 1923 թ. նա դասավանդել է Կահիրեի Գալուստյան վարժարանում: 1926-1935 թթ. Կահիրեի Ազգային առաջնորդարանի դիվանապետն էր: 1936 թ. խմբագրել է «Ազատ միտք» օրաթերթը, հեղինակել է բազմաթիվ գրքեր և հոդվածներ (տե՛ս Հայ հանրագիտակ, խմբագրեց Հ. Մկրտիչ Վարդ. Պոտուրեան, գիրք Բ, Պուքրեշ, 1938, էջ 71-72): Մահացել է 1962 թ. (տե՛ս Կահիրեում Հայերեն համառոտ հանրագիտարան, հ. 1, Երևան, 1990, էջ 96):

² **Զաւէն Արքեպս.**, նշվ. աշխ., էջ 302:

³ Նույն տեղում:

⁴ **Գրիկեր.** նշվ. աշխ., էջ 70:

⁵ **Զաւէն Արքեպս.**, նշվ. աշխ., էջ 303:

⁶ **Գրիկեր.** նշվ. աշխ., էջ 70:

առաջնորդ, արխիվն իր հետ տանում է Ֆրանսիա¹: 1938 թ. Չավեն պատրիարքի խնդրանքով Բալաքյան սրբազանն այս թղթածրարներն ուղարկում է Երուսաղեմի Հայոց պատրիարք Տ. Թորգոմ արք. Գուշակյանին: Նույն թվականին Չավեն պատրիարքը մեկնում է Երուսաղեմ և մեծ ոգևորություն է ապրում՝ տեսնելով արխիվի բազմալեզու, հազարավոր էջերից բաղկացած թղթածրարներն անվնաս²: 1938 թ. ի վեր՝ Հայկական հարցին և Հայոց ցեղասպանությանը վերաբերող արխիվը պահվում է Երուսաղեմի Հայոց պատրիարքարանում:

Այս արխիվում է պահվում Ազգային պատրիարքարանի «Տեղեկատու դիվանի» վարիչ Կարապետ Նուրյանի³ «Պատրիարքարանի Տեղեկատու դիվան»⁴ վերնագրով տեղեկագիրը, որն առավել համապարփակ է ներկայացնում «Տեղեկատու դիվանի» գործառույթները, կատարված աշխատանքի ահռելի ծավալն ու նպատակները: Կ. Նուրյանը գրում է, որ Գ. Դավիթյանը, որին Քաղաքական ժողովը «Տեղեկատու դիվանը» կազմակերպելու և վարելու պաշտոն էր տվել, ներկայացրել է դիվանի տեղեկագիրը և հաշիվները: Այս ամենին ծանոթանալուց հետո Նուրյանն իր իսկ քննության արդյունքներն ու տեսակետներն առաջարկներով հանձնում է Քաղաքական ժողովի ուշադրությանը⁵:

«Տեղեկատու դիվանի» վարիչ Կարապետ Նուրյանի տեղեկագիրը

Անդրադառնալով «Տեղեկատու դիվանի» գործունեությանը՝ Չավեն

¹ Նշենք, որ արխիվի բոլոր վավերագրերի վրա՝ վերևից աջ անկյունում, դրված է Մարսելի Հայոց առաջնորդարանի կնիքը: Այս արխիվի մի մասը պահվում է Փարիզի Նուբարյան գրադարանում (www.bnulibrary.org/index.php/hy-am/archives-hy/les-archives-du-patriarcat-d-istanbul-hy):

² **Չավեն Արքեպս.**, նշվ. աշխ., էջ 303:

³ Կարապետ Նուրյանը ծնվել է 1878 թ. մայիսի 28-ին Կ. Պոլսում, սովորել Faur-ի, ապա Ղալաթիո կայսերական լիցեյում և ավարտել այն 1897 թ.: Երկու տարի տնտեսագիտություն է ուսանել Մանչեստրի Վիկտորիա համալսարանում: 1900 թ. Փարիզում հետևել է բժշկության դասընթացների, ապա տեղափոխվել Ամերիկա՝ ուսանելով երկրագործություն: Որպես երկրաբան՝ իր առաջին աշխատանքներն իրականացրել է Չմյունխայում (1906-1907): 1907-1908 թթ. անգլիական կառավարությունը նրան պաշտոն է տվել Սուդանում՝ կառուցուկի մշակությունը տարածելու գործում: Որպես օսմանյան կառավարության երկրագործական պատվիրակ՝ 1909-1911 թթ. մեկնել է ԱՄՆ, ապա՝ 1912-1913 թթ. Բրազիլիա: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին այլ հայ պաշտոնյաների հետ նա ևս ազատվում է պաշտոնից, բայց 1916 թ. գահաժառանգ Աբդուլ Մեջիդը նրան նշանակում է երկրագործական խորհրդական: Ջինադադարից հետո նա նվիրվում է Կ. Պոլսի պատրիարքարանի աշխատանքներին: 1920 թ. ընտրվում է Քաղաքական ժողովի անդամ և պատրիարքարանի «Տեղեկատու դիվանի» վարիչ, հրատարակում է «La Renaissance» թերթը: 1922 թ. քննալականների՝ Կ. Պոլսի գրավումից հետո Նուրյանն անցնում է Եգիպտոս, ապա՝ Երուսաղեմ, որտեղ պատրիարք Եղիշե արք. Դուրյանը նրան հրավիրում է ստանձնելու Ս. Աթոռի դիվանապետի պաշտոնը, որը նա իրականացնում է մինչև իր կյանքի վերջը՝ 1940 թ.՝ մեծ ներդրում ունենալով դիվանի պատշաճ կանոնավորման գործում: Նուրյանը փայլուն տիրապետում էր հայերենին, ֆրանսերենին, անգլերենին, թուրքերենին և հունարենին (տե՛ս Կարապետ Յ. Նուրեան 1878-1940 // «Միոն», Երուսաղեմ, ապրիլ 1940, էջ 111-112):

⁴ Տե՛ս ԵՀՊ ՀՀՀՅԱ, տուփ 1, թղթապանակ M360, վավերագիր Հ⁴⁰ Բ 900-Բ 902:

⁵ Նույն տեղում, վավերագիր Հ⁴⁰ Բ 900ա (էջ 1):

պատրիարքը, հատվածաբար ներկայացնելով Կ. Նուրյանի տեղեկագիրը, նշում է. «Կարապետ Նուրեան, որ Պատրիարքին կողմէ ընտրուած եւ 1920 Յունիս 29ին Ազգ. Ժողովի կողմէ վաւերացուած Քաղ. Ժողովի անդամ ընտրուած էր, նոյն Դիւանին մասին տեղեկագիր մը ներկայացուցած է, որմէ կը քաղեմ հետեւեալ քանի մը հատուածները, որոնք լիովին կը բացատրեն Տեղեկատու Դիւանին կատարած դերը: Դիւանին կատարած աշխատութիւնները կը թուէ Կ. Նուրեան»¹:

Նուրյանն առաջարկների ձևով մանրամասնում է դիվանի ստեղծման կարևորությունն ու հիմնական գործառնությունները: Այդ տեղեկագրի «Կազմութիւն եւ նպատակ» հատվածում հիշվում է. «Պատրիարքարանի կազմակերպութիւնը իր ուղղակի և անուղղակի հասոյթներով, իր վարչական և ընտրական ներկայացուցչական դրութեամբ, վարչական մարմիններով կը ներկայացնէ իսկապէս պետական կազմակերպութիւն մը: Չկրնար մտածուիլ որ Քաղ. Ժողովը նախարարութեան մը նման գործառնութիւններ ունենալով հանդերձ չունենար դիւանատուն մը, որ պատրաստ ըլլար զայն լուսաբանելու ընթացիկ ինտրոց համար հաւաքելով և կեդրոնացնելով հոն Հայոց մասին բոլոր քաղաքական, տնտեսական, ընկերաբանական ծանօթութիւնները: Այս պէտքը զգալի էր մասնաւորապէս 1863 էն սկսեալ և միայն զայն կը լրացնէր Ազգ. Քաղ. Ժողովը 1919 Օգոստոսին որոշելով այսպիսի դիւանի մը կազմութիւնը»²: Գրում է նաև, որ նախապէս նման աշխատանքներ կատարվում էին «օրուան պահանջին համեմատ Յանձնաժողովներով կամ մասնաւոր կերպով մը: Արդիւնքները աստ անդ ցրուած կը մնան և այս արժէքաւոր վաւերագիրները հաւաքելու գործը կը կազմէ հիմա Տեղեկատու Դիւանին ամենէն դժուարին աշխատութիւններէն մէկը»: Նա նաև ավելացնում է. «Դիւանի կազմութիւնը սոսկ Ազգային նախաձեռնութեամբ չէ եղած: Հարկ դատուած է կազմել այս դիւանը վասնզի զինադադարէն յետոյ Պատրիարքարանը ամենօրեայ յարաբերութեան մէջ էր Դաշնակից Բարձր Գոմիսիւրութեան»³ հետ»⁴:



«Տեղեկատու դիվանը» Քաղաքական ժողովի կառույցներից մեկն էր և իր ներքին կանոնադրությամբ հսկողության ու պատասխանատվության էր ենթարկվում այն անդամի կողմից, որին վստահված էին Քաղաքական ժողովի աշխատանքների կարևոր մաս կազմող արտաքին հարաբերությունները⁵:

Այդ անդամը Գրիգոր Դավիթյանն էր: Նա ակտիվ մասնակցում էր նաև բրիտանական Բարձր հանձնակատարության Հայ-հունական բաժանմունքի

¹ Կ. Նուրյանի տեղեկագիրը հատվածաբար տեղ է գտել Զավեն պատրիարքի հուշերում: Տե՛ս **Զավեն Արքեպս.**, նշվ. աշխ., էջ 304:

² ԵՀՊ ՀՀՀՅԱ, տուփ 1, թղթապանակ M360, վավերագիր Հ^մ p 900ա (էջ1):

³ Գոմիսիւրութիւն (Կոմիսարություն) – Բարձր հանձնակատարություն:

⁴ ԵՀՊ ՀՀՀՅԱ, տուփ 1, թղթապանակ M360, վավերագիր Հ^մ p 900ա (էջ 1):

⁵ Նոյն տեղում, վավերագիր Հ^մ p 900ա (էջ 1-2):

յուրաքանչյուր նիստին¹: «Տեղեկատու դիվանն» ուներ իր կարմիր կնիքը:

Նշենք, որ Քաղաքական ժողովի բուն գործառույթը կանոնակարգված էր դեռևս 1863 թ. Հայոց ազգային սահմանադրության մեջ. «Իւր պարտաւորութիւնք են Ազգին բարեկարգութեան և յառաջադիմութեան մտադրութիւն և փոյթ ունենալ, իր տեսչութեան տակ գտնուող Խորհրդոց կողմէն մատուցուած ազգօգուտ առաջարկութիւնները ուշադրութեամբ քննել, և անոնց կարևորութիւնը յայտնուելէն ետքը՝ հաստատել կամ գործադրութեան արգելքները բառնալու ջանք ընել»²: Նույն սահմանադրությամբ հաստատված «Պատրիարքական դիվանատունը»³ պատերազմի ընթացքում նյութական սղության պատճառով սահմանափակել էր իր աշխատանքները և չունեք միջոցներ՝ կատարելու վավերագրերի հավաքչական ու թարգմանական բնույթի առավել ընդգրկուն աշխատանք: Ուստի կենսական է դառնում «Տեղեկատու դիվանի» հիմնումը⁴: («Տեղեկատու դիվանը» չպետք է շփոթել 1918 թ. նոյեմբերի 15-ին Եղիշե Դուրյան սրբազանի նախագահությամբ կազմված «Հայ Տարագրելոց Տեղեկատվութեան Դիւան» մարմնի հետ»⁵:

¹ ԵՀՊ ՀՀՀՑԱ, տուփ 1, թղթապանակ M360, վավերագիր Հ⁴Պ Բ 902 (էջ 5):

² Ազգային Սահմանադրութիւն Հայոց, Նիզամնամէի Միլլէթի Էրմէնիան, 1863, հոդ. 41, էջ 28: Տե՛ս նաև Ազգային Սահմանադրութիւն Հայոց, Նիզամնամէի Միլլէթի Էրմէնիան, Արտատպեալ ի Գահիրէ, 1901, հոդ. 41, էջ 31:

³ Ըստ 1863 թ. Ազգային սահմանադրության 13-րդ հոդվածի՝ նախատեսվում էր պատրիարքարանում դիվանատուն հաստատել ազգային հարցերին վերաբերող գրությունների համար: Այն պետք է բաղկացած լիներ երեք գրասենյակից. ա) թղթակցության գրասենյակ, որը պետք է զբաղվեր պատրիարքարան ուղարկված և պատրիարքարանից դուրս եկած գրություններով: Բ) Արձանագրության գրասենյակ, որը պետք է զբաղվեր Ազգային ժողովի և Խորհուրդների վերաբերյալ թղթերի կարգավորումով: Գ) Ազգահամարի գրասենյակ, որը պետք է զբաղվեր հայերի ծննդյան, ամուսնության, մկրտության և մահվան փաստաթղթավորումով (տե՛ս Ազգային Սահմանադրութիւն Հայոց, հոդ. 13, էջ 20):

⁴ **Զաւէն Արքեպս.**, նշվ. աշխ, էջ 301-302:

⁵ Հայ ազգային խնամատարության կենտրոնական վարչության ընդհանուր տնօրեն Մաթթեոս Մ. Էպլիդաթյանը հաղորդում է, որ Ազգային Խնամատարության կազմավորումից հետո «Տեղեկատվության դիվանը» ներգրավվում է վերջինիս կազմում: 1919 թ. փետրվարի 28-ին Քաղաքական ժողովի ատենապետ տիար Բժիշկ Դավիթյանը հայտարարում է, որ Հայ ազգային խնամատարությունը վերջնականապես կազմված է «Տարագրելոց» և «Որբախնամ» մարմինների միացումով: «Տեղեկատվության դիվանը» Տարագրելոց / Տարագրյալների, Որբերի, Առողջապահական, Համարակալության, Թղթակցության և մամուլի, Վիճակագրության, Մթերապահության դիվանների հետ կազմում էր Ազգային խնամատարության բաժիններից մեկը: Այս դիվանն ուներ պետ և օգնական քարտուղար, 15 օրը մեկ թերթի տեսքով հրատարակում էր տեղեկատու ցուցակ, հարյուրավոր փնտրվողների և փնտրողների ցանկեր՝ վերջիններիս հասցեներով, ինչպես նաև գտնվողների անուններն ու հասցեները: Տեղեկատու այս թերթը կախվում էր Կ. Պոլսի բոլոր եկեղեցիներում, ուղարկվում էր գավառներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետություն, Ռուսաստանի տարբեր քաղաքներ, Եգիպտոս, Կիպրոս, Ֆրանսիա, Անգլիա, Իտալիա, Հոլանդիա, Բելգիա, Հունաստան, Ռումինիա, Բուլղարիա և ԱՄՆ: Իր գործունեության առաջին վեցամսյա շրջանում դիվանը հավաքել է 36.000 վերապրող հայերի անուններ, գտել 1000-ից ավելի անհետացածների: Սկսած 1919 թ. մայիսի 15-ից՝ այն զբաղվում էր նաև վնասների հատուցման հարցերով

Տեղեկագրի «Աշխատութիւն» հատվածում Նուրյանը մեկնաբանում է «Տեղեկատու դիվանի» ծրագրված ուսումնասիրություններն ու աշխատանքները՝ դրանք դասակարգելով¹։

1. *Զինադադարից հետո Թուրքիայի ընթացքը հայոց հանդեպ*

Կ. Նուրյանը նշում է, որ դիվանի աշխատանքներում մեծ տեղ էր հատկացված պարտադիր ու կարևոր հետևյալ գործերին. 300 տեղեկագիր է պատրաստվել և ներկայացվել Բարձր կոմիսարներին (հանձնակատարներ)։ Հայաստանի Հանրապետությունն ու Ազգային պատվիրակությունը ևս տեղեկացված են զինադադարից հետո հայերի հանդեպ թուրքերի բոլոր հարձակումների մասին։ 292 այլ տեղեկագրերով ձեռք են բերվել անհրաժեշտ փաստացի վավերագրերը՝ տեղահանության հեղինակների և նրանց գործած «քաղաքական չարիքների» մասին, որոնց թուրքերը ձգտում են արդարացնել և ազատել պատասխանատվությունից։ Բրիտանական Բարձր հանձնակատարության Հույն-հայկական բաժնի նիստերում դոկ. Դավիթյանի և պ. Չաքրյանի ներկայացրած տեղեկությունները քննել է պատրիարքարանը։ «Այսպես նշանակելի ծառայութիւն մատուցուած է Ազգային Դատին, ինչպէս կը հաստատեն այդ ժողովին արձանագրութիւնները»²։

2. *Ջարդեր և տեղահանություններ*

Հրատարակելու նպատակով դիվանը հավաքում է ջարդերի և տեղահանությունների վերաբերյալ ստուգված և «հաւատարիմ վկայութեանց վրայ» հիմնված տեղեկություններ։ Հայկական խնդրի թեմայով դիվանը հրատարակել է Կեսարիայի ու Տրապիզոնի ջարդերի մասին երկու գիրք՝ տարածելով տեղի համակիր բոլոր շրջանակներում և Եվրոպայում։ Պատրաստվում է նաև հայ կղերական նահատակների մասին մի գործ ևս մամուլին հանձնելու համար։ Դիվանն իր հավաքած վավերագրերը խմբագրում է և մի ուսումնասիրություն պատրաստում Հունաց պատրիարքարանի «Սև գրքի»³ հիման վրա, որը պետք է լիներ պատրիարքարանի պաշտոնական հրատարակությունը 1915-1918 թթ. ջարդերի և տեղահանությունների մասին։

3. *Վիճակագրություն*

Դիվանը, բոլոր տեղեկագրերից, պատրիարքարանի վիճակագրությունից և այլ նյութերից քաղվածքներ անելով, պատրաստում է պատերազմի սկզբում պատրիարքարանի թեմերի իրական վիճակը, այն է՝ յուրաքանչյուր

(տե՛ս **Էպիդաթեան Մ. Մ.**, Ազգային խնամատարութիւն. ընդհանուր տեղեկագիր առաջին վեցամսեայ 1 մայիս 1919-31 հոկտեմբեր 1919, Անթիլիաս-Լիբանան, 1985, էջ 91-92)։

¹ ԵՃՊ ՀՀՀՅԱ, տուփ 1, թղթապանակ M360, վավերագիր Հ⁴⁰ Բ 900ա (էջ 1)։ Համեմատիր՝ **Զաւէն Արքեպս.**, նշվ. աշխ., էջ 304-305։

² Վավերագիր Հ⁴⁰ Բ 900բ (էջ 2)։

³ Տե՛ս *Μαύρη Βίβλος: Διωγμών και Μαρτυρίων του εν Τουρκία Ελληνισμού 1914-1918* գրքի անգլերեն թարգմանությունը՝ Greek Patriarchate, Persecution of the Greek in Turkey 1914-1918, Constantinople, 1919, 156 p., Oecumenical Patriarchate, The Black Book of the Sufferings of the Greek People in Turkey from the Armistice to the End of 1920, Constantinople, 1920, 175 p.

առաջնորդության, եկեղեցիների, վանքերի, դպրոցների, ազգային սեփականության և բնակչության թվերը ներկայացնող մի հավաքածու: Նշում է, որ նման պաշտոնական հրատարկության արժեքն անվիճելի է ազգային վնասների հատուցման տեսանկյունից: Առաջին հատորը ներկայացնում է Կասթամոնուի, Պրուսայի (Բուրսա), Բալըքեսիրի, Բանդըրմայի և Իզմիրի (Զմյուրնիա) առաջնորդարանների տվյալները:

4. *Հայաստանի մասին տեղեկություններ*

Դիվանը հավաքում է ազգային քարոզչությունը շահագրգռող յուրաքանչյուր գործ: Բազամացրել և տարածել է Հայաստանին վերաբերող երկրագործական տեղեկագիրը: Հայ երկրագործական միության նախագահ Կ. Նուրյանից այդ տեղեկագիրը պահանջել էր գորավար Հարբոդը¹ Հայաստան կատարած իր առաքելության ընթացքում: Դիվանը նաև զբաղվում է հայկական հողի հանքային հարստության մասին ուսումնասիրություն հրատարակելու խնդրով: Մի շարք շահեկան գրքույկներ է պատրաստել Արևելքի քաղաքակրթության վրա հայերի դերի մասին: Այդ շարքի առաջին հրատարկությունը «Les Arméniens et l'imprimerie» («Հայերը և տպագրությունը»)² գրքույկն է:

5. *Վավերագրերի հավաքում և Մատենադարան*

Այս հատվածում Նուրյանը տեղեկացնում է, որ դիվանն ուսումնասիրության համար հավաքում և դասավորում է հայերի հասարակական, քաղաքական կյանքին վերաբերող բոլոր շահեկան վավերագրերը: Հայկական ընկերություններն ու պաշտոնական մարմինները հավաքել և դասավորել են 600-ից ավելի տեղեկագրեր, վիճակագրություններ և այլ վավերագրեր: Դիվանն ունի նաև հայերին վերաբերող գործերից կազմված Մատենադարան, որին ավելացել է ևս 7800 հատոր, հիմնականում՝ Հրանդ Ասատուրի և Թեոդիկի ազգային բովանդակությամբ «մատենադարանները», որոնց պահպանությունը վստահված է դիվանին:

6. *Ազգային արխիվ*

Այս հատվածում Նուրյանը հաղորդում է, որ պատրիարքարանի արխիվը պահվում է վատ պայմաններում, վտանգված է և ենթակա կորստի: Ուստի «Տեղեկատու դիվանը» առաջարկում է այդ արխիվը դասավորել ուսումնասիրության համար և պահել Բերայի Ս. Երրորդություն եկեղեցու պահարանում: Ազգային վարչությունը հաստատել է Քաղաքական ժողովի՝ պահարանը հարդարելու և մեկ արխիվագետ նշանակելու հրամանը:

7. Նուրյանը նշում է, որ խնայողության պատճառով «La Renaissance»³

¹ Հայաստանի մանդատը ստանձնելու ԱՄՆ-ի մտադրության նպատակով Փարիզի հաշտության խորհրդաժողովի՝ 1919 թ. մարտի 20-ի որոշմամբ Ամերիկայի կառավարությունը գորավար Ջեյմս Հարբոդին գործուղում է Հայաստան և Մերձավոր Արևելք:

² Les Arméniens et l'imprimerie. Etudes sur la civilisation arménienne, Kéchichian Fils, Stamboul, 1920, 70 p.

³ Ֆրանսերեն այս թերթը սկսել է հրատարակվել 1918 թ., և ամբողջ հավաքածուն պահվում է Նուրբայան գրադարանում (տե՛ս Նուրբայան գրադարանի կայքէջը www.bnulibrary.org/)

թերթի փակումով պատրիարքարանը զրկվել է ազգային խնդիրներն օտար լեզվով պաշտպանող լրագրից: Նա գրում է, որ ժամանակն է հետևել հունական առաջարկներին՝ միավորվելով պաշտպանել երկու ազգերի շահերը հասարակական մեկ օրգանում: Հույներն արդեն այդ նպատակով մի լրագիր են հովանավորում: Իրենց խնդրած համեստ նպաստն այդ գործի համար 250 օսմանյան լիրա է: «Տեղեկատու դիվանի» այդպիսի ձեռնարկը կունենա դրական արձագանք հունական և անգլիական շրջանակներում՝ շատ օգտակար լինելով ազգային հարցի համար, պաշտպանելով փոքրամասնություններին վնասների հատուցման և այլ խնդիրներում: Տեղեկագրի «Ելևմտական» հատվածում նշվում է, որ «Տեղեկատու դիվանին» հատկացված է ամսական 410 օսմանյան լիրայի վարկ: Նուրյանը ներկայացնում է 1919-1920 թթ. ծախսերի հաշվետվությունը՝ խնդրելով, որ Քաղաքական ժողովը բարձրացնի դիվանի ամսական վարկը մինչև 700 օսմանյան լիրայի: Նշում է նաև, որ դիվանը, լինելով համազգային շահերին նվիրված կազմակերպություն, պետք է կցել Ելևմտական հանձնաժողովին, ինչպես ծրագրել էր Քաղաքական ժողովը: «Վարչություն» հատվածում ընդգծում է, որ դիվանի կազմակերպումը և վերին տնօրինությունը վստահված էին դոկ. Դավիթյանին, որը մասնակցում էր բրիտանական Բարձր հանձնակատարության Հայ-հունական բաժանմունքի յուրաքանչյուր նիստին: Անվերապահորեն հայտարարում է, որ Դավիթյանը «արժանիօք կիրարկված է» այդ դժվար պաշտոնը: Առաջարկում է Քաղաքական ժողովին հրավիրել դոկ. Դավիթյանին՝ պահելու «Տեղեկատու դիվանի» և անգլիական դեսպանատան Հայ-հունական նիստերում իր պաշտոնները¹: Հայտնում է նաև, որ դիվանի աշխատանքներն ընդարձակված են, և Քաղաքական ժողովն իրեն է վստահել դիվանի հսկողության և Հայ-հունական բաժանմունքի երկրորդ պատվիրակի պաշտոնները: Ամփոփելով տեղեկագիրը՝ Նուրյանը շեշտում է, որ հաստատված են դիվանի մեծ կարևորությունն ու առաջնակարգ օգտակարությունը: Կրկին շեշտում է, որ հարկ է դոկ. Դավիթյանին խնդրել՝ պահելու վերին տնօրինությունը և իրեն՝ Նուրյանին, տալ դիվանի հսկողության իրավունքը²:

«Տեղեկատու դիվանի» գործունեությունը ներկայացնում է նաև Կ. Նուրյանի 1920 թ. օգոստոսի 24-ի թվակիր նամակը՝ ուղարկված Զավեն պատրիարքին և Քաղաքական ժողովի նախագահին³: Նա հաղորդում է, որ 1920 թ. օգոստոսի 17-ի Քաղաքական ժողովի նիստի որոշմամբ «Տեղեկատու դիվանը» փաստեր է հավաքելու «հայկական խժոժութեանց» պատասխանատու անձանց մասին: Գլխավոր նպատակն է կարևոր վկաներ գտնել և գրի առնել

index.php/hy-am/periodiques-hy): Թերթի խմբագիրներն էին Տիգրան Չալանը և Կարապետ Նուրյանը (**Զուեն Արթեսյա**, նշվ. աշխ., էջ 302):

¹ ԵՀՊ 2822Ա, տուփ 1, թղթապանակ M360, Հ^մ ք 900ա (էջ 5):

² Նույն տեղում, վավերագիր Հ^մ ք 900բ (էջ 6):

³ Նույն տեղում, վավերագիր Հ^մ ք 883-ք 886 (էջ 235-238):

նրանց վկայությունները, կազմել ամբաստանությունների թղթածրարները: Կ. Նուրյանը հայտնում է, որ դիվանի տնօրենն այս կառույցի հաստատման մասին նախ ծանուցել է անգլիական Բարձր հանձնակատարությանը, որը կապիտան Ռըքստոնին է վստահել հայկական կոտորածների գլխավոր պատասխանատուների հետապնդումը:

Կարապետ Նուրյանի տեղեկագիրը (բնօրինակ)

Պատրիարքարանի Տեղեկարար Պրամեր

1900

Տեղ. Պատրիարքարանի տեղեկարար Քան. Թուրքի ինքն. Երևանի Պրամերի Կարապետ Նուրյանի և Քան. Թուրքի ինքն. Երևանի Պրամերի Կարապետ Նուրյանի միջև կատարված խոսակցության արդյունքում հիմնականում հաստատված է հետևյալը: Կարապետ Նուրյանը պահանջում է հարգելի վերաբերման և խնայողական վերաբերման իր հանդեպ: Կարապետ Նուրյանը պահանջում է հարգելի վերաբերման և խնայողական վերաբերման իր հանդեպ: Կարապետ Նուրյանը պահանջում է հարգելի վերաբերման և խնայողական վերաբերման իր հանդեպ:

I. Կարապետին և Կարապետ

Պատրիարքարանի ինքնավարության և Կարապետի միջև կատարված խոսակցության արդյունքում հաստատված է հետևյալը: Կարապետ Նուրյանը պահանջում է հարգելի վերաբերման և խնայողական վերաբերման իր հանդեպ: Կարապետ Նուրյանը պահանջում է հարգելի վերաբերման և խնայողական վերաբերման իր հանդեպ:

Չորս օրվա ընթացքում Կարապետի և Քան. Թուրքի ինքն. Երևանի Պրամերի միջև կատարված խոսակցության արդյունքում հաստատված է հետևյալը: Կարապետ Նուրյանը պահանջում է հարգելի վերաբերման և խնայողական վերաբերման իր հանդեպ: Կարապետ Նուրյանը պահանջում է հարգելի վերաբերման և խնայողական վերաբերման իր հանդեպ:

Այս պահին չգիտեմ իր համարումը 1868 թ. սեպտեմբերի և օգոստոսի և 1919 թ. մարտի և 1919 թ. մարտի օրվա ընթացքում կատարված խոսակցության արդյունքում հաստատված է հետևյալը: Կարապետ Նուրյանը պահանջում է հարգելի վերաբերման և խնայողական վերաբերման իր հանդեպ: Կարապետ Նուրյանը պահանջում է հարգելի վերաբերման և խնայողական վերաբերման իր հանդեպ:

Կարապետ Նուրյանը պահանջում է հարգելի վերաբերման և խնայողական վերաբերման իր հանդեպ: Կարապետ Նուրյանը պահանջում է հարգելի վերաբերման և խնայողական վերաբերման իր հանդեպ: Կարապետ Նուրյանը պահանջում է հարգելի վերաբերման և խնայողական վերաբերման իր հանդեպ:

Միջև: Կարապետին և Կարապետի միջև կատարված խոսակցության արդյունքում հաստատված է հետևյալը: Կարապետ Նուրյանը պահանջում է հարգելի վերաբերման և խնայողական վերաբերման իր հանդեպ: Կարապետ Նուրյանը պահանջում է հարգելի վերաբերման և խնայողական վերաբերման իր հանդեպ:

Քան. Թուրքի ինքն. Երևանի Պրամերի և Կարապետի միջև կատարված խոսակցության արդյունքում հաստատված է հետևյալը: Կարապետ Նուրյանը պահանջում է հարգելի վերաբերման և խնայողական վերաբերման իր հանդեպ: Կարապետ Նուրյանը պահանջում է հարգելի վերաբերման և խնայողական վերաբերման իր հանդեպ:

срочно сообщаем вам, что в продолжение прошлого года в связи с войною в Европе, количество населения в...

II Общая информация

В продолжение прошлого года в продолжение года в связи с войною в Европе, количество населения в...

Уже упоминалось, что в продолжение года в связи с войною в Европе, количество населения в...

Уже упоминалось, что в продолжение года в связи с войною в Европе, количество населения в...

Всего в нем 292 статьи, посвященные в основном в продолжение года в связи с войною в Европе...

2. Статьи по социальным вопросам

Всего в нем 150 статей, посвященных в основном в продолжение года в связи с войною в Европе...



Միայն մաս, իհարկուց խոսքը չէի թողնում Վերջին օրերին, երբ ես այդ ստանդարտի չեմ հասնում, սակայն մեր օրերի ընթացքը 1915-1918 թ. լուրջ տարիներն էին և արժանապատեացի էին:

Գ. Արժանացումներ

Հասնում էի այն աստիճանին, որտեղիցս կարելի էր անցնել մեզ համար նորագույն պայմանների, իհարկուց ինչպես և ստանդարտի: Բնական է, որ այդ պայմաններում մեզ շատ շատ բաներ էին լինում հասնելու, սակայն մենք, ինչպես նաև մեր ստանդարտի և բարձրագույնի: Այնպես չէինք կարողանալ ընդհանուր կարգերը, այս պատճառով հարկուցում էինք մեզ անհանձնել:

Անտիկ հայտնի, որ ինքնուրույն ստանդարտի հասնում, որտեղ մենք էինք, որտեղ էլ ինքնուրույն, բոլոր ստանդարտի և այդ հասնումները:

Դ. Հայաստանի համար Անդրկարգի

Միայն թե հարկուց հարկուցում էր կարգերը, որտեղիցս կարելի էր հասնել մեր հարկուցում: Այնպես էր, որտեղիցս կարելի էր հասնել մեր հարկուցում: Այնպես էր, որտեղիցս կարելի էր հասնել մեր հարկուցում:

Միայն թե հարկուցում էր կարգերը, որտեղիցս կարելի էր հասնել մեր հարկուցում: Այնպես էր, որտեղիցս կարելի էր հասնել մեր հարկուցում: Այնպես էր, որտեղիցս կարելի էր հասնել մեր հարկուցում:

Ե. Հարկուցումներ Հայաստանի համար

Միայն թե հարկուցում էր կարգերը, որտեղիցս կարելի էր հասնել մեր հարկուցում:

Уставъ Императорскаго Царскаго вѣдомства въ Санктпетербургѣ:

Уставъ Императорскаго вѣдомства о казенныхъ имущественныхъ предметахъ, принадлежащихъ къ Императорскому дворцовому управлению, составленъ въ 1800 году и изданъ въ 1801 году.

Уставъ о казенныхъ имущественныхъ предметахъ, принадлежащихъ къ Императорскому дворцовому управлению, составленъ въ 1800 году и изданъ въ 1801 году. Уставъ о казенныхъ имущественныхъ предметахъ, принадлежащихъ къ Императорскому дворцовому управлению, составленъ въ 1800 году и изданъ въ 1801 году.

6. Уставъ о казенныхъ имущественныхъ предметахъ

Императорское вѣдомство о казенныхъ имущественныхъ предметахъ, принадлежащихъ къ Императорскому дворцовому управлению, составленъ въ 1800 году и изданъ въ 1801 году. Уставъ о казенныхъ имущественныхъ предметахъ, принадлежащихъ къ Императорскому дворцовому управлению, составленъ въ 1800 году и изданъ въ 1801 году.

7. Императорское вѣдомство о казенныхъ имущественныхъ предметахъ, принадлежащихъ къ Императорскому дворцовому управлению, составленъ въ 1800 году и изданъ въ 1801 году. Уставъ о казенныхъ имущественныхъ предметахъ, принадлежащихъ къ Императорскому дворцовому управлению, составленъ въ 1800 году и изданъ въ 1801 году.

Императорское вѣдомство о казенныхъ имущественныхъ предметахъ, принадлежащихъ къ Императорскому дворцовому управлению, составленъ въ 1800 году и изданъ въ 1801 году. Уставъ о казенныхъ имущественныхъ предметахъ, принадлежащихъ къ Императорскому дворцовому управлению, составленъ въ 1800 году и изданъ въ 1801 году.

III. Уставъ о казенныхъ имущественныхъ предметахъ

Императорское вѣдомство о казенныхъ имущественныхъ предметахъ, принадлежащихъ къ Императорскому дворцовому управлению, составленъ въ 1800 году и изданъ въ 1801 году.



1919 - 1920 für vorerwähnte Familienmitglieder
 für den Zeitraum vom 2870 L.O. bis den Zeitraum 4. 10. 1921
 nach: 653 L.O. für den vorerwähnten Zeitraum
 den Zeitraum vom 2219 L.O. bis den Zeitraum vom 1335 L.O.

1335 L.O. 7. 10. 1921

335 L.O. 7. 10. 1921

473 L.O. 7. 10. 1921

76 L.O. 7. 10. 1921

2219 L.O. 7. 10. 1921

Die vorerwähnte Summe von 700 L.O. ist, wie
 410 L.O. für den Zeitraum vom 2870 L.O. bis den Zeitraum vom
 40 L.O. für den Zeitraum vom 2870 L.O. bis den Zeitraum vom

den Zeitraum vom 2870 L.O. bis den Zeitraum vom
 den Zeitraum vom 2870 L.O. bis den Zeitraum vom
 den Zeitraum vom 2870 L.O. bis den Zeitraum vom
 den Zeitraum vom 2870 L.O. bis den Zeitraum vom

IV. Zusammenfassung

Die vorerwähnte Summe von 700 L.O. ist, wie
 den Zeitraum vom 2870 L.O. bis den Zeitraum vom
 den Zeitraum vom 2870 L.O. bis den Zeitraum vom

den Zeitraum vom 2870 L.O. bis den Zeitraum vom
 den Zeitraum vom 2870 L.O. bis den Zeitraum vom
 den Zeitraum vom 2870 L.O. bis den Zeitraum vom

Հոգ. Բաժնետերեր Վճ.

Այս և ինչ առաջիկայ հարց. Գրեմք վրայ երբեք և Ընդ-
Հոգ. Բաժնետերեր Վճ. իրենց պատրաստի պատճառներով:

Չնայած ընդդ. Վ. Գրեմքը առաջարկներով աջակցում
և որ առաջիկայ առաջարկներով ինչպես Վճ. Գրեմքերի վրայ
Վրայ առաջիկայ Վճ. Վրայ առաջիկայ Վճ.:

Վ Առաջարկներ

- 1: Ընտրության և Վճ. Գրեմքը Վճ. Գրեմքերի վրայ
և առաջիկայ առաջարկներով:
- 2: Վրայ Վճ. Վրայ համար, որ Վճ. Գրեմքը Վճ. Գրեմքերի վրայ
և Վճ. Գրեմքերի վրայ Վճ. Գրեմքերի վրայ 400 և 0. Բ. Գրեմքերի վրայ
ընտրության վրայ Վճ. Գրեմքերի վրայ 500 և 0. Բ. Գրեմքերի վրայ
առաջարկներով համար Վճ. Գրեմքերի վրայ Վճ. Գրեմքերի վրայ:
- 3: Ընտրության և Վճ. Գրեմքերի վրայ Վճ. Գրեմքերի վրայ
և Վճ. Գրեմքերի վրայ Վճ. Գրեմքերի վրայ Վճ. Գրեմքերի վրայ
և Վճ. Գրեմքերի վրայ Վճ. Գրեմքերի վրայ Վճ. Գրեմքերի վրայ
և Վճ. Գրեմքերի վրայ Վճ. Գրեմքերի վրայ Վճ. Գրեմքերի վրայ:
- 4: Ընտրության և Վճ. Գրեմքերի վրայ Վճ. Գրեմքերի վրայ
և Վճ. Գրեմքերի վրայ Վճ. Գրեմքերի վրայ Վճ. Գրեմքերի վրայ
և Վճ. Գրեմքերի վրայ Վճ. Գրեմքերի վրայ Վճ. Գրեմքերի վրայ:

Գրեմքը Վճ. Գրեմքերի վրայ
Գ. Վ. Գրեմքերի վրայ

Կապիտան Ռեքսթոնը դիվանի տնօրենին հայտնել է.

1. որոշված է ոճրագործների դեմ բացված բոլոր դատերը կայացնել ըստ
դաշնագրի (Մուղղոսի – Լ. Ս.) 142-րդ և 230-րդ հոդվածների, և այդ դատերն
Ազգերի դաշնակցության (լիգա – Լ. Ս.) նշված դատարանների առջև պետք է
լինեն: 2. Մինչև այդ ատյանների կազմությունն անգլիական իշխանու-
թյուններն այլևս ձեռքազրկություններ չեն իրականացնի, և հայերի բողոք-
ները պետք է լավ են պատերազմական ատյանում: 3. Նաև ասվել է, որ նրանք
չեն կարող զբաղվել փոքր ոճրագործներով, այլ միայն՝ նշանավոր և բարձր
պաշտոնյաների հարցերով: 4. Գլխավոր ջարդարարներին Ռեքստոնը
դասակարգել է չորս խմբի. ա) արդեն ձեռքազրկվածներ, բ) դեռ չձեռքա-
կալված, սակայն հսկողության ներքո գտնվողներ, գ) դեռևս դեսպանատան
ուշադրությունից դուրս մնացածներ, դ) ոճրագործներ, որոնց ձեռքազրկելու
հույս չկա, և գտնվում են փախուստի մեջ: 5. Նշվում է նաև, որ Ռեքսթոնը
բողոքել է, որ ոճրագործների դատավարության համար անհրաժեշտ փա-

տաթղթերի կարիք կա, և խորհուրդ է տվել «Տեղեկատու դիվանի» տնօրենին, որ նա իր ամբողջ ջանքերը կենտրոնացնի այս խնդրի վրա: Մասնավորապես շեշտել է, որ ոճրագործները հարուստ և ազդեցիկ են ու մինչև հասնեն Ազգերի լիգայի նշանակած ատյանի առջև, իրենց փրկելու համար կվարձեն լավագույն փաստաբաններ, մանավանդ եթե չգտնվեն ուժեղ և ճշգրիտ ամբաստանություններ և վկաներ: 6. Նուրյանը հայտնում է նաև, որ անգլիական իշխանությունների կողմից ձերբակալված թուրքերի մի գաղտնի ցանկ է հանձնվել իրենց և խորհուրդ տրվել շատ արագ պատրաստելու նրանց թղթածրարներն ու վկաներին: 7. Խնդրել են, որ գրությունները գրվեն անգլերեն, նաև կարիք է լինելու ֆրանսերեն պատճեններ ունենալ:

Նուրյանն ամփոփելով նշում է՝ դիվանի գործն այդ ձերբակալվածների թղթածրարները հնարավորինս ամբողջացնելն է, կարևոր վկայությունները դասավորել և թուրք ոճրագործներին ի նպաստ վկայություն տվող հայերին հասկացնել իրենց ազգային պարտականությունները: Այդ թղթածրարներն ու վկայություններն անգլիական դեսպանատուն հանձնելուց առաջ պետք է քննել մասնագետ և կարող իրավաբանների հանձնախումբը: Հայտնում է նաև, որ դիվանն առժամանակ չի զբաղվելու փոքր ոճրագործներով, քանի որ այդ գործերը լսելու է թուրքական Պատերազմական ատյանը¹:

Արխիվում պահվող մի շարք նամակներ ևս առնչվում են «Տեղեկատու դիվանի» ծավալած գործունեությանը: Այս առումով ուշագրավ է Գ. Դավիթյանի 1920 թ. մայիսի 31-ի նամակը (մեկ էջ)՝ ուղղված Հայ-կաթողիկե պատրիարքական տեղապահ Տ. Օգոստինոս արք. Սայեղյանին: Դավիթյանը հայտնում է, որ «Տեղեկատու դիվանում» են ամփոփվում այն բոլոր տեղեկությունները, որոնք կարևոր են քաղաքական, վիճակագրական, պատմական տեսանկյունից և պետք է օգտագործվեն կամ հաղորդվեն ուր որ հարկն է: Խնդրում է, որ Հայ-կաթողիկե պատրիարքարանը դիվանին տրամադրի հայկական գավառներից ստացված տեղեկությունները՝ տիրող կացության, տեղահանության, այդ շրջանում և անցյալում ազգային հարստության, հին ու նոր ջարդարարների վիճակագրությունների, կրթական և բարեգործական հաստատությունների մասին նամակների պատճենները կամ բնագրերը²: Նույն ամսաթվով ու նույնաբովանդակ մի նամակ Դավիթյանը գրել է նաև Հայ բողոքական համայնքի ազգապետ Զենոբ Պեզճյանին՝ ավելացնելով, որ վերջինս մոտ է ամերիկյան շրջանակներին և կարող է իրենց համար բոլորովին անծանոթ տեղեկություններ ունենալ: Խնդրում է դրանք տրամադրել դիվանին՝ ապահով և վստահ լինելով, որ այդ տեղեկությունները գաղտնի կմնան³:

Արխիվի «Բովանդակությունը»

¹ ԵՀՊ 2822Ա, տուփ 1, թղթապանակ M360, վավերագիր Հ^մ 883-բ886 (էջ 235-238):

² Նույն տեղում, վավերագիր Հ^մ 877 (էջ 224):

³ Նույն տեղում, վավերագիր, Հ^մ 879աբ:

Վավերագրերի թվայնացման, ինչպես նաև ցուցակագրման աշխատանքներն իրականացնելիս մեզ մշտապես հետաքրքրում էր, թե արդյոք արխիվը չի ունեցել «Բովանդակություն» կամ որևէ ցուցակագրում: Ուրախությամբ պետք է նշենք, որ 2021 թ. Լոս Անջելեսի «Արարատ-Էսփիջյան» թանգարանում¹ անվանի ցեղասպանագետ Վահագն Տատրյանի արխիվում աշխատելիս հայտնաբերեցինք Երուսաղեմում պահվող արխիվի «Բովանդակության» թերևս բնօրինակը (վավերագրի վրա նշված չէ՝ երբ և ում կողմից է կազմված): Այս «Բովանդակությունը» միանգամայն ամբողջացնում է Ջավեն պատրիարքի հետևյալ բնորոշումը. «Մեծապես անակնկալի եկայ տեսնելով հոն կատարեալ հաւաքածոյ մը վաւերագիրներու և արձանագրութիւններու 1918-1922 բոլոր կարեւոր դեպքերուն»²:

Սակայն մեր աշխատանքների ընթացքում ակնբախտրեն տեսանելի դարձավ, որ որոշ թղթածրարներում վավերագրերի էջագրության հերթականությունը խախտված է: Հիմք ընդունելով Ջավեն պատրիարքի վկայությունն առ այն, որ Արշակ Ալպոյաճյանն ու Կարապետ Նուրյանը մեծ և գնահատելի աշխատանք են կատարել արխիվը հավաքելու և դասավորելու գործում³, ինչպես նաև մեր ձեռք բերած «Բովանդակությունը», կարող ենք ենթադրել, որ այդ էջերի հերթականության փոփոխությունը հետևանք է հետագայում նոր վերադասավորման:

Շնորհիվ արխիվի նկատմամբ պատրիարք Նուրիան արք. Մանուկյանի ցուցաբերած հոգածության՝ մեզ հնարավորություն է տրվել թվայնացումը և ցուցակագրման աշխատանքներն իրականացնել արխիվի ներկայիս ստատիկ վիճակը պահպանելով՝ չխախտելով վավերագրերի՝ արդեն իսկ եղած հերթականությունը:

Թեև այդ «Բովանդակությունը» արխիվի պարունակությունը ներկայացնում է առավել ընդհանրացված ձևով, այդուհանդերձ այն հնարավորություն է ընձեռում գաղափար կազմելու վավերագրերի շրջածիրի մասին, իսկ մեր ցուցակագրումն առավել լայն տեղեկություններով է ներկայացնելու արխիվի վավերագրերի բովանդակությունը: Նշենք, որ Գրիկերը հիշատակում է 24 թղթածրարի մասին, սակայն ստորև հրապարակվող մեքենագիր «Բովանդակությունը» 25 թղթածրար է վկայակոչում, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ արխիվը նախապես բաղկացած է եղել 25 թղթածրարից:

¹ Վահագն Տատրյանի արխիվ, Box 19: Խորին շնորհակալություն ենք հայտնում ԱՄՆ-ի Լոս Անջելեսի «Արարատ-Էսփիջյան» թանգարանի տնօրեն տիկին Մագի Մանգասարյան-Գոշինին՝ մեզ Վ. Տատրյանի արխիվում ուսումնասիրություններ կատարելու հնարավորություն տալու համար:

² **Ջավեն Արքեպս.**, նշվ. աշխ., էջ 303:

³ Տե՛ս նույն տեղում:

Ստորև ամբողջությամբ ներկայացնում ենք այդ «Բովանդակությունը»¹.

«Հայկական Հարց»

Փաստաթուղթեր, /25 ծրար/²

Ծրար 1. /Թիւ 1-1000 - Բ. 235/ (Ձեռագիր հավելում՝ Հ և Ս)

Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1919-1922 տարիներու:

Ծրար 2. /Թիւ. Բ 256 - Բ. 676/

1. Տեղեկագիր Խորհրդ. Քննիչ Յանձնաժողովի:
2. Տեղեկագիր Մուշեղ Եպիսկոպոսի [Սերոբյան]:
3. Տեղեկագիր Ատենապետ Դիւանի:
4. Նամակներու ընդօրինակութիւններ:
5. Տետրակի պրակներ:

Ծրար 3. /Թիւ. Բ 680 - Գ. 10/

1. Ֆրանսերէն տեղեկագիր մը:
2. Իզմիրի ջարդին մասին տեղեկագիր:
3. Ցանկ մը նամակներու:
4. Հաշուի տետրակներու պրակներ:
5. Լուսանկարներ:
6. Իզմիրի աղետի մասին: (Ձեռագիր հավելում՝ Բ. 949-971 Առաջնորդ Ղևոնդ եպս. Դուրեանի տեղեկագիր, Oct. 13, 1922 Athens)
7. Ֆրանսերէն տեղեկագիր մը Մեծ Պատերազմի նահատակներու մասին:

8. Այլեւայլ թուղթեր, հաղորդագրութիւններ, ատենագրութիւնք:

Ծրար 4. /Թիւ. Գ. 11- Դ. 142/

1. Տեղեկագիր Տեղեկատու Դիւանի եւ հաշիւներ:
2. Հաշուի տետր մը:
3. Ֆրանսերէն տեղեկատուութիւններ:
4. Բարձր Գումիսերներու ուղղեալ նամակներ:
5. Բարձր Գումիսերներու ուղղեալ տեղեկագիրներ:
6. Բարձր Գումիսերներու ուղղեալ տեղեկագիրներ:

Ծրար 5. /Թիւ. Դ. 143 - Ե. 63/

1. Ցանկեր Եղեռնի պատասխանատու Թուրքերու:
2. Վիճակագրութիւններ եւ տեղեկատուութիւններ:
3. Օրինակներ դաշնագիրներու եւ յիշատակագիրներու:
4. Նամակներ եւ «Հայկական խնդիր» յիշատակագիր: Պակաս. Դ. 673-

¹ Վավերագիրը հրատարակվում է հավատարիմ բնօրինակին: Փակագծերում տրվում են վավերագրի վրա եղած ձեռագիր հավելումները: Վերականգնողական նշանները մերն են՝ *L. U.*:

² Առաջին էջի վերջում ձեռագիր կարմիր մտտգր. մակագրությամբ՝ «Տեղեկատու Դիւանի անդամներ Շահպազ, Ալպոյաճեան, Թեոդիկ և Նուրեան՝ վարիչ»:

Օրար 6. /Թիւ. Ե. 64- Չ. 29/

1. Տեղեկատուութիւններ եւ յիշատակագրեր:
2. Նոթիսներ եւ տեղեկագրեր:
3. Նամակներ Տեղեկատու Դիւանին ուղղեալ. (Ձեռագիր հավելում՝ Հեռագիրներ ջարդերու մասին):
4. Կիլիկեան թղթածրար:

Օրար 7. /Թիւ. Չ. 30 - Է. 52/

1. Թուրք պաշտօնատարներու հաղորդագրութիւններ. /Լաւ է ըսել «Կառավարիչներու եւ հրամանատարներու միջեւ փոխանակուած ծածկագիր հեռագիրներ»/ (Ձեռագիր հավելում՝ Ի - 714-889):
2. Կիլիկեան թղթածրար /Հայերէն նամակներ/:
3. Նամակներ Պօղոս Նուպարի եւ Նորատունկեանի:
4. Կիլիկեան թղթածրար /Ֆրանսերէն/:
5. Իզմիրի մասին թուղթեր:

Օրար 8. /Թիւ. Է. 53 - Ը. 14/

1. Ջարդերու մասին /Էրզրում, Կիլիկիա, Քասթեմունի/:
2. Տեղեկագրութիւններ եւ վիճակագրութիւններ:
3. Թղթածրարներ Արեւելեան Թրակիոյ:
4. Ատենագրութիւններ «Համագումար ժողով»ի:
5. Ընդհանուր ծանօթութիւններ գաւառներու մասին:
6. Հայ-Յոյն հատուած «Ժողովի Ատենագրութիւնը»:

Օրար 9. /Թիւ Ը. 15 - Ը. 940/

1. Յիշատակագրեր եւ տեղեկատուութիւններ Թուրքերու մասին:
2. Այլեւայլ նամակներ Պատրիարքարան ուղղեալ:
3. Յիշատակագիր մը «Հայկական Խնդրոյ» վրայ:
4. Տեղեկագրութիւն Մեծ Պատերազմի գոհերուն վրայ:
5. Յիշատակագրեր ջարդերու եւ տեղահանութեանց մասին:
6. Տեղեկագրեր օտարներու կողմէ:
7. Տեղեկագրեր Հայերու մասին /Տամատեան/:
8. Վանի մասին – Մուշեղ Եպս.ի, Թորգոմ Սրբազանի [Գուշակյան] եւ այլ թուղթեր:
9. Նամակներ /Ֆրանսերէն եւ Անգլերէն/:
10. Տեսակցութեանց արձանագրութիւններ: Պակաս. Ը. 300 – Ը. 329:

Օրար 10. /Թիւ Ը. 941 - Ժ. 57/

1. Թէքէեանի թղթածրար /Ը. 941 – Թ. 293/:
2. Իթթիհատ-Թերաքքը անդամներու մասին:
3. Ջանազան նահանգներու Թուրք յանցաւորներու ցանկեր:

4. Տեղեկատուութիւններ Քեմալական պատուիրակութեան մասին:
5. Ատենագրութիւնք Համագային Խորհրդոյ:
6. Նամակներ եւ տեղեկագրութիւններ: Պակաս. Թ. 306-Թ. 525

Ծրար 11. /Թիւ Ժ. 58 - Ժ. 982/

1. Տեղեկատուութիւններ 1920-ի:
2. Տեղեկագիրներ ջարդերու պատասխանատուներու մասին եւ Թրքական կառավարութեան կազմին շուրջը: (Ձեռագիր հավելում՝ Թրքական զինուորականներու հեռագիրներ ջարդի մասին Օսմաներէն. Ծրար 17):
3. Տեղեկատուութիւններ գաւառներէն եւ անոնց մասին:
4. Ազգային Պատուիրակութեան կողմէ նամակներ:
5. Ծրար մը տեղեկագիրներ գաւառներու մասին: Պակաս. Ժ. 104

Ծրար 12. /Թիւ Ժ. 983 - Լ. 32/

1. Ցանկ Թուրք պատասխանատուներու:
2. Նոյնի Հայերէնը:
3. Որբերու եւ այրիներու ազատութեան մասին: (Ձեռագիր հավելում՝ The Narration of a Bulg. Lady Քըիէն 396-412):
4. «Անկախ Հայաստան» վերնագրով տետրակ մը:
5. Հայոց Պատմութեան հակիրճ տեսութիւն մը / 78 էրես, ֆրանսերէն:
6. Տեղեկագիրներ Թուրք կառավարութեան պաշտօնեաներուն: (Ձեռագիր հավելում՝ Գիրք ա. ա. 715-746, բ. 747-778, գ. 779-809, դ. 810-837: Նոյնը Զ տառ 30-154, Ծրար 7, -Ջարդի հեռագիրներ Զ 30-154):
7. Կիլիկեան թղթածրար:

Ծրար 13. /Թիւ Լ. 33 - Խ. 10/

1. Չանազան նամակներ:
2. Մաս մը ատենագրութիւն Ազգային Պատուիրակութեան:
3. Հայկական Խնդրի մասին /90 էրես. Հայերէն/:
4. Նամակներ Ազգային Պատուիրակութեան:
5. Թուրքերու դէմ կատարուած դատավարութեանց շուրջ:
6. Գաւառներու ջարդերու մասին տեղեկագրութիւններ:
7. Նամակներ, տեղեկագրութիւններ:

Ծրար 14. /Թիւ Խ. 11 - Ծ. 42/

1. Նամակներ եւ տեղեկագրութիւններ գաւառներէն /Հայերէն/:
2. Նամակներ ուղղեալ Կ. Պօլսոյ Եւրոպական պաշտօնատարներու:
3. Հայոց վիճակագրութեան եւ Յունաց դէմ ամբաստանութիւններ:
4. Նամակներ, տեղեկագիրներ, օտար պաշտօնատարներու հետ թղթակցութիւններ եւն:
5. Վիճակացոյցներ չորս թեմերու: (Ձեռագիր հավելում՝ Kastamonu, Kütahya, Ակն, Արաբկիր, İzmid (քարտեզներով)
6. Ամասիոյ (ձեռագիր հավելում՝ Խ 937) ջարդին (ձեռագիր հավելում՝

15.000) մասին. (Ձեռագիր հավելում՝ Գեորգ Վրդ. Իբրանոսեան, Պատրիարքական Տեղապահ Ամասիոյ և Տոքթ. Բարունակ Օսկի, Ազգային Խորհուրդի անդամ). գաւառներու մասին նօթեր, տաճկերէն թուղթեր են:

Օրար 15. /Թիւ Ծ. 43 - Կ. 41/

1. Յիշատակագիրներ /Հայ բանակին ձախողութիւնը/. շրջաբերական-փրոփականտի յանձնախումբ:

2. Խատիսեանի տեսակցութիւնները:

3. Նամակներ Ֆրանսական կառավարութեան. Տեղեկագիր Հ. Հ. Պետ. դիմումներուն:

4. Ազգային Պատուիրակութեան նամակները եւ Խաղաղութեան ժողով:

5. Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան «մէմուար»ը:

6. Հայ որբերու թղթածրար /Անգլերէն, Հայերէն, Ֆրանսերէն/:

7. Տեղեկագիրներ. տեղեկատուութիւններ օտարներէ ղրկուած տեղեկութիւններ. Անգլերէն եւ Ֆրանսերէն «մէմուար»:

8. Ամերիկեան թերթի ղրկուած տեղեկութիւններ:

9. Ջարդերու մասին թուղթեր Ազգ. Դաշնակցութեան /Թուրք պատասխանատուներու շուրջ/:

10. Թուրք Միլիներու դատավարութիւնը:

11. «Հայեր եւ Արեւմտեան Քաղաքակրթութիւն». 2 օրինակ եւ թրգմ. են:

12. Տեղեկատուութիւններ. նամակներ, են: Պակաս Ծ. 232

Օրար 16. /Թիւ Կ. 42 - Հ. 117/

1. Թալաաթ փաշայի մասին:

2. Ջարդերու պատասխանատուութեանց մասին:

3. Ամերիկեան թղթակցութիւններ եւ «մէմուար»ներ:

4. Հայոց կալուածներու մասին:

5. Թուրք պաշտօնատարներու կողմէ տեղեկագրութիւններ:

6. Օսմանեան Կայսրութեան Հայերու վիճակագրութիւնը:

7. Ջարդերու մասին տեղեկութիւններ:

8. Վիճակագրական տախտակներ:

9. Գաւառներու վիճակին մասին, 1918-ի Ջինադադարէն ետք: Պակաս. Կ 124, Կ. 146

Օրար 17. /Թիւ Հ. 118 - Զ. 123/ (Ձեռագիր հավելում՝ Հ 558-579. Գիրք ա.)

1. Տաճկերէն նամակներ:

2. Թալաաթ փաշայի մասին:

3. «Մէմօրանտա» Կիլիկիոյ եւ Հայկական տեղահանութեանց մասին:

4. Նամակներ եւ յիշատակագրութիւններ:

5. Համաձայնագրեր են:

6. Հինգ տետրակ հայատառ թրքերէն: (Ձեռագիր հավելում՝ հ. 558-578 Գիրք ա. Turk[ish]. Mil[itar]y commanders, valis etc. 579-625, Բ. 601-625, Գ. 626-647, Դ. և Ե (essay)

7. Հայ Ազգ. Պատուիրակութեան նամակները:
8. Ազգային «քովինիք»:
9. Թղթածրար Արք. Տէր Յակոբեանի: Պակաս. Հ. 124, Ձ. 16
Ծրար 18. /Թիւ 2. 124 - Ղ. 3/

1. Նամակներ Ազգ. Պատուիրակութեան:
2. Չանազան Յիշատակագիրներ եւ վիճակագրութիւններ:
3. «Լէ Սուֆրանս Արմենիէն է լ' ասսիսթանս»¹ /52 էրես/:
4. Հայերէն թղթակցութիւններ զանազան գաւառներէ:
5. Հայկական ջարդերու շուրջ համաձայնական յայտարարութիւններ:
6. Տեղեկատու Դիւանին «գոբի» (պատճեն – Լ. Ս.) տետրակի մասին:
7. Ֆրանսերէն տեղեկագրութիւններ:
8. «Կեսարիոյ Դէպքերը» տետրակ մը: Պակաս. Ձ. 272, Ձ. 777

Ծրար 19. /Թիւ Ղ. 4 -Ճ. 150/

1. Հայերէն նամակներ ուղղեալ Տէր Յակոբեանի:
2. Հայերէն նամակներ ուղղեալ Ազգ. Պատուիրակութեան:
3. Ռոտոսթոյն նամակներ. Գերմանական գրեր:
4. Տեղեկագիրներ եւ յիշատակագրեր:
5. Ատենագրութիւն Համազգային ժողովոյ:
6. Ընդօրինակութեան տետրակ մը /1919-22/:

Ծրար 20. /Թիւ Ճ. 151 - Ս. 229/

1. Ընդօրինակութեան տետրակ /113 էրես/: /1919 Մարտ. 12-1921 Յուն. 29/:
2. Ընդօրինակութեան տետրակ /79 էրես/: /1912 Սեպտ. 4 - Նոյեմբեր 11/:
3. Ընդօրինակութեան տետրակ /386 էրես/: /1913 Սեպտ. 4 -1 Յունուար 1914/:
4. Ընդօրինակութեան տետրակ /153 էրես/: /1913 Հոկտ. 29/:
5. Ընդօրինակութեան տետրակ /500 էրես/: /1912 Հոկտ. – 1913 Սեպտ. 4/:

Ծրար 21. /Թիւ Ս. 230 - Յ. 18/

1. Տաճկերէն թուղթեր:
2. Տաճկերէն տետրակներ:
3. «Ձեռագիր Նիւթեր» խորագրով տետրակ մը:
4. Արձանագրութեան 2 տետր Խորհրդ. եւ Վարչ. Յանձնաժողովներու, 1913-էն:
5. Հաշուի տետրակ մը:
6. Հայերէն տեղեկագիրներ:

¹ Թարգմանաբար՝ «Հայերի տառապանքները և նրանց ցուցաբերված օժանդակությունը»:

7. «Աբերսիս Ժեներալ Սիւր լէ Ֆինանս տէ Բրովինս Արմենիէն»¹:
8. Ռուսերէն մի քանի գրութիւններ:
9. Ընդհանուր Քննիչներու մասին զանազան գրութիւններ:
10. Զանազան տեղեկագիրներ եւ նամակներ:
11. Տպագրեալ տետր մը եւ ուրիշներ, Բարենորոգմանց մասին:

Ծրար 22. /Թիւ 3. 19 - Ն. 151/

1. Հայոց ջարդին Թուրք պատասխանատուներու թղթածրարներ:
2. Տաճկերէն գրութիւններ:
3. Գաւառներու տնտեսական եւ քաղաքական վիճակին մասին վիճակագրութիւններ եւ տեղեկագիրներ:
4. Երկու Տաճկերէն տպեալ տետրակներ:
5. Գաւառներէն եկած տեղեկագիրներ, վիճակագրութիւններ եւ խնդրագրեր:

Ծրար 23. /Թիւ Ն. 152 - Ն. 967/

1. Ազգային Պատրիարքարանի եւ Ազգային Պատուիրակութեան Բարենորոգմանց ծրագիրները եւ Դեսպանատանց հետ տեսակցութիւններ:
2. Բարենորոգմանց Ռուսական ծրագիր, նախագծեր եւ անոց մշակումը:
3. Բարենորոգմանց մասին Պօղոս Փաշայի թղթակցութիւններ, 1913-14:
4. Պօղոս Փաշայի նամակները: Պակաս. Ն. 423, Ն. 445

Ծրար 24. /Թիւ Ն. 968 - Շ. 789/

1. Արտասահմանեան նամակներ. Ս. Էջմիածին, Բեդերսպուրկ, Թիֆլիս, Պերլին, Վիեննա, Եգիպտոս, Ճափոն, Ռումանիա, Անգլիա, Աւստրալիա, Ամերիկա, Պուլկարիա, Փարիզ, Սելանիկ: Պատուիրակներու տեղեկագրեր:
2. Բարեկարգութեան ծրագրի պատճառաբանութիւն. Պատրաստութեան ատաղձը եւ նախնական ձեւերը:
3. Ապահովութեան Յանձնաժողովի տեղեկագիրը յարակից պաշտօնագիրներով:

Ծրար 25. /Թիւ Շ. 789 - Վերջ/

1. 46 հատ Տաճկերէն թերթեր, ամբաստանութիւն եւ դատաւարութիւն ջարդարարներու դէմ:
2. 61 կտոր մեծ ու փոքր քառթեր:
3. 89 կտոր թերթերէ կտրօններ, յայտարարութիւններ եւ քարտէս:
4. Մէկ հեռագրական բառարան:
5. 33 լուսանկար Թուրքերէն վաւերագրերու:
6. Ծրար Հայոց անուններու:

¹ Թարգմանաբար՝ «Ընդհանուր ակնարկ հայկական նահանգների էլևմտական վիճակի մասին»:

Արխիվի աղբյուրագիտական եզակի արժեքը

Հայոց ցեղասպանության այս արխիվն իր ծավալով և տարաբնույթ վավերագրերի ընդգրկումով անգնահատելի արժեք ունի 1912-1922 թթ. հայ ժողովրդի համար ճակատագրական պատմաքաղաքական իրադարձությունների, օսմանյան և քեմալական իշխանությունների հայաջինջ քաղաքականության դեռևս շրջանառությունից դուրս մնացած մանրամասները վեր հանելու տեսանկյունից:

Բազմալեզու ձեռագիր և մեքենագիր (հայերեն, օսմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն, գերմաներեն, ինչպես նաև հայատառ թուրքերենով գրված) այս հավաքածուի մի շարք վավերագրերի հեղինակներն իրենց վերլուծություններով անդրադառնում են դեռևս աբդուլհամիդյան ժամանակաշրջանից ի վեր հայերի հանդեպ իրագործված բռնաճշումներին և կոտորածներին՝ հաճախ կատարելով պատմական անդրադարձ հայ ժողովրդի պատմությանը: Մի շարք վավերագրեր հաղորդում են Առաջին աշխարհամարտից առաջ և հետո վիճակագրական տեղեկություններ հայերի մասին: Բազմաթիվ վավերագրեր և արձանագրություններ ներկայացնում են Հայկական հարցն իր զարգացման ընթացքով, ինչպես նաև 1912-1914 թթ. և 1918-1922 թթ. միջազգային ատյաններում հայկական պատվիրակությունների ծավալած աշխատանքները:

Արխիվում են պահվում ժամանակի հայ պաշտոնական, հասարակական-քաղաքական և հոգևոր հայտնի գործիչների, առանձին անհատների տեղեկագրերը, դիմումները, նամակներն ու ծանուցումները, հեռագրերը՝ ուղղված Կ. Պոլսի Հայոց պատրիարքներ Հովհաննես արք. Արշարունու և Զավեն արք. Տեր-Եղիայանի, ինչպես նաև պատրիարքարանի տեղեկագրերն ու ծանուցումներն օսմանյան իշխանություններին: Արխիվում են գետեղված Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի հայկական նահանգներում բարենորոգումներին վերաբերող նամակագրությունը՝ ռուսական կառավարության և Կովկասի փոխարքայության միջև:

Ժամանակաշրջանի միջազգային ատյաններում Հայկական հարցի տարբեր հանգրվաններն ուսումնասիրելու առումով կարևոր մանրամասներ են պարունակում Հովհաննես արք. Արշարունու, Զավեն արք. Տեր-Եղիայանի, Սահակ կաթողիկոս Խապայանի, Պողոս Նուբար փաշայի, Գաբրիել Նորատունկյանի, Միհրան Տամատյանի, Արամ Անտոնյանի, Ավետիս Ահարոնյանի, Ալեքսանդր Խատիայանի և այլոց տեղեկագրերն ու նամակները, հեռագրերը՝ ուղղված նաև Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ռուսաստանի և ԱՄՆ-ի կառավարություններին ու հասարակական կազմակերպություններին, Կ. Պոլսում Դաշնակից պետությունների դեսպանություններին, Բարձր հանձնակատարներին, Փարիզի վեհաժողովին, մի շարք համաժողովների, Ազգերի լիգային, «Հայասիրաց ընկերություններին» և այլն: Առկա են նաև Հայկական հարցին վերաբերող բազմաթիվ հուշագրեր, զեկույցներ, վիճակագույցներ: Բազմաթիվ էջեր ներկայացնում են Սևրի պայմանագրին, Հայաստանի մանդատին, Կիլիկիայի ճակատագրին, հայ-հունական հարա-

բերություններին և «Ազգային օջախի» կազմությանն առնչվող հարցեր:

Արխիվում են պահվում որբերի, բռնի իսլամացված, թուրքերի և այլ մուսուլմանների մոտ արգելափակված կանանց ու երեխաների վիճակագրությունը, անվանացանկերը, նրանց փրկության պատմություններն ու պատրիարքարանի և այլ անհատների՝ այդ ուղղությամբ կատարած հսկայածավալ աշխատանքների, «Չեզոք տան» գործունեությունը ներկայացնող բացառիկ նյութեր: Մի շարք վավերագրեր լուսաբանում են «Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի» (Near East Relief) և այլ բարեգործական կազմակերպությունների աշխատանքները:

1919-1922 թթ. Կ. Պոլսի հասարակական-քաղաքական և հոգևոր կյանքի իրողությունները, այդ շրջանում գավառների և Կիլիկիայի կացությունը գրեթե ամենօրյա պարբերականությամբ ներկայացնում են Համազգային խորհրդի նիստերի ատենագրությունները (արձանագրություն): Այդ նիստերում ընթերցված ու քննարկված շատ տեղեկագրեր, նամակներ ու հեռագրեր մաս են կազմում այս հավաքածուի:

Երուսաղեմի պատրիարքարանում հանգրվանած այս արխիվում արժեքավոր են առաջնորդարաններից եկած նամակները, որոնք մանրամասնում են հայերի զանգվածային կոտորածները, բռնագաթը, ունեզրկումն ու բնաջնջումը և առևանգումը, Կիլիկիայում ֆրանսիացիների ու անգլիացիների իրականացրած գործողությունները, թուրքական կանոնավոր զորքի և չեթեների¹ ոճրագործությունը: Արխիվում հավաքվել են նաև հայ ժողովրդի հանդեպ իրագործված հանցագործությունները փաստող դատական հայցադիմումներ՝ ուղղված Օսմանյան կայսրության Արդարադատության և դավանանքների ու Ներքին գործերի նախարարություններին: Պահվում են նաև դրանց հետադարձ պատասխանները՝ պաշտոնական համարակալումներով: Վավերագրերը հաղորդում են նաև Հայոց ցեղասպանության ականատեսների վկայությունները:

«Տեղեկատու դիվանը» ի մի է բերել նաև օսմանյան դատարաններում մեղադրվող կողմի թղթածրարները և դատական նյութերը: Դիվանի անդամները իրավունք են ունեցել պատճենել և ձեռք բերել դատարանի փաստաթղթերը՝ հավաքելով շատ կարևոր վավերագրեր: «Թուրք Պատերազմական Ատեանի վարած դատավարությանց ընթացքին 1919-1921, Հայեր իրաւական կողմ էին Ատեանի առջեւ եւ այս իսկ հանգամանքով իրաւունք ունէին թուրք վաւերագրերէն պաշտօնապէս վաւերացուած պատճէններ եւ օրինակներ ունենալու»²: Արխիվի թղթածրարները հիմնավոր ապացույցներ ու փաստեր են պարունակում Հայոց ցեղասպանության գլխավոր հանցագործների վերաբերյալ: Հայերեն, ֆրանսերեն, անգլերեն և օսմաներեն բազմաթիվ անվանա-

¹ **Չեթե** – ոչ կանոնավոր զինված խումբ, հրոսակախումբ, ավագակախուր: Ունի նաև աշխարհագոր իմաստը: Տվյալ ժամանակաշրջանում օգտագործվել է ընդհանրապես զինված, բայց կանոնավոր զորքի մաս չկազմող խումբը բնորոշելիս:

² **Գրիկեր**, նշվ. աշխ., էջ 71:

ցանկեր և գործեր ներկայացնում են տեղեկություններ թուրք ոճրագործների մասին: Տրվում են նրանց անուն-ազգանունները, զբաղեցրած պաշտոնը, հանցանքի տեսակը: Տարբեր թղթածրարներում տեղ են գտել Հայոց ցեղասպանությանն ու Հայկական հարցին առնչվող տվյալ ժամանակաշրջանի պարբերականներից էջեր, առանձին կտրված թերթոններ՝ տարբեր լեզուներով: Մի շարք վավերագրեր արտացոլում են Կ. Պոլսի պատրիարքարանի՝ Խորհրդային Հայաստանի հետ հարաբերություններ հաստատելու և Հայաստանի սովյալներին օգնություն ցուցաբերելու գործողությունները: Այսպիսով արխիվի յուրաքանչյուր վավերագիր եզակի արժեք ունի:

Ամփոփելով նշենք «Տեղեկատու դիվանը», հավաքելով մեծածավալ այս արխիվը, վատահ էր, որ մի օր արդարադատությունը հաղթելու է, և պատժվելու են Հայոց ցեղասպանությունն իրագործած հանցագործները: Հայոց ցեղասպանությունը կատարված իրողություն է, սակայն թուրքական պետական ժխտողական քաղաքականությունը, որին լծված է նաև թուրքական պատմագիտությունը, մի շարք օտար այլ հեղինակներ, աշխատում է ամեն օր՝ անխափան և անվրեպ՝ կիրառելով նաև ավելի «ճկուն» մեթոդներ, դիմելով հնարավոր ու անհնար միջոցների՝ ժխտելու Հայոց ցեղասպանությունը:

Այսօր համայն հայության և Հայաստանի Հանրապետության առջև ծառայած ճակատագրական զարգացումների արմատները համակողմանիորեն լուսաբանված են այս արխիվում պահվող բազմաթիվ էջերում: Արխիվի վավերագրերն արտացոլում են մեծ տերությունների և Օսմանյան կայսրության ու քեմալական Թուրքիայի միջև ռազմաքաղաքական գործողությունների հորձանուտում հայտնված հայության վիճակը: Այսօր ևս տարածաշրջանում չեն փոխվել հակամարտող ուժերը և նրանց շահերն ու քաղաքական նպատակները: Հետևաբար այս բացառիկ արխիվը կարող է նաև ուղեցույց դառնալ ներկա իրավիճակը ճիշտ գնահատելու համար: Այն ամբողջությամբ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության անհերքելի ու անգնահատելի վկայարան է:

(Շարունակելի)

Լուսինե Սահակյան – Երուսաղեմի Հայոց պատրիարքարանում պահվող «Տեղեկատու դիվանի»՝ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության արխիվի պատմությունն ու «Բովանդակությունը»

Երուսաղեմի Հայոց պատրիարքանում պահվող 11 տուփ կազմող Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության՝ տարբեր լեզուներով բազմահազար վավերագրեր ընդգրկող արխիվը թվայնացվել է, և ընթանում են ցուցակագրման աշխատանքները: Այս արխիվը ստեղծել է Կ. Պոլսի Հայոց պատրիարք Զավեն արք. Տեր-Եղիայանի հովանու ներքո 1919 թ. կազմավորված «Տեղեկատու դիվանը»: Հոդվածում լուսաբանվում են «Տեղեկատու դիվանի» կազմավորման պատմությունը, գործառնություններն ու նպատակները, հրապարակվում է դիվանի վարիչ Կարապետ Լուրյանի տեղեկագրի բնագիրը, որն առավել համապարփակ է ներկայացնում այս կառույցի բուն նպատակը: Առաջին անգամ հրապարակվում է նաև արխիվի «Բովանդակությունը», որն ընդհանրացված ամփոփում է հավաքված վավերագրերի շրջածիրը: Երուսաղե-

մի Հայոց պատրիարքարանում պահվող այս արխիվն աղբյուրագիտական և պատմաքաղաքական անգնահատելի արժեք ունի 1912-1922 թթ. օսմանյան և քեմալական իշխանությունների հայաջինջ քաղաքականության՝ դեռևս շրջանառությունից դուրս մնացած մանրամասները վեր հանելու տեսանկյունից:

Лусине Саакян – *История и «Содержание» архива Армянского вопроса и Геноцида армян «Информационного бюро», хранящегося в Армянском патриархате Иерусалима*

Ключевые слова – Геноцид армян, Армянский вопрос, Иерусалим, Константинополь, «Информационное бюро», патриарх Завен, К. Нуриян, Г. Гергерян, документ, архив, опись

Многотысячные документы на разных языках из 11 коробок архива Армянского вопроса и Геноцида армян, хранящихся в Армянском патриархате Иерусалима, отсканированы, проводится работа по их описи. Архив создан «Информационным бюро», образованным в 1919 г. под покровительством Армянского Патриарха Константинополя, архиепископа Завена Тер-Егияяна. В статье освещаются история формирования, функции и цели «Информационного бюро», публикуется оригинал отчета заведующего Бюро Карапета Нурияна, в котором всесторонне представлена настоящая цель данной структуры. Впервые публикуется также «Содержание» архива, в котором дано обобщающее изложение охвата собранных документов. Хранящийся в Армянском патриархате Иерусалима архив представляет собой редкую источниковедческую и историко-политическую ценность с точки зрения выявления оставшихся за рамками научного оборота подробностей политики истребления армян, проводимой в 1912-1922 гг. османскими и кемалистскими властями.

Lusine Sahakyan – *History and “Content” of the Armenian Question and Armenian Genocide Archive of the “Information Bureau”, Stored at the Armenian Patriarchate of Jerusalem*

Key Words – Armenian Genocide, Armenian Question, Jerusalem, Constantinople, “Information Bureau”, Patriarch Zaven, K. Nuryan, G. Gergeryan, document, archive, inventory

The Armenian Question and Armenian Genocide archive, totaling 11 boxes of thousands of documents in different languages, stored at the Armenian Patriarchate of Jerusalem, was digitized. Presently the preparation of the catalogue of these documents is underway by a team led by this author. The archive was compiled by the “Information Bureau”, created in 1919 under the aegis of the Armenian Patriarch of Constantinople, Archbishop Zaven Ter-Yeghian. The article presents the history, functions and goals of the “Information Bureau”, and the original report of Karapet Nuryan. For the first time, the archive’s “Content” is published. The archive is invaluable as a unique source of political history of the era in unveiling new details of Ottoman and Kemalist rulers’ 1912-1922 policy towards the extermination of Armenians.

Ներկայացվել է 23.03.2022

Գրախոսվել է 24.03.2022

Ընդունվել է տպագրության 29.03.2022

Լուսինե Սահակյան – ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հայ օսմանական առնչությունների բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու (lsahakyan@ysu.am)

ՏԱՎՈՒՇ ԲԵՐԴԸ

Բանալի բառեր – Տավուշ բերդ, Տավուշ գավառ, Ուտի գավառ, Սմբատ Ա, Աշոտ Բ, Յիլի Ամրամ, Աբաս Գյուրիկյան, Վանական վարդապետ, Մոլար նոյին, Գրիգոր Ակներցի

Տավուշ բերդը զարգացած ավատատիրության ժամանակաշրջանի Հայաստանի պաշտպանական համակարգի հզոր ու նշանավոր ամրություններից է: Ի տարբերություն իր ժամանակ կառուցված շատ այլ բերդերի և ամրոցների՝ նրա տեղադրությունը վստահաբար հայտնի է: Գտնվում է Տավուշի մարզի Բերդ քաղաքի հարավարևելյան կողմում: Տավուշի միջնաբերդը զբաղեցնում է համանուն գետի արևելյան ափին վեր խոյացող քարածայրի գագաթը: Միջնաբերդի և ստորին պարիսպների հյուսիսային որոշ հատվածներ դեռևս պահպանվում են: Մակայն, ցավոք, միջնաբերդի պարիսպների քայքայումը վերջին տարիներին արագանում է և աստիճանաբար սպառնալից բնույթ կրում:

Խնդրո առարկա ամրության մասին պատմիչներից առաջինը հիշատակել է Հովհաննես Դրասխանակերտցին՝ իբրև «զամրոցն Տաւրշոյ»¹: Հետագա սկզբնաղբյուրներում Տավուշը վկայվում է թե՛ իբրև ամրոց, թե՛ որպես բերդ և անգամ՝ դղյակ: Նրա անվան ծագումը ճշգրտելուն նպաստում են պատմիչի ոչ միայն վերոբերյալ, այլև «ձորն Տաւրշոյ»² հաղորդումները: Քանի որ Տավուշ գավառը ներառել է ոչ թե մեկ, այլ երեք ձոր, որոնցով հոսում են Ախնջի, Տավուշ և Հախում գետերը, տրամաբանական է ենթադրել, որ պատմիչը նկատի է ունեցել Տավուշ գետի և ոչ թե գավառի ձորը: Եթե այս վարկածը համապատասխանում է իրականությանը, կարելի է ընդունել այն տեսակետը, որ Տավուշ բերդն անվանակոչվել է ոչ թե գավառի, այլ ժամանակին գավառի անունը ստացած գետի անունով:

Տավուշ բերդի շինության ժամանակը և կառուցողի անունը հայտնի չեն: Այդուհանդերձ, Հովհաննես Դրասխանակերտցու մատուցած տվյալները թույլ են տալիս ճշգրտելու դրանք: Անդրադառնալով 850 թ. սկսված հակաարաբական հուժկու ապստամբությունը ճնշելու նպատակով 852 թ. մեծ զորքով Հայաստան ուղարկված Բուղա զորավարի գործողություններին՝ պատ-

¹ Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 321 (այսուհետև՝ **Հովհաննես Դրասխանակերտցի**):

² Նույն տեղում, էջ 321:

միչք մասնավորապես գրում է, որ նա «երթեալ ըմբոնէ զմեծ իշխանն Ատրնէրսեհ, որ բնակեալ էր յամրոցին Խաչենոյ և զայլ ևս զհամազգիս նորա: Եւ անտի չուեալ զնայ ի գաւառն Գարդմանայ՝ և պատնէշ և պաշարումն շուրջ Գարդման բերդին եղեալ ըմբոնէ անդի և զիշխանն Գարդմանայ զԿտրիճն ի կալանս կապանաց արկեալ: Եւ անտի ևս չուեալ յՈւտի գաւառ՝ ձերբակալ ի Տուս գիւղ առնէ զՍտեփաննոս, որում և Կոն անուանէին զնա»¹: Ստեփանոս Կոնի ձերբակալությունը փաստում է նաև նրան «զիշխանն Սեւորդեաց» կոչած Աստղիկ պատմիչը²:

Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն համապատասխանաբար Խաչեն ամրոցին և Գարդման բերդին ապավինած Ատրնէրսեհ ու Կտրիճ իշխանների, Ստեփանոս Կոնը գտնվել է անպաշտպան Տուս գյուղում, որն ակնհայտորեն եղել է նրա իշխանանիստը: Տուսը Բերդ համայնքի Տավուշ գյուղն է, որը գտնվում է Տավուշ բերդից ընդամենը չորս կիլոմետր հեռավորության վրա: Այս հանգամանքը փաստում է, որ այդ ժամանակ, այն է՝ IX դ. կեսերին, Տավուշ բերդը դեռևս գոյություն չի ունեցել:

Անդրադառնալով Սմբատ Ա-ի (890-914) գործունեությանը՝ Հովհաննես Դրասխանակերտցին ի մասնավորի գրում է, որ նա «առեալ և յինքն ... զՈւտի գաւառ մինչև ի քաղաքն Հունարակերտ և մինչև ի Տուս և ի Շամքոր»³: Դրանից անմիջապես հետո պատմիչն անթվական հիշատակում է Դվինի 893 թ. ահեղ երկրաշարժը՝ բավարարվելով «զայսու ժամանակալ»⁴ նշումով: Դրանից հետևում է, որ մասնավորապես Ուտի գավառում Սմբատ Ա-ի գործողությունները տեղի են ունեցել այդ երկրաշարժից քիչ առաջ: Հովհաննես Դրասխանակերտցին, Ուտի գավառ ասելով, հետին թվով նկատի է ունեցել ամենայն հավանականությամբ 915/916 թ. ստեղծված արքունապատկան վարչամիավորը: Այն ընդգրկել է Ուտիքի Տավուշ և Աղուէ, ինչպես նաև Գուգարքի Ձորոփոր գավառները⁵: Պատմիչի կողմից այս անգամ ևս Տուսի հիշատակումը, իսկ Տավուշի լռության մատնումն անուղղակիորեն փաստում են, որ նաև այդ ժամանակ, առնվազն մինչև Դվինի վերոհիշյալ երկրաշարժը, Տավուշ բերդը դեռևս կառուցված չի եղել:

Տավուշ բերդի 921 թ. գոյություն ունենալը և դրան նախորդած տասնամյակում երկրի ծայրահեղ ծանր վիճակը թույլ են տալիս վստահորեն պնդել, որ այն կառուցել է Սմբատ Ա-ն IX դ. վերջին տասնամյակի կեսերից X դ. առաջին տասնամյակի վերջերն ընկած ժամանակահատվածում, երբ երկրի

¹ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 127:

² Մատենագիրք Հայոց, ԺԵ հատոր, Ժ. դար, Պատմագրություն, երկու գրքով, գիրք Բ, Երևան, 2011, էջ 708:

³ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 161:

⁴ Նույն տեղում, էջ 162:

⁵ Տե՛ս Շահնազարյան Ա., Ուտի գավառը // «Բանբեր հայագիտության» (այսուհետև՝ «ԲՀ»), 2020, թիվ 2, էջ 28:

վիճակը համեմատաբար բարվոք էր: Այսպիսով, այդ բերդի կառուցապատման համար պահանջվել է շուրջ 15 տարի: Խնդրո առարկա ամրությունը հնագիտորեն առաջինը հետազոտած Հ. Եսայանն իր հերթին նրա երրորդ շինարարական հորիզոնը թվագրել է IX-X դարերով¹, ինչը չի հակասում տողերիս հեղինակի առաջարկած թվագրությանը:

Տավուշ բերդի կառուցմամբ Սմբատ Ա-ն նպատակ է ունեցել ամրապնդել իր իշխանությունը Հովհաննես Դրասխանակերտցու բնորոշմամբ «ելուզակուտ»² բնակչությամբ Ուտի գավառում և հզորացնել Հայաստանի հյուսիսային սահմանների պաշտպանական համակարգը:

Հովհաննես Դրասխանակերտցին այդ բերդը հիշատակել է Աշոտ Բ-ի (914-928) դեմ Ցլիկ Ամրամի 921 թ. բարձրացրած ապստամբության առիթով: Վերջինիս Աշոտն «էր կացուցեալ... հրամանատար ի վերայ գործոյ աշխարհին»³, այսինքն՝ Ուտի գավառի կառավարիչ: Այն, որ իբրև այդպիսին Ցլիկ Ամրամը պետք է ամրակուտ նստավայր ունենար, կասկածից վեր է: Մակայն պատմիչը դրա անունը չի տալիս բավարարվելով հիշատակությամբ առ այն, որ Ցլիկ Ամրամը, պատրաստվելով ապստամբության, «առձեռն պատրաստ զամրոցն Տաւրշոյ առեալ՝ ի նմա ամրապահեստ առնէր զընտանիս տուն իւրոյ»⁴:

Պատմիչի հաղորդածի անորոշությունը հնարավորություն չի ընձեռում միանշանակ պատասխան տալու Տավուշ բերդը Ցլիկ Ամրամի նստավայրը լինելու կամ չլինելու հարցին: Կա երկու տարբերակ: Չի բացառվում, որ Հովհաննես Դրասխանակերտցին «առեալ» բառն օգտագործել է նրա ոչ թե «գրավել», այլ մյուս «հափշտակել» իմաստով⁵: Այն է՝ նա Ցլիկ Ամրամի կողմից նրա գերակա Աշոտ Բ-ին դավաճանելը, վերջինիս պատկանող բերդը միանձնյա տնօրինելը հափշտակություն, այլ ոչ թե գրավում է որակել: Նաև հնարավոր է, որ Ցլիկ Ամրամի նստավայրն այլ ամրություն է եղել, սակայն Տավուշի պարիսպների ամրությանը վստահելով՝ նա իր ընտանիքն այդտեղ է փոխադրել: Իրականությանն ավելի մոտ է առաջին տարբերակը, բայց ոչ անվարան պնդելի, ինչպես վարվել է Ռ. Մաթևոսյանը: Ըստ նրա՝ Ուտիի «գավառապետի նստավայրը Տավուշ բերդն էր, նրանցից հանվանե Դրասխանակերտցին հիշատակում է Մովսեսին և Ցլիկ Ամրամին»⁶:

Չնայած Հովհաննես Դրասխանակերտցու լրությանը՝ Ցլիկ Ամրամի ապստամբությունը ձախողվեց, և Ուտի վարչամիավորը նրա տարածքում

¹ Տե՛ս Եսայան Հ., Մաղումյան Ս., Շահնազարյան Ա., Տավուշ ամրոցի պեղումները // «ԼՀԳ», 1991, թիվ 2, էջ 132:

² Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 140:

³ Նույն տեղում, էջ 320:

⁴ Նույն տեղում, էջ 321:

⁵ Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. առաջին, ի Վենետիկ, 1836, էջ 309:

⁶ Մաթևոսյան Ռ. Բ., Տաշիր-Ձորագետ (X դ.-XII դ. սկիզբ), Երևան, 1982, էջ 54:

գտնվող բերդերով, այդ թվում Տավուշով հանդերձ, շարունակեց մնալ արքունապատկան: Սակայն, ի տարբերություն Ադուէի ու Չորոփորի, Տավուշ գավառն ու բերդը հետագայում չընդգրկվեցին Բագրատունիների կրտսեր ճյուղերից Կյուրիկյանների 981 թ. ստեղծած թագավորության կազմում: Դրանք շարունակում էին պատկանել այդ տոհմի ավագ Անիի ճյուղին: Այդ են փաստում տարբեր սկզբնաղբյուրներ¹, որոնց հաղորդումների նույնականությունը բացառում է հակառակը պնդելու հնարավորությունը: Ուստի Տավուշ գավառը, հետևաբար նաև բերդը, դեռևս 966 թ. Կյուրիկյաններին տրվելու Ռ. Մաթևոսյանի կարծիքը² սկզբնաղբյուրներով չի հիմնավորվում: Ընդհակառակը, Վարդան վարդապետը Գագիկ Ա-ից (990-1020) հետո Հովհաննես-Սմբատին (1020-1041) անցած գավառների թվում հիշատակում է նաև Տավուշը³:

Ըստ Տավուշ բերդի 1988 թ. պեղումների ժամանակ հայտնաբերված մի հնգատող արձանագրության՝ ստորին բերդում 1019 թ. կառուցվել է Սուրբ Աստվածածին անունը կրող եկեղեցի, որի մնացորդները պահպանվել են:

Խնդրո առարկա բերդը Տավուշ գավառի հետ 1045 թ. Անիի Բագրատունյաց թագավորության անկումից հետո, ընկավ Բյուզանդիայի տիրապետության տակ⁴: Հյուսիսային Հայաստանում վրաց արքա Դավիթ IV Շինարարի (1089-1125) նվաճումների առնչությամբ Վարդան վարդապետը գրել է, որ նա գրավել էր «և Գագ, և զՏերունականն և զՏայուշ և Կյեան, և զԼոտի և զՏաշիր և զՄահկանաբերդ և զբոլոր իշխանութիւն Հայոց Կիւրիկէի և Աբասայ»⁵: Քանի որ սկզբնաղբյուրներում իբրև թագավոր առաջին անգամ 1050 թ. հիշատակվող Կյուրիկե Ա-ի կողմից Տավուշ գավառին ուժով տիրելու հնարավորությունը բացառվում էր, ինքնին հասկանալի է, որ նա այն Տավուշ բերդով հանդերձ ստացել էր Բյուզանդիայից: Դա պայմանավորված էր Տաշիր-Չորագետի թագավորությունը Բյուզանդիայի քաղաքական ազդեցության ոլորտում հայտնվելով: Բերդ համայնքի Արծվաբերդ գյուղում 2020 թ.

¹ Տե՛ս Հավաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, ի Վենետիկ, 1862, էջ 90 (այսուհետև՝ **Վարդան վարդապետ**), Պատմութիւն նահանգին Միսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Միւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 300 (այսուհետև՝ **Ստեփանոս Օրբէլյան**), Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. I, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 384:

² Տե՛ս **Մաթևոսյան Ռ. Ի.**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Երևան, 1990, էջ 136:

³ Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 92:

⁴ Ռ. Մաթևոսյանը, հղելով Վարդան վարդապետի վերը նշված աշխատության վենետիկյան հրատարակության 99-րդ էջը, գրել է, որ Գրիգոր Մագիստրոսը 1045 թ. հետո՝ Միջագետք մեկնելուց առաջ, իր տիրույթների հետ նաև Ադստևի հովիտն ու Տավուշն է հանձնել Բյուզանդիային (տե՛ս **Մաթևոսյան Ռ. Ի.**, Տաշիր-Չորագետ (X դ.-XII դ. սկիզբ), էջ 127): Սակայն այդ էջում Վարդան վարդապետը գրում է միայն Ադստևի հովտում գտնվող Կայանն ու Կայծանը, ինչպես նաև Բջնին նրա կողմից Բյուզանդիային հանձնվելու մասին:

⁵ **Վարդան վարդապետ**, էջ 119:

հայտնաբերված՝ բյուզանդական կայսր Կոստանդին X Դուկասի (1059-1067) դրամը դրա ապացույցն է:

Շատ չանցած՝ 1088 թ., Կյուրիկե Ա-ն ստիպված էր հպատակվել սելջուկներին և դառնալ Գանձակի սելջուկյան մալիքության անմիջական հպատակը: Դրանից հետո Տաշիր-Ձորագետի թագավորությունը, տարածքային կորուստներ կրելով, գրկվեց նաև Տավուշ գավառից ու բերդից, որոնք անցան այդ մալիքությանը: Մյուս կողմից այդ թագավորության վրա աստիճանաբար ուժեղանում էր նաև վրացական ճնշումը:

Ի վերջո, ըստ Կիրակոս Գանձակեցու՝ Կյուրիկե Ա-ից հետո նրա որդիներ Աբասն ու Դավիթը «դաւեալք ի վրաց, ելեալք ի տանէ հայրենեաց, գնացին ի պարսիկս... և առնուն ի նոցանէ ի ժառանգութիւն զՏաւուշ, զՄաճնաբերդ և զայլ տեղիս»¹: «Ի պարսիկս» արտահայտությամբ պատմիչը նկատի ունի Գանձակի սելջուկյան մալիքությունը: Այսպիսով, վստահաբար Տավուշ ու Մաճնաբերդ բերդերը 1113 թ. իրենց շրջակայքով անցան համապատասխանաբար Աբաս և Դավիթ Կյուրիկյաններին²: Տավուշ բերդը դարձավ իր շրջակայքը ներառող համանուն իշխանության կենտրոնը:

Շատ չանցած, 1124 թ. գարնանն ու ամռանը³, ինչպես վերը նշվեց, Դավիթ IV Շինարարը Հյուսիսային Հայաստանում կատարեց մի շարք նվաճումներ: Արդյունքում Տաշիր-Ձորագետի Կյուրիկյան նախկին թագավորության տարածքը նա խլեց սելջուկներից: Արդեն տեսանք, որ ըստ Վարդան վարդապետի՝ վրաց թագավորի գրաված բերդերի թվում էր նաև Տավուշն իր շրջակայքով: Դա հավաստում է նաև Ստեփանոս Օրբելյանը⁴: Մակայն Առանի կառավարիչ (աթաբեկ) Կարա-Սոնկարը (1127-1140/1141), չհամակերպվելով Դավիթ IV Շինարարի գրաված տարածքները կորցնելու հետ, նրա հաջորդ Դեմետրե Ա-ի (1125-1155/1156) դեմ պայքար սկսեց դրանք վերադաձնելու համար: Փոփոխական հաջողություններով ընթացած այդ պայքարն ավարտվեց 1130-ական թվականների վերջերին՝ Կարա-Սոնկարի հաղթանակով: Այսպիսով, Տավուշի Կյուրիկյան իշխանությունը Տավուշ բերդով հայտնվեց Գանձակի սելջուկյան մալիքության գերակայության տակ:

Այդ ժամանակաշրջանում Տավուշ բերդում Հայ Աղվանից եկեղեցու գործունեության ասպարեզում տեղի ունեցավ մի կարևոր իրադարձություն: Այնտեղ 1139 թ. տրե ամսին (մայիսի 15-հունիսի 11) կայացավ ժողով, որի որոշմամբ այդ եկեղեցու ութ տարի թափուր մնացած կաթողիկոսական

¹ **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 151-152 (այսուհետև՝ **Կիրակոս Գանձակեցի**):

² Թվականի ճշտումը տե՛ս **Շահնազարեան Ա.**, Տաշիր-Ձորագետի Կիրիկեան թագավորության ճգնաժամն ու անկումը // «Հանդես ամսօրեայ», 2004, թիվ 1-12, պլունակ 297:

³ Տե՛ս **Մարգարյան Հ. Գ.**, Հյուսիսային Հայաստանի ու Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Երևան, 1980, էջ 90-92:

⁴ Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, էջ 379:

աթոռը զբաղեցրեց Գրիգորիս Բ-ն (1139-1145): Ժողովը գլխավորում էր Հայոց Արևելից կողմանց երևելի վարդապետներ Դավիթ Ալավկաորդու, Թոքակերի որդի Գրիգորի և այլոց խնդրանքով Հայոց կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունու (1113-1165) կողմից այնտեղ ուղարկված Կարինի եպիսկոպոս Սահակը: Այս իրադարձությանն անդրադարձած, բայց ժողովի կայացման տեղն ու ժամանակը չնշած Կիրակոս Գանձակեցուն լրացնում է Մխիթար Գոշը: Ըստ նրա՝ «Ի ՇՁԸ թուակ. Հայոց (1139 թ. – Ա. Շ.) ի գալ տեր Սահակայ յաշխարհս Աղուանից, ժողովէր զամենեսեան առ հասարակ ի տուն թագաւորին Աբասայ Բագրատունոյ՝ որդոյ Կիրիկէի արքայի, որ եւ ժողովեալ ամենեցուն առաջին նորա ի բերդն, որ կոչի Տաւուշ ուր եւ ժողովեալ հարանց սրբոց եւ եպիսկոսաց. թագաւորն Դավիթ եղբայր Աբասայ թագաւորի»¹:

Ժողովից քիչ անց՝ 1139 թ. արեգ ամսին (սեպտեմբերի 13-հոկտեմբերի 10), տեղի ունեցավ Գանձակի ուժգին երկրաշարժը, որը պատուհասեց նաև Տավուշ գավառը: Ավերվեց նաև Տավուշ բերդի վերը հիշատակված Սուրբ Աստվածածին եկեղեցին: Այն ի հիշատակ իր և Դավիթ եղբոր հոգու Աբասը նախքան 1144 թ. նորոգեց²:

Օգտվելով Կարա-Մոնկուրից հետո նրա տնօրինած շրջանների խառնակ ու անտերունչ վիճակից՝ Պարսկաստանից եկած Չավլի գորապետը սկսեց ապստակել դրանք: Նա մի շարք վայրեր, այդ թվում Խաչենը 1143 թ. ասպատակելուց հետո, ըստ Մխիթար Գոշի՝ «ի միուսում ամին դարձեալ գայր ի գաւառս Առանայ: Եւ փութանակի երթայր ի բերդն Տավուշ յորում ամրացեալ էր թագաւորն Աբաս, և բազում ջանիւ ընդ երկար պաշարեալ զնա՝ ապա առնոյր զբերդն. իսկ Աբաս անցեալ զնաց առ թագաւորն Վրաց ի ՇՂԴ թուականին»³: Այսպիսով, ըստ Մխիթար Գոշի՝ Չավլին Տավուշը գրավել է 1144 թ.՝ երկարատև պաշարումից հետո: Այս իրադարձությանն անդրադարձել է նաև Սամվել Անեցին: Սակայն նա Տավուշի գրավումը թվագրել է 1145 թվականով, նաև նշել, որ դա տեղի է ունեցել քառասնօրյա պաշարումից հետո⁴: Դեպքերի հետագա զարգացումից հետևում է, որ ճիշտ է Մխիթար Գոշի առաջարկած թվականը⁵: Չավլին Տավուշը գրավեց՝ «հանելով զթագաւորն Աբաս առանց վնաս առնելոյ»⁶, և նա ապաստանեց Մաճնաբերդում՝ Դավիթ եղբոր մոտ⁷:

¹ **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը՝ Վարազ Առաքելյանի, Երևան, 1983, էջ 351 (այսուհետև՝ **Մովսէս Կաղանկատուացի**):

² Տե՛ս **Եսայան Հ., Մաղումյան Ս., Շահնագարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 136-140:

³ **Մովսէս Կաղանկատուացի**, էջ 353:

⁴ Տե՛ս **Սամուէլ Անեցի և շարունակողներ**, Ժամանակագրություն, աշխատասիրությանը Կարեն Մաթևոսյանի, Երևան, 2014, էջ 213 (այսուհետև՝ **Սամվել Անեցի և շարունակողներ**):

⁵ Չավլիի կողմից Տավուշ բերդի գրավման թվականի ճշգրտումը տե՛ս **Շահնագարյան Ա.**, Տավուշի Կյուրիկյան իշխանությունների պատմությունից // «Էջմիածին», 2017, թիվ Ժ, էջ 110-111:

⁶ **Սամվել Անեցի և շարունակողներ**, էջ 213:

⁷ Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 152:

Գրիգոր Ակնեբցու «գամուր դղեկն զՏաուշ, որ էր այժոռ Սուլթանի»¹ վկայությունից հետևում է, որ այդ բերդի գրավումից հետո Աբաս Կյուրիկյանի իշխանությունը վերացվեց, և նրա տեղում ստեղծվեց սելջուկյան սուլթանություն՝ իր տիրոջ նստավայր ունենալով Տավուշ բերդը: Այդ վարչական միավորը գոյություն ունեցավ մինչև 1203 թ., երբ ըստ «Վասն անցեալ աւուրցն» խորագրով ժամանակագրական մանր հատվածի²՝ Տավուշ բերդն ազատագրվեց Ջաքարյանների կրտսեր ճյուղը ներկայացնող իշխան Բլուզ Ջաքարե Վահրամյանի կողմից:

Այսպիսով Տավուշ բերդը և գավառն ընգրկվեցին վրացական թագավորության կազմում գտնվող Վահրամյանների հզոր իշխանության մեջ:

Դեռևս Բագրատունյաց շրջանում նկատելի էր բերդն իր շրջակա տարածքով գավառ կոչվող վարչամիավոր կազմելու և այն դրա կենտրոն դարձնելու սկզբունքը³: Հաղբատի վանական համալիրում իր վաղամեռիկ եղբայրների հիշատակին Բլուզ Ջաքարեի տիկին Խաթուն իշխանուհու կառուցված եկեղեցու պատին նրա թողած 1205/1206-1215/1216 միջակայքով թվագրվող արձանագրությունից հետևում է, որ այդ ժամանակ ևս նույն սկզբունքն էր գործում: Խաթունը դրանում ամուսնուն ներկայացնում է որպես «տեր Գագա եւ Տաւշո, Գարդմանա եւ Տէրունականին եւ այլոց գաւառաց»⁴:

Այս պնդման օգտին է վկայում նաև Խորանաշատի վանքում 1252 թ. գրչագրված մի ձեռագրի հիշատակարանում առկա «ի գաւառիս Երզնէանք կոչեցեալ»⁵ արտահայտությունը: Թե՛ Տավուշ և թե՛ Երզնէանք բերդերն ընդգրկված էին աշխարհացույցյան Տավուշ գավառում, բայց, ինչպես տեսնում ենք, XIII դ. հանդես են գալիս իբրև դրա տարածքի վրա ստեղծված՝ իրենց անունը կրող գավառի կենտրոններ: Չի բացառվում, որ Տավուշ բերդը Վահրամյանների ենթակայության տակ անցնելուց հետո դարձել է նրանց կողմից ստեղծված և նախկին Տավուշի Կյուրիկյան իշխանության տարածքին համապատասխանող վարչամիավորի կենտրոնը: Տավուշ բերդը կրող քառաժայռի արևմտյան ճակատին պահպանվել է մի տառաշարք՝ «ՈՄԴԹ»⁶: Այն սելջուկյան տիրապետությունից խնդրո առարկա բերդի ազատագրման տարեթիվն է՝ 1205: Տավուշ բերդի Սուրբ Աստվածածին եկեղեցին հիշատակած վերոհիշյալ արձանագրության նման՝ այն փրկչական թվականով է: Իսկ

¹ **Գրիգոր Ակնեբցի**, Պատմութիւն թաթարաց, Երուսաղէմ, 1974, էջ 23 (այսուհետև՝ **Գրիգոր Ակնեբցի**):

² Տե՛ս Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., էջ 392:

³ Տե՛ս **Շահնագարյան Ա.**, Վահրամյանների իշխանությունը, Երևան, 1990, էջ 133:

⁴ Դիվան հայ վիմագրության, պրակ IX, կազմեցին Ս. Գ. Բարխուդարյան, Կ. Գ. Ղաֆադարյան, Ս. Տ. Մաղումյան, Երևան, 2012, էջ 208:

⁵ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 264:

⁶ **Ղաֆադարյան Կ.**, Էջեր հայոց միջնադարյան մշակույթի և պատմության, I, Երևան, 2007, էջ 304:

ինչպես հայտնի է՝ դրա համաձայն Քրիստոսի ծնունդը հաշվվում է այժմ գործող թվականից երկու տարի առաջ: 1205 թվականից ավելիք երկու տարին հանելով ստանում ենք 1203 թ.: Ինչպես արդեն տեսանք, այդ թվականը՝ 1203-ը, տալիս է նաև «Վասն անցեալ աուրցն» խորագրով վերոբերյալ ժամանակագրական մանր հատվածը:

1203-1229 թթ. Տավուշ բերդը սկզբնաղբյուրներում չի հիշատակվում: Այն չի նշվում նաև 1229 թ. գարուն-ամռանը խորենշահ Ջալալ ադ-Դինի (1220-1231) կողմից Վահրամյանների իշխանության վրա կատարած պատժիչ արշավանքի ժամանակ պաշարված բերդերի թվում¹: Եվ դա այն դեպքում, երբ նրա հրոսակները ներխուժել էին նաև Տավուշ գավառ և ավերել Խորանաշատի վանքը²: Դրանից հետո Վանական վարդապետն իր սաների հետ նախ ապաստանել էր Տավուշ բերդի հարավակողմում ընկած Լորուտ գյուղի մոտ գտնվող մի քարայրում, ապա դրա մերձակայքում: Դա ևս անուղղակիորեն փաստում է, որ Ջալալ ադ-Դինի հրոսակները Տավուշ բերդ կամ նրա շրջակայք չէին հասել:

Խնդրո առարկա բերդն իր պատմության մեջ երկրորդ և վերջին անգամ պաշարվեց 1236 թ.: Այդ թվականին նվաճման նպատակով հյուսիսարևելյան Հայաստան ներխուժած մոնղոլական բանակի մի ջոկատ գորապետ Մուլար նոյինի գլխավորությամբ մտավ Վահրամյանների իշխանության տարածք: Վրաց արքունիքից օգնություն չստացած նրա իշխան Վահրամ Գագեցին, համոզվելով, որ սեփական ուժերով մոնղոլներին չի կարող հետ մղել, Ադրուղա որդու հետ տեղից տեղ էր փախչում³, մինչև որ ապաստանեց Քուլթախում⁴: Դրա հետևանքով նրա իշխանության «ամրոցս, և զգեռոս և զագարակս ամենեքեան տուեալ լինէին ի ձեռս նոցա (մոնղոլների – Ա. Շ.) ի սուղ ժամանակս, անվաստակ և առանց աշխատութեան»⁵: Ինչ վերաբերում է Տավուշ բերդին, ապա այն առանց դիմադրության չէ, որ հանձնվեց: Այդ մասին է վկայում Գրիգոր Ակներցին: Ըստ նրա՝ մոնղոլներն «առին եւ գործով զամուր դղեկն Տավուշ»⁶: Ինչպես տեսնում ենք, Տավուշ բերդն այս անգամ ևս գրավվեց համառ դիմադրությունից հետո միայն: Մոնղոլների կողմից այդ բերդին մերձակա Վանականի քարայրը 1236 թ. վարդավառի օրը՝ հուլիսի 6-ին, պաշարելը⁷ հուշում է, որ այն գրավվել է դրանից քիչ առաջ կամ հետո:

Մոնղոլները ռազմական գործողություններն ավարտելուց հետո՝ 1236 թ. աշնանը, վերադարձան Մուղան՝ իրենց ձմեռանոց: Նախքան այդ նրանք Ղա-

¹ Տե՛ս Սիխաբ ад-Дин Мухаммад ан-Насиви, Жизнеописание султана Джалал ад-Дин Манкбурны, Баку, 1973, с 226:

² Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 244:

³ Տե՛ս Վարդան վարդապետ, էջ 145:

⁴ Տե՛ս Կարլիս Ծոփրեբա, История Грузии, под. ред. Р. Метревели, Тбилиси, 2008, с. 346:

⁵ Վարդան վարդապետ, էջ 145:

⁶ Գրիգոր Ակներցի, էջ 23:

⁷ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 245:

րա Բուդա անունով մի գորապետի թողեցին տեղում՝ հանձնարարելով «քակել զամենայն ամուրս երկրին գոր առեալ էին, գոր և քակեցին ի հիմանց զանառիկ բերդսն»¹: Չնայած նրանք իրենց գրաված բոլոր բերդերն ու ամրոցները չէ, որ քանդեցին, սկզբնաղբյուրներում հետագայում Տավուշ բերդի հիշատակությունների չգոյությունը և մոնղոլներին դիմադրած լինելը հիմք են տալիս կարծելու, որ այն նրանց կողմից ավերվել է: Դա են վկայում նաև այդ բերդի 1986-1988 թթ. շերտագրական պեղումների արդյունքները²: Այսպիսով, անտարակուսելի է, որ Տավուշ բերդի գոյության ժամանակագրական սահմանները ներառում են IX դ. վերջին տասնամյակի կեսերից մինչև XIII դ. չորրորդ տասնամյակի երկրորդ կեսն ընկած միջակայքը: Հետևաբար, այն գոյություն է ունեցել շուրջ երեքուկես դար:

Արտաշես Շահնազարյան – *Տավուշ բերդը*

Տավուշը միջնադարյան Հայաստանի հզոր ու նշանավոր բերդերից է, որը գտնվում է Տավուշի մարզի Բերդ քաղաքի հարավարևելյան կողմում: Այն վստահաբար կառուցվել է Սմբատ Ա-ի կողմից IX դ. վերջին տասնամյակի կեսերից X դ. առաջին տասնամյակի վերջերն ընկած ժամանակամիջոցում: Տավուշ բերդի կառուցմամբ Սմբատ Ա-ն երկու նպատակ է ունեցել: Նախ ամրապնդել Հայաստանի հյուսիսային սահմանների պաշտպանությունը և ապա անհնազանդ Տավուշ գավառը պահել արքունիքի անմիջական հսկողության տակ: Առաջին անգամ հիշատակվում է Աշոտ Բ Երկաթի դեմ Ուտի վարչական միավորի կառավարիչ Յիլի Ամրամի 921 թ. ապստամբության կապակցությամբ: Տավուշ բերդը մինչև 1045 թ. պատկանել է Բագրատունիներին: Դրանից հետո հաջորդաբար անցել է Բյուզանդիային, Կյուրիկյաններին, սելջուկներին ու Վահրամյաններին: Այդ ընթացքում եղել է Տավուշ գետի ավազանում ստեղծված Կյուրիկյան համանուն իշխանության, սելջուկյան սուլթանության, իսկ Վահրամյանների օրոք՝ Տավուշ գավառ վարչական միավորի կենտրոնը: Սոնդոլները 1236 թ. այն գրավել և ավերել են:

Арташес Шахназарян – *Крепость Тавуш*

Ключевые слова – крепость Тавуш, провинция Тавуш, провинция Ути, Смбат I, Ашот II, Цлик Амрам, Абас Кюрикян, вардапет Ванакан, Молар-ноин

Тавуш являлся одной из мощно укрепленных и значительных крепостей средневековой Армении. Крепость находилась в юго-восточной части г. Берд Тавушской области. Она была построена Смбатом I в середине последнего десятилетия IX – конце первого десятилетия X в. Стрительство крепости Тавуш преследовало две цели. Во-первых, Смбат I хотел укрепить оборону северных границ Армении, во-вторых, держать непокорную провинцию Тавуш под непосредственным контролем царского двора.

¹ Տե՛ս Գրիգոր Ակնեցի, էջ 23-24:

² Տե՛ս Եսայան Հ. Ս., Սաղումյան Ս. Ս., Շահնազարյան Ա. Ի., նշվ. աշխ., էջ 132:

Впервые крепость была упомянута в связи с восстанием правителя административной единицы Ути Цлик Амрама против Ашота II в 921 г. До 1045 г. крепость принадлежала царскому роду Багратуни, впоследствии она поочередно переходила к Византии, Кюрикиянам, сельджукам и Ваграмянам. В этот период крепость Тавуш была центром созданного в бассейне реки Тавуш одноименного княжества Кюрикианов, сельджукского султаната, а при Ваграмянах – центром административной единицы провинции Тавуш. Тавушская крепость была разрушена в 1263 г. в результате захвата монголами.

Artashes Shahnazaryan – Tavush Fortress

Key Words – *Ashot II Yerkat, Tslik Amram, Medieval Armenia, Tavush, fortresses, city, governor, sultanate, protection, borders, revolt*

Tavush is one of the powerful and famous fortresses of medieval Armenia. It is located in the southeastern part of Berd city in Tavush Province. It was most probably built by Smbat I during the period between the middle of the last decade of the IX century and the end of the first decade of the X century. With the construction of Tavush Fortress, Smbat I pursued two goals. Firstly, to strengthen the protection of the northern borders of Armenia, secondly, to keep the disobedient Tavush Province under the direct control of the court. The fortresses was first mentioned in connection with the revolt of Tslik Amram, the governor of the Uti administrative unit, against Ashot II Yerkat in 921. Tavush fortress belonged to the Bagratids until 1045. After that, it passed to Byzantium, the Kyurikids, the Seljuks and the Vahramyans. During that period, it was the center of the administrative unit of the Kyurikid Dynasty established in the Tavush river basin, later that of the Seljuk sultanate, and under the Vahramyans it was the center of the Tavush Province administrative unit. It was captured and destroyed by the Mongols in 1236.

Ներկայացվել է 20.01.2022

Գրախոսվել է 07.03. 2022

Ընդունվել է տպագրության 29.03.2022

Արտաշես Շահնազարյան – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի միջին դարերի պատմության բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ (shahnazaryan1974@inbox.ru)

ԳԱԳԻԿ Ա ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆ ԵՎ ՆՐԱ ՏԻՏՂՈՍՆԵՐԸ

Բանալի բառեր – Գագիկ Ա, Սմբատ Ա, Աշոտ Երկայթ, սկզբնաղբյուրներ, տիտղոս, Հայոց և Վրաց թագավոր, տիեզերակալ, շահնշահ, թագավորների թագավոր, Մեծ Հայքի արքայից արքա

Սմբատ Բ Տիեզերակալի մահը և Գագիկ Ա-ի գահակալությունը Անիում

Աշոտ Գ Ողորմած թագավորի (953-978) միջնեկ որդին՝ Գագիկ Բագրատունին, 990 թ. Անիում գահ բարձրացավ բարդ պայմաններում: Վախճանվել էր Սմբատ Բ Տիեզերակալը (978-990) հասուն, բայց ոչ ծեր հասակում, որի պատճառով Անիի բնակչության և կայազորի շրջանում կասկածներ ծագեցին նրա մահվան վերաբերյալ: Քանի որ այդ լուրը անեցիների շրջանում մեծ արձագանք էր գտել, Գագիկ Ա-ն (990-1018) հրամայեց բացել Սմբատ Բ-ի գերեզմանը և գորքին ու բնակիչներին հավաստիացնել, որ նա իրոք մահացել է¹: Սակայն այն պահին, երբ բացում էին Սմբատ Բ-ի գերեզմանը, Գագիկն արդեն թագադրվել էր, ըստ որում՝ «ի նոյն ար»² Սմբատ Բ-ի մահվան, այն է՝ նույն օրը կամ ինչն ավելի հավանական է՝ անմիջապես նրա թաղումից հետո:

Գագիկը Անիի գահի գլխավոր թեկնածու էր դարձել այն պատճառով, որ Սմբատ Բ-ն արու գավակ չունեք, ուստի հայոց իշխանաց իշխանի պաշտոնը, որը վերապահվում էր գահաժառանգներին³, Սմբատ Բ-ն հանձնել էր Գագիկին⁴:

Ըստ Ասողիկի՝ Սմբատ Բ-ն վախճանվել է հայոց 438 թ. (մարտ, 989-մարտ, 990), իսկ Գագիկ Ա-ն՝ թագադրվել «ի ՆԼԸ (438 – Ա. Ե.) թուականին, յաւուրս ձմերայնոյ, ի քաղաքին Անույ»⁵: Փաստորեն, Սմբատ Բ-ի մահն ու

¹ Տե՛ս **Ստեփանոս Տարանեցի Ասողիկ**, Պատմութիւն տիեզերական // «Մատենագիրք Հայոց», հ. ԺԵ., Ժ. դար, Պատմագրութիւն, գիրք Բ., Երևան, 2011, էջ 808:

² Նույն տեղում:

³ Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Հայոց իշխանաց իշխանը Բագրատունի առաջին արքաների օրոք // «ՎԷՆ», 2014, թիվ 1, էջ 62-75:

⁴ Տե՛ս **Չամչեանց Ս.**, Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ 1784, հ. Բ., Վենետիկ, 1785, էջ 869, 871, **Ինճիճեան Ղ.**, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Բ, Վենետիկ, 1835, էջ 43:

⁵ **Ասողիկ**, էջ 808:

Գագիկ Ա-ի թագադրությունը տեղի են ունեցել հայոց 438 թ. ձմռանը, այսինքն՝ 989 թ. դեկտեմբեր կամ 990 թ. հունվար-փետրվար ամիսներին: Չամչանցը կարծում էր, որ Սմբատ Բ-ն վախճանվել է 989 թ. նոյեմբերին՝ 12 տարի և 7 ամիս գահակալելուց հետո¹, իսկ Մ. Օրմանյանը՝ 990 թ. սկզբին²: Ավելի հավանական է Օրմանյանի տեսակետը, քանզի Սմբատ Բ-ն գահ է բարձրացել հայոց 426 թ. (մարտ, 977-մարտ, 978)՝ հոր մահից (978 թ. հունվարի 3) հետո, և թագավորել 13 տարի³: Եթե 978 թվականը նրա գահակալության առաջին տարին էր, ապա 13-րդը 990 թվականն էր: Ուստի «յաւուրս ձմերայնոյ»-ը վերագրելի են հենց 990 թ. հունվար-փետրվար ամիսներին:

Գահակալության շրջանում Գագիկ Ա-ն աչքի է ընկել մեծագործություններով և Անիի թագավորությունը հզորացնելու ջանքերով, որի արդյունքում հիմնականում արժանացել է միջնադարյան հեղինակների գովեստին:

Գագիկ Ա-ի գործունեության գնահատականը պատմագրության մեջ

Գագիկ Ա-ն Բագրատունյաց դարաշրջանի վերջին հզոր գահակալն էր, որը փորձում էր վերականգնել իր նախնիների հզորությունը և տիրապետությունը: Ուստի պատահական չէ, որ նրա նկատմամբ հետաքրքրությունը միշտ էլ մեծ է եղել:

Գագիկ Ա-ի ժամանակակից և նրան գովեստով ներկայացնող պատմիչ Ասողիկն այսպես է նկարագրում արքայի գործունեությունը. «Եւ տիրեաց նա յոլով բերդից եւ գաւառաց ի սահմանացն Վայոց ձորոյ եւ Խաչենոյ եւ Փառիստոյ՝ առաւել քան զեղբայր իւր. եւ ոչ ոք էր, որ զարհուրեցուցանէր զՀայաստանեայս մինչեւ ցաւր գրելոյ իւնոյ զբան յիշատակիս այսորիկ: Ջի էր այր սրամիտ եւ վարժ ի պատերազմի եւ առատաձեռն ի բաշխելն. եւ զբաժ հարկաց յոլովից տեղեաց ազատեաց, եւ զկիրակեիցն զցայգապաշտան սաղմոսերգութեամբ կատարէր»⁴: Պարզվում է, որ նա շարունակել է եղբոր գործն ու նրա օրինակով ընդարձակել արքունի տիրույթները Վայոց ձորի, Խաչենի և Փառիստսի հաշվին, եղել է իմաստուն և պատերազմի գործում հմուտ, նաև առատաձեռն, բարեգործ և հավատացյալ:

Արիստակես Լաստիվերցին գրում է. «Յայնմ ժամանակի էր և Հայոց աշխարհին թագաւոր Գագիկ որդի Աշոտոյ, եղբայր Սմբատայ և Գուրգենայ, ի ցեղէն Բագրատունոյ, այր հզօր և յաղթօղ ի պատերազմունս. սա ի խաղաղութեան կալաւ զաշխարհս Հայոց: Ի սորա ժամանակս պայծառացան

¹ Տե՛ս **Չամչանց Մ.**, նշվ. աշխ., էջ 871:

² Տե՛ս **Օրմանեան Մ.**, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հ. Ա., Կոստանդնուպոլիս, 1912, § 788, սյուն 1142:

³ Տե՛ս **Ասողիկ**, էջ 760:

⁴ Նոյն տեղում, էջ 808:

կարգք եկեղեցոյ, և լուսաւորեցան մանկունք ուխտի սրբութեան»¹: Նա այնուհետև հավելում է. «Իսկ թագաւորն Գագիկ յերկար ժամանակաւ վարեալ զթագաւորութիւնն, և բարի յիշատակաց արժանի լեալ, ի խորին ծերութեան լուծանէ զկեանս իւր»²: Փաստորեն, պատմիչը Գագիկ Ա-ին համարում է պատերազմներում հաղթող թագաւոր, որի օրոք երկրում խաղաղություն է տիրել:

Կարևորություն է ներկայացնում նաև Մատթեոս Ուռհայեցու երկում Գագիկին նվիրված, բայց երբեմն Աշոտ Գ Ողորմածին վերագրված նկարագրությունը: Ըստ Մատթեոս Ուռհայեցու՝ ուրախություն էր տիրում Հայոց աշխարհում «յաղագս քաջութեանն Գագկայ, վասն զի էր կորովի և այր պատերազմող»³:

Սմբատ սպարապետը տեղեկացնում է, որ «... թագաւորէ Գագիկ Բագրատունի տանն Հայոց: Որ էր որդի Աշոտոյ, եւ Աշոտ՝ որդի Աբասայ, եւ Աբաս՝ որդի Սմբատայ: Էր թագաւորս այս քաջ, բարետեսիլ եւ սհարկու, ողորմած եւ քաղցր ի վերայ ամենեցուն, զարդարեալ ամենայն բարեձեւութեամբ՝ հանգոյն նախնի թագաւորաց սրբոց, եւ յաղթող ի պատերազմունս թշնամեացն Քրիստոսի: Որ եւ օգնականութեամբն Աստուծոյ զօրացեալ խաղաղեցոյց զաշխարհն ըստ իւրաքանչիւր կերպի, զեկեղեցականս եւ զիշխանս, զոամիկս եւ որ ընդ իշխանութեամբ նորա էին. պայծառացան եւ եկեղեցիքն իսուարեալ եւ կործանեալ յազգացն Մահմետի եւ ամենեքեան առհասարակ գոհանային զՏեառնէ Աստուծոյ»⁴: Ըստ էության, նրա և նախորդ հեղինակների տեղեկությունները նույնական են:

Նշենք նաև, որ Գագիկ Ա-ի կինը՝ Կատրանիդեն, անդրադառնալով նրա գահակալությանը, այն ներկայացնում է վերամբարձորեն: Թագուհին Անիի Մայր Տաճարի արձանագրություններից մեկի փորագիրներին թելադրել է հետևյալ տողերը. «ի մեծափառ թագաւորութեան Գագկայ Հայոց եւ Վրաց Շահնշահի»⁵:

Ակնհայտ է, որ Գագիկ Ա-ն սկզբնաղբյուրներում հիշատակված է որպես իմաստուն, բարեգործ և քաջ արքա, որի օրոք երկիրը խաղաղվել է ու զարգացել, նա հաջող պատերազմներ է վարել և Հայաստանի թշնամիներին պարտության մատնել ու սարսափեցրել:

Պատահական չէ, որ սկզբնաղբյուրներում Գագիկ Ա-ին առնչվող տեղե-

¹ «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցոյ», աշխատասիրութեամբ՝ Կ. Ն. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 25-26:

² Նույն տեղում, էջ 26:

³ **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, գրաբար բնագիրը՝ Մ. Մելիք-Աղամյանի և Ն. Տեր-Միքայելյանի, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի, Երևան, 1991, էջ 8:

⁴ «Տարեգիրք Սմբատայ սպարապետի», Վենետիկ, Ս. Ղազար, 1959, էջ 1-2:

⁵ «Վիմական տարեգիր. ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց Հայոց», կազմյաց Կ. Կոստանեանց, ՍՊԲ, 1913, էջ 13:

կությունների հիման վրա պատմագրության մեջ նրա մասին արտահայտվել են դրանց հար և նման տեսակետներ: Ի վերջո, արձանագրվել է, թե Գագիկ Ա-ի օրոք Բագրատունյաց Հայաստանը հասել է հզորության գագաթնակետին:

Մ. Չամչյանը Գագիկ Ա-ի գահակալությունը ներկայացնելիս հիմնականում բավարարվում է պատմիչների վերոհիշյալ գնահատականները մեջբերելով¹:

Մ. Օրմանյանը գտնում է, որ Գագիկ Ա-ի գահակալության սկզբին հայրապետական աթոռը բարձրացած Սարգիս Ա Սևանցի կաթողիկոսի ժամանակը «Հայաստանի լարաբաժին թագաւորութեանց գագաթնակետը կրնայ սեպուիլ, այնչափ բազմաթիւ եղած էին ինքնուրոյն աւատական իշխանութիւնները, որոնք մէկմէկ գաւառներ սեփականելով ինքնուրոյն կը կառավարէին, և ամէնքն ալ թագաւոր անունը կը գործածէին»², այսինքն՝ Գագիկ Ա-ի գահակալության ժամանակաշրջանը համարում է Բագրատունյաց թագավորության առավելագույն մասնատման փուլ:

Ա. Գրենի և Ռ. Գրուսսեի կարծիքով՝ Գագիկ Ա-ի գահակալության շրջանում Բագրատունյաց հարստությունը հասել է հզորության գագաթնակետին³: Գագիկ Ա-ի գահակալությունը Բագրատունյաց թագավորության առավելագույն վերելքի ժամանակաշրջան է համարում նաև Ռ. Մաթևոսյանը⁴:

Ըստ Ս. Պալասանյանի՝ «Գագիկ Ա ... իւր իմաստութեամբ և մեծագործութեամբ Բագրատունեաց տան փառքն ու պարծանքն եղաւ (990-1020): Նորա երեսնամեայ թագաւորութիւնը մշտնջենական խաղաղութեան և ազգային յառաջադիմութեան ժամանակ եղաւ. արտաքին թշնամիները նորա զօրութիւնից պատկառելով՝ չհամարձակեցան անհանգիստ անել նորան, իսկ սահմանակից հայ իշխանները օգնութիւն գտնելով նորանից՝ սէր ու յարգանք կապեցին նորա վրայ»⁵:

Լեոն, որ Գագիկին համարում էր Սմբատ Բ-ի մահվան կազմակերպիչը, գրում է, որ նա «իր երկարատև թագավորության գեղեցիկ գործերով մոռացնել տվեց եղբայրասպանի իր ծանր հանցանքը: Նա իր հոր արժանավոր ժառանգ հանդիսացավ և Բագրատունի թագավորների մեջ առաջիններից մեկը եղավ: Իր եղբոր հետ համեմատած՝ նա ավելի քաջ էր, պատերազմասեր և անվախ»⁶:

¹ Տե՛ս **Չամչեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 871-873:

² **Օրմանեան Մ.**, նշվ. աշխ., § 800, պոևն 1158:

³ Տե՛ս **Грен А.**, *Династия Багратидов в Армении* // «Журнал министерства народного просвещения», часть ССХС, С.-Петербург, 1893, ноябрь, с. 110, **Grousset R.**, *Histoire de l'Arménie des origines à 1071*, Paris, 1973, p. 518:

⁴ Տե՛ս **Մաթևոսյան Ռ.**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Երևան, 1990, էջ 160:

⁵ **Պալասանեան Մ.**, Պատմութիւն Հայոց սկզբից մինչև մեր օրերը, Թիֆլիս, 1902, էջ 297-298:

⁶ **Լեոն**, Երկերի ժողովածու, հ. II, Երևան, 1967, էջ 605:

Վ. Բարխուդարյանը համոզված է, որ «Գագիկ Ա-ի ժամանակ (990-1020) Բագրատունյաց թագավորությունը հասավ իր տնտեսական ու քաղաքական հզորության գագաթնակետին»¹: Նա իր տեսակետի հիմնավորման համար մեջբերում է Ասողիկի՝ Գագիկ Ա-ի կողմից Վայոց ձորի, Խաչենի և Փառիսոսի սահմաններում բերդեր և գավառներ գրավելու մասին վկայությունը:

Հ. Հարությունյանի կարծիքով՝ Գագիկը Բագրատունիների ամենախոշոր դեմքերից էր՝ պետական-վարչական, դիվանագիտական ու ռազմական մեծ ունակություններով օժտված²:

Ըստ Ա. Տեր-Ղևոնդյանի՝ Գագիկ Ա-ն «մեծապես ուժեղացրեց Բագրատունյաց թագավորությունը, իրեն ենթարկեց ամբողջ հյուսիսային Հայաստանը և նորից վերականգնեց Շահան Շահի վտանգված հեղինակությունը»³:

Հետաքրքրական են Կ. Յուզբաշյանի և Կ. Մաթևոսյանի տեսակետները: Ըստ Կ. Յուզբաշյանի՝ X-XI դդ. սահմանագլխին Շիրակի (Անիի) թագավորությունը բարձրագույն վերելքի ժամանակաշրջանում էր⁴: Նմանապես Կ. Մաթևոսյանը Գագիկ Ա-ի գահակալությունը համարում է «Անիի Բագրատունյաց թագավորության առավելագույն վերելքի շրջանը»⁵: Ըստ նրա՝ Գագիկը «Անիի թագավորների մեջ ամենագորեղն է համարվում»⁶: Կարելի է կարծել, որ հեղինակները նկատի ունեն հենց Անիի թագավորությունը, որը բառի բուն իմաստով այդպիսին էր դարձել Անիի՝ մայրաքաղաք հռչակումից (961 թ.) սկսած, իսկ այնուհետև՝ Բագրատունյաց տիրույթներում Կարսի (975 թ.) և Տաշիրքի թագավորությունների (978 թ.) ստեղծումից հետո իր սահմաններում առավել ևս սեղմվելով՝ ամփոփվել այն տարածքում, որն առկա էր Գագիկ Ա-ի օրոք: Այդ պարագայում Գագիկ Ա-ին պետք է և կարելի է համեմատել միայն Աշոտ Գ Ողորմածի, Սմբատ Բ Տիեզերակալի և Սմբատ Գ-ի (Հովհաննես կոչված) հետ: Հատկապես վերջին երկուսի հետ համեմատությունն անշուշտ Գագիկ Ա-ի օգտին է, և, իրոք, 978-1041 թթ. ընթացքում Անիի թագավորությունը հենց Գագիկ Ա-ի գահակալության շրջանում է հասել իր առավելագույն վերելքին:

Գագիկ Ա-ն Քեմբրիջի «Բյուզանդական կայսրության պատմություն» աշ-

¹ Բարխուդարյան Վ., Ֆեոդալական հողատիրությունը Հայաստանում 9-11-րդ դարերում, Երևան, 2017, էջ 57:

² Տե՛ս Հարությունյան Հ., Հայաստանը IX-XI դարերում, Երևան, 1959, էջ 113:

³ Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 179:

⁴ Տե՛ս Юзбашян К., К хронологии правления Гагика I Багратуни // «Античная древность и средние века», вып. 10, 1973, с. 195:

⁵ Մաթևոսյան Կ., Անին մայրաքաղաք և կաթողիկոսանիստ // «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև՝ «ՊԲՀ»), 2008, թիվ 3, էջ 9: Տե՛ս նաև *նույնի*՝ Անին և անեցիները, Երևան, 2021, էջ 31:

⁶ Մաթևոսյան Կ., Անին և անեցիները, էջ 172:

խատության մեջ ներկայացված է որպես «մեծ»¹, որը հեղինակ Թ. Գրինվուդի վերաբերմունքի արտահայտությունն է, քանի որ սկզբնաղբյուրներում և գիտական հետազոտություններում Գագիկ Ա-ն երբեք «մեծ» չի կոչվել:

Հայագիտության մեջ արմատավորված՝ վերոհիշյալ տեսակետների հիման վրա Հայոց պատմության ակադեմիական հրատարակություններում Գագիկ Ա-ի գահակալությունը համարվել է Բագրատունյաց թագավորության հզորության և ծաղկման գագաթնակետ²:

Գագիկ Ա-ի գործունեությանը նվիրված վերջին ուսումնասիրություններից մեկի հեղինակ Հ. Մարգարյանը կարծում է, որ Գագիկ Ա-ի գահակալությունը Բագրատունյաց թագավորության հզորության ժամանակաշրջան համարող հեղինակները հիմնվել են նրա տարածքային ձեռքբերումների, Դավիթ Անհողինի ելույթը ճնշելու, ինչպես նաև եկեղեցաշինական գործունեության վրա՝ ըստ էության առանց դարաշրջանի իրողությունների համակողմանի վերլուծության վերապատմելով միջնադարյան հեղինակների վկայությունները և համակողմանի քննության չենթարկելով Հայաստանի ներքին ու արտաքին դրությունը³: Նա գտնում է, որ Գագիկ Ա-ին հաջողվել է Անիի թագավորության սահմանները զգալիորեն ընդարձակել հյուսիսային, արևելյան և հարավային ուղղություններով⁴:

Փաստորեն, հետազոտողները Գագիկ Ա-ի գահակալությունը համարել են ռազմաքաղաքական ու մշակութային վերելքի ժամանակաշրջան, իսկ նրան՝ հաջողակ ռազմաքաղաքական գործիչ, մեծագործ ու բարեգործ: Նրանք, ինչպես իրավամբ նկատել է Հ. Մարգարյանը, հիմնականում պարզապես վերապատմել են պատմիչների տեղեկությունները՝ առանց Գագիկ Ա-ի օրոք Հայաստանի ներքին ու արտաքին դրության քննության, որը հնարավորություն կտար բացահայտել իրադարձությունների ընթացքը, դրդապատճառներն ու բովանդակությունը:

Գագիկ Ա-ին որպես Բագրատունյաց շրջանի հզորագույն տիրակալ ներկայացնող հեղինակները նրան ընդհանրապես չեն համեմատել Բագրատունի առաջին գահակալների՝ Աշոտ Ա-ի (887-891), Սմբատ Ա-ի (891-914), Աշոտ Բ Երկաթի (914-929), Աբասի (929-953) և նույնիսկ Աշոտ Գ Ողորմածի (953-978) հետ, որոնց օրոք Բագրատունյաց թագավորությունը բոլորովին այլ

¹ Տե՛ս «The Cambridge History of the Byzantine Empire c. 500-1492», Revised Edition, Edited by Jonathan Shepard, Cambridge University Press, 2019, p. 359:

² Տե՛ս **Առաքելյան Բ.**, Բագրատունյաց թագավորությունը X դարի վերջին և XI դարի սկզբներին // «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Երևան, 1976, էջ 134: Տե՛ս նաև **Վարդանյան Վ.**, Բագրատունյաց թագավորության վերելքն ու հզորացումը // «Հայոց պատմություն», հ. II, Միջին դարեր (IV դար-XXVII դարի առաջին կես), գիրք երկրորդ (IX դարի կես-XXVII դարի առաջին կես), Երևան, 2014, էջ 57:

³ Տե՛ս **Մարգարյան Հ.**, Գագիկ Ա Բագրատունու արտաքին քաղաքականությունը // «Պատմություն և մշակույթ», հայագիտական հանդես, 2019, թիվ 1, էջ 28:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 30:

կարգավիճակում էր, քան Գագիկ Ա-ի օրոք: Նշված արքաների ժամանակաշրջանում Բագրատունյաց թագավորությունը, հանդես գալով որպես տարածաշրջանային տերություն¹, իր կազմում ընդգրկում էր նաև Այսրկովկասի քրիստոնյա երկրները², իսկ Բագրատունի գահակալը իրավական ու գործնական առումներով բարձր էր տարածաշրջանի մյուս գահակալներից³ և չունէր իրեն հավասարն ու մրցակիցը⁴: Օրինակ՝ Հովհաննես Դրասխանակերտցին այսպես է ներկայացնում Սմբատ Ա-ի նվաճումները. «Եւ այսպէս

¹ Տե՛ս **Грен А.**, նշվ. աշխ., էջ 72-73, **Եղիազարյան Ա.**, Հայ Բագրատունիների տերությունը (885-908 թթ.) (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Երևան, 2011, էջ 71-75:

² Տե՛ս **Անանուն Զրուցագիր** (կարծեցեալ Շապուհ Բագրատունի), Պատմութիւն // «Մատենագիրք Հայոց», հ. Թ., Թ. դար, Անթիլիաս, Լիբանան, 2008, էջ 1041, **Ասողիկ**, էջ 742:

³ Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Սմբատ Ա-ն հանդես էր գալիս որպես «բոլորից արեւելեայցս գլխաւոր» («Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմություն Հայոց» // «Մատենագիրք Հայոց», հ. ԺԱ., Ժ. դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 528), այսինքն՝ գործնականում քրիստոնյա Արևելքի առաջնորդ, իսկ Աշոտ Բ Երկաթը կայսրից «մեծավայելուչ գահի պատուի առեալ քան զամենայն գահերեցս, ընկալեալ զփառաց փարթամութիւն, ո՛չ իբրեւ զայլ ոմանս պատուաւորս, այլ իբրեւ զթագաւորագուն բողբոջ, գրեթէ ընդ իւրով իսկ կայսր գնա հարթայարմար ցուցանէր եւ թագաւորական հրահանգաց հանդիսի ճոխացուցանէր» (նույն տեղում, էջ 533): Կոստանդին Օիրանաձինը վկայում է, որ Բյուզանդիայի արքունիքը ինչպես տարբեր պետությունների, այնպես էլ Հայաստանի և Այսրկովկասի մեծամեծերին ուղարկած նամակներին կցում էր տարբեր կշռի ոսկե կնիքներ, որոնց քաշի ծանրությամբ էլ, փաստորեն, չափվում էր նշված մեծամեծերի նշանակությունը կայսրության համար և նրանց դերը միջազգային գործերում: Առաջին տեղում խալիֆայությունն էր. խալիֆին ուղարկվող նամակի կնիքը չորս սոլիդ (մոտ չորդ դահեկան) էր կշռում: Բագրատունի տիրակալը ստանում էր երեք սոլիդ կշռով կնիք ունեցող նամակ, նույնքան էլ Գագիկ Արծրունին, երբ ստացել էր գերագահություն Հայաստանում: Հայաստանի և Այսրկովկասի մյուս մեծամեծերը ստանում էին երկու սոլիդանոց կնիքով նամակներ (տե՛ս **Կոստանդին Օիրանաձին**). Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 6, Բյուզանդական աղբյուրներ, Բ, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 151-152): Ըստ Հ. Բարթիկյանի դիպուկ դիտարկման՝ Բագրատունի տիրակալին, այդպիսով, Բյուզանդիայում շատ ավելի մեծ նշանակություն էին տալիս, քան տարածաշրջանի մյուս պետական միավորների տիրակալներին (տե՛ս **Բարթիկյան Հ.**, Կոստանդին Օիրանաձինը և նրա գրական ժառանգությունը // **Կոստանդին Օիրանաձին**, էջ LIV-LV):

⁴ Ըստ Ա. Գրենի՝ այսրկովկասյան գրեթե բոլոր իշխանները սկսեցին ենթարկվել Աշոտ Ա Բագրատունուն, քանի որ Հայ Բագրատունիների մեջ էին տեսնում մուսուլմանական իշխանություններից պաշտպանվելու գլխավոր հույսը: Դրա հետևանքով Այսրկովկասի մեծագույն մասը ընդգրկվեց Հայ Բագրատունիների տերությունում կամ ինչպես ուսումնասիրողն է անվանում՝ Կովկասյան թագավորությունում: Վերջինս սկսեց վախ ներշնչել նույնիսկ արաբներին, քանի որ նրանք Բագրատունիների այդչափ արագ հզորացում չէին սպասում: Բյուզանդիան սկսեց Բագրատունիների տերության հետ դաշնակցային հարաբերություններ կառուցել: Տե՛ս **Грен А.**, նշվ. աշխ., էջ 72-73: Հայ Բագրատունիների կողմից Այսրկովկասի երկրներին տիրելու մասին տե՛ս նաև **Анчабадзе З.**, Из истории средневековой Абхазии (VI-XVII вв.), Сухуми, 1959, с. 125, **Мкртумян Г.**, Грузинское феодальное княжество Кахети в VIII-XIV вв. и его взаимоотношения с Арменией, Ереван, 1983, с. 87-88, **Юзбашян К.**, Армянские государства эпохи Багратидов и Византии IX-XI вв., Москва, 1988, с. 68, **Բարթիկյան Հ.**, Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ. // «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ «ԼՀԳ»), 1996, թիվ 2, էջ 27-28:

ձգտեալ անեցուցանէր զշաւիղ տէրութեան իւրոյ յարևմտից հիւսիսոյ մինչև ցԿարնոյ քաղաք, և անդր ևս քան զԿղարջս՝ քերեալ մինչև առ ափն ծովուն մեծի, և մինչև ցասհմանս Եգերացոց և մինչև ցստորոտ մեծի լերինն Կովկասու, զԳուգարացիս և ցԾանարս մինչև ցԴուռն Ալանաց, առեալ ևս յինքն և զամրոց դրան պահակի նոցա. և անտի ի հարաւակողմն կոյս զԿուր գետով մինչև ի քաղաքն Տփիսիս. և զՈւտի գաւառ մինչև ի քաղաքն Հունարակերտ և մինչև ի Տուս և ի Շամքոր: Եւ այսպէս ընդարձակեալ զսահման տէրութեան իւրոյ, որ ընդ լծով արքունի սակից և բեկարաց և մաքսից կացուցեալ՝ զզէն քաջութեան մարտի իւրոյ նշան յաղթութեան կանգնէր»¹: Ակնհայտ է, որ եթէ Սմբատ Ա-ի նվաճումների նկարագրությունը համեմատում ենք Գագիկ Ա-ի նվաճումների մասին Աստղիկի՝ «Եւ տիրեաց նա յոլով բերդից եւ գաւառաց ի սահմանացն Վայոց ձորոյ եւ Խաչենոյ եւ Փռոխոսոյ՝ առաւել քան զեղբայր իւր» տեղեկության հետ, նվաճումների մասշտաբների տարբերություններն ակնհայտ են. Սմբատ Ա-ն տիրել է Հայաստանի շրջակա երկրներին, իսկ Գագիկ Ա-ն՝ Հայաստանի գավառներին, որոնք այս կամ այն հայկական թագավորության կամ իշխանության կազմում էին: Գագիկ Ա-ի օրոք Հայաստանն ընդհանրապէս և Բագրատունյաց ընդարձակ տիրույթները մասնավորապէս մասնատվել էին, վերջիններիս տարածքում ձևավորվել էին Կարսի և Տաշիրքի թագավորությունները, որի հետևանքով մարդկային, տնտեսական ու տարածքային զգալի ռեսուրսների կորստից էապէս թուլացած Անիի տիրակալը ոչ միայն կորցրել էր ազդեցությունը Այսրկովկասի քրիստոնյա երկրների նկատմամբ, այլ նաև կանգնել տարածաշրջանային մի շարք հզոր դերակատարների առկայության փաստի առաջ, որոնք էապէս սահմանափակում էին նրա գործունեության ազատությունը: Իհարկէ, Գագիկ Ա Բագրատունին հզորության ու միասնության ձգտող, նախաձեռնող ու գործույնյա գահակալ էր, սակայն իրականությունը, որի պայմաններում նա գործում էր, բոլորովին այլ էր, և նա Հայաստանում, Այսրկովկասում և շրջակա երկրներում, ինչպէս նաև Բյուզանդիայի տեսանկյունից չունէր այն կշիռն ու կարևորությունը, որ ունէին Բագրատունի առաջին գահակալները:

Ի վերջո, անհրաժեշտ է հավելել, որ ինդրով այս կամ այն չափով զբաղված հետազոտողների կողմից օգտագործվող «Անիի թագավորություն» անվանումն իսկ նշանակում է, որ այն ներկայացնում էր Բագրատունիների տոհմական և արքունի տիրույթներում ձևավորված Բագրատունյաց երեք թագավորություններից թէև գերական, բայց միայն մեկը: Այն իր մարդկային ու տնտեսական ռեսուրսներով ուղղակի անհամեմատելի էր Բագրատունիների կենտրոնական իշխանության նախկին հզորության հետ:

¹ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 457:

Գագիկ Ա-ի «Շահնշահ Հայոց և Վրաց» և «Արքայից արքա Հայոց Մեծաց» տիտղոսներն ու Անիի տիրակալի կարգավիճակը

Պատմիչների երկերում, ինչպես տեսանք, առանձնակի մանրամասնություններ չկան Գագիկ Ա-ի տիտղոսների վերաբերյալ: Փոխարենը, վիմագրերում, ի տարբերություն դրանց, Գագիկ Ա-ի տիտղոսները ներկայացված են ամբողջովին ու հստակորեն՝ հնարավորություն տալով կատարել էական լուսաբանումներ արքայի կարգավիճակի, հայկական և հարևան միջավայրերում նրա տեղի ու դերի ընկալման հարցերում:

Գագիկ Ա-ի կինը՝ Կատրանիդեն, Անիի Մայր տաճարի գլխավոր արձանագրությունը փորագրողներին թելադրել է հետևյալ տողերը. «Ի:ՆԾ: Թ[ուին] Հայոց (1001/1002 թ. – Մ. Ե.) ... ի մեծափառ թագաւորութեանն Գագկա Հայոց եւ Վրաց շահանշահի, եւ Կատրանիդէ Հայոց թագուհի ... հրամանաւ առն ի մո Գագկա շահանշահի, շինեցի զՍուրբ Կաթաղիկէս...»¹: Որպես «Հայոց և Վրաց շահնշահ» Գագիկ Ա-ն հիշատակված է նաև 1036 թ. վիմագիր ընծայագրերից մեկում²: «Շահնշահ» տիտղոսով Գագիկ Ա-ն հանդես է գալիս նաև բազմաթիվ այլ վիմագրերում³: Սակայն հարկ է արձանագրել, որ Անիի Մայր տաճարի և վերոհիշյալ արձանագրությունների մեջ, ի տարբերություն այլ վիմագրերի, «շահնշահ» տիտղոսը ներկայացված է ամբողջական տեսքով՝ «Հայոց և Վրաց շահնշահ» ձևով: Ի դեպ, իր իսկ կողմից գրված արձանագրություններում Գագիկ Ա-ն իրեն պարզապես «շահնշահ» է կոչում⁴:

Կարևոր է նշել, որ Գագիկ Ա-ն որպես շահնշահ հիշատակված է նաև վրացական սկզբնաղբյուրներից մեկում⁵, ինչը վկայությունն է այն բանի, որ նրա «շահնշահ» տիտղոսը հայտնի և ընդունված էր նաև քրիստոնյա Այսրկովկասում:

Գագիկ Ա-ի տիտղոսների հստակեցման առումով հատկապես շահեկան է Աշտարակի 1013/1014 թ. արձանագրությունը, որտեղ նրա անունից շարադրված է հետևյալը. «...կամ եղև ինձ՝ Գագիկա, հզար եւ տիեզերակալ շահինշահի եւ Հայոց Մեծաց արքայից արքայի...: Ետու ես՝ Գագիկ շահին-

¹ «Դիվան հայ վիմագրության», պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Երևան, 1966, էջ 35: Գագիկը որպես Հայոց և Վրաց շահնշահ է հիշատակված նաև Անիի Աբղարիբ Պախլաթունու եկեղեցու արձանագրություններից մեկում: Տե՛ս նույն տեղում, էջ 48:

² «Հայերեն արձանագրութիւնք Անույ, Բագնայրի եւ Մարմաշինու», տեղոյն վրայ հաւաքեց եւ հրատարակեց հանդերձ ֆրանսերէն թարգմանութեամբ Կ. Յ. Բասմաջեան, Պարիս, 1931, էջ 360-361:

³ Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 10, 12-14, 16-17, 19-22: Տե՛ս նաև «Պատմութիւն Հոռոմոսին վանաց ի Շիրակ եւ վանօրէից ոմանց ի նմին տեղագրութիւնք», արարեալ յԱբել Արքեպիսկոպոսէ Մխիթարեանց, ի Վաղարշապատ, 1870, էջ 52:

⁴ «Վիմական տարեգիր», էջ 13:

⁵ Տե՛ս «Քարթլիի մատյան», թարգմ. Վ. Մարտիրոսյանի և Հ. Մկրտումյանի // «ԼՀԳ», 1989, թիվ 9, էջ 74:

շահ...»¹: Ակնհայտորեն շեշտադրված է «շահնշահ» տիտղոսը, որն ուներ իր պատճառները:

Անդրադառնալով «շահնշահ» տիտղոսին՝ փաստենք, որ այն նշանակում է «թագավորների թագավոր», որն իր արձանագրումն է գտել Աստղիկի («[Աշոտ Երկաթը] զինքն անուանեաց Շահանշահ, այսինքն՝ թագաւորաց թագաւոր»²) և Վարդան վարդապետի [Աշոտ Երկաթը վերադառնալով Բյուզանդիայից՝ «...կոչեցաւ ի վերայ նոցա (իմա՝ ի վերա տեղական թագավորների՝ Աշոտ Շապուհյանի, Գագիկ Արծրունու, Ասորներսեհ Բագրատունու) շահնշահ»³] տեղեկություններում: Հայտնի է, որ Բագրատունիների մեջ առաջինը «շահնշահ» տիտղոսը կրել է Աշոտ Երկաթը⁴, որից հետո այն դարձավ Բագրատունի գահակալների ժառանգական տիտղոս: Աշոտ Երկաթի նախորդները, տիրելով Հայաստանին ու Վիրքին, համապատասխանաբար կրում էին «թագավոր Հայոց և Վրաց» տիտղոսը⁵: Ըստ Աստղիկի, օրինակ, Սմբատ Ա-ն թագավորեց՝ «տիրելով բոլոր հայրենեաց իւրոց՝ Հայոց եւ Վրաց»⁶: Ասել է՝ Սմբատը ժառանգեց մի թագավորություն, որի մեջ մտնում էին Հայքն ու Վիրքը: Պատահական չէ, որ նա իր հիմնական՝ «տիեզերակալ» տիտղոսից բացի կրում էր նաև «Հայոց և Վրաց թագավոր» տիտղոսը⁷: Բագրատունիների՝ «Հայոց և Վրաց իշխանաց իշխան», իսկ այնուհետև՝ «Հայոց և Վրաց թագավոր» լինելու իրողությունն արտացոլված է նաև վրացական⁸ և արաբական⁹ սկզբնաղբյուրներում: Ակադեմիկոսներ Ա. Հովհաննիսյանը և Ս. Երեմյանը կարծում են, որ Աշոտ Երկաթը խալիֆայի կողմից հռչակվել է «Շահնշահ Հայոց և Վրաց», որով ճանաչվել է նրա գերագահությունը մյուս թագավորությունների (Վրաց, Ադվանից) նկատմամբ¹⁰: Փաստորեն, «թագավոր Հայոց և Վրաց»-ի և «շահնշահ Հայոց և Վրաց»-ի միջև տարածքային տարբերություններ չկային, դրանք բովանդակային էին: «Թագավոր Հայոց և Վրաց»-ից անցումը «շահնշահ Հայոց և Վրաց»-ի Բագրատունյաց

¹ **Սադումյան Ս.**, Գագիկ Ա թագավորի նորահայտ արձանագրությունն Աշտարակում // «ԼՀԳ», 1989, թիվ 9, էջ 91-92:

² **Աստղիկ**, էջ 748:

³ «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 87:

⁴ Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 551: Տե՛ս նաև **Տեր-Ղևոնդյան Ա.**, Հաղբատի արաբերեն արձանագրությունը և Բագրատունի թագավորների տիտղոսները // «ԼՀԳ», 1979, թիվ 1, էջ 76:

⁵ Տե՛ս **Երեմյան Ս.**, Լիպարիտ գորավարը և նրա նախորդները // «Ն. Մատի անվան կաթինետի աշխատություններ», թիվ 2, Երևան, 1947, էջ 109, 111, **Тер-Гевондян А.**, Армения и Арабский халифат, Ереван, 1977, с. 238:

⁶ **Աստղիկ**, էջ 742:

⁷ Տե՛ս **Անանուհ Զրուցագիր**, էջ 1042-1043:

⁸ Տե՛ս **Анчабадзе З.**, նշվ. աշխ., էջ 124-125:

⁹ Տե՛ս **Ibn Zāfir**, Akhbār al-duwal al-munqati‘a, ց. 1, Irbid, 1999, s. 63:

¹⁰ Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, զիրք առաջին, Երևան, 1957, էջ 120, **Еремян С.**, Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке // «ԼՀԳ», 1971, թիվ 3, էջ 6:

թագավորության կազմում մանր թագավորությունների (Աղվանից, Վրաց, Վասպուրականի) ի հայտ գալու հետևանք էր: Բագրատունի տիրակալն այլևս միակ թագավորը չէր, բայց առաջինն ու գերագահն էր Հայաստանի և քրիստոնյա Այսրկովկասի թագավորների շրջանում: Ընդ որում՝ կոչվելով ոչ թե «Հայոց և Վրաց արքայից արքա», այլ «Հայոց և Վրաց շահնշահ»՝ Բագրատունի գահակալները շեշտադրում էին իրենց տիտղոսի ու կարգավիճակի՝ միջազգայնորեն ճանաչված լինելը, քանզի Աշոտ Երկաթն այն ստացել էր խալիֆայից՝ Ատրպատականի ամիրայի միջոցով¹:

Աշոտ Երկաթի գահակալության վերջում «շահնշահ Հայոց և Վրաց» տիտղոսն ամենայն հավանականությամբ փոխանցվեց Գագիկ Արծրունուն (908-943)², ուստի պատահական չէ, որ Աբաս թագավորը սկզբնաղբյուրներում այդ տիտղոսով հիշատակված չէ: Սակայն նրա որդին՝ Աշոտ Գ Ողորմած թագավորը, հենց գահակալության սկզբից հայտնի էր որպես շահնշահ: Ասողիկն ընդհանրապես գրում է, որ նա «Շահանշահ կոչիւր»³: Նա արաբական սկզբնաղբյուրներից մեկում հանդես է գալիս որպես Հայաստանի և Վիրքի թագավոր՝ «շահնշահ» տիտղոսով: Այնտեղ վկայված է, որ 953 թ. «Վրաստան նահանգի և Հայաստանի այլ մասերի վրա կար մի թագավոր, որի անունն էր Աշուր իբն ալ-Աբբաս (իմա՝ Աշոտ Գ՝ որդի Աբասի – *Ա. Ե.*) և «շահնշահ» տիտղոսն էր կրում»⁴: Պարզ է, որ նոր միայն գահին բազմած Աշոտ Գ Ողորմածը Հայոց ու Վրաց թագավորի կարգավիճակը և «շահնշահ» տիտղոսը ժառանգել էր Աբաս թագավորից, որը Գագիկ Արծրունու մահից (943 թ.) հետո, փաստորեն, կարողացել էր յուրացնել այն⁵: Աշոտ Գ-ն «շահնշահ» տիտղոսով հիշատակվում է նաև մի շարք վիմագրերում⁶, իսկ այլ սկզբնաղբյուրներում՝ իբրև «թագաւոր թագաւորաց ամենայն տիեզերաց»⁷: Իսկ Սմբատ Բ-ն «տիեզերակալ» տիտղոսից⁸ բացի

¹ Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 551:

² Տե՛ս **Yeghiazaryan A.**, Gagik Artsruni – «King of Armenia and Georgia» // «ԲՀ», 2016, թիվ 1, էջ 77-97:

³ **Ասողիկ**, էջ 755:

⁴ **Minorsky V.**, Studies in Caucasian History, London, 1953, № 3, p. 10, **Տեր-Ղևոնդյան Ա.**, Մունաջջիմ-Բաշիի XI-XII դդ. անանուն աղբյուրը Դվինի և Գանձակի Շաղղաղյանների մասին // «Բանբեր Մատենադարանի», 1962, թիվ 6, էջ 477:

⁵ Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Աբաս Բագրատունի. թագավոր Հայոց, Երևան, 2017, էջ 79-80:

⁶ Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 9-10, 12:

⁷ Տե՛ս «Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր (976, 981, 1432, 1564, 1614 և 1839 թ.թ.)», պրակ I, առաջաբանով, ծանոթագրություններով և բառարանով: Կազմեց Շ. Աբրահամյան, Երևան, 1941, էջ 5: Տե՛ս նաև **Տեր-Վարդանեան Գ., Մահակեան Ջ.**, Խաչիկ Ա. Արշարունի կաթողիկոսի 976 թուականի կոնդակը՝ տրուած Դարաշամբի սուրբ Ստեփանոս Նախավկայի վանքին // «Էջմիածին», 2012, թիվ 7, էջ 98:

⁸ Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 90 («Սմբատ, որ Տիեզերակալ կոչեցաւ»), **Մատթեոս Ուռնայեցի**, էջ 162 («գոր Սմբատ տիեզերակալն էր բերել տուեալ ի Հնդկաց»): Տե՛ս նաև Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. II, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 130:

կրում էր նաև «շահնշահ»¹ և, մասնավորապես, «Անիի շահանշահ»² տիտղոսները:

Ուստի Գագիկ Ա-ի կրած «Հայոց և Վրաց շահնշահ» տիտղոսը Աշոտ Երկաթից ի վեր Բագրատունիների շրջանում ամենատարածվածն էր: «Շահնշահ» տիտղոսը կրում էր նաև Գագիկ Ա-ի որդի Հովհաննես Սմբատը³:

Համադրելով վերոասացյալը՝ կարող ենք նշել, որ խնդրո առարկա տիտղոսը ամբողջովին ունեցել է հետևյալ տեսքը՝ «Հայոց և Վրաց շահնշահ», ինչպես հիշատակված է մի շարք սկզբնաղբյուրներում, բայց հաճախ ներկայացվել է միայն «շահնշահ» ձևով:

Հավելենք նաև, որ ի տարբերություն Սմբատ Բ-ի, որը հիշատակվում է հիմնականում «տիեզերակալ» տիտղոսով, Գագիկ Ա-ի գահակալության շրջանում «շահնշահ» տիտղոսի ընդգծումը, անկասկած, պայմանավորված էր այդ դարաշրջանում Անիի տիրակալի գերագահ դիրքի ամրագրման անհրաժեշտությամբ: Գագիկ Ա-ի օրոք ավատատիրական մասնատվածությունը Հայաստանում հասել էր ծայրահեղ աստիճանի, ուստի նրա՝ որպես շահնշահ կամ թագավորների թագավոր հանդես գալը բխում էր երկրում մի քանի թագավորների առկայության պարագայում սեփական գերակա դիրքի ընդգծման ցանկությունից: Վերջինս այնքան ակնհայտ էր և գործնական հաջողություններ էր արձանագրել, որ Գագիկ Ա-ն «շահնշահ» տիտղոսով հիշատակվում է նաև վրացական սկզբնաղբյուրներից մեկում:

Հարկ է անդրադառնալ նաև այն իրողությանը, որ, ինչպես նշվեց, Գագիկ Ա-ի նախորդները, օրինակ, նրա հայր Աշոտ Գ Ողորմածը, հանդես էին գալիս որպես «Հայաստանի և Վրաստանի շահնշահ», քանի որ գերակայում էին նաև Վիրքում, մինչդեռ Գագիկ Ա-ի դարաշրջանում Վիրքը նրա ուղղակի ենթակայությունից դուրս էր: Ուստի նրա՝ «Հայոց և Վրաց շահնշահ» տիտղոսը կրելն ունի նաև հավելյալ բացատրության կարիք: Ասողիկը վկայում է, որ Վիրքի մի շարք շրջաններ գտնվում էին Գագիկ Ա-ի ստորակա Տաշիրքի թագավորության կազմում և գերակայության ներքո [«Իսկ եղբարորդին նոցա՝ Սմբատայ (Սմբատ Բ – Ա. Ե.) եւ Գագկայ (Գագիկ Ա – Ա. Ե.), Դաւիթ՝ որդի Գուրգենայ (Տաշրաց առաջին թագավորը) հանդերձ եղբարբն իւրով Սմբատաւ ունի զկողմանս Տաշրաց եւ զՎրաց դաշտի. զՇամշուտեայ մեծ քաղաքանիստ դղեակն նիստ արքունական պատրաստեալ ինքեան՝ արագապէս տիրէ քաղաքին Դմանեաց, հնազանդեցուցանէ եւ զամիրայն Տփղեաց քաղաքան իւրով»⁴], և, թերևս, հենց այս իրողությունն էլ իրավական առումով հիմնավորում էր Գագիկ Ա-ի՝ որպես «Հայոց և Վրաց շահնշահ» հանդես գալու իրողությունը:

¹ Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 9:

² Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, Հաղբատի արարքերն արձանագրությունը, էջ 73-74:

³ Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 19, 21:

⁴ **Ասողիկ**, էջ 809:

Ի վերջո, անհրաժեշտ է անդրադառնալ նաև Աշտարակի վերոհիշյալ արձանագրությանը, որտեղ Գազիկ Ա-ն ներկայացնում է իր կրած տիտղոսների հիմնական ձևակերպումները՝ հնարավորություն տալով կատարելու նոր բացահայտումներ: Այնտեղ նա իրեն զուգահեռաբար կոչում է «հզար եւ տիեզերակալ շահինշահ» և «Հայոց Մեծաց արքայից արքա»: Ուստի փաստենք, որ Գազիկ Ա-ն կրում էր երկու հիմնական տիտղոս՝ «Շահնշահ [Հայոց և Վրաց]» և «Արքայից արքա Հայոց Մեծաց»:

Արդ, կարևորվում է Գազիկ Ա-ի «Հայոց Մեծաց արքայից արքա» («Մեծ Հայքի արքայից արքա») տիտղոսի քննությունը: Այն, ըստ էության, Մեծ Հայքում Անիի Բագրատունի տիրակալի գերագահության ամրագրումն էր, Գազիկ Ա-ի նախորդների շրջանում գրեթե հայտնի չէ, թեև մասամբ նշմարելի է Անիի Գազիկի եկեղեցու արձանագրության մեջ. «...հրամանաւ Գազկա Շահանշահ[ի], որդո Աշոտոյ արքայից արքայի»¹: Ավելին, Մեծ Հայքի հիշատակությունը ևս խիստ հազվադեպ երևույթ է Բագրատունյաց շրջանի հեղինակների երկերում: Եզակի հիշատակություններից մեկը պահպանվել է Ասողիկի երկում. «...թագաւորէ Աշոտ (իմա՝ Աշոտ Ա – Ա. Ե.) Հայոց Մեծաց»²: Իսկ օրինակ՝ կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին Բագրատունի արքաներին «Մեծ Հայքի թագավոր» չի կոչում, այլ պարզապես Հայաստանի կամ Հայոց թագավոր³: Սակայն կաթողիկոսի մեջբերած՝ Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոսի հետ իր նամակագրության մեջ նա թե՛ պատրիարքի կողմից է կոչվում «Մեծ Հայքի կաթողիկոս», թե՛ ինքն է իրեն այդպես անվանում պատասխան նամակում⁴: Թերևս պատճառն այն էր, որ բյուզանդական արքունիքը և եկեղեցին շարունակում էին երկիրը Մեծ Հայք կոչել⁵, ուստի՝ ի պատասխան նույն կերպ վարվել է նաև կաթողիկոսը:

Գազիկ Ա-ի նախորդների շրջանում «Մեծ Հայքի թագավոր» կոչվելու եզակի դեպքերից մեկը վկայում է կաթողիկոս Անանիա Մոկացին: Սկզբում նրա հիշատակություններում ևս Գազիկ Արծրունին և Աբաս Բագրատունին հանդես են գալիս որպես «Հայոց թագավորներ»: Ականատես հեղինակը 941

¹ «Դիվան հայ վիմագրության», պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Երևան, 1966, էջ 42:

² **Ասողիկ**, էջ 734:

³ Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 445: Նա գրում է՝ «Աշոտ (իմա՝ Աշոտ Ա – Ա. Ե.) արքայ Հայոց» (էջ 448); Սմբատը «...ելանէ ... պայազատեալ զբնաւ Հայաստանեայս» (էջ 485); դավադիրները կամենում են Սմբատ Ա-ին սպանել և Ատրնեսքեհ Բագարատունուն «կացուցանել հրամանատար (բառացի՝ տեր, իշխան, կառավարիչ, այստեղ՝ թագավոր – Ա. Ե.) Հայաստանեայց» (էջ 504); «...զթագաւորել Հայոց ոստիկանն նմա (իմա՝ Գազիկ Արծրունուն – Ա. Ե.) հաւատայր» (էջ 525); «...Աշոտ որդի Սմբատայ, զոր թագաւորեցուցին ... ի վերայ Հայաստանեայց» (էջ 546); արաբ ոստիկանը Գազիկ Արծրունուն «երեքկին (իմա՝ երրորդ անգամ) ... պսակեալ ի վերայ Հայաստանեայց» և այլն:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 522, 525:

⁵ Տե՛ս օրինակ՝ **Կոստանդին Օրբանաձին**, էջ 10, 11, 151, **Յուզբաշյան Կ.**, Ռոմանոս Լակպանոս կայսեր անհայտ հասցեատերը // «ԼՀԳ», 1974, թիվ 1, էջ 35-43 և այլն:

թ. մասին գրում է. «...յաւուրս արի եւ քաջատոհմիկ հզարացն երկոցունց ինքնակալացն Հայոց թագաւորացն քրիստոսապսակեալ տեառնն Գագկայ Արծրունոյ Հայոց թագաւորի եւ տեառնն Աբասայ Բագրատունոյ խաղաղասիրի եւ հեզահամբոյր հզարի եւ Մեծի Հայոց արքայի»¹: Տեղեկությունից պարզվում է, որ Վասպուրականում և Այրարատում իշխող երկու թագավորները կառավարում էին որպես «Հայոց թագավոր» կամ «Հայոց արքա»: Ճիշտ է՝ տեքստում Աբասին վերագրվող «հզարի եւ Մեծի Հայոց արքայի» հիշատակության մեջ, ի տարբերություն «հզար»-ի, «Մեծի»-ն ներկայացված է մեծատառով, և տպավորություն է ստեղծվում, թե «Մեծի Հայոց»-ը կարելի է ընկալել որպես «Հայոց Մեծաց» կամ «Մեծ Հայք», սակայն իրականում այդպես չէ: Իսկ «Մեծի»-ն միայն սխալմամբ է մեծատառով ներկայացված, այսինքն այն ոչ թե աշխարհագրական անվան մաս է, այլ արքային վերաբերող ածական, ուստի հիշատակությունը մակաբերելի է որպես «հզոր և մեծ Հայոց արքայի»: Ըստ որում՝ հեղինակը հայոց երկու թագավորների կարգավիճակները գոնե ձևականորեն տարբերակելու համար մեկին կոչել է «Հայոց թագավոր», իսկ մյուսին՝ «Հայոց արքա»: Անկասկած, կաթողիկոսը, Բագրատունի վեհապետի՝ Հայաստանում առկա մյուս թագակիրների նկատմամբ գերագահ հանդիսանալու իրողությունից ելնելով, նրան մեկ այլ տեղեկության մեջ կրկին «մեծ» է կոչում: Նա մոտ 949 թ. Կապանից Շիրակ էր վերադառնում՝ «ի հանդիպումն բարերջանիկ եւ վեհի մեծի արքային Աբասայ Հայոց թագաւորին...»²: Բայց ահա Աշոտ Գ Ողորմածին Անանիա Մոկացին կոչում է «...թագաւորն բարեպաշտ Աշոտ Հայոց Մեծաց...»³՝ Մեծ Հայքի թագավոր, որը, իհարկե, տարբերվում է «Մեծ Հայքի արքայից արքա»-ից և, ըստ էության, ոչ թե տիտղոս է, այլ Աշոտ Գ Ողորմածի նկատմամբ հեղինակի վերաբերմունքի արդյունք: Մեկ այլ դեպքում Անանիա Մոկացին Աշոտ Գ Ողորմածին պարզապես որպես «Հայոց թագավոր» է հիշատակում⁴:

Սակայն խնդրո առարկա դարաշրջանից շատ ավելի ուշ իր աշխատությունը շարադրած Մատթեոս Ուռհայեցին Աշոտ Գ Ողորմածին հիշատակում է որպես «Մեծ Հայքի շահնշահ»: Բյուզանդիայի կայսր Հովհաննես Զմշկիկի՝ Աշոտ Գ Ողորմածին ուղղած նամակում, որը թարգմանաբար ներկայացված է Մատթեոս Ուռհայեցու աշխատությունում, Բագրատունի տիրակալը անվանված է «Աշոտ շահնշահ Հայոց Մեծաց»⁵, որը, ըստ էության, «Մեծ Հայքի արքայից արքա» տիտղոսի այլաձևն է հիշատակությունն է: Այն

¹ «Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեան տանն Ադուանից որ ընդ ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսաւորչի աթոռոյն» // «Մատենագիրք Հայոց», հ. Ժ., Ժ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2009, էջ 256:

² Նույն տեղում, էջ 268:

³ Նույն տեղում, էջ 273:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Մատթեոս Ուռհայեցի, էջ 24:

արտահայտում է հայոց թագավորի գերակա դիրքը Հայաստանում և չի նույնանում «Հայոց և Վրաց շահնշահին»: Ուստի կարող ենք արձանագրել, որ Անիի Գագիկի եկեղեցու վերոհիշյալ «Աշոտոյ արքայից արքայի» հիշատակությունը կարելի է ընկալել որպես «Աշոտոյ արքայից արքայի [Հայոց Մեծաց]»: Փաստորեն, այդ տիտղոսը կամ Անիի տիրակալի այդ կարգավիճակը գոյություն ունեն դեռևս Աշոտ Գ-ի ժամանակ:

Փաստորեն, կարելի է պնդել, որ Գագիկ Ա-ն զուգահեռաբար կիրառում էր թե՛ «Հայոց և Վրաց շահնշահ», թե՛ «Մեծ Հայքի արքայից արքա» տիտղոսները: Դրանցից առաջինը խալիֆայությունից ստացված և միջազգայնորեն ճանաչված տիտղոսն էր՝ ներկայացնելով Բագրատունի գահակալի գերագահ դիրքը Հայաստանում և քրիստոնյա Այսրկովկասում, ուստի պատահական չէ, որ այն հիշատակված է նաև վրացական սկզբնաղբյուրում: Իսկ երկրորդն արտացոլում էր նրա գերակայությունը Մեծ Հայքի մյուս թագավորությունների նկատմամբ, որոնց միավորման և կենտրոնախույս ձգտումները սանձելու համար Գագիկ Ա-ն ջանք չէր խնայում:

Ակնհայտ է, որ Բագրատունի արքաների տիտղոսաշարում առկա են եղել տարբեր տարածքային ընդգրկում և նշանակություն ունեցող տիտղոսներ: Մասնատված և բարդ ներքին ու արտաքին քաղաքական պայմաններում խիստ գործունյա Գագիկ Ա թագավորը նախընտրում էր X դարի առաջին կեսից ի վեր միջազգայնորեն ճանաչված «Հայոց և Վրաց շահնշահ» տիտղոսը, սակայն նաև իր գերակա կարգավիճակը Հայաստանում արձանագրելու համար կրում «Մեծ Հայքի արքայից արքա» տիտղոսը:

Արման Եղիազարյան – Գագիկ Ա Բագրատունին և նրա տիտղոսները

Բագրատունյաց Հայաստանի պատմության մեջ իր կարևոր տեղն ու դերն ունի Գագիկ Ա Բագրատունին (990-1018), որը խիստ գործունյա թագավոր էր և փորձում էր վերականգնել Բագրատունի առաջին արքաների հզորությունը և տիրապետության սահմանները: Նրա գահակալության շրջանում բարձրացավ թագավորության՝ անկում ապրած միջազգային հեղինակությունը և ազդեցությունը տարածաշրջանային գործընթացներում: Մյուս կողմից, երկիրը մշակութային մեծ վերելք ապրեց և այդ առումով հասավ գագաթնակետին: Միջնադարյան հեղինակներն արձանագրել են նշված իրողությունները, որի արդյունքում պատմագրության մեջ հիմնականում գերիշխում է այն կարծիքը, որ Անիի թագավորությունը Գագիկ Ա-ի օրոք հասել է ոչ միայն մշակութային, այլ նաև ռազմաքաղաքական հզորության գագաթնակետին, ինչը նոր մոտեցման և վերանայման կարիք ունի: Հոդվածում քննության են առնված նաև Գագիկ Ա-ի տիտղոսները, որոնցից նա նախապատվությունը տալիս էր «Հայոց և Վրաց շահնշահ» և «Մեծ Հայքի արքայից արքա» տիտղոսներին: Դրանցից առաջինը Բագրատունի արքաների՝ միջազգայնորեն ճանաչված տիտղոսն էր, իսկ երկրորդն արտահայտում էր Հայաստանում Գագիկ Ա-ի գերակա կարգավիճակը:

Арман Егниазарян – Гагик I Багратид и его титулы

Ключевые слова – Гагик I, Смбат I, Ашот Еркат, первоисточники, титул, царь Армении и Грузии, миродержец, шахиншах, царь царей Великой Армении

Гагик I Багратид (990-1018) занимает особое место и играет важную роль в истории Багратидской Армении. Будучи влиятельным и деятельным правителем, он пытался восстановить мощь первых царей Багратидов и границы их правления. В период его правления возросли частично утраченный международный престиж царства и его влияние в региональных процессах. С другой стороны, при Гагике I страна пережила большой культурный подъем: в этом отношении страна достигла пика своего процветания. Средневековые авторы зафиксировали вышеупомянутые реалии, в результате чего в арменоведении в основном преобладает мнение о том, что при Гагике I царство Багратидов достигло пика не только культурного процветания, но и военно-политического могущества. Это мнение нуждается в новом подходе и пересмотре. В статье также исследуются титулы Гагика I, из которых он предпочитал «Шахиншах Армении и Грузии» и «Царь царей Великой Армении». Первый из этих титулов был международно признанным титулом Багратидских царей, а второй отражал верховный статус Гагика I в Армении.

Arman Yeghiazaryan – Gagik I Bagratid and His Titles

Key Words – Gagik I, Smbat I, Ashot Yerkat, primary sources, title, king of Armenia and Georgia, master of the universe, shahnshah, king of the kings of the Greater Armenia

Gagik I Bagratid (990-1018) occupied a special place and played an important role in the history of Bagratid Armenia. He was a very powerful monarch and tried to restore the power and boundaries of the rule of the first Bagratid kings. During his reign, the kingdom's partially lost international prestige and its influence in regional processes increased. On the other hand, under Gagik I, the country experienced a great cultural upsurge: in this respect, the country reached the peak of its prosperity. Medieval authors recorded the aforementioned realities, as a result of which it is generally believed in Armenian studies that under Gagik I the kingdom of the Bagratids reached the peak of not only cultural prosperity, but also military-political power, which requires a new approach and revision. The article also examines the titles of Gagik I, of which he preferred the titles “Shahnshah of Armenia and Georgia” and “King of the kings of Greater Armenia”. The first was an internationally recognized title of the Bagratid kings, and the second expressed the highest status of Gagik I in Armenia.

Ներկայացվել է 18.01.2022

Գրախոսվել է 24.02. 2022

Ընդունվել է տպագրության 29.03.2022

Արման Եղիազարյան – ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (armanyeghiazaryan@ysu.am)

DIE GRÜNDUNG DER DEUTSCHEN ORIENT-MISSION UND IHRES ARMENISCHEN HILFSWERKS

Schlüsselwörter – Deutsche Orient-Mission, Osmanisches Reich, Massaker, Johannes Lepsius, Karapet Thoumayan, James Greenfield, Deutscher Hilfsbund für Armenien, Richard Schäfer, Choy, Andreas von Bernstorff, Warna, Urfa

Die Idee zur Begründung einer Deutschen Orient-Mission entstand in Friesdorf bei Wippra im Südharz, wo Johannes Lepsius seit Anfang 1887 eine Pfarrstelle innehatte. Er und die Pfarrer der benachbarten, ebenso weltentlegenen sieben Gemeinden im Tale und auf den Waldhängen der Wipper pflegten eine rege geistige Gemeinschaft unter Teilnahme der Pfarrfrauen. Am 29. September 1895 versammelten sich die Freunde der Nachbargemeinden, die Pfarrer sowie Lehrer aus der umliegenden Gegend und auswärtige Freunde mit der Kirchengemeinde Friesdorf zu einem Waldfest, um von der Mission im Orient und ihren Aufgaben unter Christen und Muslimen zu hören. Am Abend dieses Tages beschlossen drei Freunde, diese Missionsaufgabe zu einem besonderen Anliegen ihres Gebets zu machen. Hundert weitere Freunde schlossen sich ihnen an, und aus diesem Gebetsbund ging zu Ostern 1896 die Begründung der Deutschen Orient-Mission hervor,¹ die sich ursprünglich die Mohammedaner-Mission zur Aufgabe machen wollte.

Am 30. September 1895 aber fand in Konstantinopel das oben erwähnte Massaker an den Armeniern statt, dem weitere Blutbäder im ganzen Reich folgten. Diese Ereignisse veränderten den Lebensweg von Lepsius, der sich nunmehr ganz in den Dienst der Hilfe und Rettung der Armenier stellte. „Man könnte es für einen Fingerzeig des Schicksals halten“, schrieb Lepsius später rückblickend, „dass am Tage nach der Begründung der Deutschen Orient-Mission, dem 29. September 1895 – dem Michaelistage -, am 30. September, ohne dass wir natürlich eine Ahnung davon hatten, in Konstantinopel das erste armenische Massaker zum Ausbruch kam, dem die ganze Reihe der Blutbäder folgte, deren Anstifter niemand anders war als Abdul Hamid II. in Person. Aus dem Jildiz-Kiosk, seiner Residenz oberhalb von Pera (dem europäischen Stadtteil von Konstantinopel), ergingen die Befehle zur Eröffnung und zum Beschluss der systematischen Massaker an den Armeniern der Jahre 1895 und 1896, die die Christenheit von ganz Europa und Amerika in unbeschreibliche Aufregung versetzten. Das Programm der Deutschen Orient-Mission, in dem zunächst nur die Mohammedanermission im Vordergrund stand, wurde durch die Logik der Tatsachen zunächst auf eine andere Aufgabe gelenkt: das Hilfswerk für die Witwen und Waisen der hunderttausend sinnlos hingeschlachteten Armenier und Syrer.“²

¹ Schäfer R., Geschichte der Deutschen Orient-Mission, Potsdam 1932, S. 3.

² Lepsius J., 30 Jahre Deutscher Orient-Mission, in: *Der Orient (DO)*, 1925, S. 111.

Die im ganzen Osmanischen Reich ausgelösten systematischen Massaker machten der Deutschen Orient-Mission die Dringlichkeit einer möglichst schnellen Hilfsaktion für das bedrohte armenische Volk klar. Eine Aufgabe, von deren Notwendigkeit die breite Öffentlichkeit noch überzeugt werden musste, denn die Öffentlichkeit wusste von diesen Vorkommnissen Monate lang nichts. Nur die diplomatischen Vertreter und Ministerien waren informiert, während die türkische Regierung sehr bemüht war, durch ihre willfährigen Organe die Weltpresse zu täuschen bzw. die Lüge von einem geplanten allgemeinen Aufstand armenischer Revolutionäre zu verbreiten. Sie wollte sich so eine Grundlage zur Rechtfertigung und zur weiteren Entstellung der Realitäten verschaffen.

Aber ab Anfang 1896 tauchten zuerst in der englischen und französischen Presse Berichte auf, in denen die Vorgänge mehr oder weniger richtig dargestellt waren. Als aber aus den englischen Zeitungen Berichte nach Deutschland kamen, die „den schauerhaften Umfang und den bestialischen Charakter“ der Blutbäder nicht mehr verschwiegen, „schrie die deutsche Presse“, so Lepsius, „wie mit einem Munde: Englische Lügen! Englische Lügen! und ein Heer von Federn setzte sich in Bewegung, um das Recht des Sultans, gegen die ‚christlichen Revolutionäre‘ einzuschreiten, zu verteidigen.“¹

Die Wahrheit war also von Deutschland aus schwer zu ermitteln, denn die deutsche Presse - mit Ausnahme mancher Sonntagsblätter - folgte der „türkischen offiziellen Dementierungs-Maschinerie“,² bezeichnete die Nachrichten als englische Lüge und trat für das Recht des Sultans ein, sich der „christlichen Revolutionäre“ zu erwehren. „Was man in der Botschaft in Konstantinopel und im Auswärtigen Amt in Berlin wusste“, so Lepsius, „wusste man in der deutschen Öffentlichkeit noch lange nicht. Nicht einmal in England und Frankreich war die öffentliche Meinung vollständig unterrichtet. Nirgends war die Wahrheit den Diplomaten angenehm. Die türkischen Pressagenten arbeiteten fieberhaft, um die Wahrheit zu vertuschen, und das Märchen von der ‚armenischen Revolution‘ wurde nach Kräften ausgebeutet.“³

Einem Wohltätigkeitsinteresse, das unter dem Gesichtspunkt, dass es sich um „Glaubensgenossen und christliche Geschwister“ handele, gerechtfertigt wurde, standen, wie Lepsius rückblickend bemerkte, die unentwegten Behauptungen der großen deutschen Zeitungen entgegen, dass man die inneren Feinde einer befreundeten Regierung nicht unterstützen dürfe und dass den Armeniern helfen heiße, die „Geschäfte der englischen Politik“ zu betreiben. „Die konservative Presse glaubte“, so Lepsius, „der deutschen Regierung einen Dienst zu tun, wenn sie kräftig die Partei des Sultans gegen die Armenier ergriff.“⁴

Lepsius stand damals in engen Beziehungen zu den Führern der deutschen Gemeinschaftsbewegung und beriet mit ihnen, was zu tun sei.⁵ Den Pflichten der Barmherzigkeit, wie er feststellte, wollte sich niemand entziehen, aber alle waren der

¹ A.a.O., S. 130.

² Schäfer R., Geschichte, S. 6.

³ Lepsius J., 30 Jahre Deutscher Orient-Mission, S. 130.

⁴ Lepsius J., Graf Andreas von Bernstorff, in: *Der christliche Orient (DCO)*, 1907, S. 65.

⁵ Die Gemeinschaftsbewegung war eine neu-pietistische Strömung, die vielfach im Gegensatz zu den Landeskirchen eine Evangelisation auf der Grundlage eines unbedingten Bibelglaubens forderte. Siehe Lepsius, M. Rainer: Die Nachkommen von Richard und Elisabeth Lepsius, Weinheim 1984, S. 121.

Ansicht, dass erst der „ebenso unerhörte als ungläubhafte“ Hintergrund der Vorgänge im Orient aufgeklärt werden müsse, ehe man die christliche öffentliche Meinung und die kirchlichen Behörden für eine Armenierhilfe in großem Stil erwärmen könne. Lepsius und seine Freunde waren sich dessen bewusst, dass wenn man sich nur auf Gerüchte und Zeitungslärm, nicht aber auf Berichte über die tatsächlichen Geschehnisse im Innern über die Schuld der türkischen Regierung und über die Unschuld der massakrierten christlichen Bevölkerung berufen könne, würde man mit Sicherheit damit rechnen können, dass die deutsche Regierung aus ihrer türkenfreundlichen Politik nicht nur das Recht, sondern die Pflicht der Unterdrückung einer proarmenischen Bewegung entnehmen würde. An eine Mitwirkung der Kirchenbehörden sei schon gar nicht zu denken.¹

Lepsius sah, dass der einzige Ausweg aus der unklaren Lage, in der sie sich befanden, darin bestand, dass jemand, dem der Orient nicht unbekannt war, ins Osmanische Reich reiste und, soweit ratsam, sich an Ort und Stelle über Ursprung und Charakter der Gräueltaten informierte. Er entschloss, diese Aufgabe selbst zu übernehmen. „Aus der Tatsache“, schrieb Lepsius diesbezüglich, „dass ich mit meinen Freunden um dieselbe Zeit, in der die Christenverfolgungen in der Türkei ausbrachen, die ‚Deutsche Orient-Mission‘ gegründet hatte, schien mir die Verpflichtung zu erwachsen, nun auch in die Lücke einzuspringen.“²

Als Lepsius vor seiner Reise die führenden Männer der deutschen Evangelisationsbewegung darüber unterrichtete, übergaben sie ihm 10.000 Mark aus ihren Sammlungen, damit er sogleich den Notleidenden Hilfe bringen und Waisen der ermordeten Armenier aufnehmen könne.³ Schon zuvor, nämlich am 2. Februar 1896 gab Ernst Lohmann, der, aus der Gemeinschaftsbewegung kommend, in Frankfurt am Main Dienst tat und in einer amerikanischen Zeitung (*Christian Herald*, von Dr. Klopsch herausgegeben) über die Massaker der Türken an den Armeniern gelesen hatte, ein Flugblatt über die Notlage der Armenier heraus, woraufhin aus den Gemeinschaftskreisen 14.000 Mark kamen, die am 27. Februar an die amerikanische Mission in Konstantinopel geschickt werden konnten. Das galt als der erste Anstoß für die Armenierhilfe in Deutschland.⁴ Wenig später bzw. im März erließ der deutsche Zweig der Evangelischen Allianz,⁵ dessen Vorsitzender Graf Andreas von Bernstorff war, einen Aufruf zugunsten der verfolgten Armenier. Der Lepsius mitgegebene Geldbetrag stammte hauptsächlich aus den Sammlungen der Evangelischen Allianz, den Bernstorff ihm übergab.⁶

Die Reise sollte Lepsius dabei eine erste Gelegenheit persönlicher Erkenntnisse und Erfahrungen von Armenien und den Armeniern im Osmanischen Reich bieten, denn er hatte bis dahin nur wenige armenische Bekanntschaften. Durch Pastor Adolf

¹ Lepsius J., 30 Jahre Deutscher Orient-Mission, S. 130-131.

² Ebd.

³ A.a.O., S. 133. Diese Gelder wurden Lepsius von der „Evangelischen Allianz“ und der „Philadelphia“ (Süddeutsche Gemeinschaftskreise) mitgegeben. Siehe Schäfer: Geschichte, S. 5.

⁴ Feigel U., Das evangelische Deutschland und Armenien. Die Armenierhilfe deutscher evangelischer Christen seit dem Ende des 19. Jahrhunderts im Kontext der deutsch-türkischen Beziehungen, Göttingen 1989, S. 70, 72.

⁵ Die Evangelische Allianz war ein von England ausgehender Zusammenschluss protestantischer Christen unter Einschluss der Freikirchen und Sekten. Vgl. Lepsius, M. R.: Die Nachkommen, S. 121.

⁶ Lepsius J., Graf Andreas von Bernstorff, in: DCO, 1907, S. 65.

Hoffmann, den Pfarrer der deutschen Gemeinde in Genf, hatte Lepsius dessen Schwager Karapet Thoumayan, zuvor Professor am amerikanischen Kollege in Marsovan,¹ kennengelernt, der nach seiner Befreiung aus türkischer Gefangenschaft in der Schweiz lebte. Zudem hatte ihn Pastor Wilhelm Faber mit einem jungen Armenier, James Greenfield, bekannt gemacht, der damals in Berlin Staatswissenschaften studierte. Das war alles.

Damals war Greenfield noch Student und beherrschte neben mehreren orientalischen Sprachen die deutsche Sprache „wie ein Deutscher“. Lepsius schlug ihm vor, ihn auf seiner Erkundungsreise durch die Türkei zu begleiten. Er willigte ein, und beide traten im Mai 1896 die Reise an, die insgesamt sechs Wochen dauerte. Lepsius gab sich als Teppichfabrikant aus, denn für einen solchen war die Einreise in die Teppichgebiete der inneren Türkei leichter zu erlangen als für einen Pfarrer, dem man Schwierigkeiten bereitet hätte. Die Bezirke der Teppichfabrikation in der Türkei gehörten damals zu den am härtesten betroffenen Massaker-Gebieten.² Ungeachtet dessen mussten sich die Reisenden beständig einer sorgfältigen Überwachung durch Polizei, Soldaten und Spione gegenwärtig sein, denn die türkische Regierung war eifrig bemüht, jede Kenntnisnahme der armenischen Zustände durch Europäer zu verhindern.³

Lepsius und Greenfield fuhren zunächst nach Konstantinopel, wo sie sich in der Deutschen Botschaft vorstellten. Auf dem Wege ins Landesinnere fuhren sie mit der damaligen anatolischen Bahn bis Angora. Von dort aus mussten sie die Reise zu Pferd fortsetzen. Ihr Reiseziel war die Bergstadt Zeytun im Taurusgebirge, aber die türkische Regierung versperrte ihnen den Weg nach Osten. In Kayseri mussten sie ihre Reiserichtung ändern und schlugen den Weg nach Süden ein. Durch die Kilikische Pforte stiegen sie in die kilikische Tiefebene hinab und erreichten nach einem Besuch der Städte Adana und Tarsus im Bezirk Mersin wieder das Mittelmeer.⁴ Sie ließen sich unterwegs überall von Menschen der verschiedensten Nationalitäten über die Massaker und deren Charakter informieren, was ihnen zur Ergänzung ihrer ursprünglichen Kenntnisse sehr dienlich war. „In einem Lande“, schrieb Lepsius, „in dem es keine Zeitungen gibt, ist der persönliche Verkehr die zuverlässigste Quelle alles Wissenswerten.“⁵

Auch die amerikanischen Missionare im Landesinneren, deren zahlreiche Stationen über das ganze Gebiet der Massaker verstreut waren, und die alle genau wussten, was seit dem Herbst 1894 sich unter ihren Augen ereignet hatte, übergaben Lepsius eine Fülle von wichtigen Dokumenten, worin die Vorgänge präzise dargestellt waren.⁶ Die Ergebnisse seiner Ermittlungen fasste Lepsius nach seiner Rückkehr nach Deutschland in seinem an die Freunde verschickten vertraulichen Rundschreiben

¹ K. Thoumayan war zwei Jahre zuvor wegen revolutionärer Umtriebe in Angora (Ankara) zum Tode verurteilt, aber durch die Bemühungen seines Schwagers, des Pastors Adolf Hofmann in Genf, begnadigt und des Landes verwiesen worden. Siehe Goltz, Hermann: Zwischen Deutschland und Armenien, in: *Theologische Literaturzeitung* (108), 1983, S. 869. Vgl. Schäfer R., Geschichte, S. 10.

² Schäfer R., Geschichte, S. 5.

³ Ebd.

⁴ Lepsius J., 30 Jahre Deutscher Orient-Mission, S. 132-133.

⁵ A.a.O., S. 133.

⁶ Ebd.

„Armenische Reise“ folgendermaßen zusammen: „Wir konnten immerhin aus dem Munde von Christen und Türken uns über die furchtbaren Einzelheiten der stattgehabten Massaker unterrichten und fanden hier wie allorts die Überzeugung bestätigt, dass nirgends etwas wie ein Aufstand oder nur Provokation von Seiten der Armenier zum Überfall durch den bewaffneten Pöbel Anlass gegeben, sondern ausschließlich den administrativen Maßregeln der türkischen Behörden die Schuld für die Massaker beizumessen ist.“¹

Lepsius ließ schon im Laufe der Reise mit den ihm mitgegebenen oben erwähnten Geldern die ersten hundert Waisenkinder aufnehmen: 50 in Talas bei Kayseri, 50 in Urfa (Mesopotamien). In Talas wurden die Kinder zunächst den im Lande befindlichen amerikanischen Missionaren des (evangelischen) kongregationalistischen *American Board* anvertraut.² Nach Urfa konnte Lepsius damals nicht reisen. Nachdem er aber in Tarsus von der dortigen Not gehört hatte, setzte er sich von Mersin aus brieflich mit der dortigen amerikanischen Missionarin Corinna Shattuck in Verbindung und ließ ihr die erforderlichen Mittel für die Aufnahme von 50 Kindern zukommen.³ Als er am 18. Juni in die Heimat zurückgekehrt war, fand er einen Brief von Shattuck vor, woraus er erfuhr, dass es nun in Urfa, zunächst unter ihrer Leitung, zwei armenische Waisenhäuser gab, ein „Harris-Home“ und ein „Lepsius-Home“.⁴

Schon im Laufe der Reise von Lepsius und Greenfield wurden also die ersten beiden Waisenhäuser der DOM begründet. Zugleich waren die Vorgänge im Osmanischen Reich ausführlich erforscht und dokumentiert worden. Diese mussten nun der deutschen Öffentlichkeit zugänglich gemacht werden, wenn man ein Hilfswerk für die Notleidenden in großem Maßstab ins Leben rufen wollte. Die Erfüllung dieser Aufgabe und die Aufbringung genügender Mittel für die große Zahl von Witwen und Waisen waren aber im Hinblick auf die deutsche Türkeipolitik, die sich gänzlich von der armenischen Frage fernhielt, nicht leicht. Es konnte von den deutschen Tageszeitungen keine Unterstützung erwartet werden. „Die deutsche Tagespresse“, so Schäfer, „folgte der deutschen Politik, d. h. sie war Gegner der Armenier, also auch Gegner eines Hilfswerks unter ihnen. Lepsius hatte also nicht nur das Hilfswerk ohne die Mitwirkung der großen Presse zu organisieren, um Geldmittel aufzubringen, sondern er hatte auch die politische Aufklärungsarbeit zu leisten, um der Wahrheit eine Gasse zu brechen, was sonst die Aufgabe der Presse eines christlichen Deutschlands gewesen wäre.“⁵

Bei dieser Sachlage war auch von den beiden Kirchen Deutschlands keine Unterstützung zu erwarten. Auch der Umstand, dass die türkische Regierung ebenfalls ihr Möglichstes tun würde, um eine Hilfsarbeit scheitern zu lassen, machte Lepsius große Sorgen. „Wie aber sollte das Interesse für eine deutsche Arbeit im Orient geweckt“,

¹ Schäfer R., Geschichte, S. 5.

² Ebd.

³ Lepsius J., 30 Jahre Deutscher Orient-Mission, S. 133. Die Nachrichten aus Urfa stammten von Rendel Harris, der kurz zuvor von seiner Reise ins Innere zurückgekehrt war. Er hatte dort mit Mitteln seiner Quäkerfreunde ein Waisenhaus eröffnet und Miss Shattuck gebeten, zunächst 50 Kinder darin aufzunehmen.

⁴ Ebd. An welchem Tag das Waisenhaus in Urfa eröffnet worden ist, wusste Lepsius nicht. Das von deutschen Geldern unterhaltene erste armenische Waisenhaus in Talas bei Kaiserieh war am 12. Mai 1896 eröffnet worden. Ebd.

⁵ Schäfer R., Geschichte, S. 6.

schrieb Lepsius, „wie sollte diese Arbeit selbst ins Leben gerufen werden, wenn es sicher vorauszusehen war, dass die Veröffentlichung auch nur der Tatsachen, die sich in Armenien abgespielt, nicht nur einen Sturm heraufbeschwören musste, der so leicht nicht zu beschwichtigen sein würde, sondern auch uns in einen starken Gegensatz zur deutschen Politik, die der Weltlage gemäß nur eine türkenfreundliche sein kann, und noch mehr zur türkischen Regierung, auf deren Wohlwollen jede ausländische Tätigkeit im Türkischen Reiche angewiesen bleibt, bringen musste.“¹

Lepsius gestand, dass er etliche Zeit zögerte, sich diesem „Kreuzfeuer auszusetzen“ und nicht wusste, wie er aus dem Dilemma herauskommen sollte. Er musste entweder darauf verzichten, die öffentliche Aufmerksamkeit auf die Zustände in Armenien zu lenken, oder darauf gefasst sein, dass ihm eine wirksame Hilfeleistung und eine dauernde Arbeit im Orient durch die Machtfaktoren, mit denen er im Widerstreit war, vereitelt werden würde. Es war ein Artikel des Herausgebers der *Christlichen Welt*, Martin Rade, der ihm die Entscheidung erleichterte. Darin machte Rade den pietistischen Kreisen, welche sich mit einer bescheidenen Hilfeleistung begnügen wollten, den Vorwurf, dass ihnen der Mut zur Wahrheit fehle, die Dinge öffentlich vorzutragen.²

Als Lepsius von seiner Reise zurückgekehrt war, ließ er im Juni wie erwähnt einen Bericht über die Reise – zunächst vertraulich – von Friesdorf aus versenden, was natürlich gut bedacht war. „Ehe man an weitere Kreise herantreten konnte“, so Schäfer, „oder den Weg über die Tageszeitungen zu beschreiten versuchte, galt es, der zu erwartenden Gegenaktion der türkenfreundlichen Kreise vorzubeugen und einen Kreis von angesehenen Persönlichkeiten zu unterrichten und zu gewinnen, der auch dem Hilfswerk den nötigen Rückhalt und vor der Öffentlichkeit eine Vertretung verschaffte.“³

Um ein Hilfswerk in großem Maßstab ins Leben zu rufen, mussten zunächst die organisatorischen Grundlagen dafür geschaffen werden. Lepsius setzte sich zu diesem Zweck mit den Kreisen in Verbindung, die zur gleichen Zeit den Gedanken an ein armenisches Hilfswerk aufgegriffen hatten, und denen keine behördlichen oder kirchlichen Hindernisse im Wege standen.⁴ Das waren die Kreise der evangelischen Allianz und der deutschen Gemeinschaftsbewegung, denen Lepsius nahe stand. Und nachdem er beim deutschen Botschafter in Konstantinopel die Gewissheit erlangt hatte, dass eine deutsche Arbeit in der Türkei den nötigen politischen Schutz erfahren würde, konnte die Rettungsaktion vorbereitet werden.⁵

Nach seiner Rückkehr schlug Lepsius Pastor Lohmann vor, diejenigen Männer, die schon „für die Sache erwärmt waren“, nach Frankfurt einzuladen und den Vorsitz eines zu begründenden Deutschen Hilfsbundes für Armenien zu übernehmen.⁶ Beide

¹ Lepsius J., Der Herausgeber an die Freunde unsrer Arbeit, in: *DCO*, 1900, S. 4.

² Ebd. „Da ich mich von diesem Vorwurf frei wusste“, schrieb Lepsius diesbezüglich, „entschloss ich mich, meine Artikel im *Reichsboten* zu veröffentlichen und mich rückhaltlos in den Dienst einer christlichen Barmherzigkeitspflicht zu stellen, die mir, als einem, der um die Tatsachen wusste, auf dem Gewissen brannte.“ Ebd.

³ Schäfer R., *Geschichte*, S. 8-9.

⁴ Lepsius J., Der Herausgeber an die Freunde unsrer Arbeit, S. 5.

⁵ Schäfer R., *Geschichte*, S. 6.

⁶ Lepsius J., Der Herausgeber an die Freunde unsrer Arbeit, S. 5.

zusammen gründeten dann am 2. Juli 1896 in Frankfurt am Main das armenische Hilfswerk, das als „Deutscher Hilfsbund für Armenien“ konstituiert wurde. Die Organisation in Deutschland wurde auf zwei Zentralkomitees und mehrere Komitees verteilt. Die ersten beiden bildeten das Berliner Komitee unter dem Vorsitz von Graf Andreas von Bernstorff, und das Frankfurter Komitee unter dem Vorsitz von Ernst Lohmann.¹ Zu den letzteren gehörten die in den Provinzen Rheinland, Westfalen, Hessen, Nassau, Hannover, Schleswig-Holstein, Sachsen, Pommern, Schlesien, Oldenburg, Lippe, Braunschweig, Anhalt, Hamburg, Bremen, Württemberg, Hessen-Darmstadt, Pfalz, Baden und Elsass-Lothringen gebildeten Komitees an, die besonders in der Anfangszeit mit den genannten beiden Zentralkomitees aktiv zusammenarbeiteten.²

Lepsius wurde Sekretär des Berliner Zentralkomitees. In dieser Eigenschaft vertrat er in den folgenden Jahren in Vorträgen vor deutschen Kirchengemeinden, auf Pfarr-, Gemeinschafts- und theologischen Konferenzen die Aufgaben des Hilfswerkes.³ Den Mitgliedern des Berliner Komitees gehörten eine Reihe weithin bekannter Persönlichkeiten der Kirche wie zum Beispiel D. Behrmann (Hamburg), Pastor D. von Bodelschwingh (Basel), Prof. Dr. Kremer (Greifswald), die Generalsuperintendenten Faber (Berlin), Lohr (Kassel), der Chefredakteur *des Reichsboten* Pastor Engel (Berlin), der Herausgeber der *Christlichen Welt* Prof. D. Rade (Marburg) usw.⁴

Es wurde bei der ersten Verhandlung im Juli 1896 beschlossen, erst die Veröffentlichungen von Lepsius abzuwarten, um zu sehen, welche Auswirkungen diese hervorriefen.⁵ Im August erschienen im Berliner *Reichsboten* seine Berichte unter dem Titel „Die Wahrheit über Armenien“, die aufgrund seiner persönlichen Recherchen auf der Orient-Reise entstanden waren.⁶ Damit war ein Teil der evangelischen Geistlichkeit unterrichtet und die kirchlichen Kreise gerieten in Bewegung. Dem Bericht des *Reichsboten* folgte gleichfalls noch im August das umfassende Werk von Lepsius „Armenien und Europa. Eine Anklageschrift wider die christlichen Großmächte und ein Aufruf an das christliche Deutschland.“⁷ Es lag bald in allen Buchhandlungen aus, erreichte in der Folge sechs Auflagen, wurde ins Englische und Französische übersetzt und machte die europäische Öffentlichkeit auf den Umfang der Massaker an den armenischen Christen aufmerksam.

Das Buch enthüllte ein furchtbares Bild der Vorgänge im Osmanischen Reich im Jahre 1895. Rund 100 000 Armenier waren bereits getötet und weitere mehr als 100 000

¹ Schäfer R., Geschichte, S. 9.

² Lepsius J., Mitteilungen des deutschen Hilfsbundes zur Linderung des Notstandes in Armenien, in: *DCO*, 1897, S. 90, 91.

³ Schäfer R., Geschichte, S. 9.

⁴ Ebd.

⁵ Lepsius J., Der Herausgeber an die Freunde unsrer Arbeit, S. 5.

⁶ Schäfer R., Geschichte, S. 9.

⁷ Im Buch wurde auch die oben erwähnte Kollektivnote der Botschafter der sechs Großmächte an die Hohe Pforte publiziert, die von den Kabinetten der Mächte der Öffentlichkeit vorenthalten worden war. Lepsius entdeckte sie in einer Schrift des verdienstvollen französischen Armenierfreundes Charmetant („Martyrologe arménien“, März 1896), die sie vermutlich von einem französischen Diplomaten erhalten hatte, und übersetzte diese für seine Schrift ins Deutsche. Siehe Lepsius, Johannes: Armenien und Europa. Eine Anklageschrift wider die christlichen Großmächte und ein Aufruf an das christliche Deutschland, 3. vermehrte Auflage, Berlin-Westend 1897, S. 208-243. Vgl. Lepsius J., 30 Jahre Deutscher Orient-Mission, S. 130.

zwangsweise zum Islam konvertiert worden. Acht große Provinzen des Osmanischen Reiches waren durch diesen Massenmord wirtschaftlich dem Ruin nahe. Hunderte von christlichen Kirchen waren in Moscheen umgewandelt worden. Eine halbe Million Überlebende, meist Frauen und Kinder, waren dem Hungertod preisgegeben. Neben ausführlichen Zahlenangaben und der Darstellung der Tatsachen enthielt das Buch Berichte von Augenzeugen mit grauenhaften, unvorstellbaren Einzelheiten, eine Liste von Blutbädern, amtliche Berichte der europäischen Vertretungen im Osmanischen Reich sowie eine Statistik über systematische Massenmorde und -bekehrungen, geplünderte und zerstörte Dörfer, Kirchen und Klöster.

Lepsius appellierte in seinem Buch dabei an Deutschland und die anderen christlichen Mächte, die sich durch ihre Untätigkeit für die Umsetzung der – von ihnen selbst garantierten - Armenischen Reformen an diesen Verbrechen mitschuldig gemacht hatten, sich einzuschalten, bevor das „höllische Feuer“ nicht die ganze Christenheit des Orients „in seinen Flammen“ verzehre. „Also, was gedenken die Mächte in dieser Sache zu tun“, schrieb er, „um die Ehre der Christenheit gegenüber dem Triumph des Islam zu retten? Auf diese Frage eine Antwort zu geben, ist nicht unsere Sache, sondern wir appellieren an das Herz und Gewissen christlicher Kaiser und Könige, die das ihnen von Gott anvertraute Schwert nicht umsonst tragen und als die Stellvertreter der göttlichen Gerechtigkeit auf Erden Rechenschaft dafür schuldig sind, ob sie die Ehre Gottes und das Reich Christi bei der schweren Ausübung ihres Amtes im Auge behalten haben.“¹

Bei seiner Kritik an der Untätigkeit Deutschlands und der anderen europäischen Mächte ging Lepsius auch davon aus, dass für die europäische Diplomatie, wenn sie nur einen ernstlichen Willen besitze, zwischen höflichen diplomatischen Noten und einer Kriegserklärung „Spielraum genug“ sei, um bei der „ohnmächtigen Pforte etwas durchzusetzen.“²

Das Buch von Lepsius war für die Information der deutschen und europäischen Öffentlichkeit über die an Armeniern im Osmanischen Reich begangenen Verbrechen von durchschlagender Bedeutung. Als im Herbst 1896 Berichte über ein Attentat in Konstantinopel³ in der deutschen Presse erschienen, hatten die Veröffentlichungen

¹ Lepsius: Armenien und Europa, S. 73. „Wenn“, so Lepsius, „wie von maßgebender Seite versichert wurde, der deutschen Diplomatie in der Kampagne der letzten 10 Monate nur die eine Richtschnur vorgezeichnet war: ‚jede Berührung mit der armenischen Frage wie das höllische Feuer zu fliehen‘, so wird ja freilich niemand verlangen, dass sich dieselben an dem einmal angezündeten Feuer die Finger hätte verbrennen sollen. Aber das ist die Frage, ob es nicht des mächtigsten Volkes auf dem Kontinent würdiger gewesen wäre, im Verein mit andern, das höllische Feuer zu löschen, statt nur darauf bedacht zu sein, auf gutem Fuße mit denen zu bleiben, die es angezündet. Ja, ein höllisches Feuer ist es in der Tat! Und auch die deutsche Politik wird nicht unschuldig daran sein, wenn dasselbe binnen kurzem um sich fressen und die ganze Christenheit des Orients in seinen Flammen verzehren sollte. Es wird ja freilich dann immer noch Zeit sein, dass sich die Diplomaten am goldenen Horn auf eines der beiden Stationsschiffe retten, die sie so besorgt gewesen sind mit einem umfangreichen diplomatischen Notenwechsel sich zur Verfügung zu stellen.“ A.a.O., S. 51.

² Ebd.

³ Einige Armenier erstürmten am 28. August 1896 die ottomanische Bank in Konstantinopel, indem sie sofortige Einstellung der Massaker an den Armeniern und Verwirklichung der seit dem Berliner Kongress (im Jahre 1878) versprochenen Reformen in den armenischen Provinzen verlangten. Der beabsichtigte Putsch war der türkischen Regierung vorher bekannt und sie hatte Maßnahmen ergriffen,

von Lepsius schon „ihren Dienst“ getan. „Wäre die Öffentlichkeit nicht gerade im August-September des Jahres 1896 durch das Lepsius-Buch unterrichtet worden“, schrieb dazu R. Schäfer, „so hätten die über das Attentat aufgemachten Berichte kaum noch Sympathie für das armenische Volk bei den deutschen Christen auslösen können. So ergab sich die gegenteilige Wirkung: Die Zahl der Freunde des unglücklichen Volkes wuchs, die gesamte evangelische Kirche Deutschlands, selbst offizielle kirchliche Organe wie die Preußische Generalsynode und die Provinzial-Synoden schlossen sich mit Kundgebungen an, obwohl die offiziöse Presse sich mit aller Energie der armenischen Bewegung entgegenstemmte.“¹

Es sollen aus dem Bericht Schäfers keine eindeutigen Schlussfolgerungen gezogen werden. In der deutschen Christenheit gab es um diese Zeit keine vollkommen einheitliche Haltung zu den Christenmassakern im Osmanischen Reich, denn es war eine Zeit, in der sich in den politischen Positionen deutscher Christen der Standpunkt einer christlich-internationalen Humanität von einer national-sozialen Politik mit bewusster Reduzierung christlicher Ethik im internationalen Bereich deutlich abzuheben begann.² Das weist darauf hin, in welcher ungünstiger politischer Atmosphäre in Deutschland Lepsius seinen Kampf um das Leben der Waisen und Witwen der bei den Massakern ermordeten Armenier führen musste. Dank der durch seine Veröffentlichungen erfolgten Unterrichtung der deutschen Kirchenkreise und der allgemeinen Öffentlichkeit war es aber nun mit der Indifferenz dieser Öffentlichkeit, die er noch im August beklagt hatte, vorbei.³ Jetzt waren die Hauptvoraussetzungen zur Begründung eines Hilfswerks in großem Maßstab geschaffen worden, und man konnte damit beginnen.

um bei der willkommenen Gelegenheit weitere Christenmassaker zu verüben. Vgl. **Schäfer R.**, Geschichte, S. 10.

¹ Ebd. Auch Rosa Luxemburg, eine angesehene Anführerin der deutschen Linken, trat, nachdem sie sich über die Massaker an den Armeniern informiert hatte, schon 1896 öffentlich für die Verfolgten ein, und dies in scharfer Auseinandersetzung mit der revisionistischen Haltung der führenden deutschen Sozialdemokraten. „Man begegnet in der Parteipresse“, schrieb sie in einem ihrer Beiträge, „nur zu oft dem Bestreben, die Vorgänge in der Türkei als ein reines Produkt des diplomatischen Intrigenspiels, besonders von russischer Seite, darzustellen. Eine Zeitlang konnte man konnte sogar auf Presstimmen stoßen, wonach die türkischen Gräueltaten überhaupt nur eine Erfindung wären, die Baschi-Bosuks waren Mustermenschen von Christen und die Revolten der Armenier ein Werk mit russischem Rubel bezahlter Agenten.“ Vgl. Luxemburg, Rosa: Gesammelte Werke, Bd. 1, Berlin 1970, S. 57. Luxemburgs Standpunkt war ganz klar und eindeutig formuliert: „Welche kann nun die Stellung der Sozialdemokratie den Ereignissen in der Türkei gegenüber sein? Prinzipiell steht die Sozialdemokratie immer auf der Seite der freiheitlichen Bestrebungen. Die christlichen Nationen, gegebenenfalls die Armenier, wollen sich vom Joch der türkischen Herrschaft befreien, und die Sozialdemokratie muss sich rückhaltlos für ihre Sache erklären.“ Vgl. Brentjes, Burchard: Humanistische und revolutionäre Bande zwischen Deutschen und Armeniern, Akten des internationalen Dr. Johannes-Lepsius-Symposiums an der Martin-Luther-Universität Halle-Wittenberg, Halle (Saale), 1987, S. 187. Zur ausführlichen Information über die Stellung verschiedener politischer Gruppierungen zu der Lage im Osmanischen Reich siehe **Feigel U.**, Das evangelische, S. 47-49.

² **Goltz H.**, Zwischen Deutschland und Armenien, S. 870. „Dieser heftige innerdeutsche Gegensatz“, so Hermann Goltz, „hatte seinen Grund nicht zuletzt in der internationalen politischen und ökonomischen Situation. Es war bekanntlich die Zeit heftiger Konkurrenz zwischen den europäischen Mächten um die Erbmasse des „kranken Mannes am Bosphorus“, es war die Zeit des Wettlaufs um die Vergabe der Eisenbahnbaugenehmigungen und um andere ökonomische Lizenzen im Osmanischen Reich. Und nicht zuletzt war es die Zeit stärkerer Annäherung des kaiserlichen Deutschland und der osmanischen Türkei auf dem militärischen Sektor.“ Ebd.

³ **Feigel U.**, Das evangelische, S. 76.

Im September 1896 fanden in Deutschland viele Veranstaltungen statt, in denen um Sympathien für die Armenier geworben wurde, und man an den Kaiser appellierte, sich für sie einzusetzen.¹ Es wurden auch Spendensammlungen und Fürbittgebete für die Armenier organisiert, die von den kirchlichen Synoden und verschiedenen zuständigen Gremien genehmigt wurden.

Zur Werbung gehörten auch regelmäßige Aufrufe, die an die Öffentlichkeit verschickt wurden. Ein vom Berliner Zentralkomitee verschickter „Aufruf für Armenien“ von 1896 hatte beispielsweise den folgenden Wortlaut: „Unter den Augen der Christenheit sind in den letzten 10 Monaten im türkischen Armenien mehr als 100 000 Christen wehrlos hingeschlachtet, 2500 Dörfer geplündert und zerstört, 568 Kirchen und 77 Klöster geplündert und zerstört, 646 christliche Dörfer zwangsweise zum Islam konvertiert, 328 christliche Kirchen in Moscheen verwandelt, 170 gregorianische Priester und 21 protestantische Prediger, um ihrer Weigerung willen den Islam anzunehmen, ermordet worden. Ein Schrei der Entrüstung geht durch die ganze gebildete Welt, und das Gewissen der Christenheit erwacht. Auch in Deutschland will sich das Gefühl der Solidarität mit den Christen des Morgenlandes und die Entrüstung über die Orgien des muhammedanischen Fanatismus nicht länger zum Schweigen bringen lassen. Man fragt sich mit Recht, ob das deutsche Volk länger die Stimme der Wahrheit und Gerechtigkeit überhören und die Pflichten der Menschlichkeit gegenüber der unsäglichen Not des armenischen Volkes verleugnen darf. Denn es handelt sich hier nicht nur um die Ehre der Christenheit, sondern die elementare Gewalt menschlicher Empfindungen bäumt sich auf gegen die unerhörte Tatsache, dass ein Zeitalter der Humanität und Bildung Zeuge solch tierischer Grausamkeit und barbarischer Greuel sein muss. Darum rufen die unterzeichneten deutschen Männer das deutsche Volk ohne Unterschied der Konfessionen und politischen Überzeugungen auf, ein dem Untergange geweihtes christliches Volk, eine halbe Million ausgeplündertes, obdachloser, der Kleider, der Betten und des täglichen Brotes fast völlig beraubter menschlicher Wesen, hunderttausende von Witwen und Waisen vor dem äußersten Elende und dem Hungertode erretten zu helfen. Das Opfer der Barmherzigkeit, welches wir zur Linderung des Massenelendes in Armenien erbitten, muss, gemessen an der Größe der Not, ein des deutschen Namens würdiges sein. Wir brauchen die Bitte nur auszusprechen, und aller Orten werden sich, daß sind wir gewiss, freiwillige Hände finden, um Gaben für Armenien zu sammeln.“²

Ein wichtiges Ergebnis der armenischen Bewegung war folgende, von der 4. Preußischen Generalsynode am 29. November 1897 erlassene, Kundgebung: „Tief ergriffen von den namenlosen Leiden, welche in der grausamsten Christenverfolgung über die Brüder in Armenien ergangen sind und noch ergehen, wendet sich die Generalsynode an alle Glieder der evangelischen Landeskirchen mit der Bitte, den Opfern der Verfolgung die Hilfe christlicher Barmherzigkeit zu gewähren, der Kinder

¹ Ebd.

² Siehe Aufruf für Armenien, in: EZAB (ZA 5053/14) | Signatur: EZA 200/1/1788, 7. In dem von Bernstorff, Lepsius und Warneck unterzeichneten Aufruf wurden die Leser dann darum gebeten, die Sammlungen an den Schatzmeister, Verlags-Buchhändler Warneck (Berlin W., Lindenstraßed 4.) zu übersenden, der auch einzelne Beträge in Empfang nehmen würde. „Weitere Beitrittserklärungen zu der Deutschen Hilfsaktion“ seien „an den Sekretär derselben, Dr. J. Lepsius, Friesdorf bei Wippra“ zu senden. Regelmäßige Berichte und Rechenschaftsablage würden allen Gebern zugehen. Ebd.

der hingemordeten Eltern sich anzunehmen, die in Verfolgung stehenden Brüder durch Bezeugung und Betätigung der Treue und Ausharren in der Versuchung zu beten und den König aller Könige und den Herrn aller Herren zu bitten, dass er die Herzen der Verfolger wende und der Zeit der Leiden ein gnädiges Ende geben wolle.¹

Was die Behörden anbetrifft, so reagierten diese, auf ihre Art, ebenfalls empfindlich.² Öffentliche Versammlungen wurden plötzlich überwacht, manchmal absichtlich attraktive Alternativveranstaltungen angeboten, die das intellektuelle Publikum von den Armenierfreunden fernhalten sollten. Die Sammlungen wurden manchmal von den Behörden behindert, gelegentlich wurden die Kollekten ganz verboten. Auf jeden Fall wurde man stets von Beamten aus dem Innenministerium beobachtet. Bei öffentlichen Veranstaltungen wurde aufmerksam zugehört, ob nicht antitürkische politische Äußerungen vorgetragen wurden.³

Unter welch ungünstigen politischen Bedingungen Lepsius und seine Freunde für die verfolgten Armenier werben mussten, vermögen die Ereignisse im Zusammenhang mit dem bereits erwähnten Karapet Thoumayan veranschaulichen, den der Vorsitzende des Frankfurter Komitees, Pastor Lohmann, für eine Agitationsreise gewonnen hatte. Als Lepsius im September 1896 in Berlin auf dem proarmenischen Massentreffen gemeinsam mit Thoumayan sprechen wollte, verbot das preußische Innenministerium Thoumayan, öffentlich zu sprechen und warnte Lepsius, dass auch ihm ansonsten jegliches öffentliches Engagement zugunsten der Armenier untersagt werden würde.⁴

Einen Tag vor einer abendlichen Versammlung in der Berliner Tonhalle am 24. September berieten Lepsius, Faber, Thoumayan und Paul le Seur, der auch mit ihnen zusammenarbeitete, wie man sich verhalten solle. Man einigte sich darauf, Thoumayans Redetext zu vervielfältigen und herumzureichen, während er selbst pflichtgemäß schweigen sollte. Der Plan wurde von einem als Gast getarnten Geheimdienstler, der in derselben Gaststätte am Nebentisch saß, mitgehört. Als die Veranstaltung begann, mischten sich mehrere Angehörige des Innenministeriums inkognito ins Publikum, die gespannt auf die Verteilung des Redetextes von Thoumayan warteten. Als diese begann, mischte sich die Geheimpolizei ein - wütend über diese bewusste Übertretung ihrer Anordnungen in aller Öffentlichkeit.⁵ Die Versammlung wirbelte mächtigen

¹ Schäfer R., Geschichte, S. 17-18.

² Das muss im Kontext der bereits erwähnten damaligen politischen Atmosphäre verstanden werden. Die kaiserlich deutsche Regierung hatte schon 1889 begonnen, mit dem Osmanischen Reich enge politische und wirtschaftliche Verbindungen aufzubauen und war bereit, die dort bedrohten Christen außenpolitischen Zielen preiszugeben. Deswegen wurde auch die erwähnte Kollektivnote vor der deutschen Öffentlichkeit geheim gehalten.

³ Feigel U., Das evangelische, S. 76. Vgl. Goltz H., Zwischen Deutschland und Armenien, S. 869. Vgl. Lohmann, Ernst: Nur ein Leben. Lebenserinnerungen, Schwerin 1933, S. 30. Vgl. Lepsius J., Der Herausgeber an die Freunde unsrer Arbeit, S. 5. Vgl. Schäfer R., Geschichte, S. 10. Diesbezüglich war unter anderem das Verhalten der Kaiserin bezeichnend, die 1896 dem Verein der Krankenpflegerinnen in Bethel die Lektüre des *Reichsboten*s verbot, während sie im Herbst 1898 bei der Türkei-Reise des Kaisers das armenische Waisenhaus in Palästina besuchte. Siehe Gol'tc, G.; Korchmazyan, R. S.: Doktor Imagines Lepsius: Stranicy žizni, in: „Strany i narody bližnego i srednego Vostoka, t. XII, Erevan, 1985, S. 117. Diese Zeitung, worin wie erwähnt die Berichte von Lepsius über die Massaker an den Armeniern erschienen, war eine der wenigen, die sich vor offenen Beurteilungen der Lage im Osmanischen Reich nicht scheuten.

⁴ Goltz H., Zwischen Deutschland und Armenien, S. 870.

⁵ Ebd.

politischen Staub auf. Polizeipräsidium, Ministerium des Inneren und Auswärtiges Amt traten an Lepsius heran, an dem das Odium jener Versammlung hängen geblieben war. Lepsius konnte für sich und sein Komitee jede politische Absicht oder eine Agitation gegen die deutschen Interessen verneinen und zum Ausdruck bringen, dass es ihm lediglich um ein Werk christlicher Barmherzigkeit zu tun war. Die Behörden – durch seine Ausführungen überzeugt – verboten aber jede weitere Agitation durch Thoumayan,¹ der dann nach England reiste.²

Später äußerte sich Lepsius rückblickend folgendermaßen über diese schweren Tage: „Wohl selten hat ein Werk der Barmherzigkeit mit so großen Schwierigkeiten zu kämpfen gehabt. [...] Es war zwar nicht sehr erbaulich, wenn die Versammlungen, die in allen Teilen Deutschlands zu Gunsten des Notstandes in Armenien gehalten wurden, überall einer scharfen Kontrolle durch die politische Polizei unterzogen wurden, wenn verboten wurde, etwas gegen den befreundeten Souverän zu sagen, wenn Versammlungen verhindert oder aufgelöst, von den Behörden Kollekten für ein hungerndes Volk verboten und Kollektanten in Polizeistrafe genommen wurden; - aber im Grunde genommen haben diese seltsamen Maßregeln die entgegengesetzte Wirkung hervorgebracht und die öffentliche Meinung nur noch mehr auf das Recht der guten Sache aufmerksam gemacht; vielleicht auch hier und da ein gewisses Schamgefühl darüber hervorgerufen, dass in Deutschland die Freiheit der Barmherzigkeit erst noch erkämpft werden musste.“³

Die Berliner Tonhallenversammlung hatte noch ein Nachspiel. Der Vorsitzende des Frankfurter Komitees Pastor Lohmann, der Thoumayan eingeladen hatte, teilte Lepsius mit, dass seine Freunde an dem politischen Charakter der Versammlung Anstoß

¹ **Schäfer R.**, Geschichte, S. 10-11. Vgl. Lepsius J., Der Herausgeber an die Freunde unsrer Arbeit, S. 5. Die Affäre Thoumayan hatte auch noch ein parlamentarisches Nachspiel. Adolf Stöcker brachte das Thema am 11. Februar 1897 im Berliner Abgeordnetenhaus zur Sprache und forderte vom Innenminister Eberhard von der Recke eine Stellungnahme. Dieser erklärte, dass „dem Treiben“ des Armeniers, der nur gegen das Versprechen, sich politischer Agitation zu enthalten, in Deutschland Asyl gefunden habe, um der Freundschaft zum Sultan willen nicht länger zusehen werden dürfe. Ansonsten meinte er, den Erfahrungen der Armenierfreunde zum Trotz: „Allen übrigen Äußerungen des Wohlwollens und der Sympathie gegenüber den Armeniern ist in keiner Weise entgegengetreten worden.“ **Feigel U.**, Das evangelische, S. 77. Vgl. Thoumayan und die preußische Regierung, in: *DCO*, 1897, S. 188-189.

² Dort engagierte Thoumayan sich weiter für die Sache der bedrohten Armenier. Er trat im Jahr 1913 dem auf Anregung von Poghos Nubar Pascha gegründeten Armenisch-Englischen Komitee bei. Seine Zusammenarbeit mit Lepsius ging dann hauptsächlich im Kontext der proarmenischen internationalen Konferenzen und anderer Veranstaltungen weiter. Als Vertreter des genannten Komitees hat er beispielsweise an der am 25. April 1913 in London abgehaltenen internationalen Konferenz, im Mai des gleichen Jahres auch an der in Edinburg veranstalteten Versammlung der schottischen Armenierfreunde teilgenommen. Er war auch bei der vom 24. Februar 1919 bis 22. April 1919 in Paris abgehaltenen armenischen Konferenz und anderen ähnlichen Veranstaltungen dabei. Siehe Mikaelyan, Wardges: Die Armenische Frage und der Genozid an den Armeniern. Dokumente aus dem politischen Archiv des deutschen Auswärtigen Amts, Jerewan 2004, S. 24. Vgl. **Pogosean S.**, Poğos Nowbar P’āša, azgayin gorçič’ë. Erevan 2004, S. 56. Vgl. **P’ap’azean V.**, Im yowšerë. Ht. C., Kairo 1957, S. 44. Thoumayan engagierte sich auch wissenschaftlich. Unter anderem veröffentlichte er ein zweibändiges Buch über den Verlauf der Armenischen Frage seit 1878 bzw. seit der Unterzeichnung der Verträge in San-Stefano und im Berliner Kongress. Vgl. **T’owmayan K.**, Patmowt’yown arewelean xndroy ew arājnord haykakan harc’i. Ht. 1-2, London 1905.

³ Das Deutsche Hilfswerk für Armenien, in: *DCO*, 1897, S. 326. Über die Einflussnahme der deutschen Regierung auf pro-armenische Initiativen der Kirchen siehe auch **Saupp N.**, Das Deutsche Reich und die Armenische Frage 1878-1914, S. 152-156.

genommen hätten, und legten Lepsius nahe, aus dem Frankfurter Komitee auszuscheiden.¹ Die Folge war, dass sich das Frankfurter und das Berliner Komitee formal selbständig machten (September 1896) – jeweils als ‚Zentralkomitee‘ – aber unter gegenseitiger Berichterstattung vom Missionsfeld weiter arbeiteten.²

Lepsius bewertete diese Tatsache positiv. „Das selbständige Nebeneinanderarbeiten der beiden Komitee’s“, schrieb er dazu, „war insofern der Sache dienlich, da durch verdoppelte Arbeitsleistung ein größeres Maß von Interesse geweckt und dem Elend in Armenien umso wirksamer gesteuert werden konnte. So war mein nächstliegender Zweck erreicht.“³

Lepsius hatte für die Fortführung seines armenischen Hilfswerks nicht nur mit den ihm bereiteten behördlichen Hindernissen, sondern auch mit denen des preußischen Oberkirchenrats zu tun. Um die expandierende Hilfsarbeit bewältigen zu können, erbat er von seiner Magdeburger Kirchenleitung Urlaubsverlängerung. Magdeburg holte sich in Berlin beim preußischen Oberkirchenrat Rückversicherung und lehnte sein Gesuch ab. Lepsius legte daraufhin sein Pfarramt nieder und übersiedelte im Oktober 1896 nach Berlin, um sich dem Werk ungehindert widmen zu können. Er schied auch aus der kirchlichen Pensionsversorgung aus, was auf die Schärfe der damaligen Situation hinweist.⁴ Die Ergebnisse der ersten Halbjahresarbeit wurden auf der vierten Konferenz des Hilfsbundes am 13. und 14. Januar 1897 in Barmen zusammengefasst und besprochen. Als Ergebnis der öffentlichen Verhandlungen, während deren Lepsius und Lohmann über die Arbeit der beiden Komitees berichteten und andere Vertreter über die Organisation des Hilfswerks in Armenien und die leitenden Grundsätze der deutschen Hilfsarbeit referierten, wurden Beschlüsse zur Organisation des Hilfsbundes sowie zum Aufruf der Arbeit und zur Waisenversorgung gefasst.⁵

Auf der Konferenz wurde berichtet, dass das Berliner Komitee 239.000 Mark, das Frankfurter 212.000 Mark, das Rheinisch-Westfälische (Kaiserwerth und Bethel) 180.000 Mark gesammelt hatten. Zusammen mehr als eine halbe Million (631.000 Mark) in einem halben Jahr.⁶ Es wurde festgestellt, dass die Gesamtzahl der armenischen Waisenkinder 20 000 bis 30 000 betrug.⁷ Die Notstandsgebiete wurden unter die beiden Komitees folgendermaßen verteilt: Das Frankfurter Komitee übernahm den Bezirk Harput, das Berliner den Bezirk Aleppo, die persisch-osmanischen Grenzgebiete und die bulgarische Flüchtlingsnot. Die verbleibenden Notdistrikte waren auf

¹ Lepsius J., Der Herausgeber an die Freunde unsrer Arbeit, S. 5.

² Schäfer R., Geschichte, S. 11.

³ Lepsius J., Der Herausgeber an die Freunde unsrer Arbeit, S. 6.

⁴ Lepsius J., In eigener Sache, in: *Mitteilungen aus der Arbeit von D. Dr. Johannes Lepsius (MAJL)*, 1918, S. 82. Vgl. Schäfer R., Geschichte, S. 12. Um die gleiche Zeit legte auch Pastor Ernst Lohmann in Frankfurt sein Pfarramt (an der Christuskirche) nieder und verzichtete damit auf alle Pensionsansprüche, um sich voll auf das Hilfswerk zu konzentrieren.

⁵ Lepsius J., *Mitteilungen des deutschen Hilfsbundes zur Linderung des Notstandes in Armenien*, S. 89-91. Es war auf der Konferenz auch das Schweizer Hilfskomitee durch Léopold Favre (Genf) vertreten. A.a.O., S. 89.

⁶ Anfangs wurden die deutschen Spendengelder an das in Konstantinopel ansässige internationale Hilfskomitee gesandt, dessen Ehrenpräsident der englische Botschafter war. Im Osmanischen Reich lebende, zuverlässige Europäer übernahmen es dann, die Mittel an glaubwürdige Armenier weiterzuleiten. Vgl. Feigel U., *Das evangelische*, S. 77.

⁷ Lepsius J., *Mitteilungen des deutschen Hilfsbundes zur Linderung des Notstandes in Armenien*, S. 90-91. Vgl. Schäfer R., *Geschichte*, S. 13.

amerikanische, englische und schweizerische Hilfe angewiesen.¹

Die Grundsätze für das Hilfswerk, für die man sich entschied, wurden folgendermaßen zusammengefasst: „1) Wenn wir die Hungersnot in Armenien wirksam bekämpfen wollen, müssen wir vor allem fordern, dass jetzt endlich die Misshandlungen der Armenier aufhören und einigermaßen ruhige Verhältnisse in den heimgesuchten Provinzen hergestellt werden. Unsere Arbeit ist Danaidenarbeit, wenn wir hierin nichts erreichen. 2) Bei unserer Hilfsarbeit müssen wir den Grundsatz befolgen, die Selbsthilfe des jetzt entmutigten aber lebenskräftigen und arbeitsfreudigen armenischen Volkes zu ermöglichen. 3) Es müssen daher unsere Bemühungen prinzipiell weniger darauf gerichtet sein, einzelne Notleidende, also einzelne Waisenkinder der Not zu entreißen, als dem Volksganzen zu Hilfe zu kommen. Die Not muss im Notstandsgebiet selbst bekämpft werden, damit das alte christliche Volk in seinen Stammsitzen am Leben erhalten werde. 4) Außer der Verteilung der notwendigsten Nahrungsmittel, Kleider und Betten an die Hungernden und Frierenden ist es also notwendig, in den heimgesuchten Distrikten den Leuten zur Wiederaufrichtung ihrer zerstörten Häuser behilflich zu sein, Saatkorn und Werkzeuge zu Arbeit und Verdienst durch gewerbliche Unternehmungen zu verschaffen. Dieses Hilfswerk muss durch europäische Männer und Frauen eingeleitet und überwacht werden. 5) Für unsern deutschen Hilfsbund ist der Weg gewiesen; einige Zentralstationen, wo schon Waisen aufgenommen worden sind, sind mit deutschen Hilfskräften zu besetzen und von diesen aus in den umliegenden Distrikten die beschriebene intensive Arbeit zu leisten. 6) Da auch in den Grenzländern der Türkei unter den Flüchtlingen Hungersnot herrscht, so sind auch diese Notleidenden auf die Unterstützung des Hilfsbundes angewiesen. 7) Die Hilfe hat schnell zu geschehen.“²

Im Hinblick auf die äußerst schwere Notlage der Armenier konnten die genannten Spenden selbstverständlich keineswegs als zufrieden-stellend gelten. „Wenn man bedenkt“, so Lepsius, „dass es sich um die Linderung der Not von einer halben Million Menschen und um die Erhaltung von etlichen Hunderttausend Witwen und Waisen handelt, und dass z. B. die kleine Schweiz allein etwa 600.000 Frank aufgebracht hat, so können wir mit dem Ergebnis der Sammlungen in Deutschland noch entfernt nicht zufrieden sein.“³ Lepsius reiste im Frühjahr 1897 nach London, wo er an einer Armenischen Konferenz (von 18. bis 20. Mai) teilnahm und Kontakte zu den Trägern der englisch-armenischen Hilfsarbeit, nämlich zu den Kreisen der „Anglo-Armenian-Association“ und der „Friends of Armenia“ herstellte.⁴

Aus der Arbeit selbst ergab sich die Berichterstattung über das begonnene Hilfswerk. Zu Beginn des Jahres 1897 gründete Lepsius die Monatsschrift *Der*

¹ Ebd.

² **Lepsius J.**, Mitteilungen des deutschen Hilfsbundes zur Linderung des Notstandes in Armenien, S. 92.

³ A.a.O., S. 91.

⁴ Der englische Politiker Viscount James Bryce, der in England wie Lepsius in Deutschland die Öffentlichkeit über die armenischen Blutbäder informiert hatte, war durchaus kein Verfechter der englischen Orientpolitik, wie man in Deutschland glaubte. Er hat vielmehr sehr energisch gegen diese Politik opponiert und sammelte in der armenischen Frage die christlichen Kreise Englands um sich, ebenso wie Lepsius in Deutschland. Auch in England bildeten diese Kreise freilich die Minderheit. Die Londoner Konferenz war eine internationale, frei von jeder politischen Betätigung und ausschließlich auf die Organisation des Hilfswerkes beschränkt. Vgl. **Schäfer R.**, Geschichte, S. 16.

Christliche Orient. In ihr wurden die mit Armenien zusammenhängenden politischen und wirtschaftlichen Probleme, die Tätigkeit der ausgesandten deutschen Helfer und die Verwendung der Hilfsgelder aufgeklärt. In einer Vielzahl von Aufsätzen deutscher, englischer und französischer Autoren wurde über die armenische Frage und deren Geschichte informiert. Mehrere Beiträge unterrichteten die Leserschaft über die Geschichte der Armenier sowie ihre Kultur und ihre Kirche. Es wurden auch Augenzeugenberichte über die jüngsten Massaker veröffentlicht und die aktuelle Situation der Armenier analysiert.¹ Die Zeitschrift, worin neben Darstellungen der jüngsten Blutbäder und deren Folgen über die Aktivitäten der deutschen Armenierfreunde und die äußerst schwere Situation der überlebenden Armenier sowie über die Not der Flüchtlinge in Bulgarien und Persien berichtet wurde, wollte für das bedrohte Volk nicht nur Sympathie, sondern auch Engagement wecken. Eins der Hauptziele der Veröffentlichungen bestand darin, über die Aktivitäten der Armenierfreunde in verschiedenen europäischen Ländern zu informieren, Kontakte herzustellen und zum eigenständigen Handeln zu ermutigen.² Es wurden selbstverständlich auch Berichte über die vorgenommenen Zwangskonvertierungen während der Massaker veröffentlicht, wobei die Tatsache hervorgehoben wurde, dass viele der armenischen Christen, als sie vor die Wahl gestellt wurden, zu sterben oder den Islam anzunehmen, lieber den Tod erlitten. Durch reguläre Berichterstattungen der Mitarbeiter/innen des Hilfswerks konnten sich die Leser dabei über die Hilfsarbeit detailliert informieren.³

Es sollte noch erwähnt werden, dass Lepsius, auch wenn er sich die Rettung des bedrohten armenischen Volkes im Osmanischen Reich zur Hauptaufgabe gemacht hatte, die Idee einer Mohammedanermision, welche das ursprüngliche Ziel der Begründung seiner Deutschen Orient-Mission war, weiterhin im Blick hatte. Und es ist selbstverständlich, dass in der Monatsschrift auch Beiträge zum Thema der Evangelisationsarbeit unter den Muslimen und zum Verhältnis des Christentums und des Islams erschienen.⁴

Nach Abschluss des ersten Jahrgangs 1897 des *Christlichen Orients* wurde die Werbung und Berichterstattung des Lepsius-Komitees auf eine breitere Basis gestellt. Die Monatsschrift, obwohl hervorragende Kenner in ihr zum Wort kamen, war für die weiten Schichten des Hilfswerkkreises nicht populär genug und zu stark mit politischen Dokumenten beladen.⁵ Es wurde daher zu Beginn des Jahres 1898 ein bebil-

¹ Siehe Das Blutbad von Arabkir, in: *DCO*, 1897, S. 6-17. Vgl. **Harris R. J., Harris H. B.**, Briefe vom Schauplatz der letzten Massacres in Armenien, in: *DCO*, 1897, S. 302-312. Vgl. Nachrichten über das Hilfswerk an den Notleidenden in Armenien, in: *DCO*, 1897, S. 47-51. Vgl. **Fischer H.**, Das Kloster hl. Thaddäus, in: *DCO*, 1897, S. 510-513. Vgl. Die französischen Gelbbücher und die Zustände in der Türkei 1893-197, in: *DCO*, 1897, S. 251-261. Vgl. Armenisches Lied, a.a.O., S. 384-385. Vgl. Diplomatische Aktenstücke zur armenischen Frage, in: *DCO*, 1897, S. 66-73. Vgl. Die Armenische Frage in den letzten 20 Jahren, in: *DCO*, 1897, S. 481-505 usw.

² **Feigel U.**, Das evangelische, S. 59.

³ Vgl. in: *DCO*, 1897. Vgl. Schäfer R., Geschichte, S. 13. Vgl. **Feigel U.**, Das evangelische, S. 59. Es wurden darüber hinaus von Lepsius und seinem Berliner Komitee Flugblätter und Separatberichte für die kirchliche Presse und die Gemeinschaften gedruckt, die eine Vervollständigung der ersten Eindrücke von den Verhältnissen des Orients zum Ziel hatten. Siehe Schäfer R., Geschichte, S. 13.

⁴ Zeller: Der Islam in seinem Verhältnis zum Christentum, in: *DCO*, 1897, S. 108-120, 155-172, 212-222. Vgl. **Bergmann E. V.**, Die Gefahren der Mohammedaner-Mission, in: *DCO*, 1897, S. 57-60 usw.

⁵ Vgl. **Schäfer R.**, Geschichte, S. 18.

deres Monatsblatt größeren Formats geschaffen, das *Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes* hieß und sowohl als Beilage zu einer neuen Monatsschrift, *Das Reich Christi* (Monatsschrift zum Verständnis und zur Verkündigung des Evangeliums) als auch getrennt in größerer Auflage verbreitet werden konnte. Im *Reich Christi* fanden nunmehr die religiösen, theologischen oder politischen Abhandlungen ihren Platz, die der Stellung des armenischen Hilfswerks und seines Begründers innerhalb der zeitlichen Geschehnisse Ausdruck gaben, während sich das illustrierte Blatt auf die Orientarbeit und die Berichterstattung aus der Hilfsarbeit im Orient beschränkte. „*Das Reich Christi* wird einen weiteren Kreis von christlichen Fragen aus dem Gebiete der Theologie, der Evangelisation und Mission umfassen“, so Lepsius, „und zugleich die besonderen im *Christlichen Orient* bisher vertretenen Interessen weiter verfolgen.“¹ Die politischen Zusammenhänge wurden natürlich auch weiterhin klargelegt und öffentlich diskutiert, vor allem jene, welche die armenische Not verursacht hatten, für deren fortschreitende Bekämpfung das Werk tätig sein musste.²

Was das Hilfswerk betrifft, so wurden vom Lepsiuskomitee nach der Gründung der oben genannten ersten beiden Waisenhäuser in Talas bei Kayseri und in Urfa im Jahr 1897 noch auch die osmanische Stadt Diyarbakir sowie Warna in Bulgarien und die persischen Städte Choy und Urmia, wo es eine große Zahl von Flüchtlingen gab, als Hilfswerk-Stationen gewählt.

Im ersten Jahr der Hilfsarbeit konnte das Berliner Zentralkomitee 390.000 Mark sammeln, und die Einkünfte des Frankfurter Komitees betragen 360.000 Mark.³ Über die Hälfte der Berliner und Frankfurter Fonds wurden zur Linderung der unmittelbaren Not verwendet. Die übrigen Sammlungen wurden hauptsächlich zur Aufnahme und Versorgung von Waisenkindern in Waisenhäusern bestimmt.⁴ Zu Beginn des Jahres 1898 waren bereits 1.350 Waisenkinder in den deutschen Waisenhäusern aufgenommen worden, von denen 700 vom Berliner Komitee gepflegt wurden.⁵

Das Hilfswerk wurde in den Stationen der beiden Zentral-Komitees auch in den folgenden Jahren ununterbrochen weiter geführt.⁶ Bis Anfang 1908 betragen ihre gesamten Einnahmen 2.319.522,46 Mark und die Ausgaben 2.319.069,84 Mark.⁷ Anfang 1900 belief sich die Zahl der vom Lepsiuskomitee versorgten Waisenkinder beispielsweise auf 660, von denen 300 in den fünf Waisenhäusern in Urfa, 120 in Diyarbakir, 100 in Urmia, 120 in Choy und 20 in Rustschuk versorgt wurden.⁸ Für

¹ Vgl. in: *DCO*, 1897, S. 1.

² Ebd. Das Blatt *Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes* erschien mit einer Auflage von 6000 Exemplaren. Vgl. **Zeller**, Dringende Bitte um Gaben zu dem Bau unseres Waisenhauses in Choi, in: *Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes (AAH)*, 1899, S. 107.

³ Vgl. Das Deutsche Hilfswerk für Armenien, in: *DCO*, 1897, S. 328. Die Einkünfte des Kaiserwerther Komitees betragen im gleichen Zeitraum 250.000 Mark, während die anderen Komitees viel weniger gesammelt hatten. Ebd.

⁴ Ebd.

⁵ **Schäfer R.**, Geschichte, S. 21.

⁶ Für Ausführlicheres zu den Aktivitäten des Frankfurter Komitees siehe Martirosyan, Hayk: Germanakan misionerakan gorcowneowt'yonn Osmanyany kaysrowt'yownowm. Maraši kayanë (1896-1919 t't'), Erevan 2016.

⁷ Revisionsbericht, in: *DCO*, 1908, S. 88.

⁸ **Schäfer R.**, Geschichte, S. 29. Das Frankfurter Komitee hatte zu dieser Zeit die Stationen Bebek (Mädchenwaisenhaus + Tagesschule, 110 Kinder), Atabey (1 Waisenhaus + 4000 Morgen Land, 2. Waisenhaus im Bau), Mesereh (2 Waisenhäuser, zusammen 300 Kinder, Werkstätten, Hospital) mit

diese Kinder hatte man 280 deutsche „Paten“-Pfleger gefunden, die mit gespendeten Beträgen für Unterbringung, Ernährung und Ausbildung der Kinder sorgten. Im Lepsius-Werk bzw. der Deutschen Orient-Mission versuchte man von Anfang an, jedem Waisenkind für den damals angemessenen Jahresbetrag von 100 Mark einzelne Personen oder, wenn das nicht möglich war, einen besonderen Pflegekreis, eine Kirchengemeinde, eine Gemeinschaft oder einen Verein zuzuteilen. Diese erhielten durch das Hilfswerk Bericht und Bild und wechselten über die Geschäftsstellen mit ihren Pfleglingen Briefe aus.¹ Gelegentlich wurden Briefe der Pfleglinge auch in den Zeitschriften des Berliner Komitees bzw. des Hilfsbunds veröffentlicht.² Diese Briefe trugen zur weiteren Vertiefung der Kontakte und zur weiteren Erweiterung des Förderkreises bei, da sie als zusätzliche Berichte über den Alltag der Waisenkinder sowie die für sie jeweils besonders wichtigen Fragen dienten. Diesbezüglich waren die Besuche und Vorträge der Mitarbeiter/innen der beiden Zentralkomitees des Hilfsbunds in den Kirchengemeinden ebenso wichtig. Was die angekommenen Spenden betrifft, wurden diese registriert und in der Zeitschrift des Komitees veröffentlicht. Dadurch wie auch durch die Veröffentlichung von vielerlei Berichterstattungen konnte sich jeder der Geber darüber informieren, wozu seine Spende verwendet worden war. Die Bemühungen von Lepsius und seinen Freunden um Gestaltung einer gut informierten und für das Hilfswerk günstigen öffentlichen Meinung konnten, wie auch die eingenommenen Spenden bewiesen, gute Erfolge erzielen, so dass Lepsius schon im Jahr 1899 von einer gewissen Wende sprechen konnte. „Während im ersten Jahr unserer Tätigkeit das öffentliche Interesse erst erobert werden musste“, schrieb er im März 1899, „hat man sich jetzt wenigstens von dem Standpunkt losgemacht, dass uns der Orient nicht anginge.“³

Lepsius und seine Freunde sahen sich auch genötigt, in ihren Berichterstattungen über die Vorgänge im Osmanischen Reich und das Hilfswerk, die Öffentlichkeit über die immer wieder auftretenden Verfälschungen und Desinformationen aufzuklären, welche mehrfach auf eine Behinderung des Hilfswerks abzielten. So war beispielsweise die im Frühjahr 1899 wegen einer Publikation in der „Kölnischen Zeitung“ entfaltete Diskussion charakteristisch. Die Zeitung hatte in einem „Proselytenmacherei in Armenien“ überschriebenen Artikel einen heftigen Angriff gegen die Arbeit des Hilfsbunds gerichtet. Unter Hinweis auf ein Schreiben des gregorianischen Patriarchen in Konstantinopel und einer von der osmanischen Regierung gegen Pastor Brockes, den Leiter des Waisenhauses in Bebek, aufgrund einer völlig missverstandenen Predigt, erhobenen Anklage beschuldigte die Zeitung den Hilfsbund, dass er Proselytenmacherei unter den Armeniern treibe, das Missfallen der Türken auf sich ziehe und dadurch die deutschen Interessen im Orient gefährde. Schließlich wurde dem Hilfsbund der Rat

Zweigstation Perdschensch (40 Waisenkinder und Witwenhaus), Marasch (2 Waisenhäuser mit 100 Kindern), Palu (3 Waisenhäuser) und Van (Waisenhaus mit 100 Kindern). Siehe Blaser, Bruno: 110 Jahre Geschichte des Christlichen Hilfsbunds (Privatdruck), Bad Homburg 2006, S. 4.

¹ Lepsius J., An die Pflegeeltern unserer Kinder, in: *DCO*, 1900, S. 59. Vgl. Schäfer R., Geschichte, S. 21. Einzelne dieser ersten Waisenpfleger und Paten haben über drei Jahrzehnte dem Werk die Treue gehalten und auch der großen Not der Kriegsjahre willig ihre Hilfe entgegengesetzt. Ebd.

² Vgl. Unsere Waisen, in: *DCO*, 1903, S. 30-31. Die Briefe der Waisenkinder wurden selbstverständlich ins Deutsche übersetzt.

³ Vgl. Konferenz des Hilfsbundes für Armenien am 14. März 1899, in: *AAH*, 1899, S. 43.

gegeben, seine Waisenversorgung und überhaupt sein Hilfswerk in Armenien aufzugeben und die ihm anvertrauten Gelder für irgendein heimisches Liebeswerk zu verwenden, womit die Geber gewiss einverstanden sein würden.¹

Lepsius wies die Beschuldigung in einer auch im Namen des Vorstands des Hilfsbundes veröffentlichten Erklärung mit Entrüstung zurück. In seiner Erklärung, die zuerst im *Reichsboten* und dann im Blatt des Berliner Komitees *Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes* erschien, machte er klar, dass das von der Zeitung wiedergegebene Schreiben des gregorianischen Patriarchen in Konstantinopel sich inhaltlich ausschließlich auf das Vorgehen katholischer Missionen im Vilayet Van beziehe. Ferner wurde erklärt, dass die Mitarbeiter der Waisenhäuser des Hilfsbundes von Anfang an die Weisung erhalten hätten, in friedlichem Einvernehmen mit den kirchlichen Würdenträgern der verschiedenen christlichen Konfessionen, denen die vom Hilfsbund versorgten Waisenkinder angehörten, zu handeln. „Wir sind überzeugt“, so Lepsius, „dass die gegen unser Liebeswerk gerichteten Angriffe bei den Freunden desselben keinerlei Erfolg haben werden und das in der ganzen evangelischen Kirche für die Christenheit des Orients wachgerufene Interesse nur aufs neue beleben und zu größerem Eifer erwecken werden, sodass wir durch die Gebete und Gaben vieler in den Stand gesetzt werden, das uns von Gott aufgetragene Werk, das bisher unter seinem sichtlichen Schutze und Segen gestanden, weiterzuführen, zu befestigen und auszugestalten.“²

Ende April 1899 unternahm Lepsius zusammen mit Johannes Awetaranyan³ eine Reise in den Orient, zunächst nach Nordpersien, um dort die beiden Stationen seines Komitees Urmia und Choy zu besuchen. Von dort reisten sie über Jerewan und Etschmiadsin nach Urfa. Nach seiner Rückkehr begann Lepsius sogleich eine Umstellung der Verwaltung. Die Geschäftsstelle des Werkes wurde von seinem Haus abgezweigt, Büro und Geschäftsstelle wurden im Westen Berlins (Lützow-Ufer 5) eingerichtet.⁴ Der Schatzmeister wurde von der bisherigen Tätigkeit des Einnehmens der Gelder befreit, und die Leitung der Berliner Geschäftsstelle übernahm der Kaufmann Richard Schäfer.⁵ In der Berliner Verwaltung am Lützow-Ufer erfolgte der technische Ausbau für Versand und Werbung. Es entstand eine Lichtbilderserie aus den Arbeitsgebieten zur Werbung. Die Waisenhausabteilung der Verwaltung übernahm Gräfin Elisabeth von der Groeben, die damit auch die Korrespondenz mit den deutschen Pflégern und den Kindern in Waisenhäusern erledigte.⁶

¹ Vgl. Erklärung des Deutschen Hilfsbundes für Armenien, in: *AAH*, 1899, S. 59.

² A.a.O., S. 60-61.

³ Pastor Johannes Awetaranyan (früherer Name: Mohammed Schükri) war ein getaufter ehemaliger türkischer Geistlicher, der sich bald im Auftrag der Deutschen Orient-Mission für die Evangelisation der Muslime in Bulgarien zu engagieren begann. Für Ausführlicheres über ihn und seine Aktivitäten siehe Awetaranyan, Johannes: *Geschichte eines Mohammedaners, der Christ wurde. Die Geschichte des Johannes Awetaranyan. Von ihm selbst erzählt. Nach seinem Tode ergänzt von Richard Schäfer*, Potsdam 1930.

⁴ Die Familie Lepsius und mit ihr das Büro des Hilfswerkes waren im April 1899 von Westend nach dem Berliner Villenvorort Lichterfelde übersiedelt (Wilhelmsplatz 7.). Schäfer R., *Geschichte*, S. 26.

⁵ Bis dahin war die Frau von Lepsius, Margarete Zeller, bei der Verwaltung und der Büroarbeit eine wichtige Gehilfin ihres Mannes.

⁶ **Schäfer R.**, *Geschichte*, S. 30. In den größeren der Büroräume wurde eine wöchentliche Bibelstunde eingerichtet, die wechselnd von Lepsius und anderen Personen geleitet wurde. Ebd.

Anstelle des Monatsblatts *Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes* erschien ab Januar 1900 *Der Christliche Orient* im eigenen Verlag. *Das Reich Christi* mit den wissenschaftlichen Arbeiten der Theologen und Orientalisten ging ein Jahr später in verändertem Format und neuer Ausstattung an den Tempelverlag über, den Lepsius eigens zu diesem Zweck gründete und der auch seine späteren Bücher verlegte.¹ Diese Initiative war, wie Lepsius berichtete, vor allem durch die Vielfalt der künftigen Aktivitäten seines Berliner Komitee bedingt, die sich nicht nur auf das armenische Hilfswerk beschränken sollten. „Mit dem Titel unseres Missionsblattes“, schrieb er dazu, „habe ich auf die im Jahre 1897 von mir herausgegebene Zeitschrift ‚Der Christliche Orient‘ und damit auch auf die darin verfolgten Ziele zurückgegriffen, welche über das armenische Hilfswerk hinausreichen und Gedanken verwirklichen wollen, die vor der armenischen Bewegung eingesetzt haben.“²

Lepsius meinte damit die von ihm ursprünglich geplante Mohammedanermision, die bereits durch Abraham Amirachanyanz und Awetaranyan in Bulgarien in Gang gesetzt worden war, und die er eines Tages zu einem seiner wichtigsten Arbeitsfelder machen wollte. Da das armenische Hilfswerk aber im Hinblick auf die Größe der Not noch immer oberste Priorität hatte, bekam es im gesamten Themenbereich der Publikationen auch in der neuen Zeitschrift den Hauptplatz, während die letztere im Vergleich zu ihrem Vorgänger, dem Monatsblatt *Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes*, einen größeren Umfang hatte und nicht mehr als Beilage des *Reiches Christi* galt.

Das Berliner Zentralkomitee des Deutschen Hilfsbundes für Armenien beschloss aus den genannten Gründen in seiner Sitzung am 11. Mai 1900, sich den Charakter einer Missionsgesellschaft zu geben, den Namen „Deutsche Orient-Mission“ anzunehmen und den Namen „Armenisches Hilfswerk“ als Untertitel beizubehalten.³ Damit vollzog sich die Trennung der beiden Zentralkomitees des Hilfsbunds. Dieser Beschluss bedeutete, wie Lepsius berichtete, keine Änderung der Arbeitsweise oder der Grundsätze, denen man bislang gefolgt war, sondern eher eine Entsprechung des Namens der Gesellschaft dem Charakter ihrer Tätigkeit, die sich nunmehr über das Armenische Hilfswerk hinaus auf die Mohammedanermision erstreckte.⁴ „Die erste Pflicht, die wir haben“, so Lepsius, „ist: das angefangene Werk fortzusetzen, an unsern Waisen, unsern Witwen, unsern Kranken, unsern Armen! [...] Aber weiter, wir haben zu lehren, zu unterweisen, zu forschen, zu schreiben, zu drucken, zu verbreiten, unsere Schulen zu verbessern, Lehrer, Prediger heranzubilden, die Bibel zu übersetzen, eine christliche Literatur für den Orient, für den Islam zu schaffen, unserer Christenheit ein Verständnis dieser so nahen und doch noch sehr fremden Welt, dieses uns von Jugend auf so vertrauten und doch noch so unbekanntes Morgenlandes zu erschließen, und dem Orient die reichen Güter und Schätze der Weisheit und Erkenntnis des Okzidents zu bringen.“⁵

Damit waren die ursprünglichen Ziele der alten Deutschen Orient-Mission, die Lepsius 1895 gegründet hatte, aufs Neue aufgenommen worden. Ihren Vorsitz hatte wie zuvor Graf Bernstorff inne. Lepsius wurde zum Direktor gewählt. Gräfin E. von

¹ A.a.O., S. 28.

² Lepsius J., Der Herausgeber an die Freunde unsrer Arbeit, S. 3.

³ Siehe Neu-Konstituierung der Deutschen Orient-Mission am 11. Mai 1900, in: *Ex Oriente Lux (EOL)*, 1903, S. 10. Vgl. Lepsius J., Deutsche Orient-Mission, in: *DCO*, 1900, S. 81.

⁴ Ebd.

⁵ A.a.O., S. 83.

Groeben übernahm die Funktionen der Schriftführerin. Kaufmann O. Kogelschatz war der Schatzmeister, und Richard Schäfer stand dem Büro vor. Der Vorstand setzte sich aus den folgenden Personen zusammen: Frl. Maria von Doering, Pastor Ideler, Pastor Jellinghaus,¹ Militär-Oberpfarrer Strauß, Dr. Paul Rohrbach,² Verlagsbuchhändler Warneck und Pastor Zeller.³

Das armenische Hilfswerk des Berliner Komitees wurde von der Deutschen Orient-Mission übernommen und mit den gleichen Grundsätzen weiterhin geführt. Es ist dabei hervorzuheben, dass die DOM, genauso wie zuvor das Berliner Komitee, sich von den meisten anderen Missions- und Hilfsgesellschaften, die im Osmanischen Reich (speziell unter Armeniern) tätig waren, dadurch unterschied, dass sie das „Missionieren“ im üblichen Sinne bzw. jegliche „Bekehrungsarbeit“ unter den Armeniern und sonstigen orientalischen Christen kategorisch ablehnte. „Für das Lepsius-Werk“, so Schäfer, „stand nicht die Evangeliums-Verkündigung, sondern die Evangeliumsthat im Vordergrund.“⁴

Um jegliches Missverständnis bezüglich der Position der DOM zu dieser Frage in der deutschen Öffentlichkeit zu vermeiden, hielt es Lepsius schon im Jahr 1900 für empfehlenswert, in seinen Publikationen darauf ausführlicher einzugehen.⁵ Jegliche missionarische Tätigkeit im üblichen Sinne wurde von ihm von vornherein schon deswegen für ungelegen bezeichnet, weil die Situation der notleidenden Menschen dazu dränge, andere Pflichten in Angriff zu nehmen. „Hungernen, Frierenden, ihrer

¹ Pastor Jellinghaus engagierte sich seit Anfang 1903 als stellvertretender Vorsitzender der DOM. Vgl. in: *DCO*, 1903, S. 1.

² Rohrbach hatte bereits seit 1897, als er das erste Mal nach Armenien reiste, gewisse Anknüpfungspunkte mit Armenien. Er war einer der Mitbegründer des von Martin Rade und einem Kreis der Freunde der *Christlichen Welt* im Oktober 1897 ins Leben gerufenen „Notwendigen Liebewerks“, das sich dafür einsetzte, junge armenische Theologen in Deutschland ausbilden zu lassen. Ausführlicheres und diesbezügliche Aktivitäten Rohrbachs siehe Gazer, **Hacik R.**, Die Reformbestrebungen in der Armenisch-Apostolischen Kirche im ausgehenden 19. und im ersten Drittel des 20. Jahrhunderts, Göttingen 1996, S. 28-52 ff. Rohrbach hat sich auch publizistisch aktiv zum Thema Armenien engagiert. Siehe **Rohrbach P.**, In Turan und Armenien auf den Pfaden russischer Weltpolitik, Berlin 1898. Vgl. ders.: Im Vorderen Asien: politische und andere Fahrten, Berlin 1901. Vgl. ders.: Vom Kaukasus zum Mittelmeer: eine Hochzeits- und Studienreise durch Armenien, Leipzig/Berlin 1903. Vgl. ders., Aus Turan und Armenien. Studien zur russischen Weltpolitik, in: *Preußische Jahrbücher*, Bd. 89 (1897), S. 53-82, 256-284, 431-469; Bd. 90 (1897), S. 101-132, 280-310, 437-485. Vgl. ders.: Armenien: Beiträge zur armenischen Landes- und Volkskunde, Stuttgart 1919 u. a.

³ Vgl. Die Generalversammlung der Deutschen Orient-Mission, in: *DCO*, 1901, S. 38.

⁴ **Schäfer R.**, Geschichte, S. 27.

⁵ Lepsius hat seinen Standpunkt zu dieser Frage zum ersten Mal nach Abschluss seiner oben genannten achtmonatigen Reise im Jahr 1899 ausführlich dargelegt, die er unternommen hatte, um einerseits die Stationen seines Berliner Komitees in Persien, Bulgarien und dem Osmanischen Reich zu besuchen und andererseits sich noch detaillierter über die Arbeit anderer Organisationen in diesen Ländern zu informieren. Er hielt das letztere für notwendig, um eine unnötige Konkurrenz zu vermeiden und dabei klarzustellen, in welchen Arbeitsfeldern sich sein Komitee besonders aktiv engagieren sollte. Ebd. „So war es meine Pflicht vor allem“, schrieb Lepsius, „die Arbeit der andern Gesellschaften kennen zu lernen und mir ein Urteil über dieselben zu bilden, damit die unsrige nicht ein Pfahl im Fleisch sondern ein Segen für die Arbeit anderer werden möchte.“ Vgl. **Lepsius J.**, Reisebericht von Dr. Lepsius, in: *AAH*, 1899, S. 156. Da er im Laufe der Reise vielerlei Erfahrungen über die Bekehrungsbestrebungen anderer unter den Armeniern tätigen Gesellschaften und deren Folgen machte, ging er nach der Rückkehr in seinen Publikationen sehr kritisch darauf ein, indem er der Öffentlichkeit zugleich seine Stellung dazu ganz ausführlich darlegte. Vgl. **Lepsius J.**, Der Herausgeber an die Freunde unsrer Arbeit, S. 6-8.

Habe beraubten Menschen“, schrieb Lepsius, „Waisen und Witwen, die, ohne Ernährer einem ebenso trostlosen als hoffnungslosen Elend preisgegeben waren, hat man nicht zuerst das Evangelium, sondern Brot, Kleider und Arbeit zu geben.“¹

Eine Missionstätigkeit, die das Ziel habe, unter den orientalischen Christen neue Kirchengemeinden zu bilden, würde nach Ansicht von Lepsius eher schädlich als nützlich sein. „Die Arbeit, die im Orient zu tun ist“, so Lepsius, „zu der das evangelische Deutschland vor anderen berufen ist, kann [...] weder eine evangelistische, noch im hergebrachten Sinn missionierende sein. Es ist eine geistige Arbeitsleistung zu tun, die das Bildungs- und Christentums-Niveau der alten Kirchen zu heben hat. [...] Nur wer die Wege Gottes in der Geschichte nicht kennt, kann glauben, dass eine farblose Kopie englischen, amerikanischen oder deutschen Christentums irgendeinen Einfluss auf die innere Entwicklung des Orients ausüben kann.“²

Die genannte geistige Arbeit, von der Lepsius sprach, hatte unter anderem das Ziel, „das Bildungs- und Christentums-Niveau der alten Kirchen zu heben.“³ Er wies dabei darauf hin, dass soweit eine direkte Missionswirksamkeit unter den alten Christlichen Kirchen im Sinne des Evangeliums möglich und wünschenswert wäre, dieselbe durch die amerikanische Mission geleistet worden sei. Da nahezu alle Zentren Armeniens von der amerikanischen Mission besetzt seien, würde eine andere evangelische Mission nur eine Konkurrenzmission bzw. „ein Pfahl im Fleisch der amerikanischen“ sein. Die Aufgabe der deutschen Missionsgesellschaften solle daher, soweit sie sich mit der amerikanischen Mission berühre, nur eine kooperative sein, vornehmlich in den Richtungen, in denen das amerikanische System versage. Das bezog sich nach Lepsius in erster Linie auf die Bildungsfragen. Das Volksschulsystem der amerikanischen Mission leide unter dem Mangel jeder methodischen Ausbildung der Lehrkräfte, das höhere Unterrichtswesen an dem Mangel einer humanistischen Grundlage, auf der doch zuletzt „alle höhere Geistesbildung“ ruhe. Ohne ein Verständnis der geschichtlichen Entwicklung des Orients zu haben, entfremde das amerikanische Bildungssystem die Christen ihrem heimatlichen Boden und treibe sie „aus ihrem eigenen Volkstum heraus“, ohne dass doch dadurch für andere Völker Werte geschaffen würden.⁴

Lepsius lehnte also jegliche Missionstätigkeit im üblichen Sinne unter den Armeniern und den anderen Christen des Orients ab. Das betraf natürlich auch die von der DOM versorgten Waisenkinder. „Unsere Arbeit im Orient“, schrieb Lepsius diesbezüglich, „hat unter allen Umständen jeden Versuch, ja auch den Schein von Propaganda zu vermeiden, und von jeder gemeindebildenden Tätigkeit unter den Christen abzusehen, wenn wir nicht mehr zerstören als bauen wollen. Unsere Arbeit muss den alten christlichen Kirchen, wo sie noch Bestand haben, ebenso aufrichtig und unbefangen, ebenso freundlich und hilfsbereit, wie den protestantischen Gemeinden gegenüberstehen. Da wir kein moralisches Recht haben, die verwaisten Kinder gregorianischer Eltern

¹ A.a.O., S. 4.

² A.a.O., S. 7-8.

³ **Lepsius J.**, Deutsche Orient-Mission, in: *DCO*, 1900, S. 83. Das bezog sich nach Lepsius auf diejenigen Orte des Orients, wo dies benötigt wurde. Wo aber „die Kräfte des Evangeliums“ lebendig seien, „haben wir nichts anderes zu tun“, so Lepsius, „als uns dessen zu freuen und allen, die mit uns in der Gemeinschaft Gottes und seines Sohnes Jesu Christi stehen, die Hand zu reichen, welcher Kirche oder welchem Bekenntnis sie auch angehören mögen.“ A.a.O., S. 82.

⁴ A.a.O., S. 7.

ihrer Kirche zu entfremden, beschränkt sich unsere Aufgabe diesen gegenüber auf christlich-sittliche Erziehung und Unterweisung, womit wir mehr leisten für den Fortschritt des Christentums als durch direkte Missionsarbeit.“¹

Die Deutsche Orient-Mission blieb stets diesem Grundsatz ihres Begründers treu. Sie ließ sich im Laufe der vielen Jahrzehnte ihres Hilfswerks nie eine Missionstätigkeit im genannten Sinne unter den Armeniern und den anderen Christen betreiben, und selbst in den Zeiten, als sie dafür von vielen Seiten scharf kritisiert wurde, ging sie unbeirrt und entschlossen diesen Weg weiter.

Durch das von Lepsius und seiner Missionsgesellschaft im Osmanischen Reich sowie in Persien und Bulgarien gegründete und entwickelte Hilfswerk konnten tausende von Waisen und Witwen, die aus den systematischen Massakern im Osmanischen Reich in den Jahren 1895-96 zurückgeblieben waren, dem Untergang entgehen. Durch eine gute Organisation der Arbeit sowie durch Mobilmachung vieler Christen und human denkender Kreise – vor allem in Deutschland und in der Schweiz – wurde das möglich, obwohl es dabei auf schwierigem Weg viele Hindernisse zu überwinden und mancherlei Prüfungen zu bestehen hatte.

Աշոտ Հայրունի – Գերմանական արևելյան առաքելության հիմնադրումը և նրա հայօգնության աշխատանքների սկզբնավորումը

Բանալի բառեր – Յոհաննես Լեփսիուս, Գերմանական արևելյան առաքելություն, Օսմանյան պետություն, Ուրֆա, Կեսարիա, կոտորածներ, գերմանական հասարակական և եկեղեցական շրջաններ, որբեր, այրիներ, թուրքական ապատեղեկատվություն

1895 թ. սեպտեմբերի 29-ին դր. Յոհաննես Լեփսիուսի հիմնադրած «Գերմանական արևելյան առաքելություն» կազմակերպությունը, Օսմանյան պետությունում հայերի պարբերաբար կոտորածների պատճառով հրաժարվելով Արևելքի մուսուլմանական շրջաններում քրիստոնեական քարոզչություն իրականացնելու իր սկզբնական ծրագրից, նվիրվեց վտանգված հայ ժողովրդին սատարելու գործին: Կազմակերպությունն իր շուրջ համախմբեց գերմանական հասարակական ու եկեղեցական շրջանների բազմաթիվ ներկայացուցիչների և նրանց նյութական աջակցությամբ ձեռնամուխ եղավ անօգնական բազմահազար որբերի և այրիների փրկությանը: Ուրֆայում, Կեսարիայում, Դիարբեքիում, նաև Բուլղարիայի ու Պարսկաստանի մի շարք շրջաններում, որտեղ փախստականության հոծ զանգվածներ կային, հիմնվեցին որբանոցներ, արհեստագործական ձեռնարկություններ, հիվանդանոցներ և այլ հաստատություններ, որոնք անուրանալի նշանակություն ունեցան կոտորածներից մազապուրծ հայերի վերապրման համար: «Գերմանական արևելյան առաքելությունը», հայօգնության աշխատանքների կազմակերպմանը զուգահեռ, հետևողական պայքար էր մղում նաև թուրքական ապատեղեկատվության դեմ՝ միաժամանակ ջանալով Գերմանիայի կառավարությանը դրդել, որ այն վճռականորեն հանդես գա վտանգված հայ ժողովրդի պաշտպանությամբ:

¹ Lepsius J., Der Herausgeber an die Freunde unsrer Arbeit, S. 6.

Ашот Айруни – Основание Немецкой восточной миссии и начало работ по помощи армянам

Ключевые слова – Лепсиус И., Немецкая восточная миссия, Османская империя, Урфа, Кесария, Диарберкир, армянский народ, погромы армян, немецкие общественные и церковные круги, беспомощные сироты, беженцы

Организация Немецкая восточная миссия, основанная 29 сентября 1895 г. д-ром Иоганнесом Лепсиусом, вследствие систематических погромов армян в Османской империи отказавшись от своей первоначальной программы по проповедованию христианства среди мусульман Востока, стала заниматься оказанием помощи и содействия армянскому народу, оказавшемуся под угрозой. Организация, развернув комплексную информационную деятельность по погромам, собрала вокруг себя немецкие общественные и церковные круги и при их финансовом содействии инициировала оказание помощи и спасение многотысячных беспомощных сирот и вдов. В Урфе, Кесарии, Диарберкире, а также в ряде районов Болгарии и Пакистана, где были большие потоки беженцев, были основаны сиротские приюты, ремесленные предприятия, больницы и другие заведения, которые внесли неоценимый вклад в дело возвращения к жизни спасшихся от смерти армян. Немецкая восточная миссия параллельно с организацией помощи армянам вела также борьбу против турецкой дезинформации, в то же время стараясь склонить правительство Германии к тому, чтобы оно решительно встало на защиту армянского народа.

Ashot Hayruni – Establishment of the German Eastern Mission and Initiation of Armenian Relief Work

Key Words – Johannes Lepsius, German Eastern Mission, Urfa, Caesarea, Diyarbakir, Armenian people, German public, church, orphanages, refugees, massacres, misinformation

The German Eastern Mission, founded by Dr. Johannes Lepsius on September 29, 1895, abandoned its initial Christian propaganda program in the Muslim regions of the East due to the systematic massacres of Armenians in the Ottoman Empire, and dedicated itself to supporting the endangered Armenian people. Carrying out complex activities of informative nature concerning the massacres, the organization united the German public and church circles, and with their material support undertook the rescue of thousands of helpless orphans and widows. Orphanages, handicraft enterprises, hospitals, and other institutions were established in Urfa, Caesarea, Diyarbakir, as well as in a number of regions of Bulgaria and Persia, where there were large numbers of refugees, which were of valuable importance for the survival of the Armenians who had escaped the massacres. In parallel with the organization of the Armenian relief work, the German Eastern Mission was actively fighting against the Turkish misinformation, at the same time trying to urge the German government to resolutely defend the endangered Armenian people.

Ներկայացվել է 02.02.2022

Գրախոսվել է 18.02. 2022

Ընդունվել է տպագրության 29.03.2022

Աշոտ Հայրունի – ԵՊՀ ՀՀԻ առաջատար գիտաշխատող, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր (ashot.hayruni@ysu.am)

ԱՔՍՈՐՅԱԼ ՀԱՅԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ
ԱԴԱՆԱՅԻ ՆԱՀԱՆՔ.
ԲՈՆԱԳՐԱՎՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Բանալի բառեր – Կիլիկիա, Ադանայի նահանգ, Հայոց ցեղասպանություն, Օսմանյան կայսրություն, Ազգային սահմանադրություն, Մուղրոսի զինադադար, արքայալ հայեր, բռնագրավված գույքի իրավունք

Մուղրոսի զինադադարից (30 հոկտեմբեր, 1918 թ.) հետո Կիլիկիան գտնվում էր անգլո-ֆրանսիական հրամանատարության վերահսկողության ներքո, որը տևում է մինչև 1919 թ. դեկտեմբերի 2-ը, այնուհետև նոր համաձայնությամբ՝ տարածաշրջանի վերահսկողությունը փոխանցվում է Ֆրանսիային: Գեներալ Ալեմբիի 1918 թ. դեկտեմբերի 25-ի հրամանագրով Կիլիկիայի ընդհանուր հրամանատարությունը ստանձնում է գնդապետ Էդուարդ Բրեմոնը¹. ըստ որի՝ նա համարվում է «Հայաստանի եւ Կիլիկիոյ Կառավարիչ», այնուհետև 1919 թ. հունվարի 19-ի որոշմամբ նրա տիտղոսը փոխվում է ,և նրան անվանում են «Գրաւուած Թշնամի Հողամասերու Հիւսիսային Գօտիին Գլխաւոր Կառավարիչ»² կամ «Վերին Վարիչ թշնամի գրաւեալ հողամասերու հիւսիսի գօտիի (Կիլիկիա), Պատ. Լեզեոնի հրամանատար»³: Դեկտեմբերի 30-ին Է. Բրեմոնը «Լա Վուազիէ» գրահանավով ժամանում է Մերսին՝ Բեյրութից իր հետ բերելով մերսինցի, ադանացի, պոլսեցի և կոնիացի 200 զաղթական⁴:

1918 թ. զինադադարից հետո արքայալված հայերի որոշ մասը սկսում է վերադառնալ Ադանայի նահանգ: Վերադարձողների թվում էին ոչ միայն Կիլիկիայի, այլև Արևմտյան Հայաստանի նահանգներից և Օսմանյան կայսրության այլ հայաբնակ վայրերից բռնագաղթված հայեր: Զինադադարի առաջին ամիսներից մինչև 1919 թ. կեսերը շուրջ 150.000 վերապրած հայեր հաստատ-

¹ Տե՛ս **Եղիայեան Բ.**, Ժամանակակից Պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972 թթ., Անթիլիաս-Լիբանան, 1975, էջ 78:

² **Պոյաճեան Տ. Յ.**, Հայկական Լեզեոնը, Պատմական Յուշագրութիւն, Ուօթրթատուն, 1965, էջ 199:

³ «Կիլիկիա» (Ստանա), 1919, թիւ 31, 11 մայիս, էջ 2:

⁴ Ստանայի կուսակալ Մ. Պըրէմօն Պաշտօնատեղին ժամանած // «Ժամանակ» (Կ. Պոլիս), 1919, թիւ 3448, 5/18 փետր., էջ 3:

վում են կիլիկյան քաղաքներում¹: Ըստ Կ. Պոլսի «Ժողովուրդ» թերթի տվյալների՝ այնտեղ հայերի քանակը սեպտեմբերին հասնում էր 130.000-ից 140.000-ի²:

1918 թ. դեկտեմբերին Ադանայից տեղեկացնում են, որ սկսվել է հայ տարագրյալների վերադարձը, տվյալ պահին մեծամասնություն էին բանդրացիները, իսկ որոշ մասը զմյուռնացիներ էին, որոնք 300-ից ավելի էին: Վերադարձող գաղթականներին նահանգապետն արդեն արտոնել էր մեկնել իրենց քաղաքները, սակայն փոխադրամիջոցների բացակայության պատճառով նրանք դեռևս տեղում էին³:

Ըստ «Ճակատամարտ» թերթի տվյալների՝ 1919 թ. մարտին Մերսինում 1.500, Տարսնում՝ 3.000, Ադանայում՝ շուրջ 10.000-ից 12.000, Չորք-Մարգպանում՝ 6.000 վերադարձած հայեր կային⁴: Ըստ մեկ այլ սկզբնաղբյուրի՝ Ադանայում 1919 թ. հունվարին շուրջ 20.000 տարագրյալ հայեր կային⁵: Չորք-Մարգպանի շուրջ 20.000⁶ հայից 1919 թ. սկզբին վերադարձել էր մոտ 3.000 քստրյալ⁷: Ադանայում էին գտնվում շուրջ 200 յոզղարթցի տղամարդիկ՝ քստրված Յոզղարթի բոլոր հայկական գյուղերից⁸:

Մինչև 1919 թ. հունիսի Հաճըն է վերադառնում 4.000 գաղթական⁹, իսկ հուլիսին նրանց թիվը 4.500-ից ավելի էր¹⁰: Հաճընը վերածվել էր ավերակի ու մոխրակույտի, 25.000¹¹ հայերից մնացել էին 4.000-ից 5.000-ը, հացի խնդիրը

¹ Տե՛ս **Սաաթճևան Ն.**, Մարաշի աղետը 1920ին, ասպետական Ֆրանսիայի անփառունակ նահանջը // 1915-1965 Յուշամատեան Մեծ Եղեռնի, խմբ. Գ. Ահարոնեան, Պէրյուք, 1965, Գ. հրատ., 1987, էջ 833:

² Ընդհանուր կացութիւնը Կիլիկիոյ մէջ // «Ժողովուրդ» (Կ. Պոլիս), 1919, թիւ 45 (290), 22 սեպտեմբեր, էջ 1:

³ Ատանայի Հայութեան վիճակը // «Ժամանակ», 1918, թիւ 3381, նոյեմ. 28/11 դեկտ., էջ 2:

⁴ Ներգաղթը դէպի Կիլիկիա, Կեանքը կը վերածնի Կիլիկիոյ մէջ // «Ճակատամարտ» (Կ. Պոլիս), 1919, թիւ 129 (1950), 13 ապրիլ, էջ 2:

⁵ Կիլիկիոյ կաթողիկոսը նպաստ կ'ուզէ // «Ժամանակ», 1919, թիւ 3420, 6/19 յնվ., էջ 2:

⁶ 1915 թ. «Արարատ» ամսագիրը նշում է, որ Չորք-Մարգպանում կար 12.300 հայ («Արարատ», Էջմիածին, 1915-ՌՅԿԴ, տարի ԽԹ, յունվար, համար Ա, էջ 29): Ռ. Թաթոյանը նշում է, որ 1914 թ. Չորք-Մարգպանում և Նաջարլըում կար 11.860 հայ (**Թաթոյան Ռ.**, Կիլիկիահայության թիվը Հայոց ցեղասպանության նախօրյակին, Երևան, 2021, էջ 176):

⁷ «Կիլիկիա», 1919, թիւ 10, 23 մարտ, էջ 1:

⁸ Եօզկարցիները Ատանայի մէջ // «Ժամանակ», 1919, թիւ 3486, մարտ 21/3 ապրիլ, էջ 2:

⁹ Կեանքը Սիսի մէջ // «Ժամանակ», 1919, թիւ 3551, 7/20 յունիս, էջ 3:

¹⁰ «Ժամանակ», 1919, թիւ 3569, յունիս 29/12 յուլիս, էջ 2:

¹¹ Հայոց պատրիարքարանի (1913 թ. փետրվար-1915 թ. օգոստոս) մարդահամարի տվյալների համաձայն, Հաճընում կար 27.850 հայ (**Kevoorkian R. H., Paboudjian P. B.**, 1915 Öncesinde Osmanlı İmparatorluğu'nda Ermeniler, İstanbul, 2012, s. 63): «Հաճըն» թերթը գրում էր, որ Առաջին աշխարհամարտից առաջ բնակչության թիվը հասնում է 30.000-ի (**Մար. Ալ.**, Հաճըն քաղաքը // «Հաճըն» (Մարսել, Փասադենա), թիւ 9-12, 1935/1936, էջ 948): Ս. Կարայանը նույնպես նշում է 30.000 թվաքանակը (**Karayan S. Y.**, Armenians in Ottoman Turkey, 1914: A Geographic and Demographic Gazetteer, London, 2018, p. 101):

շատ մեծ էր, իսկ տներն այրված էին¹:

1919 թ. հոկտեմբերին Ադանայում մոտավորապես 30.000 հայ կար, որոնցից 1.500-ը այրի կանայք էին, 3.000-ը՝ որբեր, իսկ պատերազմից առաջ ադանահայերի թիվը հասնում էր 25.000-ի²: Հարունիեում 800 հայ կար, որոնցից 141-ը որբեր էին, իսկ ինը որբնայրիներ: Պորտ-Սայիդից եկած 450-500 գաղթականները սպասում էին օգնության: Չորք-Մարգպանում 417 որբ և 65 որբնայրի կային, էյպեզում պատերազմից առաջ շուրջ 1.500 հայ կար, իսկ հետո՝ 690, կային նաև 40 որբնայրի և 78 որբ: Օջաբլում կային 110 որբ և 40 որբնայրի, Էոզերլին ուներ 102 որբ և 21 որբնայրի³: Վահկայի հայերը նույնպես շտապում էին իրենց քանդված և ավերված ծննդավայրը, որտեղ արդեն կար շուրջ 150 վերապրող: Այստեղ սպասում էին նաև նոր գաղթականների, մարդիկ գուրկ էին բնակարանային և նյութական միջոցներից: Երեպագան գյուղի նախկին 200 տնից մնացել էր միայն 50-ը, բոլոր արհեստավորները անգործ էին, ժողովուրդը ծայրաստիճան չքավոր վիճակում էր: Նախկինում 300 տնից բաղկացած Գարա Քոյ գյուղում մնացել էր հողագործությամբ զբաղվող հազիվ 100 տուն. այստեղ նույնպես ժողովուրդը ծայրահեղ թշվառ վիճակում էր⁴:

Բահչեի հայությունը, որն ուներ 150 տուն, ամբողջությամբ տեղահանվել էր, տղամարդիկ սպանվել էին: Զինադադարից հետո վերադարձել էին 15-ից 20 տուն վերապրած կանայք, որոնց տները հետզհետե դատարկվում էին գրավողների կողմից: Բահչեում թուրքերի մոտ էին շուրջ 80-ից 100 հայ որբեր: Մասնավորապես Ամանոսի շինարարության հրամանատար, ոստիկանական զորքերի հագարապետ Դենիզլիցի Մեհմեդ Արիֆն իր մոտ պահում էր հայ աղջիկների⁵:

Զինադադարից հետո առաջինների թվում Ադանա է վերադառնում Կիլիկիո Հայոց կաթողիկոս Սահակ Բ Խապայանը (1902-1939), որի շնորհիվ վերակազմավորվում է ազգային և եկեղեցական կյանքը: Ձևավորվում է 15 անդամից բաղկացած Ազգային միությունը, որը կազմված էր երեք հարանվանության ներկայացուցիչներից, չորս քաղաքական կուսակցությունների երկուական անդամներից և Ազգային պատվիրակության մեկ ներկայացուցիչից⁶:

¹ «Ժամանակ», 1919, թիւ 3572, 2/15 յուլիս, էջ 2:

² Մ. Օրմանյանը Ադանայում նշում է 31.200 հայ (**Օրմանեան Մաղաքիա Արքեպիս.**, Հայոց եկեղեցին, Կոստանդնուպոլիս, 1912, էջ 207): Բ. Եղիայանի ներկայացած տվյալների համաձայն՝ հայերը 30.000-ից 32.000 էին (**Եղիայեան Բ.**, Ատանայի Հայոց պատմութիւն, Անթիլիաս-Լիբանան, 1970, էջ 156):

³ Հայոց թիւը Կիլիկիոյ մէջ // «Ժամանակ», 1919, թիւ 3674, հոկտ. 31/13 նոյմ., էջ 2:

⁴ «Ժամանակ», 1919, թիւ 3548, յունիս 4/16, էջ 2:

⁵ Կեանքը Կիլիկիոյ մէջ // «Ժամանակ», 1919, թիւ 3416, յունուար 2, էջ 3:

⁶ Տե՛ս **Աշըղեան Կ. Բ.**, Ուզուն Աշըղեան գերդաստանի պատմութիւնը, Պէրյութ, 1968, էջ 156:

1918 թ. հոկտեմբերի 19-ին Սահակ Բ կաթողիկոսի՝ Կ. Պոլսի փոխանորդ Գաբրիել եպիսկոպոս Ջևահիրջյանի դիմումով կառավարությունը վերահաստատում է իր իսկ կողմից դադարեցված¹ Ազգային սահմանադրությունը²: Համաձայն սահմանադրության՝ վերահաստատվում են և սկսում գործել Ազգային վարչական մարմինները: 1918 թ. դեկտեմբերի 12/25-ին իր ընդհատված գործունեությունն է վերսկսում «Առժամեայ Քաղաքական ժողովը», որը միայն իր առաջին գումարման ընթացքում (մինչև 1919 թ. հուլիսի 19) գումարում է 44 նիստ: Առաջին քաղաքական ժողովն իր գործունեության յոթ ամիսների ընթացքում վերակազմավորում է Ազգային սահմանադրական ժողովները, ձեռնարկում ազգապատկան կալվածքների ցուցակագրությունը, կատարում կալվածքների վերանորոգման և վարձակալության աշխատանքները, զբաղվում գաղթականների տեղավորման և նպաստի հարցերով³: Թաղական խորհուրդը ձևավորվում է միայն 1920 թ. սեպտեմբերին, իսկ Տնտեսական խորհրդի գործառույթները կատարում էր Քաղաքական ժողովը, քանի որ «երկրին տնտեսական ու քաղաքական ներկայ վիճակը» դեռևս խորհրդի գործունեության համար նպաստավոր չէր, չնայած որ Քաղաքական Բ. ժողովի (1919 թ. հուլիսի 30-1920 թ. հունիսի 26) 1919 թ. հուլիսի 30-ի նիստի ընթացքում կազմավորվել էր Տնտեսական խորհուրդը⁴: Կրոնական ժողովը և Քաղաքական ժողովը 1919 թ. հունվարին Գևորգ Ծ. վ. Արսլանյանին պաշտոնագրով հրավիրում են որպես Առաջնորդական տեղապահ⁵:

Ձինադադարի առաջին ամիսներին Ադանայի քաղաքային իշխանությունը դեռևս թուրքերի ձեռքում էր. քաղաքում Անտանտի տերությունների զինվորներ գրեթե չկային: Ադանայում երիտթուրքական կուսակցության կենտրոնական վարչության անդամներ Իսմայիլ Սեֆան, Մուհթար Ֆիքրին և Զամիր Բեյը պաշտոնապես փակում են «Միություն և առաջադիմություն» կուսակցության տեղական ակումբը՝ այն հայտարարելով լուծարված, շենքի վրայից իջեցնում են ցուցանակները և անցնում ընդհատակյա գործունեության: Հատկանշական է, որ անգամ այդ իրավիճակում նրանք հայկական նոր ջարդ կազմակերպելու ծրագիր են մշակում և զենք բաժանում կուսակցության ներկայացուցիչներին: Կոտորածները սկսելու ազդանշանը պետք է տրվեր «Միություն և առաջադիմություն» կուսակցության կողմից երկու թուրքի սպանության պատրվակով, որը վերագրվելու էր հայերին. «Նշա-

¹ 1916 թ. հուլիսին դադարեցված Հայոց Ազգային սահմանադրությունը վերահաստատվում է 1918 թ. նոյեմբերի 11-ին: Տե՛ս **Գրիկեր**, Եոզղատի հայասպանութեան վավերագրական պատմությունը, Նիւ Եորք, 1980, էջ 70:

² Տե՛ս **Զավեն Արքեպս.**, Պատրիարքական Յուշերս, վաւերագիրներ եւ վկայութիւններ, 1947, Գահիրէ, էջ 277:

³ Տե՛ս **Եղիայեան Բ.**, Ատանայի Հայոց պատմութիւն, էջ 684-685:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 690-691:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 693:

նակալից պարագայ մըն է, որ նախկին մեծ ջարդերն ալ տեղի ունեցած են դարձեալ կիրակի օրով և պարագաներու մէջ»¹: Ըստ սկզբնաղբյուրի՝ Ադանայի նահանգապետ Նազըմ բեյը և քարտուղար Թևֆիկ բեյը լուռ կեցվածքով քաջալերում էին այդ գործողությունները²:

1918 թ. դեկտեմբերին «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենսունակ ուժերը 25 ոսկի աշխատավարձով կամավորագրվում էին Ադանայի նահանգի Օսմանիե գավառակում և ստացած զենքերով ցրվում իրենց տեղերը: Չեթեական այս նոր կազմավորումների ստեղծումը տեղական իշխանությունները հիմնավորում էին Ադանայի նախկին առաջնորդ Մուշեղ եպիսկոպոսի³, իբր դաշնակիցների նավատորմով հայ կամավորներ ափ իջեցնելու հանգամանքով⁴: Փաստն այն է, սակայն, որ այդ օրերին Մուշեղ սրբազանը Ջավեն պատրիարքի⁵ առաջարկով գտնվում էր Մոսուլում⁶, և նրանք զբաղված էին արքայի ճանապարհին և համակենտրոնացման ճամբարներում բազում տանջանքների ենթարկված, բռնի իսլամացված, առևանգված հայ կանանց և որբերի ազատագրության ու փրկության հարցերով:

Պատերազմի տարիներին Ադանան վերածվել էր թուրքական քաղաքի, առևտուրը նույնպես թուրքերի ձեռքում էր: Քաղաք վերադարձող տեղացի հայերը փորձում էին հետ ստանալ իրենց կալվածքները, որոնք մեծ մասամբ ավերված ու այրված էին: Ադանայի եկեղեցին վերածվել էր «իմալաթխանէի»⁷ պահեստի: Ադանայի երևելիներից Նալբանդյանին առաջարկում են ստանալ եկեղեցու բանալիները, սակայն վերջինս մերժում է՝ նշելով, որ չի կարող ազգի առջև նման պատասխանատվություն ստանձնել՝ հստակ իրազեկ լինելով, որ եկեղեցու գույքը, արծաթյա և ոսկյա անոթներն ամբողջությամբ աճուրդով վաճառվել են: Արգարյան վարժարանը դարձել էր հիվանդանոց, և հայտնի չէր, թե երբ էր դատարկվելու⁸: Նաջարը գյուղի եկեղեցին ախոռի էին վերածել, տները փլված էին, իսկ դպրոցի միայն չորս պատերն էին կանգուն մնացել⁹: Բացի այդ, բռնագաղթից հետո Երկարագործական բանկը էժան գնով վաճառել էր մինչ պատերազմն իր մոտ գրավադրված հայապատկան հողերը¹⁰:

Փողոցները լայնացնելու պատրվակով՝ արքայական հայերի տների մեծ

¹ Իթթիհատական նոր դաւ մը, Կրկին Ատանան ջարդելու կը պատրաստուին, Զգայացունց յայտարարութիւններ // «Արիամարտ» (Կ. Պոլիս), 1918, թիւ 20 (1835), դեկտեմբերի 14, էջ 2:

² Նույն տեղում:

³ Մուշեղ արք. Սերոբյանը 1905-1909 թթ. Ադանայի Հայոց թեմի առաջնորդն էր :

⁴ Արիւնի ծարավը չէ յազեցած // «Արիամարտ», 1918, թիւ 21 (1836), դեկտեմբերի 15, էջ 2:

⁵ Ջավեն արք. Տեր-Եղիայանը 1913-1916 թթ. և 1919-1922 թթ. Կ. Պոլսի Հայոց պատրիարքն էր:

⁶ **Ջավեն Արքեպս.** նշվ. աշխ., էջ 251:

⁷ İmalathane (թրք.) – արհեստանոց:

⁸ Ատանայի Հայութեան վիճակը // «Մամանակ», 1918, թիւ 3381, նոյեմ. 28/11 դեկտ., էջ 2:

⁹ Ատանայի առաջնորդին տեղեկագիրը // «Մամանակ», 1919, թիւ 3568, 27/10 յուլիս, էջ 2:

¹⁰ Բողոքի հեռագիր Կիլիկիայէն // «Մամանակ», 1919, թիւ 3427, 14/27 յնվ., էջ 3:

մասը կառավարության հրամանով փլուզվել էր, իսկ մյուս տները հատկացվել էին մուսուլման փախստականներին: Թեև փախստականներից շատերը ինքնակամ թողել էին տները և հեռացել Կոնիա կամ այլ վայրեր, այնուամենայնիվ տեղական իշխանությունները վարանում էին դրանք հանձնել տերերին: Գույքերը ստանալու համար սեփականատերերի ազգականների (մայր, եղբայր) դիմումներին պատասխանում էին, որ սեփականատերն անձամբ պետք է ներկայանա, մինչդեռ նրանցից շատերի ողջ կամ մահացած լինելը դեռևս ստուգված չէր: Պահանջվում էր նաև վավերացված թուղթ ներկայացնել աքսորավայրից, սակայն «...կարելի բան է այժմ Տերզորէն կամ Դամասկոսէն ու է լուր մը ստանալ»¹:

Աքսորավայրերից և համակենտրոնացման ճամբարներից վերադարձող հայերը կրկին հայտնվում էին ծանր վիճակում: Գաղթականներին օգնելու համար Կիլիկիոյ կաթողիկոսը նպաստ է խնդրում Կ. Պոլսի Հայոց պարտրիարքարանից: Ադանայի Հայոց թեմի առաջնորդական տեղապահ Գևորգ Ծ. վ. Արսլանյանը հաղորդում էր, որ կարոտությունը աստիճանաբար ավելանում է, քանի որ չափազանց վատ վիճակում գտնվող կանանց ու անչափահաս աղջիկների մեծ մասը կենտրոնանում էր Ադանայում՝ մնալով առանց աշխատանքի²: Ադանայի Հայ ազգային միությունը ևս օգնություն էր խնդրում Կ. Պոլսում հիմնադրված Կիլիկյան միությունից՝ նշելով, որ արաբական անպատներից վերադարձող հայերի թիվն այնտեղ արդեն հասել է 40.000-ի, և որ ևս 100.000 գաղթականներ պետք է անցնեն Կիլիկիայով, և հավանական է, որ նրանց մեծամասնությունն այնտեղ մնա: Տեղեկացվում էր. «Առժամաբար իւրաքանչիւր անհատի համար կէս ոսկի ծախք կայ»³: Դեռևս նրանց ծախսերը հոգում են տեղական միջոցներով՝ օգտագործելով տեղի հայերի և հույների հանգանակած 15.000 ոսկին, խնդրում էին ամեն միջոց գործի դնել, որ մեծ գումարներ, հագուստեղեն և դեղորայք ուղարկվի Ադանա՝ սովամահությունը և համաճարակները կանխելու համար: Կիլիկյան միությունը հնարավոր ամեն ինչ անում էր օգնելու համար: Նշվում է, որ 1919 թ. սկզբին 1.600 ոսկի արդեն ուղարկվել էր Կիլիկիայի տարբեր շրջաններ⁴, բացի այդ, Չավեն պատրիարքը ևս 2.500 ոսկի էր ուղարկել Ադանա⁵:

Չնայած բոլոր դժվարություններին ու խոչընդոտներին՝ նահանգում վերահաստատված բնակչությունը ազգային կյանքը վերականգնելու և շարունակաբար ներգաղթող կարոտյալներին օգնելու համար ամենատարբեր ոլորտներում սկսել էր որոշակի գործունեություն ծավալել: Որոշ անհատներ

¹ Ատանայի Հայութեան վիճակը // «Մամանակ», 1918, թիւ 3381, նոյեմ. 28/11 դեկտ., էջ 2:

² Կիլիկիոյ կաթողիկոսը նպաստ կ'ուզէ // «Մամանակ», 1919, թիւ 3420, 6/19 յնվ., էջ 2:

³ Ատանայի Հայ ազգ. Միութեան հաշիւը եւ կոչը // «Մամանակ», 1919, թիւ 3469, 1/14 մարտ, էջ 2:

⁴ Նոյն տեղում:

⁵ Կիլիկիոյ համար // «Մամանակ», 1919, թիւ 3474, 7/20 մարտ, էջ 2:

րի հաջողվել էր վերաբացել հայկական ձեռնարկությունները, հիմնադրվել էին նորերը:

1919 թ. Զվյուռնիայից Հայկ և Հակոբ Աբրահամյանները Ադանայում բացել էին «Յովհաննէս Աբրահամեան» վաճառատան մասնաճյուղը, որը զբաղվում էր կաշվի և օղու առևտրով՝ այն արտահանելով մինչև եվրոպական երկրներ¹: Այդ տարիներին Ադանայում գործում էր նաև «Ս. Նիկողոսեան» դեղատունը²: «Կիլիկիա» թերթի գովազդների շարքում կարելի է հանդիպել նաև Վահան Քեշիշյանի «Հանքային ջերմուկներ» ապրանքանիշին³: Ի թիվս այլ ձեռնարկությունների՝ գործել է նաև Մերսինի Մոստիշյան տպարանը, որտեղ հնարավոր էր նաև կնիքներ պատվիրել⁴: Ադանայում Միսակ Ավետյանը կալվածքների առք ու վաճաքի, արտաչափության գործակալություն էր հիմնել⁵:

Հատկանշական է, որ վերադարձից հետո Ադանայի հայերի առաջին ձեռնարկներից մեկը Ս. Աստվածածին եկեղեցու գանգի ձուլումն էր, որը պատերազմի օրերին թուրքերը հանել և հանձնել էին գերմանացիներին⁶: Վերադարձող քստրյալները փորձում էին նաև հետամուտ լինել իրենցից ապօրինաբար խլված գույքային հարցերին. «Աւելորդ է ամենուն ծանօթ եղածը հոս կրկնել, թէ ինչեր եղան Հայոց ինչքերն ու գոյքերը...»⁷:

Գնդապետ Բրեմոնը հայտարարում է, որ չեղյալ է համարվում Ադանայից քստրված հայերի անշարժ կալվածքների վաճառքը, ինչպես նաև թղթադրամ չընդունելու իրավունք է տալիս այն պահանջատերերին, որոնք պատերազմից առաջ որպես պարտք ոսկեդրամ էին տվել⁸: Նշվում է նաև, որ գույքերից զրկվածները պետք է հետ ստանային դրանք, երբ սեփականության իրենց նախկին իրավունքները հաստատվեին: Սեփականատերերը գավառի կառավարչին պետք է ուղղեին պատերազմական վնասների պահանջագիր՝ «պատասխանատու նկատելով կառավարութիւնը»: Նշված պահանջին չենթարկվողները կարող էին մինչև վեց ամիս բանտարկվել կամ 50-ից 500 ոսկի տուգանվել⁹:

Ըստ Կիլիկիայի ընդհանուր կառավարչի որոշման՝ չեղյալ էին համարվում նաև բոլոր այն գործարքները, որոնք օսմանյան Երկրագործական բանկը կատարել էր հայերի հողերի նկատմամբ պատերազմի սկզբից ի վեր. «Կը վերադարձնէ մեր իրաւունքները, զորս այնքան կոպիտ կերպով խլեցին...

¹ «Կիլիկիա», 1919, թիւ 37, մայիսի 21, էջ 2:

² Նույն տեղում:

³ «Կիլիկիա», 1919, թիւ 40, մայիսի 24, էջ 2:

⁴ «Հայ Ձայն» (Ատանա), 1919, թիւ 196, օգոստոսի 14, էջ 4:

⁵ «Հայ Ձայն», 1919, թիւ 230, հոկտեմբերի 23, էջ 4:

⁶ Տե՛ս **Աշըգեան Կ. Բ.**, նշվ. աշխ., էջ 9:

⁷ Բողոքի հեռագիր Կիլիկիայէն // «Ժամանակ», 1919, թիւ 3427, 14/27 յնվ., էջ 3:

⁸ «Ժամանակ», 1919, թիւ 3503, 11/24 ապրիլ, էջ 2:

⁹ Տարագիրներու ինչքերը // «Ժամանակ», 1919, թիւ 3526, 8/21 մայիս, էջ 2:

Կողոպուտը, թալանը դարերով այստեղ սիրական զբաղումներ են եղած: Արին քրտինք թափելու, աշխատելու չարչարուելու ի՞նչ հարկ, երբ կարելի է «քրիստոնեաներու» ինչքերը պարբերաբար յափշտակել և այդպիսով ապրուստ ապահովել, դրամ դիզել: Երեկուան իշապանը այսօր ազարակատեր, երեկայ աղբահաւաքն այսօր ապրանքներերու տէր, ալ ի՞նչ կ'ուզեն»¹:

Գնդապետ Բրեմոնի՝ օսմանյան պետության կողմից հայերի գույքերի բռնագրավումները և դրանց հետագա վաճառքը անօրինական ճանաչող որոշումները հրատարակվել են 1919 թ. Ադանայում²:

Միաժամանակ, վնասների չափը ճշտելու համար Ազգային պատրիարքարանը և ազգապետարանը, հետևելով հայ կաթոլիկների վնասների հատուցման հանձնաժողովի աշխատանքների և պատրաստած հարցարանների մասին տրված բացատրություններին, որոշում են նույնանման հարցարաններ կազմել և ուղարկել գավառներ³:

Բացի այդ, հայկական գույքերի հաշվազրման համար նոր օրենք է պատրաստվում և ներկայացվում Պետական խորհրդին: Օրենքը վերաբերում էր բռնագողթի ընթացքում հայերի բռնագրավյալ գույքերը վերադարձնելու տարբերակներին⁴: Ըստ պատրիարքարանից ստացված տեղեկությունների՝ Պետական խորհուրդը օրենքն ընդունելուց հետո այն ներկայացնում է վարչապետարանին: Միաժամանակ թուրքական թերթերը հայտնում էին, թե ֆինանսների նախարարությունից գավառներ հրահանգ է տրվել, որ «ելմտական գանձուն տակաւին չի փոխանցուած Հայոց պատկանող կալուածները կամ չճախուած գոյքերը կամ տէրերուն և կամ ժառանգորդներուն յանձնուին»⁵: Տվյալ դեպքում առաձնակի կարևոր է այն հանգամանքը, որ ֆինանսների նախարարությունը հնարավորություն է ընձեռում մահացածների ժառանգներին տեր դառնալու իրենց գույքին⁶: Մակայն, թե ինչպես պետք է վճռվեր արդեն իսկ նախարարության գանձարան փոխանցված գույքերի ճակատագիրը, և սոկոսային ինչ հարաբերակցություն ունեն գանձարան փոխանցված և չփոխանցված գույքերը, որևէ կերպ չէր պարզաբանվում:

Գույքերը տերերին վերադարձնելու հարցում կառավարությունը բոլորովին չէր շտապում, ինչը փաստում է հետևյալ հրապարակումը. «Երէկ պաշտօնական շրջանակէ ստուգեցինք, որ ելմտական նախարարութեան կողմէ տեղահան եղող Հայոց կալուածներու մասին փետր. 26 թուով գրկուած շրջա-

¹ Օրինական աւագակութիւն // «Կիլիկիա», 1919, թիւ 17, ապրիլի 9, էջ 1:

² Տարագիրներու ինչքերը պիտի վերադարձուին // «Կիլիկիա», 1919, թիւ 31, մայիսի 11, էջ 2:

³ Վնասուց հատուցման խնդիրը // «Մամանակ», 1919, թիւ 3494, մարտ 30/12 ապրիլ, էջ 2:

⁴ «Մամանակ», 1919, թիւ 3441, յնվ. 28/8 փետր., էջ 2:

⁵ Գաւառի Հայութեան գոյքերը եւ կալուածները // «Մամանակ», 1919, թիւ 3463, փետր. 22/7 մարտ, էջ 3:

⁶ Նույն տեղում:

բերականը բոլորովին անդեպ և դատապարտելի քայլ մ'է»¹: Բացի այդ, երբ հայկական թերթերը հաղորդում էին, թերևս միայն քարոզչական նպատակներով, այլ ոչ ամենևին գործադրելու համար բռնագրավված գույքի մասին շրջանառության մեջ դրված օրենքի նախագծերը, Օսմանյան կայսրության ներքին գործերի նորընտիր նախարարը հետքայլ է անում:

Ջեմալ բեյը հետ է կանչում Ահմեդ Թնֆիկ փաշայի կառավարության հանձնարարությամբ պետական խորհրդի կազմած՝ Հայոց գույքերի մասին օրինագիծը, այնուհետև Կ. Պոլսի անգլիական ներկայացուցչի հետ խորհրդակցելուց հետո առաջարկում է, որ Ազգային պատրիարքարանի և կառավարության կողմից երկուական պատվիրակ նշանակվի, և խնդիրը քննելով՝ ավելի պատշաճ օրենք պատրաստեն²:

1920 թ. հունվարի 8-ին օսմանյան խորհրդարանը ընդունում է «Լքյալ գույքի» մասին 33 հոդվածից բաղկացած նոր օրենք³, որը հունվարի 12-ին հրապարակվում է օսմանյան մամուլում և թարգմանաբար արտատպվում Կ. Պոլսի «Ժամանակ»⁴ թերթում:

Վերոնշյալ օրենքի առաջին հոդվածն ամրագրում էր բռնագրավված գույքի վերադարձը տերերին, եթե նրանք ողջ էին, կամ ժառանգներին. «Յօդ. 1 – Այլուր փոխադրուած անձերուն թողած գոյքերուն, պարտքերուն և պահանջներուն մասին 1331 Սեպտ. 13 թուակիր առժամեայ օրենքին և անոր գործադրութեան եղանակին նկատմամբ 1331 Հոկտ. 26 թուակիր կանոնագրին տրամադրութիւններուն համեմատ, ելմտական և Էվգաֆի գանձերուն անուան արձանագրուած և այժմ անոնց ձեռք գտնուած անշարժ գոյքերը իսկոյն և վարչական կերպով կը յանձնուին առաջին տէրերուն, եթէ ողջ են անոնք... Եթէ առաջին տէրերը մեռած են, անշարժ գոյքերը, երկու գանձերուն անուան արձանագրուած ըլլան թէ ոչ, անմիջապէս կը յանձնուին ժառանգորդներուն և կամ անոնց որոնց փոխանցուած են»⁵:

¹ Տեղահան եղած Հայոց կալուածները // «Ժամանակ», 1919, թիւ 3465, փետր. 24/9 մարտ, էջ 2:

² Տարագրեալ Հայոց գոյքերը // «Ժամանակ», 1919, թիւ 3480, 1/24 մարտ, էջ 2:

³ Տե՛ս **Մարտիքյան Ա.**, Թուրքական պետության կողմից ցեղասպանության ընթացքում և դրանից հետո հայերի ունեզրկման քաղաքականության իրագործման քննական վերլուծություն // «Հայոց ցեղասպանության մշակութային և նյութական հետևանքների հաղթահարման մեթոդաբանությունն ու գործիքակազմը» (կոլեկտիվ մենագրություն), Ա. Մարտիքյան, Մ. Գասպարյան, Ա. Աստոյան, Ա. Ոսկանյան, Երևան, 2021, էջ 42:

⁴ Հոդված 1-5 (Կարեւոր օրենք մը տարագրեալ հայոց գոյքերուն մասին, «Ժամանակ», 1920, թիւ 3731, 8/21 յնվ., էջ 1); հոդված 6-7 (նույն տեղում, 1920, թիւ 3732, 9/22 յնվ., էջ 1); հոդված 8-10 (նույն տեղում, 1920, թիւ 3733, 10/23 յնվ., էջ 2); հոդված 11-15 (նույն տեղում, 1920, թիւ 3734, 11/24 յնվ., էջ 1); հոդված 16-18 (նույն տեղում, 1920, թիւ 3735, 12/25 յնվ., էջ 2); հոդված 19-23 (նույն տեղում, 1920, թիւ 3737, 15/28 յնվ., էջ 1); հոդված 24-33 (նույն տեղում, 1920, թիւ 3738/, 16/29 յնվ., էջ 2):

⁵ Կարեւոր օրենք մը տարագրեալ հայոց գոյքերուն մասին // «Ժամանակ», 1920, թիւ 3731, 8/21 յնվ., էջ 1:

30-րդ հոդվածը չէր յայտնում 1915 թ. սեպտեմբերի 13-ի օրենքը և դրա գործադրության վերաբերյալ հոկտեմբերի 26-ի կանոնադրությունը: Ըստ 32-րդ հոդվածի՝ օրենքը գործադրելի էր հրապարակման հաջորդ օրվանից, իսկ 33-րդ հոդվածը սահմանում էր, որ գերատեսչություններին էր հանձնարարված դրա իրագործումը. «Ներկայ որոշմնագրին գործադրութիւնը յանձնուած է ներքին գործոց, դատական, ելմտական, երկրագործական և էվգաֆի նախարարներուն»¹: Օրենքը ստորագրված էր սուլթանի և նախարարների կողմից 1336 (1920) թ. հունվարի 8-ին²:

Այս օրենքը ֆինանսների նախարարությունը ուղարկում է գավառի իշխանություններին՝ այն ճշգրտորեն գործադրելու հրամաններ տալով³: Սակայն այն ոչ միայն չի կիրառվում, այլև քեմալականների կողմից շարունակաբար ընդունվող նոր օրենքներն ավելի են բարդացնում գործընթացը:

1920 թ. ապրիլի 23-ին քեմալականների ընդունած առաջին փաստաթղթերից մեկը արգելում էր նախկին օսմանահպատակների վերադարձն իրենց հայրենիք⁴, հետագայում՝ 1923 թ. ապրիլի 15-ին, վերականգվում է 1915 թ. սեպտեմբերի 13-ին երիտթուրքերի ընդունած «Լքյալ գույքերի մասին» օրենքը, որին կցվում են ևս վեց հոդված, որով հայերի իրավունքներն ավելի են ոտնահարվում⁵: 1923 թ. հունիսի 23-ին Անկարայի Ազգային մեծ ժողովը փոփոխություն է կատարում ապրիլի 15-ի օրենքում, որով արդեն մերժում է ոչ մուսուլմանների ցանկացած պահանջ «լքյալ գույքերի» վերաբերյալ:

Նույն տարվա սեպտեմբերին քեմալական իշխանություններն ընդունում են հերթական օրենքը, որի հոդվածներից մեկը գաղթած հայերին զրկում էր երկիր մուտք գործելու արտոնագրից, իսկ մեկ այլ հոդված արգելում էր նախկին օսմանահպատակ օտարերկրյա այն քաղաքացիների մուտքը երկիր, որոնք նոր կարգավիճակ էին ստացել առանց թույլտվության⁶:

Գրեթե ամեն տարի որպես «լքյալ գույք» արծարծվող բռնագրավյալ անշարժ և շարժական կապիտալի վերաբերյալ քեմալական իշխանությունների ընդունած տարատեսակ օրենքներն ավելի էին չեզոքացնում հայերի ունեցվածքը հետ ստանալու ամենաչնչին հնարավորությունները և օրենքի ուժով ամրապնդում պետական ամենաբարձր մակարդակով իրականացված կողոպուտը:

1931 թ. մարտի 28-ին «Լքյալ գույքերի» օրենքների շարքում ընդունվում է

¹ Կարելուր օրենք մը տարագրեալ հայոց գոյքերուն մասին // «Ժամանակ», 1920, թիւ 3738, 16/29 յնվ., էջ 2:

² Նույն տեղում:

³ Տարագրուած հայերուն ինչքերը // «Ժողովուրդի Ձայնը» (Կ. Պոլիս), 1920, թիւ 424, 20 փետրուար/4 մարտ, էջ 2:

⁴ Տե՛ս **Մարտի 28-ի**, նշվ. աշխ., էջ 45:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 47:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 49:

վերջինը, ըստ որի՝ «լքյալ» գույքը կարող էր վերադարձվել նախկին սեփականատիրոջ ժառանգներին, եթե ներկայացվեին նրանց իրավունքները հաստատող փաստաթղթեր: Թուրքական իշխանությունները հստակ գիտակցում էին, որ զանգվածային կոտորածի և բռնագաղթի պայմաններում քչերի մոտ կարող էին պահպանված լինել սեփականության վկայականները¹:

Կիլիկիան ունի կլիմայական բացառիկ պայմաններ, ծովամերձ աշխարհագրական դիրք, ինչպես նաև ջրային լուրջ ռեսուրսներ, մասնավորապես՝ Ջիհան, Սեյհան, Գյոք Սու, Կյուդնու, Աքսու գետերը և ուրիշ գետակներ, որոնք «իրենց մեջը ինչ կեանք և օրհնություն կը պարունակեին»²: Կիլիկիայի ավամերձ շրջանները հարուստ են ածխի, նավթի, արծաթի, երկաթի հանքերով: Միայն Առաջին աշխարհամարտից առաջ հանքագետ, պրոֆեսոր Պապիկյանը Կիլիկիայի հարավային շրջաններում 30-ից ավելի հանքեր էր գտել. նա նահատակվում է Դեր-Ջորում: Այդ «օրհնեալ» երկրում եղած միայն նարնջի, նուշի, պիստակի, ձիթապտղի, խաղողի, ցորենի, գարու, բամբակի և բրդի արտադրական ծավալները կարող էին լավագույնս ապահովել վեց միլիոն բնակչության կենսական պահանջները³: Հարկ է նշել, որ այս վերլուծությունը կատարել է այնթապցի բժիշկ, գրող, հրապարակախոս ու գործարար Ավետիս Նազգաշյանը՝ XX դարասկզբի արտադրական ներուժի համատեքստում՝ առանց հետագա գիտատեխնիկական առաջընթացի ընձեռած հնարավորությունների հաշվառման:

Մուղոսի զինադադարից հետո աքսորյալ հայերի որոշ մասը վերադառնում է Ադանայի նահանգ: Անհրաժեշտ է կրկին նշել, որ նրանց թվում էին ոչ միայն Ադանայի նահանգի, Մարաշի, Այնթապի ու Ուրֆայի գավառի նախկին հայերը, այլև Արևմտյան Հայաստանից և կայսրության մյուս բնակավայրերից վերապրածները: Բազմաթիվ դժվարություններ հաղթահարելով՝ աքսորյալ հայերը փորձում են վերահաստատվել և ներկայացնել իրենց իրավունքները բռնագրավյալ գույքի նկատմամբ: Նախապես այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ պարտված Օսմանյան կայսրությունը չի խոչընդոտելու, անգամ նույնիսկ նպաստելու է «օրինական» ձևակերպումներով գույքը տերերին վերադարձնելու գործընթացին: Սակայն այդ սցենարը խաղարկվում է մինչև քեմալական ուժերի ի հայտ գալը: Այնուհետև, արտաքին հակադրման համատեքստում, Կ. Պոլսի կառավարությունը և քեմալականները սկսում են միասին գործել՝ դարերով բռնագավթված տարածքները պահպանելու և բնիկների վերահաստատումը թույլ չտալու համար: Ադանայի նահանգում ևս հայերի գոյապայքարը ավարտվում է քեմալական կոտորածներով և կրկնակի հայաթափությամբ:

¹ Տե՛ս **Մարուքյան Ա.**, նշվ. աշխ., էջ 56-57:

² **Նազգաշեան Ա.**, Կիլիկիա եւ Մուսամէր // «Ժամանակ», 1919, թիւ 3429, 16/29 յնվ., էջ 1:

³ Տե՛ս նույն տեղում:

Անի Ոսկանյան – *Աքսորյալ հայերի վերադարձը հետպատերազմյան Ադանայի նահանգ. բռնագրավյալ գույքերի խնդիրը*

XIX դարի վերջին և XX դարի սկզբին հայկական ունեցվածքի աճը չէր կարող վրիպել Օսմանյան կայսրության դեկավար շրջանակների ուշադրությունից ու որոշիչ գործոն չդառնալ հետագա զարգացումներում: Երկրի տնտեսությունը միատարր դարձնելու և թրքացնելու գաղափարը դառնում է պետության հետագա քայլերի անհրաժեշտ պայմաններից մեկը: Հայերի բնաջնջումը, ունեցվածքի յուրացումը Ադանայում մեկնարկում են 1909 թ. և շարունակվում Հայոց ցեղասպանության ընթացքում: 1918 թ. զինադադարից հետո Ադանայի նահանգ վերադարձած հայերը փորձում են հետ ստանալ իրենց բռնագրված ունեցվածքը: Սկզբնական շրջանում, թերևս միայն քարոզչական նպատակներով, պարտված Օսմանյան կայսրությունը բռնագրավյալ գույքը վերադարձնելու օրենքի նախագծեր էր քննարկում, անգամ ընդունում: Սակայն իրավիճակի փոփոխությանը զուգահեռ՝ օսմանյան իշխանությունները, այնուհետև քեմալական վարչակարգը որպես «լքյալ գույք» արծարծվող բռնագրավյալ անշարժ և շարժական կապիտալի վերաբերյալ ընդունում են օրենքներ, որոնք ավելի ու ավելի են չեզոքացնում հայերի ունեցվածքը հետ ստանալու ամենաչնչին հնարավորությունները և օրենքի ուժով ամրապնդում պետական ամենաբարձր մակարդակով իրականացված կողոպուտը:

Ани Восканян – *Возвращение депортированных армян в послевоенную провинцию Адана: проблема конфискованного имущества*

Ключевые слова – Киликия, провинция Адана, Геноцид армян, Османская империя, Национальная конституция, Мудросское перемирие, кемалистский режим, конфискованное имущество, закон грабежа

Рост армянской собственности в Османской империи в конце XIX – начале XX века не мог ускользнуть от внимания правящих кругов страны и не превратиться в один из решающих факторов для дальнейших действий в отношении армянского населения. Превращение экономики империи в однородную и отуреченную начинает рассматриваться турецкими властями как одно из необходимых условий для дальнейшего существования государства. Истребление армян, присвоение их имущества в Адане началось с 1909 года и продолжалось во время Геноцида армян. Выжившие армяне, возвратившись после перемирия 1918 г., пытались вернуть свое конфискованное имущество. Потерпевшая поражение в мировой войне Османская империя сначала, пожалуй только в пропагандистских целях, обсуждала и даже принимала законопроекты о возврате конфискованного имущества. Однако, по мере изменения ситуации, османские власти, а затем кемалистский режим ввели в действие законы о конфискованной недвижимости или движимом имуществе армян, которые квалифицировались как «брошенное имущество», практически нейтрализуя хоть малейшую возможность возврата армянами своей собственности и закрепляя силой закона грабеж, осуществленный на самом высшем государственном уровне.

Ani Voskanyan – *The Return of Exiled Armenians to Post-War Adana Province: the Problem of Confiscated Property*

Key Words – *Cilicia, Adana Province, Armenian Genocide, Ottoman Empire, National Constitution, Armistice of Mudros, extermination, authorities, economy, property, capital, law, state level*

The growth of Armenians' well-being in the late 19th and early 20th centuries could not have escaped the attention of the country's ruling circles and not become a decisive factor in further development of the events. The idea of making the economy of the Ottoman Empire homogeneous and Turkish became one of the necessary conditions for the further existence of the state. The extermination of Armenians and the appropriation of their property in Adana started in 1909 and continued during the Armenian Genocide. After the ceasefire of 1918, Armenians returning to Adana province tried to get back their confiscated property. Initially, the defeated Ottoman Empire discussed and even passed bills to return the confiscated property, perhaps for propaganda purposes only. However, as the situation changed, the Ottoman authorities, then the Kemalist regime, enacted laws on confiscated real estate or movable capital, which was considered "abandoned property", increasingly neutralizing the slightest possibility of Armenians to return their property, thus strengthening by the force of law the robbery carried out at the highest state level.

Ներկայացվել է 16.03.2022

Գրախոսվել է 17.03. 2022

Ընդունվել է տպագրության 29.03.2022

Անի Ոսկանյան – ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի կրտսեր գիտաշխատող (ani.h.voskanyan@ysu.am)

ՀԱՅ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԲՈՒՆԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԸՆԹԱՑՔՈՒՄ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ, ՈՉՆՉԱՅՈՒՄ, ՁՈՒԼՈՒՄ*

Բանալի բառեր – Հայոց ցեղասպանություն, «Միություն և առաջադիմություն» կոմիտե, թուրքիզմ, ցեղասպան հրամաններ, բռնի տեղափոխում, ձուլում, ընտրություն, բռնի ամուսնություններ, որբանոց, ձրի աշխատուժ

1908 թ. հեղաշրջումից ի վեր Օսմանյան կայսրությունում հաստատված նոր կառավարությունը սկսեց ազգայնացնել տնտեսությունը և հասարակական բոլոր ոլորտները՝ հետապնդելով բազմազգ և բազմակրոն երկիրը թրքացնելու նպատակ: Այդ քաղաքականությունը դարձավ ծայրահեղ, երբ «Միություն և առաջադիմություն» կուսակցության¹ արմատական թևը 1913 թ. հերթական հեղաշրջման միջոցով քաղաքական իշխանությունը կենտրոնացրեց իր ձեռքում: Օսմանյան խորհրդարանը, «Միություն և առաջադիմությունից» կազմված կաբինետները օրինականացրին բնիկ հայերի ցեղասպանությունը, որի որոշումը կայացրել էր կուսակցության կենտրոնական կոմիտեն²: «Միություն և առաջադիմության» և կառավարության սերտաճման

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6A315 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

¹ Հիմնադրվել է 1889 թ. Կ. Պոլսում «Օսմանյան միասնության ընկերություն» անվամբ, կարճ ժամանակ անց վերանվանվել «Միություն և առաջադիմություն» (İttihat ve Terakki Cemiyeti): Անդամները կոչվել են «երիտասարդ թուրքեր»՝ նմանատիպ հակաբռնատիրական, ազգային-ազատագրական ծրագրեր ունեցող այլ կազմակերպությունների օրինակով, ինչպես «Երիտասարդ Բտալիան» էր: Հռոլվածում «երիտթուրք» անվանումը չի գործածվում, քանզի ոչ բոլոր երիտթուրքերն էին անդամակցում այս կոմիտեին: Օրինակ՝ 1902 թ. հետո կոմիտեից առանձնացած «Անհատական նախաձեռնության և ապակենտրոնացման լիգան» (Tesebbüs-i Şahsi ve Adem-i Merkeziyet Cemiyeti) և 1911 թ. ստեղծված «Ազատություն և համաձայնություն» (Hürriyet ve İtilâf) կուսակցությունը ևս կազմված էին երիտթուրքերից, որոնք, ազգայնական լինելով հանդերձ, գաղափարական և ծրագրային առումներով տարբերվում էին «Միություն և առաջադիմությունից»: 1909 թ. «Կազմակերպությունների մասին» (Cemiyetler Kanunu) օրենքով կոմիտեի կարգավիճակը փոխվել է կուսակցության, բայց քանի որ բնույթն այդուհանդերձ չի փոխվել, «կոմիտե», «կոմիտեական» տերմինները հռոլվածում երբեմն գործածվում են ավելի ուշ ժամանակաշրջանի համար: Օգտագործվում է նաև «իթթիհաթական» կրճատ ձևը: St u Ramsaur E. E., The Young Turks: Prelude to Revolution, New York, 1970, p. 15, Bayır D., Minorities and Nationalism in Turkish Law, London, 2013, p. 51-52:

² Կենտրոնական կոմիտեն «Միություն և առաջադիմություն» կուսակցության որոշում կայացնող մարմինն էր, որի կազմը և անդամների թվաքանակը փոփոխական էին: 1912-1916

պայմաններում ձեռք բերելով հսկայական քաղաքական իշխանություն և աջակցություն ստանալով կուսակցական գաղափարախոսներից՝ սույն կուսակցությունը, որը սփռված էր Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում և իր խմբակների և ակումբների միջոցով իրականացնում էր քարոզչություն, կարողացավ արդարացնել և սովորական դարձնել զանգվածային սպանությունները նաև շարքային մարդկանց մասնակցությամբ¹:

1908 թ. ի վեր որդեգրված օսմանիզմի գաղափարախոսությունը դուրս մղվեց Բալկանյան պատերազմների ընթացքում, իսկ Օսմանյան կայսրության ժողովրդագրության միտարրացումը (demographic homogenization) դրվեց ամուր հիմքերի վրա: 1913 թ. մայիսին Ներքին գործերի նախարարությունում հիմնվեց Ցեղերի և փախստականների բնակեցման գլխավոր վարչությունը (İskân-ı Aşşairin ve Muhacirîn Müdüriyeti), որի խնդիրը տարածքային կորուստների հետևանքով և Բուլղարիայի ու Հունաստանի հետ կնքված՝ բնակչության փոխանակման պայմանագրերն ի կատար ածելու թելադրանքով Բալկաններից ներգաղթած մուսուլման փախստականների (muhacir) վերաբնակեցումն էր²: Վարչության կազմում կար նաև «գիտական կոմիտե», որի նպատակն էր ուսումնասիրել կայսրության էթնիկ, լեզվական և կրոնական կազմը³: Տեղական իշխանությունների ներգրավմամբ վարչությունը իրականացնում էր մարդահամար, կազմում վիճակագրական աղյուսակներ, որոնց տվյալները երեք ամիսը մեկ թարմացվում էին:

Առաջին համաշխարհային պատերազմի բռնկումով Օսմանյան կայսրությունը միատարր դարձնելու, այն է՝ թրքացնելու ծրագիրն իրականացվում էր բռնի մեթոդներով: Կենտրոնական կոմիտեն սկսեց քննարկել էթնիկ և կրոնական տարբեր խմբերի «համապատասխանությունը» ապագա թուրքական ազգային պետությանը: Իթթիհաթական ազգայնական գաղափարախոսները կայսրության մուսուլման էթնիկ փոքրամասնություններին դիտում էին որպես հում նյութ, որը կարելի էր ձուլել և դրան տալ իրենց ցանկալի տեսքը: Սա ժողովրդագրության սոցիոլոգիական մոտեցում էր, սակայն երբ հերթը հասնում էր կայսրության ոչ մուսուլմաններին, առաջ էին գալիս կենսաբանական պատկերացումները: Վերջիններս դասակարգվել էին «թրքաց-

թթ.՝ Օսմանյան կայսրության համար որոշիչ ժամանակաշրջանում, Կենտրոնական կոմիտեի 12 անդամներն էին Միդհատ Շյուքրյուն, Մեհմեդ Թալաաթը, Էյուբ Սաբրին, Նազըրը, Ջիյա Գյոքալիքը, Բեհաեդդին Շաքիրը, Սայիդ Հալիմը, Ռյուսուխին, Աթիֆ Ռիզան, Քյուչուկ Թալաաթը, Կարա Քեմալը, Էմրուլլահը: Տե՛ս **Авакян А.**, Геноцид армян: механизмы принятия и исполнения решений, Ереван, 2013, с. 25:

¹ Տե՛ս **Adalian R.**, The Armenian Genocide // Century of Genocide: Eyewitness Accounts and Critical Views, New York, London, 1997, p. 50:

² Տե՛ս **Aktar A.**, Conversion of a ‘Country’ into a ‘Fatherland’: The Case of Turkification examined, 1923-1934 // Nationalism in Troubled Triangle. New Perspective on South-East Europe, London, 2010, p. 23:

³ Տե՛ս **Dündar F.**, The Settlement Policy of the Committee of Union and Progress, 1913-1918 // Turkey Beyond Nationalism: Towards Post-Nationalist Identities, London, New York, 2013, p. 38-39:

ման ոչ ենթակա» պիտակի ներքո, հետևաբար պետք է ոչնչացվեին¹: Առաջին համաշխարհային պատերազմով պայմանավորված՝ կայսրության քաղաքացիներին արգելվեց տեղից տեղ շարժվել, ինչը դյուրին դարձրեց ցեղերի և փախստականների բնակեցման գլխավոր վարչության կողմից իրականացվող տվյալների հավաքագրումը: Գլխավոր սկզբունքը հետևյալն էր. ոչ մուսուլմանների (հույներ, հայեր, հրեաներ) և ոչ թուրքերի (քրդեր, բոսնիացիներ, արաբներ, ալբանացիներ և այլն) քանակը կայսրության որևէ նահանգում չպետք է գերազանցեր ընդհանուր բնակչության հինգ տոկոսը: Մեծ քանակության դեպքում խնդիրը պետք է լուծվեր տեղահանությամբ և կոտորածով, ծրագիր, որին զոհ գնացին հիմնականում կայսրության քրիստոնյա քաղաքացիները²:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրության՝ հայ համայնքի դեմ ուղղված առաջին ցեղասպան գործողությունը տղամարդկանց գորակոչն էր, այնուհետև նրանց մեծ մասի զինաթափումը և ոչնչացումը՝ սկսած 1915 թ. գարնանից: Երկրորդ փուլը հայ քաղաքական և մտավորական ընտրանու ոչնչացումն էր: Բնակչության մյուս մասից՝ կանայք, երեխաներ, տարեցներ, կազմվեցին քարավաններ և համաշխարհային պատերազմի քողի ներքո աքսորվեցին Եփրատի երկայնքով դեպի Սիրիա և Միջագետք: 1915 թ. մայիսի 27-ին ընդունված «Տեղահանության» օրենքը կոչված էր միայն «օրինականացնելու» ամիսներ առաջ սկսած տեղահանությունը³: Կայսրության հայ բնակչության աքսորը, որը երբեմն տևում էր ամիսներ, ոչնչացման մեթոդ էր ծառայում⁴: Հայերը ենթարկվում էին անմարդկային վերաբերմունքի, սովի, համաճարակների, իսկ ուլքեր վերապրեցին կազմակերպված հարձակումները և հասան տեղահանության վերջնակետ ընտրված Մեսքենեի, Բաբի, Ռաքայի, Ռասու-ուլ Այնի, Դեր Ջորի անապատներ, համակենտրոնացման ճամբարներում պարտադրվեցին ստրկական աշխատանքի: 1916 թ. օգոստոս-սեպտեմբերին միայն Դեր Ջորում սպանվել, հրկիզվել կամ խեղդամահ է արվել շուրջ 200.000 հայ⁵:

Տեղահանությունների սկզբում որոշ հայեր հանուն փրկության դիմում էին կրոնափոխության: 1915 թ. հունիսի հրահանգով ներքին գործերի նախարար Մեհմեդ Թալասթը թույլատրեց հայերին իսլամ ընդունել՝ կրոնա-

¹ Տե՛ս **Ungör U. Ü.**, *The Making of Modern Turkey: Nation and State in Eastern Anatolia, 1913-1950*, Oxford, 2011, p. 172:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս **Dündar F.**, *Pouring a People into the Desert: The “Definitive Solution” of the Unionists to the Armenian Question // A Question of Genocide: Armenians and Turks at the End of the Ottoman Empire*, Oxford, 2011, p. 283:

⁴ Տե՛ս **Morgenthau H.**, *Ambassador Morgenthau’s Story*, Garden City, New York, 1918, p. 309:

⁵ Տե՛ս **Kieser H.-L.**, *Talaat Pasha: Father of Modern Turkey, Architect of Genocide*, Princeton, Oxford, 2018, p. 262, 265:

փոխվածներին հանելով տեղահանության ծրագրից¹: Երկու շաբաթ անց, սակայն, նրա ցուցումով նրանք ևս տեղահանվեցին: Օտարերկրյա դիվանագիտական և միսիոներական գործիչների միջամտությամբ տեղահանությունների նախնական փուլում բողոքական և կաթոլիկ հայերը ևս չէին տեղահանվում: Կարճ ժամանակ անց տեղահանության մասին օրենքը կիրառվեց բոլոր հայերի նկատմամբ²:

Համանման բազմաթիվ օրինակներից է Տրապիզոնում գրանցված հետևյալ դեպքը: Տեղի գերմանական հյուպատոս Հայնրիխ Բերգֆելդն իր զեկուցագրում նշում է, որ 1915 թ. հունիսի 26-ին իշխանությունները, նահանգի հայերին պատվիրելով պատրաստվել տեղահանությանը, բացառել են 10 տարեկանից փոքր երեխաներին, այրիներին, հղի կանանց, որբերին, բանակում ծառայող հայ զինվորների ընտանիքներին և կաթոլիկ հայերին: Սակայն երկու օր անց բացառությունները չեղյալ են հայտարարվել³, ինչպես հյուպատոսն է եզրակացնում՝ «ակնհայտորեն Պոլսի ցուցումներով»⁴: Բերգֆելդը նկարագրում է մի դրվագ: Մի ծեր քահանա կրոնափոխ լինելու ցանկություն է հայտնում, ինչին ի պատասխան՝ նահանգապետը տեղեկացնում է, որ աքսորը չի կազմակերպվել քրիստոնյաների համար, այլ հայերի, և կրոնափոխ եղած հայն աքսորվելու է որպես մուսուլման հայ: Գերմանական հյուպատոսը եզրակացնում է, որ «Միություն և առաջադիմության» կենտրոնական կոմիտեն ցանկանում է լուծել Հայկական հարցը, քանի որ տեղահանության արդյունքում կայսրության ոչ մի նահանգում հայերն այլևս մեծամասնություն չեն ունենա⁵:

Տեղահանությանը զուգահեռ կառավարությունը կազմակերպում էր նաև հայ բնակչության՝ որոշակի սեռով և տարիքով պայմանավորված խմբի տեղափոխումը թուրքական հասարակություն՝ հետագա ձուլման նպատակով: Եզակի այս դեպքերում հայերից ընտրված անհատների թրքացումը կառավարությունն առավել շահավետ էր դիտում, քան նրանց սպանությունը⁶:

¹ Տե՛ս **Akcam T.**, *The Young Turks' Crime against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire*, Princeton, 2012, p. 294:

² Տե՛ս **Gust W.**, *The Armenian Genocide: Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916*, New York, Oxford, 2014, p. 480, 740, **Kaiser H.**, *At the Crossroads of Der Zor: Death, Survival, and Humanitarian Resistance in Aleppo, 1915-1917*, Princeton, 2001, p. 18:

³ Մինչ 10 տարեկան երեխաներին չտեղահանելու արգելքը պահպանվել է, և նրանց տեղափոխել են կարմիր խաչի և կարմիր մահիկի հիվանդանոցներում: Նրանց ողբերգական վախճանի մասին մանրամասն տե՛ս **Sarafian A.**, *The Absorption of Armenian Women and Children into Muslim Households as a Structural Component of the Armenian Genocide // In God's Name: Genocide and Religion in the Twentieth Century*, New York, Oxford, 2001, p. 212:

⁴ Տրապիզոնի հյուպատոսից կայսերական կանցլեր Բեթման Նուվեզին: Տե՛ս **Gust W.**, նշվ. աշխ., էջ 240-244:

⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶ Տե՛ս **Kaiser H.**, նշվ. աշխ., էջ 1: Ձուլման առավել ընդհանրական քննությունը տե՛ս **Մելքոնյան Ռ.**, *Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները*, Երևան, 2010, 184 էջ: Հատուկ մասնագիտություններ զբաղեցնող, անփոխարինելի դիտվող անհատ հայերի բռնի կրոնափոխությունը և որոշ պաշտոնյաների՝ կաշառքի միջոցով հայ

Վերջինս ընդունում էր օրենքներ, տալիս հրամաններ պետական տարբեր կառույցների մակարդակով՝ գործընթացը կարգավորելու նպատակով:

Ցեղասպանական բռնի տեղափոխում

1915 թ. հունիսի 26-ին Կրթության նախարարությունն ուղարկում է հեռագիր բոլոր նահանգներին տեղահանված հայերի 10 տարեկանից փոքր երեխաներին հավաքելու հանձնարարականով՝ նրանց կրթելու և դաստիարակելու հիմնավորամբ¹: Հուլիսի 12-ին Ներքին գործերի նախարարությունը բոլոր նահանգներին ծածկագրված հեռագրով հրահանգում է այն հայ երեխաներին, «որոնք հավանաբար տեղափոխման և աքսորի ընթացքում կմնան առանց խնամակալների», բաժանել բարձրաստիճան և պաշտոնավոր անձանց միջև այն գյուղերում, որտեղ այլևս չեն մնացել հայեր և օտարերկրացիներ: Այն մուսուլմանների համար, որոնք ֆինանսապես ի վիճակի չէին հոգ տանելու երեխային, սահմանվում էր ամսական նպաստ²:

1915 թ. հուլիսի 24-ին օսմանյան երրորդ բանակի հրամանատար Մահմուդ Քյամիլ փաշան հրամայում է բանակին ոչ միայն մահապատժի ենթարկել այն մուսուլմաններին, որոնք թաքցնում էին հայի, այլև այրել նրանց տները՝ հայտարարելով, որ դա «կառավարության որոշումների խախտում» է: Ներքին գործերի նախարարության հանրային անվտանգության վարչությանը պատկանող ձևաթղթի վրա նա պարզաբանում է, որ գյուղերում ոչ միայն հայ չպետք է մնա, այլև հարկ է տեղահանել նույնիսկ իսլամն ընդունած հայերին: Եթե նրանց թաքցնողները զինվորական էին կամ վարչական աշխատակիցներ, համապատասխան հաստատություններին տեղեկացնելուց հետո նրանք պետք է հանձնվեին ռազմական աստյաններին³: Քանի որ Կրթության և Ներքին գործերի նախարարությունների հրամանները հակասում էին միմյանց, 1915 թ. օգոստոսի 1-ին Մահմուդ Քյամիլը բացատրում է հեռագրով, որ դա չի վերաբերում կառավարության կողմից տեղաբաշխված հայ երեխաներին⁴: Հարևան մուսուլմաններին ի պահ տրված հայ երեխաների մեծ մասը սպանվել է Մահմուդ Քյամիլի այդ հրամանից հետո⁵:

ընտանիքներին մուսուլման ներկայացնելը տեղահանությունից խուսափելու նպատակով, այս հոդվածում չենք քննարկում:

¹ Տե՛ս **Akçam T.**, նշվ. աշխ., էջ 316-317:

² Տե՛ս **Ungör U. Ü.**, *Orphans, Converts, and Prostitutes: Social Consequences of War and Persecution in the Ottoman Empire, 1914-1923* // “War in History”, 2012, Vol. 19, № 2, p. 176:

³ Տե՛ս **Akçam T.**, *Killing Orders: Talaat Pasha’s Telegrams and the Armenian Genocide*, 1st ed., London, 2018, p. 16-17:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Նման դեպք է նկարագրվում Հայոց ցեղասպանությունը վերապրած Վարդուհի Պետիկյանի հարցազրույցում: Տեղահանության հանված մի հայ ընտանիք երկու երեխաներին տալիս է թուրք հարևանին՝ խոստանալով վերադառնալ նրանց հետևից: Սակայն Կ. Պոլսից ստացված հրամանից հետո թուրք տանտերը երեխաներին խաբելով, թե ծնողները եկել և իրենց են սպասում, տարել է նրանց գետի ափ և սպանել: Տե՛ս Պետիկյան Վարդուհի Սարգսի

1915 թ. սեպտեմբերի 21-ին Ուրֆայի շրջանի կառավարչին ուղարկված ծածկագիր հեռագիրը տեղեկացնում է, որ հայ երեխաների համար, ինչ-որ զգացմունքներից դրդված, որքանոց բացելու կարիք չկա, իսկ նրանց հարկ է հավաքել և տեղահանել¹: Հոկտեմբերի 12-ին Ներքին գործերի նախարարության ծածկագիր հեռագիրը պատվիրում է կանխել ամուսնությունները հայ աղջիկների հետ²: Թալաաթը 1915 թ. հոկտեմբերի 22-ին Հալեպի նահանգապետին ուղղված գաղտնի հաղորդագրության մեջ տեղեկացնում է, որ կառավարության որոշմամբ վերացվել է «թուրքական հողում» ապրելու հայերի իրավունքը, ինչը ենթադրում է, որ նույնիսկ օրոքոցում նորածին չպետք է թողնել: Սակայն, հակառակ կառավարության որոշման, Հալեպում «մի շարք պաշտոնյաների հայրենասիրական զգացումները զիջել են նյութական շահին», և որոշ հայեր չեն ուղարկվել տեղահանության վերջնական վայրերը: Ներքին գործերի նախարարը հրամայում է նահանգապետին լուծել այս խնդիրը³: Նոյեմբերի 16-ին Հալեպ և Դամասկոս ուղարկված հեռագիրը հանձնարարում էր առանց խնամակալի մնացած հայ երեխաներին ուղարկել Կ. Պոլիս դաստիարակության նպատակով⁴, այն դեպքում, երբ նոյեմբերի 18-ին հրամայվում է տեղահանել նահանգի մուսուլմանների տներում պահվող՝ Սեբաստիայից, Խարբեռդից և Դիարբեքիից եկած հայ երեխաներին⁵:

1916 թ. ապրիլի 30-ին Ներքին գործերի նախարարության ցեղերի և փախստականների բնակեցման գլխավոր վարչությունը բոլոր նահանգներին հրահանգել է բաշխել օսմանյան բանակում դեռևս ծառայող կամ արդեն տեղահանված հայերի ընտանիքները միատարր դարձած գյուղերի և քաղաքների մուսուլմանական ընտանիքների միջև: Երիտասարդ հայ աղջիկներին պետք էր ամուսնացնել մուսուլմանների հետ, մինչև 12 տարեկան երեխաներին տեղավորել տեղական որբանոցներում: Եթե որբանոցների քանակը չէր բավականացնում, երեխաներին պետք էր ձուլման նպատակով հանձնել մուսուլման ընտանիքների: Եթե մուսուլմանները չէին ցանկանում հայ երեխա վերցնել, ներգաղթյալների հատկացումներից նրանց ապահովման համար հարկ էր նպաստ տրամադրել: Այս վերջինը ցեղասպանական բռնի տեղափոխման մանրամասն հրահանգ էր⁶:

Ամիսներ անց՝ արդեն 1917 թ. հունվարին, ներքին գործերի նախարարի

// Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ (այսուհետև՝ շՅԹԻ), գիտական ֆոնդեր, բ. 4, ֆհ. 194, մաս 2, 49:30 րոպե:

¹ Տե՛ս **Akçam T.**, Killing Orders, p. 184:

² Տե՛ս նույն տեղում, էջ 179:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 184:

⁴ Տե՛ս **Akçam T.**, The Young Turks' Crime against Humanity, p. 322:

⁵ Տե՛ս **Akçam T.**, Killing Orders, p. 178:

⁶ Տե՛ս **Akçam T.**, The Young Turks' Crime against Humanity, p. 323, **Ekmekcioğlu L.**, A Climate for Abduction, a Climate for Redemption: the Politics of Inclusion during and after the Armenian Genocide // "Comparative Studies in Society and History", 2013, Vol. 55, № 3, p. 527:

ծածկագիր հեռագիրը մանրամասնում էր Հալեպի նահանգապետին, որ միայն այն երեխաներին պետք էր պահել, որոնք չէին հիշում, թե ինչ է պատահել իրենց ծնողներին: Տարիքով մեծ երեխաներին հարկ էր տեղահանել¹: Թալաաթը բացատրում է Մուստաֆա Աբդուլհալիկին, որ «պետությունը չի կարող պատկերացնել այլ բան, քան վնաս այս երեխաների ապրելուց», ուստի նրանց սնելը հակասում է «կառավարության ցանկություններին»²: Ըստ Թալաաթի՝ այն դեպքում, երբ պատերազմում նահատակված մուսուլման զինվորների որբացած զավակների և այրիների թիվը մեծ էր, հայ երեխաների վրա միջոցներ պետք չէր վատնել՝ համոզմունք հայտնելով նաև, որ ապագայում նրանք միայն խնդիրներ են հարուցելու և վնասելու են պետությանը³:

Բռնի տեղափոխվածների տվյալները մանրակրկիտ հավաքվում էին: Նրանք ոչ միայն խիստ վերահսկողության տակ էին, այլև պետության ներսում նրանց տեղաշարժը սահմանափակվում էր: Մուսուլման զինվորների հետ ամուսնացած կամ պետական պաշտոնյաների կողմից որդեգրված հայ աղջիկները Կ. Պոլիս ճանապարհորդելու թույլտվություն չունեին⁴: Մինչև 1918 թ. կրոնափոխ եղած հայերին առնչվող բոլոր տվյալները թարմացվում և պահվում էին, ներառյալ՝ նրանց անունը, կրոնափոխ լինելու իրավիճակը և ձևը, զբաղմունքը, մասնագիտությունը՝ իսլամ ընդունելուց առաջ և հետո: Նրանց տեղաշարժը մինչև պատերազմի ավարտը վերահսկվում էր պետության կողմից⁵:

Երկու գուգահեռներ. ձուլում և ոչնչացում

Հայոց ցեղասպանության ընթացքում բռնի տեղափոխումը և սպանությունն ընթացել են գուգահեռ: Երեխաների տեղափոխումը համատարած չի կրել: Կառավարության նպատակը օսմանյան հայ համայնքի բոլոր երեխաների թրքացումը չէր, կատարվում էր ընտրություն: Հայ երիտասարդ կանանց և երեխաներին ընտրում էին տարիքից, արտաքին տեսքից և առողջական վիճակից ելնելով, ինչը եվգենիկայի որոշակի դրսևորում էր: Գոյություն է ունեցել նաև տարածաշրջանային նախընտրություն, ինչը դեռևս գիտական խորը ուսումնասիրության կարիք ունի: Ընտրության, հատկապես բժիշկների մասնակցությամբ կատարված, բազմաթիվ օրինակների կարող ենք հանդիպել վերապրածների հուշագրություններում և տեսաձայնագրություններում⁶:

Երեխաները ոչնչացվում էին, ինչպես հայ բնակչության մյուս հատված-

¹ Տե՛ս **Akçam T.**, Killing Orders, p. 191:

² Տե՛ս նույն տեղում, էջ 182-183:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 194:

⁴ Տե՛ս **Akçam T.**, The Young Turks' Crime against Humanity, p. 323, 324:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 311:

⁶ Անթառամ Գրիգորյանի հուշերը, ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, բ. 6, ֆհ. 181, 41 րոպե:

ները: Մուշի որբանոցի հայ երեխաների հրկիզումը, Տրապիզոնում նրանց վրա կատարված բժշկական փորձարկումները և Մև ծովում նորածիններին խեղդամահ անելը թուրքական քաղաքականության միայն մի քանի դրվագներն են¹: Երիտասարդ աղջիկները և տղաները սպանվել են բնակության վայրերում, նորածիններին ստիպել են թողնել տեղահանության ճանապարհներին՝ սովից և համաճարակներից մեռնելու համար: Երեխաներին սպանել են նաև Միջագետքի համակենտրոնացման ճամբարներում: Մովի, համաճարակների, եղանակային պայմաններին մատնվելուց բացի՝ նրանց նաև հազարներով խեղդամահ են արել Դեր Զորի քարանձավներում, ողջողջ թաղել Մեսքենեում, ողջակիզել Շեդդադիեում²:

Պետական համակարգված ընտրության, բռնի տեղափոխման և տեղաբաշխման արդյունքում հայ երեխաները հայտնվել են թե՛ պետական որբանոցներում և թե՛ մասնավոր անձնաց ընտանիքներում: Որպես ցեղասպանության կողմնակի հետևանք նրանց նաև առևանգում կամ գնում էին արաբները, չերքեզները, քրդերը³ և այլք, ինչը, ստեղծված ցեղասպան միջավայրի արդյունք լինելով հանդերձ, կարծում ենք, պետականորեն վերահսկվող համակարգից դուրս գտնվող երևույթ էր:

Բռնի տեղափոխումը դեռևս չէր նշանակում ձուլում: Վերջինս առավել ժամանակատար և բարդ գործընթաց էր: Երբ հայ երեխան ընտրվում էր թուրքական պետական որբանոց տարվելու համար, դա դեռևս ապրելու երաշխիք չէր, ինչն ուներ մի շարք պատճառներ: Ցեղասպան հրամանները տրվում էին ծածկագրված հեռագրերով և տարբեր նահանգներ հասնում տարբեր ժամկետներում: Ըստ հետպատերազմյան թուրքական ռազմական ատյանների նիստերի սղագրությունների՝ հրամանները տրվում էին նաև բանավոր⁴: Որպես հետևանք հայ երեխաները տարվում էին որբանոցներ, իսկ երբ դրանց մի մասը փակվում էր, երեխաներին ոչնչացնում էին տեղում կամ կցում տեղահանվածների քարավաններին: Որբանոց ընդունված երեխաների տարիքը փոխում էին ըստ իրավիճակի: Նրանք, ովքեր չէին համապատասխանում նոր չափանիշներին, սպանվում էին, ինչպես դա տեղի ունեցավ Մեսքենեում, որտեղ Թալաաթի հրամանով պահվեցին միայն երկուսից չորս տարեկան երեխաները, իսկ մյուսները սպանվեցին⁵: Դիարբեքի-րի թուրքական որբանոցը, որը հաստատվել էր 1916 թ., հաշվարկված էր

¹ Տե՛ս **Dadrian V.**, *Children as Victims of Genocide: The Armenian Case* // «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», 2003, թիվ 7, էջ 8-9:

² Տե՛ս **Gust W.**, նշվ. աշխ., էջ 651-656, 711-712: Դեր Զորում հայերի սպանության մասին մանրամասն տե՛ս **Emmanuilidis E.**, *Osmanlı İmparatorluğu'nun son yılları, yayına hazırlayan Sait Cetinoğlu*, İstanbul, 2014, p. 146:

³ Տե՛ս **Sarafian A.**, նշվ. աշխ., էջ 210:

⁴ Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Հ. Փափագյանի, Երևան, 1989, էջ 38:

⁵ Տե՛ս **Akçam T.**, *Killing Orders*, p. 191:

շուրջ 1000 հայ երեխա ընդունելու¹: Նույն տարվա փետրվարին և օգոստոսին այն ընդունել է նաև երեխաներ Բիթլիսի որբանոցից²: Քղից մի հայ վերապարած վկայում է, որ երբ 1916 թ. ապրիլի 18-ին իրենց քարավանը հասել է Դիարբեքիր, մի քանի հայ կանանց հետ նա տարվել է թուրքական որբանոց՝ հայ երեխաներին խնամելու համար³: Ըստ կնոջ վկայության՝ երեխաների թիվը որբանոցում հասնում էր 700-ի, հետո նահանգապետը «մզի թշնամի՝ պիտի պատրաստինք» հիմնավորմամբ փակում է որբանոցը և երեխաներին իրենց խնամատար կանանց հետ աքսորում: Հասնելով Մալաթիա՝ նրանք տեղեկանում են, որ որբանոցի երկու-երեք տարեկան երեխաներին խեղդամահ են արել Եփրատում⁴:

Պետական որբանոցներում հայ երեխաների խնամքը հատկապես վարակի դեպքում հանձնարարվում էր տեղահանված հայ կանանց: Նպատակը, ըստ երևույթին, այդ որբանոցների թուրքական անձնակազմի անվտանգությունը ապահովելն էր: Օրինակ՝ Դիարբեքիրի որբանոցից բացի՝ հայ կանայք բուժքույրեր էին աշխատում նաև Մարդինի և Խարբերդի թուրքական որբանոցներում⁵: Բնականաբար, որոշ ժամանակ անց հայ կանանց գոյությունը դառնում էր երեխաների թրքացման խոչընդոտ, և կանայք կրկին տեղահանվում էին:

Ուղղակի սպանությունից բացի՝ որբանոցի երեխաները մահանում էին նաև սովից, հիվանդություններից, խոշտանգումներից, հոգեբանական ճնշումներից և թրքացման այլ բռնի մեթոդներից⁶: Հայ վերապարածներից մեկը, որին հաջողվել է փրկվել Սեբաստիայից Դերսիմ փախչելով և մի մեծահարուստ քրդի մոտ ծառայության անցնելով, նկարագրում է հետևյալ դրվագը: Փրկությունից ամիսներ անց քրդի մոտ մի սեբաստացի կրոնափոխ հայ է եկել, որը պատմել է. «Տասը տարեկան տղա և աղջիկ երեխաներ հարյուրներով տեղի թուրքական իշխանություններն հավաքեցին և իրարու վրա տեղավորեցին Մալաթիայում մի մեծ շենքի մեջ որբանոց անվան տակ նրանց որպես թուրք մեծացնելու նպատակով, ուր սովից, ոջիլից, աղտեղությունից ու համաճարակ հիվանդություններից տասնյակներով մահանում էին, իսկ մեզ թրքացած հայերիս պարտադրեր էին հերթով նրանց լեցնել փոսերը և վրանին ծածկել հողով հոտերից ու նեխվածությունից ազատվելու համար: Այդպես էլ մի անգամ հերթը իմ և ինձ հետ ընկերացող էնկիրոջսն էր, գնացինք դաշտը, բերված էին թաղվելու համար, և որովհետև այդ մանուկ-

¹ Տե՛ս **Ungör U. Ü.**, Orphans, Converts, and Prostitutes, p. 178:

² Տե՛ս **Çetinkaya S.**, 1915-1923 Yılları arasında Türkiye’deki Ermeni yetimleri, unpublished MA thesis, Kayseri, 2009, p. 51:

³ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 1388, ց. 1, գ. 66, թ. 13:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս **Çetinkaya S.**, 1915-1923 Yılları arasında Türkiye’deki Ermeni yetimleri, p. 51:

⁶ Տե՛ս **Չիթեան Հ.**, Մազի չափ մահին մօտ, Եդեռնէն վերապրողի յուշեր, London, 2004, էջ 90-93, **Բանեան Գ.**, Յուշեր մանկութեան եւ որբութեան, Անթիլիաս, 1992, էջ 157, 164:

ների դիակներն իրիկունից վաղ բերել էին, ուստի առտուն մինչ մեր երթալը շնագայլերն ու չախկալները արդեն նրանց փորփոտիքներն դուրս թափելով սիրտն ու թոքերը կերել էին և մնացել էր միայն նրանց թեվերն ու ճիվերը և մենք այդ քսանի չափ երեխաների որտքերից ու ձեռքերից քաշ տալով լցրինք փոսերը և վրանից ծածկեցինք հողով»¹:

Հալեպի որբանոցը, որտեղ ամեն օր երեխայի մահ էր գրանցվում, նույնիսկ արժանացել է օսմանյան չորրորդ բանակի հրամանատար գնդապետ Կրես ֆոն Կրեսենշտայնի ուշադրությանը: Որբանոց ստուգայցից հետո նա Հալեպի գերմանական հյուպատոս Վալտեր Ռյոպլերին նամակով տեղեկացնում է, որ իշխանությունների թողտվությամբ երեխաները ուժասպառ են լինում քաղցից, ցրտից և սանիտարահիգիենիկ պայմաններից²:

Մասնավոր ձեռքերում հայտնված երեխաների վիճակը նույնպես ողբերգական էր³: Ե՛վ որդեգրման, և՛ բռնի ամուսնության⁴ դեպքում գերակշռում էր շահը. հայ երեխային և կնոջը պատկանող ունեցվածքը փաստաթղթերով անցնում էր թուրք ամուսնուն կամ խնամատարին: Սա խրախուսում էր թուրքերին վերցնելու հատկապես մեծահարուստ հայերի զավակներին⁵: Կան նաև փաստեր, որ երբ կառավարությունը դադարել է այս երեխաների համար նպաստ հատկացնել, մուսուլման խնամատարներն այլևս շահագրգռված չեն եղել պահել նրանց, ուստի վաճառել կամ սպանել են⁶:

Հայ երեխաները ծառայում էին նաև որպես ձրի աշխատուժ մի պետությունում, որը դեռևս մեծապես կախված էր գյուղատնտեսությունից: Մինչ տղաները տարվում էին ազարակներ և արհեստանոցներ, աղջիկներին դարձնում էին ծառաներ քաղաքներում բնակվող մուսուլմանների ընտանիքներում՝ որդեգիրների (evlatlik) անվան տակ⁷: Երիտասարդ տղաներին սպա-

¹ **Ոսկերիչյան Ա.**, Քղի զավառի և Քղի քաղաքի համառոտ հուշերից (անտիպ հուշ) // ՀՅԹԻ, գիտական ֆոնդեր, ք. 8, թպ. 57, ֆհ. 70, էջ 9:

² Հալեպի հյուպատոս Ռյոպլերը կայսերական կանցլեր Բեթման Հոլվեգին: Տե՛ս **Gust W.**, նշվ. աշխ., էջ 487-488:

³ Տե՛ս **Kurt U.**, Cultural Erasure: The Absorption and Forced Conversion of Armenian Women and Children, 1915-1916 // «Études arméniennes contemporaines», 2016, № 7, p. 79:

⁴ Թուրքական կառավարության կողմից կազմակերպվող հայ կանանց բռնի ամուսնությունները Հայոց ցեղասպանության իրագործման մեթոդ էին: Դրանց զոհ դարձած հայ աղջիկների մեծամասնության տարիքը տատանվում էր 9-12-ի միջև, այնպես որ այս պարագայում «հայ կանանց ձուլում» արտահայտությունը վիճելի է, քանզի նույնիսկ ժամանակի պատկերացումներով և Օսմանյան կայսրությունում գործող օրենքներով նրանք դեռևս երեխաներ էին: Հայոց ցեղասպանության ընթացքում բռնի ամուսնությունների իրավական և պատմական մանրամասն քննությունը տե՛ս **Gzoyan E., Galustyan R.**, Forced Marriages as a Tool of Genocide: the Armenian Case // “The International Journal of Human Rights”, 2021, Vol. 25, № 10, p. 1724-1743:

⁵ Տե՛ս **Akcam T.**, The Young Turks’ Crime against Humanity, p. 319:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 317:

⁷ Տե՛ս Encyclopedia of Women and Islamic Cultures: Family Law and Politics, Vol. 2, ed. Suad Joseph, Leiden-Boston, 2005, p. 6, **Akcam T.**, The Young Turks’ Crime against Humanity, p. 338:

ներուց առաջ ստիպում էին «աշխատել ի շահ պետության»¹: Ըստ ցեղասպանությունը վերապրած Արամ Մանթաշյանի հուշագրության՝ Մալաթիայի շրջանում պահվող հայ տղաները, որոնց ստիպում էին կատարել հողագործական և անասնապահական աշխատանքներ, թեև իսլամ ընդունած և թլպատված՝ ենթարկվում էին խտրականությունների, խռշտանգումների, մատնվում սովի²: Սրա հետևանքները լավագույնս ներկայացնում է Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կազմակերպության աշխատակից Մերի Գրեֆենը. «Աշնանը սկսվում է որբերի բերքահավաքը»³: Ամառային աշխատանքներն ավարտվում էին, հայ երեխային ամբողջ ձմռանը պահելու և կերակրելու անհրաժեշտություն այլևս չկար, և թուրք տերերը նրանց դուրս էին անում բարդացնելով հումանիտար կազմակերպությունների աշխատանքը:

Հայ երեխաների և երիտասարդ աղջիկների բաշխման գործընթացը տնօրինում էին պետական այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք էին Կարմիր մահիկի ընկերությունը (Hilal-i Ahmer), 1917 թ. մի խումբ թուրք բժիշկների հիմնադրած Օսմանյան երեխաների պաշտպանության ընկերությունը (Himaye-i Etfal Cemiyeti)⁴, 1916 թ. ռազմական նախարար Իսմայիլ Էնվերի և նրա կնոջ հիմնադրած Օսմանյան կանանց զբաղվածության ընկերությունը (Kadinlari Calıştırma Cemiyeti, 1916-1923)⁵: Այս վերջինին պատկանող որբանոցի զբանցամատյաններն էին հայտնվել հայ որբահավաքների ձեռքում պատերազմի ավարտից հետո: Դրանց վրա հենվելով էր նաև հետպատերազմյան որբահավաքը համակարգող Կ. Պոլսի հայոց պատրիարք Զավեն Տեր-Եղիայանը պահանջում հայ երեխաների վերադարձը: Ի պատասխան թուրքական “Tasvir-i Efkâr” թերթի մեղադրանքների՝ պատրիարքը մանրամասնում է. «Երեք տարի առաջ կառավարությունը գաւառներու մէջ հազարաւոր անտէր որբեր հաւաքելով բերել տուած էր Պոլիս և զինուորական վարժարանի շէնքին մէջ համախմբելով «Թուրք կանանց Աշխատցնող Ընկերութեան» ձեռքով բաժնած էր զանազան թուրք հաստատութիւններու և անհատներու: Ակնարկուած տետրակները՝ կը պարունակեն ցանկը այն հայ որբերուն, որոնք անհետացուեցան այդ կերպով: Ահա, տեսէք: Այս տետրակներուն մէջ ոչ թէ 8 ինչպէս կը խեղաթիւրուի *Թասֆիրի* մէջ, այլ հարիւրներով

¹ Տե՛ս **Gust W.**, նշվ. աշխ., էջ 652: Լ. Էքմեքճիօղլուն հայ տղաների թրքացման պատճառ է համարում նաև պատերազմում մուսուլման արական բնակչության թվաքանակի անկման հակակշռումը: Տե՛ս **Ekmekcioglu L.**, նշվ. աշխ., էջ 526:

² **Մանթաշյան Ա.**, Արամը չէր կարող Սեյտո լինել, խմբագիր, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ Ռ. Գալուստյան, **Սկրտյան Ս.**, Հուշեր, խմբագիր, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ Ռ. Թաթոյան, Երևան, 2020, էջ 11-12:

³ From Near East Doorways // “The New Near East”, 1921, Vol. VI, № VII (1921), p. 7.

⁴ Տե՛ս Encyclopedia of Women and Islamic Cultures, p. 85:

⁵ Տե՛ս **Maksudyan N.**, Agents or Pawns?: Nationalism and Ottoman Children during the Great War // “Journal of the Ottoman and Turkish Studies Association”, 2016, Vol. 3, № 1, p. 18:

հայ որբերու անուններ պիտի գտնէք որոց վրայէն գիծ քաշելով՝ իսլամ անուններ գրուած են: Պատրաստ ենք զանոնք հրատարակութեան տալու: Այս տետրակները չպիտի յանձնեմ՝ մինչեւ որ որբերը ինծի չի յանձնեն»¹:

Ըստ 1918 թ. հոկտեմբերին կնքված Մուղրոսի զինադադարի չորրորդ հոդվածի՝ թուրքական նոր կառավարությունը թույլ տվեց բռնի իսլամացված հայերին վերադառնալ իրենց կրոնին և պատվիրեց երեխաներին վերադարձնել հայկական համայնքին²: Պաշտոնական այս հայտարարությունից հետո, չնայած տեղում հարուցված խոչընդոտներին, բռնի տեղափոխվածների մի մասը վերադարձավ: Իսկ մյուս մասը, ինչպես օրինակ շատ փոքր երեխաները, որոնք չէին կարող հիշել իրենց հայ լինելը, օստրակիզմից վախեցող կամ մուսուլման տիրոջից երեխաներ ունեցած և նրանց լքել չցանկացող կանայք, մնաց տեղում և ձուլվեց:

Եզրակացություն

Հայոց ցեղասպանության ընթացքում ձուլումը կիրառվել է որպես ցեղասպանության իրականացման մեթոդ: Իշխող «Միություն և առաջադիմություն» կուսակցության կողմից հայերի ձուլման ծրագրում ներառվել են ոչնչացման համար թիրախավորված խմբի՝ որոշակի սեռատարիքային հատկանիշներով առանձնացված մարդիկ՝ երիտասարդ կանայք և երեխաներ: Հատկանշական է, որ կրոնափոխության արգելքի, թրքախոս և մուսուլման հայերի ոչնչացման քաղաքականությանը զուգահեռ, օսմանյան կառավարությունը կազմակերպում էր ցեղասպան բռնի տեղափոխում (genocidal forced transfer)՝ ընդունելով օրենքներ և արձակելով հրամաններ: Համեմատելով դրանք՝ կարելի է եզրակացնել, որ կառավարության նպատակը բոլոր հայ երեխաների տեղափոխում չէր թուրքական հասարակություն, այլ պահպանվում էր որոշակի համամասնություն: Կատարվում էր ընտրություն՝ հենվելով արտաքին տեսքի, առողջական վիճակի և այլ չափանիշների վրա: Պետական օրենքներով՝ ընտրված հայ երեխաներ, երիտասարդ կանայք տարվում էին ձուլման և թրքացման համար նախատեսված պետական հաստատություններ կամ անհատ թուրքերի ընտանիքներ:

Բռնի տեղափոխումը դեռևս ձուլում չէր նշանակում: Ոչնչացման գործընթացը շարունակվում էր պետական հաստատություններում ևս, այն դեպքում, երբ անհատների մոտ հայտնված հայ բռնի տեղափոխվածների մեծ մասը աշխատանքային և սեռական շահագործման հետևանքով ևս մահանում կամ սպանվում էր: Ձուլումը խոչընդոտող հանգամանք էին Մուղրոսի զինադադարից հետո կազմակերպված որբահավաք և որբախնամ առաքելությունները, որոնց շնորհիվ բազմաթիվ երեխաներ հայկական և միջազգա-

¹ Տե՛ս ՇԸՁԻԿ, Մենք թուրք մանուկի պէտք չունինք // «Ճակատամարտ», 1919, թիւ 155, էջ 2:

² Տե՛ս Ekmekcioğlu L., նշվ. աշխ., էջ 535-536:

յին հումանիտար հաստատությունների ջանքերով վերադարձվեցին հայկականությանը: Այնուամենայնիվ, բռնի տեղափոխվածների մի հատված, մնալով թուրքական հասարակության մեջ, կորցրեց իր ազգային ինքնությունը և թրքացավ՝ լրացնելով, ըստ էության, հայ ազգը ոչնչացնելու իթթիհաթական ցեղասպան ծրագիրը:

Կարող ենք նաև նշել, որ գոհ խմբից երեխաների տեղափոխումը ոճրագործ խումբ տարածված երևույթ էր հատկապես XX դարում կատարված ցեղասպանությունների ժամանակ: Հարկ է նաև ավելացնել, որ ցեղասպանական բռնի տեղափոխումները միայն տեսական-գաղափարական (եվգենիկա, ռասայի գենետիկ հարստացում և այլն) հիմք չունեն, այլ գործնական-իրավիճակային լուծումներ են. պատերազմի ընթացքում արական բնակչության թվաքանակի անկման հակակշռում, ձրի աշխատուժ, մանկածնության խթանում և այլն: Շարժառիթների այս ամբողջությունն է գործադրվել Օսմանյան կայսրությունում 1915-1923 թթ.՝ աղետալի հետևանքներ ունենալով կայսրության միլիոնավոր քրիստոնյա քաղաքացիների, հատկապես հայ ժողովրդի համար:

Ռեզիմա Գալուստյան – Հայ երեխաների բռնի տեղափոխումը Հայոց ցեղասպանության ընթացքում. ընտրություն, ոչնչացում, ձուլում

Օսմանյան կայսրությունը թուրքական ազգային պետության վերածելու իթթիհաթական ծրագրում հայ համայնքի ոչնչացումն առանցքային նշանակություն ուներ: Սույն հոդվածը գրվել է՝ հաշվի առնելով հասարակության մեջ դեռևս շրջանառվող Հայոց ցեղասպանության ընթացքում կրոնափոխությունը և համընդհանուր ձուլումը փրկության «պատուհան» դիտելու, ինչպես նաև կրոնափոխ հայերի թվաքանակն ուռճացնելու և դրան քաղաքական ներուժ հաղորդելու միտումը: Հոդվածի հիմնական խնդիրն է ցեղասպանական բռնի տեղափոխման որոշ հրամանների բովանդակությունը, դրանց գործադրումը և հետևանքները ներկայացնելով ցույց տալ, որ ցեղասպանական բռնի տեղափոխումը և ձուլումը միանշանակ չէին: Պետականորեն ուղղորդվող և համակարգվող այդ գործողության հետևանքով հայ համայնքի սեռատարիքային որոշակի խմբի ներկայացուցիչներ, ընտրությամբ հայտնվելով պետական հաստատություններում և անհատ թուրքերի ձեռքերում, շարունակում էին մնալ ցեղասպանական պետական համակարգի գոհ. նրանց ոչնչացրել են՝ երբեմն մինչ այդ ենթարկելով սեռական, աշխատանքային շահագործման և իհարկե՝ ինքնության փոփոխության: Հոդվածում շեշտվում է, որ ձուլումը Հայոց ցեղասպանության իրականացման մեթոդներից էր, որի նպատակը հայ ժողովրդի ոչնչացումն էր:

Регина Галустян – *Насильственная передача армянских детей во время Геноцида армян: отбор, уничтожение, ассимиляция*

Ключевые слова – Геноцид армян, Комитет единения и прогресса, тюркизм, геноцидные приказы, насильственная передача, ассимиляция, отбор, принудительные браки, сиротский приют, принудительный труд

Уничтожение армянской общины сыграло решающую роль в проекте юнионистов о преобразовании Османской империи в турецкое национальное государство. Статья написана с учетом идей, циркулирующих в армянском обществе, согласно которым религиозная конверсия и всеобщая ассимиляция во время Геноцида армян рассматривались как «окно» спасения, а также была тенденция увеличивать число обращенных армян и приписывать этому политический потенциал. Основная задача статьи – показать, что насильственная передача и ассимиляция во время Геноцида не была однозначной, представлено содержание некоторых геноцидных приказов о насильственной передаче, их выполнение и последствия. В результате этих действий, возглавляемых и координируемых государством, избранные представители армянской общины, согласно половой и возрастной специфике, размещались в государственных учреждениях или в домах турок, продолжая оставаться жертвами геноцидальной системы: они уничтожались, иногда предварительно подвергаясь сексуальной или трудовой эксплуатации и конверсии идентичности. В целом, в статье подчеркивается, что насильственная ассимиляция была одним из методов Геноцида армян, направленных на уничтожение армянского народа как такового.

Regina Galustyan – *Forced Transfer of Armenian Children during the Armenian Genocide: Selection, Destruction, Assimilation*

Key Words – Armenian Genocide, Committee of Union and Progress, Turkism, genocidal orders, forcible transfer, assimilation, selection, forced marriages, orphanage, forced labor

The annihilation of the Armenian community had a crucial role in the Unionist project of transforming the Ottoman Empire into a Turkish nation-state. The article was written taking into consideration ideas circulating among the Armenian society presenting conversion during the Armenian genocide and assimilation as a “window” of salvation, as well as the tendency to inflate the numbers of converted Armenians and assign to it a political potential. The main aim of the article is to show that the forcible transfer and assimilation of the genocide were not unambiguous by presenting the content of some of the genocidal orders of forcible transfer, their implementation, and consequences. As a result of this state-led and state-coordinated action, selected representatives of the Armenian community specified by gender and age were put in the state institutions or in the households of individual Turks, continuing to be victims of the genocidal system: they were destroyed, sometimes subjected to sexual or labor exploitation beforehand and to the conversion of identity. In general, the article emphasizes that forced assimilation was one of the methods of the Armenian Genocide, aimed at the destruction of the Armenian people as such.

Ներկայացվել է 03.03.2022

Գրախոսվել է 05.03.2022

Ընդունվել է տպագրության 29.03.2022

Ռեգինա Գալուստյան – Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտաշխատող (galustyan.regina@genocide-museum.am)

ԿԱՐՄԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՏՈՐԱԾԸ 1920-1921 ԹԹ.

***Բանալի բառեր** – Կարս, Վանանդի նահանգ, Շիրակի նահանգ, ցեղասպանություն, կոտորածներ, քեմալականներ, ականատես, վկայություններ, հուշագրություններ, որբեր, գերիներ, հայրենագրկում*

Հայ պատմագրությունը 1920-1921 թթ. Կարսում տեղի ունեցած իրարարձություններին անդրադարձել է հիմնականում թուրք-հայկական պատերազմի համատեքստում: Հայ պատմաբանները վերլուծության են ենթարկել մասնավորապես Կարսի անկման պատճառները, ռազմաքաղաքական խնդիրները, մինչդեռ բնակչության կոտորածների ամբողջական պատկերի վերակազմությունը կարծես թե դուրս է մնացել նրանց տեսադաշտից:

Սույն հոդվածում կփորձենք ներկայացնել Կարս քաղաքում քեմալականների իրականացրած ցեղասպան գործողությունները և դրանց հետևանքները: Համադրել ենք ազգագրական և բանահավաքչական դաշտային աշխատանքների տվյալները*, Հայաստանի ազգային արխիվի փաստաթղթերից ու ժամանակի մամուլից քաղված նյութերը, ինչպես նաև մասնագիտական գրականության մեջ օգտագործված տեղեկություններ: Ուսումնասիրվել են նաև թեմային առնչվող Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ֆոնդերում պահվող ձեռագիր հիշողությունների բաժնի հուշագրությունները:

Ներածություն

Հայոց ցեղասպանությունից տարիներ անց, երբ հայ ժողովուրդը վերընձյուղվեց և վերակերտեց բաղձալի պետականությունը (1918 թ.), որը խաթարվել էր շատ դարեր առաջ, ցեղասպան թուրքական պետությունը նորից իր սուրը ուղղեց դեպի Հայաստան:

1918 թ. հայերի նահանջից հետո թուրքերը տիրել էին հայերի բնակավայրերին և մեծ դժվարություններ առաջացրել գաղթականության համար նախկին վայրերում վերաբնակվելու խնդրում: Ոչնչացվել էր ամեն բան. այրվել էին ազգաբնակչության քանակին առնչվող բոլոր տեղեկամատյանները, կազմալուծվել էր գյուղական համայնքների վարչական կազմը: Ամենուր շրջում էին

* 1921 թ. Փամբակի տարածքում ապաստանած վերապրածների ժառանգների շնորհիվ մեզ հասած հիշողությունները պահվում են տողերիս հեղինակի անձնական արխիվում:

միայն հրոսակախմբերը: Բնիկ հայերից ոչ բոլորը հայրենադարձվեցին, որովհետև մի մասը մնաց Հյուսիսային Կովկասում (Ռուսաստան):

1918 թ. գաղթի ժամանակ շատ գյուղացիներ ոչինչ չէին կարողացել տեղափոխել, ոմանք շատ չնչին բան էին տարել, որովհետև ՀՀ կառավարության կարգադրությամբ խմբապետները ժողովրդին արգելում էին գաղթել՝ պատճառաբանելով, որ զինվորները, տեսնելով, թե ինչպես է իրենց թիկունքը դատարկվում, խուճապի կմատնվեին և ռազմաճակատներից դասալքության կղիմեին: Ուստի երբ թուրքական զորքերը մոտենում էին որևէ բնակավայրի, տեղի հայ բնակչությունը այլևս ժամանակ չէր ունենում կազմակերպված տեղափոխվելու, ստիպված խուճապահար փախչում էր²: Հուշագրող Արտաշես Մաթևոսի Ալեքսանդրյանը (ծնվ. 1897 թ. Կարսում), որի ընտանիքը 1918 թ. Կարսից փախել էր Թիֆլիս, պատմում է, որ Կարս վերադառնալը վտանգավոր էր. լուրեր կային, որ տեղի թուրքերն այդպես էլ մնացել էին իրենց տեղերում՝ հուսալով, որ հայերը դժվար թե իրենց դիպչեին: Նրանց համոզմամբ ոչ ոք չէր կարող ապացուցել, որ այս կամ այն անձը հայ է սպանել կամ նրանց նեղություն պատճառել: Յուրաքանչյուր թուրք թաքցրած զենք ուներ և անհրաժեշտություն դեպքում այն կգործադրեր: Շատ հայեր սպանված էին, և թուրքերը շարունակում էին ապրել հայերի հարմարավետ տներում: Ոմանք տան հատակի տախտակները պոկել էին, ախոռներ սարքել³:

Հայաստանի հետ Կարսի մարզի վերամիավորումից հետո՝ մինչև 1919 թ. հունիսի 3-ը, այնտեղ վերադարձավ շուրջ 300.000 գաղթական, իսկ 1919 թ. հունիսի 4-ին Ալեքսանդր Խատիսյանը Հայաստանի խորհրդում հայատարարեց. «Ղարսի նահանգի երեք քառորդն արդեն մեր ձեռքում է: Օլթիին մի քանի օրից կտիրենք»⁴:

1920 թ. քեմալական արշավանքը, թուրք-հայկական պատերազմը և Կարսի անփառունակ անկումը ողբերգական հետևանքներ ունեցան Վանանդի, այնուհետև Շիրակի նահանգների* համար:

1920 թ. պատերազմի ընթացքում, հոկտեմբերի 28-ին կատարելով ուժերի համալրում և վերադասավորություն, թուրքական զորքերը դիմում են նոր

¹ ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 636, թ. 5-6:

² Տե՛ս ՀՅԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ.հ. 217: «Հանդիպում Ե. Չարենցի հետ», էջ 3-4: Հուշագրող՝ Վահան Միրբայելի Մարտիրոսյան (Կարս, գ. Ճալա):

³ Տե՛ս ՀՅԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ.հ. 219: 1920 թ. Կարս: Քաղվածք «Ծանր տարիներ» պատմավեպի ձեռագիր հուշագրությունից, էջ 4, **Ալեքսանդրյան Ա.**, Կարս 1920-21, Երևան, 1986, էջ 5:

⁴ Տե՛ս **Պետրոսյան Գ.**, Կարսի խնդիրը և նրա շուրջ ծավալված պայքարը (1918 թ. դեկտեմբեր-1919 թ. ապրիլ) // «Բանբեր Երևանի համալսարանի» (այսուհետև՝ «ԲԵՀ»), 2004, թիվ 3, էջ 34, Հայաստանի խորհրդարան // «Հայաստանի աշխատավոր», 1919, թիվ 66, էջ 2:

* Չարկ է նշել, որ մինչ թուրքական հարձակումը Հայաստանի Հանրապետության տարածքը ենթարկվել էր նոր վարչական բաժանման՝ Արարատյան, Շիրակի, Վանանդի և Սյունյաց նահանգների: Տե՛ս Հայաստանի նահանգների նոր բաժանումը // «Յառաջ», 1920, թիվ 126, էջ 2:

հարձակման Կարսի ուղղությամբ և եռօրյա կռիվներից հետո՝ նույն ամսի 30-ին, կոտրելով հայկական զորքերի դիմադրությունը, գրավում այն¹: Թուրքական զորքը գրոհում է բերդաքաղաքը, որտեղ հավաքվել էին խաղաղ բնակիչները՝ իրենց փրկությունը այստեղ գտնելու ակնկալիքով: Տների ու եկեղեցիների բակերում ապաստանել էին Սարիդամիշից, Կաղզվանից, Օլթիից, Արդահանից փախած բնակչությունը, ինչպես նաև Կարսի շրջակա գյուղերի բնակիչները²: Մինչև թուրքական զորքերի Կարս մտնելը հայ զինվորները խորապես համոզված էին, որ Կարսի վրա հարձակվողները բոլշևիկներ էին, որի պատճառով չդիմադրեցին³:

Կոտորածները և հետևանքները Կարսում

Կարսի անկումով նահանգի հայ բնակչության համար սկսվում են արյունոտ օրեր. չխնայվեցին ո՛չ կանայք, ո՛չ երեխաները: Կարսում սուսկալի դեպքեր են տեղի ունեցել, մարդկային երևակայությունից դուրս գազանություններ են կատարվել քեմալական սպաների, զինվորների, տեղի թուրքերի և քրդերի կողմից: Շատ ընտանիքներ լրիվ մոռթվել են: Սպանում էին միայն հայերին, բացառիկ դեպքերից էր հրեա դեղագործ Ռեյիշանի և նրա կնոջ սպանությունը⁴:

Հայտնի է, որ քեմալական բանակում գործում էին նաև աշիրեթական երկու գնդեր, ադրբեջանական հեծելազորի հարյուրյակ, լեզգիների հեծելազունը և քրդական, թաթարական ու թուրքական անկանոն հրոսակախմբեր⁵: Կարս քաղաք առաջինը ներխուժեցին քուրդ հեծյալները, որոնք կատարեցին տարատեսակ զանգվածային բռնություններ, գնդակահարություններ: Այն խաղաղ բնակիչները, որոնք չկարողացան թաքնվել, անխտիր գնդակահարվեցին, իսկ բռնությունների ենթարկված կանանցից փրկվեցին միայն նրանք, ովքեր կարողացան պատսպարվել ամերիկյան որբատներում⁶:

Դեպքերի ակնատես Սարգիս Հարությունյանը (ծնվ. 1907 թ. Ղարալում [այժմ Կաթնաջուր Լոռու մարզում]) գրում է. «Հոկտեմբերի 30-ին Կարսը հանձնվեց: Թուրքական բանակը եկավ և որպես արյունարբու վիշապ գրա-

¹ Տե՛ս **Կարապետյան Մ.**, Հայաստանի Հանրապետության բանակը (1918-1920), Երևան, 1996, էջ 125:

² Տե՛ս **Ալեքսանդրյան Ա.**, նշվ. աշխ., էջ 22-23:

³ Տե՛ս **Եսայեան Ա.**, Ղարսի արիւնոտ օրերը // «Կոմունիստ», 1921, թիվ 47, էջ 2:

⁴ Տե՛ս **Ալեքսանդրյան Ա.**, նշվ. աշխ., էջ 78, **Եսայեան Ա.**, նշվ. աշխ., էջ 2, ՀՍԱ, ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 33 (Արամ Եսայանցի վկայությունը, 1921 թ. փետրվարի 2, Երևան):

⁵ Տե՛ս **Տեր-Յակոբեան Յ.**, Հայաստանի վերջին աղետը, քեմալական արշաւանքը, Կարսի եւ Ալեքսանդրաբոլի անկումները, հայ բանակին քայքայումը, յարձակման եւ քայքայման պատճառները, պաշտօնակա տիրապետութիւնը (անտիպ փաստաթուղթեր, դիւանագիտական գրեր եւ բազմաթիւ պատկերներ), Կ. Պոլիս, 1921, էջ 93:

⁶ Տե՛ս **Հարությունյան Վ.**, Մարտական գործողությունները Կարս-Ալեքսանդրապոլ ուղղությամբ (1920 թ. հունիս-1920 թ. նոյեմբեր): Հայկական բանակի սպայի հուշերում, Երևան, 2019, էջ 85:

վեց քաղաքը: Մարդիկ տեսնում էին թշնամու սև օղակը, իսկ թուրք ասկյարները հրճվալի աչքերով նայում էին հայ կանանց ու աղջիկներին և սրում ժանիքները: Հոկտեմբերի 31-ի գիշերը ծանրացավ քաղաքի վրա, իր սև թևերի տակ պարուրեց բնավեր բնակչությանը: Բռնությունից տառապող երեխաների, կանանց և աղջիկների ձայնը սաստկացավ, առաջացավ սուկալի խուճապ, երբ թուրքական արնաձարավ գորքը լցվեց քաղաք: Մի օրում որբացավ շքեղազարդ բերդաքաղաքը, երեսուն հազար բնակչության մեծ մասը սրի քաշվեց, իսկ ավելի փոքր մասը արտաքսվեց Թուրքիայի խորքերը»¹: Երբ թուրքերը առաջին անգամ մտան Կարս, զորքն ու խուժանը սկսեց թալանել և կոտորել հայերին առանց սեռի և տարիքի խտրության, մոտավորապես 15.000 անձինք դարձան այդ կոտորածի զոհերը²: Բնակիչները սպանվում էին ամենայն դաժանությամբ: Գրավելով Կարսի կայարանը՝ թուրք ասկյարները սվիններով անխնա կոտորում են գնացքի մեջ եղած կանանց, աղջիկներին, երեխաներին, ծերերին, հիվանդներին: Վագոնների կտուրների վրա գտնվողներին սպանում են հրացանների համազարկերով: Մինչ այդ հաջողվել էր երկու գնացք ուղարկել Ալեքսանդրապոլ³:

Կարսի գրավման ու հետագա գործողությունների ընթացքում, ըստ թուրք ականատեսների վկայության, քաղաքում կոտորվել է 8000 մարդ⁴: Ռումիիիայի քաղաքացի Վասիլ Իոնեսկոն 1921 թ. հունվարի 27-ին մենշևիկյան Վրաստանում Հայկական ՄՍՌ լիազոր ներկայացուցչությանը ուղղված իր նամակում հաղորդում է, որ ինքը 1920 թ. հոկտեմբերի 30-ին գերի է վերցվել թուրքերի կողմից և մեկ ամիս անց ազատվել ու ժամանել Կարս: Նա թուրք բժիշկ Նուրի-բեյից տեղեկանում է, որ քաղաքում սպանվել են ութ հազար հայեր (կանայք, երեխաներ և տղամարդիկ), սակայն իր դիտարկումներով սպանվածների թիվը 10-12.000-ից ավելի էր⁵:

Թուրքական կոտորածները քաղաքում ըստ տարբեր սկզբնաղբյուրների՝ տևել են երեքից-հինգ օր, երեք օր անց փաշան հրամայել է մաքրել քաղաքը դիերից⁶: Սակայն մասնակի սպանությունները շարունակվել են: Քաղաքում

¹ **Հարությունյան Ս.**, Երիտասարդ շրջանի տեսածներս ու լսածներս, «Կյանքի ճանապարհ», հուշագրություն, Երևան, հրատարակվել է ձեռագրի իրավունքով, որպես հուշանվեր, էջ 31-32:

² ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 35, 36 (դեկտեմբերի 9-ին Կարսից փախած, ամերիկացիների մոտ թաքնված Մոսկվայի կոմիտեի պաշտոնյաներից Արամ Լյուլիկյանի վկայությունը):

³ Տե՛ս **Ալեքսանդրյան Ա.**, նշվ. աշխ., էջ 31:

⁴ Տե՛ս Հայկական հարց հանրագիտարան, Երևան, 1996, էջ 179:

⁵ Տե՛ս **Սարգսյան Ե.**, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918, Երևան, 1964, էջ 498, **Ներսիսյան Մ.**, Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, Երևան, 2005, էջ 146:

⁶ ՀԱԱ ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 32 (Կարսի գրավման ժամանակ ամերիկացիների մոտ թաքնված և դեկտեմբերի 7-ի գիշերը Կարսից փախած՝ իգդիրցի ուսուցիչ Խշտոյանի հայտարարությունը): Տե՛ս նաև **Եսայեան Ա.**, նշվ. աշխ., էջ 2:

տեղ-տեղ լսվում էին կրակոցներ, իսկ գիշերները՝ կանանց ձայներ¹:

Բոլոր պահեստները, մառանները, թաքստոցները լիքն էին երեխաների, կանանց և երիտասարդների դիերով: Եղել էին ընտանիքներ, որոնցից ոչ մի անձ ողջ չէր մնացել²: Նկուղներում, թախտերի տակ, տարբեր այլ վայրերում թաքնված երիտասարդներին դուրս էին տանում, մի քանի քայլ հեռացնելով՝ սպանում կամ գերեզմարում և անհայտացնում: Քաղաքի ծայրամասերում թաքնվածների մեծ մասը անխտիր կոտորվել է³:

Քաղաքում կատարվել էր նաև սպանությունների ծիսականացում: Թուրքական դաժանության մի պատկեր է Թախիրով Սերգեյի սպանության տեսարանը: Նախապես կապել են նրա ոտքերն ու ձեռքերը, հետո գլխատել: Նրան մորթել էր թուրք դասաբը (մսագործ), որն աշխատելիս է եղել հենց նրա մոտ⁴:

Կարսում և շրջակա գյուղերում զանգվածային կոտորածները շարունակվել են երկու շաբաթ: Սպանվածների թիվն անհամար էր⁵: Զանգվածային կոտորածների անասարսուռ երեք օրերի ընթացքում քաղաքից դուրս՝ բաց դաշտում, կատարվել են նաև ողջակիզումներ. հայ երիտասարդների վրա նավթ են լցրել և կենդանի այրել⁶:

Այդ արյունալի օրերի ժամանակակից Արամ Եսայանցը փոքրաթիվ մարդկանց հետ թաքնված է եղել հիվանդանոցում, որտեղ իր քաղաքացիական կինը՝ Վերա Պետրովնա Սոկա-Եսայանցը, պատմում է, թե ինչեր է տեսել: Վերան (ամերիկյան չորրորդ հոսպիտալի գրության ավագ քույրը) և նույն հիվանդանոցի գրության քույրեր Կասակովսկայան, Ադամայանը (որը շատ նման է եղել ռուսի) և Շիշենինը հինգ-վեց օր շրջում էին քաղաքի ձեռնափակում և նկուղներում վիրավոր բնակչությանը բժշկական օգնություն ցույց տալու համար: Որոշ տներում նա տեսնում էր տղամարդկանց, կանանց ու երեխաների շուրջ 30 դի: Մի քանի օրերի ընթացքում նա տեսնում էր շուրջ 3000 սպանվածի⁷: Կարսի գրավման ութերորդ և իններորդ օրերին Ա. Եսայանցը անձամբ տեսնում է, թե ինչպես էին սայլերով տեղափոխում սպանված խաղաղ բնակիչների դիերը: Այդ չորս-հինգ օրվա ընթացքում նա հաշվում է դիերով լի շուրջ 50 սայլ⁸: Քսաներեք օր շարունակ սայլե-

¹ ՀԱԱ ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 32: Տե՛ս նաև **Հարությունյան Վ.**, նշվ. աշխ., էջ 85:

² Տե՛ս **Եսայան Ա.**, նշվ. աշխ., էջ 2:

³ Տե՛ս **Ավետիսյան Մ.**, Փաստաթուղթ Կարսի հայ բնակչության կոտորածի մասին «Կարսի Մր. Լուսավորիչ եկեղեցու ծխատեր Կորյուն քահանա Քոթանջյանի զեկուցագիրը Գևորգ Ե կաթողիկոսին՝ քաղաքի անկումից հետո հայ բնակչության նկատմամբ կիրառված բռնությունների մասին» // «Բանբեր Հայաստանի արխիվների», 2006, թիվ 1, էջ 102:

⁴ **Ալեքսանդրյան Ա.**, նշվ. աշխ., էջ 32:

⁵ **Մարգարյան Ե.**, նշվ. աշխ., էջ 498:

⁶ **Ավետիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 103:

⁷ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 33 (Արամ Եսայանցի վկայությունը, 1921 թ. փետրվարի 2, Երևան):

⁸ Նույն տեղում:

րով ու բեռնասայլերով դիրք են տեղափոխել քաղաքից դուրս: Ողջ մնացած հայերին բանտարկում էին, ոմանց սպանում, իսկ ոմանց բռնությամբ ուղարկում ծանր աշխատանքների. լծում էին սայլերին կամ սպանված հայրենակիցների դիրքն էին փոխադրել տալիս¹:

Թուրքերը առաջնահերթ ոչնչացնում էին արական սեռի ներկայացուցիչներին: Բռնաճնշումների էին ենթարկվում հայ զինվորները: Կարս մտած թուրքերը մերկացրել են գերի ընկած հայ զինվորներին և ուղարկել դեպի Էրզրում՝ ճանապարհին նրանց կոտորելու համար, ինչպես արել էին 1918 թ. Ալեքսանդրապոլի շրջանի գյուղացիության հետ: Զինաթափում էին ամբողջ հայ ազգաբնակչությանը և զինում «ոչ հայերին»²:

Կարսը գրավելուց հինգ օր անց թուրքերը գերի ընկած շուրջ 1500 զինվորների ուղարկում են Էրզրում: Այնուհետև 18 վագոնով տեղափոխում են շուրջ երկու հազար ձերբակալված երիտասարդների³: Կոտորածից փրկված տղամարդկանց մի մասին ուղարկում են Սարիղամիշ, քաղաքից և շրջակայքից մինչև դեկտեմբերի 9-ը ուղարկում են 15-60 տարեկան շուրջ 30.000 տղամարդ: Քաղաքում արական սեռի հայեր գրեթե չէին մնացել⁴: Էրզրում փոխադրելուց առաջ Կարսում հայ տղամարդկանց ենթարկում էին անասելի տանջանքների, ծեծի և բռնության, տաժանակիր աշխատանքների: Մինչև Էրզրում գերիներից շատերին ճանապարհին սպանում էին սոսկալի ձևերով: Գիշերները մինչև հինգ հոգի հանում են գնացքի կացարանից՝ իբր աշխատանքի տանելու կամ «մեծավորին» ներկայանալու պահանջով, և սպանում⁵: Հայ գերիներով լեցուն գնացքին թուրքական գյուղերի կայարաններում թուրք կանայք դիմավորում են ատելությամբ՝ քարերով, փայտերով և կացիններով հարձակվելով և սպանելով նրանց⁶:

Ձերբակալվածներին օրերով հաց ու ջուր չեն տվել, ինչի պատճառով շատերի լեզուները ուռել են, նրանց ամբողջովին մերկացրել են, եղել են նաև տղամարդկանց բռնաբարության դեպքեր⁷:

Կարսում տղամարդկանց նկատմամբ հաշվեհարդարը հետապնդում էր մի քանի նպատակ՝ հավանական դիմադրության ճնշում, անարգել բռնություններ կանանց և երեխաների նկատմամբ, հարկադիր աշխատանք:

¹ Տե՛ս **Ավետիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 101-103:

² Տե՛ս Կարսում, Ալեքսանդրապոլում // «Յառաջ», 1920, թիվ 245, էջ 4:

³ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 33, թ. 43 (Կարսի շրջանից փախստական Գևորգ Գևորգյանցի վկայությունը):

⁴ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 35, 36:

⁵ Տե՛ս **Ավետիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 101:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 101-102:

⁷ Տե՛ս **Ներսիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 145-146, Հայոց պատմություն, հ. IV, Նորագույն ժամանակաշրջան. գիրք առաջին (1918-1945 թթ.), Երևան, 2010, էջ 216:

Չորի կոտորածը

Թուրքերը հիմնականում շրջափակում էին հայ փախստականների նահանջի ուղղությունները՝ նրանց ենթարկելով կոտորածների: Այսպես, Կարսի ականատես-վերապրածները հաճախ էին հիշատակում ձորի կոտորածը:

Կարսի հայ բնակչությունը հայկական գորամասերի՝ դեպի քաղաք նահանջից և քեմալական զորքի կողմից Կարսի գրավումից հետո մատնվում է աննախադեպ խուճապի: Հիմնականում կանանցից, երեխաներից և ծերերից բաղկացած բնակչությունը դիմում է խուճապահար փախուստի, նախընտրում դեպի ձորը՝ Ալեքսանդրապոլ տանող նախկին խճուղու ճանապարհը (այստեղ էին շտաբի շենքերը, նաև ամերիկյան հսկողության տակ գտնվող որբանոցները): Ով ինչով կարող էր՝ կառքերով, ավտոմոբիլներով, ձիերով, էշերով, շատերը բեռներն ու երեխաներին թիկունքներն առած, մանուկների ձեռքերից բռնած, երեխաներին անգամ կորցրած, փախչում էին այնտեղ՝ պաշտպանություն գտնելու կամ դեպի Ալեքսանդրապոլ հեռանալու հույսով: Մարդ ու անասուն խառնվել էին միմյանց, առաջացել էր աննկարագրելի իրարանցում: Ճանապարհն այնքան է լցվում մարդկանցով, որ առաջ շարժվելն անհնար է դառնում¹: Գրավելով կարևոր բարձունքները՝ թուրքերը բարձրացնում են կարմիր և սպիտակ դրոշներ. այս տեսնելով՝ ժողովուրդը հանդարտվում է²: Օգտվելով ստեղծված դրությունից, երբ անպաշտպան խաղաղ բնակչությունը լցվում է ձորը, քեմալականները դիմում են դաժան կոտորածների: Ասկյարները և քուրդ հրոսակները անմիջապես համախմբվում են ձորի երկու կողմերի բարձունքներում և գնդացիներով անգթորեն կոտորում ժողովրդին: Առաջին փախչողները կամ ամերիկյան որբանոց հասնողները մի կերպ փրկվում են, իսկ մեջտեղում և վերջում գտնվողների մեծ մասը սպանվում է: Կրակում են անընդհատ, գնդակները կարկուտի պես թափվում են մարդկանց վրա: Չորում նեղ, ճոճվող մի փայտից սարքված կամուրջ է լինում, որը տեղացիները «Մազե կամուրջ» էին անվանում: Այդ կամրջի վրայով անցնելիս մարդիկ ընկնում են գետը. այն տանում է մարդկային դիեր, զանազան իրեր³:

¹ Տե՛ս **S. S. Գարեգին Ս. Արքեպ. Յովսեփեան** կաթողիկոս Կիլիկիոյ, կենսագրական նօթեր, Կեանքիս ամենադժբախտ օրը (Կարսի անկումը) եւ երջանկութեանս րոպէն, Յոբելի-նական պատգամ եւ մեր իղձերն ու յոյսերը, տպարան Մահակ-Մեսրոպ Գահիրէ, 1945, էջ 23, **Ավետիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 101: ՀՅԹԲ, Թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ.հ. 176, «Կարսի անկումը» Խորեն քահանայ Ստամբուլցեանի յիշատակարանից, 1920 թ. Կարսում, էջ 10, ֆ.հ. 177, կազմեց՝ Կարինե Աղաբաբյանը, էջ 7: Նույն տեղում, բաժին 8, ֆ.հ. 275, «Հուշագրություն», էջ 19-21, ֆ.հ. 276, էջ 4-5: Տե՛ս նաև՝ Ելենա Լևոնի Աբրահամյանի վկայությունը՝ **Սվազյան Վ.**, Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ, Երևան, 2011, էջ 191-193: (Ելենա Աբրահամյանը (ծնվ. 1910/12 թ. Կարսի մարզ, Ծպնի) Կարսի Սուրբ Առաքելոց եկեղեցու քահանա տեր Խորեն Ստամբուլցյանի թոռնուհին է, որը հրաշքով է փրկվել Կարսի ձորի կոտորածից): Տե՛ս նաև **Ալեքսանդրյան Ա.**, էջ 34-36:

² **Ներսիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 145:

³ Տե՛ս ՀՅԹԲ, Թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ.հ. 275, **Ավետիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 101, **Ալեքսանդրյան Ա.**, նշվ. աշխ., էջ 33:

Թուրքերը փակել էին ձորից Ալեքսանդրապոլ տանող միակ ճանապարհը, գրավել Մազրա գյուղը, կայարանը, ձորի կամուրջները, ամերիկյան կոմիտեի ձորի որբանոցներն ու ռազմական շտաբի շենքը¹: Այս շրջափակման մեջ ժողովուրդը ենթարկվում է կոտորածի: Կարսի ձորի տեսարանը ականատեսներն անվանում են՝ «դժոխք», «դժոխային խառնուրդ»²:

Չորում շատերի երեխաները սպանվում են, խեղդվում Կարսաչայ գետում³: Ականատես Սրբուհի Ստեփանի Անդրեասյանը (ծնվ. 1900 թ., Կարս), որի ամուսնուն թուրքերը սպանել էին, իր երեխայի հետ հայտնվում է գնդացրային կրակոցների տակ: Նա, փոքրիկ աղջկան գրկած, մյուս բնակիչների հետ վազում է, ասկյարները կրակում են, փամփուշտը դիպչում է երեխայի գլխին և խոցում կնոջ ձեռքը (մինչև կյանքի վերջը նրա ձեռքի վիրավոր մատները մնում են ծալված): Ինչ-որ չափով առաջանալուց հետո նա տեսնում է, որ գլխի հրազենային վնասվածքից երեխան մահացել է⁴: Գնդացրային կրակը տևում է մեկ ժամից ավելի⁵:

Չորի կոտորածներից մանրամասներ է հաղորդում նաև ականատես Գարեգին Հովսեփյանցը, որը գեներալ Փիրումյանի ցուցումով բարձրանում է Կարսի բերդը՝ հայտնելու հայկական կողմի անձնատվության և խաղաղ բնակչությանը կոտորածից փրկելու մասին: Հագնվում, վեղար է դնում, կախում եկեղեցական պանագիան (շրջանակված սրբապատկեր, որը կաթողիկոսը շնորհում է նոր օծված եպիսկոպոսին), կապում է քաջության ժապավենը, մի օղաչու սպայի և գնդապետ Տեր-Առաքելյանի հետ նստում են երկձի կառքը և ձողի վրա ամրացված սպիտակ սավանով ճանապարհ ընկնում դեպի բերդ: Երեք օր շարունակ ջրհեղեղի նման անձրև է տեղում: Խճուղիներից մեկով բարձրանալիս նրանց շրջապատում են մի քանի տասնյակ ասկյարներ՝ մի սպայի ղեկավարությամբ: Պատասխանում են սպայի տված հարցերին, թե ովքեր են և ուր են գնում (օղաչու սպան տիրապետում է թուրքերենին և կատարում է թարգմանչի դերը): Թուրք սպան կանգնում է կառքի պատվանդանին և նրանց ուղեկցում: Ճանապարհին հանդիպում են ասկյարների կողմից շրջապատված հայ զինվորների, որոնց կողոպտում էին՝ հանելով նրանց հագի շորերը: Լեռնաշղթայից դեպի ձորը ձգվող ցածր պարսպաշար է լինում, որոնց հետևում պատսպարված թուրք զինվորները համազարկեր են տալիս դեպի ձորը: Կարգադրող սպան, ձիու վրա նստած, մոտենում է եպիսկոպոսին և հարցնում նրանց ով լինելը: Հովսեփյանցը

¹ Տե՛ս **Ալեքսանդրյան Ա.**, էջ 34-36:

² Տե՛ս ՀՅԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ.հ. 176, էջ 10, ֆ.հ. 177, էջ 7, **Ալեքսանդրյան Ա.**, նշվ. աշխ., էջ 33:

³ Տե՛ս **Սվազյան Վ.**, նշվ. աշխ., էջ 192:

⁴ Բանասաց Ալվարդ Յոլակի Հախոյան (ծնվ. 1953 թ., Վանաձոր): Ականատեսի թողը: Պատմությանը տեղեկացել է ականատեսից:

⁵ Տե՛ս **Ներսիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 145:

նրան դիմում է փոքրիկ ճառով՝ կոչելով նրան փաշա (նրա կարծիքով՝ այդ մարդը ունեցել է գնդապետի աստիճան, մինչդեռ «փաշայով» դիմում են գեներալներին) և ասում, որ ձորը լցված է հասարակ բնակիչներով, կանանցով և անմեղ երեխաներով, և որ այնտեղ են որբանոցները: «Զինվորականը որքան քաջ, նույնչափ վեհանձն, գթոտ պիտի լինի»։ դիմում է՝ մարդասիրություն դրսևորել և խնդրում դադարեցնել կրակը: Գնդապետը մի փոքր մտածում, այնուհետև ձեռքով նշան է անում, և կրակը դադարում է¹: Այսպես Հովսեփյանցի միջնորդությամբ ձորի կոտորածը դադարում է:

Ըստ Գեղամ Գևորգի Հարությունյանի (ծնվ. 1899 թ. Ապարանի շրջան, Ծաղկահովիտ գյուղ) վկայության (Կարսի գրավման ժամանակ կոտորածից փրկվում է հասնելով Ամերիկյան որբանոց, մի ամիս ծալվում որբանոցի աշխատողի հագուստով, բայց ասկյարների կողմից որբանոցը ստուգելու ժամանակ գերի է տարվում)՝ ասկյարները 50-60 երիտասարդ գերիների հետ իրեն տանում են, և ձորի ճանապարհով անցնելիս ջրի մեջ նրանք տեսնում են սպանված հայերի հագարավոր դիեր: Նրանց ծեծում են՝ թույլ չտալով նայել այդ կողմ: Նրան հարցաքննում են, պարզում, որ աշխատել է Կարսի փոստ-հեռագրատանը, և ասկյարների հսկողության տակ նույն հեռագրատանը տեղավորում են աշխատանքի՝ հեռագրալարեր պատրաստելու: Կարծես թե հրաման էր եղել այդ ճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշայից, որ դադարեցնեն հայերի կոտորածը, այնինչ Կարսում միայն մի տան մեջ մի քանի ծեր կանայք էին մնացել կենդանի: Այլք Կարսաչայ կոչվող գետում էին՝ սպանված ու սառած: Երկու ամիս հեռագրատանը աշխատելուց հետո նրան տեղափոխում են բանտ, ենթարկում հարկադիր աշխատանքի, հետո նա կարողանում է մի կերպ փախչել²:

Այսպիսով քեմալականների կողմից Կարսում իրականացված զանգվածային կոտորածների հիմնական վայրը «Կարսի ձորն» էր, որտեղ կոտորվեց փախուստի դիմող հայ խաղաղ բնակչության զգալի մասը:

Բռնարարքները կանանց և երեխաների նկատմամբ

Ինչպես նշվեց, քեմալականները չինայեցին նույնիսկ կանանց և երեխաներին: Կոտորածների օրերին և դրանից հետո ասկյարների կողմից կանայք ենթարկվում էին բռնությունների: Զինված թուրքերը մտնում էին հայերի տները, բռնաբարում կանանց և աղջիկներին, շատերին տանում իրենց հետ: Այս ու այն տնից լսվում էին սուսկալի ճիչեր³: Հայ կանանց հետ վարվում էին, ինչպես

¹ Տե՛ս **Տ. Տ. Գարեգին Ս. Արքեպս. Յովսեփեան**, նշվ. աշխ., էջ 24-26:

² «Կենսագրությունը և Ղարսից գերությունից փախչելը» // ՀՅԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ.հ. 173., էջ 1-14:

³ Տե՛ս Կարսում, Ալեքսանդրապոլում // «Յառաջ», 1920, թիվ 245, էջ 4: Ժամանակի մամուլը վկայակոչում է մի քանի հայերի պատմությունները, որոնք հասել էին Երևան՝ մի կերպ ձողոպրելով Կարսից: Տե՛ս ՀԱՍ ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 32:

ցանկանում էին: Քաղաքում հայ տղամարդ գրեթե չէր մնացել¹: Վ. Իոնեսկոն, ներկայացնելով քաղաքի գրավման ու կոտորածի ահասարսուտ պատկերը, վկայում է, որ բազմաթիվ կանայք նետվել են Կարսաչայ գետը և խեղդվել²: Կարսի շրջանից փախստական Գևորգ Գևորգյանցը փաստում է, որ բոլոր երիտասարդները՝ թե՛ տղամարդ և թե՛ կին, թաքնվել էին թուրքերից: Երիտասարդներին և զինվորականներին գերի ուղարկելուց հետո թուրքերը սկսել են թալանել ու բռնաբարել այլոց³: Բոլոր կանայք, բացառությամբ երկու-երեք ընտանիքների, որոնց պաշտպանել են օսերը, բռնաբարված և վարակված են եղել: Շատերը գտնվել են թուրք սպաների ու զինվորների մոտ, իսկ մի մասին քրդերը տարել են իրենց գյուղերը⁴: Շատերն էլ, չկարողանալով տանել սպասվելիք խոշտանգումները, իրենք էին սպանում երեխաներին ու կանանց, այնուհետև՝ իրենց: Բախչիենց Կարոյի մեծ տղան՝ դեղագործ Միսակը, որի կինը ռուս էր, տեսնելով, որ ասկյարն իր ու երեխաների աչքի առաջ փորձում է բռնաբարել կնոջը, չի հանդուրժում այդպիսի խայտառակությունը, սպանում է այդ վայրենուն, բայց վախենալով, որ տնեցիներին մեծից փոքր չարաչար կմորթեն, մորֆի է սրկում բոլորին, ապա՝ և իրեն: Մակայն տեսնելով, որ ներգործությունը ուշանում է, կտրում է բոլորի և իր արյունատար երակները⁵:

Նայերի նկատմամբ բռնությունները շարունակվում են նաև կոտորածներից հետո: Ըստ Կարսի Մբ. Լուսավորիչ եկեղեցու ծխատեր Կորյուն քահանա Քոթանջյանի վկայության՝ կենդանի մնացածներին վերադարձնում են քաղաք, տղամարդկանց՝ առանձին, կանանց՝ առանձին, իբր իրենց տներում բնակեցնելու նպատակով, սակայն տեղավորում են կայարանի կողմերում գտնվող տախտակյա պահեստանոցներում և քաղաքային բանտերում: Բանտարկվածներին կողոպտում և մերկացնում են, օրեր շարունակ քաղցի ու ծարավի մատնում: «Կանանց հետ պատահածը... աննկարագրելի էր, այս դժբախտները կիսամերկ դարձան իրենց տները»⁶:

Զմռանը հայ բնակչության բռնի տեղահանությունների ժամանակ, նույնիսկ չէին դադարում բռնությունները կանանց ու աղջիկների նկատմամբ: Այդպիսի մի սոսկալի դեպք է տեղի ունենում Ղզլախչախի կայարանում: Երբ գնացքը կանգնում է հիշյալ կայարանում, ասկյարները մտնում են մի վագոն, ծեծում ու կողոպտում են մարդկանց, հետո 17-ամյա դեռատի աղջկան բռնաբարում են ծնողների ու գաղթականների ներկայությամբ⁷:

Թուրք-հայկական պատերազմի ընթացքում միայն Կարսի նահանգում

¹ ՀԱՍ, ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 35, 36:

² **Ներսիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 145:

³ ՀԱՍ, ֆ. 114, ց. 2, գ. 33, թ. 43:

⁴ Տե՛ս **Ներսիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 146:

⁵ Տե՛ս **Ալեքսանդրյան Ա.**, նշվ. աշխ., էջ 78:

⁶ Տե՛ս **Ավետիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 101:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 104:

քեմալական գործերը կոտորեցին, գերեվարեցին տասնյակ հազարավոր հայերի, չինայեցիներն անգամ Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեի խնամքի տակ գտնվող 6000 որբ հայ երեխաներին, որոնց չնչին մասը մնաց Հայաստանում¹: Ասկյարները շարունակում են իրենց բռնարարքները ամերիկյան որբանոցներում ապաստանածների նկատմամբ՝ կոտորելով կամ առևանգելով նրանց: Ամեն գիշեր այնտեղից դեռատի կույսեր են տանում, ինչպես նաև՝ որբանոցի հասակավոր աղջիկներին: Որբանոցում մնացողներից շատերը ահաբեկված խումբ-խումբ փախուստի են դիմում լեռնային գանազան անանցանելի ճանապարհներով, բայց նրանց մի մասին հետապնդող բարբարոսները գնդակահարում են: Կարսի անկումից ամիսներ անց մնացյալ որբերի հետ Ալեքսանդրապոլ է հեռանում նաև ամերիկյան որբանոցի ընդհանուր լիազոր գնդապետ Քոքսը²: Փոխարենը Էրզրումից Կարս են տեղափոխվում երկու հազար թուրք որբեր³: Հարկ է նշել, որ դառնալով թուրքական քաղաքականության զոհ՝ 1920 թ. նոյեմբերին Ամերիկյան օգնության կոմիտեի կողմից Ալեքսանդրապոլի որբանոցներից Կարս էին տեղափոխվել 10.000 հայ որբեր, որոնցից միայն 6000-ը կրկին վերադարձավ Ալեքսանդրապոլ (1921 թ. փետրվար-մարտ ամիսներին): Տեղափոխության ժամանակ թուրքերը հարձակվում են գնացքի վրա, տանում մեծ տղաներին և աղջիկներին, իսկ փոքրերը մահանում են ցրտից և համաճարակից, որոնց դիերը դուրս են նետում գնացքի պատուհաններից, որպեսզի համաճարակը չտարածվի⁴:

Հայրենագրկում և կողոպուտ

Կարսում կոտորածներն ուղեկցվում էին հայ բնակչության զանգվածային ունեզրկմամբ և թալանով: Տներն ու խանութները թալանվում էին, առգրավված սննդամթերքն ու ապրանքներն անմիջապես փոխադրվում էին Էրզրում⁵: Եթե կոտորածի զոհերը միայն հայերն էին, ապա թալանի պարագայում կողոպտվում էին ոչ միայն հայերը, այլև այլք⁶: Բռնությունների էին ենթարկվում նաև Կարսի շրջանի մուլականների տասնյակ գյուղեր⁷: Առան-

¹ Տե՛ս **Խաչատրյան Կ.**, Քեմալականների հայաջինջ քաղաքականությունը 1920-1923 թթ. // Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, 2001, թիվ 4, էջ 15: ՀՀ օրենք (նախագիծ) Թուրքիայի հանրապետության կողմից հայրենի բնօրրանի՝ Հայաստանի տարածքների բռնազավթումը (օկուպացիան) և հայերի մեծ հայրենագրկումը դատապարտելու մասին // <https://www.gov.am/files/docs/1651.pdf> /27.11.2020/:

² Տե՛ս **Ավետիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 103:

³ Տե՛ս **Խաչատրյան Կ.**, նշվ. աշխ., էջ 15:

⁴ Տե՛ս **Ալեքսանյան Կ.**, Մերձավոր Արևելքի նպաստամատույց ամերիկյան կոմիտեի գործունեությունն Ալեքսանդրապոլի գավառում 1919-1921 թթ. // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», 2018, թիվ 21, էջ 132-134:

⁵ Տե՛ս Կարսում, Ալեքսանդրապոլում, էջ 4: Ժամանակի մամուլը վկայակոչում է մի քանի հայերի պատմությունները, որոնք հասել էին Երևան՝ մի կերպ ճողոպրելով Կարսից:

⁶ Տե՛ս **Շասյեան Ա.**, նշվ. աշխ., էջ 2:

⁷ Տե՛ս **Խաչատրյան Կ.**, նշվ. աշխ., էջ 15:

ձին դեպքերում հայերի տների վրա հարձակվում էին նաև այլազգիները, մասնավորապես՝ տեղի և մոտակա գյուղերի մոլոկանները ավազակային խմբերի հետ՝ ասկյարների, քրդերի ու տեղական թուրքերի համագգեսներով, որպեսզի անճանաչելի մնան: Նրանք հարձակվում էին հայերի տների վրա, կողոպտում, սպանում և բռնաբարում կանանց ու աղջիկներին¹: Թուրքերն անմիջապես ձեռնամուխ եղան Կարսից Սարիղամիշ և Կարին փոխադրելու այն ամենը, ինչն արժեք էր ներկայացնում՝ զենք, արկեր, գործարանների ու արհեստանոցների մեքենաներ, կահ-կարասի և այլն², այսպիսով իրականացնելով պետական և մասնավոր ունեցվածքի կողոպուտ:

1920 թ. սկսված կոտորածները, այնուհետև բռնաճշումները ավարտվեցին մինչև 1921 թ. գարնանն իրականացված տեղահանումները. Կարսում և նահանգում մնացած հայերի բեկորները բռնի վտարվեցին իրենց հայրենի հողից: Այդ ամենը կատարվում էր ձմռան սառնամանիքին: Ոստիկանները հայ բնակչությանը նախօրոք զգուշացնում էին՝ պատրաստ լինել գնացքներով Ալեքսանդրապոլ տեղափոխվելու: Անտեսվում էին բնակիչների խնդրանքները՝ մինչև գարուն սպասել: Մեկնումը նշանակվում էր առավոտյան ժամը 8-ին, որպեսզի ոչ ոք չկարողանար որևէ իր տեղափոխել: Մարդիկ առավոտյան չէին կարողանում սայլ գտնել: Նրանց խնդրանքների պատասխանը լինում էին հայհոյանքը, հրացանի կոթերով և մտրակներով հարվածները: Դեռ չհեռացած բնակիչների տները թալանվում են: Կայարան հասցված իրերը դարձյալ խուզարկվում և թալանվում էին: Կայարաններում կողոպուտի նպատակով գնացքներն ուշացնում էին 1,5-2 ժամ, երբեմն՝ ավելի³:

Հայրենագրկված կարսեցիները հայտնվում էին ծանր վիճակում՝ ապահովություն չունենալով նաև Հայաստանի այլ վայրերում: Սանահնի մոտ անպատասպար 6000 հայ գաղթականների ճակատագրի մասին է հայտնում գաղթականների գործերով Թիֆլիսից եկած Մարիամ Չավարյանը: Վրաստանի կառավարությունը մերժում է թույլ տալ նրանց շարունակելու ճանապարհը Վրաստանի տարածքով: Սանահնի վրաց իշխանությունը հայտնում է, որ եթե Հայաստանի կառավարությունը կարգադրություն չանի այդ հարցով, նրանք դուրս կհանեն գաղթականներին Վրաստանի տարածքից: Չավարյանը դիմում է Ղարաքիլիսայի հեղկոմին, որպեսզի միջոցներ ձեռք առնեն գաղթականներին տեղափոխելու հարցում: Հեղկոմը հայտնում է, որ իրենք նման լիազորություն չունեն, բայց մինչ Երևան դիմելը գաղթականներով լեցուն մի հինգվագոնանոց գնացք ուղարկում է Ալեքսանդրապոլ: Գնացքում է լինում նաև Ղարաքիլիսայից թուրք սպա իր հետևորդներով: Ջաջուռի թունելի մուտքի առջև գնացքը խրվում է ձյան մեջ և կանգ առնում՝ մնալով երկու օր: Ջաջուռի թուրք զինվորները և խուժանը, տեղեկանալով այդ մասին, գիշերը հարձակվում են

¹ Տե՛ս **Ավետիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 102:

² Տե՛ս **Մարգարյան Ե.**, նշվ. աշխ., էջ 498:

³ Տե՛ս **Ավետիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 103-104:

գնացքի վրա և թալանում գաղթականներին՝ շատերին թողնելով միայն ներքնաշորերով: Մարսափահար գաղթականները մեկին ուղարկում են Ղարաքիլիսա՝ Հեղկումից խնդրելով նոր գնացք՝ վերադառնալու համար, որովհետև այդտեղ մնալու դեպքում նրանց սպառնում է թուրքական կոտորած: Ահաբեկված գաղթականները հեղկումի ջանքերով վերադառնում են Ղարաքիլիսա¹:

Կարսի նահանգն իր գավառներով Հայաստանի Հանրապետության հարուստ, բարեբեր և կենսական նշանակության նահանգներից էր²: Թուրքերի կողոպուտի հետևանքով նրա բնակչությունը ունեզրկվեց, իսկ Հայաստանի Հանրապետությունը կորցրեց իր տնտեսական նշանակության նահանգներից մեկը: Կարսը իր մեծությամբ Հայաստանի Հանրապետության երրորդ խոշոր քաղաքն էր (Երևանից և Ալեքսանդրապոլից հետո) և պատմական Հայաստանի երբեմնի մայրաքաղաքը:

Թուրքերը Կարսում տեղի բնակչության հետ սրի են քաշում նաև Վանանդի նահանգի տարբեր շրջաններից, գյուղերից ու քաղաքներից այստեղ ապաստանած հայ բնակչությանը: Նրանք, ովքեր Կարսի անկումից հետո դիմել էին փախուստի և հասել Ալեքսանդրապոլի գավառ, տեղի բնակչության հետ կոտորածի են ենթարկվում Շիրակի նահանգի տարբեր վայրերում: Ալեքսանդրապոլի անկումից հետո վիճակն ավելի աղետալի դարձավ: Ալեքսանդրապոլից մինչև Նալբանդ կայարանը ամեն ինչ գտնվում էր թուրքերի ձեռքում³: Հետևաբար փախուստի դիմած և փրկության ակնկալիքով այս շրջաններում պատսպարված Կարսի նահանգի բնակիչներն ապահով չէին նաև այդտեղ:

Այսպես, օրինակ՝ 1920 թ. նոյեմբերի 15-ից 18-ը Փամբակի հովտի (Ղարաքիլիսայի գավառ) Ղալթախչի (այժմ՝ Հարթագյուղ Լոռու մարզում), Ղարաբոյա (այժմ՝ Խնկոյան Լոռու մարզում), Աղբուլաղ (այժմ՝ Լուսաղբյուր Լոռու մարզում) գյուղերում տեղի բնակչության հետ կոտորածի են ենթարկվել նաև Կարսի և Ալեքսանդրապոլի շրջաններից այստեղ ապաստանած 7500 փախստականներ⁴: Շատերին հաջողվում է գնալ նոյեմբերի 18-ի զինադադարով սահմանված Նալբանդ կայարանով անցնող թուրք-հայկական զորքերի «չեզոք գոտի» և իրենց փրկությունը գտնել Ղարաքիլիսայի գավառի այլ բնակավայրերում: Բռնագաղթի հետևանքով Ալեքսանդրապոլում հաստատված կարսեցի գաղթականներից շատերը և հատկապես նրանց երեխաները սովամահ են լինում: Քաղաքից գրեթե ամեն օր սայլերով երեխաների դիեր էին տանում⁵:

¹ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 124, թ. 11, ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 39:

² Տե՛ս Մենակ Ա., Կարսի նահանգի նշանակությունը // «Յառաջ», 1920, թիվ 247, էջ 3:

³ Տե՛ս Մարգարյան Ե., նշվ. աշխ., էջ 498:

⁴ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 124, թ. 6:

⁵ Բանասաց՝ Հռիփսիկ Հարությունյանի (ծնվ. 1926 թ. Աղբուլաղ, ականատես՝ Զարդար Հովհաննեսի Հարությունյանի (ծնվ. 1880 թ., Բվիկ, Կարսի մարզ) աղջիկը: Պատմությունը գրի է առնվել մեր կողմից, գտնվում է տողերիս հեղինակի անձնական արխիվում:

Վանանդի նահանգում մեծ թիվ էին կազմում նաև ցեղասպանությունից փրկված և այստեղ բնակություն հաստատած արևմտահայ գաղթականները (Մուշի, Բասենի, Բաղեշի և այլ շրջաններից), որոնք, տեղի բնակիչների հետ դիմելով փախուստի, հասնում են Երևան¹: Կարսի նահանգից վերապրածները թուրքական գործողությունները անվանում էին «ջարդեր», կողոպուտը՝ «ալան-թալան», իսկ բռնաձնշումների հետևանքով առաջացած գաղթը՝ «փախեփախ»²:

Վերջաբան

Կարսում հայկական սրբությունները ոտնատակ էին տրվում: Կարսի նորաշեն Սուրբ Լուսավորիչ եկեղեցին ամբողջովին կողոպուտվեց: 940-ական թթ. կառուցված Կարսի Սուրբ Առաքելոց եկեղեցին թուրքերը կրկին վերածում են մզկիթի՝ գմբեթից հեռացնելով խաչը և դրա փոխարեն կիսալուսին տեղադրելով³:

«Կոմունիստ» թերթի 1921 թ. փետրվարի համարում Ա. Եսայանցը գրում է, որ հայ ազգաբնակչության նկատմամբ «տաճիկների Ղարսում կատարած անօրինակ գազանությունները գերազանցում են անգամ 1895-96 և 1908 թվականների սուլթան Համիդի և երիտասարդ թուրքերի ձեռքով կազմակերպված կոտորածներին»⁴:

Զանգվածային կոտորածներից հետո Հայաստանի Արտաքին գործերի կոմիսար Ա. Մոավյանը Կարսի շրջանում տիրող վիճակի մասին հեռագրում է ՌՄՖՍՌ ներկայացուցիչ Բ. Լեգրանին՝ նշելով, որ այնտեղից տազնապալից լուրեր են ստացվում հայ բնակչության մնացորդների և գերիների նկատմամբ թուրքական իշխանությունների վերաբերմունքի մասին: Նա հաղորդում է, որ թուրքական հրամանատարությունը շարունակում է հայերի ֆիզիկական ոչնչացման նախկին քաղաքականությունը՝ բնակչությանը արտքելով Թուրքիայի խորքերը: Նշում է 15 օր առաջ Կաղզվանի 500 հայ փախստականների Էրզրում քշվելու մասին՝ փաստելով, որ նույն ճակատագրին են արժանացել նաև Սարիղամիշի հայերը: Ա. Մոավյանը խնդրում է Լեգրանին առաջիկայում՝ մինչև Թուրքիայի հետ խաղաղության պայմանագրի կնքումը (հարկ չհամարելով Հայաստանի կառավարության անունից

¹ Տե՛ս Երևան հասած նոր փախըստականների վիճակը // «Յառաջ», 1920, թիվ 249, էջ 2:

² Բանասաց՝ Հռիփսիկ Հարությունյան: Բանասաց՝ Միշա Մինասյանի (ծնվ. 1928 թ., Ղալթախի), ականատես՝ Մարգարիտ Ավագյանի (ծնվ. 1905 թ., Փաղրվան, Կարսի մարզ) որդին: Բանասաց՝ Ասյա Ստեփանյան (ծնվ. 1942 թ.), ականատես՝ Հերիքնազ Գալստյանի (ծնվ. 1888 թ., Մազրա, Կարսի մարզ) թոռը: Բանասաց՝ Ազնիվ Աֆրիկյան (ծնվ. 1946 թ., Հարթագյուղ), ականատես՝ Ալաշկերտյան Վարդիթերի (ծնվ. 1908 թ., Ղզըլ Չախչախ, Կարսի մարզ) հարսը: Վերապրածների մասին տեղեկությունները և պատմությունները պահվում են տողերիս հեղինակի անձնական արխիվում:

³ Տե՛ս Ավետիսյան Մ., նշվ. աշխ., էջ 105:

⁴ Եսայեան Ա., Տաճիկները Ղարսում // «Կոմունիստ», 1921, թիվ 48, էջ 1:

գործել տվյալ հարցի վերաբերյալ և կամենալով իրենց գործողությունները համաձայնեցնել Բ. Լեգրանի հետ), միջոցներ ձեռք առնել՝ կոտորվող բնակչությանը փրկելու համար՝ կարծելով, որ ՌՍՖՍՌ ներկայացուցչի առկայությունը Կարսում թուրքերի համար զսպող նշանակություն կունենա¹:

Սկզբնաղբյուրների սակավության պատճառով դժվար է նշել, թե իրականում որքան մարդ է կոտորվել Կարսում և գերեվարվել: Որոշ սկզբնաղբյուրներում նշվում է, որ Կարսի մարզում (նահանգում) կոտորված բնակչության թիվը եղել է 12.000 (հիմնականում տղամարդիկ)²: Մեր կարծիքով՝ այս թիվը ամբողջությամբ չի համապատասխանում իրականությանը, ըստ որոշ սկզբնաղբյուրների՝ 15-ից մինչև 60 տարեկան տղամարդկանց մեծ մասը՝ շուրջ 30.000, գերեվարվել է³, որոնց մեծ մասը սպանվել է ճանապարհին և աքսորավայրում: Գերիների և սպանվածների թվերը մոտավոր ներկայացնում են առանձին պաշտոնյաններ ու անհատներ (Ա. Լյուվիկյանը, Ա. Եսայանցը, Գ. Գևորգյանցը, Վ. Իոնեսկոն և այլք):

Կարսում էր գտնվում Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Գ. Մարգարյանը, որը զբաղված էր Թուրքիայում մնացած հայ գերիների և որբերի հարցերով: 1922 թ. ապրիլի 4-ին Քյազիմ Կարաբեքիրի հետ ունեցած բանակցությունների ժամանակ վերջինս նրան խոստացել էր մեկ ամսվա ընթացքում վերջնական պատասխան տալ Թուրքիայում մնացած բոլոր հայ գերիների մասին⁴: Կարսից, Ալեքսանդրապոլից և այլ վայրերից բռնությամբ էրզրում քշված 60.000 հայ ռազմական և քաղաքացիական գերիների փոքր մասը միայն վերադարձավ Հայաստան, մնացյալը կոտորվել էր կամ մահացել ցրտից և սովից: 1922 թ. ԽՍՀՄ կազմավորմանը համընթաց Թուրքիայում և այլ երկրներում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունները լուծարվեցին⁵:

Կոտորված հայերի քանակի մասին տեղեկությունների սակավությունը պայմանավորված է Վանանդի նահանգի թուրքական ռազմակալումով, թուրքական իշխանությունների վարած քաղաքականությամբ և հետո կնքված Մոսկվայի և Կարսի պայմանագրերով, որից հետո հայերը հնարավորություն չունեցան համապատասխան հանձնաժողովներով աշխատանք տանել այնտեղ, ինչպես դա կատարվեց Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի գավառներում:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Կարսի նահանգից փրկվել են հիմնականում կանայք, որոնք հաստատվել են հատկապես

¹ Տե՛ս **Ներսիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 165:

² Տե՛ս Հայկական հարց հանրագիտարան, էջ 181:

³ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 35, 36:

⁴ ՀԱԱ, ֆ. 131, ց. 1, գ. 102, թ. 5:

⁵ Տե՛ս **Հակոբյան Ա.**, Կարսի 1921 թ. հոկտեմբերի 13-ի պայմանագիրը հայ ժողովրդի ճակատագրում, քննական հայացք 100-ամյա հեռավորությունից // «ՎԷՄ», 2021, թիվ 3, էջ 46:

Հայաստանի Հանրապետության Շիրակի նահանգում: Հետաքրքրական է, որ օրինակ՝ Փամբակի ռազմակալված տարածքում պատկերը հակառակն է. քեմալականների կողմից հիմնականում սպանվել են կանայք և երեխաներ, իսկ կոտորածներից առաջ գյուղերից հեռացած և հետո վերադարձած տղամարդիկ հետագայում ամուսնացել են Կարսի նահանգից բռնագաղթված և այդտեղ հաստատված կանանց հետ:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք փաստել, որ թուրքական բանակի կատարած զանգվածային կոտորածները Կարսում ցեղասպան գործողություններ էին: Թուրքերը ոչնչացրել են գրավյալ տարածքների հայ խաղաղ բնակչությանը, բռնությամբ տեղահանել նրանց: Այդ զանգվածային հանցագործություններն իրագործվում էին մարդկանց ֆիզիկապես ոչնչացնելու և հոգեկան խեղումներ պատճառելու մտադրությամբ, որոնք ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի՝ տվյալ հանցագործության հանցակազմի կարևոր բաղադրատարրերն են: Այսօրինակ քաղաքականությունը շարունակվեց նաև Շիրակի նահանգում, մասնավորապես՝ Ալեքսանդրապոլի գավառում: Կարսի բռնագաղթման, կոտորածների և բռնագաղթի հետևանքով հայ ժողովուրդը զրկվեց իր պատմական հայրենիքի մի մասից:

Վազգեն Հախոյան – Կարսի հայության կոտորածը 1920-1921 թթ.

Հռդվածում ներկայացվում են 1920-1921 թթ. քեմալականների կողմից Կարս քաղաքում հայ խաղաղ բնակչության նկատմամբ իրականացված կոտորածները, բռնաճնշումներն ու թալանը և նրանց հետապնդած նպատակները: Կարսի մարզը միշտ եղել է թուրքական իշխանությունների թիրախում: Նրանց վարած ազգային-կրոնական, սոցիալ-տնտեսական և շարունակական ցեղասպան դրսևորումներով արտահայտվող հայահալած քաղաքականության հետևանքով հայերի թիվը այդ տարածքում պարբերաբար նվազել է: 1920 թ. տեղի ունեցած թուրք-հայկական պատերազմը ողբերգական հետևանքներ է ունեցել Վանանդի և Շիրակի նահանգների համար: Կարսում երեք օր տեղի են ունեցել դաժան ու արյունալի կոտորածներ: Տեղի բնակիչների հետ կոտորվել են նաև քաղաքում պատսպարված նահանգի բնակիչները, որոնք փրկության ակնկալիքով շտապել էին այդտեղ: Սպանվել են հազարավոր մարդիկ՝ կանայք, երեխաներ, ծերեր: Տղամարդկանց, պատանիների և զինվորների մեծ մասին գերեվարել են, որոնցից շատերին սպանել ճանապարհին և աքսորավայրում: Բռնությունների են ենթարկվել Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեի խնամքի տակ գտնվող որբերը: 1920 թ. սկսված կոտորածները ավարտվել են 1921 թ., մինչև գարուն իրականացված բռնի տեղահանումներով: Ուսումնասիրությունները և կատարված վերլուծությունները փաստում են անձնատուր եղած քաղաքում տեղի ունեցած ցեղասպան գործողությունների մասին, որի նպատակը հայ ժողովրդին իր հայրենիքից զրկելն էր: Կարսի նահանգի կոտորածները և հայաթափումը կարելի է համարել Հայոց ցեղասպանության շարունակականությունը՝ արդեն Արևելյան Հայաստանի տարածքում:

Վազգեն Ահոյան – Րեզնյա արмяն Կարս Ե 1920-1921 ՂՂ.

Կլյուչեձե սլոձա – Կարս, քրոձինցյա Վանան, քրոձինցյա Շիրակ, իսթրեբլենյա, կեմալիսթե, ղեոցիձե, օձեձիձե, սձեձեթևսթա, մեմուարյ, սիրօթյ, քրեննիկյ, ձեքորթացյա

Վ սթաթե քրեձեձեղենյա ղեզնյա, ղեքրեքսիոն և ղրաբեձի, օսթրեձեղենյա կեմալիսթա ղո օթոթոնոցյո կ միրձոմո արմյանսկօմո ղաթեղոնոցյո Վ քրոձե Կարս Վ 1920-1921 ղոձաձ, ա ղաձե քրեթրեձեղենյա ղե ղեղե. Կարսկայա օթաթթ ղեղա ղեղա միթենյո տրեթքիկ Վաթթեյ. Վ ղեզսլթաթե ղոլիթիկա ղրեթրեձեղենյա արմյան, ս ԵԵ ղացիօնալձո-ղեղիգիօզնյա, սօցիալձո-Եկոնօմիկեսկի և ղոսթայաննյա ղեոցիձալձենյա ղրօյաձեղենյա, ղիթենոթյ արմյան ղա Եթոյա տրրիթորիո ղոսթայաննո սօկրաթալաթ. Երեթքօ-արմյանսկայա ղոյձա 1920 ղ. ղեղա ղրադիկեսկե ղոսթեձեղենյա ղրա ղրօձինցյա Վանան և Շիրակ. Վ Կարսե ղրե ղրա ղրօսթիձո ղեթօկե և կրօձաձե ղրաքրաձե. Վ մեթե ս մեթնյա ղիթեղա ղեղա իսթրեբլենյա ղիթեղա ղրօձինցյա, ղրիօդիձեղենյա Վ քրոձե, կօթօրե ղոսթեթիլե ղաձա Վ ղաձեթե սթաթենյա. ղոդիղե ղեթսայա ղոձեթ – ղեղենցյո, ղեթյ, սթարիկյ. Բօլթիթնօթո մոջիձո, ղոձրօթքօձե և սօլձաթ ղոթալօ Վ ղրեն, մոդոցյ ղիթ ղեղա ղեղա ղեղա ղո ղոձոցյ և ղա ղա մեթե սթեղկա. ղեթօկօմո ղաթիլո ղեղա ղոձերղնոթյ սիրօթյ, ղաօձյաթե ղա ղոքեթենոյ Ամերիկանսկօմօ ղոմօթի Բլիձեղնո Վօսթօկո. ղա սօթօթե ղեղիթսթա, ղաձաձեղենյա Վ 1920 ղ., ղաձոնկիլե ղրիձնոձեղենյա Վսեղենյա, ղրօձոլձաձեղենյա ղո Վսնյա 1921 ղոձա. ղրօձեղենյա ղեթրօձեղենյա և աձալիզ ղոձաձեղենյա ղաթ ցեոցիձալձենյա ղեթսթեղենյա ղրօձե, ղեղո ղեթ ղեթսթեղենյա ղեղա ղիթենոթյ արմյանսկօմօ ղոձա ղեթ ղոձինոյ. ղեզնյա և Վսեղենոյ քարսկե արմյան մօձո սթաթե ղրօձոլձենոյ ցեոցիձալձենոյ արմյան ղեղա տրրիթորիո Վօսթօնոյ Արմենիո.

Vazgen Hakhoyan – Massacres of Armenians in Kars in 1920-1921

Key Words – Kars, Vanand province, Shirak province, massacres, the Kemalists, genocide, eyewitness, testimonies, memoirs, orphans, captives, homeland-deprived

The article presents massacres, repressions and looting of the Armenian civilian population in Kars by the Kemalists in 1920-1921. Kars province was always a target of the Turkish authorities. Due to the national and religious, socio-economic, and genocidal policies of continuous persecution of Armenians, the number of Armenians in that area was steadily declining. The Turkish-Armenian war of 1920 had tragic consequences for the provinces of Vanand and Shirak. Cruel and bloody massacres took place in Kars for three days. Along with the locals, the residents of the province, who had sheltered in the city in the hope for salvation, were massacred. Thousands of people were killed - women, children, the elderly. Most of the men, teenagers and soldiers were taken prisoner, many of whom were killed on the way to exile. The orphans under the care of the American Middle East Relief Committee were abused. The massacres and forced deportations, which had begun in 1920, continued till spring 1921. Research and analyses prove the genocidal actions that took place in the surrendered city, the aim of which was to deprive the Armenian people of their homeland. The massacres in Kars province and the eviction of the Armenians can be considered the continuation of the Armenian Genocide already in the territory of Eastern Armenia.

Ներկայացվել է 17.01.2022

Գրախոսվել է 31.01.2022

Ընդունվել է տպագրության 29.03.2022

Վազգեն Ահոյան – ղաձոց ցեղասթաձանօթյան ղանձարան-իձսսթիսթոնօթի սսսթիթանստ (van.karno@gmail.com)

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ, ԵՐԿՐԱՇԱՐԺԸ, ՀԱՅԵՐԻ
ՀԵՏԱՊՆԴՈՒՄՆԵՐԸ
ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԵՎ ԳԵՐՄԱՆԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ
(1988-1991 ԹԹ.)

Բանալի բառեր – Գերմանա-հայկական ընկերություն, Պետեր-Ֆրանկ Ոչյուելեր, Արա Բերքյան, Քրիստիան Հաննիկ, Բաֆֆի Քանդյան, «վերակառուցում», ինքնորոշում, երկրաշարժ, ցեղասպանություն, տարելից, խոշտանգում

1980-ական թթ. երկրորդ կեսին հայ ժողովուրդը, ոգևորված ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Միխայել Գորբաչովի (1985-1991) հոչակած «վերակառուցման» քաղաքականությամբ, հրապարակ հանեց տասնամյակներ ի վեր ծխացող Արցախյան հիմնախնդիրը՝ հույս ունենալով, որ այն, ի վերջո, արդարացի լուծում կստանա: 1988 թ. փետրվարին Ստեփանակերտում և Երևանում, ապա նաև՝ Խորհրդային Հայաստանի մյուս բնակավայրերում կազմակերպվեցին խաղաղ հանրահավաքներ ու ցույցեր՝ մարզը վերջինին վերամիավորելու պահանջով: Սակայն Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը հայության օրինական պահանջին արյունոտ պատասխան տվեց՝ փետրվարի 27-29-ին Սումգայիթում կազմակերպելով հայ բնակչության ջարդ¹:

Գերմանա-հայկական ընկերությունը (այսուհետև՝ ԳՀԸ), որը համակ ուշադրությամբ հետևում էր Անդրկովկասում ծավալվող իրադարձություններին, 1915 թ. ողբերգությունների դառը փորձից ելնելով, իրեն պարտավորված էր համարում գորավիզ լինել հայ ժողովրդի արդար պայքարին, աջակցել նրան, որպեսզի երաշխավորվեն արցախահայության մշակութային ազատությունն ու անվտանգ զարգացման հնարավորությունը, և վերականգնվեն նրա եկեղեցիներն ու պատմական մյուս հուշարձանները²: Հատկանշական է, որ սկզբից նեթ այն ձեռնամուխ եղավ արցախյան թեմայի համակողմանի լուսաբանմանը՝ իր պաշտոնական օրգան “Armenisch-

¹ Այս մասին մանրամասն տե՛ս Հայոց պատմություն: Դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, խմբ.՝ Միմոնյան Հր. Ռ., Երևան, 2012, էջ 704-716:

² Mitgliederversammlung // “Armenisch-Deutsche Korrespondenz” (այսուհետև՝ ADK), 1988, Juni, № 60, S. 4.

Deutsche Korrespondenz”-ի (այսուհետև՝ ADK-ի)¹ միջոցով ընթերցող հասարակությանը օբյեկտիվորեն ներկայացնելով հարցի պատմությունը, ծավալվող իրադարձությունների ընթացքը, գերմանական և միջազգային մամուլում այդ առնչությամբ հնչող կարծիքներն ու դրանց վերաբերյալ իր գնահատականները և այլն:

Այսուհանդերձ, ԳՀՀ-ի ղեկավարության համոզմամբ՝ մամուլում հարցի վերաբերյալ հրապարակումներ զետեղելը դեռևս ոչինչ էր: Անհրաժեշտ էր ստեղծել որոշակի, մնայուն արժեք ունեցող որևէ մի բան, որը կարող էր իրապես օգնել հայությանը: Խորհրդային Հայաստանը և Լեռնային Ղարաբաղն ունեին տնտեսական օգնության, առաջին հերթին՝ ենթակառուցվածքների ստեղծման կարիք: Արդյունաբերության զարգացմանն ու նոր աշխատատեղերի բացմանը կարող էր նպաստել երկաթուղին: Հետևաբար, ընկերության փոխնախագահ Արա Բերքյանն² առաջարկում էր կառուցել Կապանը Ստեփանակերտին կապող երկաթգիծ՝ շուրջ 100 կմ երկարությամբ, որպեսզի Սոււզայիթից, Բաքվից և Ադրբեջանի մյուս քաղաքներից տեղահանված հազարավոր հայերն ապաստանեին ոչ թե, օրինակ, Հյուսիսային Կովկասում կամ Ղազախստանում, այլ՝ Խորհրդային Հայաստանի արևելքում կամ Լեռնային Ղարաբաղում՝ տեղերում ձևավորված արդյունաբերության մեջ աշխատելու համար: Սակայն այդ հսկա նախագծի կիրարկման համար փոքրիկ Հայաստանը չուներ ֆինանսական միջոցներ: Ուստի կարծելով, որ եթե արտերկրում իրենք պահանջում էին Լեռնային Ղարաբաղի միավորումը Հայաստանին, ապա պետք է դրան նպաստեին նաև գործով, Ա. Բերքյանն առաջարկում էր, որ Կանադայում, ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայի երկրներում բնակվող հայությունը հանգանակություն կատարեր՝ նշված նախագիծն իրագործելու համար: Ըստ նրա՝ այդ եղանակով կարելի էր հավաքել շուրջ 100 մլն գերմանական մարկ³:

Ինչպես տեսնում ենք, Ա. Բերքյանն ակնկալում էր, որ ժողովրդական շարժումը կհասնի իր նպատակակետին, և Արցախը կվերամիավորվի Մայր հայրենիքին: Բնութագրական է, որ ADK-ի՝ 1988 թ. հունիսի համարում

¹ 1982 թ. ի վեր՝ ADK-ն խմբագրում էր դր. Արա Բերքյանը: Տե՛ս **Heyer F.**, Dr.- Ing. Ara Jean Berkian // ADK, 1994, März, № 83, S. 48: 1989 թ. մարտից այդ պաշտոնը զբաղեցրեց դր. Խրիստոփ Հեգերը, որը նաև ԳՀՀ-ի քարտուղարն էր: Տե՛ս **Berkian A. J.**, Liebe Leser // ADK, 1988, Dezember, 1989, Januar, № 62, S. 1:

² Ա. Բերքյանը (Արա Յան Բիլեզիկյան) ծնվել է 1934 թ. ապրիլի 20-ին Բեյրութում: Նախ ճարտարապետություն և ինժեներություն է ուսանել տեղի ամերիկյան համալսարանում, ապա՝ 1957 թ. Գերմանիայում հաստատվելուց հետո, Մյունխենի և Ախընի տեխնիկական համալսարաններում: 1969 թ. ընդունել է գերմանական քաղաքացիություն: 1976 թ. Դարմշտադտի տեխնիկական համալսարանում պաշտպանել է «Միջնադարյան Հայաստանի ամրաշինությունը» խորագրով թեզը՝ ստանալով ճարտարապետության և ինժեներության դոկտորի գիտական աստիճան: Մահացել է 1994 թ. փետրվարի 5-ին Վիսբադենում: Տե՛ս **Heyer F.**, op. cit., S. 47-48:

³ Տե՛ս **Berkian A. J.**, Vorschlag. Spendensammlung für eine Eisenbahnlinie Kapan-Stepanakert // ADK, 1988, Juni, № 60, S. 18-19:

հարցի առնչությամբ տպագրված իր հոդվածներից մեկում նա մեջբերում էր ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանի խոսքը՝ ուղղված Երևանի ցուցարարներին. «Գորբաչովը լավ է տրամադրված հայերի նկատմամբ. տվե՛ք նրան ժամանակ լուծում գտնելու համար»¹, ապա հավելում էր՝ «Համայն հայությունը՝ հույս ունի, որ այդ լուծումը արդար կլինի»²:

Այդ հույսերին հակառակ՝ մոսկովյան կենտրոնը, որն ազգերի ինքնորոշման իրավունքի իրացումը լուրջ վտանգ էր համարում կոմունիստական կայսրության համապարփակ տիրապետության համար³, 1988 թ. հուլիսի 18-ին մերժեց հայության մեծամասնության պահանջը և վճռեց, որ Լեռնային Ղարաբաղը պետք է մնա Խորհրդային Ադրբեջանի կազմում⁴: Այնուհետև որոշվեց Արցախ ուղարկել ԽՍՀՄ Կենտկոմի բաժնի վարիչ Արկադի Վուկուն՝ որպես Կենտկոմի Գերագույն խորհրդի նախագահության ներկայացուցիչ, հնրավորինս արագ իրագործելու համար մարզի տնտեսական և մշակութային զարգացման ծրագրերը՝ հոգուտ տեղի հայ բնակչության⁵:

Արցախահայության օրինական պահանջի մերժումը խոր հիասթափություն առաջացրեց բոլոր նրանց շրջանում, ովքեր խնդրի արդար լուծման հույս ունեին: 1988 թ. սեպտեմբերին Ա. Բերքյանն իր հոդվածներից մեկում այդ առիթով գրում էր, որ Կրեմլը վերջին որոշումն ընդունելիս կարծես թե առաջնորդվել է «Շները հաչում են, քարավանը շարժվում է առաջ» նշանաբանով⁶: «Բայց մենք պետք է մեզ հարցնենք՝ արդյո՞ք տեղին էին բոլոր ցույցերը, արդյո՞ք գործը չեն արագացրել, – հավելում էր նա: – Գուցե դեռ մեկ տարի պետք է սպասեի՞ն: Մյուս կողմից՝ արդեն 65 տարի անարդարություն է տիրում: Մեր քույրերն ու եղբայրները դեռ 20 տարի էլ՝ պետք է ընդունեն Ադրբեջանի ստրկությունը, այնքան՝ այնքան ժամանակ, մինչև որ կիրակա՛նացվի նոր ռեֆորմների քաղաքականությունը: Արդյո՞ք դա ողջամիտ է»⁷:

Այսուամենայնիվ, Ա. Բերքյանն իրադրաձությունների այդ հորիզոնում լույսի թույլ շողեր էր նշմարում: Նա դրական էր գնահատում այն, որ Կրեմլը հանձնաժողով էր ուղարկում Ստեփանակերտ՝ տեղում իրավիճակին ծանոթանալու համար, որ մշակութային հարցերում հայերին արդեն որոշ զիջումներ էին արվել⁸:

¹ Berkian A. J., Liebe Leser // ADK, Juni, № 60, S. 2.

² Նույն տեղում:

³ Սփորթեկյան Ռ. Լ., Արցախյան շարժման սկզբնավորումն ու ծավալումը (1988 թ. փետրվար-նոյեմբեր) // «ԼՀԳ», 2005, թիվ 2, էջ 46:

⁴ Տե՛ս Berkian A. J., Karabach-Arzach: Ereignisse im Juli/August 88 // ADK, 1988, September, № 61, S. 6-7:

⁵ Տե՛ս Heger Ch., Karabach. Sowjet-Armenien in der Aera der Perestrojka – Chronik der Ereignisse vom September bis zum Jahresende // ADK, 1988, Dezember, 1989, Januar, № 62, S. 32:

⁶ Տե՛ս Berkian A. J., Liebe Leser // ADK, 1988, September, № 61, S. 1:

⁷ Նույն տեղում, էջ 2:

⁸ Տե՛ս նույն տեղում:

Ինչևէ, 1988 թ. հուլիսի 18-ից ի վեր հաստատված հարաբերական անդորրը խախտվեց աշնանը, երբ սրվեցին ազգամիջյան հակասությունները: Բաքվի իշխանությունների սադրանքով՝ զինված ավազակախմբերը հարձակումներ սկսեցին Ադրբեջանի հայաշատ բնակավայրերի վրա՝ ջարդելով հայ բնակչությանը, կատարելով թալան և ավերածություններ: Կիրովաբադից (Գանձակ), Բաքվից, Նախիջևանից և մի շարք այլ վայրերից հազարավոր հայեր արտաքսվեցին: Նրանց մի մասն ապաստանեց Խորհրդային Հայաստանում¹: Այդ ծանր օրերին հայոց երկրին պատուհասեց մի նոր աղետ՝ դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժը, որի էպիկենտրոնը գտնվում էր Հայաստանի հյուսիսում՝ Երևանից 120 կմ հեռավորության վրա: Այն իվեց հազարավոր անմեղ կյանքեր, վայրկյանների ընթացքում հողին հավասարեցրեց Լենինական, Կիրովական, Ստեփանավան, Սպիտակ քաղաքների և դրանց շրջակայքում գտնվող շուրջ 160 բնակավայրերի շենք-շինությունների զգալի մասը²:

Երկրաշարժն ու դրա սարսափելի հետևանքները Հայաստանի կողմը գրավեցին համաշխարհային հանրության ուշադրությունը: Ամենուրեք, այդ թվում՝ Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունում (այսուհետև՝ ԳԴՀ) նախաձեռնում էին աղետյալների զանազան օգնություններ: ԳՀՀ-ն, ունենալով սահմանափակ նյութական հնարավորություններ, ձեռնամուխ եղավ կազմակերպական աշխատանքների: Այսպես՝ ընկերության քարտուղար դր. Խ. Հեգերը փորձում էր տարբեր ձեռնարկատերերի համոզել նվիրաբերություն կատարել երկրաշարժից տուժածներին օգնելու համար: ԳՀՀ-ի հանձնարարությամբ նույն աշխատանքին լծվեց նաև նրա բարեկամ տիկին Բալիկշյանը (Բադ Հոմբուրգ/Ֆրանկֆուրտ): Հենց նա էր, որ ընկերությանն օգնեց, ի թիվս այլ բաների, Երևան ուղարկել օդանավակայանի համար նախատեսված սարքեր՝ բեռնաբարձ մեխանիզմներ: Այդ սարքերը, որոնք օդանավակայանում արագացնում են բեռնաթափումը, մասամբ նվիրաբերել էին գերմանական «Lufthanza» և «Mercedes-Benz» ընկերությունները: ԳՀՀ-ի նախաձեռնությամբ աղետի գոտի ուղարկելու համար ձևավորվել էր նաև 23 ուսանողներից բաղկացած խումբ, որը, սակայն, գերմանական «Կարմիր խաչ»-ի անբավարար հովանավորության պատճառով չկարողացավ մեկնել³:

Այդ ամենին զուգահեռ՝ շարունակվում էր դրամահավաքը: 1989 թ. հունիսի դրությամբ հանգանակություններից հավաքված գումարը կազմում էր 2350 մարկ: Ընկերությունն այն լրացրեց իր զանձարանից՝ դարձնելով 2500

¹ Այս մասին մանրամասն տե՛ս **Heger Ch.**, Karabach. Sowjet-Armenien in der Aera der Perestrojka – Chronik der Ereignisse vom September bis zum Jahresende // ADK, 1988, Dezember, 1989, Januar, № 62, S. 32-35:

² Տե՛ս **Heger Ch.**, Erdbeben und Erdbebehilfe // ADK, 1989, März, № 63, S. 10:

³ Տե՛ս **Berkian A. J.**, Erdbeben in Armenien. Verdiente Helfer // ADK, 1988, Dezember, 1989, Januar, № 62, S. 4:

մարկ: Որոշվեց այդ գումարը փոխանցել «ԽՍՀՄ-ի հետ կապերի հեսսենյան ընկերությանը» (“Hessischen Gesellschaft für die Beziehungen mit der UdSSR”), որը մասնակցում էր ադետի գոտում դպրոցների վերակառուցման աշխատանքներին և ջանքեր էր գործադրում առանձնապես քիմիայի և ֆիզիկայի դասասենյակների կահավորման ու լեզվամարզարանների ստեղծման ուղղությամբ¹: Փոխանցումը կատարվեց սեպտեմբերի 1-ին՝ Վիսբադենի «Ցենտրալ հյուրանոց»-ում²:

Երկրաշարժից հետո Կրեմլը հույս ուներ, որ ճակատագրի այդ հարվածը «ուշքի կբերի» հայերին, և նրանք կհրաժարվեին իրենց պահանջից³: Այդ հույսերը, սակայն, չարդարացան: Խորհրդային Հայաստանում և Արցախում մթնոլորտը շարունակում էր մնալ շիկացած: Կենտրոնի ներկայացուցիչ Ա. Վոլսկին, չնայած ձեռնարկված որոշ քայլերին, չկարողացավ իրավիճակը վերցնել իր վերահսկողության տակ⁴: Այդ պայմաններում դեկտեմբերի 12-ին Մ. Գորբաչովը, որը երկրաշարժի առիթով ժամանել էր Հայաստան, Երևանում ժողովրդական շարժումը ղեկավարող «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին անվանեց «իշխանատենչ կոռուպցիոներներ», «տնտեսական հանցագործներ», «գողեր» և այլն ու հրահանգեց կալանավորել այդ «քաղաքական արկածախնդիրներին»⁵: Իսկ մարզի սոցիալ-տնտեսական խնդիրները լուծելու և այդպիսով բորբոքված հայությանն ապակողմնորոշելու նպատակով փոքր-ինչ անց Կրեմլն ընդունեց որոշում, որով Լեռնային Ղարաբաղում վերացվում էին տեղական իշխանության մարմինները՝ մարզխորհուրդն ու մարզկոմը, և ստեղծվում էր կենտրոնին ենթակա վարչական նոր մարմին՝ Հատուկ կառավարման կոմիտե՝ Ա. Վոլսկու ղեկավարությամբ: Այդ որոշումն ուժի մեջ մտավ 1989 թ. հունվարի 20-ից⁶:

Այդուհանդերձ, ո՛չ երկրաշարժի ավերումները, ո՛չ կենտրոնական իշխանության՝ շարժումը խեղդելուն ուղղված քայլերը չսանձեցին պահանջատեր հայությանը: Դեռ ավելին՝ ցույցերն ու հանրահավաքները բորբոքվեցին նոր թափով: Ստեղծվեց պայքարող բոլոր ուժերին համախմբող կազմակերպություն՝ Հայոց համազգային շարժումը (ՀՀՇ): Իր հերթին՝ Բաքվում ձևավորվեց Ադրբեջանի ժողովրդական ճակատը, որը պահանջում էր վերացնել Հատուկ կառավարման կոմիտեն, դադարեցնել հակահայկական գործողու-

¹ Տե՛ս **Röseler P.-F.**, Liebe Leser // ADK, 1989, Juni, № 64, S. 2:

² Տե՛ս **Röseler P.-F.**, Liebe Leser // ADK, 1989, September, № 65, S. 1:

³ Տե՛ս **Heger Ch.**, Karabach. Sowjet-Armenien in der Aera der Perestrojka – Chronik der Ereignisse vom September bis zum Jahresende // ADK, 1988, Dezember, 1989, Januar, № 62, S. 35:

⁴ Տե՛ս **Heger Ch.**, Sowjet-Armenien in der Aera der Perestrojka. Fortsetzung // ADK, 1989, März, № 63, S. 21:

⁵ Տե՛ս **Heger Ch.**, Karabach. Sowjet-Armenien in der Aera der Perestrojka – Chronik der Ereignisse vom September bis zum Jahresende // ADK, 1988, Dezember, 1989, Januar, № 62, S. 35-36:

⁶ Տե՛ս **Heger Ch.**, Sowjet-Armenien in der Aera der Perestrojka. Fortsetzung // ADK, 1989, März, № 63, S. 21:

թյուններին մասնակցած «հայրենասերների» քննությունը¹:

Արդեն 1989 թ. օգոստոսի կեսերին ռուս պետական գործիչ Գալինա Ստարավոյտովան անդրադառնալով Լեոնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակին, նշում էր, որ իշխանություններն այնտեղ կորցրել էին վերահսկողությունը: Միաժամանակ TACC-ը հաղորդում էր ադրբեջանցիների ու հայերի զինված բախումների, ամեն օր նոր զոհերի, Ադրբեջանի կողմից դեպի Հայաստան և Արցախ տանող երկաթգծերի փակման մասին, նշում էր, որ «անկլավը հայտնվել է շրջափակման» մեջ²: Իսկ “Moskau News”-ը իր հոդվածներից մեկը վերնագրել էր «Պատերազմ Ղարաբաղում» և նշում էր, որ «մինչև այժմ որևէ լուծում չի գտնվել»³:

Հարավային Կովկասի զարգացումներից խիստ մտահոգ՝ ԳՀԸ-ն 1989 թ. հոկտեմբերի 3-ին ուղերձ հղեց Բոնում խորհրդային դեսպան Ա. Յ. Կվիցինսկուն՝ կոչ անելով անհապաղ դադարեցնել Հայաստանի շրջափակումը, ինչը նաև խոչընդոտում էր երկրաշարժից տուժածների օգնության աշխատանքները: Սակայն դեսպանը հարկ չհամարեց պատասխանել ընկերությանը: ԳԴՀ-ի պետական գործիչները, որոնց ևս ԳՀԸ-ն դիմեց, միաձայն շեշտում էին, որ իրենք մեծ մտահոգությամբ հետևում են կովկասյան իրադարձությունների ընթացքին, բայց իրենց կառավարությունը միջամտություն կատարելու շատ փոքր հնարավորություն ունի, քանի որ «դա խորհրդային պետության ներքին խնդիրն է, որին կարող են լուծում տալ միայն մուսկովյան կենտրոնը և Կովկասի հարևան երկու հանրապետությունները»⁴: «Դա, բնականաբար, շատ հարմար տեսակետ է, որն անհաճո կերպով հիշեցնում է Առաջին համաշխարհային պատերազմում Ռայխի կառավարության դիրքը: ... Բայց միայն այդպիսի համարձակ նախաձեռնությունները (նկատի ունի միջամտությունները – Հ. Մ.) կարող են Խորհրդային Միությանը ցույց տալ, որ համաշխարհային հանրությունն անտարբեր չէ Անդրկովկասում տեղի ունեցողի նկատմամբ: Մարդու իրավունքների պաշտպանությունը և ինքնորոշման իրավունքի ապահովումը ներքին գործեր չեն»⁵,– գրում էր Պ.-Ֆ. Ռյոսելերը:

1989 թ. դեկտեմբերի 1-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեոնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ նիստում ընդունվեց «Հայաստանի միացյալ Հանրապետության» վերաբերյալ որոշում: Նախատեսվում էր ստեղծել «միասնական հանձնաժողով», որը պետք է որոշակի քայլեր ձեռնարկեր «հայ ժողովրդի՝ բռնությամբ միմյանցից տարանջատված երկու

¹ Sté u Heger Ch., Sowjet-Armenien in der Aera der Perestrojka. Fortsetzung // ADK, 1989, September, № 65, S. 8-9:

² Sté u նույն տեղում, էջ 9:

³ Röseler P.-F., Liebe Leser // ADK, 1989, Dezember, № 66, S. 1.

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 2:

հատվածների միավորման համար»: Նաև նախատեսվում էր Լեռնային Ղարաբաղի բնակչությանը տալ Հայաստանի քաղաքացիություն¹: Սակայն մեկ ամիս անց ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը չեղյալ հայտարարեց նշված որոշումը՝ համարելով այն հակասահմանադրական²:

Օգտվելով կենտրոնի՝ իր համար խիստ նպաստավոր քաղաքականությունից՝ Ադրբեջանի ժողովրդական ճակատը 1990 թ. հունվարին Բաքվում սանձազերծեց հայերի զանգվածային ջարդեր: Հունվարի 13-ին բազմահազարանոց հանրահավաքից հետո «հայության ոչնչացման» կոչ արվեց: Շուրջ հինգ հազար մարդուց բաղկացած զինված ամբոխը, նախօրոք մշակված ծրագրով և նախապես կազմված հասցեներով, հարձակվեց հայերի բնակավայրերի վրա՝ նրանց սպանելու և ունեցվածքը թալանելու նպատակով: Հայերը ենթարկվեցին անմարդկային խոշտանգումների: Այդ օրը վայրագությունների գոհ դարձավ գրեթե 400 մարդ: Այնուհետև հայերի արյամբ արբեցած Ադրբեջանի ժողովրդական ճակատը բացահայտորեն անցավ խորհրդային կարգերի տապալմանը: Միայն այդ ժամանակ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը Բաքվում արտակարգ դրություն հաստատեց և մեծ ուշացումով զորք մտցրեց քաղաք³:

Այդ անմարդկային ոճրագործությունից հետո գերմանախոս միջավայրում գործող հայկական կազմակերպությունները դիմումներ հղեցին Մ. Գորբաչովին՝ պահանջելով վերջապես արդարացի լուծում տալ Արցախյան խնդրին: 1990 թ. հունվարի 17-ին ԳՀՀ-ի անունից նամակ գրեց նաև պրոֆեսոր Պ.-Ֆ. Ռյոսելերը: Ընդհանուր գծերով անդրադառնալով շուրջ երկու տարում Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակին՝ նա առաջ էր քաշում հետևյալ հարցադրումները. ինչու՞ ԽՍՀՄ կառավարությունը չի կարողանում որևէ միջոց ձեռնարկել հայերին պաշտպանելու համար, և ինչու՞ խորհրդային զորքերը ուշ տեղակայվեցին Ադրբեջանում՝ հայերին փրկելու համար: Այնուհետև նա կոչ էր անում ամեն ջանք գործադրել նախևառաջ Արցախի խնդրին արդարացի լուծում տալու համար, որպեսզի հայերը կարողանային խաղաղ և անվտանգ ապրել իրենց բնօրրանում: «Լեռնային Ղարաբաղի հայերին տրամադրե՛ք ինքնորոշման իրավունք»⁴, – գրում էր նա:

ԳՀՀ-ի այդ նամակը, ըստ երևույթին, անպատասխան է մնացել, քանզի ADK-ի էջերում այդ առիթով ոչինչ չի նշվում: Եվ դա բնական է, եթե հաշվի առնենք ադրբեջանցիների՝ հայության նկատմամբ շարունակվող «պատժիչ» գործողությունները, որոնք տեղի էին ունենում կենտրոնի իմացությամբ ու հանցավոր համաձայնությամբ (բավական է հիշատակել 1991 թ. գարնանը

¹ Die Jüngste Entwicklung in Aryach/Karabach // Նույն տեղում, էջ 15-16:

² Տե՛ս Հայոց պատմություն, էջ 731:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 731-732:

⁴ **Röseler P.-F.**, Brief der Deutsch-Armenischen Gesellschaft an Gorbatschow vom 17. Januar 1990 // ADK, 1990, März, № 67, S. 27-28.

տեղի ունեցած «Օղակ» օպերացիան)¹:

Այդ օրհասական պայմաններում ԳՀԸ-ն դարձյալ փորձում էր ԳԴՀ-ի տարբեր քաղաքական գործիչների ուշադրությունը բևեռել Հարավային Կովկասի իրադարձությունների վրա և նրանց հիշեցնել, որ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել չարիքը կանխելու համար: Հատկանշական է, որ Պ.-Ֆ. Ռյոսելերը այդ առիթով ԳՀԸ-ի անունից 1991 թ. հունիսի 6-ին գրություններ ուղարկեց ԳԴՀ-ի նախագահին, կանցլերին և Արտաքին գործերի նախարարին²:

Արտաքին գործերի նախարար Գենշերի հանձնարարությամբ՝ Խորհրդային Միության հետ կապերի բաժանմունքի ղեկավարը հունիսի 12-ի պատասխան նամակում նշում էր, որ ինչպես արտասահմանյան այլ երկրները, ԳԴՀ-ն ևս այդ իրադարձությունների վրա ուղղակի ազդեցություն գործելու միջոց չունի, և իրենք կարծում են, որ Հայաստանի ու Ադրբեջանի միջև հակամարտության կարգավորման միակ ելքը խաղաղ բանակցություններն են: Ուստի իրենք կշարունակեն խրախուսել հակամարտության մեջ ներգրավված բոլոր կողմերին՝ վարվելու այդպես: Հունիսի 17-ին գրեթե նույնաբովանդակ պատասխաններ ստացվեցին նաև դաշնության նախագահի ու կանցլերի աշխատակազմերից³:

Այսպիսով, խնդիրը մնում էր չլուծված, ազգամիջյան ընդհարումները շարունակվում էին, իսկ Արևմուտքը, ինչպես միշտ, աչք էր փակում հայ ժողովրդի դեմ կիրառվող հանցագործությունների առնչությամբ:

1991 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանում անցկացված հանրաքվեին մասնակցած ընտրողների 94 %-ը քվեարկեց ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու օգտին: Իսկ օգոստոսի 30-ին Ադրբեջանի՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալուն, Լեռնային Ղարաբաղը պատասխանեց սեպտեմբերի 2-ին ընդունելով անկախության վերաբերյալ որոշում: 1991 թ. դեկտեմբերի 10-ին Ղարաբաղում անցկացված հանրաքվեն հաստատեց այս որոշումը՝ հավաքելով ձայների 98,2 %-ը: Ղարաբաղը ռազմական ուժով հետ գրավելու Ադրբեջանի փորձը ձախողվեց: «Լեռնային Ղարաբաղում և Լեռնային Ղարաբաղի համար» պատերազմը (1991 թ. դեկտեմբեր-1994 թ. մայիսի կեսեր), որը հայկական կողմից խլեց առնվազն 20.000, իսկ ադրբեջանական կողմից՝ 18.000 մարդու կյանք, ավարտվեց 1994 թ. մայիսի 12-ին Ռուսաստանի միջնորդած հրադադարով: Այդուհետ սկսվեց հակամարտության կարգավորման բանակցային փուլը⁴:

Պատերազմի տևողության ընթացքում ԳՀԸ-ն շարունակում էր հրապարակախոսական գործունեությունը՝ հասարակությանը ներկայացնելով Լեռնային Ղարաբաղում ծավալվող իրադարձությունների մանրամասները:

¹ Այս մասին մանրամասն տե՛ս Հայոց պատմություն, էջ 732-738:

² Տե՛ս **Heger Ch.**, “... mit Aufmerksamkeit und Sorge” // ADK, 1991, September, № 73, S. 23:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 23-24:

⁴ Տե՛ս **Hofmann T.**, Armenien. Analysen und Hintergründe, Bern, 2002, S. 3:

Ինչևէ, հաջորդ խնդիրը, որն ինչպես նախորդ ժամանակաշրջանում շարունակում էր զբաղեցնել ԳՀԸ-ին, Թուրքիայում բնակվող շուրջ 100.000 հայ քրիստոնյաների դրությունն էր: Թուրքական կառավարությունը հետևողականորեն շարունակում էր նրանց հետապնդումն ու հալածանքները, որի վկայություններից է Ա. Բերքյանի՝ այդ թեմայով ADK-ում տպագրած բազմաթիվ հոդվածներից մեկը՝ «Խտրականություն և խոշտանգումներ Թուրքիայում» խորագրի ներքո: Դրանում նա անդրադառնում է “Meinzer Allgemeine Zeitung”-ի 1989 թ. սեպտեմբերի 22-ի հաղորդմանը, որը ներկայացնում էր հայ հոգևորականի հետ պատահածը. ոստիկանները մի քանի ժամ տանջել էին նրան՝ ապտակել, մահակներով հարվածել, էլեկտրաշոկի ենթարկել՝ մեղադրելով Թուրքիայի տարածքում քրիստոնեական պետություն ստեղծելու համար քարոզչություն իրականացնելու: Թեև այդ հոգևորականին նրանք հետո ազատ էին արձակել, բայց շարունակում էին հետապնդել. նրա նամակները գրաքննվում էին, հեռախոսային խոսակցությունները՝ գաղտնալսվում, իսկ նրա կողմից մատուցվող պատարագի ընթացքին հետևում էին թուրքական գաղտնի ծառայությունները¹:

Նման դեպքերը բազմաթիվ էին, և այդ ծանր իրավիճակում ԳՀԸ-ին հույս էր ներշնչել Թուրքիայի՝ Եվրոպական միության (ԵՄ) անդամ դառնալու հեռանկարը: Ընկերությունը կարծում էր, որ այդ ուղղությամբ տարվող բանակցություններում Եվրոպական պետությունները Թուրքիային կստիպեին ճանաչել Հայոց ցեղասպանությունը, հայերին, ինչպես նաև քրիստոնյա և էթնիկ մյուս փոքրամասնություններին երաշխավորել քաղաքական լիարժեք իրավունքներ և նրանց շնորհել իրավական, սոցիալական և մշակութային հավասարություն²: Այդ հույսերով էր, որ 1989 թ. գարնանը ԳՀԸ-ն պատրաստեց մի զեկուցագիր՝ «Տեղեկագիր Թուրքիայում հայերի դրության վերաբերյալ» (“Bericht zur Lage der Armenier in der Türkei”), որն ուղարկեց ԳԴՀ-ի քաղաքական գործիչներին և մամուլին³:

Ինչպես գրում է Պ.-Ֆ. Ռյոսելերը, գերմանացի պաշտոնյաների արձագանքը այդ զեկուցագրին ցույց էր տալիս, որ նրանցից ոմանք այք էին փակում իրականության վրա և հետևում թուրքական քարոզչությանը: Այդ գործիչներն ընդունում էին, որ Թուրքիայի կառավարությունը վերջին մի քանի տարիների ընթացքում լուրջ ջանքեր է գործադրել մարդու իրավունքների դեմ անօրինական գործողությունները դադարեցնելու ուղղությամբ: Իսկ այլք, ըստ նրա, իրատեսորեն էին գնահատում իրավիճակը, քանզի նշում էին, որ տեղյակ են Թուրքիայում հայերի ծանր դրությանը: Ըստ նրանց՝ Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ին հնարավոր կլիներ միայն այն դեպքում, եթե այն ընդուներ ժողովրդավարության հիմնարար արժեքներն ու

¹ Տե՛ս **Berkian A. J.**, Diskriminierung und Folter in der Türkei // ADK, 1989, Dezember, № 66, S. 21:

² Տե՛ս **Röseler P.-F.**, Liebe Leser // ADK, 1990, März, № 67, S. 1:

³ Տե՛ս **Röseler P.-F.**, Liebe Leser // ADK, 1989, Juni, № 64, S. 2:

հարգեր մարդու իրավունքները: Թուրքիան, անշուշտ, ըստ Պ.-Ֆ. Ռյոսելերի, կատանձներ համապատասխան պարտավորություններ և կրնդուներ ներկայացված պայմանները: Բայց նա հույս էր հայտնում, որ եվրոպացի քաղաքական գործիչները հաշվի կառնեին պատմական փորձը և կվերահսկեին դրանց կատարումը, քանի որ Թուրքիան երբեք հավատարիմ չէր մնացել հայերի հանդեպ ստանձնած պարտավորություններին¹:

Ի հակադրություն ԳՀՀ-ի սպասումների՝ 1989 թ. դեկտեմբերին ԵՄ-ի անդամ դառնալու՝ Թուրքիայի դիմումը մերժվեց: «Իր դիմումի մերժումից հետո, – այդ առիթով գրում էր Պ.-Ֆ. Ռյոսելերը, – Թուրքիան այլևս կարիք չունի հաշվի առնելու եվրոպական երկրների կարծիքը: Այն կարող է փոքրամասնությունների նկատմամբ անարգել շարունակել ձուլման դաժան քաղաքականությունը»²: Ռյոսելերը հենց այս հանգամանքով է պայմանավորում նաև քննարկվող ժամանակաշրջանում Կոլկասի նկատմամբ Թուրքիայի հետաքրքրության աճը: «Պատահականություն է, որ Թուրքիան հենց հիմա է նորից շրջվում դեպի Արևելք, պանթուրքիզմը դարձյալ գլուխ է բարձրացնում և ձեռքը մեկնում դեպի հայերի երկիր և հեղում հայի արյունը»³, – գրում էր Ռյոսելերը:

Այսպիսով, Հայոց ցեղասպանությունից անցել էր 75 տարի, բայց ոչինչ չէր փոխվել, հայ ժողովրդին դաձյալ սպառնում էր ֆիզիկական ոչնչացման վտանգը: Ուստի ԳՀՀ-ն իր պարտքն էր համարում հասարակության ուշադրությունը բևեռել հայ ժողովրդի համար մահացու վտանգին և քաղաքական գործիչներին հիշեցնել, որ պարտավոր են մշակել հաստատուն և հայերի գոյությունը երաշխավորող լուծումներ⁴: Հատկանշական է, որ դեռ 1989 թ. սեպտեմբերի 24-ին Բրաունշվայգում տեղի ունեցած ընդհանուր ժողովում⁵ ԳՀՀ-ն որոշել էր 1990 թ. Հայոց ցեղասպանության 75-րդ տարելիցի առիթով Բոնում սկսել դասախոսությունների շարք⁶: Այն կազմակերպվելու էր քաղաքական դաշտի ներկայացուցիչների շրջանում, ելույթ էին ունենալու որակյալ մասնագետները, քննարկվելու էին ընթացիկ քաղաքական, տնտեսական ու պատմական թեմաներ, որոնք վերաբերում էին Հայաստանին ու

¹ Sté u Röseler P.-F., Liebe Leser // ADK, 1989, Dezember, № 66, S. 2-3:

² Röseler P.-F., Liebe Leser // ADK, 1990, März, № 67, S. 1.

³ Նույն տեղում:

⁴ Sté u նույն տեղում:

⁵ Այդ ժողովում նաև որոշվեց ԳՀՀ-ի կանոնադրության մեջ հստակ նշել դրա հիմնադրման տարին և ամսաթիվը: Ըստ այդմ՝ § 1-ի առաջին նախադասությունը ձևակերպվեց հետևյալ կերպ՝ «1972 թ. մարտի 5-ին վերահիմնադրված միությունը իրավահաջորդն է 1914 թ. հունիսի 16-ին Բեռլինում հիմնադրված և 1919 թ. «Գերմանա-հայկական ընկերություն» անունով գրանցված կազմակերպության, որը 1956 թ. ջնջվեց միությունների գրանցամատյաններից»: Sté u Heger Ch., Niederschrift der Mitgliederversammlung der Deutsch-Armenischen Gesellschaft e. V., Mainz am 24.09.1989 in Braunschweig // ADK, 1989, № 66, S. 14:

⁶ Sté u նույն տեղում:

տարածաշրջանին: Այդ կերպ ընկերությունը ցանկանում էր ուղղակիորեն դիմել այն անձանց ու ընկերություններին, որոնց չէր կարող հասնել ADK-ի միջոցով¹:

Դասախոսությունների մեկնարկը տրվեց 1990 թ. սեպտեմբերի 8-ին՝ կազմակերպական հարցերում Բոնի հայկական Արուվյան համայնքի գործուն մասնակցությամբ², որը կոչվեց «Գերմանա-հայկական ընկերության բոնյան դասախոսությունների շարք»³: Դաշնային կառավարության՝ Բեռլին տեղափոխությունից հետո դասախոսությունները շարունակվեցին այնտեղ՝ կոչվելով «Գերմանա-հայկական ընկերության բեռլինյան դասախոսությունների շարք»⁴:

Անդրադառնալով ԳՀԸ-ի վարչությանը՝ նշենք, որ այն 1988-1991 թթ. ներկայանում էր հետևյալ կազմով՝ պրոֆեսոր Պ.-Ֆ. Ռյոսելեր (նախագահ), դոկտոր Ա. Բերքյան (փոխնախագահ), Եղիշե Միքայել Դավիթյան (գանձապահ), դոկտոր Խ. Հեգեր (քարտուղար): 1991 թ. մարտի 3-ին Քյոլնում կայացած ընդհանուր ժողովում ընտրվեց նոր վարչություն՝ դոկտոր Քրիստիան Հաննիկ⁵ (նախագահ), դոկտոր Բաֆֆի Քանդյան⁶ (փոխնախագահ), դոկտոր Խ. Հեգեր (քարտուղար), Ե. Մ. Դավիթյան (գանձապահ)⁷: 1992 թ. վերջինիս փոխարինեց Գրիգոր Փեհլիվանը⁸:

¹ St' u **Kantian R.**, Phoenix aus der Asche. Von der Neugründung 1972 bis heute // 100 Jahre Deutsch-Armenische Gesellschaft (1914-2014): erinnern. gedenken. gestalten (Kantian, R (Hg.)), Frankfurt am Mein, 2014, S. 196:

² St' u **Heger Ch.**, DAG und armenische Gemeinde Abowian: Vortragsfolge zum Gedenken // ADK, 1990, № 69, S. 47-48:

³ St' u **Kantian R.**, նշվ. աշխ., էջ 197:

⁴ St' u նույն տեղում:

⁵ Քրիստիան Հաննիկը ծնվել է 1944 սեպտեմբերի 3-ին Նեֆիսթեաուում (Բելգիա), 1964-1967 թթ. սովորել սլավոնական ու սեմական բանասիրություն և հնդեվրոպական լեզվաբանություն Բոնի համալսարանում, ապա՝ 1967-1969 թթ. բյուզանդագիտություն, սլավոնական բանասիրություն և փիլիսոփայություն Վիեննայի համալսարանում, որտեղ 1969 թ. ստացել է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: 1979 թ. նա դարձել է նույն համալսարանի պրոֆեսոր, 1981 թ. դասավանդել սլավոնական բանասիրություն Տրիերի համալսարանում, իսկ 1993-2009 թթ.՝ Վյուրցբուրգի համալսարանում: 1991 թ. ընտրվել է ԳՀԸ-ի նախագահ և այդ պաշտոնում մնացել մինչև 1997 թ.: Դր. Քրիստիան Հաննիկը Ավստրիայի (1990), Հյուսիսային Ռեյն-Վեստֆալյան (2001), Սաքսոնիայի (2002), Սլովենիայի (2007) գիտությունների ակադեմիաների թղթակից անդամ է և Միլանի ակադեմիայի լիիրավ անդամ (2009): St' u <https://www.sazu.si/en/members/christian-hannick>:

⁶ Բաֆֆի Քանդյանը ծնվել է 1945 թ. Ստամբուլում, սովորել է քիմիա Գյոթինգենի համալսարանում: 1999 թ. ընտրվել է ԳՀԸ-ի նախագահ: Հրատարակել է Հայաստանի վերաբերյալ մի շարք գրքեր, այդ թվում՝ «Փյունիկ մոխրի միջից. Հայաստանը ցեղասպանությունից 80 տարի անց» («Phönix aus der Asche - Armenien 80 Jahre nach dem Genozid», 1996), «Հայաստան. անցյալը և ներկան դժվար միջավայրում» («Armenien – Geschichte und Gegenwart in schwierigem Umfeld», 1999), «Այնտեղ հեռավոր Եվրոպա» («Dort das ferne Europa», 2006): St' u <https://www.ogl.at/archiv/biografien/bio/K/raffi-kantian/>:

⁷ St' u **Heger Ch.**, Deutsch-Armenische Gesellschaft e. V. gegr. Von Johannes Lepsius 1914. Niederschrift der Mitgliederversammlung vom 3.3.1991 // ADK, 1991, März, № 71/72, S. 4:

⁸ St' u Impressum // ADK, 1992, Dezember, № 78, unpagiert:

Ամփոփելով նշենք, որ Արցախը Մայր հայրենիքին վերամիավորելու համար շարժման սկզբնավորումից ի վեր ԳՀԸ-ն գորավիզ դարձավ պայքարի դուրս եկած հայությանը և իր հնարավորություններն ի սպաս դրեց նպաստելու խնդրի արդար հանգուցալուծմանը: Այն անմասն չմնաց նաև 1988 թ. ավերիչ երկրաշարժի հետևանքները վերացնելու համար ծավալվող աշխատանքներից: Միաժամանակ ընկերությունը շարունակում էր նախորդ տարիների պայքարը Թուրքիայում բնակվող հայերի դեմ իրականացվող հալածանքն ու հետապնդումները կանխելու և նրանց համար անվտանգ ապագա ստեղծելու ուղղությամբ:

Հրանուշ Սահակյան – Արցախյան հիմնախնդիրը, երկրաշարժը, հայերի հետապնդումները Թուրքիայում և Գերմանա-հայկական ընկերությունը (1988-1991 թթ.)

Արցախյան շարժման սկզբնավորումից ի վեր Գերմանա-հայկական ընկերությունը գորավիզ դարձավ հայ ժողովրդի արդար պայքարին՝ փորձելով ոչ միայն Գերմանիայի կառավարության միջամտությամբ նպաստել խնդրի հայանպաստ հանգուցալուծմանը, այլև այդ առիթով դիմումներ հղեց անմիջապես խորհրդային ղեկավարությանը: Սակայն Գերմանիայի կառավարությունը, ինչպես Առաջին աշխարհամարտի տարիներին, ձեռնպահ մնաց որևէ միջամտությունից՝ այն համարելով խորհրդային պետության ներքին խնդիր, որին կարող էին լուծում տալ մոսկովյան կենտրոնն ու հակամարտության մեջ ներգրավված անդրկովկասյան երկու հանրապետությունները՝ Հայաստանն ու Ադրբեջանը: Լուծման ելքը համարելով խաղաղ բանակցությունները՝ կառավարությունը միայն նշեց, որ ինքը կշարունակի խրախուսել հակամարտող կողմերին՝ վարվելու այդպես: Ինչ վերաբերում է խորհրդային պետության ղեկավարությանը, ապա այն այդպես էլ անարձագանք թողեց ընկերության դիմումները: Ինչևէ, քննարկվող ժամանակաշրջանում Գերմանա-հայկական ընկերությանը զբաղեցնող հաջորդ խնդիրը Թուրքիայում բնակվող շուրջ 100 հազար հայերի դրությունն էր: Վերջիններս այնտեղ ենթարկվում էին հետապնդման ու հալածանքների: Ընկերությունը փորձում էր իր երկրի ղեկավարությանը նրանց իրավունքների և շահերի պաշտպանության ուղղությամբ համապատասխան քայլերի մղել: Գերմանա-հայկական ընկերությունն իր ներդրումն ունեցավ նաև 1988 թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի ավերիչ երկրաշարժի հետևանքները վերացնելու աշխատանքներում:

Грануш Саакян – Арцахский вопрос, землетрясение, преследование армян в Турции и Немецко-армянское общество (1988-1991 гг.)

Ключевые слова – Немецко-армянское общество, Петер-Франк Рёселер, Ара Беркян, движение, «реконструкция», самоопределение, землетрясение, геноцид, годовщина, пытка, лекция, Кристиан Ханник, Раффи Кандян

С самого начала Арцахского движения Немецко-армянское общество стало оплотом справедливой борьбы армянского народа, не только пытаясь способствовать проармянскому решению проблемы посредством вмешательства правительства Германии, но и направляя непосредственно советскому руководству обращения в связи с

этим вопросом. Однако, как и в Первую мировую войну, немецкое правительство воздержалось от какого-либо вмешательства, считая этот вопрос внутренней проблемой советского государства, которую могли решить московский центр и две закавказские республики Армения и Азербайджан, вовлеченные в конфликт. Считая мирные переговоры способом решения проблемы, правительство лишь заявило, что оно будет продолжать поощрять конфликтующие стороны решить вопрос мирным путем. Что касается руководства Советского союза, то оно так и не ответило на запросы общества. Так или иначе, следующим вопросом для Немецко-армянского общества в рассматриваемый период было положение около 100 тысяч армян, проживающих в Турции. Армяне подвергались там преследованиям. Общество пыталось призвать правительство своей страны предпринять надлежащие шаги для защиты прав и интересов армян. Немецко-армянское общество внесло свой вклад также в работу по оказанию помощи пострадавшим от разрушительного землетрясения 7 декабря 1988 года в Спитаке.

Hranush Sahakyan – *The Artsakh Problem, the Earthquake, Persecution of Armenians in Turkey and the German-Armenian Society (1988-1991)*

Key Words – German-Armenian Society, Peter-Frank Röseler, Ara Berkyan, movement, “reconstruction”, self-determination, earthquake, genocide, anniversary, torture, lecture, Christian Hannik, Raffi Kantian

Since the beginning of the Artsakh movement, the German-Armenian Society has supported the fair struggle of the Armenian people and tried not only to contribute to the pro-Armenian solution to the problem through the intervention of the German government, but also sent appeals on this matter directly to the Soviet leadership. However, as in the First World War, the German Government refrained from intervening because it was an internal problem of the Soviet state that could be solved by Moscow and the two Transcaucasian republics – Armenia and Azerbaijan, which were involved in the conflict. Seeing peace talks as a way out, the government only stated that it would continue to encourage the conflicting parties to do so. As for the leadership of the Soviet state, it did not respond to the inquiries of the German-Armenian Society. During the period under discussion, another issue for the German-Armenian Society was the situation of about 100.000 Armenians living in Turkey. The latter were being persecuted there. The Society tried to urge the government of Turkey to take appropriate steps to protect the rights and interests of Armenians. The German-Armenian Society also delivered relief to the victims of the devastating earthquake of December 7, 1988 in Spitak.

Ներկայացվել է 20.12.2021

Գրախոսվել է 04.03.2022

Ընդունվել է տպագրության 29.03.2022

Հրանուշ Սահակյան – ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ (hranush.sahakyan@mail.ru)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐԴԲԵՋԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԽՍՀՄ-ՈՒՄ
(ըստ խորհրդահայ պաշտոնյաների հուշերի)**

Բանալի բառեր – ԽՍՀՄ, Խորհրդային Հայաստան, Մեղրի, զգայուն թեմաներ, սահմանային խնդիրներ, հուշագրություն, Նախիջևան, Արցախ

Հայ-ադրբեջանական հարաբերությունները իրավացիորեն բնութագրվում են որպես թշնամական, և առավել հաճախ դրա պատճառ են համարվում 1980-ական թվականների վերջին սկիզբ առած գործընթացները, Արցախի ինքնորոշման համար մղվող պայքարը, արցախյան պատերազմները: Ըստ այդմ թյուր տպավորություն է ստեղծվում, որ այդ հարաբերությունները կոնֆլիկտային են դարձել շատ արագ, և խորհրդային «եղբայրական ժողովուրդներից» հայերն ու ադրբեջանցիները հանկարծակի վերածվել են ռիսերիմ թշնամիների: Կարևոր ենք համարում փաստել, որ հայ-ադրբեջանական հարաբերություններն ունեին պասսիվ բացասականից ակտիվ բացասականի թշնամականի վերածվելու առնվազն երկու կարևոր հիմքեր և պատճառներ: Առաջին. XX դարասկզբին այս տարածաշրջանի նկատմամբ թուրք-ադրբեջանական անթաքույց ծրագրերը մի կողմից ուղղակի հակոտնյա էին Հայաստան պետության շահերին և գոյությանը ընդհանրապես, մյուս կողմից չլուծված շատ խնդիրներ էին մնացել: Երկրորդ. ԽՍՀՄ գոյության ամբողջ ընթացքում Խորհրդային Ադրբեջանի և՛ ղեկավարությունը, և՛ հասարակության տարբեր շերտերը շարունակել են համակարգված իրականացնել իրենց ծրագրերը, որոնք առավելապես վերաբերում էին հետևյալ նպատակ-խնդիրներին.

- Նախիջևանի, Արցախի վերջնական բռնազավթում և հայաթափում,
- Սյունիքով Նախիջևանի հետ ցամաքային կապի հաստատում, որը պանթյուրքիստական հեռահար նպատակ ուներ և 1920-ական թվականների սկզբին թուրք-ադրբեջանական չիրականացված հստակ ծրագիր էր,
- Խորհրդային Հայաստանի տարբեր տարածքների զավթում և իրենց համար կարևոր նշանակության որոշ տարածքների հայկական պատկանելության ապացույցների հերքում ու ոչնչացում:

Այս և սրանց հետ փոխկապակցված տարատեսակ խնդիրներ եղել են Խորհրդային Ադրբեջանի ու Հայաստանի հարաբերությունների բաց կամ քողարկված օրակարգում և երբեմն ունեցել են սրացումներ:

Այսօր ևս հայ-ադրբեջանական հարաբերությունները պայմանավորված

են նույն խնդիրներով, իսկ Ադրբեջանի քաղաքական գործելաճճը դարձել է ավելի ռասիստական և ծայրահեղական:

Վերը նշված խնդիրները տեղ են գտել Խորհրդային Հայաստանի տարբեր տարիների ղեկավարների, պետական-քաղաքական գործիչների հուշերում: Մույն հոդվածում հենվելով այդ սկզբնաղբյուրների վրա՝ ներկայացնում ենք հայ-ադրբեջանական նոր թափով ծավալվող կոնֆլիկտի կարևոր շերտերի հիմքերը, որոնց իմացությունը և վերլուծությունը կարող են օգտակար լինել մերօրյա գործընթացներում:

Խորհրդային Ադրբեջանի համար «զգայուն հայկական թեմաները»

Գաղտնիք չէ, որ քաղաքական և պատմական որոշ իրողությունների հետևանքով անարդարացիորեն Խորհրդային Ադրբեջանի կազմում հայտնված հայկական տարածքների և այնտեղ բնակվող բնիկների՝ հայերի նկատմամբ այդ պետության վերաբերմունքն ի սկզբանե եղել է խտրական և կրել բացահայտ թշնամական բնույթ: Նույնը դրսևորվել է նաև Ադրբեջանի այլ բնակավայրերում գտնվող հայերի պարագայում: Սակայն, բացի այդ, ընդհանրապես հայերին, հայկականությանը վերաբերող որոշ հարցեր և թեմաներ Խորհրդային Ադրբեջանում ստացել են հատկապես զգայուն կարգավիճակ և գտնվել պետական վերահսկողության տակ: Դրանցից մի քանիսը առանձնացնենք ստորև:

Ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանը փաստում է, որ ԽՍՀՄ շուրջ 70 տարվա գոյության ընթացքում խորհրդային իշխանությունները չեն կարողացել լուծել հայ-ադրբեջանական հակասությունները, որոնք հատկապես սրվել են Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Այդ ժամանակ, ի թիվս այլ հարցերի, հայ-ադրբեջանական հակասությունների ծիրում է հայտնվել նաև զորավար Անդրանիկ Օզանյանի կյանքի և գործունեության գնահատման հարցը. հայերիս համար Անդրանիկը հերոս էր, ադրբեջանցիների համար՝ թշնամի¹: Ըստ այդմ Անդրանիկի մասին Խորհրդային Հայաստանում տպագրվող գրքերը, հոդվածները, նրա հիշատակին նվիրված միջոցառումները միշտ եղել են Խորհրդային Ադրբեջանի ղեկավարների ուշադրության կենտրոնում, և ամեն առիթով նրանք այդ հարցը բարձրացրել են խորհրդային կենտրոնական իշխանությունների առջև՝ իհարկե դրան տալով այլ գունավորում, այն է՝ Հայաստանում գովերգում են «դաշնակցական, հակախորհրդային գործչի»: Այն, որ զորավար Անդրանիկն իրականում եղել է ոչ միայն ադրբեջանական, այլև թուրքական պետական, քաղաքական գործիչների և հասարակության լայն շերտերի համար թշնամու հավաքական կերպար, ապացուցում են և՛ տարբեր գործիչների հուշերում տեղ գտած բնութա-

¹ Տե՛ս Симо́нян Г., Из истории “политического оправдания” полководца Андраника, Ереван, 2016, с. 3:

գրումները, և՛ թուրք-ադրբեջանական կեղծ պատմագրության «պրոդուկտ» հանդիսացող գրքերն ու հոդվածները, և՛ պաշտոնական հոետորաբանությունը: Այս պայմաններում ԽՍՀՄ-ում Խորհրդային Ադրբեջանն ամեն կերպ փորձում էր հետապնդել թուրք-ադրբեջանական հավաքական թշնամու կերպարին՝ Անդրանիկին:

Խորհրդային Ադրբեջանի ղեկավարները շատ զգայուն են եղել և ակնդետ հետևել են Հայաստանում կամ հայերի շրջանում Արցախի հետ կապված ցանկացած զարգացման, այդ թվում և՛ ինդրի գիտական, և՛ անգամ գեղարվեստական արժարժումներին: Այսպես, 1947 թ. հունիսի 21-ին Ադրբեջանի ղեկավար, 1933-1953 թթ. Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Միրջաֆար Բադիրովը նամակով պաշտոնապես դիմել է ՀամԿ(Բ)Կ Կենտկոմ՝ պահանջելով շրջանառությունից հանել 1946 թ. Երևանում հրատարակված գրող Մարիետա Շահինյանի «Խորհրդային Անդրկովկաս» գիրքը, որտեղ Լեռնային Ղարաբաղը անվանված է «հայկական երկրամաս» և «Հայաստանի մի կտոր»¹: Ի դեպ, հայ գրականության հանդեպ ադրբեջանական «հետաքրքրությունը» դրսևորվել է նաև հետագայում, երբ, օրինակ՝ 1956 թ. Երևանում Բաֆֆու «Կայծեր» վեպի վերահրատարակման առիթով Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Իմամ Մուստաֆանը նամակ է հղել ԽՄԿԿ Կենտկոմ՝ բողոքելով, որ սույն վեպը վտանգավոր է և կվնասի «ազգերի ինտերնացիոնալ բարեկամությանը»²:

Խորհրդային ժամանակաշրջանում ևս Ադրբեջանի տարածքում գտնվող հայկական հոգևոր-մշակութային ժառանգության հանդեպ այդ երկրի ղեկավարության և հասարակության վերաբերմունքը եղել է բացասական՝ վանդալիզմի ակնհայտ դրսևորումներով: Օրինակ՝ ադրբեջանցի ջարդարավանդալները պարբերաբար ոչնչացրել են Նախիջևանի տարածքում գտնվող հայկական խաչքարերը, իսկ Խորհրդային Ադրբեջանի ղեկավարները անգամ խոչընդոտել են Հայաստանի ղեկավարությանը հոգևոր ժառանգության փրկված մասունքները տեղափոխել Խորհրդային Հայաստան: Սրա նպատակն էր ոչ միայն ջնջել Նախիջևանի և այլ տարածքների հայկականության փաստերը, այլև չթողնել նույնիսկ մի փոքր ապացույց, որը թեկուզ հետագայում կվկայեր հայկական բնօրրանում իրականացված մշակութային եղեռնի մասին: Բայց, այնուամենայնիվ, Խորհրդային Հայաստանի ղեկավարներին երբեմն հաջողվել է հայկական հոգևոր-մշակութային ժառանգության որոշ նմուշներ փրկել՝ տեղափոխելով Հայաստան: Օրինակ՝ ՀԽՍՀ Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը 1977 թ. հոկտեմբերի 21-ին իր օրագրում գրում է, որ Բաքվում Անդրկովկասի ռազմական օկրուգի ռազմական խորհրդի նիստի ժամանակ Նախիջևանի խաչ-

¹ Տե՛ս **Վիրաբյան Ա.**, Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով, Երևան, 2001, էջ 93:

² Տե՛ս **Վիրակոչյան Ա.**, Մայրամուտի շեմին. հուշեր և մտորումներ, Երևան, 2019, էջ 303:

քարերի հարցը քննարկել է 1969-1982 թթ. Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Հեյդար Ալիևի հետ. «Հ. Ա. Ալիևի հետ լուծեցի Նախիջևանից արժեքավոր խաչքարերի տեղափոխման հարցը»¹:

Ադրբեջանում ատելությամբ են լցված եղել ոչ միայն հին հայկական պատմամշակութային ժառանգության հանդեպ, այլև շատ զգայուն էին Խորհրդային Ադրբեջանի սահմաններում գտնվող պատմական հայկական տարածքներում հայերին նվիրված նոր հուշարձանների, արձանների տեղադրման հարցում: Պատճառը և նպատակը բնականաբար նույնն էին. հայերի բնիկությունը, այդ տարածքների հայկական պատկանելությունը հաստատող ևս մեկ փաստի արձանագրումը թույլ չտալը: Այս խնդիրը ցայտուն դրսևորվել է այն ժամանակ, երբ ծրագրվել է տեղադրել ԽՍՀՄ կրկնակի հերոս, մարշալ Հովհաննես Բաղրամյանի կիսանդրին Խորհրդային Ադրբեջանի տարածքում գտնվող նրա ծննդավայր Չարդախլու գյուղում: Հ. Ալիևը, գործադրելով նաև սիրաշահելու դասական արևելյան մեխանիզմները, պնդել է, որ կիսանդրին տեղադրվի ոչ թե մարշալի հայրենի գյուղում, այլ Կիրովաբադում, որը պատմական հայկական Ուտիք նահանգի Գանձակ քաղաքն է, որի հայկական պատկանելության ժխտումը, սակայն, սկսվել էր ավելի վաղ, և ըստ ադրբեջանական պատմագրության ու քարոզչության՝ այդ ժամանակ դրա հայկական չլինելը հավանաբար ավելի «համոզիչ էր»: Մարշալ Բաղրամյանի կիսանդրու հետ կապված այս դրվագի մասին իր հուշերում պատմում է Խորհրդային Հայաստանի հայտնի պետական գործիչ Ալեքսան Կիրակոսյանը. «Կիրովաբադում տեղադրելու էին մարշալ Բաղրամյանի կիսանդրին: Մարշալի հետ վիճում էի, ասում էի, որ դա Ալիևի ցանկությունն է, պնդում էի, որ կիսանդրին պիտի տեղադրվի միայն Միության կրկնակի հերոսի հարազատ ծննդավայրում՝ Չարդախլու գյուղում: Ի վերջո հաղթեց Ալիևի ցանկությունը»²:

Լեռնային Ղարաբաղի հարցը և Խորհրդային Հայաստանի ղեկավարները

Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը անարդար ձևով Հայաստանից անջատելու և Խորհրդային Ադրբեջանի ենթակայության տակ դնելու ԽՍՀՄ ղեկավարության քայլը անընդունելի է եղել հայության բոլոր շերտերի համար: Այդ նույն մտտեցման բացահայտ կամ գաղտնի կրողներն են եղել ԽՍՀՄ-ում պետական պաշտոններ զբաղեցրած բազմաթիվ հայ կուսակցական-պետական գործիչներ: Դրա ապացույցներից է այն, որ հնարավորության ու առիթի դեպքում, իսկ երբեմն կենտրոնական իշխանությունների ծրագրերում չտեղավորվող սցենարներով Խորհրդային Հայաստանի ղեկավարները ժամանակի հասարակական գործիչների, մտավորականների հետ բարձրացրել են

¹ Дни сквозь строчки. Из рабочих дневников Карена Демирчяна, Ереван, 2010, с. 55.

² Կիրակոսյան Ա., նշվ. աշխ., էջ 219:

Արցախը և Նախիջևանը Հայաստանին վերամիավորելու հարցը:

Դրանցից հարկ է առանձնացնել 1937-1953 թթ. Խորհրդային Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանի (Արութինով) քայլը, որը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սկսված հայրենադարձության և ԽՍՀՄ կողմից Թուրքիային հողային պահանջներ ներկայացնելու ժամանակահատվածում նամակով դիմել է ԽՍՀՄ ղեկավար Իոսիֆ Ստալինին՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերադարձնելու խնդրանքով:

Այսպես, 1945 թ. նոյեմբերին Ստալինին ուղղված նամակում Հարությունյանը գրում է.

«Իոսիֆ Վիսարիոնովիչ,

Հայաստանի տարածքին հարող Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը 1923 թվականից գտնվում է Ադրբեջանի ԽՍՀ կազմում: Այդ մարզի բնակիչները հիմնականում հայեր են: 153 000 բնակչությունից 137 000-ը հայ են»¹: Այնուհետև Խորհրդային Հայաստանի ղեկավարը բերում է փաստեր, հիմնավորումներ, որոնք առնչվում են գյուղատնտեսությանը, կրթությանը, և շարունակում. «Նկատի ունենալով այս և Լեռնային Ղարաբաղի բնակչության ցանկությունը՝ Կենտկոմը և Հայաստանի Ժողկոմխորհը ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի և միութենական կառավարության քննարկմանն են ներկայացնում Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը որպես Ղարաբաղի մարզ, Հայաստանի ԽՍՀ կազմ ներգրավելու հարցը: Հարցին դրական լուծում տրվելու դեպքում Հայաստանի Կենտկոմը և Ժողկոմխորհը կառավարություն կմտնեն Ղարաբաղի նախկին կենտրոն՝ սովետական կարգերի հաստատվելուց առաջ ավերված Շուշի քաղաքը վերականգնելու առաջարկությամբ»²:

Այդ նույն խնդրին Գ. Հարությունյանը անդրադարձել է նաև 1947 թ., երբ նոյեմբեր ամսին անձամբ հանդիպել է Ստալինին: Դրան ի պատասխան՝ Ստալինը հնարավոր է համարել հարցի քննարկումը, բայց միայն այն պարագայում, եթե այդ խնդրանքով միութենական կառավարությանը դիմեն Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարները միասին³, ինչը նշանակում էր հարցը մերժել կամ մտցնել փակուղի, քանզի պարզ էր, որ Ադրբեջանը երբեք նման քայլի չէր դիմի:

Հետաքրքիր է, որ արդեն 1953 թ.՝ Ստալինի մահից հետո, նոյեմբերին կայացած ՀԿԿ Կենտկոմի պլենումում, երբ լսվել է Հարությունյանին աշխատանքից ազատելու հարցը, նրան ներկայացված մեղադրանքներից է եղել

¹ **Գրիգոր շինարար:** Հուշեր Գ. Ա. Հարությունյանի (Արութինով)՝ 1937-1953 թթ. Հայաստանի կոմկուսի 1-ին քարտուղարի մասին, կազմող՝ Նամի Միկոյան, Երևան, 2016, էջ 232:

² Նույն տեղում, էջ 232-233:

³ Տե՛ս **Վիքրայան Ա.**, նշվ. աշխ., էջ 83:

նան վերոհիշյալ նամակը Ստալինին, որը որակվել է իբրև ազգայնական պահվածքի դրսևորում: Ի պատասխան՝ Հարությունյանը ասել է, որ Արցախի հարցով դիմել է Ստալինին «սեփական նախաձեռնությամբ, իբրև ԽՄԿԿ Կենտկոմի անդամ»¹:

ԽՍՀՄ տարիներին Արցախի և Նախիջևանի հարցերով շահագրգիռ և գործուն քայլեր ձեռնարկած պետական գործիչներից է 1966-1974 թթ. Խորհրդային Հայաստանի Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանը, որը 1966 թ. սեպտեմբերի 30-ին իր և ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Բաղալ Մուրադյանի անունից դիմել է ԽՄԿԿ Կենտկոմ Լեոնային Ղարաբաղը և Նախիջևանը Խորհրդային Հայաստանին վերամիավորելու հարցով, իսկ դիմումը ներկայացնելու ժամանակի ընտրությունը, ըստ պատմաբան Վլադիմիր Պետրոսյանի, պայմանավորված էր ԽՍՀՄ Սահմանադրության նոր նախագծի քննարկմամբ², որը կարող էր հարմար առիթ լինել տարածքային փոփոխությունների համար:

Այս նույն հարցի մասին իր հուշերում պատմում է նաև Ա. Կիրակոսյանը՝ մանրամասնելով. «1966 թ. ամռանը Հայաստանի գիտության և մշակույթի գործիչների մի մեծ խումբ նամակով (նամակի տակ 1906 ստորագրություններ են) դիմեց ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Բրեժնևին, Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանին և Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Վ. Ախունդովին՝ Նախիջևանը և Լեոնային Ղարաբաղը Հայաստանին վերադարձնելու պահանջով: Այդ օրերի համար անօրինակ խիզախություն դրսևորեց հանրապետության ղեկավարությունը՝ միանալով մտավորականության պահանջին»³: Հետագայում Բ. Մուրադյանը, «Սովետական Հայաստան» թերթին տված հարցազրույցում անդրադառնալով մտավորականների նամակին, ասել է. «Իսկ ինչ վերաբերվում է կոնկրետ այդ նամակին, ապա, իմ կարծիքով, գործի գլուխ կանգնած էր Մարտիրոս Սարյանը»⁴:

Արցախի վերամիավորման հարցը Ա. Քոչինյանը բարձրացրել է Խորհրդային Հայաստանի 50-ամյակի տոնակատարությունների առիթով Երևան այցելած Լեոնիդ Բրեժնևի առջև նաև 1970 թ.: Ա. Քոչինյանը Լ. Բրեժնևի և Խորհրդային Հայաստանի ղեկավարների հետ հանդիպմանը ելույթ է ունեցել, հանգամանալից ներկայացրել խնդիրը: Ինչպես տեղեկացրել է Խորհրդային Հայաստանի պետական գործիչ (Լենինականի քաղկոմի առաջին քարտուղար, այնուհետև Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ) Մուրադ Մուրադյանը, որն անձամբ ներկա է եղել այդ հանդիպմանը, «Ա. Ե.

¹ Կիրակոսյան Ա., նշվ. աշխ., էջ 297-298:

² Տե՛ս Պետրոսյան Վ., Խմբագրի կողմից // Քոչինյան Ա., Անավարտ հուշեր, Երևան, 2008, էջ 35:

³ Կիրակոսյան Ա., նշվ. աշխ., էջ 225:

⁴ Նույն տեղում, էջ 226:

Քոչինյանի հաղորդման ամբողջ ընթացքում Լ. Ի. Բրեժնևը նրան չընդհատեց, ոչ մի հարց չտվեց, միայն ծխում էր և ուշադիր լսում: Միայն Ա. Ե. Քոչինյանի հաղորդումը վերջանալուց հետո նա արտասանեց ընդամենը մի նախադասություն՝ «Ребята – это война»¹:

ԽՍՀՄ-ում Արցախի և Նախիջևանի հարցը անհանգստացրել է ոչ միայն Խորհրդային Հայաստանի ղեկավարներին, այլև հայազգի այլ գործիչների, որոնցից է մարշալ Բաղրամյանը: ՀԽՍՀ Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանը 1978 թ. օգոստոսի 9-ի իր օրագրային գրառման մեջ պատմում է Բարվիխայում հանգստանալիս նրա հետ իր հանդիպումների մասին, որոնց ընթացքում զրուցել են տարբեր թեմաների շուրջ: Հ. Բաղրամյանը ասել է, որ շատ է կապված հայկական հողի հետ, ընդ որում դեռևս երիտասարդ տարիներից: Նա խոսել է նաև Արցախի, Նախիջևանի մասին և որպես լուծում մտածել երկու տարբերակների մասին: Առաջինը՝ ինքնավարություն, սակայն տարբեր հանրապետությունների կազմում, օրինակ՝ Արցախը՝ Հայաստանի, իսկ Նախիջևանը՝ Ադրբեջանի կազմում: Հաջորդ տարբերակը Արցախի և Նախիջևանի վերադարձն է Հայաստանին, «որն ավելի դժվար է իր կարծիքով»²: Բաղրամյանը նշել է, որ այդ լուծումներից մեկը անպայմանորեն պետք է կյանքի կոչել, քանի որ խնդիրը «վնասում է երկու հարևան ժողովուրդների բարեկամությանը»³:

Մեղրիից դեպի Նախիջևան համաթյուրքական ճանապարհի ադրբեջանական նախագծի հարցը

Շարունակելով ուսումնասիրել ԽՍՀՄ ժամանակաշրջանում հայադրբեջանական խնդիրները՝ բախվում ենք նաև Սյունիքով (Մեղրիով) Ադրբեջանը բռնազավթված Նախիջևանին կապող ճանապարհի կառուցման խնդրին, որն այսօր ադրբեջանական ձևակերպմամբ անվանվում է «Զանգեզուրի միջանցք» և թուրք-ադրբեջանական այն ժամանակ հեռահար, իսկ հիմա ավելի ակնառու դարձող նպատակների համապատկերում ունի առանցքային տեղ: Ադրբեջանական նախագծով Մեղրիով անցնող ճանապարհ կառուցելու հարցը մշտապես եղել է Խորհրդային Ադրբեջանի կենսական հետաքրքրությունների կենտրոնում, ինչն արտացոլվել է ադրբեջանցի պետական տարբեր պաշտոնյաների և՛ քայլերում, և՛ հայտարարություններում, և՛ անգամ անձնական զրույցներում: Բնական է նաև, որ այդ ամբողջ գործընթացին հեռավար, սակայն շատ ուշադիր հետևել է Թուրքիան՝ իհարկե փորձելով շատ ակնհայտ չցուցադրել իր հետաքրքրվածությունը թուրք-ադրբեջանական համատեղ նպատակի հանդեպ, քանի որ դա կարող էր, ի վերջո, ընկալվել իբրև այլ պետության՝ ԽՍՀՄ-ի ներքին գործերին միջամտելու

¹ Պետրոսյան Վ., նշվ. աշխ., էջ 44:

² Дни сквозь строчки: из рабочих дневников Карена Демирчяна, с. 81.

³ Նույն տեղում:

փորձ: Մյունիքով ադրբեջանական նախագծով ճանապարհ կառուցելու խնդրին Խորհրդային Հայաստանի ղեկավարները արձագանքել են ընդգծված սկզբունքայնությամբ և այն մերժել՝ բերելով հիմնավոր փաստարկներ, քանի որ հստակ գիտակցել են այդ ամենի վտանգավոր հետևանքները: Նշված ճանապարհը կամ Մյունիքի հանդեպ հավակնությունները պանթյունրքիստական ծրագրի կարևոր ու բաղկացուցիչ մասերից են, որոնք սկսվել էին դեռևս մինչև Խորհրդային Հայաստանի ձևավորումը, և ինչպես ցույց են տալիս ներկայիս զարգացումները, շարունակվում է նաև մեր օրերում. այն նպատակ ունի ցամաքային ճանապարհով միմյանց միացնել Թուրքիան և Ադրբեջանը: Խորհրդային Հայաստանի տարբեր պաշտոնյաների հուշերում պահպանվել են այդ խնդրի վերաբերյալ բազմաթիվ փաստեր, կուլիսային զարգացումների նկարագրություններ, և այդ հուշագրական գրքերում աչքի է զարնում այն հանգամանքը, որ կոմունիստ հայ ղեկավարները փորձել են հնարավորինս մնալ ազգայինի դիրքերում:

Մեղրիի խնդրի մասին հուշագրական փաստեր կան, որոնք վերաբերում են 1937-1953 թթ. Խորհրդային Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Գ. Հարությունյանի կառավարման շրջանին և նրա անձին: Ա. Կիրակոսյանը իր հուշերում պատմում է, որ 1952 թ. դեկտեմբերին Գ. Հարությունյանի աշխատասենյակում ներկա է եղել նրա և Մ. Բաղիրովի հեռախոսագրույցին, որի ընթացքում Հարությունյանը շատ կոպիտ է խոսել ադրբեջանցու հետ. «Դե ի՞նչ եք ասում, Միրջաֆար, այդ հարցը բազմիցս քննության է առնվել Կենտկոմում, իսկ Դուք շարունակում եք որերորդ անգամ նույն բանը կրկնել: Դրանք անտեղի և ավելորդ խոսակցություններ են, հարցը վաղուց սպառված է... Ոչ Նորաշենը, ոչ Աղահանքերը... Այո, Ղարաբաղը նույնպես... Եվ ոչ մի կարգավիճակով...»: Այնուհետև երեք անգամ կրկնեց. «Է՛լ ինչ եք ուզում», և լսափողը վայր դրեց: Դրան հաջորդեց Բաղիրովի հասցեին մի շատ ծանր խոսք: ...Արդեն պաշտոնանկությունից հետո, 1957 թ. Թբիլիսիում, մասնավոր հանդիպման ժամանակ, մի քանի ընկերների ներկայությամբ, նրան հիշեցրի 1952 թ. հեռախոսային խոսակցությունը Բաղիրովի հետ: Հարությունյանը պազաբանեց, որ Մոսկվայում քննարկումների ժամանակ առաջարկություն էր եղել Մեղրիին փոխարինել Նախիջևանի մի մասի հետ: Գ. Հարությունյանը կտրականապես մերժել էր այդ առաջարկությունը, որովհետև լավ էր գիտակցում, թե այդ «գործողությամբ» ինչ իրական վտանգ կսպառնար Հայաստանի ռազմավարական անվտանգությանը՝ Մեղրիի կորստով Հայաստանը կհայտնվեր լիակատար անկլավային դրության մեջ, կկտրվեր հարևան Իրանից՝ վտանգելով Զանգեզուրը: Այդ տարբերակը Գ. Հարությունյանը համարում էր անչափ վտանգավոր, և դա՝ դեռ ԽՍՀՄ-ի առկայության պայմաններում»¹:

¹ Կիրակոսյան Ա., նշվ. աշխ., էջ 297-298:

Հաջորդող տասնամյակներում ևս Խորհրդային Ադրբեջանի քաղաքական օրակարգում Մեդրիի տարածքով ճանապարհ կառուցելու հարցը ոչ միայն շարունակում է մնալ որպես կարևորագույն նպատակ, այլև ակտիվանում է: 1980-ական թվականների առաջին կեսին այդ հարցի վերաբացման, ինչպես նաև կուլիսային և քաղաքական զարգացումների մասին օրագրային գրառումներ ունի Կ. Դեմիրճյանը: Այսպես, 1983 թ. հունիսի 15-ին նա գրում է նաև Մեդրիի ճանապարհի մասին, որը առաջ է քաշել ադրբեջանական կողմը. «Մեդրիի շրջանով ճանապարհի մասին (հարցը բարձրացրել է ընկեր Բադիրովը¹): Ես առաջարկված տարբերակը չընդունեցի: Ստրատեգիական առումով դա անընդունելի է»²: Արդեն 1983 թ. նոյեմբերի 11-ին Կ. Դեմիրճյանի օրագրային գրառման մեջ կարդում ենք. «Մոսկվայում Ալին Հ. Ա. (+ Ֆադեյ Սարգսյան) – կանչեց Վ. Ե. Բիրյուկովին³ և խնդրեց լուծել ավտոճանապարհի հարցը Մեդրիի շրջանով, որն անցնելու էր սահմանի երկայնքով: Ես պնդեցի այլ տարբերակի վրա (ոչ թե սահմանով, այլ թիկունքային կողմով): Ուղարկում է Բիրյուկովին տեղում լուծելու հարցը: Դա ինձ դուր չի գալիս: Ես Բիրյուկովին ասացի, որ մենք ոչ մի կերպ չենք համաձայնվի սահմանով անցնող տարբերակին: Դա ստրատեգիական առումով սխալ որոշում է»⁴: Այստեղ նկատենք, որ Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Հ. Ալինը 1982 թ. դարձել էր ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ (փոխվարչապետ) և ԽՄԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյի անդամ: Սակայն տեղափոխվելով Մոսկվա և դառնալով միութենական պաշտոնյա՝ նա շարունակել է իր ուշադրության կենտրոնում պահել ադրբեջանական խնդիրները և ամեն կերպ նպաստել Խորհրդային Ադրբեջանի ու պանթյուրքիստական տարբեր նպատակների իրագործմանը: Մեդրիով ճանապարհ կառուցելու հարցը՝ որպես կարևորագույն պանթյուրքիստական նպատակ, նույնպես եղել է Հ. Ալինի ուշադրության կենտրոնում, որով նա զբաղվել է անձամբ և դրա համար օգտագործել իր պաշտոնի բոլոր հնարավորությունները՝ վարչական ռեսուրսը:

Արդեն 1983 թ. նոյեմբերի 28-ին Կ. Դեմիրճյանի օրագրային գրառումում հանդիպում ենք թեմայի շարունակության մասին տեղեկության, որից պարզվում է, որ Վ. Բիրյուկովը եկել է Հայաստան այդ հարցի լուծման համար: Նա գրում է, որ Մեդրիով ավտոճանապարհ կառուցելու հարցով քննարկում է եղել, և հայտնում է հայկական կողմի որոշման մասին. «Որոշեցինք՝ առաջին տարբերակ՝ Կապանով, երկրորդ տարբերակ՝ Ծավով:

¹ Խոսքը 1982-1988 թթ. Խորհրդային Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Քյամրան Բադիրովի մասին է:

² Дни сквозь строчки: из рабочих дневников Карена Демирчяна, с. 189.

³ Վիկտոր Եֆիմի Բիրյուկովը ԽՍՀՄ Պետպլանի նախագահի տեղակալն էր, երկաթուղային, տրանսպորտային ոլորտի հայտնի մասնագետ:

⁴ Дни сквозь строчки: из рабочих дневников Карена Демирчяна, с. 201.

Իրենց առաջարկած (Ադրբ. ԽՍՀ) տարբերակը հարմար չէ և՛ տնտեսական, և՛ ստրատեգիական առումով: ...Ես ևս մեկ անգամ հրավիրեցի Բիրյուկովի ուշադրությունը այն բանի վրա, որ նոր ճանապարհը սահմանի երկայնքով կառուցել պետք չէ (ինչպես առաջարկում են ընկերները Ադրբ. ԽՍՀ-ից): Դա և՛ տնտեսապես (քանի որ քիչ մեքենա է անցնում, իսկ ճանապարհը շատ թանկ է), և՛ ստրատեգիական առումով ձեռնտու չէ: Մենք առաջարկում ենք Զանգեղան-Կապան-Մեղրի տարբերակը (այդ ճանապարհը արդեն գործում է Քաջարան-Մեղրիի գործարկումից հետո): Կամ Զանգեղան-Ծավ-Մեղրի, որը երկար է ընդամենը 4 կիլոմետրով ադրբեջանցի ընկերների առաջակած տարբերակից, բայց՝ 1/ ստրատեգիական առումով անվտանգ է, 2/ տնտեսապես նպատակահարմար է, քանի որ Մեղրիի շրջանում 8 հազար հեկտար տարածք չի զբաղեցվի»¹:

Հարցը կարծես թե մնում է առկախված, սակայն Կ. Դեմիրճյանի արդեն հաջորդ 1984 թ. օրագրային գրառումների մեջ կրկին հանդիպում ենք Մեղրիով ճանապարհի խնդրին: 1984 օգոստոսի 29-ի գրառման մեջ նա նշում է, որ Մեղրիի ճանապարհի հարցը քննարկել է Ե. Լիզաչովի² հետ և հավելում՝ «Մեղրիով ճանապարհի մասին (ադրբեջանցի ընկերների սխալ պահվածքը)»³:

Ադրբեջանական նախագծած ուղիով ճանապարհ կառուցելու հարցի լուծմանը հասնելու համար Հ. Ալիևը գործի է դրել ոչ միայն իր պաշտոնից բխող վարչական ռեսուրսները, այլև անձնական հարաբերությունները, այդ թվում և լավ հարաբերությունները Կ. Դեմիրճյանի հետ: Այսպես, 1985 թ. հունվարի 10-ին Կ. Դեմիրճյանը գրում է, որ Մոսկվայում հանդիպել է Հ. Ալիևի հետ, զրուցել են ընդհանուր հարցերի մասին շուրջ 45 րոպե: «Նրա նախաձեռնությամբ՝ Մեղրիով ճանապարհի մասին: Նա խնդրեց ինձ հանել առարկությունս: Ես պատասխանեցի, որ հարցն արդեն շատ է խորացել, և որ առանց փորձագիտական հանձնաժողովի որոշման հնարավոր չէ կողմնորոշվել: Նա. «Տո դու թքած ունեցիր այդ որոշման վրա: Ամեն ինչ քեզնից է կախված, ոնց ասես, այդպես էլ կլինի»: Նա ասաց, որ ինձ որպես եղբայր է խնդրում: Ես ասացի, որ մենք մեր որոշումը փոխելու համար հիմքեր չունենք: Նա. «Եթե դու այսպես խնդրեիր, ես քեզ Ադրբեջանի կեսը կտայի»⁴:

Կ. Դեմիրճյանի և Հ. Ալիևի վերոհիշյալ զրույցի մասին իր հուշերում գրում է նաև Խորհրդային Հայաստանի Մինիստրների խորհրդի նախագահ Ֆադեյ Մարգարյանը, որը ներկա է եղել այդ հանդիպմանը: Նա նախ նշում է, որ Ադրբեջանի կողմից Նյուվադի-Նախիջևան ուղիով ճանապարհ կառուցելու

¹ Дни сквозь строчки: из рабочих дневников Карена Демирчяна, с. 202.

² ԽՍՀՄ պետական գործիչ Եգոր Կուզմայի Լիզաչովը 1983-1990 թթ. եղել է ԽՍՀՄ Կենտկոմի քարտուղար:

³ Дни сквозь строчки: из рабочих дневников Карена Демирчяна, с. 233.

⁴ Նույն տեղում, էջ 248:

հարցին Հայաստանը դեմ է եղել, «քանի որ ճանապարհը պետք է կառուցվեր միայն քաղաքական նկատառումներից ելնելով»¹: Այնուհետև Ֆ. Սարգսյանը պատմում է, որ այդ ճանապարհի հարցը քննարկելու համար հանդիպել է Ադրբեջանի Մինիստրների խորհրդի նախագահ Հ. Ն. Սեիդովի հետ և համաձայնեցրել հարցը: «Մենք հանգիստ էինք, որ ամեն ինչ կլուծվի մեր օգտին: Մի քանի օրից մենք Կ. Ս. Դեմիրճյանի հետ եղանք Ս. Ս. Սմիրտյուկովի² մոտ: Երբ նրա մտոից դուրս եկանք, Կարեն Սերոբովիչը որոշեց մտնել Հ. Ա. Ալիևի մոտ (նա այն ժամանակ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալն էր, Քաղբյուրոյի անդամ): Նա մեզ շատ լավ ընդունեց, հետո ասաց, որ Կարեն Դեմիրճյանի հետ եղբայրական զրույց ունի: Ես թույլտվություն խնդրեցի դուրս գալ, «որպեսզի հեռախոսով զանգահարեմ», բայց Հեյդար Ալիևիչը առարկեց, ասաց՝ կարիք չկա, որ ես դուրս գամ:

Նա դիմեց Կարեն Դեմիրճյանին. «Կարեն, ես քեզ եղբայրաբար եմ խնդրում տալ համաձայնություն կառուցել ճանապարհ ըստ մեր նախագծի: Չես փոշմանի: Ես քեզ մեծ լավություն կանեմ»: Կ. Դեմիրճյանն ասաց. «Ոչ, այդ դեպքում ես չեմ կարող պատասխան տալ իմ ժողովրդի առաջ»: Հ. Ալիևը ևս մեկ անգամ խնդրեց. «Կարեն, մտածի՛ր, չես փոշմանի»: Կարեն Սերոբովիչը պատասխանեց, որ ինքը մտածելու բան չունի: Ես էլ հավելեցի, որ Հ. Ն. Սեիդովը մեր տարբերակին համաձայն է: Նա այդ խոսքերին նույնիսկ ուշադրություն չդարձրեց և այնուամենայնիվ մեր դուրս գալիս ևս մեկ անգամ ասաց. «Կարեն, մտածի՛ր»³: Ըստ Ֆ. Սարգսյանի՝ Հ. Ալիևը ակնարկել է, որ ճանապարհի կառուցումը չի տչընդոտելու դիմաց նա պատրաստ է օգնել Կ. Դեմիրճյանին՝ ընտրվելու ԽՍՀՄ Կոմկուսի Կենտկոմի քարտուղար, ինչպես նաև դառնալու Քաղբյուրոյի անդամ⁴:

Այդ հանդիպումից երկու օր անց տեղի է ունեցել ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահության նիստը, որի օրակարգում է եղել Սյունիքով ճանապարհ կառուցելու երկու առաջարկ՝ հայկական և ադրբեջանական: Այդ նիստին նույն Հ. Ն. Սեիդովը, որին ըստ երևույթին Հ. Ալիևը խիստ քննադատել էր այն բանի համար, որ նա համաձայնություն է տվել ճանապարհի կառուցման հայկական առաջարկին, իրեն պահել է լիովին այլ կերպ և խեղաթյուրելով փաստերը՝ նշել, թե ճանապարհի ադրբեջանական տարբերակի կառուցմանը դեմ է Ֆ. Սարգսյանը, քանի որ նրա ծնողները Նախիջևանից են, և նա չի ցանկանում, որ «Նախիջևանը կապվի Ադրբեջանի հետ»⁵: Դրան ի պատասխան՝ Ֆ. Սարգսյանը բավական կոպիտ արձագանքել է և ասել, որ Հ.

¹ Саркисян Ф., Уроки жизни: (воспоминания), Ереван, 2005, с. 100.

² Միխայիլ Սերգեյի Սմիրտյուկովը եղել է ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի գործերի կառավարիչը:

³ Саркисян Ф., նշվ. աշխ., էջ 101-102:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 102:

⁵ Նույն տեղում:

Ն. Մեխոյանը փոխել է իր կարծիքը Հ. Ալիևի ճնշման տակ: Հայաստանի վարչապետի այդ պատասխանի և պահվածքի համար ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն. Ա. Տիխոնովը առաջարկել է Ֆ. Սարգսյանին տալ խիստ նկատողություն և նույնիսկ քննարկել նրա հարցը Քաղբյուրոյում¹:

Մեղրիով ադրբեջանական նախագծով ճանապարհի կառուցման հարցին ի մոտո տեղյակ է եղել նաև դրա չիրագործման հարցում մեծ ավանդ ներդրած Խորհրդային Հայաստանի Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ, բազմավաստակ պետական գործիչ Վլադիմիր Մովսիսյանը, որն իր հուշերում շատ կարևոր և ուշագրավ փաստեր ու մանրամասներ է հաղորդում: Այսպես, ըստ նրա փաստարկված վերլուծության՝ Ադրբեջանի ռազմավարական կարևորագույն ծրագրերից էր Մինջևան-Նախիջևան (A-311) ավտոճանապարհի կառուցումը², և այդ գործին լծվել էին ադրբեջանցի պաշտոնյաները ինչպես Բաքվում, այնպես էլ Մոսկվայում: Նա շատ հստակ և հանրամատչելի նկարագրում է այդ ճանապարհի պոտենցիալ վտանգը Հայաստանի համար և Ադրբեջանի վատ քողարկված ու հեռահար նպատակները. «Կասկածից վեր է, որ այդ գործը, իրոք ռազմավարական նպատակ էր հետապնդում, որովհետև այդ ճանապարհով Ադրբեջանը պետք է միանար Նախիջևանին, և նախկինում Իրանից Թուրքիայի գնած այն փոքր հողակտորի միջոցով պիտի ապահովվեր կապը Թուրքիայի հետ՝ ըստ էության Մեղրիի, այսինքն՝ հայկական տարածքի վրայով և Հայաստանն էլ սովոր շերտով անջատվեր Իրանից»³: Վ. Մովսիսյանը փաստում է, որ այդ հակահայկական ծրագրի տապալման գործին լծվել է Խորհրդային Հայաստանի պետական վերնախավը՝ Կ. Դեմիրճյանը, Ֆ. Սարգսյանը, Ա. Կիրակոսյանը, որոնց միացել և մեծագույն ջանքեր է ներդրել նաև նա. «Ինձ ուղղակի հանձնարարվեց, որպեսզի Մոսկվայում զբաղվեմ այդ ճանապարհը չկառուցելու, այդ նախագիծը չհաստատելու հարցերով»⁴:

Նկատենք, որ Սյունիքով անցնող ճանապարհի կառուցման խնդիրը Ադրբեջանը կարողացել էր տեղափոխել ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների Մոսկվայի օրակարգ, որտեղ բնականաբար հարցի ստրատեգիական և այլ նրբերանգները կա՛մ անտեսվելու էին, կա՛մ չէին ընկալվելու, քանի որ խոսքը, ի վերջո, նույն պետության Խորհրդային Միության ներքին ճանապարհներին էր վերաբերում: Եվ քանի որ հարցը միութենական տարբեր գերատեսչությունների քննարկման օրակարգում էր, ուստի հայ պաշտոնյաները սկսել են ինտենսիվ աշխատել այդ կառույցների և դրանց ղեկավարների հետ առանձին, որպեսզի կարողանան ներկայացնել խնդրի տարբեր առանձնահատկություններ, փաստարկներ՝ սկսած գյուղատնտե-

¹ Տե՛ս **Саркисян Ф.**, նշվ. աշխ., էջ 102:

² Տե՛ս **Մովսիսյան Վ.**, Հողի ճակատագրով. մտորումներ տքնության, Երևան, 2001, էջ 97:

³ Նույն տեղում, էջ 98:

⁴ Նույն տեղում:

սականից մինչև ռազմական: Օրինակ՝ Խորհրդային Հայաստանի ղեկավարության ջանքերով տեղի է ունեցել Վ. Մովսիսյանի հանդիպումը ԽՍՀՄ պաշտպանության նախարար, մարշալ Ս. Մոկոլովի հետ, որի ընթացքում հայ պաշտոնյան ներկայացրել է ադրբեջանական նախագծով ճանապարհի կառուցման վտանգները ռազմական առումով: «Ունկնդրելուց հետո, պաշտպանության նախարարը իր դժգոհությունը հայտնեց ադրբեջանական տարբերակի վերաբերյալ և հանձնարարեց, որպեսզի հարցը քննարկելիս հաշվի առնեն նաև իր ղեկավարած նախարարության կարծիքը»¹: Խորհրդային Հայաստանի ղեկավարությանը հաջողվել է ճանապարհի կառուցման վերաբերյալ բացասական եզրակացություն ստանալ ԽՍՀՄ հաղորդակցության ճանապարհների նախարարությունից և ԽՍՀՄ սահմանապահ զորքերի Անդրկովկասյան օկրուգի հրամանատարությունից²: Սակայն շուտով փորձագիտական հանձնաժողովից, որին ուղարկվել են այդ եզրակացությունները, տեղեկացրել են, որ բացի սահմանապահ զորքերի հրամանատարությունից՝ մյուս կառույցները, այդ թվում և ԽՍՀՄ պաշտպանության նախարարությունը, հրաժարվել են իրենց կարծիքներից: «Պարզ էր, որ այս ամենի դիրիժորը Հեյդար Ալիևն էր»³, – իրավացիորեն պնդում է Վ. Մովսիսյանը:

Ահա այդպիսի պայմաններում տեղի է ունեցել փորձագիտական հանձնաժողովի նիստը, որը պետք է վերջնական եզրակացության հանգեցնի Սյունիքի տարածքով ճանապարհի կառուցելու հայկական կամ ադրբեջանական տարբերակներին: Չնայած անձամբ Հ. Ալիևի և Խորհրդային Ադրբեջանի ներդրած ահռելի ջանքերին և տարատեսակ ճնշումներին՝ հայկական կողմը կարողացել է հիմնավորված փաստարկներով հանդես գալ այդ նիստին: Վ. Մովսիսյանը, պատմելով դրա մանրամասների մասին, մեջբերում է իր ելույթից մի հատված. «Ասացի՛ համարենք, որ դուք եկել եք մեր տուն հյուր: Որպես տանտեր մենք խնդրում ենք, որ դուք սեղանի կողքով անցնեք և գնաք մյուս սենյակ, սակայն դուք գտնում եք, որ հենց սեղանի վրայով պիտի անցնեք: Մա սանձարձակություն է, և մենք թույլ չենք տա, որ մեր տանը դուք ձեր սովորություններով առաջնորդվեք»⁴: Հանդիպելով հայկական կողմի դիմադրությանը՝ փորձագիտական հանձնաժողովը, այն է՝ նաև ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները, որոշել են տալ այնպիսի լուծում, որն առաջին հայացքից պետք է ձեռնտու լիներ երկու կողմերին. որոշում է ընդունվում կառուցել և՛ ադրբեջանական, և՛ հայկական նախագծերով ճանապարհները, փաստորեն՝ երկու ճանապարհ⁵: Բայց փաստացի այս լուծումը այնքան էլ ձեռնտու չէր Հայաստանին, քանի որ, ի վերջո, ադրբեջանական նախագծով և

¹ Մովսիսյան Վ., նշվ. աշխ., էջ 100:

² Տե՛ս նույն տեղում, էջ 101:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 101-102:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 102:

հատակ պանթյուրքիատական նպատակներ հետապնդող ճանապարհը կառուցվելու էր: Դրա համար Խորհրդային Հայաստանի իշխանությունները չնահանջելով դիմում են այլ քայլերի: Նախ՝ Հայաստանի բարձրագույն ղեկավարությունը ներիշխանական լուր համաձայնությամբ ուղղակի կառավարության քննարկմանը չի ներկայացնում այդ ճանապարհի շինարարության համար ՀԽՍՀ տարածքում հող հատկացնելու հարցը¹: Դրանից հետո խնդիրը կրկին սրվում է և տեղափոխվում ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նիստի օրակարգ, որտեղ Ն. Տիխոնովը կոշտ քննադատության է ենթարկում Խորհրդային Հայաստանի վարչապետ Ֆ. Սարգսյանին, մեղադրում «ճանապարհի կառուցումը ձախողելու մեջ» և առաջարկում որպես պատիժ նրան նկատողություն հայտարարել: Մակայն Ֆ. Սարգսյանը ընդամենը տույժ է ստանում և դրանից հետո ևս չի պատրաստվում որևէ հետքայլ անել: Դա հաստատող կարճ երկխոսությունը ներկայացված է Վ. Մովսիսյանի հուշագրությունում. «Երբ նիստից դուրս եկանք, Ֆադեյ Տաճատիչին ասացի, որ միննույն է, հողհատկացման մասին որոշումը չեմ մտցնելու կառավարության քննարկմանը, նա ասաց. «Իսկ քեզ ով է ասում, որ մտցնես»²:

Մակայն, այնուամենայնիվ, Խորհրդային Հայաստանի իշխանությունները, բացի այդ «հանդուգն պահվածքից»՝ ճանապարհի կառուցման համար հող տրամադրելը մերժելուց, փորձել են այլ ելքեր գտնել, որպեսզի մի կողմից ավելի ամրապնդեն իրենց դիրքորոշումը, մյուս կողմից ունենան լուծման ևս մեկ այլընտրանքային ուղի: Որպես այդպիսի լուծում առաջ են քաշում Վարդենիս-Ջերմուկ ճանապարհի կառուցման համար անհրաժեշտ հողահատկացման հարցը: Վ. Մովսիսյանը այսպես է նկարագրում խնդրի մանրամասները. «Խնդիր դրեցինք, որ մինչև Ադրբեջանի կողմից չորոշվի Վարդենիս-Ջերմուկ ճանապարհի համար նախատեսվող 230 հեկտարի հողհատկացման հարցը, մենք որոշում չենք կարող կայացնել, քանի որ այդ ճանապարհի մի հատվածը անցնում էր Քալբաջարի շրջանի տարածքով: Եվ մինչ այդ հողհատկացման մասին փաստաթղթերը չստանանք, մենք Մեղրիի որոշումը չենք կայացնելու: Եվ քանի որ նրանք այդպիսի որոշում չկայացրին, մենք էլ ձեռնպահ մնացինք որոշում կայացնելուց: Այդպիսով Մեղրի-Նախիջևան ճանապարհի շինարարությունը կանգ առավ»³:

Ինչևէ, այդ անգամ ևս Սյունիքով ըստ ադրբեջանական նախագծի ճանապարհի կառուցումը, որը պետք է Ադրբեջանը կապեր բռնազավթված Նախիջևանի հետ, չի կայացել, և Խորհրդային Հայաստանի ղեկավարները տարբեր մեթոդներով կարողացել են դիմագրավել և՛ ադրբեջանական բացահայտ ու կուլիսային խարդավանքներին, և՛ Մոսկվայից եկած տարատեսակ հրահանգներին ու առաջարկներին: Մակայն այստեղ պետք է նաև հատուկ

¹ Տե՛ս **Մովսիսյան Վ.**, նշվ. աշխ., էջ 102:

² Նույն տեղում, էջ 102-103:

³ Նույն տեղում, էջ 103:

ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքին. Շ. Ալիևը, լինելով միութենական փոխվարչապետ, փորձել է իր պաշտոնը, դիրքը օգտագործելով՝ հասնել Խորհրդային Ադրբեջանի, իսկ իրականում թուրք-ադրբեջանական կարևորագույն նպատակի իրագործմանը՝ Նախիջևանը Ադրբեջանի հետ կապող պանթյուրքիստական ճանապարհի կամ, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքի» կառուցմանը: 2020 թ. արցախյան 44 օրյա պատերազմից հետո Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի ելույթներում ուշադիր լինելու դեպքում կարելի է նկատել վատ քողարկված այն ձգտումը, որ այն, ինչ չի հաջողվել իր հորը և Խորհրդային Ադրբեջանի այլ ղեկավարների, նա փորձում է իրագործել: Այս ամենն ապացուցող փաստերից է նաև Թուրքիայի տարբեր բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարություններում և ելույթներում նկատելի բացահայտ ոգևորությունը «Զանգեզուրի միջանցքի» կայացման հնարավորության առիթով, որը երբեմն համարում են անգամ ավելի կարևոր, քան իրենց ձևակերպմամբ՝ «ադրբեջանական տարածքների ազատագրումը»:

Հայ-ադրբեջանական տարածքային խնդիրներ

ԽՍՀՄ-ում, ի թիվս տարատեսակ այլ խնդիրների, գոյություն են ունեցել հայ-ադրբեջանական սահմանային-տարածքային որոշակի հարցեր, որոնք տարբեր տարիների սրվել են, և բացի այդ՝ Ադրբեջանը հետևողականորեն քայլեր է արել դրանք ավելացնելու ուղղությամբ: Սակայն նախ և առաջ պետք է փաստենք, որ, ինչպես պնդում են մասնագետները, Խորհրդային Հայաստանը ժառանգել է «անորոշ պետական սահմաններ և տարածքային-սահմանային չլուծված խնդիրներ հարևան չորս պետություններից երեքի՝ քեմալական Թուրքիայի, Խորհրդային Ադրբեջանի և Վրացական Հանրապետության հետ»¹: Ավելին, թեկուզ ոչ լեգիտիմ և քաղաքական իրավիճակներով պայմանավորված պայմանագրերով (Ալեքսանդրապոլի, Մոսկվայի, Կարսի) որոշվել է միայն հայ-թուրքական սահմանը, իսկ «Վրաստանի և Ադրբեջանի հետ հայկական պետության սահմանագծի հստակեցման վերաբերյալ որոշումներ են կայացվել և համաձայնագրեր ստորագրվել խորհրդային տարիներին», որոնց հետևանքով Խորհրդային Հայաստանը տարածքային կորուստներ է ունեցել²: Սակայն անգամ այդ համաձայնագրերը ի գործու չեն եղել լիովին լուծելու հայ-ադրբեջանական տարածքային խնդիրները, որոնք պարբերաբար շարունակվել են ԽՍՀՄ գոյության ամբողջ ընթացքում: Ադրբեջանական ոճը հստակ էր. կա՛մ առանց հիմնավորման հավակնություն էր ներկայացվում սահմանային որոշակի տարածքների հանդեպ, կա՛մ կազմակերպված Խորհրդային Հայաստան էին փոխադրում ադրբեջանական բնակչություն և այդ հիմքով որոշ ժամանակ

¹ Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բադալյան Գ., Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1920-1930-ական թվականներին, Երևան, 2015, էջ 3:

² Նույն տեղում:

անց ներկայացնում տարածքային պահանջներ: Ադրբեջանի այս քաղաքակա-
նությունը, բնականաբար, անհանգստացրել է Խորհրդային Հայաստանի իշխա-
նություններին, և օրինակ՝ գրող Անահիտ Սահինյանը պատմում է, որ Ա.
Քոչինյանը մտավորականների հետ հանդիպումներից մեկի ժամանակ խոսել է
իր համար մտահոգիչ մի հարցի մասին. «Դուք գիտե՞ք, որ հանրապետության
սահմանամերձ շրջանները լցվել են ադրբեջանցի վերաբնակներով»¹: Անշուշտ,
ըստ այդմ Քոչինյանը տեսել է հեռուն գնացող ու մշակված քաղաքական
ծրագիր, և նա իրավացի է եղել:

Հայաստանի հաջորդ ղեկավար Կ. Դեմիրճյանը նույնպես ուշադիր է
եղել այդ խնդրի նկատմամբ. օրինակ՝ 1984 թ., անդրադառնալով ադրբեջան-
ցիների պահվածքին՝ կապված սահմանային տարածքների հետ, նա նշում է,
որ նրանք զավթում են սահմանային տարածքներ, իսկ հետո Ադրբեջանի
իշխանություններն ասում են, թե չեն կարող ժողովրդին հետ տանել²: Ադրբե-
ջանական մշակված և ԽՍՀՄ գոյության ամբողջ ընթացքում պարբերաբար
իրականացված սողացող զավթողական քաղաքական գործելաճճի մասին
ուշագրավ դիտարկումներ է անում նաև Վ. Մովսիսյանը. «[Ադրբեջանցիները]
20-ական թվականներից սկսած, ամեն տարի, մինչև 80-ականները, քայլ
առ քայլ, մետր առ մետր, հողակտոր առ հողակտոր Հայաստանի սահմանա-
մերձ տարածքներից հողեր էին զավթել, նույնիսկ այդ տարածքներում գե-
րեզմանոցներ հիմնել: ... Եվ դա պատահական չէր: Այդ առումով նրանք նաև
հեռահար նպատակներ էին հետապնդում»³:

Բացի այլ ժողովուրդների պատմական բնօրրանների հանդեպ նմանա-
տիպ տեղային ծավալապաշտության օրինակներից՝ դեռևս ԽՍՀՄ տարիներին
ադրբեջանական կեղծ պատմագրությունը և պետական քարոզչությունը
համակարգված աշխատանք են իրականացրել՝ ցույց տալու, թե, իբր, ադրբե-
ջանցիներն այս տարածքների բնիկներն են: Այդ մասին Խորհրդային Հայաս-
տանի պետական և կուսակցական գործիչ, Կոմկուսի Կենտկոմի քարտուղար
Կարլեն Դալլաքյանը, որը 1980 թ. ապրիլին Բաքվում մասնակցել է Ադր-
բեջանի խորհրդայնացման 60-րդ հոբելյանի տոնակատարություններին,
պատմում է, որ ներկա է գտնվել մի միջոցառման, որի ժամանակ Բաքվի 26
կոմիսարներից Ազիզբեկովի թոռնուհին՝ պատմական գիտությունների դոկ-
տոր Պյուստա Ազիզբեկովան, հյուրերին ներկայացրել է Ադրբեջանի «վաղն-
ջական շրջանի» պատմությունը⁴: Այդ հանդիպությունների ժամանակ ունեցած
ելույթում Հ. Ալիևը ավելի հեռուն է գնացել և հայտարարել. «Արաքս գետը

¹ **Սահինյան Ա.**, Նվիրյալ զավակը երկրի և ժողովրդի, Անտոն Քոչինյան, Անավարտ
հուշեր, Երևան, 2008, էջ 539:

² St' u Dni skvoz' stroyki: iz rabochih dnevnikov Karena Demirchjana, c. 227:

³ **Մովսիսյան Վ.**, նշվ. աշխ., էջ 47:

⁴ **Դալլաքյան Կ.**, Հուշապատում (դեմքեր, իրողություններ, մտորումներ), Երևան, 1998, էջ
223-224:

արհեստականորեն երկու մասի է բաժանել մեր ժողովրդին, և ժամանակը կզա, որ պատմության այդ արհեստական վրիպակը կսրբագրվի»¹: Այս հայտարարությունը Իրանի տարածքի հանդեպ ադրբեջանական ծավալապատմության բացահայտ դրսևորում է, որը ներկայումս ավելի ակնհայտ է դարձել:

Հայ-ադրբեջանական սահմանային-տարածքային խնդիրները Ադրբեջանի հրահրմամբ սրվում են 1980-ական թվականների սկզբին. Կ. Դեմիրճյանի օրագրում կան բազմաթիվ հիշատակումներ Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանագատման խնդրի վերաբերյալ: 1983 թ. ԽՍՀՄ Կոմկուսի Կենտկոմի Պլենումի ելույթում Կ. Դեմիրճյանը կարծիք է հայտնում, որ այդ հարցի համար որպես հիմք պետք է ծառայեն Խորհրդային Հայաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտեզները²: 1983 թ. հունիսի 21-ի օրագրային գրառման մեջ նա Վ. Մովսիսյանի հետ իր գրույցի մասին նշում է. «Նրան զանգահարել է Ռասի-Չադեն³ և առաջարկել երկու ամսում ուսումնասիրել քարտեզները (ինվենտարացնել): Ես ասացի, որ մենք Բաղիրովի հետ ԽՍՀՄ Կոմկուսի Կենտկոմում պայմանավորվել ենք որպես հիմք ընդունել այն քարտեզները, որոնք առաջարկել է կուսակցական հանձնաժողովը հանրապետության ԿԸՀ-ի քարտեզների հիման վրա, որոնք էլ ընկած են Հրամանագրի հիմքում»⁴: Դրանից երեք օր անց Կ. Դեմիրճյանը Վ. Մովսիսյանին տալիս է հանձնարարական «պայմանավորվել Ռասի-Չադեի հետ սահմանների դեմարկացիայի վերաբերյալ»⁵: Բացի Ադրբեջանի ղեկավարության հետ քննարկումներից՝ Կ. Դեմիրճյանը հայ-ադրբեջանական սահմանագատման հարցը քննարկում է նաև միութենական ղեկավարության հետ, որի մասին 1983 թ. օգոստոսի 31-ի օրագրային գրառման մեջ նշում է, որ եղել է Մոսկվայում և հանդիպել Ե. Լիզաչովի հետ. «Լիզաչով Ե. Կ.՝ սահմանների քարտեզներ. բոլոր հարցերը համաձայնեցված են»⁶:

Հայաստան-Ադրբեջան սահմանագատման խնդիրը շարունակում է մնալ երկու հանրապետությունների օրակարգում նաև 1984 թ., և ապրիլի 4-ին Կ. Դեմիրճյանը իր օրագրում գրում է Վ. Մովսիսյանի հետ ունեցած գրույցի մասին. «Վիճելի հողերի հարցը Հայկ. ՍՍՀ-ի և Ադրբ. ՍՍՀ-ի միջև. պետք է ևս մեկ անգամ զբաղվել դրանով (հասնել նրան, որ ադրբեջանցի ընկերները ի վերջո գան որոշման)»⁷: Իսկ արդեն 1984 թ. սեպտեմբերին Կ. Դեմիրճյանը ընդունել է Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի քարտուղար Մուսա Մամեդովին և Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Շամիլ Ռասիզադեին,

¹ Դալլաքյան Կ., նշվ. աշխ., էջ 223:

² St' u Дни сквозь строчки: из рабочих дневников Карена Демирчяна, с. 189:

³ Շամիլ Ռասիզադեն 1970-1984 թթ. եղել է Խորհրդային Ադրբեջանի Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալը:

⁴ Дни сквозь строчки: из рабочих дневников Карена Демирчяна, с. 190.

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում, էջ 193:

⁷ Նույն տեղում, էջ 216:

և թեման եղել է «հողային վեճերի հետ կապված»¹:

1980-ական թվականներին Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանազատման, ինչպես նաև վիճելի տարածքների խնդիրները բացառիկ մանրամասներով և որպես դեպքերի անմիջական մասնակից ներկայացնում է Վ. Մովսիսյանը իր հուշագրության մեջ: Նկարագրելով հայ-ադրբեջանական սահմանային և գյուղատնտեսական նշանակության հողերի խնդիրները՝ նա նկատում է, որ իրենք առաջարկել են ԽՍՀՄ գյուղատնտեսության նախարարությանը ճշգրտել սահմանները «եղած քարտեզագրական նյութերի հիման վրա»²: Այդ հարցերի շուրջ 1982-1983 թթ. տեղի են ունեցել մի քանի հանդիպումներ Խորհրդային Ադրբեջանի կառավարության նախագահի տեղակալ Շ. Ռասիդադեի և Վ. Մովսիսյանի միջև, սակայն հարցի ճշգրտումը և հանգուցալուծումը այդքան էլ ձեռնտու չեն եղել ադրբեջանական կողմի համար, քանի որ նրանք տարիների ընթացքում Հայաստանից զավթել էին տարածքներ և ստիպված էին լինելու ազատել դրանց առնվազն մի մասը:

1984 թ. հոկտեմբերի 24-ին Վ. Մովսիսյանը և Շ. Ռասիդադեն կրկին հանդիպել են այս անգամ Նոյեմբերյանի շրջանի Դովեդ գյուղի անտառների տարածքից ադրբեջանական Քյամառլու գյուղ տարվող ջրատարի հարցը տեղում ուսումնասիրելու համար: Սակայն այդ հանդիպումը վերածվել է սկանդալի, քանի որ Ադրբեջանի իշխանությունների հրահրմամբ ադրբեջանցի գյուղացիները հարձակվել են հայկական պատվիրակության վրա, առանգել նրանց և մահվան սպառնալիքի տակ փորձել որոշակի լուծումներ պարտադրել: Հանդիպման սկզբում Ռասիդադեն հայտնել է Վ. Մովսիսյանին, որ Քյամառլու գյուղում վիճակը լարված է, ժողովուրդը բորբոքված, և հնարավոր է՝ որոշակի գործողություններ լինեն, սակայն իրականում դրա նախորդ օրը ադրբեջանական իշխանությունները հենց նույն Ռասիդադեի գլխավորությամբ այցելել էին այդ գյուղ և նախապատրաստել հարձակում հայ պաշտոնակցի վրա³: Հայ և ադրբեջանցի պաշտոնյաների հանդիպումից կարճ ժամանակ անց սկսվել է ադրբեջանական խառնամբոխի նախապես կազմակերպված հարձակումը, որի թիրախում հայկական պատվիրակությունն էր՝ Վ. Մովսիսյանի գլխավորությամբ, որը իր հուշերում նկարագրում է այդ դեպքը բոլոր մանրամասներով. «Այնուհետև մեզ դուրս հանեցին [մեքենայից], հայերիս առանձնացրին և մի քանի կիլոմետր քշելով (բառիս բուն իմաստով) բերեցին Քյամառլու տանող ճանապարհի խաչմերուկը: Եվ այդտեղ մեր դեմ դուրս եկան հինգ բեռնատար մեքենաներ, որոնց թափքերում մահակներով, եղաններով, կացիներով զինված մարդիկ էին, մոտ 250 հոգի, մեծ մասը կանայք, որոնք, ինչպես հայտնի է, մուսուլմաններին հատուկ խառնիճադանջ զանգվածում աղմուկ-աղաղակի կոչնակներն են: Սկսվեց մի

¹ Дни сквозь строчки: из рабочих дневников Карена Демирчяна, с. 235.

² Մովսիսյան Վ., նշվ. աշխ., էջ 48-49:

³ Նույն տեղում, էջ 51-52:

խայտառակ իրարանցում, քաշկռտուք, վայնասուն: Մի տարեց կին էլ հագուստները պատառոտեց, կրծքերը դուրս հանեց և գազավաթի մարտահրավեր կոչեց բոլորին, քարեր շարտելով մեզ վրա:

Ծեծկռտուքից անմասն չմնացի նաև ես, ստանալով լուրջ մարմնական վնասվածքներ: Ապա բռնի ուժով մեզ նստեցրին բեռնատար մեքենաների խցիկներում և բաց պատուհաններից թափվող քարերի, մահակների ու բռունցքների հարվածների տակ, գազագած, պապուասների ոռնոցով ու աղաղակով, բերեցին Քյամառլու: Տարան ակումբ, բարձրացրին բեմ և հայտարարեցին, որ մեզ այստեղից բաց չեն թողնի մինչև փաստաթուղթ չստորագրենք, որ այդ հողերը ադրբեջանական են: Սեդանին դրեցին թուղթ ու գրիչ և կացին, ասելով, որ եթե չստորագրեմ, վիզս կտրելու են: Ես իրենց լեզվով ասացի, որ արդեն իսկ անտառում ցույց տվեցի, որ իրենցից չեմ վախենում և չեմ ստորագրելու: Ասացի նաև, որ այդ հարցերը այստեղ չեն լուծվում¹: Հայկական պատվիրակության հանդեպ մոտ երեք ժամ տևած սպառնալիքներից հետո ադրբեջանցի պաշտոնյաները սկսել են տեղի տալ Վ. Մովսիսյանի բերած փաստարկներին, որը պնդել է, որ այդ ամենը կազմակերպված բնույթ ունի, և որ ինքն այդ մասին զեկուցելու է համապատասխան մարմիններին: Գազագած ադրբեջանցիների ամբոխը, հետևելով իրենց ղեկավարների հրամաններին, ի վերջո թույլ է տվել, որ Վ. Մովսիսյանը և իրեն ուղեկցող հայերը հեռանան²:

Դեպքի մասին Վ. Մովսիսյանը հայտնել է Հայաստանի Կենտկոմի քարտուղար Հրանտ Ոսկանյանին, քանի որ Կ. Դեմիրճյանը այդ պահին եղել է Մոսկվայում: Ստացած վնասվածքներից Վ. Մովսիսյանը մի քանի օր բուժում է ստացել հիվանդանոցում և օրեր անց հանդիպել Կ. Դեմիրճյանին ու մանրամասն պատմել տեղի ունեցածը: Այսպես է Վ. Մովսիսյանը նկարագրում Կ. Դեմիրճյանի արձագանքը. «Չեմ կարող մոռանալ, որ պատմածս լսելուց հետո նա [Դեմիրճյանը] շուտ եկավ և անձայն արտասվեց: Ես առաջին անգամ էի նրա աչքերում արցունքներ տեսնում»³: Դրանից հետո գործին ընթացք է տրվել, կենտրոնական մոսկովյան իշխանությունները տեղեկացել են խնդրին, այդ թվում և կուսակցության երկրորդ դեմք Ե. Լիզաչովը⁴, տրվել են հանձնարարականներ, և համապատասխան կառույցները սկսել են որոշակի գործընթաց: Շուտով պաշտոնից ազատվել է Ադրբեջանի Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Շ. Ռասիդադեն, ինչը կարելի է համարել, ըստ էության, նրա հանցակցության ճանաչում: Վ. Մովսիսյանը նշում է, որ ներողություն խնդրելու համար Հայաստան են եկել Ադրբեջանի Կենտկոմի առաջին քարտուղար Ք. Բադիրովը և կառավարության նախագահը⁵: Ադրբե-

¹ Մովսիսյան Վ., նշվ. աշխ., էջ 52-53:

² Տե՛ս նույն տեղում, էջ 53:

³ Նույն տեղում, էջ 55:

⁴ Տե՛ս Дни сквозь строчки: из рабочих дневников Карена Демирчяна, с. 241:

⁵ Տե՛ս Մովսիսյան Վ., նշվ. աշխ., էջ 55:

ջանի ղեկավարության քայլերի մասին Կ. Դեմիրճյանը ևս իր օրագրում 1984 թ. հոկտեմբերի 26-ին գրառում է արել. «Զանգահարեց Ք. Մ. Բաղիրովը, ներողություն էր խնդրում Նոյեմբերյանի շրջանում տեղի ունեցածի առիթով»¹:

Ուշագրավ է, որ հմուտ պետական գործիչ և հայրենասեր Վ. Մովսիսյանը հետամուտ է եղել ոչ թե դեպքի հետ կապված քրեական գործի հարուցման և իր հանդեպ բռնություն իրականացրածների պատժի գործին, այլ փորձել է ստեղծել պայմաններ հայ-ադրբեջանական սահմանային-տարածքային խնդրի հիմնավոր լուծման համար: «Միաժամանակ իմ պահանջով քրեական գործը կարճվեց,– պատմում է Վ. Մովսիսյանը,– որովհետև մի քանի հոգու կարող էին դատել և մեղավորներին պատժված համարելով, փակելին նաև սահմանային հարցերը: Ինչ պիտի ստանար հայ ժողովուրդը, եթե Ադրբեջանի բանտարկյալների թիվը մի քանի հոգով ավելանար: Մեզ մեր հողերն էին պետք»²:

Կարևոր է շեշտել նաև, որ հայ-ադրբեջանական տարածքային խնդրի հանգուցալուծմանը միտված քննարկումների ժամանակ Վ. Մովսիսյանը հատուկ ուշադրություն է դարձրել ադրբեջանցիների առաջարկած փաստաթղթերի վերնագրերին: Այսպես, ադրբեջանցիները առաջարկել են փաստաթուղթը վերնագրել «Հայաստանի և Ադրբեջանի պետական սահմանների ճշգրտման մասին», մինչդեռ Վ. Մովսիսյանը առաջարկել է այն անվանել «Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ առանձին հողօգտագործողների միջև սահմանների վերականգնման (ճշգրտման) մասին», և նրան այդ հարցում սատարել է Կ. Դեմիրճյանը: Խնդիրը շատ հստակ նկատել և այսպես է բացատրել Վ. Մովսիսյանը. «... եթե այդ փաստաթուղթը ընդունվեր, կնշանակեր, որ Հայաստանի և Ադրբեջանի սահմանները մեկընդմիջտ ճշգրտված են, և Ղարաբաղի հարց այլևս գոյություն չունի, քանի որ մենք արդեն համաձայնել ենք նրանց սահմանների հետ և փաստորեն ընդունել ենք նրանց տարածական ամբողջականությունը»³: Մա շատ կարևոր և պետական ու ազգային գործչի ընկալում ունեցողին հատուկ հանգամանք է:

Ինչևէ, այս ամենի արդյունքում սկսվել է հայ-ադրբեջանական սահմանների ճշգրտման աշխատանքներ, որոնց նպատակը, Վ. Մովսիսյանի խոսքերով, «20-ական թվականներից ծայր առած քաշքշուկին» վերջ տալն էր: Նա նշում է, որ սահմանների ճշգրտման աշխատանքներում ընդգրկված էին տարբեր մասնագետներ և արդյունքում. «Մենք վերականգնեցինք սահմանները՝ Նոյեմբերյան-Իջևանից մինչև Մեղրի: Հետ վերցրինք նաև բազում վեճերի և ընդհարումների պատճառ դարձած՝ Միսիանի ամառային արոտավայրերից մինչ այդ հակառակ կողմին վերագրված տարածքները»⁴: Վ. Մովսիսյանը հստակ ամրագրում է նաև այդ տարածքներն իրենց չափերով. «Այդպիսով, Հայաստանը

¹ Дни сквозь строчки: из рабочих дневников Карена Демирчяна, с. 241.

² Մովսիսյան Վ., նշվ. աշխ., էջ 57:

³ Նույն տեղում, էջ 56:

⁴ Նույն տեղում, էջ 57:

հետ ստացավ 14.450 հեկտար տարածություն, որից 2050-ը՝ Նոյեմբերյանի շրջանում, Դովեդի 1850 հեկտար հազվագյուտ ծառատեսակներով անտառի հետ միասին¹: «Սահմանների ճշգրտմամբ, Կապանին անցան մեկուկես հազար հեկտար հողեր, որոնց վրա աղբբեջանցիները տներ, անգամ ռեստորան էին կառուցել «Աղբբեջան» անունով: Շամշադինի շրջանի Թաղիլար գյուղի տարածքը այս միջոցառումից հետո վերադարձավ Հայաստանին»²:

Շատ կարևոր է փաստել, որ սահմանային այդ հստակեցումները այնուհետև արձանագրվել են քարտեզներում ու հաստատվել Խորհրդային Հայաստանի և Աղբբեջանի ներկայացուցիչների ստորագրություններով: Իսկ 1988 թ. հունվարի 12-ին ստորագրվել է համատեղ արձանագրություն սահմանագատման մասին, որը հաստատվել է Աղբբեջանի կառավարության նախագահի առաջին տեղակալ Մ. Մամեդովի և Հայաստանի կառավարության նախագահի առաջին տեղակալ Վ. Մովսիսյանի կողմից³: Այդ արձանագրությունները ընդունվել են որպես հիմք հետագա հնարավոր հողային վեճերի պարագայում:

Ամփոփելով նշենք, որ հայ-աղբբեջանական խնդիրների մեծ մասն իրենց արմատներով ձգվում է դեպի XX դարի սկիզբ և շարունակվել է ԽՍՀՄ գոյության ամբողջ ընթացքում: Մինևույն ժամանակ, դրանք հաղթահարելու, աղբբեջանական ոտնձգությունների դեմ պայքարելու Խորհրդային Հայաստանի ղեկավարների քայլերը մի կողմից կարևոր փորձառություն կարող են համարվել, մյուս կողմից ներկայիս խնդիրների լուծման հարցում ուղենիշային նշանակություն ունենալ:

Ռուբեն Մելքոնյան – Հայաստանի և Աղբբեջանի խնդիրները ԽՍՀՄ-ում (ըստ խորհրդահայ պաշտոնյաների հուշերի)

Հայ-աղբբեջանական հարաբերությունները իրավացիորեն բնութագրվում են որպես թշնամական, և առավել հաճախ դրանց պատճառ են համարվում 1980-ականների վերջին սկիզբ առած գործընթացները, Արցախի ինքնորոշման համար մղվող պայքարը, արցախյան պատերազմները: Եվ ըստ այդմ թյուր տպավորություն է ստեղծվում, որ այդ հարաբերությունները կոնֆլիկտային են դարձել շատ արագ, և խորհրդային «եղբայրական ժողովուրդներից» հայերն ու աղբբեջանցիները հանկարծակի վերածվել են ռիսերիմ թշնամիների: Հեղինակը կարևորում է այն փաստը, որ հայ-աղբբեջանական հարաբերությունները ունենին պասսիվ բացասականից ակտիվ բացասականի՝ թշնամականի վերածվելու հիմքեր և պատճառներ: Այս խնդիրները լավագույնս դրսևորվել են Խորհրդային Հայաստանի տարբեր տարիների ղեկավարների, պետական-քաղաքական գործիչների հուշերում, և սույն հոդվածում, հենվելով այդ սկզբնաղբբությունների վրա, փորձ է արվել ներկայացնելու հայ-աղբբեջանական այսօր ևս նոր թափով ծավալվող կոնֆլիկտի կարևոր շերտերի հիմքերը, որոնց իմացությունը և վերլուծությունը կարող են օգտակար լինել մերօրյա գործընթացներում:

¹ Մովսիսյան Վ., նշվ. աշխ., էջ 58:

² Նույն տեղում, էջ 60:

³ Նույն տեղում, էջ 59:

Рубен Мелконян – Проблемы Армении и Азербайджана в СССР (на основе мемуаров советских армянских должностных лиц)

Ключевые слова – СССР, Советская Армения, Мегри, щекотливые вопросы, мемуары, Нахичеван, Арцах

Армяно-азербайджанские отношения справедливо характеризуются как враждебные, и чаще всего основой этому служат процессы, начавшиеся с конца 1980-х годов, борьба за самоопределение Арцаха, карабахские войны. И в связи с этим складывается ошибочное впечатление, что эти отношения стали конфликтными за очень короткий период времени, а армяне и азербайджанцы внезапно превратились из «братских» советских народов в непримиримых врагов. Считаем необходимым констатировать и подчеркнуть тот факт, что имелись основания и причины для перехода армяно-азербайджанских отношений из пассивно-негативных в активно-негативные, враждебные. Эти вопросы наилучшим образом отражены в мемуарах руководителей, государственных политических деятелей Советской Армении различных лет, и в данной статье, опираясь на эти источники, мы сделали попытку представить основы важных пластов разворачивающегося сегодня с новой силой армяно-азербайджанского конфликта, изучение и анализ которых могут быть полезны в современных процессах.

Ruben Melkonyan – The Problems of Armenia and Azerbaijan in the Soviet Union (Based on the Memoirs of the Soviet Armenian Statesmen)

Key Words – USSR, Soviet Armenia, Meghri, sensitive topics, memoirs, Nakhijevan, Artsakh

The Armenian-Azerbaijani relations in general are justly described as hostile, and most often the processes that began in the late 1980s, the struggle for the self-determination of Artsakh, as well as the Karabakh wars are considered to have formed the ground for this situation. Thus, a wrong impression is created that these relations became antagonistic within a short period of time, and the Armenians and Azerbaijanis turned from the Soviet fraternal peoples to irreconcilable enemies. However, it is necessary to state and highlight that there were other grounds and reasons which transformed the Armenian-Azerbaijani relations from passively negative to actively negative, hostile. These issues were best reflected in the memoirs of the statesmen, political and state leaders of Soviet Armenia of various years, and in this article on the basis of these sources we have tried to shed light on the foundations of important layers of the Armenian-Azerbaijani conflict which is developing today with a new vigor. The study and analysis of this topic might be useful for the modern processes.

Ներկայացվել է 07.12.2021

Գրախոսվել է 09.03. 2022

Ընդունվել է տպագրության 29.03.2022

Ռուբեն Մելքոնյան – ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (rubenmelkonyan@ysu.am)

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ՆՈՐԱՀԱՅՏ ՏԱՊԱՆԱԳՐԵՐ ՄԱՆԱՀՆԻՑ

Բանալի քառեր – Մանահին վանական համալիր, Սուրբ Հակոբ եկեղեցի, Սուրբ Հարություն եկեղեցի, հուշարձան, պեղումներ, տապանաքար, տապանագիր

ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի վարչական տարածքում գտնվող նշանավոր Մանահին վանական համալիրի հարավարևելյան հուշարձանախմբի հնագիտական ուսումնասիրություններն և պեղումները բաղկացուցիչ մասն են ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանատան դրամաշնորհով անցկացվող խոշոր ծրագրի, որով նախատեսվում են Սուրբ Հակոբ եկեղեցու, Սուրբ Հարություն մատուռի, Գրիգոր Տուտեորդու խաչքարի վերականգնման և կոնսերվացման աշխատանքներ (պատվիրատու՝ «Հայկական հուշարձաններ վերականգնող ճարտարապետների հայկական ասոցիացիա»):

Սուրբ Հակոբ եկեղեցին գտնվում է Մանահին վանական համալիրի պարիսպներից դուրս՝ կենտրոնական հուշարձանախմբից շուրջ 70 մ հարավարևելք՝ Զաքարյանների տոհմական դամբանատան հարևանությամբ:

Միջնադարյան սկզբնաղբյուրները այս կառույցի մասին հանգամանալից տեղեկություններ չեն հաղորդում, և մեր տվյալները քաղված են XIX-XX դարերի ճանապարհագիրների և ուսումնասիրողների աշխատություններից: Դրանք բավականին հակիրճ, հպանցիկ հիշատակություններ են և հիմնականում վերաբերում են կառույցի ճարտարապետությանը:

Ըստ իր ճարտարապետական հորինվածքի վերլուծության՝ եկեղեցին թվագրվում է X դարով, գրեթե կրկնում է Մանահինի Ամենափրկիչ և Սուրբ Աստվածածին կանգուն եկեղեցիներին: Այն արտաքուստ ուղղանկյուն է (9.64x7.88 մ), կենտրոնագմբեթ, ներքուստ խաչաձև հատակագծով, չորս անկյուններում նեղ, երկարավուն ավանդատներով:

Բոլոր չորս ավանդատներն ունեցել են ցածրիկ խորաններ, ուստի, արդարև, այս եկեղեցին կարելի է կոչել «հնգախորան»: Այն շարված է եղել սրբատաշ, խոշորածավալ բազալտ քարերով: Միակ մուտքը հյուսիսային ճակատի կենտրոնում է: Կառույցի պահպանված հատվածները զուրկ են հարդարանքի տարրերից: Բացառություն են երկու կանգուն ավանդատների անկյունների որմնասյուները: Ներսում ընկած քարերից մեկին կա կամարաձև զարդաքանդակի հատված, ինչից ելնելով չենք բացառում, որ եկեղեցին ունեցել է հարդարված այլ հատվածներ ևս:

Սուրբ Հակոբ եկեղեցուն առնչվող տվյալներից առաջին հերթին հիշատակելի են հայ մշակույթի մեծ երախտավոր Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցի հաղորդումները, ըստ որոնց՝ եկեղեցին քանդվել է Ամենափրկիչ եկեղեցու վերականգնման կարիքների համար. «Առ սովա՛ ի կողմն արևելից էր կաթուղիկէի շքեղացեալ եկեղեցի՝ յանուն սուրբ Առաքելոյն Յակոբայ Տեառն եղբօր հինգ խորանաւոր. բայց քակեցաւ ձեռամբ Սողոմոն իշխանի և Առաքեալ Արքեպիսկոպոսին՝ ի պէտս շինութեան ներքին կամարաց ամենափրկիչ եկեղեցոյն»¹:

XIX դարի մեկ այլ հեղինակ՝ Հովհաննես Ղրիմեցին, գրում է, որ Ջաքարյանների դամբարանատան արևելյան կողմում գտնվող ավերակները ոչ այլ ինչ են, եթե ոչ IV դարի սկզբներին հիմնարկված Սանահնի հնագույն եկեղեցու ավերակները²: Կ. Ղաֆադարյանը հերքում է այդ տեսակետը. «Այդ ավերակներն այժմ էլ կան տեղում և պատկանում են արտաքուստ քառանկյունի և ներքուստ խաչաձև գմբեթավոր մի եկեղեցու, որի չորս անկյունների վրա եղել են չորս նեղ և երկարավուն ավանդատներ՝ արևելակողմի կիսաբլուր արսիդով: ... Պարզ է, որ այս տաճարն իր նեղ ու երկարավուն ավանդատներով շատ հին չի կարող լինել: Նա իր հատկանշական մնացորդներով կարող է պատկանել միայն 11-13-րդ դդ-ին, իսկ 4-5-րդ դդ-ում կառուցում էին հրվ-հյս ձգված ավանդատներ միայն»: Ապա նա հավելում է, որ ավերակները «...պատկանում են 11-13-րդ դդ կառուցված մի անհայտ եկեղեցու, որի կառուցման մասին ոչ արձանագրություն ունենք և ոչ էլ մատենագրական տեղեկություն»³:

Ազգագրագետ Ե. Լալայանը, Բորչալուի գավառի նշանավոր վանքերը նկարագրելով, Սանահնի վանքին վերաբերող հատվածում գրում է. «Մյուսալարների դամբարանից դեպի արևելք, փոքր ինչ հեռու գտնուում են ս. Յակոբ եկեղեցու ավերակները, որոնք ցոյց են տալիս, որ սրբատաշ քարից շինուած բաւական ընդարձակ է եղել»⁴:

Հ. Եղիազարյանը իր «Սանահնի վանքը» հոդվածում եկեղեցու նկարագրությունը տալուց հետո ավելացնում է. «Կառուցման այդ ձևը բնորոշ է Ժ-ԺԳ դարերին: Այս եկեղեցին վանքի առաջնորդ Առաքել արքեպիսկոպոսը և Սողոմոն Արղությանը քանդել են տալիս 1815 թ.-ին և քարն օգտագործում Ամենափրկիչ եկեղեցու վերանորոգման համար: Պահպանվել են հյուսիսային և արևյան պատերի որոշ մասեր միայն»⁵:

Ճարտարապետներ Հ. Խալվախյանը Սուրբ Հակոբ եկեղեցին թվագրում

¹ **Ջալալյանց Ս.**, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, Մասն Ա, Տիդիս, Ի տպագրատան Հոգևոր ձեմարանի հայոց Տիխիսայ, 1842, էջ 14:

² **Ղաֆադարյան Կ.**, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 9:

³ Նույն տեղում, էջ 9-10:

⁴ **Լալայեան Ե.**, Բորչալուի գաւառ, Նշանաւոր վանքեր. Ա // «Ազգագրական հանդէս», 1901, թիվ 7-8, էջ 390:

⁵ **Եղիազարյան Հ.**, Սանահնի վանքը // «Էջմիածին», 1958, թիվ 12, 57:

է IX դարով¹, իսկ Գ. Շախկյանը՝ X դարով²:

Վերջին անգամ Սուրբ Հակոբ եկեղեցուն անդրադարձ է կատարվել 2012 թ.՝ Լոռու մարզին նվիրված «Դիվան Հայ վիմագրության» պրակում, որտեղ մասնավորապես գրված է. «Այս եկեղեցին, որի պատերի ստորին շարքերն ու բեկորները բացվել են 15 տարի առաջ, քանդվել է 18-րդ դ. 90-ական թվականներին և կարոտ է լուրջ ուսումնասիրության»³: Նույն աշխատության մեջ ևս մի կարևոր դիտարկում է արված այն մասին, որ Մեծ գավթի հյուսիսային պատի նորոգումները ևս արվել են Սուրբ Հակոբ եկեղեցու քարերով⁴:



Նկար 1. Սուրբ Հակոբ եկեղեցու տեսքը պեղումների ավարտին

Ուսումնասիրություններում երբեմն՝ եկեղեցի, երբեմն՝ մատուռ անվանվող **Սուրբ Հարությունը** կանգուն է ամբողջությամբ, սակայն խիստ խարխված են տանիքը և պատերի որոշ հատվածներ: Այն երկթեք տանիքով փոքր սրահ է և բացառիկ է նրանով, որ խորանն ունի երկու պատարագատեղի, երևույթ, որը հազվադեպ է հայ միջնադարյան ճարտարապետությունում: Միակ մուտքը արևմտյան ճակատից է, որի բարավորը պսակված է գեղաքանդակ խաչով: Արևմտյան ճակատին կա մեկ, իսկ արևելյան ճակատին երկու պատուհան: Դրանցից մեկի մոտ գրված է մատուռի անունը՝ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒՆԻԻՆ:

Սուրբ Հարությունից անմիջապես դեպի հյուսիս Գրիգոր Տուտեորդու

¹ Տե՛ս **Халпахчян О. Х.**, Архитектурные ансамбли Армении, Москва, 1980, с. 186:

² Տե՛ս **Շախկյան Գ.**, Լոռի. պատմության քարակերտ էջերը, Երևան, 1986, էջ 92:

³ Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պրակ IX, Լոռու մարզ, կազմեցին՝ Ս. Գ. Բարխուդարյան, Կ. Գ. Ղաֆադարյան, Ս. Ս. Սաղումյան, Երևան, 2012, էջ 27:

⁴ Նույն տեղում, էջ 65:

նշանավոր խաչքարն է՝ բազմաձև հռոմեական պատվանդանի վրա, որը խաչքարագործության լավագույն նմուշներից մեկն է և թվագրվում է 1184 թ.: Ենթադրվում է, որ Սուրբ Հարություն մատուռը կառուցվել է ավելի ուշ, քան կանգնեցվել է Գրիգորի խաչքարը, քանի որ մատուռը ծածկում է խաչքարի պատվանդանի զարդաքանդակ հարավային նիստը: Ուստի մատուռը թվագրվում է XII-XIII դդ.:

Սուրբ Հարություն եկեղեցու վերաբերյալ նույնպես պատմական սկզբնաղբյուրները լռում են, և մենք կրկին ստիպված ենք բավարարվել ուսումնասիրությունների օգնությամբ: Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցը Սուրբ Հարություն եկեղեցուն անդրադառնում է խիստ ամփոփ. «Մերձ սմին է մատուռ սագաշէն յանուն սուրբ Յարութեան, շինեալ սրբատաշ քարամբք՝ որ ունի զերկու պատարագատեղիս՝ ի միում սեղանի»¹:

Լալալյանը գրում է. «Սպասալարների դամբարանից դէպի արևելք, Գրիգոր Տուտեորդու դամբարանի մօտ գտնուում է սբ. Յարութեան եկեղեցին, որ սրբատաշ քարից շինուած, առանց գմբէթի մի շէնք է 6 արշ. 3 վ. երկ. և 4. 1/2 արշ. լանութեան: Մի գեղեցկաքանդակ դուռ բացուում է արևելեան կողմում: Ներքուստ եկեղեցին մի միջնորմով բաժանուում է երկու փոքրիկ պատարագամատոյց խորանների, որոնցից իւրաքանչիւրն ունի մի փոքրիկ, նեղ ու երկար պատուհան»²:

Հակիրճ, բայց կարևոր դիտարկումներ է կատարում Հ. Եղիազարյանը. «Բնորոշ է այն, որ արևելյան կողմից ունի զույգ կիսակլոր աբսիդ, որպիսի հանգամանքը վկայում է նրա քաղկեդոնիկ լինելու փաստը, ուստի նրա կառուցումը պետք է վերագրել ԺԳ դարին: Նկատելի են մի շարք վերանորոգումների հետքեր, որոնց մասին տեղեկություններ չկան: Վերջին անգամ վերանորոգված է Հուշարձանների պահպանության կոմիտեի կողմից 1956 թ.-ին՝ վերականգնելով թափված երեսպատ քարերը և տանիքը պատելով սալաքարերով»³:

Հ. Խալփախյանը եկեղեցին թվագրում է XIII դարի սկիզբներով⁴: Հետաքրքրական է Գ. Շախկյանի մոտեցումը եկեղեցու թվագրման հարցում. «Այն Հայաստանի սակավաթիվ հուշարձաններից է, որոնք արևելյան թևում ունեն զույգ խորաններ: Իր հորինվածքով, հարդարանքի տարրերով բնորոշ է XIII դարին, որով և թվագրվում է: Դրա օգտին է ասում նաև այն, որ եկեղեցին փակում է Գրիգոր Տուտեորդու կից մահարձանի (1184) զարդակամարով հարդարված հարավային ճակատը: Սուրբ Հարությունը երկխորան հուշարձանների ավարտուն օրինակներից է»⁵:

¹ Ջալալյանց Ս., նշվ. աշխ., էջ 14-15:

² Լալալյան Ե., նշվ. աշխ., էջ 389-390:

³ Եղիազարյան Հ., նշվ. աշխ., էջ 56-62:

⁴ Տե՛ս Халпахчян О. X., նշվ. աշխ., էջ 189:

⁵ Շախկյան Գ., նշվ. աշխ., էջ 92:



Նկար 2. Սուրբ Հարություն մատուռի տեսքը արևմուտքից

Պեղումների հիմնական արդյունքները. Սուրբ Հակոբ եկեղեցում պեղումները տվեցին զգալի արդյունքներ թե՛ ճարտարապետության և թե՛ շերտագրության տեսանկյունից: Դրանց ընթացքում բացվեցին եկեղեցու գետնախարիսխը, հիմքերը, կավահողային հատակը:

Պեղումներից պարզ դարձավ, որ ամբողջ տարածքում գոյացած ժամանակակից լիցքի հաստ շերտի տակ կավահողային շերտ է, որում և կատարվել են XII-XIII դարերի թաղումները: Շերտը բարձր է եկեղեցու հիմքերից, ինչը ցույց է տալիս, որ թաղումները ժամանակագրորեն տեղի են ունեցել ավելի ուշ, քան հիմնադրվել է եկեղեցին, և այն ժամանակ, երբ եկեղեցու հիմքն ու գետնախարիսխը արդեն ծածկված են եղել հողի 20 սմ-ոց շերտով:

Պեղումների արդյունքներից և շերտագրությունից ելնելով հանգում ենք այն եզրակացության, որ XIII դարից հետո եկեղեցու գործունեությունը դադարել է, քանի որ XII-XIII դդ. զարգացած միջնադարյան շերտից վեր բացակայում է ուշմիջնադարյան շերտը, և միանգամից սկսվում է ժամանակակից լիցքը:

Նորահայտ որմնաքարերի հետ բացվեց նաև մեկ սրացող զագաթով երկլանջ տապանաքար, որը կտրված է և տեղաշարժված: Տարածքում և հատկապես Ջաքարյանների դամբարանից դեպի արևելք կան ևս մի քանի նմանատիպ տապանաքարեր, որոնցից մեկի վրա փորագրված է Սանահնի ամենավաղ թվագիր վավերագրերից մեկը (1038 թ.)¹:

¹ Դիվան հայ վիմագրության, պրակ IX, Լոռու մարզ, էջ 110:

Հյուսիսարևմտյան անկյունում բացվեցին սրբատաշ քարերով շարված ուղղանկյուն հիմքերի մնացորդներ, որոնք տապանաքարերի պատվանդաններ են, ինչպիսիք կան Սուրբ Հակոբ եկեղեցու մուտքից ձախ և Ջաքարյանների դամբարանից արևելք: Մրանք լցված են կրաքարային լիցքով, որոնց մեջ նաև խաչքարերի բազմաթիվ բեկորներ կան:

Հիմքերին մոտ գտնվող բազմաթիվ տապանաքարերի պատճառով Սուրբ Հարություն եկեղեցու հիմքերը ամբողջությամբ բացել հնարավոր չեղավ: Այստեղ իրավիճակը գրեթե նույնն էր, ինչ Սուրբ Հակոբ եկեղեցու շրջակայքում. ամբողջությամբ լիցք ներկայացնող վերին շերտ, որի տակ կար XII-XIII դդ. կավահողային շերտ: Գտնված սակավաթիվ խեցեղենը և սալատապանները հիանալի թվագրում են պեղվով շերտը: XII-XIII դդ. տապանաքարերի՝ եկեղեցու հիմքերից բարձր լինելու հանգամանքը հանգեցնում է այն համոզման, որ եկեղեցին կառուցվել է ավելի վաղ, քան ընդունված է համարել:

Գտածոները¹. Սանահնի պեղումներից հայտնաբերված խեցեղենը կարելի է բաժանել երկու խմբի. ա) կենցաղային խեցանոթների բեկորներ, բ) շինարարական խեցեղենի բեկորներ:

Կենցաղային խեցեղենի բեկորների մեջ առկա են թե՛ խոշոր կարասների, թե՛ նրբիրան փոքր անոթների և քրեղանների բեկորներ: Մեծ մասամբ բարակ պատերով, դարչնագույն մակերեսով, նրբախեցի կճուճների, սափորների բեկորներ են: Հատակների բեկորները բաժանվում են երեք հիմնական ենթախմբերի՝ հարթ, կարճ նստուկով և օղակաձև նստուկով: Վերջիններս հիմնականում քրեղանների հատակներ են, որոնց աստառները որոշ դեպքերում ջնարակապատ են: Շրթերի մեծ մասը դուրս հակված է: 30 բեկորի մակերեսին կան փորագիր զարդանախշեր: Հիմնականում դրանք հորիզոնական կամ ալիքաձև ներձկված գոտիներ են, որոշ դեպքերում արված սանրատամ գործիքի միջոցով:

Ձնարակված խեցեղենի բեկորները խիստ սակավաթիվ են (ընդամենը 18 հատ): Դրանք կապույտ, կանաչ, սպիտակ ետնագույն ունեն, որոնցով պատված են հիմնականում քրեղանների աստառները: Երբեմն դրանց վրա պատահում են մեկ կամ մի քանի գույներով արված բուսական կամ երկրաչափական նախշեր:

Հայտանբերվեցին բավարար քանակությամբ կղմինդրի և կավե սալիկների բեկորներ: Կղմինդրները պետք է բաժանել երեք հիմնական խմբերի՝ ա) հարթ, առանց եզրապատերի, բ) հարթ, կարճ եզրապատերով (հաստ. 2.5 սմ), գ/ կիսափողրակաձև:

Բացառիկ են վահանաձև ճակտոնները (10.5x9.8 սմ, 1.5 սմ հաստ.),

¹ Գտածոների վերաբերյալ կբավարարվենք հակիրճ տեղեկություններով, քանի որ դրա մանրամասն քննությունը դուրս է ուսումնասիրության բուն նյութից:

որոնց մակերեսին խաչերի պատկերներ են: Դրանցից մեկի խաչն ունի լայնացող թևեր, որոնց երկու ծայրերին մեկակական ակնագնդեր են: Ուղղահայաց թևերը փոքր-ինչ ավելի երկար են հորիզոնականներից: Խաչաքանդակ երկրորդ ճակտոնը հայտնաբերվեց եկեղեցու գետնախարսիսի հյուսիսարևմտյան անկյան մոտ բացված թաղումի մոտից: Այն թեև կտորված է և ունի բացակայող հատվածներ (պահպ. չափերը՝ 10,5 սմ լայնք, 8,3 սմ բարձր., 1 սմ հաստ.), սակայն եզրերից կարելի է հասկանալ, որ ունեցել է նույն ձևը, ինչ նախորդ նմուշը: Խաչաքանդակն ունի երկճյուղվող թևեր, ինչը հորինվածքին տալիս է ճաճանչավոր խաչի տեսք: Հիմքում քանդակված է խաչաբարձ ձող, որը վնասված է: Ծաճանչախաչի երկու կողմում կան փոքր խաչեր հիշեցնող ելուստներ: Նույն տեղից՝ եկեղեցու հիմքերի մոտ, գտնվեց բուրվառի կամ քշոցի պղնձե բոժոժ (2 սմ բարձր.): Այն ունի օղակաձև կախիկ և գնդաձև իրան, որի ստորին հատվածում կա երկարուկ անցք: Սա թերևս պեղումներից հայտնաբերված միակ մետաղական արժեքավոր գտածոն էր:

Եռանկյունաձև ճակտոնները, որոնք պսակել են կիսափողրակաձև կալիպտերների եզրերը, երբեմն լինում են խաչազարդ կամ պատկերազարդ: Պատկերազարդ եռանկյունաձև ճակտոններով վահանակով կալիպտերներ հայտնաբերվել են նաև Դվինից¹, Չվարթնոցից² և Էջմիածին քաղաքում 1979 թ. հայտնաբերված, V-VI դդ. թվագրվող բազիլիկ եկեղեցու ավերակների մոտ³: Այստեղից գտնված նմուշները հատկապես իրենց ձևով շատ նման են մեր օրինակին, սակայն եկեղեցու և խեցեղենի հետ թվագրվում են վաղ միջնադարով: Առհասարակ սա բնորոշ է վաղ միջնադարին, իսկ զարգացած միջնադարում, երբ կղմինդրե ծածկերը հիմնականում փոխարինվեցին քարե ծածկասալերով, կավե ճակտոններն աստիճանաբար վերացան: Սակայն որոշ դեպքերում կղմինդրածածկ են եղել նաև զարգացած միջնադարի եկեղեցիները, ինչպիսին է, օրինակ, Արցախի Հանդաբերդը, որտեղ կղմինդրի բեկորներ հայտնաբերվել են զարգացած միջնադարյան շերտից⁴: Սանահնի պեղումների շերտագրությունը և զանազան գտածոների միջավայրը մեզ թույլ չեն տալիս դրանք թվագրել վաղ միջնադարով, և ավելի հավանական է, որ դրանք պատկանեն X-XI դդ.: Սրանք, ինչպես նաև զարդաքանդակ և անզարդ կավե սալերը օգտագործվել են պատերի լիցքերի մեջ, ինչը հատկապես ակնհայտ է Չաքարյանների դամբարանին կցակառույց մատուռների պա-

¹ Տե՛ս **Քոչարյան Գ.**, Դվինի վաղմիջնադարյան կղմինդրը որպես թվագրման գործոն // «ԲԵՇ. Հայագիտություն», 2016, թիվ 2, էջ 34:


² Տե՛ս **Միրիջանյան Դ.**, Վաղ միջնադարյան շինարարական խեցեղենի մի տեսակի մասին // «Էջմիածին», 2010, թիվ 11, էջ 75:

³ Տե՛ս **Կարախանյան Գ., Սարգսյան Գ., Մելքոնյան Հ., Հարությունյան Պ.**, Հայաստանի վաղ միջնադարի նորահայտ հուշարձաններ // «ԲԵՇ», 1992, թիվ 2, էջ 158, **Միրիջանյան Դ.**, նշվ. աշխ., էջ 76:

⁴ Տե՛ս **Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ.**, Հանդաբերդի վանքը և նրա պեղումները, Երևան, 2009, էջ 40, 91:

բագայում, ուստի պատկանել են ավելի վաղ կառույցի, քան դամբարանն է:

Կավե սալիկների մեջ նույնպես առկա էին քանդակագարդ նմուշներ: Դրանցից մեկը (11.5x8 սմ չափեր, 2 սմ հաստ.) մակերեսին ունի եռանկյունաձև հաստ ելուստ: Մյուս բեկորը արժեքավոր է նրանով, որ լայնքը պահպանվել է ամբողջությամբ (24 սմ, հաստ.՝ 3 սմ): Սրա վրա կան օղակի մեջ առնված վարդյակի երկու թերթիկներ: Այս քանդակագարդ շքադրուսները մինչ պատերի լիցքերի մեջ կրկնակի օգտագործման ենթարկվելը զարդարել են կառույցի որմերը:



Նկար 3. Կավե քանդակագարդ սալիկներ

Նարահայտ տապանաքարերը. Սուրբ Հակոբ եկեղեցուց հյուսիս ընկած հատվածում բացվեցին ընդհանուր առմամբ 16 տապանաքար, որոնցից վեցը թերմշակ սալեր են, ինը՝ սրբատաշ սալատապաններ, և մեկը՝ հիմքերի վրա դրված աստիճանաձև տապանաքար: Սալատապաններից հինգի մակերեսի եզրերն առնված են զույգ ակոսագծերից կազմված եզրագոտու մեջ, որոնցից երկուսի դեպքում արևմտյան կողմում եզրագոտին ունի խորանաձև ավարտ: Դրանցից մեկի երկու անկյուններում քանդակված է երկթև ծաղկանախշ: Տապանաքարերից միայն երկուսն են արձանագիր (դրանք ուղղանկյունաձև,

հարթ բազալտե սալատապաններ են)։

1. Տապանաքարի (88x203 սմ) մակերեսի զույգ ակոսագծերով եզրագոտին արևելյան կողմում ավարտվում է խորանաձև կորացումով: Գրեթե կենտրոնում միատող արձանագրությունն է՝ ԲԱԲԱԲ:

2. Տապանաքարի (69x187 սմ) մակերեսն առնված է ակոսավոր եզրագոտու մեջ, որի արևմտյան հատվածում միատող արձանագրությունն է՝ ՄՈՍ-ԹԷՆԷՄ ՄԻԱՅՆԱ [Կ] (մեկ տողի մեջ չտեղավորվելու հետևանքով վերջին՝ «Կ» տառը չի փորագրվել): Այս անունով անձ Սանահնում հիշատակվում է նաև գրատան արձանագրություններից մեկում, որտեղ իր կողակցի՝ Խաթունի հետ նվիրատվություն է կատարում գրատանը: Այն Կ. Ղաֆադարյանը թվագրել է XIII դարի երկրորդ կեսով¹:

Սուրբ Հարություն մատուռի արևելյան, հյուսիսային և արևմտյան կողմերում բացվեցին մեծ թվով տապանաքարեր, որոնց քանակը նախապես հայտնի տապանաքարերի հետ հասավ 90-ի: Սա ցույց է տալիս, որ Սուրբ Հարություն մատուռը գերեզմանոցային կառույց է, և նրա շուրջը ժամանակի ընթացքում ձևավորվել է խոշոր տապանաքակ²: Տապանաքարերից երեքը կրում են մարդու ուրվագծային պատկեր, ընդ որում՝ մեկը զույգ պատկեր է, մեկը նեղացող գագաթամասով երկլանջ տապանաքար է, որը նույնպես տեղաշարժված էր, մի քանիսը ճարտարապետական դետալներ են, որոնք երկրորդական օգտագործման են ենթարկվել որպես տապանաքար: Մնացածը կամ անմշակ, թերմշակ քարեր են, կամ հիանալի հղկումով, ուղղանկյուն սալատապաններ: Բոլորը պատրաստված են բազալտից, մի մասը՝ ծակոտկեն մակերեսով, մի մասը՝ ողորկ: Սրբատաշ սալատապանները կարելի է բաժանել երեք խմբի. ա) առանց որևէ գծապատկերի, բ) մակերեսը ակոսավոր եզրագոտիով շրջանակված, գ) եզրագոտին արևմտյան եզրում վերածվում է կամարաձև խարանագարդի: Որոշ դեպքերում դրանք անկյուններում ունեն քառորդ վարդյակներ: Տապանաքարերից 18-ը արձանագիր են, որոնցից վեցը նախկինում հրատարակվել են, իսկ 12-ը նորահայտումներ են³: Ստորև տրված են Սուրբ Հարություն եկեղեցու մոտ գտնվող արձանագիր տապանաքարերի նկարագրությունը, որոնք բազալտից հարթ, ուղղանկյունաձև սալատապաններ են և դրանց վիմագրերը:


¹ Տե՛ս **Ղաֆադարյան Կ.**, նշվ. աշխ., էջ 163-164, Դիվան հայ վիմագրության, պրակ IX, Լոռու մարզ, էջ 94:

² Տապանաքարերը չեն սահմանափակվում մեր պեղած հատվածով և ձգվում են դեպի արևմուտք:

³ Ինչպես ավելի ուշ պարզվեց, այս տապանաքարերի զգալի մասը հայտնի են եղել 1980-ական թվականներին, և դրանց մասին տեղեկություններ կան 1986 թ. կազմված հաշվառման թերթիկներում: Տե՛ս Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի արխիվ, հաշվառման թերթիկներ, թիվ 297-307:



Նկար 4. Մուրբ Հարություն եկեղեցուց և Գրիգոր Տուտեորդու խաչքարից արևմուտք բացված սալատապանները (ընդհանուր տեսարան հյուսիս-արևմուտքից)



Գծ. 1. Գրիգոր Տուտեորդու խաչքարի շուրջ բացված սալատապաններ (գծագիրը՝ Պատմական հուշարձաններ վերականգնող ճարտարապետների ասոցիացիայի)

3. Տապանաքարի (196x80 սմ) մակերեսի եռյակ ակոսազծերից երկուսը արևմտյան կողմում վերածվում են խորանագարդի և հյուսվում միմյանց: Խորանի ներսում եռատող արձանագրությունն է՝ ՍԱՐԳԻՍ Վ [ԱՐ]

ԴԱՊԵՏՆ/ ԷԳԷԳՈՄԵՑԻ/ ՉԻ (1271)¹: Պ. Մուրադյանի առաջարկությամբ՝ մինչ այդ ընդունված «Գեգումեցի»-ն ուղղվել է «Էգեգումեցի»՝ Այգեգումեցի²:

4. Տապանաքարի (203x81 սմ) երկու անկյունները պսակված են եռաթև քառորդ վարդյակների գեղեցիկ պատկերներով: Ունի երկտող արձանագրություն՝ ՅՈՒՄԷՓ ՔԱՂԱՔԱՅ/Ի³: «Ի» տառը առաջին տողում չտեղավորվելու պատճառով փորագրվել է երկրորդ տողի կենտրոնում և մյուս տառերի համեմատ աչքի է ընկնում մեծ չափերով: Ըստ Կ. Ղաֆադարյանի՝ «քաղաք» ասելով պետք է հասկանալ Թիֆլիսը⁴:

5. Տապանաքարի (182x92 սմ) մակերեսը եզերված է ակոսագծերով: Արձանագրությունը՝ ՎԱՍԱԿ: ՈԿ (1211)⁵: Սա Մուրբ Հարություն եկեղեցու շրջակայքի՝ առայժմ հայտնի ամենավաղ թվագիր տապանաքարն է:

6. Տապանաքար (159x80 սմ): Արձանագրությունը՝ ՍԱՐԳԻՍ ԵԻ⁶: Այս և հաջորդ՝ իրար կողքի դրված սալատապանները, փաստորեն, տապանագրերով կապված են միմյանց «եւ»-ի միջոցով, մի հետաքրքիր երևույթ, որ Սանահնում հանդիպում է սակավ օրինակներով: Ամենայն հավանականությամբ ազգակից անձանց միևնույն ժամանակ կատարված թաղումներ են:

7. Տապանաքարը (156x71 սմ) դրված է նախորդի կողքին: Արձանագրությունը՝ ԽԱՉԱՏՈՒԴ⁷:

8. Տապանաքարին (182x82 սմ) միատող արձանագրություն է՝ ԳՐԻԳՈՐ⁸:

9. Տապանաքարը (181x79 սմ) մակերեսին ունի միակուս եզրագիծ և երկտող արձանագրություն՝ ՍՏԵՓԱՆՆՈ/Ս ԿԱՍԴ: Ստեփաննոս Կամրանց հիշատակվում է զանգակատան ներսի արձանագրություններից մեկում⁹:

¹ Տե՛ս **Ղաֆադարյան Կ.**, նշվ. աշխ., էջ 172, **Մուրադյան Պ.**, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977, էջ 302, Դիվան հայ վիմագրության, պրակ IX, Լոռու մարզ, էջ 111:

² Տե՛ս **Մուրադյան Պ.**, նշվ. աշխ., էջ 302:

³ **Ղաֆադարյան Կ.**, նշվ. աշխ., էջ 173, Դիվան հայ վիմագրության, պրակ IX, Լոռու մարզ, էջ 112:

⁴ Տե՛ս **Ղաֆադարյան Կ.**, նշվ. աշխ., էջ 173:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 172, Դիվան հայ վիմագրության, պրակ IX, Լոռու մարզ, էջ 112:

⁶ Տե՛ս **Ղաֆադարյան Կ.**, նշվ. աշխ., էջ 173, Դիվան հայ վիմագրության, պրակ IX, Լոռու մարզ, էջ 112: Նախորդ ուսումնասիրողների աչքից, ամենայն հավանականությամբ, վրիպել և չի հրատարակվել «ԵԻ» բառը:

⁷ Տե՛ս **Ղաֆադարյան Կ.**, նշվ. աշխ., էջ 172, Դիվան հայ վիմագրության, պրակ IX, Լոռու մարզ, էջ 112: Այս Խաչատուրը «Դիվան հայ վիմագրությունում» նույնացվում է XV դարի երկրորդ կեսի գրիչ Արիստակեսի աշակերտի հետ: Ավելի հավանական ենք համարում, որ տապանաքարը իր շրջապատի տապանների հետ պետք է թվագրել XIII դարով:

⁸ Տե՛ս **Ղաֆադարյան Կ.**, նշվ. աշխ., էջ 173, Դիվան հայ վիմագրության, պրակ IX, Լոռու մարզ, էջ 112: Նախկինում հրատարակվել են վերոնշյալ 1-6 տապանագրերը: Մյուս վիմագրերը հրատարակվում են առաջին անգամ:

⁹ Տե՛ս **Ղաֆադարյան Կ.**, նշվ. աշխ., էջ 146, Դիվան հայ վիմագրության, պրակ IX, Լոռու մարզ, էջ 74:

10. Տապանաքարի (188x82 սմ) մակերեսին առկա է եռակուս եզրագիծ, որը հյուսիսարևելյան անկյունում ունի քարի կոտրվածքին համապատասխան շեղում: Արձանագրությունը՝ ԴԱԻԻԹ ԳԱԳԷՑԻ: Միգուցե նշյալ բնակավայրը (Գագ, Գագե) 1063 թ. Սանահնի Քոթուկում հիշատակվող Գաքեն է, որ մի շարք այլ բնակավայրերի թվում ընծայվում է Հաղպատի վանքին¹:

11. Տապանաքարի (220x94 սմ) մակերեսին առկա է եռակուս եզրագիծ, իսկ անկյուններում՝ եռաթև վարդյակներ: Արձանագրությունը հետևյալն է՝ ՊԱԻՂՈՍ ՎԱՐԴ [ԱՊԵՏ]:

12. Տապանաքարի (209x86 սմ) մակերեսին առկա է եռակուս եզրագիծ: Ունի միատող, բավականին հետաքրքիր արձանագրություն, որտեղ կրճատումներով են գրված բոլոր երեք բառերը, այդ թվում անունը՝ ՍՏԷՓԱՆՈՍ: Վ [ԱՐ] Դ [ԱՊԵՏ]: ՃԳՆ [ԱԻՈՐ]:

13. Տապանաքարի (214x79 սմ) մակերեսն ունի եռակուս եզրագիծ և երկտող արձանագրություն՝ ՀԱՆԳԻՍ ՅՈՀԱՆՆ/ԻՄԻ ՈՐ ԵՒ ՇԷԿ ՈՂԶ (1247): Այստեղ ուշագրավ է Հովհաննեսի «Շեկ» (դեղնակարմիր²) մականունը: Այս Հովհաննեսը հիշատակվում է Բարձրաքաշի Սուրբ Աստվածածին եկեղեցու զավթի արևմտյան պատի արձանագրությունում, որտեղ իր եղբորորդի Սարգսի հետ նվիրատվություն են կատարել եկեղեցուն³:

14. Տապանաքարին (177x73 սմ) միատող արձանագրություն է՝ ԽԱՉՈՏ Վ [ԱՐ] Դ [ԱՊԵՏ] ՃԳ [ՆԱԻՈՐ]: Այս հազվադեպ հանդիպող անձնանունը հիշատակված է միայն XIII դարից՝ Անիում, Դսեղում, Շիրակում, և ըստ Աճառյանի՝ պետք է նշանակի կամ «խաչով լիք», կամ «խաչի ոտք»⁴:

15. Տապանաքարի (203x77 սմ) եզրագոտին նույնպես արևմտյան կողմում վերածվում է խորանագարդի⁵: Արձանագրությունը՝ ԽԱՉԱՏՈՒԻ ՎԱՐԴ [ԱՊԵՏ]: Սա և հաջորդ տապանաքարի վիմագրերը նույնպես կապված են միմյանց «եւ»-ի միջոցով, սակայն այս դեպքում, ի տարբերություն նախորդ օրինակի, «եւ»-ը փորագրված է երկրորդ քարի վրա:

16. Տապանաքար (183x72 սմ): ԵՒ ԳՐԻԳՈՐ ՏՆԱՇԷՆ: Բավական հետաքրքրական է «տնաշեն» մականունը, որը այստեղ պետք է հասկանալ տուն կառուցող, շինարար իմաստով:

17. Տապանաքար (215x85 սմ): Արձանագրությունը՝ ԽԱՉԱՏՈՒԻ ԳՈՄԿԵՑԻ:

¹ Յիշատակարան Սանահնյ վանից (Սանահնի քեթուկը), աշխ.՝ Պ. Մուրադյանի, Ս, Էջմիածին, 2007, էջ 231:

² Տե՛ս **Աճառեան Հ.**, Հայերեն արևատական բառարան, հ. 3, Երևան, 1926, էջ 513:

³ Տե՛ս **Զալալյանց Ս.**, նշվ. աշխ., էջ 112, **Մարգարյան Գ.**, «Բարձրաքաշ» վանքը և նրա վիմագրությունը // «Էջմիածին», 1951, թիվ 11-12, էջ 50, Դիվան հայ վիմագրության, պրակ IX, Լոռու մարզ, էջ 386:

⁴ Տե՛ս **Աճառեան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հ. 2, ց. 1, Երևան, 1944, էջ 498:

⁵ Քարի վրա ժամանակին բետոն է արվել, ինչի հետևանքով տառերը դժվարությամբ բացվեցին:

18. Տապանաքար (174x76 սմ): Արձանագրությունը՝ ՀԱՆԳԻՍՏ ՇՆՈՐՀԱ-
 ԶԱՐԴ/ ՍԻՄՈՆ ՎԱՐԴ[ԱՊԵՏ]Ի:

19. Տապանաքարի (184x76 սմ) մակերեսին փորագրված է միայն «Յ»
 տառը: Կարելի է ենթադրել, որ տապանագրի փորագրումը սկսելուն պես
 դադարեցվել է:

20. Տապանաքարը նախորդների համեմատ ունի շատ փոքր և նեղ
 չափեր (112x030 սմ): Արձանագրությունը խիստ հողմահարված է՝ ԱՅՍ Է/
 [ՀԱՆ]ԳԻՍՏ/--ԲՏՇԻՆ:



1 F U F U Բ



2 Ս Մ Ք Ն Լ Ս Մ Բ Ս Ս



3 Ս Մ Ք Ս Մ Բ Ս Մ Բ
 Բ Բ Պ Ս Ե Յ Ի

3 Զ Ի



4 Յ Ո Ւ Ս Է Բ Բ Ս Ս Բ Ս Յ
 Ի



5 Ա Ա Ս Ա Ա : Ո Ա



6 Ս Ա Ր Գ Ի Ս Ե Ի



8 Գ Ր Ի Գ Ր



7 Ի Ա Չ Ա Տ Ո Ւ Ի



9 Ս Մ Ե Բ Լ Ա Ն Ն Ո
 Ս Կ Ա Ր

Աղյուսակ I. Նորահայտ տապանաքարեր



10 ԵՒԻԹ ՉԵԼՅԻ



12 ԱՅ:ԱՂ:Ճ ԳՆ:



14 ԽԱՂՈՏԱԴՃԳ



15 ԱՂԱՏՈՐԱԿՏԻՆ



18 ԿԱԳԻՄՇՈՐԿԱՂԱԴ
ԽՄՈՆ ԱԿՏԻ Ի



11 ԴԱԿՂՈՍ ՎԱԿ



13 ԿԱԿԻՍՏՅՈՒՆ
ԽՄՈՐԵԻՇԵԿՈՂՁ



16 Ե ԴԻԴՈՐ ՆԱՇԵԼ



17 ԱՂԱՏՈՐԱԿՏԻՆ



3

ՅՍԵ
Ն ԴԻ ՍԾ
ՈՐԵՇԻՆ

Աղյուսակ II. Նորահայտ տապանագրեր

Եզրահանգումներ. Սանահնի նշանավոր համալիրի երկու եկեղեցիների տարածքի պեղումներով առաջին հերթին լուծվեց արշավախմբի առջև դրված գլխավոր խնդիրը, այն է՝ բացվեցին կառույցների շրջապատը, դրանց որմերի ստորին շարվածքները, գետնախարիսխները, Սուրբ Հակոբ եկեղե-

ցու դեպքում՝ նաև հիմքերը, նպաստելով նախագծման, ամրակայման և վերականգնման աշխատանքները շուտափույթ սկսելուն:

Պեղումները ցույց տվեցին, որ այս երկու կառույցների շրջակայքում մենք գործ ունենք մեկ հստակ ընդգծված մշակութային շերտի հետ, որն է զարգացած միջնադարյան, իսկ ավելի կոնկրետ XII-XIII դդ. շերտը: Հայտնաբերված խեցեղենի բեկորների հիմնական մասը դա հաստատում է: Դրանից ցած մայր շերտն է՝ շիկավուն կավահող, որը գրեթե զուրկ է մշակութային արժեքներից: Ուսումնասիրվող շերտից վեր նույնպես ուշմիջնադարյան շերտը բացակայում է, և դա բացատրելի է նրանով, որ տարածքը պարզապես պատված է XII-XIII դդ. գերեզմանոցով, որն ուղղակիորեն ծածկված էր վերջին շրջանում գոյացած ժամանակակից հաստ լիցքով:

Սուրբ Հարություն եկեղեցու շուրջն ամբողջությամբ պատված է տապանաքարերով, որոնք հարավային, հյուսիսային և արևելյան կողմերում սահմանափակվում են ժամանակակից գերեզմանոցով ու տնամերձ հողամասերի ցանկապատերով, և այսօր դժվար է ասել տապանաքակի տարածման շրջանակի սահմանը: Եկեղեցուց և Գրիգոր Տուտեորդու խաչքարից արևմուտք նույնպես ամբողջ տարածքը ծածկված է սալատապաններով: Պեղումների ընթացքում բացվեց միայն եկեղեցուց դեպի արևմուտք 5-6 մ լայնքով տարածք: Սակայն ակնհայտ է, որ տապանաքարերի շարքը շարունակվում է էլ ավելի արևմուտք՝ դեպի Սուրբ Հակոբ եկեղեցին, որի հյուսիսային կողմով այն ձգվում է մինչև կենտրոնական հուշարձանախամբի մերձակայք:

Հարկ է ուշադրություն դարձնել տապանաքարերի՝ եկեղեցուց բարձր լինելու հանգամանքի վրա, ինչից հանգում ենք այն եզրակացության, որ եկեղեցին կառուցվել է ավելի վաղ, քան XII-XIII դդ. տապանաքարերն են: Սովորաբար միջնադարյան գերեզմանոցները ձևավորվում և տարածվում են արդեն գոյություն ունեցող սրբատեղիների, եկեղեցիների շուրջ: Ուստի կարծում ենք, որ XII-XIII դդ. այս տապանաքարերը, որոնցից ամենավաղը 1211 թվագիր է, ինչպես նաև Գրիգոր Տուտեորդու 1184 թ. խաչքարը, կանգնեցվել են արդեն իսկ գոյություն ունեցող եկեղեցու մոտ:

Եկեղեցու ավելի վաղ կառուցված լինելու մասին են վկայում նաև նրա կառուցողական լուծումները. քարի ընտրությունը, դրանց մշակումը, շարվածքը, գետնախարսիսի ձևը ճշգրտությամբ համընկնում են Սուրբ Հակոբ եկեղեցուն:

Ելնելով վերագրյալից՝ ենթադրում ենք, որ Սուրբ Հարություն մատուռը համաժամանակյա է Սուրբ Հակոբ եկեղեցուն, սակայն ավելի ուշ՝ XII-XIII դդ. վերականգնման աշխատանքների ժամանակ, ենթարկվել է զգալի փոփոխությունների:

Արման Նալբանդյան – Նորահայտ տապանագրեր Սանահինից

ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի վարչական տարածքում գտնվող նշանավոր Սանահին վանական համալիրի հարավարևելյան հուշարձանախմբի հնագիտական ուսումնասիրությունները և պեղումները բաղկացուցիչ մասն են ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանատան դրամաշնորհով անցկացվող խոշոր ծրագրի, որով նախատեսվում են Սուրբ Հակոբ եկեղեցու, Սուրբ Հարություն մատուռի, Գրիգոր Տուտեորդու խաչքարի վերականգնման և պահպանման աշխատանքներ (պատվիրատու՝ «Հայկական հուշարձաններ վերականգնող ճարտարապետների հայկական ասոցիացիա»)։ Սուրբ Հակոբ և Սուրբ Հարություն եկեղեցիները գտնվում են համալիրի պարսպապատ հատվածից դուրս, գլխավոր՝ կենտրոնական հուշարձանախմբից մոտ 70-100 մետր հարավ-արևելք։ Պեղումներից գտնվեցին մեծ թվով XI-XIII դդ. խեցեղեն, որոնցից ուշագրավ են զարդաքանդակ շքադյուսներն ու խաչագարդ ճակտոնները։ Սուրբ Հակոբ եկեղեցու մոտ աշխատանքների ընթացքում ի հայտ եկան շուրջ 1.5 տասնյակ տապանաքարեր, որոնցից միայն երկուսն են արձանագիր, իսկ Սուրբ Հարություն եկեղեցու շուրջ հայտնաբերված և հետազոտված տապանաքարերի թիվը հասավ 90-ի, որոնցից արձանագիր են 18-ը։ Դրանցից նախկինում հրատարակված են եղել վեցը։

Арман Налбандян – Новые надгробные надписи Санаина

Ключевые слова – Санаинский монастырский комплекс, церковь Святого Акопа, церковь Святого Арутюна, памятник, раскопки, надгробная плита, надгробные надписи

Археологические исследования и раскопки юго-восточного памятника знаменитого монастырского комплекса Санаин на административной территории общины Алаверди Лорийской области РА являются неотъемлемой частью крупной программы, финансируемой посольством США в Армении. Согласно этой программе, планируется работа по реставрации и консервации церкви Святого Акопа, часовни Святого Арутюна, хачкара Григора Тутеворди (заказчик – «Армянская ассоциация архитекторов, реставрирующих армянские исторические памятники»). Церкви Святого Акопа и Святого Арутюна расположены вне огороженной территории комплекса, примерно в 70-100 метрах к юго-востоку от центральной группы памятников. Во время раскопок в большом количестве была обнаружена керамика XI-XIII веков. Особый интерес представляют орнаментированные плиты (изразцы) и украшенные крестами фронтоны. Данный доклад посвящен надгробиям и надписям, найденным во время раскопок. В результате работ возле церкви Святого Акопа было обнаружено около 1,5 десятка надгробий, только на двух из них имелись надписи. Число же надгробий, обнаруженных возле церкви Святого Арутюна и изученных, достигло 90, 18 из которых с надписями, 6 из них были опубликованы ранее.

Arman Nalbandyan – *Newly Discovered Epitaphs from Sanahin*

Key Words – *Monastery complex of Sanahin, Saint Jacob church, Saint Harutyun church, monument, excavation, tomb, epitaph*

The archaeological studies and excavations of the monuments, located on the south-eastern side of the famous Sanahin monastery complex, (the complex is situated in administrative region of Alaverdi community, in Lori region of the Republic of Armenia) are part of a huge project sponsored by the American Embassy in Armenia. The Project is directed to the restoration of Saint Jacob church, Saint Harutyun chapel, the cross-stone of Grigor Tutervordi and conservation jobs (the Client is “Armenian Association of Architects of Historic Monuments”). Saint Jacob and Saint Harutyun churches are located out of the fenced area of the complex, approximately 70-100 m south-east from the main complex. A great number of pottery, dating to XI-XIII centuries, were found during the excavations, the most notable of which are ornamanted bricks. This report it devoted to the tombs and epitaphs explored during the excavations. During the excavation work near Saint Jacob church approximately 1,5 dozen tombs appeared, only two of which are with inscriptions, and the number of the tombs discovered and explored from the surrounding area of Saint Harutsyun church has got up to 90, 18 of which have inscriptions. Six of them were published before.

Ներկայացվել է 13.01.2022

Գրախոսվել է 02.03. 2022

Ընդունվել է տպագրության 29.03.2022

Արման Նալբանդյան – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտաշխատող (hnagetyan18@gmail.com)

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ Ս. ՎԱՐԴԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ
ՎԱՐԴԱՆԱՆՑ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ***

Բանալի բառեր – Վարդանանք, Գեղարքունիք, սրբավայր, նահատակ, հուշարձան, եկեղեցի

Վարդանանց սրբավայրեր են կոչվում այն հուշարձանները, որոնք առնչվում են Վարդան Մամիկոնյանի ղեկավարած պայքարի տարբեր դրվագներին: Դրանց մասին պատմական վկայություններ չեն պահպանվել: Գիտական շրջանակներում կան սոսկ ավանդապատումներ՝ դրանց կառուցման, անվանակոչության կամ Վարդանանքին վերագրելու առնչությամբ: Բացառություն են միայն վայոցձորյան հուշարձանները, որոնց կառուցման վայրի և այլ մանրամասների մասին հաղորդում է Ստեփանոս Օրբելյանը¹: Այդ հուշարձանները չեն հետազոտվել (բացառություն է միայն Անգեղակոթի Ս. Վարդան եկեղեցին)², չկան հնագիտական սկզբնաղբյուրներ:

Վերջին տարիներին Վարդանանց սրբավայրերը դարձել են մեր ուսումնասիրության առարկան: Պատմամատենագիտական սկզբնաղբյուրների և դաշտային հետազոտությունների հիման վրա մեր կողմից փաստագրվել են մեկ տասնյակից ավելի հուշարձաններ, որոնք կապվում են Ավարայրին նախորդող կամ հաջորդող իրադարձությունների հետ: Դրանք գտնվում են Հայաստանի տարբեր շրջաններում և հայտնի են Ս. Վարդան³, Վարդան Չորավար, Վարդանանց և այլ անվանաձևերով:

Սույն հոդվածը նվիրված է Գեղարքունիքի մարզի խնդրո առարկա հուշարձանների ուսումնասիրությանը, որոնց նախնական հետազոտությունը

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ 20TTSH-002 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

¹ Ստեփաննոսի Մինեաց եպիսկոպոսի պատմություն տանն Միսական, Մուսկվա, 1861, էջ 48-51:

² Մանրամասն տե՛ս Ալեքսանյան Տ., Անգեղակոթի Ս. Վարդան եկեղեցին հնագիտական հետազոտությունների լույսի ներքո // «Էջմիածին», 2019, թիվ Ժ, էջ 59-74:

³ Նշենք, որ Ս. Վարդանը հենց Վարդան Մամիկոնյանն է, որին Ավարայրում նահատակված մյուս անձանց հետ սրբադասել է Հայ առաքելական Սուրբ եկեղեցին: Տե՛ս Պանֆյուրով Լ., Կարապետյան Ա., Հայոց զորավար սրբերը // «Ավարայրի խորհուրդը», գիտաժողովի նյութեր, Երևան, 2003, էջ 96-99, Հայոց եկեղեցու սրբերը և սրբակենցաղ անձինք, կազմեց Ռ. Մաթևոսյանը, Էջմիածին, 1999, էջ 100-103:

նոր լույս է սփռում քննարկվող թեմայի վրա և ուրվագծում հետագա ուսումնասիրությունների ուղղությունը:

Վարդենիսի Ս. Վարդան սրբատեղին: Սրբավայրը գտնվում է Վարդենիս քաղաքի հարավային ծայրամասում՝ Վարդենիս-Այրք ճանապարհի արևմտյան մասում¹: Այստեղ ժայռի տակից բխում է մի աղբյուր՝ առվակով հոսելով դեպի հարավ: Աղբյուրի մոտ տեղադրված են Վարդան Մամիկոնյանին պատկերող նկարներ, հին ու նոր խաչքարեր, որոնց առջև և ժայռի պատերին տեղացիները մումեր են վառում (նկ. 1):



1. Վարդենիսի Ս. Վարդան սրբավայրի ընդհանուր տեսքը

Սրբավայրի վերաբերյալ բնակիչների շրջանում պահպանվել են տարբեր ավադագրույցներ, ըստ որոնցից մեկի՝ Ավարայրի դաշտ մեկնելու ճանապարհին այս աղբյուրի մոտ է դադար առել Վարդան սպարապետը²: Մեկ այլ վարկածով՝ այս ավանդությունը իրենց հետ բերել են 1830 թ. Արևմտյան Հայաստանի Դիադին քաղաքից գաղթած հայերը: Դիադինի մոտ եղել է մի աղբյուր-մատուռ, որը, ըստ տեղացիների, կառուցվել է Վարդան Մամիկոնյանի ռազմերթի ճանապարհին: Սրբավայրի պաշտամունքն այնքան արմատացած է եղել, որ XIX դարում Վարդենիսում վերաբնակեցված արևմտահայերը պահպանված ավանդությունը սկսել են վերագրել տարածքին: Ժամանակի ընթացքում ժողովուրդը սրբացրել է հոսող ջուրը, իսկ տեղը դարձրել տարածաշրջանում հայտնի սրբատեղի, որտեղ ուխտի են գալիս հիմնականում Վարդավառի տոնին³:

¹ Սրբավայրը մոտ է նաև Ակունք գյուղին, որի պատճառով երբեմն կոչվում է նաև Ակունքի Ս. Վարդան: Տե՛ս **Աբրահամյան Հ.**, Վարդավառյան ուխտավայրերի տիպաբանության փորձ // Տարեգիրք (ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ), հ. ԺՄ, Երևան, 2016, էջ 198:

² Տե՛ս նույն տեղում, էջ 179:

³ Տե՛ս նույն տեղում:

Ներքին Գետաշենի Ս. Վարդան եկեղեցին: Ներքին Գետաշենը (նախկինում Ներքին Աղյաման, Կոթաքար) Գեղարքունիքի մարզի ամենամեծ գյուղերից է, գտնվում է Մարտունի քաղաքից 2 կմ արևմուտք: Հնում գյուղը կոչվում էր Կոթ՝ սկզբնաղբյուրներում հիշատակվելով նաև որպես հայտնի գյուղաքաղաք, և գտնվելով Դվին-Պարտավ ճանապարհի վրա՝ IX-X դդ. դարձել էր Գեղարքունիքի առևտրական կարևոր բնակավայրերից մեկը¹:

Ս. Վարդան եկեղեցին գտնվում է գյուղի արևմտյան մասում՝ գերեզմանոցի տարածքում: Ներկայացնելով գյուղի հնությունները՝ Գեղարքունիքի տեղագիր Ս. Սմբատյանը հպանցիկ նշում է, որ «գիւղի չորս կողմերը լիքն են աներակներով, որոց մեջ երևում են եօթն եկեղեցիք կիսաւեր»²: Այս կցկտուր տեղեկություններից կարելի է միայն ենթադրել, որ խոնարհված եկեղեցիների շարքում էր նաև Ս. Վարդանը:

Հուշարձանի մասին հիշատակում է միայն Ե. Լալայանը, որի փոխանցմամբ եկեղեցում կատարվել են նաև նորոգչական աշխատանքներ. «Գիւղի արևմտեան ծայրումն էլ գտնուում է սրբատաշ քարերով շինուած մի փոքրիկ, կիսաւեր եկեղեցի, որ այժմ վերանորոգել են: Եկեղեցու վերան արձանագրութիւն չկայ. գիւղացիները նրան Ս. Վարդան են կոչում: Շուրջը կան բաւակաւնաչափ խաչքարեր»³:

1950-ական թվականներին եկեղեցին ամբողջությամբ խոնարհված է եղել: Հուշարձանից տեսանելի էին միայն ուղղանկյուն հատակագիծը, բեմի հետքերը և կրաշաղախի հատվածները⁴:

Եկեղեցին միանավ ուղղանկյուն սրահ է՝ արտաքուստ շեշտված արսիդով, մուտքը արևմտյան ճակատից է: 1988-1989 թթ. տեղի բնակիչների ջանքերով հուշարձանի տարածքը մաքրվել է փլատակներից և հողակույտերից, իսկ բացված եկեղեցին վերակառուցվել: Տեղացիների փոխանցմամբ մաքրման աշխատանքների ժամանակ բացվել են հին եկեղեցու հիմքերը՝ մինչև 60-70 սմ բարձրությամբ պահպանված պատերով: Երևացող որմերի վերնամասերը շարվել են նոր քարերով (ներքին ճակատների շարվածքներում օգտագործվել են նաև հին եկեղեցու քարերը), հատակը բետոնապատվել է, իսկ երկլանջ տանիքը ծածկվել մետաղյա թիթեղով (նկ. 2-Ա, Բ)⁵:

¹ **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ.,** Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, 1991, էջ 186:

² **Ս. արք. Սմբատեանց,** Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, Վաղարշապատ, 1895, էջ 530:

³ **Լալայեան Ե.,** Նոր Բայազետի գաւառ կամ Գեղարքունիք // «Ազգագրական հանդէս», 1908, թիվ 2, էջ 144:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. թիվ 1600, Մարտունու շրջանի պատմաճարտարապետական և հնագիտական հուշարձանների պասպորտներ՝ կից նյութերով, 1953 թ., Պասպորտ թիվ 7, Եկեղեցի Ս. Վարդան:

⁵ Եկեղեցու ոչ մասնագիտական նորոգումը շարունակվել է նաև վերջին տարիներին: Մասնավորապես, ամբողջությամբ սվաղվել են պատերի արտաքին երեսները, իսկ ներսից



Ա



Բ


2. Ներքին Գետաշենի Ս. Վարդան եկեղեցու ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից և ներսից

Դատելով բնակիչների փոխանցած բանավոր տեղեկություններից և տեղում կատարած մեր ուսումնասիրություններից՝ եկեղեցու հատակագիծը մնացել է անփոփոխ:

Եկեղեցուն կից և խորանում պահպանվել են տարբեր դարաշրջանների ամբողջական խաչքարեր: Հատկապես ուշագրավ են եկեղեցու հյուսիսային և հարավային պատերի ստորին շարքերում պահպանված խոյակն ու հիմնախարիսխը: Դրանք գտնվում են հյուսիս-հարավ առանցքի վրա՝ ուղիղ դեմ


պատվել սպիտակ ծեփամածուկով՝ հիմնովին աղճատելով հուշարձանի պատմական տեսքն ու վերացնելով հին եկեղեցու տեսանելի հատվածները:

դիմաց և ամենայն հավանականությամբ հին եկեղեցու ճարտարապետական մասերից են (նկ. 3-Ա, Բ):



3. Եկեղեցու հատակագիծ և մանրամասեր (չափագրությունը՝ Գ. Գյուլամիրյանի)

Առավել արժեքավոր են եկեղեցու ներսում հավաքված վաղ քրիստոնեական թևավոր խաչերի բեկորները, որոնք, մեր համոզմամբ, հայտնաբերվել են փլատակների մաքրման ժամանակ: Մեր գիտարշավի ընթացքում փորձեցինք վերականգնել քարակոթողների նախնական պատկերը, որոնց առանձին հատվածները հայտնաբերվեցին շրջակայքի տեղագնության ժամանակ (նկ. 4):



Մ 1:10 10 0 10 20 30 40 50

4. Թևավոր խաչի բեկորներ (վերականգնությունը՝ Գ. Գյուլամիրյանի)

Ներկայումս եկեղեցին արտաքուստ կիսագետնափոր է, պատերի արտաքին հատվածները ծածկված են հողով, ինչը հնարավորություն չի տալիս ավելի հանգամանալից անդրադառնալ արտաքուստ կիսաշրջանաձև աբսիդի մանրամասներին, որմնախարիսիսների գոյությանը և այլ մանրամասներին:

Արգիճիի գետահովտի Ս. Վարդան եկեղեցին¹: Արգիճին գետ է Գեղարունիքի մարզում (հայտնի նաև Արգիջի, Այրիջա, Իշխանագետ, Կոթիգետ անվանաձևերով²), սկիզբ է առնում Վարդենիսի լեռնաշղթայի Գնդասարի հյուսիսային լանջից և Ներքին Գետաշեն գյուղի մոտ թափվում է Սևանա լիճ: Գետահովտը հարուստ է տարբեր դարաշրջանների պատմական հուշարձաններով, հին բնակատեղիներով: Վերջիններս 1950-ական թվականներին աստիճանաբար ամայացել են՝ վերածվելով Մադինա և Վերին Գետաշեն գյուղերի ամառային անասնապահական կացարանների (յայլա):

Ս. Վարդան եկեղեցին գտնվում է Արգիճի գետի վերնահովտում, լայնատարած տափարակի նկատմամբ իշխող դիրք զբաղեցնող հրվանդանի հարավային ստորոտին, ժայռերի մոտ: Հրվանդանի հարթ տարածության վրա մինչ օրս տեսանելի են ամրաշինական կառուցվածքների հետքեր³: Նրա հարավային մասը բաղկացած է բարձր, ուղղահայաց ժայռերից, որտեղ կա մեծ քարայր: Բնակիչների հավաստմամբ՝ նախկինում քարանձավից հորդառատ աղբյուր է բխել, որը ժամանակի ընթացքում ցամաքել է: Ե. Լալայանի փոխանցմամբ՝ ժայռը կոչվում է Նաղարախանա, որից ներքև կա Ս. Վարդան անունով մի հին, ավեր եկեղեցի⁴ (նկ. 5):



5. Ս. Վարդան եկեղեցու և ամրոցի տեղադիրքը


¹ Հուշարձանը գտնվում է Նաղարախանի ամրոցի մոտ, ինչը թույլ է տալիս սրբատեղին ներկայացնել նաև այդ անվամբ: Սակայն մենք հակված ենք հրաժարվել օտարածին անունից և շրջանառել «Արգիճիի Ս. Վարդան» անվանաձևը:

² Տե՛ս **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ.**, նշվ. աշխ., հ. 1, Երևան, 1986, էջ 405:

³ Տե՛ս **Biscione R., Hmayakyan S., Parmegiani N.**, The North-Eastern Frontier Uartians and Non-Uartians in the Sevan Lakke Basin, I, The Southern Shores, Roma, 2002, p. 199-203.

⁴ Տե՛ս **Լալայան Ե.**, նշվ. աշխ., էջ 155:

Հուշարձանը հատակագծում ուղղանկյուն, խոշոր, կոպտատաշ քարերով կառուցված շինություն է, որից պահպանվել են մինչև 1.7 մետր բարձրությամբ պատերը: 1996 թ. կիսավեր աղոթատան արևելյան կեսի վրա՝ հին եկեղեցու պարագծից ներս, կառուցվել է նոր մատուռ, որը վերաշինվել է 2019 թ.¹: Դրա հետևանքով բավականին խաթարվել են հին շինության նախնական տեսքն ու հատակագծային լուծումները: Մասնավորաբար, եկեղեցու աղոթասրահը քարերով սահմանազատվել է՝ ստեղծելով փոքր, ներքին բակ: Ամենայն հավանականությամբ մուտքը եղել է հարավային պատի կենտրոնական հատվածից, որի դիմաց կառուցվել են աստիճանահարթակ (նկ. 6):



6. Մ. Վարդան եկեղեցու ընդհանուր տեսքը հարավից և հատակագիծ (չափագրությունը՝ Գ. Գյուլամիրյանի)

Քննարկում: Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ՝ Ավարայրից հեռո

¹ Շինարարական արձանագրությունը գետեղված է մատուռի բարավորին. «ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ ԽՈՆԱՐՀՎԱԾ ՄԱՏՈՒՈՐ 1996 թ. ԱՍԾՈ ՎԱՄՈՔ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ Է ԳԱԳԻԿ ՋՀԱՆԳԻՐՅԱՆԸ (ԱՐԱՐԱՍ / ԴԱՎԱԼՈՒ ԳՅՈՒՂԻՑ) ԵՎ 2019 Թ. ՆՈՐՈԳ ՎԵՐԱՇԻՆԵԼ Է Ի ՀԻՇԱՏԱԿ ԻՐ ԾՆՈՂՆԵՐ ՎՐԵՇ ԴԱՆԻԵԼԻ ՋՀԱՆԳԻՐՅԱՆԻ ԵՎ ԿԼԱՐԱ ԳԵՎՈՐԳԻ ԱՎՈՅԱՆԻ»:

հայոց ջոկատներից մեկը փորձում էր Վայոց ձորով անցնել Արցախ: Նրանց հետապնդում էր պարսից զորքը, որոնք չորս անգամ մարտի են բռնվել հայերի հետ: Պատմիչը չի նկարագրում դեպքերի հետագա ընթացքը՝ հայոց ջոկատի գործողությունները և ուղին: Այնուամենայնիվ, առկա նյութերի հետազոտությունը և գիտարշավների ընթացքում կատարած մեր փաստագրումները հիմք են տալիս կարծելու, որ նահանջող ջոկատը Մելիմի լեռնանցքով անցել է Սևանի ավազան: Հետաքրքիր է արձանագրել, որ նրանք Վայոց ձորի տարածքում շարժվել են Եղեգիս գետի ձախափնյա մասով՝ որպես ուղենիշ ունենալով այս թևի վրա տեղակայված ամրոցները, ինչից բխելի է, որ հայ-պարսկական բախումները տեղի են ունեցել ամրոցներից ոչ հեռու¹: Այս տեսակետն առայժմ շատ խոցելի է, և անհրաժեշտ են լրացուցիչ փաստեր, ինչը, մեր համոզմամբ, հնարավոր է քննարկվող հուշարձանների պեղումների շնորհիվ:

Ըստ ժամանակագրության և բնույթի՝ Վարդանանց սրբավայրերը բաժանվում են երկու հիմնական խմբերի՝


ա) հուշարձաններ, որոնք կառուցվել են վաղ միջնադարում և ուղղակիորեն առնչվում են Վարդան Մամիկոնյանի և նրա ղեկավարած ապստամբության դրվագների հետ,

բ) հուշարձաններ, որոնք կառուցվել են ավելի ուշ՝ ի հիշատակ Վարդանանց նահատակների:

Արգիճիի գետահովտի և Ն. Գետաշենի Ս. Վարդան եկեղեցիների ճարտարապետական հորինվածքի և մանրամասների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք կառուցվել են վաղ միջնադարում և եղել են Դվին-Պարտավ պատմական ճանապարհի վրա²: Արգիճիի Ս. Վարդանը գտնվում է Վայոց ձորից Կոթ գնացող ճանապարհի անմիջական հարևանությամբ, իսկ Ներքին Գետաշենի Ս. Վարդանը՝ պատմական Կոթ գյուղաքաղաքում է (նկ. 7):

¹ Մանրամասն տե՛ս **Ալեքսանյան Տ.**, Դիտարկումներ Վարդանանքի վայոցձորյան հուշարձանների շուրջ // «Վայոց ձոր», Պատմամշակութային ժառանգության դրվագներ, Երևան, 2021, էջ 250-259:

² Տե՛ս **Հարությունյան Բ.**, «Դվին-Պարտավ» ճանապարհի Sisajan-Gelakuni գծամասը // «ՊԲՀ», 1968, թիվ 1, էջ 213-220, **Ժամկոչյան Ա.**, Դվին-Պարտավ ճանապարհը վաղ միջնադարում (V-IX դդ.) // «Էջմիածին», 2005, թիվ ԺԲ, էջ 39-46:



**7. Դվին-Պարտավ ճանապարհը
(քարտեզի հեղինակ՝ Բ. Հարությունյան)**

Դրանց գոյությունը հիմք է տալիս կարծելու, որ հայոց ջոկատի մնացյալ մասը շարունակել է երթը հայտնի ճանապարհով, և հավանական է, որ հայպարսկական հաջորդ բախումները տեղի են ունեցել Արգիճիի լայնարձակ դաշտում: Հայերի նահատակության վայրում կառուցվել են եկեղեցիներ, ինչը տեսնում ենք նաև Վայոց ձորի հուշարձանների պարագայում: Նման տեսակետի համար կարևոր հիմք են նաև Ավարայրի մասնակից Եղիշեի ընդհանրական հաղորդումները Վարդանանքի նահատակների հիշատակին հուշարձաններ կառուցելու վերաբերյալ՝ առանց մանրամասնելու դրանց տեղն ու տեսակը. «Բազում արձանք կանգնեալ էին յանուն նոցա, և անուանք իւրաքանչիւր նշանակեալ ի նոսա»¹:

Տիգրան Ալեքսանյան, Դիանա Միրիջանյան – Գեղարքունիքի մարզի Ս. Վարդան հուշարձանները Վարդանանց սրբավայրերի ուսումնասիրության համատեքստում

Հողվածը նվիրված է Գեղարքունիքի մարզի Ս. Վարդան հուշարձանների հետազոտությանը՝ Վարդանանց սրբավայրերի համատեքստում: Հարկ է ընդգծել, որ Վարդանքին առնչվող հուշարձանների առանձին ուսումնասիրությունը նոր խոսք է հայագիտության ոլորտում: Նախկինում դրանց վերաբերող նյութերը ընդհանրական ձևով տեղ են գտել հայկական ճարտարապետությանը կամ սրբավայրերին նվիրված աշխատություններում: Քննարկվող հուշարձանները գտնվում են Մար-

¹ Եղիշեի Պատմություն Վարդանանց, Թիֆլիս, 1913, էջ 263:

տունու և Վարդենիսի տարածաշրջաններում և տեղաբաշղված են պատմական Դվին-Պարտավ ճանապարհի հարևանությամբ: Ստեփանոս Օրբելյանի հաղորդմամբ, Ավարայրից հետո հայոց զորաջոկատներից մեկը փորձում էր անցնել Արցախ: Սակայն Վայոց ձորում տեղի ունեցած չորս ճակատամարտերի նկարագրությունից հետո պատմիչն ավարտում է իր խոսքը մի շարք հարցեր թողնելով անպատասխան: Հոդվածում ներկայացվող հուշարձանների քննությամբ փորձ է արվում հնարավորինս լրացնել այդ բացը: Առկա նյութերի քննությունը և մեր գիտարշավների ընթացքում կատարած դիտարկումները հիմք են տալիս ենթադրելու, որ Ավարայրից հետո Արցախ նահանջող հայոց ջոկատը Սելիմի լեռնանցքով անցել է Սևանի ավազան: Նրանց հետապնդող պարսիկների հետ հաջորդ բախումները տեղի են ունեցել Արգիճիի լայնարձակ դաշտում և պատմական Կոթ ավանի մոտ:

Тигран Алексанян, Дианна Мириджян – Памятники Св. Вардана в Гегаркуникской области в контексте исследования святилищ Вардананца

Ключевые слова – Вардананк, Гегаркуник, святилище, мученик, памятник, церковь

Статья посвящена изучению памятников св. Вардана в Гегаркуникской области в контексте святилищ Вардананца. Следует подчеркнуть, что отдельное изучение памятников, связанных с Варданком, является новым словом в арменоведении. Раньше связанные с ними материалы в обобщенном виде были представлены в трудах, посвященных армянской архитектуре или святилищам. Рассматриваемые памятники расположены в Мартунинском и Варденисском районах, недалеко от исторической дороги Двин-Партав. По словам Степаноса Орбеляна, после Аварайрской битвы один из армянских отрядов пытался перейти в Арцах. Однако после описания четырех сражений в Вайоц Дзоре историк заканчивает свое повествование, оставив несколько вопросов без ответов. В статье делается попытка восполнить этот пробел с помощью исследования данных памятников. Изучение имеющихся материалов, а также полевые исследования, сделанные в ходе наших научных экспедиций, дают нам основания полагать, что путь армянского отряда, отступавшего в Арцах после Аварайрской битвы, проходил через Селимский перевал по направлению к бассейну озера Севан. Следующие столкновения с преследовавшими их персами произошли на обширной равнине реки Аргичи и недалеко от исторической деревни Кот.

Tigran Aleksanyan, Dianna Mirijanyan – St. Vardan Monuments of Gegharkunik Province in the Context of Vardanants Sanctuaries

Key Words – Vardanank, Gegharkunik, Sanctuary, Martyr, Monument, Church, Village, Province, Architecture, Battle

The article is devoted to the study of St. Vardan monuments in Gegharkunik province in the context of Vardanants Sanctuaries. Note that this is a new study in the field of Armenology devoted to the monuments related to Vardank. In the past, certain materials related to them could be found in works dedicated to Armenian architecture or sanctuaries. The monuments under study are located in the Martuni and Vardenis regions and are located near the historic Dvin-Partav road. According to Stepanos Orbelyan, after the Battle of Avarayr, one of the Armenian detachments tried to retreat in Artsakh. However, after describing the four battles in Vayots Dzor, the historian ended up by leaving a number of questions unanswered. The study

of the monuments presented in this article is an attempt to fill this gap to the extent possible. The study of the available materials and observations made during our scientific expeditions give reason to believe that after the Battle of Avarayr the Armenian detachment, which retreated in Artsakh, passed through the Selim passage and came to the Sevan basin. The next clashes with the Persians who were pursuing them took place on the Valley of Argitchi River and not far from the historical village of Kot.

Ներկայացվել է 12.01.2022

Գրախոսվել է 02.03. 2022

Ընդունվել է տպագրության 29.03.2022

Տիգրան Ալեքսանյան – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող (tigranalexanyan@yandex.ru)

Դիաննա Միրիջանյան – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող (dianamirijanyan@gmail.com)

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հ.-Ե. ԿՈՎՈՐԴԱՅԻՆՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՒԼ ՇՓԱԿԱՆ Հ (H)-Ի ՀՆՉԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ (ապաժամանակյա և տարաժամանակյա հայեցակետեր)

Բանալի բառեր – Ե. Կուրիլովիչ, Է. Մական, Օ. Սեմերենյի, խուլ շփական, հետնալեզվային, ընդհանուրինդեկրոպական լեզու, նախաձև, ձայնորդական կայֆիցիենտ, «կոկորդային տեսություն», ապաժամանակյա հայեցակետ

Հին հայերենի որոշ հնչույթների, մասնավորապես՝ հպաշփականների և առանձին շփականների հիմնական նախաձև(եր)ի հաստատումը կապված է որոշակի դժվարությունների հետ, որովհետև դրանք ունեն զգալիորեն լայն և ոչ հազվադեպ ընդհանուր նախաձև(եր)ի չհանգող համապատասխաններ¹: Այդպիսի հնչույթների կարգին է դասվում նաև միաստիճան հետնալեզվային խուլ շփական *h* (h)-ն:

Պատմահամեմատական հայերենագիտության մեջ սահմանվում են *h*-*ե*. նախաձևերի հետ հայերենի *h* (h)-ի հետևյալ համապատասխանությունները: Հմմտ.

Հ < *H (7), *p (52, որից՝ *p > h/j - 3, *p > j - 2), *s (16), *φ (12), *k^h (4) – 91²:

Ինչպես երևում է նշված համապատասխանություններից, *h* (h)-ով սկսվող յոթ բառի դեպքում վերականգնվում է կոկորդային նախաձև՝ *H: Այդ բառերն են. *հան* «հոր կամ մոր մայրը, տատ» (<*Han-), *հանի* (-նոյ/նոյ) (նույնը՝ ինչ որ *հան*) (<*Hanijā), *հաւան* (-իմ) (<*Hauə-), (*h*)*աւատ* ? (<*Hau-), *հաւ* «թռչուն» (<*Hau- [*auei-]), *հաւ* «պապ» (<*Hauo-s [*auo-s]), *հեր*(-ոյ/-ի) (<*(H)erso-)³: Թեև կոկորդային հնչույթով նախաձևերը կազմում են *h* (h)

¹ Տե՛ս **Պետրոսյան Վ. Զ.**, Հին հայերենի հպաշփականների ծագումը (տարաժամանակյա հայեցակետ) // «ՎԷՄ», 2020, թիվ 3, էջ 187-218, *նույնի*՝ Հին հայերենի հպաշփականների ծագման կովկասյան վարկածի շուրջ // Հայկազեան հայագիտական հանդես, 2021, հ. 41, էջ 499-526, *նույնի*՝ Հին հայերենի շչական բաղաձայնները (ապաժամանակյա և տարաժամանակյա հայեցակետեր) // «ՊԲՀ», 2021, թիվ 3, էջ 228-241:

² Վիճակագրական հաշվարկն ըստ՝ **Ջահուկյան Գ. Բ.**, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 111-157:

³ Ըստ էության՝ վեց բառ, եթե նկատի ունենանք, որ *հան* և *հանի* ունեն միևնույն բառարմատը: Միաժամանակ ուշագրավ է, որ ակադեմիկոս Գ. Ջահուկյանը «Ակնարկներ հայերենի նախագրային շրջանի պատմության» գրքում, հետևելով «կոկորդային տեսությանը», առանձ-

ունեցող բառերի ընդհանուր թվի (91) շուրջ 1/15-րդը, իսկ դա համապատասխանությունների ամբողջ շարքում փոքր ցուցիչներից մեկն է, բայց և այնպես, շնորհիվ այն նշանակության, որը համեմատական լեզվաբանության մեջ տրվել է կոկորդային հնչույթներին՝ որպես հնդեվրոպական հիմք-լեզվի հնչույթային համակարգի բնութագրական գծերից մեկի («կոկորդային տեսություն» / *laryngeal theory*), այդ վերականգնումների խնդիրը ձեռք է բերում հատուկ կարևորություն: Հետևաբար հին հայերենի *h* (*h*)-ի տարածամանակյա քննության տեսանկյունից կարևոր է ոչ միայն նրա հիմնական նախածն(եր)ի հաստատումը, այլև *h*-ե. կոկորդային հնչույթ(ներ)ի հետ նրա առնչությունների հարցը: Մեզ համար այդ հարցը կարևոր է հատկապես այն պատճառով, որ *h*-ե. հիմք-լեզվում կոկորդային հնչույթ(ներ)ի առկայության մասին համեմատական լեզվաբանության մեջ առաջադրված վարկածներից մի քանիսը, խեղճերենից և հունարենից բացի, հիմնվում են նաև հայերենի՝ որպես կոկորդային հնչույթի ռեֆլեքսները պահպանած հիմնական լեզուներից մեկի տվյալների վրա¹ (հմմտ. հիերոգլիֆ. խեթ. *ḫayas* «ոչխար», հյ. *hny/hu* (*hoviy*) «հովիվ» (< *h*-ե. **(H)oui-pā* «ոչխարի հովիվ»),– խեթ. *ḫuḫyas*,

նացրել էր հին հայերենի՝ *h* (*h*)-ով սկսվող ոչ թե յոթ, այլ քսաներեք բառ, որոնց *h* (*h*)-ն համարվում է *h*-ե. հիմք-լեզվի կոկորդային հնչույթ(ներ)ի ռեֆլեքսը (տե՛ս **Джаукян Г. Б.**, Очерки дописменного периода армянского языка, Ереван, 1967, с. 240-243): Համեմատաբանական հաջորդ՝ «Հայոց լեզվի համեմատական քերականություն» մենագրության մեջ նա կոկորդային հնչույթների հարցին չի անդրադառնում՝ հղում անելով «Ակնարկներ ...» գրքին (տե՛ս **Джаукян Г. Б.**, Сравнительная грамматика армянского языка, Ереван, 1982, с. 212, ծնթգր. 35): Դա, ըստ էության, նշանակում է, որ նա չի հրաժարվում այդ վարկածից: Հ.-ե. կոկորդայինների հարցին Գ. Ջահուկյանը թուցիկ անդրադառնում է իր հաջորդ «Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան» գրքում (տե՛ս **Ջահուկյան Գ. Բ.**, նշվ. աշխ., էջ 37): Հայերենի կոկորդային ծագման *h* (*h*) ունեցող բառերի ցանկը ուսումնասիրողների մոտ ունի որոշ տարբերություններ: Օր. Գ. Կլիչկովը հայերենի *h*-ե. կոկորդայինից սերող *h* (*h*)-ով «հիմնական օրինակների» ցանկում ներառում է նաև *hny/hu* (< **oui-pā* «ոչխարի հովիվ»), *hny* (< **od-* «բուրել») և *hny* (< **om-* «հում, դառն») բառերը (հմմտ. **Кличков Г.**, Модель глоттогенеза армян // «LZ», 1980, թիվ 8, էջ 91-92), որոնցից վերջին երկուսը կային Գ. Ջահուկյանի նախնական ցանկում (տե՛ս **Джаукян Г. Б.**, Очерки дописменного периода армянского языка), բայց չկան վեջնականում: «Հովի»-ի *h* (*h*)-ին կոկորդային ծագում է վերագրել նաև Վ. Գեորգիևը (տե՛ս **Георгиев В. И.**, Исследования по сравнительно-историческому языкознанию, Москва, 1958, с. 13):

Հայերենում և հունարենում բառակազմում՝ բաղաձայնին նախորդող դիրքում, կոկորդայինի երբեմնի գոյության հիմնավորում է համարվում նաև նախահավելական ձայնավորի (աուզնետի) առկայությունը՝ ի տարբերություն այլ ցեղակիցների, որոնք այդ դիրքում նախահավելական մասնիկ չունեն (տե՛ս **Тронский И. М.**, Общеиндоевропейское языковое состояние, Москва, 1967, с. 15): Հմմտ. հն հնդկ. (*s)tár-*, ավեստ. *star-*, լատ. *stella*, գոթ. *stairnō*, բայց՝ հն հուն. *ἀστὴρ*, հյ. *աստղ* (*astl*): Խեթերենը, նախահավելական մասնիկից առաջ ունի նաև «կոկորդային» հնչյունի ռեֆլեքս համարվող *h*՝ *ḫasterza* «աստղ»: Նշված իրողությունները «կոկորդային տեսության» կողմնակիցներին հիմք են տվել «աստղ» նշանակությամբ բառերի համար կանխադրել կոկորդային հնչյունով նախածն՝ **H₂stér-* (տե՛ս **Герценберг Л. Г.**, Краткое введение в индоевропеистику, Санкт-Петербург, 2010, с. 28):

¹ Տե՛ս **Георгиев В. И.**, նշվ. աշխ.:

լատ. *avus* «պապ», հյ. *huz* (*hay*) (<**Hayo-s* / **ayo-s*),– իւեթ. *hannaš* «տատ», հուն. *ἀκνίς* «տատ», լատ. *anus* «պառավ կին», հյ. *hán / hánh* (-ւոյ) (<**Han-* / **Haniā* / (<**an-* «նախահայր կամ նախամայր»),– լատ. *avis* «թռչուն», հյ. *huz* (<**Hay-* / (**ayei-*)) և այլն):

Ոչ պակաս ուշագրավ է այն, որ «կոկորդային տեսությունը» միանշանակ չի ընդունվել համեմատական հնդեվրոպաբանության մեջ: Տարբեր հիմնավորումներով այդ վարկածի դեմ են արտահայտվել XX դարի կեսերի այնպիսի անվանի հնդեվրոպաբաններ, ինչպիսիք էին Գ. Կրոնասերը, Ու. Պետերսենը, Ջ. Բոնֆանտեն, Վ. Ուետտը, Է. Մականը և ուրիշներ¹: Ավելին, իր վերջին շրջանի ուսումնասիրություններում հնդեվրոպական նախալեզվի հնչյութային համակարգում կոկորդայինների կարևոր դերի մասին սկզբնական պատկերացումներից յուրովի նահանջել է Ե. Կուրիլովիչը, որի անվան հետ է կապվում հնդեվրոպաբանության մեջ «կոկորդային տեսության» նոր փուլի սկզբնավորումը²:

¹ Տե՛ս **Семереньи О.**, Введение в сравнительное языкознание, Москва, 1980, с. 143-144, **Савченко А. Н.**, Сравнительная грамматика индоевропейских языков, Москва, 1974, с. 137: Ա. Մեյեն՝ XX դարի առաջին կեսի ակնավոր հնդեվրոպաբաններից մեկը, ինչպես այլ հարցերում, «կոկորդային տեսության» դեպքում ևս դրսևորել է զգուշավոր մոտեցում: Հմնտ. «... երկվանկ արմատները ներկայացնում են այն դժվարությունը, որ նրանց կիրառությունը **gmē-* կամ **gnō-* տիպի վերջնային երկար ձայնավորով աստիճանների հետ հնդեվրոպական ձևաբանության մեջ դեռևս բավարար ամբողջությամբ և ճշտությամբ հաստատված չէ» (**Мейе А.**, Введение в сравнительное изучение индоевропейских языков, Москва-Ленинград, 1938, с. 184): Ըստ «կոկորդային տեսության»՝ վերոհիշյալ տիպի արմատներն ավելի վաղ ունեցել են **gmeh-*, **gnoh-* հնչյունական կազմը: Երկար ձայնավորը համարվում է համապատասխան կարճ ձայնավորի և նրան հաջորդող «կոկորդային» **h-*ի միաձուլման արդյունք (տե՛ս **Савченко А. Н.**, նշվ. աշխ., էջ 128-137, **Красухин К. Г.**, Введение в индоевропейское языкознание, Москва, 2004, с. 70-73):

² Տե՛ս **Семереньи О.**, նշվ. աշխ., էջ 143-144, 154-155: «Կոկորդային տեսության»՝ Ե. Կուրիլովիչի առաջարկած վարկածը Ֆ. դը Սոսյուրի («ձայնորդական կայֆիցիենտների» տեսություն), Գ. Մյոլլերի և Ա. Կյունիի («կոկորդայինների տեսություն») կողմից առաջադրված գաղափարները համադրելու և յուրովի զարգացնելու փորձ չէր: Ի տարբերություն նախորդների, որոնց առաջարկած գաղափարները պարզապես տեսական կոահումներ էին և ինչ-որ չափով ունեին մտահայեցողական բնույթ, Ե. Կուրիլովիչը մատնանշում է դրանց որոշակի լեզվական հիմքերը իւեթերենում՝ *h-*ի և *hh-*ի տեսքով, և առաջարկում բավականին կոտ տեսություն: Ինչպես Ֆ. դը Սոսյուրը, Ե. Կուրիլովիչը ևս ելնում էր հնդեվրոպական նախալեզվում մեկ նախնական ձայնավորի առկայությունից, որը նրա կարծիքով, եղել է **e-*: Ըստ դը Սոսյուրի՝ **a-*ն և **o-*ն առաջացել են **e-*ի և նրան հաջորդող «ձայնորդական կայֆիցիենտի» միաձուլումից: Սոսյուրյան «ձայնորդական կայֆիցիենտը» եղել է ձայնավորական գործառնությունով ձայնորդ: Նա, **r*, **l*, **m*, **n*, **w*, **y-*ից բացի, ձայնորդական բնութագիր է վերագրել նաև **e-*ին հաջորդող *A-*ին և *O-*ին: Վերջինների հետ միաձուլումից առաջացել են *h.*-*ե.* երկար **a-*ն և **o-*ն (տե՛ս **Соссюр Ф. де**, Мемуар о первоначальной системе гласных в индоевропейских языках // **Соссюр Ф. де**, Труды по языкознанию, Москва, 1977, с. 310-311, 423-424): Հ. Մյոլլերը և Ա. Կյունին, որոնք զբաղվում էին հնդեվրոպասեմաբանյան ծագումնաբանական առնչությունների ուսումնասիրությամբ, «ձայնորդական կայֆիցիենտների» սոսյուրյան դրույթը փոխարինում են «կոկորդային հնչյունների» դրույթով: Վերջինները բնորոշ էին սեմական և քամյան լեզուներին:

Հնդեվրոպական կոկորդային(ներ)ի մասին տեսության ձևավորման ավելի քան հարյուրամյա հոլովություն (1879-1984), ըստ առավել հատկանշական վարկածների, կարելի է տարբերակել հետևյալ որակական դրսևորումները. 1) հ.-ե. ձայնավորական համակարգի կազմավորման, մասնավորապես հ.-ե. ձայնդարձի (*ablaut*) առաջացման գործում «ձայնորդական կաֆիցիենտների» վճռորոշ դերի կանխատեսում (Ֆ. դը Մոսյուր). 2) «ձայնորդական կաֆիցիենտների» վարկածի փոխարինում «կոկորդային հնչյունների» վարկածով (Հ. Մյուլլեր, Ա. Կյունի). 3) հ.-ե. կոկորդայինների լեզվական ռեֆլեքսների բացահայտում խեթերենում (Ե. Կուրիլովիչ). 4) հիմք-լեզվի նախասկզբնական ձայնավորական համակարգի ու կոկորդային(ներ)ի քանակական հարաբերակցության սահմանում (Հ. Մյուլլեր, Ա. Կյունի, Հ. Պեդերսըն, Ե. Կուրիլովիչ, Է. Բենվենիստ, Վ. Պիզանի, Է. Սեպիր, Է. Ստերտսանտ, Հ. Հենդրիկսեն, Վ. Լեման, Լ. Ջգուստա, Ռ. Կրոսլանդ, Հ. Հյունիգսվալդ, Լ. Համմերիխ, Յա. Պուսիվել, Ա. Մարտինե, Վյաչ. Իվանով, Թ. Գամկրելիձե և ուրիշներ). 5) հ.-ե. ձայնավորների և կոկորդային հնչյոթ(ներ)ի քանակական հարաբերակցության սահմանում ըստ հիմք-լեզվի *հեռավոր* և *մերձավոր* վերականգնումների (Ի. Տրոնսկի, Թ. Գամկրելիձե – Վյաչ. Իվանով):

Վերջին մոտեցման հիմքում, ըստ էության, հ.-ե. նախալեզվի վերականգնումը ժամանակագրական երկու տարբեր շերտերով իրականացնելու Ի. Տրոնսկու պահանջն է. 1) ըստ «հեռավոր» կամ *վաղհնդեվրոպական* փուլի, որպիսին կարող է համարվել հիմք-լեզուն նոստրատիկ միասնությունից ան-

Սյդալիսի հնչյունների վերականգնումը հ.-ե. հիմք-լեզվում կարող էր ավելի արժանահավատ դարձնել հնդեվրոպական և սեմաքամյան լեզվաընտանիքների հեռավոր (= նոստրատիկ) ցեղակցության գաղափարը (տե՛ս **Փիզանի Վ.**, *Общее и индоевропейское языкознание // Общее и индоевропейское языкознание*, Москва, 1956, с. 129-130, **Тронский И. М.**, նշվ. աշխ., էջ 13-14, **Семереньи О.**, *Введение в сравнительное языкознание*, Москва, 1980, с. 139, **Савченко А. Н.**, նշվ. աշխ., էջ 129-130): Ե. Կուրիլովիչը, ելակետ ընդունելով հ.-ե. հիմք-լեզվում մեկ նախնական ձայնավոր (*e) տարբերակող սոսյուրյան դրույթը, ինչպես *o-ի և *a-ի, այնպես էլ բոլոր երեք ձայնավորների երկար տարբերակների (հմտ. *ē, *ō, *ā) առաջացումը բացատրում է հ.-ե. չորս կոկորդայինների (*ə₁, *ə₂, *ə₃, *ə₄) հետ դիրքային (վերջիններին նախորդող) փոխազդեցությամբ: Ըստ անվանի լեզվաբանի՝ խեթերենի *h*-ն և *hh*-ն ներկայացնում էին, համապատասխանաբար, հ.-ե. *ə₂-ը և *ə₃-ը (տե՛ս **Курилович Е.**, *Знал ли индоевропейский язык А наряду с О ? // Курилович Е.*, *Очерки по лингвистике (сборник статей)*, Москва, 1962, с. 427-435): Ի. Ֆրիդրիխը, խեթերենի *h*-ին վերագրելով «երկու տարբեր» հնչյունական արժեքներ, ըստ ամենայնի՝ դրանք համարել է նաև տարբեր հնչյոթներ (տե՛ս **Фридрих И.**, *Краткая грамматика хеттского языка*, Москва, 1952, с. 51), իսկ, օրինակ, Թ. Բարուսի և Վյաչ. Իվանովի կարծիքով՝ *h*-ով և երկգիր *hh*-ով խեթերենում արտահայտվել են միևնույն հնչյոթի երկու տարբեր հնչյունական իրացումները (տե՛ս **Барроу Т.**, *Санскрит*, Москва, 1976, с. 85-86, **Иванов В. В.**, *Хеттский язык*, Москва, 1963, с. 88, **Иванов Вяч. Вс.**, *Общеиндоевропейская, праславянская и анатолийская языковые системы*, Москва, 1965, с. 14-15): Եթե իրականությանը մոտ է երկրորդ տեսակետը, կնշանակի Ե. Կուրիլովիչի նշած համապատասխանությունը խախտվում է: Բացատրություններից մեկը կարող է լինել Վյաչ. Իվանովի դիտարկումը, ըստ որի՝ հ.-ե. *H₁-ը և *H₂-ը, որոնք տարբեր հնչյոթներ էին, խեթերենում «արտացոլվել էին մեկ հնչյոթի երկու տարբեր տարբերակներով» (տե՛ս **Иванов Вяч. Вс.**, նշվ. աշխ., էջ 14-15):

ջատվելուց հետո. 2) ըստ «մերձավոր» կամ *ուշհնդեվրոպական* փուլի, որպիսին կարող է համարվել հիմք-լեզուն անմիջականորեն տրոհման նախօրյակին¹: Հ.-ե. կոկորդայինների հարցը այդ տեսանկյունից են դիտարկել, օրինակ՝ Թ. Գամկրելիձեն և Վյաչ. Իվանովը «Հնդեվրոպական լեզուն և հնդեվրոպացիները» ուսումնասիրության մեջ²:

«Կոկորդային տեսության» տարբեր վարկածների քննությունը մեր նպատակից դուրս է, բայց ավելորդ չենք համարում այդ առնչությամբ հետևյալ նկատառումները. 1) Սոսյուրյան «ձայնորդական կայֆիցիենտները» և Գ. Մյոլլերի, Ա. Կյունիի, Հ. Պեդերսոնի, ինչպես նաև ուրիշների կողմից տարբերակված «կոկորդային հնչյունները» ոչ միայն անհամարժեք, այլև միանգամայն տարբեր երևույթներ են: Ֆ. դը Սոսյուրի տարբերակած *A* և *O* «ձայնորդական կայֆիցիենտները» ավելի շուտ վանկարար ձայնորդների համարժեքներ էին, հետևաբար դրանք և «կոկորդային հնչյունները» հ.-ե. հիմք-լեզվում չէին կարող իրականացնել միատեսակ գործառույթներ: 2) Գրավոր հուշարձաններով հայտնի հ.-ե. հին լեզուներից և ոչ մեկը, ըստ էության, չի ունեցել կոկորդային հնչյուններ: Այդ առումով ինչպես խեթերենում, առհասարակ խեթալուվիական լեզուներում, այնպես էլ այլ լեզուներում (հին հունարեն, հին հայերեն և այլն) հ.-ե. կոկորդայինների ռեֆլեքսներ համարվողների հնչյունական բնութագրերը լեզվաբանության մեջ միանշանակ չեն գնահատվում³: 3) Մեզ առավել հավանական է թվում և Օ. Սեմերենյիի տեսակետը, որի համաձայն՝ ընդհանուր հնդեվրոպական լեզվի **H*-ն եղել է սովորական հետնալեզվային շփական⁴: Այդպիսի եզրակացության համար

¹ St' u Тронский И. М., նշվ. աշխ., էջ 22:

² St' u Гамкредидзе Т. В., Иванов Вяч. Вс., Индоевропейский язык и индоевропейцы, т. I, Тбилиси, 1984, с. 157-214:

³ Հմմտ. «Ամենից առաջ հարց է առաջանում այն մասին, թե ինչպիսի փաստերի և ինչպիսի ռեֆլեքսների հիման վրա է ենթադրություն արվում երբեմնի գոյություն ունեցած և հետո բոլոր հնդեվրոպական լեզուներում (բացառությամբ խեթալուվիական լեզուների, որը, ի դեպ, շարունակում է մնալ յիստ կասկածելի [ընդգծումն իմն է – Վ. Պ.]) անհետացած հնչյունների հատուկ դասի մասին, որոնց հնչյունաբանական բնույթը կոկորդային տեսության որոշ ներկայացուցիչներ նախընտրում են բոլորովին էլ չորոշակիացնել՝ մնալով այդ ժամանակ կոկորդայինների գուտ կառուցվածքային կամ հանրահաշվական մեկնության դիրքերում, այն դեպքում, երբ այլ ուսումնասիրողներ հակված են կոկորդայինները դիտարկելու կամ որպես ձայնորդների դաս, որոնք հերթագայության մեջ են գտնվում ձայնավորների և երկբարբառների հետ, կամ էլ որպես երախային (фарингальный) կամ հետնալեզվային հնչյունների դաս, որոնք մտնում են բաղաձայն հնչյունների ենթակարգի մեջ» (Макаев Э. А., Структура слова в индоевропейских и германских языках, Москва, 1970, с. 136):

⁴ St' u Семереньи О., նշվ. աշխ., 1980, էջ 156: Ա. Սավչենկոն նշում է ռուս լեզվաբաններ Ն. Անդրենի և Գ. Կլիչկովի հայացքներում հ.-ե. «կոկորդայինների»՝ որպես «սովորական շփական հնչյունների» ըմբռնման միտումի մասին: Ընդ որում՝ ավելի վաղ, քան դա հստակ կձևակերպեր Օ. Սեմերենյին: Հմմտ. «Դեպի դա է տանում Գ. Ս. Կլիչկովի հաստատումն այն մասին, որ այսպես կոչված կոկորդայինը լծորդության մեջ է գտնվել *s* հնչյունի հետ» (տե՛ս Սавченко А. Н., նշվ. աշխ., էջ 132: Հմմտ. Андреев Н. А., Из проблематики индоевропейских ларингалов //

հիմք են եղել. ա) խեթերենի և այլ ցեղակիցների, մասնավորապես՝ լատիներենի, օսկերենի, գոթերենի, սանսկրիտի և հունարենի համարժեք ձևերի գուգադրումները, որոնց երկար ձայնավորի դիմաց խեթերենն ունի կարճ ձայնավոր (հմմտ. լատ. *pō-tāre* «խմել» – խեթ. *pas-* «կուլ տալ, կլանել» / ‘*злотать*’/, լատ. *ārā*, օսկ. *aasas* (անվն., հզն. թ.) «գոհասեղան» – խեթ. *hassa-* «օջախ»¹, լատ. *ōs* «բերան» – խեթ. *ais*, լուվ. *assa* «բերան» և այլն), փոխանակ՝ «կարճ ձայնավոր + *h*» հաջորդականության, որպիսին առկա է այլ դեպքերում (հմմտ. լատ. *pāscō*, սնսկ. *pā-* «պաշտպանել» – խեթ. *pahs-* «պաշտպանել», գոթ. *mēl* «ժամանակ», լատ. *metior* «չափել» – խեթ. *mehur* «ժամանակ» և այլն). բ) տիպաբանական պատկերացումների համաձայն՝ օրինաչափական կապ կա, մի կողմից, լեզվում *ձայնեղ-խուլ* (հմմտ. *b~p, d~t*) և *շնչեղ-ոչ շնչեղ* (հմմտ. *p'/(p^h)~p, t'/(t^h)~t*) հակադրություններով հնչույթների զույգերի, մյուս կողմից՝ տվյալ հնչույթաբանական համակարգում *h* (h)-ի առկայության միջև²: Եթե դա այդպես է (առնվազն մինչ օրս տիպաբանական այդ հատկանիշը ոչ ոք չի հերքել), ուրեմն *h*-է. *շնչեղ* հպականները (ձայնեղ և խուլ) ևս պիտի ունենային կոկորդային երանգ, բայց, որքան մեզ հայտնի է, համեմատական լեզվաբանության մեջ դեռևս այդպիսի վերագրումներ չեն արվել:

Ըստ իս, հնդեվրոպական, սեմաքամյան, ինչպես նաև այլ նախալեզուների (ուրալա-ալթայան, քարթվելական և այլն) համար ենթադրվող նոստրատիկ լեզուն թերևս ունեցել է կոկորդային հնչյուն(ներ), որի/(որոնց) ռեֆլեքսն ընդհանուրհնդեվրոպական լեզվում **H* (**h₁, *h₂, *h₃ ... *h_n*)-ն էր, սակայն քիչ հավանական է, որ ընդհանուրհնդեվրոպականում, մասնավորապես՝ նրա քայքայման նախօրյակին այդ հնչյուն(ներ)ը պահպանած լիներ/(լինեին) կոկորդային արտաբերությունը: Եթե ընդհանուրհնդեվրոպական **H*-ն ունենար կոկորդային արտաբերություն, հազիվ թե նրա ռեֆլեքսները գոնե մեկ

Доклады и сообщения Института Языкознания Акад. наук СССР, XII, 1959, с. 28, Кличков Г. С., Индоевропейская фонема *s* как коррелят ларингалных // «Вопросы языкознания» (այսուհետև՝ «ВЯ»), 1959, № 1, с. 79-83): Այդուհանդերձ, ճիշտ չի լինի ո՛չ Ն. Անդրևին և ո՛չ էլ Գ. Կլիչկովին «կոկորդայինների տեսությունից» ամբողջովին հրաժարվելու միտք վերագրելը: Վերոհիշյալ հոդվածում Գ. Կլիչկովը կոկորդայինների անհետացումը հնարավոր է համարել «արդեն առանձնացած հնդեվրոպական լեզուներում», հետևաբար ընդհանուրհնդեվրոպականի համար նա ընդունելի է համարել կոկորդային հնչույթների վերականգնումը (Кличков Г. С., նշվ. աշխ., էջ 83): Ինչ վերաբերում է Ն. Անդրևին, ապա դեռևս 1957 թ. լույս տեսած «Հնդեվրոպական նախալեզվի պատմության շրջանաբաժանում» հոդվածում, ըստ էության, նույնականացնելով *h*-է. *շվան* և «կոկորդայինը» ու դրանք համարելով «խուլ շփականներ»՝ նախահնդեվրոպական փուլի համար տարբերակում է այդպիսի երեք հնչույթ՝ միջնալեզվային **h'*, հետնալեզվային **h* և շրթնային **h^w* (տե՛ս **Андреев Н. А.**, Периодизация истории индоевропейского праязыка // «ВЯ», 1957, № 2, с. 5-6):

¹ Հ.-է. **h a-* հաջորդականությունից, ըստ «կոկորդային տեսության», պետք է կազմավորվի կարճ ձայնավոր, այնինչ լատիներենն ունի երկար ձայնավոր *ā*, իսկ օսկերենը կրկնակի *aa-*, ըստ էության՝ դարձյալ երկար:

² Տե՛ս **Якобсон Р.**, Типологические исследования и их вклад в сравнительно-историческое языкознание // Новое в зарубежной лингвистике, вып. 3, Москва, 1963, с. 103:

լեզվում, եթե ոչ՝ մի քանիսում, այդ հատկանիշը պահպանած չլինեին: Հպականների հ.-ե. համակարգում շնչեղ ձայնեղների հնչույթային կարգ է վերականգնվում (հմմտ. *bh, *dh, *gh), որովհետև այդպիսին տարբերակվել է հին հնդկերենում¹, իսկ շնչեղություն/ոչ շնչեղություն հակադրությունը՝ որպես հնչույթաբանական հատկանիշ, բնորոշ էր նաև հին հայերենի, ենթադրաբար՝ նախահունարենի խուլ հպականներին: Ճիշտ է, կոկորդային տեսության կողմնակիցները Ե. Կուրիլովիչի հետևողությամբ խեթերենի *h* [x]-ն և *hh* [xx]-ն համարել են հ.-ե. կոկորդայինների ռեֆլեքսներ, սակայն բուն այդ հնչույթներին (/հնչյուններին) կոկորդային արտաբերություն չեն վերագրել, ինչպես որ այդպիսի արտաբերություն չի վերագրվել հին հայերենի *h* (h)-ին, հին հնդկերենի *h*-ին² և այլն: Այս հանգամանքը նույնպես կասկածելի է դարձնում առնվազն ընդհանուրհնդեվրոպականում կոկորդային հնչույթի/(հնչյունի) գոյության ընդունումը:

Հասկանալի է, որ հ.-ե. «կոկորդայինների տեսության» նկատմամբ այսպիսի վերապահումը ավելորդ է դարձնում այնպիսի հարցերի քննարկումը, ինչպիսիք են՝ կոկորդային հնչույթների/(հնչյունների) քանակի, նրանց հնչյունական արժեքայնության, հ.-ե. շվայի (առաջին **a* /shva premium/ և երկրորդ **o* /shva secundum/) հետ նրա/(նրանց) առնչությունների հարցերը:

Ինչ վերաբերում է հայերենի բառասկզբի *h* (h)-ին, Է. Մակաևը մերժում է նրա կոկորդային ծագման վարկածը այն հիմնավորումով, որ այդ դիրքում *h* (h)-ն կայունություն չի դրսևորում ոչ միայն գրաբարում, այլև արդի գրական հայերենում և բարբառներում: Հայերենի *h* (h)-ի այդօրինակ վարքագիծը նա դիտարկել է միայն բառասկզբի պարզ *n* [o] ձայնավորին նախորդող դիրքում, բայց այդ երևույթը դրսևորվել է նաև այլ ձայնավորների առնչությամբ (հմմտ. *nqh* [ogɪ] – *hnqh* [hok'i], *nrp* [ort'] – *hnrp* [hort'], *ny* [ov] – *ny* [hov], *ayg* [ajc'] – *hayg* [hajc'], *arwad* [arac] – *harwad* [harac], *arbel* [arbel] – *harbel* [harbel], *alxor* [alexor] – *halxor* [halivor], *epem* [ep'em] – *hep'em* [hep'em], *ur* [ur] – *hur* [hur] և այլն)³:

Այսպիսով, միանալով այն գիտնականներին, որոնք առնվազն ընդհանուրհնդեվրոպական լեզվում հնարավոր չեն համարել կոկորդային հնչույթ-

¹ Հայտնի է, որ հին հնդկերենի շնչեղ ձայնեղների հնչույթային կարգի առաջացման առնչությամբ նույնպես հնդեվրոպական լեզվաբանության մեջ կարծիքները միանշանակ չեն (տե՛ս **Прокос** Ծ., Сравнительная грамматика германских языков, Москва, 1954, с. 28-29):

² Հին հնդկերենի *h*-ն համարվում է *jh* [dʒh] շնչեղ ձայնեղ հպաշփականի հետագա պարզեցումը, իսկ *jh*-ը՝ հ.-ե. հետնաքմային **gh*-ի քմայնացման արդյունք է (տե՛ս **Семерень** **О.**, նշվ. աշխ., էջ 75, **Барроу** **Т.**, նշվ. աշխ., էջ 75):

³ Տե՛ս **Макаев** **Э. А.**, նշվ. աշխ., էջ 149: Հմմտ. նաև՝ **Միմոնյան** **Ն. Մ.**, Հայ բարբառների հնդեվրոպական հնաբանությունները // Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, Երևան, 1979, էջ 210-224: Գրաբարյան բառասկզբի *n* [o]-ն նախահավելական մասնիկ չի ստանում, եթե ունի երկբարբառային ծագում սերում է *uz* (օս)-ից (հմմտ. *uz* > *oz*, *uz* > *or*, *uz* > *od* և այլն):

(ներ)ի գոյությունը, չենք կարող չնկատել, սակայն, որ այդքանով դեռևս չեն սպառվում «կոկորդայինների տեսությանն» առնչվող հարցերը: Մասնավորապես, ինչպես արդեն նշվեց, Ռ. Յակոբսոնի կողմից ձևակերպված տիպաբանական դրույթի համաձայն ուղիղ կապ կա լեզվում շնչեղ հպականների (ձայնեղ և խուլ) և հագագային *h*-ի առկայության միջև, այն է՝ առանց երկրորդի չեն կարող լինել նաև առաջինները: Հետևաբար տրամաբանական ենք համարում *h*-ե. հիմք-լեզվում նաև շփական **h* հնչույթի կանխադրումը՝ շվայից անկախ: Այդ հնչույթը, սակայն, չի ունեցել կոկորդային արտաբերություն, այլ եղել է սովորական խուլ շփական և, ըստ ամենայնի, լծորդակից էր **s*-ին: Հոգուտ վերջին մտքի են վկայում *h*-ե հին լեզուներում ոչ հազվադեպ դրսևորվող *s*>*h* և, ընդհակառակը, *h*>*s* անցումները (հմմտ. հուն. *ἦσται* [hē:stai] «նա նստում է» – հն հնդկ. *ā́stē*, հուն. *ἵππος* [hi'pos] «ձի», հն հնդկ. *ás vah*, հուն. *ἄλς* [hális] «աղ», լատ. *sāl*, հն հնդկ. *sal-ilá* «ծով» («աղի»), հն սլավ. *colь* [solí] «աղ», հն սլավ. *cekъ* [sekou] «հատում եմ, կտրում եմ» («*ceky*»), այլ. *helk* «քարշ տալ» և այլն)¹:

Ոչ հնդեվրոպական և հնդեվրոպական հին լեզուներից կատարված փոխառություններում հայերենի *h* (*h*)-ն երևան է հանում համապատասխանությունների հետևյալ պատկերը:-

Մեմական լեզուներ > *հայերեն*. **h** /**h**(**o**) > **h** (/խ) (հմմտ. ասոր. *tōh wə vōh* > *ṯnh* և *ṯnh* «ամայի», արամ. (ասոր.) *ḥablā* «թոկ», եբր. *hebel* «թոկ, թակարդ», արաբ. *ḥabl* «թոկ», ակկադ. *ḥabālu* «կապել» > հյ. *ḥաղբ-ք* (*խաղբ-ք*), արամ. (ասոր.) *ḥāšīb* «կարծված, համարված, հաշվված», *ḥšāb*, եբր. *ḥāšab*, արաբ. *ḥisāb* (< սեմ. **ḥš/sb*) > հյ. *ḥաշիվ*, ասոր. *ḥəgā* «կարդալ» > հյ. *հեգ*, -ի, -ից (ուշ -ոյ) «վանկ», արամ. (ասոր.) *jūdāiā /ihūdāiā*, եբր. հզն. *yəḥūdīm*, արաբ. *yahūd* > հյ. *ḥրեայ*, արաբ. *mahja* «ննջարան» /**h**j' «քնել, հանգստանալ» / > հյ. *մսհիճ*, -ի, -աց «անկողին, անկողնակալ», արամ. *kāḥanā* (*kahenā*), եբր. *kōhēn*, արաբ. *kāhin* «հմայող, կախարդ. տնտես, մատակարար» > հյ. *քահանայ*, -ի, -ից).

Գովկասյան լեզուներ > *հայերեն*. **o/w/ž/յ** > **h** (հմմտ. վրաց. *ori*, *wori* «երկու», մզբ. *žər*-, *žir*-, ճան. *žu(r)*-, *ju(r)*-, սվան. *yori*-, *yerbi*- (<քարթվ. **yor*-) > հյ. *հոռի* «հայկական տոմարի երկրորդ ամիսը», վրաց. *sami* «երեք», մեզբ., ճան. *sum*-, սվան. *semi*- (<քարթվ. **sam*-) > հյ. *սսհիփ* «հայկական տոմարի երրորդ ամիսը»).

¹ Յեյլոն կղզում խոսվող սինգալեզերեն լեզվում (այս լեզուն ոմանք դասել են դրավիդյան (Ռասկ, Մյուլլեր), ոմանք՝ պոլինեզյան (Հասս), իսկ ուրիշները՝ հնդարիական (դ'Ալվիս) լեզուների շարքին), ըստ Գ. Կլիչկովի, «*s*-ը և *h*-ն միևնույն հնչույթի տարբերակներն են», որոնցից առաջինը հանդիպում է շեշտված վանկում, իսկ երկրորդը՝ անշեշտ (տե՛ս **Кличков Г. С.**, նշվ. աշխ., էջ 79): Այսինքն՝ միմյանց նկատմամբ գտնվում են յուրօրինակ լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ: Յուրօրինակ, որովհետև այդ բաշխումը պայմանավորված է վերհատույթային իրողությամբ՝ բառային շեշտով: Նա Ռ. Մերլինգենի հետևողությամբ *s*-ի և *h*-ի այդպիսի հարաբերակցություն հնարավոր է համարել նաև նախահունարենում (նույն տեղում, էջ 80):

Ուրարտերեն > հայերեն. **h** [x/ɣ/h]¹ > **h** (հմմտ. *hat-* (*hatubi* «կտրեցի, բաժանեի») > *hատանեւ*, - *hus-* «զցել» > *hnutեւ*, - *hubi* > *hովիտ*) .

Խեթերեն > հայերեն. **h** [x]/**ø** > **h**/j (հմմտ. *halanta-* «զլուխ» > *խալաւ* (/ *խալաւ*) «անասունի չորացած գանգ», - *hattāi-* «հատել, կտրել, ծակել, պատռել» > *հատ*, -ոյ «սուր, կտրուկ» / *juat-անեւ* «հատել, էտել», - *hinganiyaar-* «զվարճություն, ուրախություն» > *հե(ն)զ(ն)* «ծաղր. հեճուկ, հակառակություն», *հենզնեւ* «ծաղրել», - *ušk-* «տեսնել», *husk-* «սպասել» > (**h**)*սկեւ*, -) .

Բրանական լեզուներ > հայերեն. **h/s/θ/ç** > **h** (հմմտ. մ.պ. *ākāh*, *ākās*, ավ. *ākās* > հյ. *ալահ* «տեղյակ», - ավ. *xsaθra-*, հ.պ. *xšaça-* «թագավորություն, իշխանություն», մ.պ. *šahr* «երկիր, նահանգ, քաղաք», պ. *šahr* «քաղաք» > հյ. *աշ-խարհ*, - պ. *dahliz* «նախասրահ», աֆղ. *dahliz*, *dahliz* «պատշգամ, սեւ» > հյ. *ղահլիճ*, - մ.պ., պ. *hazār*, պրթ. *hz'r* (*hazār*), ավ. *hazarna-* > հյ. *հազար* և այլն). **δ/d/h** (<***h**) > **h** (հմմտ. ավ. *spādra-*, հ.պ. *spāda-*, մ.պ. *spāh* (հյ. *սպահ*), պ. *sipāh* (< ***sāh**) > հյ. *սահ* «գունդ, բանակ, զորագունդ» և այլն). **θ** (**h**)/**θ/x** > **h** (հմմտ. պ. *bēl*, քրդ. *bēr* «բահ, թի» (< ***ba(r)h**) (*barθra-*), - ավ. *āxšti-*, մ.պ. *aštih*, պ. *ašti* «խաղաղություն» (< ***ašt**) > հյ. *հաշտ*, - մ.պ. *vistāxv* «վստահ», պ. *gustāx* «համարձակ, հանդուգն, լկտի» (< ***vistāhv**) > հյ. *վստահ*, - ավ. *taoxman-* «սերմ, սաղմ. ազգակցություն», հ.պ. *taumā* «ցեղ, տոհմ», մ.պ. *tōhm* «սերմ», պ. *tuxm* «սերմ» (< ***tōhm**) > հյ. *տոհմ* և այլն). **f/p** (<***h**) > **h** (ավ. *fravaēd-* «նկատել», սող. *prw'yδ* (*frawēd*) «խուզարկել. հրավիրել» (< ***hravēd**) > հյ. *հրավեր*, -) .

Հունարեն > հայերեն. (‘) [h] > **h** (հմմտ. *αἰρετικός* [*ahiretikós*] > *հերետիկոս*, *ὄλη* > *հիղ(ե)* «նյութ», *ὄπατος* [*hyu'patos*] > *հիւպատ(ոս)* «կուսակալ», *ῥήτωρ* [*hré:to:r*] > *հռետոր*, -ի, -աց, *Ἑλένη* [*heléne:*] > *Հեղինե*).

Լատինական փոխառություններում *h* (**h**)-ով բառեր չկան:

Հնչյունական (/հնչյութային) անցումների վերոհիշյալ համապատասխանությունները հիմք են տալիս հետևյալ տիպաբանական դիտարկումների համար.

¹ Ուրարտերենի *h*-ին ումանք վերագրել են [x] (տե՛ս *Джаукян Г. Б.*, Урартский и индоевропейские языки, Ереван, 1963, с. 13, *Меликишвили Г. А.*, Урартский язык, Москва, 1964, с. 22), ուրիշները՝ նաև ձայնեղ շփական *g* [ɣ] և սովորական, այն է՝ խուլ շփական *h* [h] (տե՛ս *Дьяконов И. М.*, Языки древней Передней Азии, Москва, 1967, с. 129, *Хачикян М. Л.*, Хурритский и урартский языки, Ереван, 1985, с. 41) հնչյունական արժեքներ: Խեթերենի *h*-ին ևս տարբեր հնչյունական արժեքներ են վերագրվել: Ըստ Յո. Ֆրիդրիխի՝ *h*-ով նշանակվել է երկու հնչյուն՝ «սեկը՝ ավելի ուժեղ՝ *k*-ին մերձեցող ... մյուսը՝ թույլ արտաբերվող», պիտի կարծել [h]-ին մերձեցող (տե՛ս *Фридрих И.*, Краткая грамматика хеттского языка, Москва, 1952, с. 51): Վյաչ. Բվանովը տարբերակել է թույլ՝ *h* և ուժեղ՝ *hh*, որպես միևնույն հնչյութի տարբերակներ, բայց առանց հստակեցնելու դրանց հնչյունական բնութագրերը (տե՛ս *Иванов В. В.*, Хеттский язык, с. 63, 71):

² Բառիմաստի մեկնությունն առաջարկել է Գ. Ղափանցյանը (տե՛ս *Ղափանցյան Գ. Ա.*, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1961, էջ 134):

1) Ինչպես հնդեվրոպական, այնպես էլ ոչ հնդեվրոպական լեզուներից կատարված փոխառություններում գերակշռում է «օտար *h* = *hj*. *h*» համապատասխանությունը.

2) Հայերենի՝ որպես փոխառու լեզվի *h* (*h*)-ն չի կարող անմիջական առնչություն ունենալ միևնույն լեզվաընտանիքի (օրինակ՝ սեմականի կամ կովկասյանի) կամ միևնույն լեզվաճյուղի (օրինակ՝ իրանականի) տարբեր լեզուների համարժեք ձևերի հետ: Ի վերջո, հայերենն իր պատմական զարգացման որոշակի փուլում շփվել է նշված լեզվաընտանիքների/լեզվաճյուղերի ոչ բոլոր լեզուների հետ, այլ դրանցից մեկի կամ երկուսի, հետևաբար փոխառությունները ևս կատարել է այդ լեզվից/լեզուներից: Նման դեպքերում ամենից հավանականն է նույնական կամ լծորդակից հնչույթային անցումը, որը դրսևորվում է նաև այլ լեզուների դեպքում: Օրինակ՝ սեմական լեզուների դեպքում դա հատակ է՝ այդպիսին է *h*-ն՝ իր *h* և *ḥ* լծորդակից տարբերակներով: Կովկասյանների դեպքում առավել հավանական են՝ 1) շրթնային *w*-ն՝ շփական *v*-ի միջանկյալ օղակով անցումով *h* (*h*)-ի, և 2) *y* [j]-ն, որը, միջին դարերից սկսած, հայերենի խոսակցական տարբերակներում հաճախ է վերածվել *h* (*h*)-ի:

3) Խեթերենի և ուրարտերենի *h*-երի ծագումնաբանությունը, ըստ ամենայնի, հանգում է հետնալեզվային **h* (*h*)-ի՝ որպես հիմնական նախաձևի (կամ դրանցից մեկի): Առհասարակ հնդեվրոպական հին լեզուներում *s*//*h*, *x*//*h* հերթագայությունները միևնույն լեզվի բառայթի և բառային տարբերակների շրջանակներում (հմմտ. իւեթ. *ešhar* (*išhar*) // *ešsar* [essar] «արյուն» [x(*h*)/s]¹, մ.պ. *ākāh*, *ākās*), ինչպես նաև՝ ցեղակից լեզուների համարժեք ձևերում (հմմտ. իւեթ. *meḥur* «ժամանակ» –ռու. *месяц* [mesjac] «ամիս» – [x(*h*)/s]) և փոխառություններում ոչ հազվադեպ հանդիպող երևույթներ են (հմմտ. մ.պ. *vistāxv*, պ. *gustāx* > հյ. *վստահ*, – ավ. *taoxman* – > հյ. *տոհմ*):

4) Առանձին դեպքերում, օրինակ՝ իրանականների, հայերենի բառակզբի *h* (*h*)-ն, ըստ ամենայնի, նախ՝ դրափոխության, ապա՝ հերթագայական հնչունափոխության արդյունք է (հմմտ. ավ. *āxšti*- (>**xāšti*-) > հյ. *հաշտ* – (*x* > *h*)):

5) Իրանական փոխառությունների մեջ մեծ թիվ են կազմում միջին պարսկերենից, մասնավորապես՝ պահլավերենից կատարված փոխառությունները: Եթե հայերեն բառաձևը հնչյունական կազմով նույնն է կամ ամենից մոտն է միջին պարսկերենի ձևին, պիտի կարծել, որ անմիջական փոխառություն է հենց այդ լեզվից: Իհարկե, դա որպես ընդհանուր սկզբունք: Առանձին դեպքերում հայերեն բառի անմիջական սկզբնաղբյուրը կարող է լինել իրանական այլ լեզու: Այսպես, նկատված է, որ բառակզբում՝ *ր* (*r*) ձայնորդին նախորդող դիրքում իրանական *f* -ն է հայերենում վերածվել *h*

¹ Օրինակն ըստ **Фридрих И.**, նշվ. աշխ., էջ 51, **Иванов В. В.**, Хеттский язык, с. 90 գրքերի:

(h)-ի, այլ ոչ թե՛ *p*-ն¹: Հետևաբար հյ. *hprawlēr* բառը անմիջական փոխառություն է ավ. *fravaēd*- «նկատել» ձևից:

Հայերենի *h* (h)-ի հ.-ե. նախաձևերի մեջ քանակական զգալի գերակշռություն ունի **p*-ն՝ **h*(/*H)-ի համեմատությամբ ավելի քան յոթ անգամ, իսկ **s*-ի համեմատությամբ՝ երեք անգամ: Եթե նկատի ունենանք, որ հյ. *h* (h)-ի համար **p*-ով նախաձև է վերականգնվում, օրինակ, *հայր*, *հարսն*, *հարց*, *հաց*, *հեղուկ*, *հեր(-ու)*, *հետ(-ք)*, *հինգ*, *հոգի*, *հող*, *հորդ*, *հուն* (հն-ոց) «կրակ», *հուր* բառերի համար, որոնք ոչ միան հայերենի, այլև առհասարակ որևէ լեզվի բառապաշարի կարևոր մաս են կազմում, մտնում են նրա հիմնական բառաֆոնդի մեջ, ավելի քան ակնհայտ կլինի հ.-ե. **p* > հյ. *h* (h) համապատասխանության առաջնային բնույթը:

Հյ. *h* (h)-ի տիպաբանական համարժեքների մեջ կա «օտար լեզվի *p* – հյ. *h* (h)» միայն մեկ համապատասխանություն՝ սողդ. *prw'yδ* (*frawēd*) «խուզարկել. հրավիրել», սակայն, ինչպես նշել ենք, հյ. *hprawlēr* բառը սերել է ավ. *fravaēd*- «նկատել» ձևից²:

Հյ. *h* (h)-ի դիմաց **p*-ով նախաձև ունեցող վերոհիշյալ բառերի դեպքում ուշագրավ կարող է լինել տիպաբանությունը հ.-ե. լեզվաընտանիքի շրջանակներում: Ըստ այդմ, վերոհիշյալ ցանկից հիմնական բառաֆոնդին պատկանելու առումով կարելի է նկատի ունենալ առավել հավաստի *հայր*, *հաց*, *հետ(-ք)*, *հինգ*, *հուր/հուն* (*p/ñ* հերթագայությամբ) բառերը, որոնց համապատասխան ձևերը պահպանել են հ.-ե. հին լեզուներից շատերը: Այսպես. 1) հ.-ե. **pātēr* «հայր»³. հն հնդկ. *pítar-*, ավ. *pítar-*, թոխ. Ա. *pācar*, թոխ. Բ. *pācer*, հուն. *πατήρ*, լատ. *pater*, հյ. *huyr* (*haxir*), հն իռլնդ. *athir*, գալլ. *Ateronius*, գոթ. *fadar*, հն անգլ. *fæder* (անգլ. *father*), հն վրն գրմ. *fater* (գրմ. *Vater*)⁴. 2) **pek^h*- «եփել, թխել». հն հնդկ. *pācanti* «եփում են, պատրաստում են կրակի վրա», հուն. *πέσσω* «եփում եմ», *ἀροκόπος*⁵ «հացթուխ», հյ. *hug* (*hac*⁶) (<**pok^h-ti* ձայնդարձային տարբերակից)⁶, թոխ.

¹ Տե՛ս Աճառյան Ն., Հայոց լեզվի պատմություն, I մաս, Երևան, 1940, էջ 238, Ջահուկյան Գ. Բ., նշվ. աշխ., էջ 557:

² Ըստ Ն. Հյուբշմանի՝ *fravaēda*- «ուսուցիչ, սովորեցնող» (գրմ. *Le hrer*) բառից (տե՛ս Հյուբշման Ն., Հայերենի քերականություն, Երևան, 2003, էջ 183): Հմմտ. Ջահուկյան Գ. Բ., նշվ. աշխ., էջ 531: Ն. Աճառյանի կարծիքով փոխառված է պիլ. «**fravēd* > *hprawlēr*, **fravēdak* > *hprawlիրակ*, **fravēdan* > *hprawlիրան* ենթադրելի ձևերից» (Աճառյան Ն., Հայերեն արմատական բառարան, հ. III, Երևան, էջ 133, հմմտ. *նույնի*՝ Հայոց լեզվի պատմություն, I մաս, էջ 269):

³ Ըստ «կոկորդային տեսության»՝ **pHtér* «հայր»:

⁴ Մյուս լեզուներում՝ հին սլավոներեն, լիտվերեն և այլն, **pātēr* «հայր» բառի ձևերի փոխարեն պահպանվել են մանկական լեզվին բնորոշ **atta* «հայր» ձևի տարբերակները, իսկ որոշ լեզուներ (հին հունարեն, լատիներեն, սանսկրիտ և այլն) պահպանել են երկուսն էլ (տե՛ս Աճառյան Ն., նշվ. աշխ., էջ 32):

⁵ Ըստ Վ. Գեորգիևի՝ *ἀροκόπος* «հացթուխ» (*‘некаръ’*) ձևից (տե՛ս Գեորգիև Բ. Ի., Исследования по сравнительно-историческому языкознанию, Москва, 1958, с. 16):

⁶ Ըստ Թ. Գամկրելիձեի և Վլաշ. Իվանովի՝ **p^hok^hi^hok^hi^h* նախաձևից (տե՛ս Գամկրելիձե Գ. Բ., Иванов Вяч. Вс., Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тбилиси, 1984, с. 699): Ն.

Ա. *päk-* «եփել, պատրաստել», թոխ. *F päkw-* «եփել», լատ. *coquō* «թխում եմ. եփում եմ», լիտվ. *kepù* «թխում եմ», *kèpti* «թխել», հն սլավ. *pekō* «թխում եմ» (հմմտ. *некх* «թխել»), ալբ. *pjek* «թխում եմ»։ 3) **ped-* / **pod-* «ոտք»։ հն հնդկ. *pad-* «ոտք», *padám* «հետք», ալ. *pad-* «ոտք», պրու. *pāy* «ոտք», *pai* «ոտնահետք», իւեթ. *pata-* «ոտք», *pedan* (*petan*) «տեղ», թոխ. *A pe*, թոխ. *B paiyye*, հուն. *πούς*, (սեռ. հլ. *ποδός*), լատ. *pēs* (սեռ. հլ. *pedis*), լիտվ. *pėdà* «ոտնաչափ», հն սլավ. *pěši* (*nbaw*) «հետևակ», գոթ. *fōtus*, հն իսլնդ. *fótr*, հն անգլ. *fōt* (անգլ. *foot*), հն վրն գրմ. *fuoz* (գրմ. *Fuss*), հլ. *hētun-p* (*het-k'*) / *nun-ū* (ot-n) «ոտք»։ 4) **penk^he* «հինգ»։ հն հնդկ. *pāñca*, ալ. *panča*, պիլ. *panč*, պրսկ. *panj*, հիերոգլ. լուվ. *panta*, թոխ. *A pāñ*, թոխ. *B piś*, հուն. *πέντε*, ալբ. *pēsë*, լիտվ. *penki*, հն սլավ. *pęti* (ռու. *пяты*), լատ. *quinque* (ֆրնս. *cing* [sink^h]), հն իռլնդ. *cóic*, գոթ. *fimf*, հն իսլնդ. *fimm*, հն վրն գրմ. *fimf*, *finf* (գրմ. *fünf*), հն անգլ. *fif* (անգլ. *five*), օւեթ. *fonjfonj*, հլ. *hինգ* (*hing*)։ 5) **pur* / **pun-* «կրակ»¹։ իւեթ. *pahhur*, թոխ. *A por*, թոխ. *B puwar*, հուն. *πῦρ*, ումբր. *pir*, հն իսլնդ. *fúrr* «կրակ», իռլնդ. *úr*, գոթ. *fōn* «կրակ» (սեռ. *funins*), հն անգլ. *fȳr* «կրակ» (անգլ. *fire*), հն վրն գրմ. *fuir* (գրմ. *Feuer*), հն պրու. *panno* «կրակ», անգլ. *fȳr*, հոլլ. *vuur*, հլ. *hnur* / (*hnū*) «կրակ»։

Վերոհիշյալ տիպաբանական զուգահեռները հիմք են տալիս հետևյալ դիտարկումների համար։- 1) Բառակազմի դիրքում *h.-ե.* **p-*ն զգալի թվով լեզուներում արտացոլվում է իբրև *p*, ընդ որում՝ ինչպես *centum* (հունարեն, լատիներեն, ումբրերեն, հին պրուսերեն, թոխարական և իւեթալուվիական լեզուներ), այնպես էլ *satəm* խմբի լեզուներում (հին հնդկերեն, իրանական լեզուներ, պավոնական լեզուներ, լիտվերեն, ալբաներեն)։ 2) Գերմանական հին լեզուներում (գոթերեն, հին վերին գերմաներեն, հին անգլերեն, անգլո-սաքսոներեն, հին իսլանդերեն) **p* > *f* անցումը, ըստ ավանդական հնդեվրոպաբանության, բաղաձայնների առաջին տեղաշարժի արդյունք է², իսկ նոր

Աճառյանը *hug* բառը դասում է չստուգաբանվածների շարքում (տե՛ս Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 64-65), սակայն, կարծում ենք, հիմնավոր է այն *h.-ե.* **pek^h-*/**pok^h-* «եփել, թխել» արմատից բխեցնելը (հմմտ. **Ջահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010, էջ 453)։

¹ Ըստ Թ. Գամկրելիձեի և Վյաչ. Իվանովի՝ **p^h* **HHur** (տե՛ս **Гамкредидзе Т. В., Иванов Вяч. Вс.**, նշվ. աշխ., հ. II, էջ 699)։

² Տե՛ս **Мейе А.**, Основные особенности германской группы языков, Москва, 1952, с. 37-39, **Прокош Э.**, նշվ. աշխ., էջ 50-51, **Бах А.**, История немецкого языка, Москва, 1956, с. 33-34, Сравнительная грамматика германских языков, т. II, Москва, 1962, с. 17: Գերմանական բաղաձայնների առաջին տեղաշարժի սկզբունքը, որը, ըստ էության, համեմատական հնդեվրոպաբանության մեջ բացահայտված առաջին հնչյունական օրենքն էր (*Գրիմի օրենք*), նախորդ XX դարի կեսերից սկսեցին վերանայել ըստ համեմատական լեզվաբանության մեջ արտահայտվող նոր պատկերացումների։ Մասնավորապես. 1) Վ. Պորցիգը նկատեց, որ գերմանական լեզուներին և հայերենին վերագրվող բաղաձայնական տեղաշարժերի զգալի մասը բնորոշ է նաև այլ լեզուների (տե՛ս **Порциг В.**, Членение индоевропейской языковой общности, Москва, 1964, с. 123-126)։ 2) Ըստ Թ. Գամկրելիձեի և Վյաչ. Իվանովի առաջադրած «կատկայինների տեսության»՝ իրականում գերմանական լեզուները և հայերենը ավելի հարազատորեն են արտացոլում հպական բաղաձայնների *h.-ե.* համակարգը, քան մյուս լեզուները (**Гамкредидзе Т. В., Иванов Вяч. Вс.**, նշվ. աշխ., հ. I, էջ 35-41)։

լեզուներում (գերմաներեն, անգլերեն)՝ դրա շարունակական դրսևորումը: 3) Եթե նշված երկու դեպքերը համարենք օրինաչափական կամ գերակայող միտումներ, ապա մյուսները, ինչպիսիք են *p>v (հմմտ. *pur > հոլլ. *vuur*), *p>q (հմմտ. *penk^ue > լատ. *quinque*), *p>c (հմմտ. *penk^ue > *cing* [sink^u]) / հն իռլնդ. *cóic*), *p>h (հմմտ. *pətér /(*pHtér) > հյ. *հայր* (*hair/hayr*)), *p>ø (հմմտ. *pətér > հն իռլնդ. *athir*, *pod- > հյ. *nun-ն* (ot-n)) անցումները, պայմանականորեն կարող են դիտվել որպես այդ միտումներից «շեղումներ»: Իհարկե, նշված բոլոր «շեղումների» քննությունը մեր խնդրից դուրս է: Դրանք մեզ հետաքրքրում են այնքանով, որքանով կարող են օգնել բացատրելու *h.-ե.* *p > հյ. *h* (*h*) / հյ. ø հնչյունական (իմա՝ հնչույթային) անցումները:

Ընդհանուրհնդեվրոպական լեզվի հպական բաղաձայնների հնչույթային կարգավիճակի մասին մեր առաջադրած վարկածի համաձայն՝ նախալեզուն ունեցել է հպականների միայն երկու հնչույթային կարգ՝ ձայնեղների և խուլների, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին ուներ երկուական ենթակարգ՝ ոչ շնչեղների և շնչեղների: Այսինքն, օրինակ, <*B> հնչույթը ներկայացված էր *b և *b^[h], <*P>-ն՝ *p և *p^[h], <*G> -ն՝ *g և *g^[h] ենթահնչույթային տարբերակներով և այլն¹: Մեր կարծիքով, ինչպես վերոհիշյալ բառերի, այնպես էլ առհասարակ բառասկզբի դիրքում «*h.-ե.* շրթնային խուլ հպական > հյ. *h* (*h*)» հնչյունական անցում ունեցողների ընդհանուրհնդեվրոպական նախաձևը եղել է շնչեղ, այն է՝ *p^[h], այլ ոչ թե ոչ շնչեղ հնչյուն, ինչպես որ սովորաբար վերականգնվում է ավանդական հնդեվրոպաբանական հայեցակարգերում: Հետևաբար վերոհիշյալ նախաձևերն ունեցել են *p^[h]ətér «հայր», *p^[h]ek^u- «եփել, թխել», *p^[h]ed- / *p^[h]od- «ոտք», *p^[h]enk^ue «հինգ», *p^[h]ur / *p^[h]un- «կրակ» և այլն: Նախագրային հայերենում, ըստ ամենայնի՝ դեռևս վաղնջահայերենում, տեղի է ունեցել այդ շնչեղ խուլ ենթահնչույթի հպական բաղադրիչի՝ *p-ի անկում, իսկ շունչը՝ *^[h]-ն, ընդհակառակը, աստիճանաբար վերածվել է լիարժեք հնչյունի (իմա՝ հնչույթի. հմմտ. *հայր* ~ *այր* «1. տղամարդ. 2. քարանձավ», *հուր* ~ *ուր* «որտեղ, որտեղ որ» – (h ~ ø)), *հայր* ~ *տայր* «(նա) տալիս էր» (h~տ), *հետ(-ք)* ~ *մետ* «շատ, միշտ, հավետ» (h~մ) և այլն)՝ իրենով լցնելով *p-ի անկումով առաջացած դատարկությունը: Ըստ իս՝ նույնպիսի գործընթացի արդյունք են նաև հին իռլանդերենի *athir* «հայր», գալլ. *Ateronius* «հայր» և հայերենի *nun(-ն)* [ot(-n)] «ոտք» բառերը: Այդպես մտածելու համար մեզ հիմք են տալիս հետևյալ իրողությունները.

Ա) Հ.-ե. *p^[h] > հյ. *h*(*h*) հնչյունական (/հնչույթային) անցմանը զուգահեռ գործել են *h.-ե.* *h > հյ. *h*(*h*), *h.-ե.* *ø > հյ. *h*(*h*)անցումները (հմմտ. *onə-mo- > *հողմ* (-ոյ), *arəy- > *հարաւ*- (ունք), *ōmo- > *հում* (-ոյ) և այլն): Այլ կերպ, այդ հնչյունական անցման հարցում դեր է ունեցել նաև համաբանությունը (*аналогия/analogy*):

¹ Տե՛ս Պետրոսյան Վ. Ջ., Հպական բաղաձայնների հնդեվրոպական համակարգը // «ՎԷՄ», 2019, թիվ 2, էջ 107-136:

Բ) Հայերենի բարբառներում պահպանվել են բառասկզբի դիրքում *h* (*h*) կամ *j* (*j*) նախահավելվածով՝ հնդեվրոպական ծագման բառեր, որոնց գրաբարյան համարժեքներն այդ նախահավելվածները չունենին (հմմտ. **plios* > գրբբ. *պլեւոք*, բրբռ. *հայիվոք*, - **perə* > գրբբ. *երի* «մտոր, կողքին»¹, բրբռ. *հերի*, - **plā* > գրբբ. *լալ*, բրբռ. *յիլալ*, - **pod-* > գրբբ. *նուն*, բրբռ. *յու*, - **porhu* > գրբբ. *որթ* «հորթ», բրբռ. *հորթ*, - **pōlo* > գրբբ. *ուլ*, բրբռ. *հուլ* և այլն): Ըստ Հ. Աճառյանի՝ բարբառային վերոհիշյալ (նախահավելվածով) ձևերը ավելի հին են գրաբարյանների համեմատությամբ²: Հ.-ե. **p* > *h*. *h* (*h*) անցման համար ենթադրվել է *f*-ի միջանկյալ աստիճան, այսինքն՝ **p* > (**f* >) *h* (*h*), հոգուտ որի վկայում են նաև տիպաբանական զուգահեռները (հմմտ. հն պրսկ. *puθra* > օւտթ. *furt* «որդի», ընդհանուր ուգրաֆիննական **p* > ֆինն. *p* (*puu* «ծառ», *pelä-tä* «վախենալ»), կոմի-գիրյ. *p* (*pu* «ծառ»), վոտյ. *p* (*pu* «ծառ»), բայց հունգ. *f* (*fa* «ծառ», *fel* «վախենալ») և այլն): *P* > *f* անցման համար ենթադրվում են *p*' > *pφ* > *φ* միջանկյալ աստիճանները, այսինքն՝ *p*-ի շնչեղացում³, ապա հնչյունական փոփոխություն, որին կարող էր հաջորդել անցումը *h*-ի: Հնչյունափոխական ամբողջական շղթան՝ *p* > (... >) *h*, դրսևորվել է, օրինակ, ճապոներենում և մոնղոլերենում⁴:

Գ) Վերջապես բառասկզբի դիրքում **p* > *h* (*h*), **p* > \emptyset հնչյունական անցումները բնորոշ էին ոչ միայն հայերենին, այլև կելտական լեզուներից շատերին, որոնք պատկանում են *h*-ե. լեզուների *centum* խմբին (հմմտ. **p^hter-* «թռիչք), թռչելը». հն կորն. *hethen* «թռչուն», իռլ. *én*, վալլ. *edn*, միջ. բրետ. *ezn* և այլն, - **p^hl̥-* հն իռլնդ. *hil* «շատ», հուն. *πολύς* «շատ», հոմ. հուն. *πλεῖος* «լի», լատ. *plēnus* «լի», գոթ. *filu*, սնսկ. *pūrñá-* «լի», - հն իռլ. *hith* «ցորեն», վալլ. *ýd*, հն կորն. *yd*, միջ. կորն. *ys*, *eys* (հգն. թ. *esow*), բրետ. *ed*, սնսկ. *pitu-* «սնունդ» («*nuua*») և այլն)⁵:

¹ Այս բառը գրաբարում սովորաբար գործածվել է *առ* կամ *h(j)* նախդիրների հետ, հետևաբար բարբառային «հերի» ձևը կարող էլ լինել գրաբարյան «յերի»-ի հնչյունափոխված տարբերակը՝ բառասկզբում *j* (*y*) > *h* (*h*) անցումով (հմմտ. *յածել* «շրջել, թափառել» > *հածել*, *յաղթ* «1. խոշոր, ստվար. 2. հզոր» > *հաղթ*, *յոյժ* «շատ, խիստ, սաստիկ» > *հույժ* և այլն):

² Տե՛ս Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, 1951, էջ 411-412: Մենք նշում ենք միայն *h*-ե. խուլ շրթնային հպականից՝ **p*-ից, սերված ձևերը: Կան նաև այլ նախահավելվածներով (**s*, **k^h*) ձևեր, բայց դրանց քննությունը մեզ հետաքրքրող խնդրից դուրս է:

³ Շնչել բնույթ է վերագրվել, օրինակ, հին հունարենի ϕ -ին (տե՛ս **Прокош** Է., նշվ. աշխ., էջ 29):

⁴ Տե՛ս Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Երևան, 1971, էջ 590, **Серебренников** Б. А., Вероятностные обоснования в компаративистике, Москва, 1974, с. 118-119:

⁵ Կելտական լեզուների օրինակներն ըստ **Льюис** Г. и **Педерсен** X., Краткая сравнительная грамматика кельтских языков, Москва, 1954, с. 52-53: Թ. Գամկրելիձեն և Վյաչ. Իվանովը *h*-ե. այլ լեզուների մեկ այլ խմբի, այդ թվում՝ հայերենի, նույնիմաստ բառերի համար առաջարկում են կոկորդայինով նախաձև՝ **Hat'*:- Հմմտ. ավեստ. *āδū.fradāna-* «ցորենով առատ», սողդ. բուդդ. *'dw-k* «ցորեն», հն *h*. *hat* «ցորեն», գոթ. *atisk* «սերմ», հն վրն գրմ. *ezzesc* «սերմ», լատ. *ador* «հացաբույսի հատուկ տեսակ» (տե՛ս **Гамкрелидзе** Т. В., **Иванов** Вяч. Вс., նշվ. աշխ., հ. II, էջ 655): Նկատենք, որ *h*. *huan* (*hat*) բառը Հ. Աճառյանը թողել է չստուգաբանված (տե՛ս Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. III., էջ 50-52): Ըստ Գ. Ջահուկյանի՝ փոխառություն է

Ըստ էության, հ.-ե. **p* > հյ. *h* (h) անցմանն է վերաբերում նաև հ.-ե. **p* > հյ. *j* (y) համապատասխանությունը երկու բառի դեպքում՝ *յաւրայ* «խորթ հայր» և *յիւուն* «հինգ տասնյակ», որովհետև *յաւրայ-ի* **pətr-* նախածնը զարգացել է **p^[h]ətér* «հայր» նախածնից, իսկ *յիւուն-ը*՝ **p^[h]enkʷəkʷomtə* նախածնից՝ **հինգհիւուն* > **յինգհիւուն* > **յինգուն* միջանկյալ օղակներով¹: Ըստ Հ. Պեդերսընի՝ «բնիկ հայկական բառի», այդ թվում՝ *յաւրայ* և *յիւուն* բառերի սկզբի *j* (y)-ին *h* (i) նախադրության դրսևորումն է և կապ չունի այն դեպքերի հետ, «որ ամեն սկզբնատառ *j* արդի հայերենին մեջ *h* եղած է»²: Ըստ այդմ՝ *յիւունի j-ն* համարժեք է «ի + հ»-ի: Հատկապես վերոհիշյալ բառերի դեպքում այդպիսի մեկնաբանությունը, մեր կարծիքով, համոզիչ չէ, որովհետև ընդհանրապես խախտում է նախածնների վերականգնման տրամաբանությունը: Ընդհակառակը, ավելի հավանական է, որ տեղի է ունեցել «հ.-ե. **p* > վրնջ.հյ. **h* > հնգյն հյ. **j* > գրբ. հյ. *j* (> ժ. հյ. *h*)» անցում: Վերջինը վերաբերում է առհասարակ «գրբբ. բառասկզբի *j* (y) > արդի հայերեն *h* (h)» հնչյունական անցումներին (հմմտ. *յիմար* > *հիմար*, *յիշել* > *հիշել*, *յիրաւի* > *հիրավի*):

Սավածից կարելի է եզրակացնել, որ հ.-ե. **p* > հյ. *h* (h) անցումը եղել է տևական գործընթաց, որը սկսվել է հնդեվրոպական լեզվամիասնության տրոհումից հետո և շարունակվել է արդեն հայերենի ինքնուրույն զարգացման պատմության ընթացքում, թերևս՝ մ. թ. ա. IV-III դարերում: Հետևաբար որքան էլ հ.-ե. **p* > հյ. *h* (h) համապատասխանությունը ներառում է *h* (h)-ով սկսվող բառերի ամենից մեծ քանակությունը (52), **p-ն* չի կարող լինել հայերենի *h* (h)-ի նախասկզբնական ձևը:

Ինչպես երևում է վերը ներկայացված թվային ցուցիչներից, քանակապես երկրորդ տեղում է հ.-ե. **s* > հյ. *h* (h) համապատասխանությունը՝ 16: Այդ

խթերեն *hattāi-* «հատել, կտրել, ծակել, պատռել» բառից (տե՛ս **Ջահուկյան Գ. Բ.**, Հայոց լեզվի պատմություն..., էջ 314, *նույնի*՝ Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 450): Կարծում ենք՝ նկատի ունենալով, որ՝ 1) լեզուների երկու խմբերում էլ կան ինչպես *centum*, այնպես էլ *satəm* լեզուներ, հնարավոր չէ խոսել բարբառային տարբերակվածության մասին, 2) երկու խմբի լեզուների բառաձևերն էլ պատկանում են իմաստային ընդհանուր դաշտի, իսկ ստուգաբանական քննությամբ հնարավոր է փաստել նաև հնչյունական (հնչույթային) կազմի ընդհանրությունները,– նախահնդեվրոպական փուլում (հեռավոր վերականգնում) հնարավոր է բոլոր ձևերի համար առաջարկել շնչեղ խուլ հպականով ընդհանուր նախածն, այն է՝ **p^[h]ad-*: Հայերենում և խթերենում ընկել է այդ նախածնի խուլ հպական բաղադրիչը (**p*), հն հնդկերենում՝ շնչեղը (*^[h]*), իսկ մյուս լեզուներում՝ երկու բաղադրիչն էլ (**p^[h]*), և բառը սկսվել է ձայնավորով կամ կիսաձայնով: Ի դեպ, կելտական որոշ լեզուների *y* կիսաձայնը կարող է լինել բառասկզբի *h*-ի և ձայնավորի, մասնավորապես՝ *i*-ի փոխազդեցության արդյունք (հմմտ. վալլ. *yđ*, հն կորն. *yđ*, միջ. կորն. *ys*, *eyss*):

¹ Տե՛ս **Հյուբշման Հ.**, նշվ. աշխ., էջ 477, **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., էջ 400, **Petrosyan W. Z.**, Происхождение в древнеармянском языке сонорного звука *j* (y) и его фонематическая значимость (исторический аспект) // European Journal of Humanities and Social Sciences, 2017, № 5, p. 24-29:

² **Պեդերսըն Հ.**, Հայերեն եւ դրացի լեզուները, Վիեննա, 1907, էջ 62:

բառերից են. *hawf* (-ոյ) «համ, ճաշակ. ախորժելիություն» (< **sap/b-mo-*)¹, *հեծ-անիմ* «գրաստ կամ կառք նստել» (< **sed-s-*), *հեղգ* «ծուլլ, ալարկոտ» (< **selk-*), *հիմն* «պատի հիմք. սկիզբ» (< **semn*), *հին* (-ոյ) «վաղեմի. հինավուրց» (< **seno-*) *հեւր / հիւր* (-ոյ) «հյուր» (< **seu(e)ro-*), *հիւթ* (-ոյ) «նյութ. խոնավություն. կորով (*իհիւթ*)» (< **sip-to-*), *հիւծ-անեմ* «հյուծվել, ուժասպառ լինել» (< **sēug-* ?) և այլն: Ինչպես երևում է նաև նշված օրինակներից, հ.-ե. **s* > հյ. *h* (h) անցումը տեղի է ունեցել միայն բառակերպի դիրքում՝ առաջին շարքի ձայնավորների և դրանցով սկսվող երկբարբառների նախորդող դիրքում (*e, i, ēu*):

Բառակերպի դիրքում «հ.-ե. **s* > ժառանգ լեզվի *h*» հնչյունական անցում, հայերենից բացի, տեղի է ունեցել նաև հին հունարենում, իրանական և կելտական առանձին լեզուներում, ինչպես **seno-* > հուն. *ἔνος* [*hénos*] «հին, անցյալ տարվա», ավ. *hanō*, բրետ. *hen* «հին, ծեր»: Հմմտ. նաև. **s̥mā-r-* / **s̥m̥rom* (?) «ամառ, տարի». վալլ. *haf* «ամառ», կորն. *haf* «ամառ», բրետ. *hañv*, ավ. *hamō* (գրծ. *hama*), պիլ. *hāmīn*, քրդ. *hāwīn*, վալլ. *hysb* «չոր, անպտուղ» (իգ. սեռ. *hesb*), բրետ. *hesp, hesk* (< **sisqu-*, **sisqwo-*)², ավ. *hišku-* «չոր», - **sal(i)-* «աղ». հուն. *ἄλς* [*hális*] «աղ», - **septm* «յոթ». հուն. *ἑπτά* [*heptá*] «յոթ», ավ. *hapta* և այլն:

Ինչպես բառակերպում, այնպես էլ միջձայնավորական դիրքում *s* > *h* անցում դիտարկվել է նաև թյուրքական (հմմտ. **թյուրք. լեզուներ**. թաթար. *saryq* «ոչխար» – բաշկ. *haryq* «ոչխար», թաթար. *sary* «ղեղին» – բաշկ. *hary* «ղեղին», թաթար. *atasy* «նրա հայրը» – բաշկ. *atahy* «նրա հայրը», յակուտ. (*kiz*>) *kis* «աղջիկ» – *kīha* «նրա աղջիկը» և այլն), ուգրաֆիննական, մոնղոլական և տունգուս-մանջուրական լեզուներում³:

Ըստ Ա. Մեյեի՝ *s* > *h* անցումը «բացատրվում է արտասանության թուլության և միմյանցից անկախ նկատվում է այն լեզուներում, որտեղ հպականների արտաբերությունը չի հատկանշվում կոշտությամբ»⁴:

Ինչպես արդեն նշվել է, Գ. Ջահուկյանը կոկորդայինով նախաձև (**H-*) առաջարկել է հին հայերենի միայն յոթ բառի բառակերպի *h* (h)-ի համար, իսկ 12-ի դեպքում վերականգնվող նախաձևը բառակերպի *h* (h)-ի դիմաց չունի որևէ հնչույթ, այլ կերպ՝ առկա է հյ. *h* (h) < հ.-ե. **ø* համապատասխանություն:

¹ Այս բառը Հ. Աճառյանը թողնում է չստուգաբանված (տե՛ս **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., էջ 16-17):

² Նշված **sisqu-*, **sisqwo-* նախաձևերը առաջարկում են Գ. Լյուիսը և Հ. Պեդերսը (տե՛ս **Льюис Г. и Педерсен Х.**, նշվ. աշխ., էջ 42-43)՝ պիտի կարծել իբրև ընդհանուրկելտական նախաձևեր, որովհետև համեմատական հնդեվրոպաբանության մեջ՝ որպես ընդհանուրհնդեվրոպական նախաձև՝ «չոր, ցամաք» նշանակությամբ առաջարկվում է **sausos*-ը (տե՛ս **Семьень О.**, նշվ. աշխ., էջ 54):

³ Տե՛ս **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, էջ 556, **Серебряников Б. А.**, Вероятностные обоснования в компаративистике, Москва, 1974, с. 140-141:

⁴ **Мейе А.**, Введение в сравнительное изучение индоевропейских языков, с. 121.

Այդ բառերն են. *huǵh* (<*oskiǵā-), *hnǵul* (-ոյ) (<*onə-mo-), *hwarǵur* (<*ari-tro-?)¹, *hwarai-niǵp* «ցանք. սերմ, ունդ» (<*arəǵ-), *hnun* (-ոյ) (<*odos-), *hnunǵul* (<*ode-(i-?)), *hnununǵul* (<*od-od-), (*hnulh-*)₁ (-աց) «ոչխարի հովիվ» (<*(ouǵi-)pā), *hunnun* (+բ.) (<*od-), *hnul* (-ոյ) (<*ōmo-), *hnulǵ* (+բ.) (<*ub): Այս բառերի առնվազն մի մասի դեպքում կոկորդային տեսության կողմնակիցները (այդ թվում՝ Գ. Ջահուկյանը՝ ավելի վաղ հրապարակված «Ակնարկներում ...»)² հնարավոր են համարել *h* (h)-ի սերումը *h*-ե. կոկորդային հնչյունից³, իսկ Գ. Ղափանցյանի կարծիքով «հովիւ, հոտ, հում բառերում սկզբի «h»-ն հայերենում է զարգացել»⁴:

«Կոկորդային տեսության» առնչությամբ արդեն նշել ենք, որ, մեր կարծիքով նս, բավարար հիմքեր չկան ընդհանուրհնդեվրոպական լեզվում յուրահատուկ կոկորդային հնչույթ(ներ)ի տարբերակման համար, և որ *h*-ե. **h*-ն եղել է սովորական հետնալեզվային շփական: Հետևաբար մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից սկզբունքային նշանակություն չունի՝ վերոնշյալ բառերի *h*-ե. նախաձևը բառասկզբում ունեցել է հետնալեզվային խուլ շփական հնչյուն, թե՛ ոչ, որովհետև դրանից խնդրի էությունը չի փոխվում: Եթե ունեցել է, ուրեմն էականորեն մեծանում է *h*-ե. **h* > *h*յ. *h* (h) համապատասխանությունների թիվը՝ ավելի համոզիչ դարձնելով վարկածը, որ *h*յ. *h* (h)-ի նախասկզբնական ձևերից մեկը, եթե ոչ՝ բուն նախաձևը, եղել է ընդհանուրհնդեվրոպական հետնալեզվային խուլ շփական **h*-ն: Եթե չի ունեցել, ուրեմն այդ բառերում սկզբի *h* (h)-ն հայերենյան զարգացում է, ինչպես որ որոշ բառերի համար հակված է կարծելու Գ. Ղափանցյանը: Այդ խնդրին ավելի որոշակի պատասխանելու համար անհրաժեշտ կլինի կատարել յուրաքանչյուր բառի առանձին ստուգաբանական քննություն, որը նս տվյալ դեպքում մեր նպատակից դուրս է:

¹ *Հարիւր* բառի համար Հ. Պեղերսընը առաջարկել է **prǵénur*՝ նախաձևը՝ կապ տեսնելով հուն. *πεῖραρ* (< **perǵ*), *πέρας* «վախճան», հինդլ. *párvan*- «վարակ, եղեգի եւ տնկերու յօդ, հատած» և *párvata*- «լեռ» բառերի հետ (Պեղերսըն Հ., նշվ. աշխ., էջ 60-61): Այսինքն՝ «հարիւր»-ի համար նս կանխադրվել է *h*-ե. **p* > *h*յ. *h* (h) անցում:

² Նշվածներից Գ. Ջահուկյանը կոկորդայինով նախաձև էր առաջարկել *huǵh*, *hwarǵur*, *hwarai-niǵp*, *hnul*, *hnun*, *hnul* բառերի համար (տե՛ս *Джаукян Г. Б.*, Очерки дописменного периода армянского языка, с. 241-242):

³ Տե՛ս *Sturtevant E.*, *The Indo-Hittite Laryngals*, Baltimore, 1942, p. 30, *Георгиев В. И.*, Исследования по сравнительно-историческому языкознанию, Москва, 1958, с. 13: Թ. Գամկրելիձեն և Վյաչ. Իվանովը վերոհիշյալ բառերից *hwarai-niǵp* կապում են կոկորդային հնչյուն չունեցող **arǵ*- «վարելահող. հերկ» նախաձևի հետ (տե՛ս *Гамкредидзе Т. В., Иванов Вяч. Вс.*, նշվ. աշխ., հ. II, էջ 477), բայց կոկորդայինով (**H*) նախաձևի են հանգեցնում, օրինակ, *hnul* «փչում են» բառի *h* (h) սկզբնահնչյունը (տե՛ս *Гамкредидзе Т. В., Иванов Вяч. Вс.*, նշվ. աշխ., հ. I, էջ 206), որի համար Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը առաջարկում են **p*-ով նախաձև (տե՛ս *Աճառյան Հ.*, Հայերեն արմատական բառարան, հ. III, էջ 116, *Ջահուկյան Գ. Բ.*, Հայոց լեզվի պատմություն..., էջ 145, *նույնի* Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 466):

⁴ *Ղափանցյան Գ. Ա.*, Հայոց լեզվի պատմություն. հին շրջան, Երևան, 1961, էջ 337:

Հ.-ե. $*k^{\#} > hj$. h (h) անցումը, ըստ ամենայնի, հնչյունաբանական առանձնակի (այն է՝ նախորդների հետ կապ չունեցող) գործընթացներով պայմանավորված երևույթ է, հետևաբար շեղում ընդհանուր միտումներից (հմմտ. $*k^{\#}az-g \acute{h}- > hawq ?$ «հազալը», $*k^{\#}t- > hánq(-չիմ)$ «հանգիստ առնել. խաղաղվել», $*k^{\#}ol- > հոլով$ «գլորվելը, պտույտ»): Դրանով պիտի բացատրել, որ $*k^{\#} > hj$. h (h) անցումը ներառում է խիստ սահմանափակ թվով բառեր (3):

Այսպիսով, վերը կատարված քննությունը հիմք է տալիս անելու հետևյալ եզրահանգումները: 1) Ընդհանուրհնդեվրոպական լեզվում եղել են $l' < *S >$, $h < *H >$ խուլ շփական հնչույթները կամ առնվազն՝ մի խուլ շփական հնչույթ, որը հանդես է եկել $*s//*h$ լծորդակից հնչյունական տարբերակներով: Այդ հնչույթը կարելի է նշանակել պայմանական $< *S/H >$ խորհրդանիշով: Եթե ընդունենք, որ նշված երևույթը բավարար չափով ուսումնասիրված չէ ընդհանուրհնդեվրոպականում այդպիսի լծորդակցություն կազմելու առումով, ապա առնվազն h -ե. առաջին բարբառներում (= լեզուներում) նմանօրինակ լծորդության գոյությունն ընդունելու համար կան բավարար հիմքեր: Հետևաբար պիտի կարծել, որ h -ե. $*s$ -ը և $*h$ -ն հավասարապես կարող էին լինել hj . h (h)-ի նախասկզբնական ձևերը: Այսինքն՝ h -ե. $*h > hj$. h (h), h -ե. $*s > hj$. h (h) հնչյունական անցումներն ընդհանուր առմամբ եղել են միաժամանակյա գործընթացներ: 2) Հ.-ե. $*p > hj$. h (h) անցումն առաջինների համեմատությամբ զգալիորեն ուշ՝ արդեն հայերենի՝ որպես ինքնուրույն լեզվի ձևավորման փուլում սկսված գործընթաց էր: 3) Հ.-ե. $*\phi > hj$. h (h), h -ե. $*k^{\#} > hj$. h (h) համապատասխանությունների նշանակությունը էական չէ hj . h (h)-ի ծագումնաբանական քննության տեսանկյունից, որովհետև դրանք չեն կարող որևէ կերպ խախտել հիմնական հնչյունական անցումների օրինաչափ բնույթը:

Վարդան Պետրոսյան – Հ.-ե կոկորդայիների տեսությունը և հին հայերենի խուլ շփական Հ (H)-ի ենչաբանական բնութագրերը (ապաժամանակյա և տարաժամանակյա հայեցակետեր)

Հին հայերենի խուլ շփական h (h)-ի համար պատմահամեմատական հայերենագիտության մեջ սահմանված նախաձևերի բազմազանությունը (հմմտ. $*H$ (7)/ $*p$ (52)/ $*s$ (16)/ $*\phi$ (12)/ $*k^{\#}$ (4)) որոշակի խնդիրներ է ստեղծում h (h)-ի նախասկզբնական ձև(եր)ը որոշելու առումով: Դրանցից մեկն ընդհանուրհնդեվրոպական լեզվում կոկորդային հնչյունների գոյության հարցն է, որքանով հայերենը խեթերենի և հին հունարենի հետ, համարվել է h -ե. կոկորդայիների ռեֆլեքսները պահպանած հիմնական լեզուներից մեկը (Վ. Գեորգիև): Մեզ առավել համոզիչ են թվում ընդհանուրհնդեվրոպականում յուրահատուկ՝ «կոկորդային» համարված հնչյունների գոյությունը չընդունող տեսակետները, համաձայն որոնց՝ h -ե. $*h$ -ն եղել է «սովորական խուլ հետնալեզվային» (Օ. Մեմերենյի, Է. Մական և ուրիշներ): Ըստ այդմ, հայերենի՝ h (h) սկզբնահնչույթով այն բառերը, որոնց համար «կոկորդային տեսության» կողմնակիցները h -ե. նախաձևերում վերականգնում են առաջին շվայով ($*\phi$) կամ $*H$ -ով

նշանակվող կոկորդային հնչյուն, իրականում ունեցել են սովորական հետնալեզվային խուլ շփական *h: Հյ. h (h)-ի բուն նախաձևերից մեկը եղել է *s-ը, որքանով, եթե ոչ՝ ընդհանուրհնդեվրոպականում, առնվազն հ.-ե. առաջին բարբառներում, *s-ը և *h-ն գտնվել են հերթագայական հարաբերության մեջ: Այդ մասին են վկայում նաև տիպաբանական տվյալները: Հ.-ե. *p > hj. h (h) անցումը, չնայած մյուսների համեմատությամբ քանակական զգալի գերակշռությանը, համեմատաբար ավելի ուշ՝ արդեն հայերենի՝ որպես ինքնուրույն լեզվի զարգացման պատմության ընթացքում տեղի ունեցած գործընթաց էր: Հ.-ե. *ø > hj. h (h), հ.-ե. *k^h > hj. h (h) հնչյունական անցումները մեզ հետաքրքրող խնդրի տեսանկյունից ունեն երկրորդային նշանակություն, որովհետև հ.-ե. *ø > hj. h (h) համապատասխանության դեպքում հայերենի h (h)-ն, ըստ ամենայնի, հետագա հավելում է, իսկ հ.-ե. *k^h > hj. h (h)-ի դեպքում՝ ոչ օրինաչափական հնչյունափոխական գործընթացներով պայմանավորված երևույթ, որը նույնպես տեղի է ունեցել հայերենի ինքնուրույն զարգացման պատմության ընթացքում:

Вардан Петросян – Теория и.-е. ларингалов и фонематические характеристики древнеармянского глухого фрикативного *h* (*h*) (ахронические и диахронические аспекты)

Ключевые слова – глухой фрикативный, заднеязычный, общеиндоевропейский язык, праформа, «сонантный коэффициент», «ларингальная теория», ахронический аспект, Е. Курилович, Э. Макаев, О. Семереньи

Разнообразие определений праформ древнеармянского глухого фрикативного *h* (*h*) в сравнительно-историческом арменоведении (ср. *H (7)/ *p (52)/ *s (16)/ *ø (12)/ *k^h (4)) создает некоторые проблемы в плане определения его первоначальной формы/первоначальных форм. Одна из них – вопрос о существовании ларингальных звуков в общеиндоевропейском языке, поскольку армянский, наряду с хеттским и древнегреческим, считался одним из основных языков, сохранивших рефлексы и.-е. ларингальных (В. Георгиев). Для нас более убедительными представляются точки зрения, не принимающие существование в общеиндоевропейском языке особенных звуков, считающихся «ларингальными», согласно этим мнениям, и.-е. *h был «обыкновенным глухим заднеязычным» (О. Семереньи, Э. Макаев и другие). Соответственно, слова, начинающиеся с фонемы *h* (*h*), для которых сторонники «ларингальной теории» в и.-е. праформах восстанавливают ларингальный звук с *первичным шва* (*shva primum*), обозначаемый (*ə) или *H, в действительности имели обыкновенный глухой фрикативный заднеязычный *h. Одной из истинных праформ арм. *h* (*h*) было *s, поскольку если не в общеиндоевропейском языке, то как минимум в первых диалектах и.-е. *s и *h чередовались между собой. Об этом свидетельствуют также типологические данные. Переход и.-е. *p > арм. *h* (*h*), несмотря на свое значительное по сравнению с другими численное превосходство, – сравнительно более поздний процесс, имевший место на протяжении истории развития армянского языка как самостоятельной единицы. Звуковые переходы и.-е. *ø > арм. *h* (*h*), и.-е. *k^h > арм. *h* (*h*) с точки зрения интересующей нас проблемы имеют второстепенное значение, потому что при соответствии и.-е. *ø > арм. *h* (*h*), по всей вероятности, арм. *h* (*h*)- последующее добавление, а в случае и.-е. *k^h > арм. *h* (*h*) – явление, обусловленное процессами нерегулярного чередования, которое также имело место в процессе истории самостоятельного развития армянского языка.

Vardan Petrosyan – *The Theory of IE Laryngeal Sounds and Phonemic Characteristics of Old Armenian Voiceless Fricative (H) (Anachronistic and Diachronic Aspects)*

Key Words – voiceless fricatives, back-lingual, common Indo-European Language, prototype, voiced coefficient sonorant coefficient, «Laryngeal theory», anachronistic concept, Ye. Kurilovich, E. Makaev, O. Semerenyi

The variety of Old Armenian voiceless *h* (h) in comparative Armenology (comp. **H* (7)/ **p* (52)/ **s* (16)/ **ø* (12)/ **k^h* (4)) gives rise to a certain set of problems when identifying the prototype(s) of *h* (h). One of these problems is the relevance of the laryngeal sounds in common Indo-European language, since Armenian, together with Hittite and Old Greek, was considered one of the key languages that had preserved the reflexes of the IE laryngeal sounds (V. Georgiev). We are more prone to accept the theories that discard the existence of certain unique “laryngeal” sounds in the common Indo-European language. These theories hypothesize that the IE **h* was an “ordinary voiceless back-lingual” sound (O. Semerenyi, E. Makaev and others). The Armenian words starting with *h* (h), which the supporters of the “Laryngeal theory” identify with the IE first shewa (**ə*) or a laryngeal sound marked with **H*, was, in fact, an ordinary voiceless fricative **h*. One of the prototypes proper of the Armenian *h* (h) was **s*, since if not in the Indo-European, then at least in the first IE dialects, the sounds **s* and **h* were in sequential relationship. This idea is well-supported by typological evidence. The transition of the IE **p* > Arm. *h* (h), despite its overwhelming number as compared to the others, took place much later when Armenian was already an independent language. The phonetic transitions IE **ø* > Arm. *h* (h), IE **k^h* > Arm. *h* (h) are of secondary significance for us since in case the IE **ø* > Arm. *h* (h) match, the Armenian *h* (h) is most apparently a later addition while the transition IE **k^h* > Arm. *h* (h) is a non-standard phonetic phenomenon that can be well observed in the history of the Armenian language as an independent language.

Ներկայացվել է 10.02.2022

Գրախոսվել է 22.02.2022

Ընդունվել է տպագրության 29.03.2022

Վարդան Պետրոսյան – ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ (vz.petrosyan@mail.ru)

**«ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ»-Ի ԳՐԱԲԱՐՅԱՆ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Բանալի բառեր – Հովհաննես Դրասխանակերտցի, նախամիջին շրջանի գրաբար, դարձվածային միավորներ, իմաստաբանություն, իմաստային դաշտեր, մարմնամասեր, գեղը և ռազմական գործ, միտք, լեզվամտածողություն

Հովհաննես Դրասխանակերտցին հայոց հոգևոր դասի նշանավոր գործիչներից է, կաթողիկոս, կենտրոնաձիգ պետության գաղափարախոս, քաղաքական գործիչ և դիվանագետ, եկեղեցու պատմության ժամանակագիր ու պատմագիր: Նրա կենսագրության ստույգ թվագրությունը վկայված չէ մեզ հասանելի սկզբնաղբյուրներում: Ծնվել է 845-850 թվականների միջակայքում Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Դրասխանակերտ հնագույն ավանում, որը Սովսես Խորենացին անվանում է «մեծ դաստակերտ», ավանի ճշգրիտ տեղը հայտնի չէ, Եղիշեի վկայությամբ այն եղել է արքունի ձմեռանոց, կառուցվել մ. թ. ա. II դարում Արտաշես արքայի օրոք: Դրասխանակերտի տեղակայման հիմնական վարկածները երկուսն են՝ Դվինի և Արտաշատի մերձակայքում կամ Արագածոտն գավառում՝ Օշականի և Աշտարակի միջև¹:

Հովհաննես Դրասխանակերտցին հոգևոր կրթությունը և օժությունը ստացել է Սևանա վանքում իրեն նախորդող Մաշտոց կաթողիկոսի ուսուցչությամբ, որի մասին հպարտության ու գնահատանքի հուշեր է գրել երախտապարտ աշակերտի պատկառանքով²: «Հայոց պատմութիւնը» նա գրել է կյանքի մայրամուտին՝ իր ձևակերպմամբ այն ժամանակ, երբ «ծերութիւն ցավագին մահ առ դուրս պատրաստ ունի»³: Նրա պատմությունն ունի հավակնոտ ընդգրկում՝ Նոյ նահապետի ժամանակներից, մեծ ջրհեղեղից մինչև իր ապրած օրերը՝ 925 թ.: Հայոց ոսկեդարի մատենագիրների գործերին խոհափիլիսոփա և միաժամանակ խրատաբան կաթողիկոսը քաջատեղյակ է

¹ Տե՛ս **Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ.**, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2. Երևան, 1988, էջ 1190:

² Տե՛ս Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցույ պատմութիւն Հայոց, Երևան, 1996, էջ 186-187: Սույն հրատարակությունն ընդգրկում է Հովհաննես Դրասխանակերտցու գրքի թե՛ գրաբար բնագիրը և թե՛ աշխարհաբար թարգմանությունը. **Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի**, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Գ. Բ. Թոսունյանի, Երևան, 1996 (մենք կհենվենք գրաբար բնագրի վրա):

³ Նույն տեղում, էջ 6:

եղել, բայց իր կառուցվածքով և շարադրանքի ոճով, կերպարների ամբողջությամբ, դիպաշարով Հովհաննես Դրասխանակերտցու պատմությունը էապես տարբերվում է մինչ այդ գրված երկերից: Պատմագրությունը նրա ձևակերպմամբ «բանապաճույճ ու մտացածին» վեպ չէր, այլ «ստուգագետ, կենցաղօգուտ» գրվածք, որն ապահովում է հոգու մտածողությունն ու շարժումը:

Հովհաննես Դրասխանակերտցին ապրել և գործել է Հայաստանի վրա արաբական հարձակումների ու նվաճումների ծանր ժամանակաշրջանում՝ դառնալով ականատեսն ու մասնակիցը, այնուհետև ճշմարտապատում վավերագրողը արաբական տիրապետության դեմ ծավալված հայոց ազատագրական պայքարի: Հովհաննես կաթողիկոսը վերլուծական մտքի տեր պատմիչ էր, որը գիտակցում էր արաբ տիրակալների «բաժանիր, որ տիրես» կործանարար սկզբունքի հետևանքները, բացահայտում ուստիկան Յուսուֆի նենգ մարտավարությունը: Սմբատ Առաջինի (890-913/914) ուժը կոտրելու համար Յուսուֆը թագադրում է Գագիկ Արծրունուն, այնուհետև՝ Աշոտ Սպարապետին, նման խորամանկ քայլերի շնորհիվ հայ նախարարներին խամաճիկների պես թշնամացնում է, լարում միմյանց դեմ՝ օգտվելով ներքին հակասություններից:

Այս պատմությունը գեղարվեստական և կրթադաստիարակչական լուրջ ուղերձներ պարունակող երկ է, որոնց բացահայտումը ցայսօր արդիական է: Հովհաննես Դրասխանակերտցին, հոգևոր առաջնորդ լինելով, հասկանում էր, որ միմիայն միասնական պետականությունը կարող է փրկել հայ ժողովրդին և հայ եկեղեցուն այլադավան օտար զավթիչներ խորտակիչ ուժից: Հոգեբանական վերլուծությունը, միջանձնային հարաբերությունների սթափ գիտակցումը ստիպում էին պատմիչին դառը խոսքեր գրել հայ նախարարական տոհմերի երկպառակությունների և ներքին խժոժությունների հետևանքների մասին: Հենց այդ հիմնական պատճառներով էին հայոց արքաները օտարի կամակատարներ դառնում, թշնամուն հանձնվում՝ որպես թշվառ պատանդ. «Բսկ արքայն ոչ տեսեալ զհարթայարմար միաբանութիւն նախարարացն ընդ ինքեան՝ եւ ոչ այլ ինչ իրին ելի աղագս գտեալ, այլ ակամայ կամօք՝ ի կամս նորա դառնայր՝ տալով զԱշոտ որդի իւր եւ զՍմբատ եղբորորդի իւր՝ ի պայման պատանդաց, այլեւ զդուստր Շապիոյ կրտսեր եղբօր իւրոյ՝ ի կնութիւն նմա»¹:

Պատմագիտական մեծ արժեքի հետ մեկտեղ Հովհաննես Դրասխանակերտցու պատմությունն ունի ինքնատիպ կառուցվածք, փաստական նյութի հուզական, բարոյախրատական մատուցման ձև և լեզվական հարուստ

¹ Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցոյ պատմութիւն Հայոց, էջ 184-185: (Բսկ արքան, չտեսնելով նախարարների հարթ ու հարմար միաբանությունն իր հետ, այլ ելք չի գտնում, հանգամանքներից ելնելով, իր կամքին հակառակ՝ ենթարկվում նրա կամքին՝ իր որդի Աշոտին, իր եղբորորդի Սմբատին որպես պատանդ տալով նրան, ինչպես նաև նրան կնության տալով իր կրտսեր եղբոր Շապուհի դստերը):

որակ՝ բառապաշար, քերականական ու շարահյուսական յուրօրինակ կաղապարներ: Պատմիչն իր երկասիրությունը ավանդական սկզբունքով չի բաժանում գլուխների կամ գրքերի, այլ պատմությունը սկսում է առաջաբանով («Յառաջաբան պատմութեան»), որից հետո անցնում բուն շարադրանքին և գործն ավարտում վերջաբանով («Բան ինքնուրոյն. Սակս յիշատակի անուան իւրոց»):

«Պատմութիւն Հայոց»-ի լեզուն գրաբարն է, բայց Հովհաննէս Դրասխանակերտցու ապրած ժամանակաշրջանը համընկնում էր մեր հին գրական լեզվի անկման ժամանակաշրջանին, երբ ժողովրդախոսակցական լեզուն խորացող բարբառային տարբերությունների և նվաճողների ու դրացի ժողովուրդների լեզուների ազդեցությամբ արդեն նոր որակներ էր ձեռք բերել: Ըստ ակադեմիկոս Գ. Ջահուկյանի հայոց լեզվի պատմության գիտական շրջանաբաժանման՝ IX-X դարերը գրաբարի վերջին՝ նախամիջին ենթաշրջանին են պատկանում, այն է՝ երկու գրական հայերենների կապող օղակն են՝ հին և միջին¹:

IX-X դարերի ժողովրդախոսակցական լեզուն էապես տարբերվում է դասական ու հետդասական գրաբարից, թեպետ Հովհաննէս Դրասխանակերտցին հետևողականորեն ձգտում էր իր պատմությունը գրել ոսկեղենիկ մայրենիի բառապաշարով և քերականական ու շարահյուսական կանոններով, բայց ժամանակի խոսակցական լեզվի ազդեցությունն արդեն զգալի էր: Այս պատմության լեզուն բարդ չէ, սակայն Հովհաննէս Դրասխանակերտցին իր կրթության և խառնվածքի բերումով նախընտրում է երկարաբան կառույցներ, նկարագրությունների ընթացքում սիրում է ամեն մանրամասն առանձին նկարագրել՝ որոշիչների և ձևի պարագաների բազմակի կուտակումներով: Պատմական գործիչների կերպարներ ստեղծելիս նա չոր ժամանակագրից անմիջապես վերածվում է պատկերաստեղծ վիպասանի, համեմատությունները, այլաբանությունները, բարոյախրատական դատողությունները մեծ տեղ են գրավում նրա պատմության շարադրանքում: Հովհաննէս կաթողիկոսը իրադարձությունների պարզ արձանագրող չէ, նա յուրաքանչյուր ազդեցիկ գործչի կամ իրադարձության, լինի դա բնական աղետ երկրաշարժը թե հազարացիների կողմից հավատափոխության, ուրացումի կամ պատժի ահազարհուր տեսարանը, իր գնահատականն է տալիս, քննադատաբար վերլուծում արքաների ու նախարարների արարքները, դեպքերի զարգացման պատճառահետևանքային կապը:

Մատենագիրը խոսքի վարպետ է, Հայոց պատմության բովանդակության հարստությունը նա փորձել է արտահայտել լեզվական հարուստ ձևերի միջոցով՝ ճոխ բառապաշար, քերականություն, դարձվածքների առատու-

¹ Տե՛ս Գ. Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 26:

թյուն: Այս հողվածում վերլուծել ենք նրա կիրառած դարձվածային միավորները՝ ըստ իրենց գերադաս անդամի իմաստաբանության՝ բացահայտելու դարձվածային միավորների տեղը և դերը IX-X դարերի գրաբարի պատմագրական բառապաշարում: Դարձվածքներն արտահայտում են հայ ժողովրդի լեզվամտածողությունը, մեր հին լեզվի բառակապակցական և բառաստեղծման հիմնական եղանակները: Դրանց բովանդակային քննության շնորհիվ մենք կարող ենք վերականգնել կարևոր տեղեկություններ վաղնջական ու հին դարերի վարքուբարքի, սովորությունների, բարոյական արժեքների, հարևան պետությունների ու ժողովուրդների հետ շփումների, նրանց լեզուների մեզ վրա ունեցած ազդեցության վերաբերյալ: Ինչպես նշեցինք, Հովհաննես կաթողիկոսի ոճը պերճաբան է, նա հաճախ է օգտագործում դարձվածային հոմանիշներ, հականիշներ, շատ դարձվածքներ կիրառում է մի քանի իմաստներով:

Լեզվաբանության մեջ ընդունված է դարձվածքների գերադաս անդամների բառային նշանակության միջոցով առանձնացնել այն իմաստային դաշտերը, որոնց միավորներն ավելի հաճախ են դարձվածքներ ստեղծում, այն է՝ ունեն դարձվածաստեղծ ներուժ: Ըստ իմաստային դաշտերի դասակարգման՝ ավելի դյուրին է բնորոշել լեզվակիր հանրության աշխարհընկալման առաջնահերթությունները, որոնք ժամանակի հետ փոփոխվում են:

Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց» աշխատությունից առանձնացված դարձվածքների իմաստաբանական դասակարգումը հստակ օրինաչափություններ է բացահայտում: Երկում ակնհայտ գերակայում են մարմնամասերից բաղադրված ԴՄ-ները, որոնց հաջորդում են միտք, գիտելիք և խոսք նշանակող բառերից կազմված կառույցները, երրորդ տեղում զենք և ռազմական գործ նշանակող բառերից կազմված դարձվածքներն են: Տվյալ վիճակագրությունը ուղղակիորեն պայմանավորված է փոխկապակցված հանգամանքներով. ա) Հովհաննես Դրասխանակերտցու ապրած ժամանակաշրջանով՝ պատերազմներ, պայքար ազգային, կրոնական ինքնության պահպանման համար, ներքին ու արտաքին դավեր, պառակտումներ և բ) երկի բովանդակությամբ ու հեղինակի նպատակադրմամբ՝ կաթողիկոսը փորձում է ժամանակակիցներին և գալիք սերունդներին ապացուցել, որ ազգի ու տերության միասնությունը բացարձակ արժեք է, որին պետք է ստորադասել անձնական փառասիրությունը, չհավատալ թշնամու քաղցրախոսությանը և թվացյալ բարյացակամությանը: Հայոց պատմությունը հրի ու սրի պատմություն է եղել, կենաց ու մահու պատերազմների ժամանակագրություն, որի ընթացքում մեր ժողովուրդը արքաների ու նախարարների, կաթողիկոսների առաջնորդությամբ պայքարել է իր կյանքի իրավունքի համար, իսկ խաղաղության կարճատև պահերին շենացրել իր երկիրը, գրել ու ծաղկել գրքեր, կառուցել շեներ ու ոստաններ, վանքեր ու ամրոցներ:

1. Մարմնամասեր նշանակող բառերից ստեղծված ԴՄ-ներ

Մարմնամասեր նշանակող բառերը բոլոր լեզուներում աչքի են ընկնում բազմազան դարձվածքներ կազմելու ունակությամբ, և դա ինքնին բացատրելի է, քանի որ մարդու աշխարհընկալման հիմքում իր մարմինն է, նրա գործառնությունների ճանաչումը: Գ. Ջահուկյանը մարմնի մասերի անվանումները համարում է կենդանական աշխարհի հետ կապված գոյական անունների ենթախումբ, որտեղ «ամբողջի և մասին այս հակադրությունը ընդհանրացած ձևով արտահայտում են **մարմին** և **անդամ** արմատական բառերը, ընդ որում սրանցից առաջինն ունի նաև ավելի լայն գործածություն՝ նշանակելով տարածական ամեն մի գոյակ»¹: Նման բովանդակության բառերից կազմված կառույցները մեծ կիրառություն ունեն թե՛ ժողովրդախոսակցական լեզվում, որտեղ ծնվում և ձևավորվում են, թե՛ գրական լեզվում, որտեղ մուտք են գործում, հղկվում և ամրակայվում: Այն է՝ նման գերադաս անդամ ունեցող ԴՄ-ները կարող են թե՛ ժողովրդախոսակցական, պարզ ուճին պատկանել, թե՛ վերամբարձ, գրքային:

Հովհաննես Դրասխանակերտցու պատմության լեզվում այս իմաստային դաշտի միավորներից կազմված դարձվածքները բազմաթիվ են և բազմաբովանդակ: Մարմնամասեր նշանակող բառերից «Պատմութիւն հայոց»-ի մեջ հանդիպում են *ատամն, արիւն, ակն/աչք, բերան, գլուխ, երես, կրունկ, ծնօտ, լեզու, ձեռն, մարմին, սիրտ, ունկն-ականջք* բառերից կազմված տարբեր դարձվածքներ, որոնց զգալի մասը վկայված չէ Ռուբեն Ղազարյանի «Գրաբարի դարձվածաբանական բառարանում»²:

Բերենք առավել գործածական և Հովհաննես Դրասխանակերտցու լեզվին բնորոշ կառույցների օրինակներ՝ **լուծանել սիրտ** (238) - սիրտը թուլանալ, վախենալ, **գսիրտ կակղել** (170) - խղճահարվել, սիրտը փափկել, **լքանել սիրտ** (238) - սրտակոտոր լինել, ահաբեկվել, **սիրտ ճմլել** (188) - խղճահարվել, **կրճտել զատամունս** (240) - զայրանալ, ցասմամբ լցվել, **անդամ ծածուկ** (240) - սեռական անդամ, **ձեռս ի գլուխ ելանել** (356) - գլխին տալ, փռմանել, **նուաճել/ կարգել ընդ ձեռամբ** (28) - ձեռքը զցել, նվաճել, **գրոամբ ածել** (20) - ձեռք զցել, տիրանալ, **առ ոտն հարկանել** (290) - ոտնահարել, անտեսել, **յականջս հասուցանել** (34) - ականջին հասցնել, տեղեկացնել, **յական թօթափել** (110) - աչքից աննկատ մնալ, վրիպել - աչքին երևալ, **գաչս հարկանել** (186) - աչք նետել, զննել, **ակն ունել** (220) - աչք ունենալ, հուսալ, **ընդ ակամբ հայել** (176) - ծուռ աչքով նայել, **ընդ կրունկն դառնալ** (100) - փախչել, նահանջել, **ստանալ ձեռն** (218) - ձեռք բերել, **լեզու կրել** (78) - լեզու ունենալ, խոսքով գործել, **լեզուս ածել** (150) - չարախոսել, բամբասել, **ի գլուխ ելանել** (186) - գլուխ գալ, հաջողել, **ձեռս ի գլուխ ելանել** (356) - գլխին տալ,

¹ **Ջահուկյան Գ. Բ.**, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, 1989, էջ 138:

² **Ղազարեան Ռ. Ս.**, Գրաբարի դարձուածաբանական բառարան, Երևան, 2012:

փոշմանել, **ձեռնատուր լինել** (102) - անձնատուր լինել, **ձեռնթափ լինել** - (164) թևաթափ լինել, **ձեռս լքանել** (290) - վհատվել, թևաթափ լինել, **ի գլուխ ելանել** (186) - ավարտել, գլուխ բերել, **ծագել ի սիրտս սիրով** (364) - սիրով համակել, սիրով ջերմացնել, **սրտի ընկալնուլ** (140) - սրտով զգալ և այլն:

Մարմնական կամ սոմատիկ դարձվածքներից առանձնացնենք երկու գեղեցիկ պատկերավոր փոխաբերություն **բառնալ նինջ արտեւանաց** (218) – քունն աչքերից կտրվել, որ հեղինակի խմբագրմամբ դարձել է «քունը թարթիչներից վերանալ» և **մորուքն ի ծնօտսն տիգել** (254) – հասունանալ, տղամարդ դառնալ, վերջին դարձվածքում առնականության առաջին ցուցիչն է գերադաս անդամը՝ աղվամագի կոպտանալը և ծնտոր տեգերի պես ծակել-ծածկելը:

Ունենք և՛ Նոր կտակարանի հայտնի ասույթներից ծնված դարձվածք՝ **կուրացեալ գերանով մեղաց ոչ նշմարել շիղ յական եղբոր** (186) - ծանր մեղքերից կուրացած՝ եղբոր, մերձավորի աննշան թերությունը չտեսնել: Այս կապակցությունը հեղինակի նորաբանությունն է: Եթե ավետարանիչը կեղծավորին ամբաստանում է՝ սեփական աչքի գերանը անտեսելով, եղբոր աչքի շյուղը նկատելու համար միայն, ապա Հովհաննես Դրասխանակերտցին մեղքերի գերանը համարում է ինքնաքննադատության և հեռատեսության կորստի աղետաբեր պատճառ: Ըստ այդմ՝ դարձվածի հեղինակային կիրառությունը խոր վերափնաստավորված է. պետք է ոչ միայն սեփական աչքի գերանը տեսնել, որը գործած մեղքերի արդյունքն է, այլ նաև եղբոր աչքի շյուղը, միայն այդ կերպ քո գործունեությունն արդյունավետ կլինի, հակառակ դեպում հեգ, անարժան թշվառական ես: Այս փոխաբերությունը Հովհաննես Դրասխանակերտցին կիրառել է հենց իր անձի նկատմամբ. միջնադարում ընդունված ինքնադատափետման խարազանող միտումը ստիպում է կաթողիկոսին ինքն իրեն մեղադրել տեղի ունեցած ողբերգական անցքերի համար, մեղքերից կուրացել է, չնայած բարձր կրթությանը, սրբագույն ուսուցչի դասերին, անուշադիր է եղել ոչ միայն իր, այլև եղբայրակիցների սխալների հանդեպ, չի ընդդիմացել նրանց. «Ձկնի ապա հեքս ես եւ թշուառականս եւ պասքեալս ընդ հոգետոր արբուցման խրատու Յովհաննէս, որ զսոյն զայս գրեցի գիրս՝ ոչ ըստ արժանաց ածայ յաթոռ սրբութեան, թերեւս ոչ կարացեալ դիմակ գոլ հրամանի արքային կամ այլոց եւս նախարարակոյտ բազմութեանն: Զի թեպէտ եւ յաշակերտութենէ առն սրբոյն Մաշտոցի ի մանկութենէ իմմէ, այլեւ ազգակից հարգատութեան նորա ըստ մարմնոյ, սակայն *կուրացեալ գերանով մեղաց իմոց՝ ոչ* բաւական զանձն վարկայ դնել ի *նշմարել զշիղ յական եղբորն...*»¹: Այս նորակազմ մեկ

¹ Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցոյ պատմութիւն Հայոց, էջ 186: (Այնուհետև ես՝ իւեղճս, թշվառականս, հոգևոր արբեցման խրատին ծարավ Հովհաննէսս, որ գրեցի սույն գիրքը, ոչ թե արժանիքներիս համար բերվեցի սուրբ աթոռին, այլ թերևս չկարողացա հակառակվել արքայի կամ նախարարների բազմության հրամանին: Թեև իմ

դարձվածի կիրառության վերլուծությունն արդեն բացահայտում է նրա խառնվածքը՝ պատասխանատվության բարձր աստիճանը, մեղքն իր մեջ փնտրել, ոչ թե իրադարձությունների ընթացքի կամ այլ գործող անձանց կատարած քայլերի մեջ:

2. Միտք, գիտելիք և խոսք նշանակող բառերից կազմված ԴՄ-ներ

Խոհափիլիսոփայական և հոգեբանական ընդհանրացումներ սիրող Հովհաննես Դրասխանակերտցին իր պատմության մեջ մեծ տեղ է հատկացնում միտք, գիտելիք և խոսք նշանակող բառերից կազմված ԴՄ-ներին: Հայ մատենագրության մեջ կրթության և գիտելիքի դերը միշտ ընդգծված է եղել: Ինչպես բնութագրում է Գ. Ջահուկյանը, այս իմաստային դաշտը կազմում են մարդու նշանային գործունեության, նրա զգայությունների ու ընկալման, իմացության հետ կապված գոյականները. «Գիտելիքների ու փորձի փոխանցման, մի սերնդի ձեռք բերածը մյուսին հաղորդելու անհրաժեշտությունը ստեղծում է հասարակության մեջ ուսման և կրթության բնագավառը՝ սովորեցնողներով և սովորողներով, սովորելու միջոցներով, եղանակներով ու հատուկ կառույցներով»¹:

Պատմելով հայոց մեծերի վարքը՝ մատենագիրը հատուկ շեշտադրում է նրանց գիտելիքների խորությունը, բանավիճային շնորհը, իմաստասիրությունը կամ դրանց պակասը, հագարացի ոստիկանների քաղաքականության մտածված լինելը, հայ նախարարների անխոհեմությունը, որը անդառնալի կորուստների պատճառ է դառնում: Նա իր պատմության մեջ բազմաթիվ դարձվածքներ է կիրառում, որտեղ *միտք* և *խորհուրդ*, *բան*, *խրատ* բառերը գործուն կիրառվում են որպես դարձվածաստեղծ միավորներ: Բերենք բնութագրիչ օրինակներ՝ **ի միտս զետեղել** (208) - մտքում ունենալ, մտապահել, **ի միտս** վառել (254) - մտքում բորբոքվել, **ի մտի դնել** (254) - մտադրվել, **տալ տեղի բանիցն** (190) - համաձայնել, համոզվել, **խրատու կշտամբել** (68) - խրատելով մեղմ հանդիմանել, **ի մտի առնուլ** (218) - մտադրվել, **խորհուրդս խոր թևակոխել** (366) - մտածմունքների մեջ սուզվել, մտասույզ լինել, **դեզերիլ ի բանս** (140) - զբաղվել ինչ-որ գործով, **կարծիս ի մտի դնել** (360) - կարծել, **ջան ի մտի դնել** - (358) սրտով և մտքով ջանալ, **հանգուցանել խորհրդով սրտիս** (364) - մտքերով ու սրտով զբաղվել, **ածել միամտութիւն** (174) - հավատարմություն հայտնել, **ի միտս բերել** (364) - մտաբերել, հիշել, **կամակար մտօք հաստատել** (78) - ինքնակամ վճիռ

մանկությունից աշակերտել եմ այդ սուրբ մարդուն՝ Մաշտոցին, որի հետ մարմնական ազգակցություն և հարազատություն կա: Սակայն իմ մեղքերի գերանով կուրացած՝ չկարողացա որոշում կայացնել՝ նշմարելու եղբոր աչքի շյուղը:

¹ **Ջահուկյան Գ. Բ.**, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, էջ 151-152:

կայացնել, **շոգմոզել շողմութեամբ բանիւ** (254) – բամբասել շողում խոսքերով, կեղծավորաբար և այլն:

Մտավոր դարձվածների շարքում վկայված են նորագյուտ գեղեցիկ կառույցներ, որտեղ բառերի առաջնային իմաստների տեղաշարժեր կան՝ **մերկանալ մաքուր մտօք** (364) – մաքուր մտքերով հեռու վանել, հրաժարվել, **արտաքոյ բանից թողուլ** (8) – խոսքից դուրս թողնել, չհիշատակել, անտես առնել, **ի միտս վառել** (254) – մտքում ոգևորվել, խանդավառվել:

3. Չենք և ռազմական գործ նշանակող բառերից կազմված ԴՄ-ներ

Գ. Ջահուկյանը ռազմական գործի, կռվի ու պատերազմի հետ կապված բառերը բնորոշելիս նշում է. «Այս բառերը ցույց են տալիս պատերազմողների կարգավորված հավաքական խմբեր ու քանակական ամբողջություններ, հարձակվելու ու պաշտպանվելու միջոցներ, պատերազմողների գործառական խմբեր»¹: Վերլուծենք զենքի և պատերազմի իմաստային դաշտին պատկանող բառերից կազմված դարձվածքների ամենատարածված կաղապարները մեր քննության առարկա երկում: Այստեղ գերադաս անդամը սառը զենք նշանակող բառերն են, որոնք իրենց կիրառական ներուժը պահպանել են ցայսօր: Խոր հնադարից մինչև այժմ սառը զենքի տեսակները գրեթե չեն փոխվել, դրանք լայն տարածում ունեն ինչպես հին, այնպես էլ արդի 4-րդ կամ 5-րդ սերնդի պատերազմներում, որովհետև մերձամարտը շարունակում է մնալ արևի տակ կենսական նորանոր տարածքներ նվաճելու կամ բաժին ընկածը պահպանելու համար մահու և կենաց կռիվ մղող մարդկության պայքարի հիմնական եղանակներից մեկը: Մարդկության ցանկացած հայտնագործում, անկախ իր կործանարար հետևանքներից, լեզվի բառապաշարի հարստացման գործուն սկզբնաղբյուր է: Ընդ որում զինատեսակներ նշանակող բառերը դարձվածային միավորներ են կազմում ինչպես ուղիղ, այնպես էլ փոխաբերական իմաստներով, որտեղ հիմնայինը մահվան գաղափարն է: Այս խմբին պատկանող դարձվածքների առյուծի բաժինը «սուր» և «զենք», «հուր» գլխաբառերով դարձվածքներն են, այնուհետև դարձվածաստեղծ ներուժ առանձնանում են «պատերազմ», «մարտ» և «նետ» գոյականները: Նշենք, որ իմաստային այս դաշտի դարձվածքներում *սուր* բաղադրիչը ունի կայուն զուգորդություններ *հուր* և *զերություն* բառերի հետ, սուրը պատերազմի խորհրդանիշն էր, այն բարձրացնելը մարտի նշան, իջեցնելը հանձնվելու կամ հրադադարի, իսկ *հուր*-ը, *հրդեհ*-ը կործանիչ պատերազմի և նվաճման բաղկացուցիչները: Հովհաննես Դրասխանակերտցու երկում երկու տասնյակից ավելի պատերազմի և մահվան իրողություններ արտահայտող դարձվածքներ են վկայված, ընդ որում դրանք միմյանց հետ հոմանշային հարաբերությունների մեջ են, պատմիչը դրանք զուգորդում է իր

¹ **Ջահուկյան Գ. Բ.**, նշվ. աշխ., էջ 149:

խոսքին պատկերավորություն հաղորդելու և հատկապես կրկնաբանություններից խուսափելու համար: *Սուր* կամ *արիւն* բաղադրիչով դարձվածները իրենց կիրառականությունը պահպանել են նաև արդի հայերենում:

Բերենք ռազմի և պատերազմի իմաստային դաշտին վերաբերող բառերից կազմված ամենագործածական դարձվածքների օրինակներ՝ նշելով դրանց բացատրությունը՝ **սուր յագդեր ունել** (92) - սուրը ձեռքին լինել, սպանելու պատրաստ լինել, **տալ կերակուր սրոյն** (254) - սրի մատնել, **սրոյ ճարակ տալ** - (354) սրի քաշել, **մարտիւ պատերազմի սրակոյա առնել** (354) - պատերազմելով սրահարել, **դիմել ի սուրն** (254) - կռվի բռնվել, **ունել զգործ պատերազմի** (76) - պատերազմ սկսել, հրահրել, **տնակոտորութիւն և հրացանութիւնս զեղել** (164) - ավերում և հրդեհներ սփռել, **հրդեհակեզ լինել** (100) - հրդեհից մոխրանալ, **մարտ հարկանել** (308) - մարտի բռնվել, **մենամարտիկ(ս) լինել կամ ելանել** (312) - մենամարտի ելնել, **նետաձիգ առնել** (174) - նետահարել, նետով խոցել, **սրոյ ճարակ տալ** (354) - կոտորել, արմատքի ոչնչացնել, **ի զէն զինուորութեան վառել** (254) - զինվորագրվել, **մարտիւ պատերազմի սրակոյա առնել** (354) - կռվի դաշտում սրախողխող անել և այլն:

Անդրադառնանք նաև ֆիզիկական գործողություններ և լինելություն արտահայտող բայերից կազմված դարձվածքներին, որոնք բացահայտում են այս իմաստային դաշտի գրաբարյան բայերի փոխաբերական կապակցություններ ստեղծելու գրեթե անսահմանափակ կարողությունը: **Առնել, առնուլ, արկանել, բերել, թողուլ, ըմպել, մատնել, տալ, լինել/իմ, գոլ** և համանման այլ բայերը ստեղծում էին ոչ միայն մեծաթիվ բայական հարադրություններ, այլև դարձվածքներ՝ ձեռք բերելով փոխաբերական իմաստներ: Դրանց մի մասը ընդհանրական, մասամբ նաև թարգմանական դարձվածքներ են, ինչպես օրինակ՝ **բաժակ պատուհասի ըմպել** (168) - դառնության բաժակը ըմպել, **հանգչել ի Քրիստոս** (186) - վախճանվել, **մահ առ դուրս պատրաստ ունել** (8) - մահվան շեմին լինել: Սակայն զգալի մասը զուտ հայկաբան կառույցներ են՝ **տալ զգիւտ կենաց հնար** (182) - փրկել, **դէտակն ունել** (332) - ակնդետ սպասել, ակնկալել, խորամուխ լինել, **դրժել ի մահ** (116) - մահվան դավ նյութել, **դուռն բացել** (74) - հուսադրել, **ի դիւի մատնել** (150) - զայրացնել, կատաղեցնել, **բերիլ ի կամս** (218) - հնազանդվել, **պէտսն վճարել** (186) - կարիքները հոգալ, **դիմակ գոլ** (186) - հակառակվել, դիմադրել, **ահ բարկութեան առնել** (168) - ահաբեկել, ահով պաշարել, **գրահետ վարել** (238) - անտեղի միջամտել, **շունչ թունից օձին առնել** (240) - թունավորվել, նենգությամբ համակվել, **դնել ուխտ ընդ մահու** (332) - պատրաստ լինել զոհաբերության, մեռնելու, **տնակոտորութիւն զեղել** (164) - հիմնահատակ ավերում սփռել, **հասանել ի կէտ վճարման** (92) - հասնել մահվան դուռ, կյանքի մայրամուտին և այլն: Նկատելի է, որ այս դարձվածներից շատերի բայական անդամի բովանդակությունը էապես ընդլայնված է նրանց բառարանային իմաստների հետ համեմատած:

Հավարտ նշենք, որ Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսի պատմության գեղարվեստականության, կրթադաստիարակչական ուժի կարևոր բաղադրիչներից են դարձվածային միավորները, որոնց մի մասը ստեղծել է հենց ինքը՝ իր պետության, ազգի և հավատքի ջերմեռանդ պաշտպանն ու գաղափարախոսը: Պատմության մեջ վկայված բազմաթիվ դարձվածների շնորհիվ մատենագրի խոսքը դառնում է առավել հասցեական, ազդու և հիշվող: Երկի աշխարհաբար թարգմանության հեղինակ Գ. Թոսունյանը շատ անգամ պահպանել է այդ դարձվածքները՝ որպես հեղինակի լեզվի անուրանալի յուրահատկություն:

Նարինե Դիլբարյան – «Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցոյ պատմութիւն Հայոց»-ի գրաբարյան դարձվածքների իմաստաբանությունը

Հովհաննես Կաթողիկոս Դրասխանակերտցին հայոց հոգևոր դասի նշանավոր գործիչներից է, կենտրոնաձիգ պետության գաղափարախոս, IX դարավերջի և X դարակզրի պատմիչ-մատենագիր: Նրա «Հայոց պատմությունը» գրված է գրաբարով, սակայն IX-X դարերը հին գրական հայերենի անկման ժամանակշրջանն էին, երբ բարբառային խորացող տարբերությունները, օտար նվաճողների և հարևան ժողովուրդների լեզվից կատարվող զգալի փոխառությունները պատճառ էին դառնում նոր գրական լեզվի՝ միջին հայերենի ձևավորման: Այս հողվածի քննության նյութը Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմության» դարձվածային միավորների իմաստաբանությունն է: Պատմիչի լեզուն պատկերավոր է, հարուստ տարբեր իմաստային դաշտերին պատկանող բառերից կազմված դարձվածքներով: Վերլուծությունը ցույց է տալիս, որ կիրառականությամբ առաջին ամենամեծ խումբը մարմնամասեր նշանակող բառերից բաղադրված դարձվածքներն են, երկրորդը՝ միտք, գիտելիք և խոսք նշանակող միավորներից կազմվածները, իսկ երրորդ տեղում ռազմի և զենքի իմաստային դաշտի միավորներից ստեղծված կառույցներն են: Հիշյալ իմաստային դաշտերի գերակայությունը պատահական չէ, քանի որ IX-X դարերը հայոց պատմության մեջ արաբական տիրապետության դեմ մղվող ազգային-ազատագրական պայքարի, ինքնուրույն պետականության վերականգնման բարդ ժամանակաշրջանն էին: Քննվող դարձվածքների բայական միավորները ֆիզիկական գործողություններ և լինելություն արտահայտող բայերն են:

Нарине Дилбарян – Семантика древнеармянских фразеологизмов «Истории Армении» католикоса Ованеса Драсханакертци

Ключевые слова – Ованес Драсханакертци, духовный лидер, летописец, среднеармянский язык, лексика, соматические фразеологизмы, мышление, знание, речь, военное дело, оружие

Католикос Ованес Драсханакертци – влиятельный армянский деятель, государственный, духовный лидер и летописец конца IX – начала X века. Его знаменитый труд «История Армении» написан на древнеармянском языке, однако это был период упадка древнего литературного языка, в недрах которого уже формировался новый среднеармянский язык под воздействием диалектов, новых заимствований из языков

завоевателей и соседних народов. В данной статье выявлена богатая семантика фразеологизмов книги «Истории Армении». Лексика Ованеса Драсханакертци богата фразеологизмами разных семантических полей, летописец обладал образным мышлением, художественным стилем. Анализ показал, что самая большая встречающаяся группа – это соматические фразеологизмы. На втором месте – фразеологизмы, образованные от слов, обозначающих мышление, знание и речь, на третьем месте – фразеологизмы, образованные от слов, обозначающих военное дело и оружие. Доминирование этих тематических групп не случайно, так как IX-X века для Армении были временем войн и национально-освободительной борьбы против арабского ига, периодом восстановления армянской государственности. Глагольными составляющими этих фразеологизмов являются глаголы, обозначающие физические действия и присутствие.

Narine Dilbaryan – *The Semantics of Old Armenian Phraseologisms in the “History of Armenia” by Hovhannes Catholicos Draskhanakertsy*

Key Words – Hovhannes Catholicos Draskhanakertsy, statesman, Armenian language, centuries, dialects, neighboring peoples, phraseological units, book, artistic style, military affairs, weapons

Hovhannes Catholicos Draskhanakertsy is an influential Armenian figure, statesman, spiritual leader and chronicler of the late IX and early X centuries. His well-known work “History of Armenia” was written in the ancient Armenian language, but it was a period of decline of the ancient literary language, in the depths of which a new Middle Armenian language was already being formed under the influence of dialects, new borrowings from the languages of the conquerors and neighboring peoples. This article reveals the rich semantics of phraseological units of the book “History of Armenia”. The vocabulary of Hovhannes Draskhanakertsy is rich in phraseological units of different semantic fields, the chronicler possessed figurative thinking, had an artistic style. The analysis shows that the largest group encountered is somatic phraseological units. In the second place are phraseological units formed from words denoting thinking, knowledge and speech, in the third place are military affairs and weapons. The dominance of these thematic groups is not accidental, since the IX-X centuries for Armenia were the time of wars and the national liberation struggle against the Arab conquerors, the restoration of Armenian statehood. The verb components of these phraseological units are verbs denoting physical actions and beingness.

Ներկայացվել է 13.03.2022

Գրախոսվել է 14.03. 2022

Ընդունվել է տպագրության 29.03.2022

Նարինե Դիլբարյան – ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի դոցենտ, քանասիրական գիտությունների թեկնածու (narine.dilbaryan@ysu.am)

**ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ «ՄԹՆՇԱՂԻ ԱՆՈՒՐՁՆԵՐ» ՇԱՐՔԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ
ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Բանալի բառեր – ստեղծագործական մշակում, տարբերակային քննություն, ոճական վերլուծություն, բառային խմբագրում, պատկերային խմբագրում, գեղարվեստական ճշտություն, լեզվաոճական փոփոխություն, փոխաբերության գորացում, սեղմություն, խոսքի մեղեդայնություն, գրական լեզվի տարբերի բանաստեղծականացում

Գրողի ստեղծագործական աշխատանքի լեզվաոճական քննությունը միջոց է բացահայտելու նրա գեղարվեստական մտածողության յուրահատկությունները, գեղարվեստական ճաշակի զարգացման, առհասարակ գրական հասունացման ընթացքը: Սույն հոդվածում փորձ է արվում ներկայացնելու Վահան Տերյանի ստեղծագործական ուղին նրա առաջին ժողովածուի՝ «Մթնշաղի անուրջներ»-ի ստեղծագործական պատմության հենքի վրա: Ուսումնասիրության սկզբնաղբյուրներ են հեղինակի ինքնագրերը, բանաստեղծությունների՝ մամուլում տպագրված տարբերակները, «Մթնշաղի անուրջներ»-ի առաջին և երկրորդ հրատարակությունները¹, ինչպես նաև Վ. Տերյանի՝ Վ. Պարտիզունու կազմած երկերի ժողովածուն², որտեղ տրվում են տեղեկություններ բնագրային տարբերակների, դրանցում կատարված հեղինակային խմբագրումների մասին: Արևելահայ քնարերգության մեջ բնագրային տարբերակներով և գեղարվեստական մշակումներով առանձնանում է Հ. Թումանյանը³, իսկ XX դարի արևմտահայ չափածոյում՝ Դ. Վարուժանը, Մ. Մեծարենցը, մասամբ նաև Ռ. Սևակը և Ինտրան⁴:

Վ. Պարտիզունին գրում է, որ «Մթնշաղի անուրջներ»-ը տպագրության պատրաստելիս Վ. Տերյանը խստագույն ընտրություն է կատարել: 1912 թ.

¹ Տե՛ս **Տերյան Վ.**, Մթնշաղի անուրջներ, Թիֆլիս, 1908, **Տերյան Վ.**, Բանաստեղծություններ, հ. 1, Մոսկվա, 1912: Նշյալ գրքերից բնագրային օրինակների կողքին կգրենք հապավումները՝ **ՄԱ, Բ**:

² Տե՛ս **Տերյան Վ.**, Երկերի ժողովածու երեք հատորով, հ. առաջին, կազմեց և ծանոթագրեց Վ. Պարտիզունի, Երևան, 1960:

³ Այս մասին տե՛ս **Ավետիսյան Զ.**, Թումանյանի ստեղծագործական լաբորատորիան, Երևան, 1973, **Մելքոնյան Ս.**, Հովհ. Թումանյանը և արևելահայ գեղարվեստական գրականության լեզուն, Երևան, 1986:

⁴ Տե՛ս **Ավետիսյան Յու.**, Արևմտահայ բանաստեղծների ստեղծագործական մշակումների լեզվաոճական վերլուծություններ, Երևան, 2012, էջ 4:

հրատարակության պատրաստելով «Բանաստեղծություններ»-ի առաջին հատորը՝ նա «Մթնշաղի անուրջներ»-ում, ինչպես և պարբերականներում 1908-1912 թթ. տպագրված բանաստեղծությունների մի մասը չի ընդգրկել այդ ժողովածուում¹:

Անդրադառնալով Վ. Տերյանի ստեղծագործական աշխատանքին՝ Վ. Պարտիզունին իրավացիորեն նկատել է. «Տերյանը արագ հասակ նետող բանաստեղծ է, այնքան արագ, որ անհավատալիության սահմաններն է շոշափում»²:

Տարբեր հրատարակություններում բանաստեղծի ձեռքով կատարված փոփոխությունները պարզում են նրա գեղարվեստական ըմբռնումները, բանաստեղծական մտածողության յուրահատկությունները, լեզվական ընդհանուր կողմնորոշումը:

«Մթնշաղի անուրջներ»-ի առաջին հրատարակության տարբերակը ընդգրկում էր 72 բանաստեղծություն. հետագայում այն գետեղելով «Բանաստեղծություններ»-ի առաջին հատորում՝ Վ. Տերյանը այդ շարքից հանել է վեց ոտանավոր՝ «Աղբյուր», «Արծաթ-կարկաչուն», «Սոնետ» (Կյանքին միշտ օտար, մահից վախեցող), «Ես սիրում եմ քո մեղավոր աչքերը խոր», «Երգ», «Արդյոք կապրե՞ս սիրտըս մաշող կարտը հեզ...»: Սրանք, ըստ երևույթին, չեն բավարարել պոետի գեղարվեստական պահանջները, շարքի ընդհանուր տրամադրությունները ճիշտ չեն արտահայտել կամ մյուս գործերի հետ ներքին աղերս չեն ունեցել: Փոխարենը ավելացրել է 11-ը՝ «Ապրելուց քաղցր է մեռնել քեզ համար», «Կանչում ես անվերջ», «Երբ վարդ ամպերի հրդեհն է դողում», «Արդյոք ու՞ր ես դու», «Միրահարվածը», «Անանուն սեր», «Իմ խաղաղ երեկոն է հիմա», «Հեռու ես անհաս, իմ լուսե երագ», «Հեռու երկրի լուսե հովտում», «Հին պարտիզում», «Դու շրջում ես ամենուրեք, դու չկաս»: Այսպիսով՝ գրողի կազմած շարքը բաղկացած է 77 բանաստեղծությունից³:

Վ. Տերյանը «Բանաստեղծություններ»-ի առաջին հատորի նախաբանում գրել է. «Գուցե ավելորդ չէ հիշատակել և այն, որ գրքիս առաջին մասում զետեղված բանաստեղծությունների այդ հրատարակության մեջ մտցրել եմ մի քանի աննշան ուղղումներ և ավելացրել եմ մի շարք նոր էջեր, որ այլ և այլ պատճառներով չէին մտել նախկին հրատարակության մեջ: Պետք է, սակայն, նշել, որ վերը հիշած ուղղումները ոչ մի էական փոփոխության չեն ենթարկել մի անգամ տպագրված բանաստեղծությունները՝ լոկ ազատելով դոցա մի քանի անախորժ ու անհարազատ կտորներից» (Բ, 6):

¹ Տե՛ս **Տերյան Վ.**, Երկերի ժողովածու երեք հատորով, հ. 1, էջ 287-288:

² **Պարտիզունի Վ.**, Վահան Տերյանի հետ, Երևան, 1989, էջ 289: Տերյանի ստեղծագործական աշխատանքի քննության մասին տե՛ս նաև **Իշխանյան Ռ.**, Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, Երևան, 1978, **Բախչինյան Ա.**, Վահան Տերյանի ստեղծագործական աշխատանքը (թեկնածուական ատենախոսություն), Երևան, 1996:

³ Տե՛ս **Տերյան Վ.**, Երկերի ժողովածու երեք հատորով, հ. 1, էջ 289:

Սակայն համեմատելով «Անուրջներ»-ի առաջին և երկրորդ հրատարակությունները՝ կարող ենք փաստել, որ Վ. Տերյանի նշած «աննշան» ուղղումները, ըստ էության, խմբագրումներ են, որոնց միջոցով գրողը որոնել և գտել է գեղարվեստորեն կատարյալը, ճշմարտացին, համոզիչը:

Տարատեսակ են հեղինակային խմբագրումները՝ իմաստային, պատկերային, քերականական, վերնագրային:

Գրողի ստեղծագործական աշխատանոցին ծանոթանալիս աչքի է զարնում երեք ընդհանուր փոփոխություն¹.

ա) «Բանաստեղծություններ»-ի առաջին հատորում գրողը հրաժարվել է նախորդ տարբերակներում անհարկի գործածված մեծատառերից: Բառերը (Հող, Սեր, Երկինք, Երկիր, Ցնորք, Հույս, Բախտ, Մահ...) գրվել են մեծատառով՝ անկախ նրանից անձնավորված են, թե՞ ոչ: Կարծում ենք՝ **սիմվոլիզմի** ազդեցությամբ պայմանավորված մոտեցում է սա, որից Վ. Տերյանը ձերբազատվել է ստեղծագործական մշակումների ընթացքում:

բ) Վ. Տերյանն ունեցել է հստակ կողմնորոշում իր չափածոյի լեզուն ընտրելիս, ուստի քիչ են գուտ լեզվական փոփոխությունները. նկատելի են **գրական լեզվի բյուրեղացում և բանաստեղծականացում**: Այս առումով տեղին է Ռ. Բշխանյանի հետևյալ դիտարկումը. ««Մթնշաղի անուրջները» հրատարակության պատրաստելիս, մանավանդ նրա լույս տեսնելուց հետո, Տերյանն արդեն լիովին կողմնորոշված էր և գիտեր՝ որն է իրենը, իր ներշնչանքին բնորոշ լեզուն, որը՝ խորթ: Առանձին վրիպումներ նա լիովին շտկեց «Անուրջների» նոր տարբերակը կազմելիս»²:

«Բանաստեղծություններ»-ի առաջին հատորում ամփոփված քերթվածները հնարավորինս գտված են **գրաբարյան, բարբառային-խոսակցական** բառերից և բառաձևերից՝ գրաբարից գրական, բարբառային-խոսակցականից գրական ուղղվածությամբ, ինչպես՝ **վերա => վրա, նորա => նրա, ծաղկունաց => ծաղիկների, ծաղկունք => ծաղիկներ, պաղ => ցուրտ, գանկ => սիրտ, խաս => անհաս** և այլն:

Հնացած ձևերի կիրառությունը, մեր կարծիքով, հյուսիսսփայլյան շրջանի գրական հայերենի ազդեցություն է, որից Վ. Տերյանը շատ արագ հրաժարվել է:

գ) «Բանաստեղծություններ»-ի առաջին հատորում բանաստեղծը մեծ մասամբ ձերբազատվել է բառերի միջև դրված ավելորդ գծիկներից՝ բառային հարադրությունները հիմնականում վերածելով լրացում-լրացյալ կապակցության՝ **հույս-փարոս => լույս փարոս, երագ-բախտ => անդարձ բախտ, կյանքը-կարոտ => կյանքը կարոտ, լույս-հորիզոն => լուսե օրբան, կարոտ-կսկիծ => կարոտի կսկիծ, անուրջ – խոսքեր => անուշ խոսքեր, լույս-հուշեր**

¹ Այսօրինակ ուղղումներին հետագա շարադրանքում այլևս չենք անդրադառնա:

² Բշխանյան Ռ., նշվ. աշխ., էջ 307:

=> **լույս հուշեր** և այլն: Այսօրինակ փոփոխությունների շնորհիվ տերյանական խոսքն առավել բնական գունավորում է ստացել:

«Անուրջներ»-ում իշխող տրամադրություն է տխրությունը: Գրողի տխրության հիմքը կենսասիրությունն է, ուստի նրա հոգու մորմոքն ու թախիծը պարուրված են մեղմ ու լուսե անուրջներով: Լուսավոր տենչերի որոնումը նոր հորիզոններ է բացում քնարական հերոսի առջև. շարքի ոտանավորների տարբերակային քննությունը պարզում է գրողի ընդգծված նպատակադիր վերաբերմունքը բառագործածության հարցում: Բազմաթիվ դեպքերում գրողը խմբագրումը կատարում է հոգուտ **լույս, լուսեղ, լուսեղեն** բառերի, ինչպես՝ «Չոգուս **երկնում** մթնշաղվա ծ» => «Չոգուս **լույսեր** մթնշաղվա ծ», «— Դու **պայծա՛ռ**, ես խավար եմ **շնչում**» => «Դու **լուսե՛ղ** ...Ինձ խավարն է **ճնշում**», «Այնպես մեղմ ես դու զգվում, դու **թովչական** ես այնպես» => «Այնպե՛ս մեղմ ես դու զգվում, դու **լուսեղեն** ես այնպես», «Մի **քնքույշ** երգ է իմ հոգում **մնջել**» => «Մի **լուսե** երգ է իմ հոգում **ննջել**»:

Վերջին օրինակը «Հիվանդ» բանաստեղծությունից է. Վ. Տերյանը հրաժարվել է սրա նախնական տարբերակից, որը եղել է անվերնագիր և «Անուրջներ»-ի համար գրել նորը՝ արդեն վերնագրված: Համեմատելով հիշյալ տեքստերը՝ նկատում ենք նախնական տարբերակի ոչ տերյանական շեշտերը, տեղ-տեղ պարզունակ լինելը, ինչը ցայտուն է ոտանավորի վերջին քառատողում.

Երգի՛ր ինձ համար, երգի՛ր ինձ համար,
Ինձ հեքիաթ ասա, անրջանք բեր ինձ,
Ցրիր քո երգով մոայլ ու համառ
Աշնան գիշերը իմ լքված սրտից:

Առաջին երկու չափազանց թույլ տողերը փոխարինվել են ավելի հաջողված պատկերով. «Քո պայծառ գահից անմրմունջ իջիր, Մազերդ փոիր դժգունած դեմքիս...» (ՄԱ):

Իմաստային անհարթություն է նկատվում վերջին երկու տողերում. անհաջող է «**մոայլ երգով լքված սրտից աշնան գիշերը ցրելու**» պատկերը, որի հաջորդ մշակումները ներկայացնում ենք ստորև.

Երկրորդ տարբերակ

Անուշ երագով սիրտս պաճուճիր,
Չեղածի հուշով ամոքիր հոգիս... (ՄԱ)

Երրորդ տարբերակ

Անուշ երագով սիրտըս պաճուճիր,
Ցնորք հուշերով ամոքիր հոգիս... (Բ)

Ցնորք հուշեր-ը համահունչ է բանաստեղծության ընդհանուր տրամադրությանը: Էականորեն փոխվել են նաև առաջին և երկրորդ տները. ակնբախ են հատկապես պատկերի ուժը մեծացնող ճշգրտումները: Ահա բանաստեղծության սկիզբը:

Նախնական տարբերակ

Անուշ անուրջով պաճուճիր հոգիս,
Նստիր մահճիս մոտ ու տխուր երգիր,
Մորս պես քնքաբար մոտեցիր դեմքիս,
Խաղաղ փայփայիր սիրտս տարագիր:

Մշակված տարբերակ

Քնքույշ երագով պաճուճիր հոգիս,
Նստիր մահճիս մոտ ու տխուր երգիր,
Մազերդ փոիր դժգունած դեմքիս,
Մեղմիվ փայփայիր սիրտըս տարագիր: (ՄԱ)

Ինչպես նկատելի է, հանվել է համեմատական պատկերը՝ սիրած կնոջ համեմատությունը մոր հետ, որով պոետը, կարծում ենք, իր համոզմունքն է ի ցույց դրել. մայրն՝ իբրև սուրբ տաճար, անգուցադրելի է: Նոր պատկերով քնարական հերոսի հույզերն անհրաժեշտ նրբերանգներով են արտահայտվում:

Նշված տարբերակների համեմատությունից ակնհայտ է դառնում, որ Վ. Տերյանը 1908 թ. արդեն մանրակրկիտ խմբագրում է իր գեղարվեստական պահանջները չբավարարող ամեն բառ ու տող: Կարելի է փաստել, որ «Անուրջներ» է մուտք գործել գեղարվեստական նոր որակի գործ: Բայց սա նույնպես չի գոհացրել բանաստեղծին, և նա ոճական նուրբ ճշգրտումներ է կատարել վերջնական տարբերակում: Զուգադրելով տեքստերը՝ նկատում ենք արդեն այնպիսի փոփոխություններ, որոնք նպատակ ունեն բանաստեղծական մտահղացումը գեղարվեստական ճշգրտությամբ արտահայտելու. «Մազերդ փոփր **դժգունած դեմքիս**» (ՄԱ) => «Մազերդ փոփր **հոգնատանց կրծքիս**» (Բ) (երրորդ և 10-րդ տողեր)¹, «Օտար դաշտերի **դանդաղ մշուշում**» (ՄԱ) => «Օտար դաշտերի **անանց մշուշում**» (Բ) (5), «Տխուր լռության **ծածկոցն է իջել**» (ՄԱ) => «Տըխուր լռության **գիշերն է իջել**» (Բ) (6), «Քո պայծառ գահից **անմրմունջ իջիր**» (ՄԱ) => «Քո պայծառ գահից **մեղմորեն իջիր**» (Բ) (9), «**Չեղածի հուշով** ամոքիր հոգիս» (ՄԱ) => «**Ցնորք հուշերով** ամոքիր հոգիս» (Բ) (12):

Ստեղծագործական որոնումների բարդ ուղի է անցել «**Չարտասանված տխուր խոսքեր**» սկսվածքով ոտանավորը: Գաղափարական հագեցվածությամբ, բովանդակային հարստությամբ այս բանաստեղծության վերջնական տարբերակը արմատապես տարբերվում է **ինքնագրից**²: Բայց նախ վերջինս համեմատենք «Անուրջներ»-ում տպագրվածի հետ: Ներկայացնենք երկրորդ քառատողերը:

Նախնական տարբերակ
Խորհրդավոր տխուր խոսքեր,
Մարդոց աչքից խորունկ թաղված
 Անջատման պես, տխուր ի խոսքեր
Կրծքիս բանտում միշտ շղթայված:

Մշակված տարբերակ
Խենթ հուզումի խելա ո խոսքեր,
Պաղ մարդոցից խորունկ թաղված:
 Անջատման պես, տխուր խոսքեր
Հոգուս երկնում մթնշաղված: (ՄԱ)

Գեղարվեստորեն անհամոզիչ է **խորհրդավոր խոսքերի՝ կրծքի բանտում մշտապես շղթայված** լինելու պատկերը, որը փոխարինվել է «**Հոգուս երկնում մթնշաղված**» չափազանց հաջող փոխաբերությամբ: Իսկ **պաղ մակդիրով** ընդգծվել է քնարական հերոսի և իրականության փոխհարաբերությունը:

Վերամշակելիս գրողը փոխել է քերթվածի երրորդ և չորրորդ տների տեղերը, և, ինչպես նկատելի է, հիմնականում փոխված է հենց այդ տների

¹ Փակագծերում նշվում է, թե որ տողերն են համեմատված:

² **Անուրջներ** Ո., ֆ. 19:

թե՛ իմաստային, թե՛ հուզագացական և թե՛ պատկերային հենքը: Երրորդ քառատողի վերջին երկու տողերը ոտանավորի հիմնական գաղափարն են ամբողջացնում ու շեշտադրում, ուստի և դա ավելի տպավորիչ ավարտ է դարձել բանաստեղծության համար «Անուրջներ»-ի տեքստում:

Դուք ապրում եք, սիրո խոսքեր
Որպես խայթը սև եղեռնի... (ՄԱ)

«Անուրջներ»-ի տարբերակը ոճարտահայտչական մասնակի տարբերություններ ունի վերջնական տարբերակից. այսպես՝ «Խենթ հուզումի խելա՛ն խոսքեր (ՄԱ) => «...անուշ խոսքեր» (Բ) (5), «Պաղ մարդոցից խորունկ թաղված (ՄԱ) => «...խորը պահված» (Բ) (6), «Հոգու երկնում մթնշաղվա՛ծ» (ՄԱ) => «Հոգու լույսեր մթնշաղվա՛ծ» (Բ) (8), «Չարտասանված սիրո խոսքեր» (ՄԱ) => «...տխուր խոսքեր» (Բ) (13), «Դուք չեք մեռել ու չեք մեռնի» (ՄԱ) => «Դուք չե՛ք մեռել, դուք չե՛ք մեռնի» (Բ) (14), «Դուք ապրում եք, սիրո խոսքեր» (ՄԱ) => «Դուք այրում եք, սիրո խոսքեր» (Բ) (15):

Սրանք քերթվածի վերջին հղկումներն են, որոնք հիմնականում խոսքի տեղյանական մեղմությունն ընգծելու, հուզական լիցքը ուժեղացնելու նպատակ ունեն:

Բազմաթիվ փոփոխություններ արվել են **շարքի ընդհանուր մեղմ տրամադրությունը շեշտելու** նպատակով, և պատկերներն ու բառերը մեծ մասամբ փոխվել են այն ուղղությամբ, որ ընդգծեն այդ նրբությունը: Չարմանալի մեղմությամբ գրողը հյուսում է իր օրերի մարդու հոգու պատմությունը, նրա երազների խորհրդավոր աշխարհը: Այսպես՝ «Տխրություն» բանաստեղծության մեջ կատարված փոփոխությունները ստեղծում են քնարական խոհի եթերային աշխարհ: «Մի **համբույր** անցավ, ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով» (ՄԱ) => «Մի **ըստվեր** անցավ ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով» (Բ) (2), «Կարծես թե սիրո **անուշ** խոսք ասաց ...» (ՄԱ) => «Կարծես թե սիրո **քնքուշ** խոսք ասաց...» (Բ) (6), «Եվ **ծաղկունանց** մեջ այդ **Անուրջ-կույսի** շշուկը մընաց» (ՄԱ) => «**Ծաղիկների** մեջ այդ **անուրջ կույսի** շշուկը մնաց» (Բ) (7):

Համբույր-ըստվեր ճշգրտմամբ (**ստվերը** ներդաշնակում է **ուրու, գունատ աղջիկ, անուրջ կույս** բառերին) մարդկային հոգեվիճակներից մեկի՝ տխրության խորհրդանշական պատկերն է թանձրանում:

Արձանագրենք, որ շարքում խմբագրումների մի ստվար մաս պայմանավորված է **սիմվոլիզմի** ազդեցությամբ: Ինչպես իրավացիորեն նկատել է Ռ. Իշխանյանը. ««Մթնշաղի անուրջներ» շարքը կարող է դիտվել խորհրդանշային բանաստեղծության առաջին լավագույն նմուշը հայ գրականության արևելյան հատվածում»¹:

Վ. Տերյանի սիմվոլիկ պատկերները ունեն մի յուրահատկություն. դրանց վրա դրոշմված են տեղյանական թախիժն ու տառապանքը: Բանաստեղծի

¹ Իշխանյան Ռ., նշվ. աշխ., էջ 363:

հոգու առեղծվածային աշխարհը փորձենք բացել «14 տող» (Արդյոք նորից երազնե՞րն են թափառում) վերտառությամբ քերթվածի երեք տարբերակների համեմատությամբ: Այս ոտանավորը «Աշնան սունետներից» վերնագրով առաջին անգամ տպագրվել է «Մուրճ» ամսագրում 1906 թ., ապա «Անուրջներ» մուտք գործել «Սունետ» և վերջապես «Բանաստեղծություններ»-ի առաջին հատոր՝ «14 տող» վերնագրով: Ստեղծագործական քայլերի ընթացքը ցույց է տալիս, որ գրողը վերջին տարբերակում հիմնովին փոխել է տեքստը: «Աշնան սունետներից» ոտանավորը պարզունակ է. կառուցված հարց ու պատասխանի ձևով, պատասխանները ժխտական են՝ ոչ բառով ձևավորված: Ահա առաջին քառատողը.

Արդյոք նորից երազնե՞րն են թափառում

Սիրո հույզե՞րն հեռվից ուրախ ինձ կանչում.

Ոչ, դա աշնան դժգույն տերևներն են թափվում,

Սարից իջնող վտակները կարկաչում:

Մշակելիս գրողը թե՛ այս և թե՛ մյուս տներում հրաժարվել է իր ոճը հասարակ դարձնող լեզվատարբերից՝ նախ ջնջելով ավելորդ բառերը՝ **ոչ, դա:** Խախտված է նաև 11 վանկանի չափը երրորդ տողում:

Երկրորդ տան երրորդ և չորրորդ տողերի նկարագրական արտահայտությունները փոխարինվել են առավել զգացական պատկերով:

Նախնական տարբերակ

- Ոչ, դա գիշերն է սիրաշունչ, տրամաշուք,
Դա երկիքն է՝ խորհրդավոր, երազուն ...

Երկրորդ տարբերակ

—Այն գիշերն է, այն հուշերն են տրամաշուք ...
Յուրտ աստղերն են ցուրտ երկնքում երազում:
(ՄԱ)

Վերոնշյալ օրինակի *երրորդ* տարբերակում միայն մեկ ճշտում կա. չորրորդ տողի սկզբի **ցուրտ**-ը փոխարինվել է **այն**-ով՝ անհարկի կրկնությունից խուսափելու և բանաստղերի երաժշտականությունը ուժեղացնելու համար:

Ամբողջությամբ փոխվել է նախնական տարբերակի վերջին հատվածը:

Ես ընկած եմ արձակ հովտում միայնակ,

Տարված չքնաղ երազներով ցիր ու ցան,

Ինձ թվում է, որ եկել ես հերարձակ

Գիշերի պես խորհրդավոր ու անձայն...

— Ոչ, դա աշնան մերկ ծառերն են շառաչում

Սարից իջնող վտակները կարկաչում

«Անուրջներ»-ի տեքստում պատմողական ոճը փոխարինվում է զգացական շեշտեր ու տերյանական գույներ ունեցող ոճով: Վերոնշյալ հատվածի երկրորդ տողը խմբագրվել է. «**Երազնե՛րբս, երազնե՛րբս, որ անցան**», երրորդ և չորրորդ տողերը՝ «**Արդյոք դու՛ ես գիշերի պես** հերարձակ, **Արդյոք դու՛ ես, խորհրդավոր դյուրթական ...**»:

Վերջին երկու տողերի փոփոխությամբ կենդանի գույներ է ստացել բնանկարը, առարկայական դարձել հոգեվիճակը. «— **Դալուկ** աշնան մերկ **անտառն** է շառաչում, **Լույս-հուշերի աղբյուրներն** են կարկաչում» (ՄԱ) =>

«...**Լույս հուշերի վտակներն** են կարակաշում» (Բ):

Երբորդ տարբերակում վերոհիշյալ հատվածի չորրորդ տողը փոխարինվել է տերյանական ոճին բնորոշ համեմատական պատկերով. «**Գիշերի պես** խորհրդավոր, դյութական» (Բ):

Երգը, ի վերջո բյուրեղանալով, վերածվում է սպասումների ու երագների մշտահմա մի մեղեդու:

Վերջնական տարբերակի առաջին տան չորրորդ տողում նկատվում է իմաստային անհարթություն. «Մարից իջնող **աղբյուրներն** են կարկաշում»: Նախորդ երկու տեքստերում եղել է «Մարից իջնող **վտակներն** են կարկաշում». ավելի բնական է սարից վտակների իջնելը: Կարծում ենք՝ անհաջող խմբագրում է: Կարելի է նաև այլ օրինակներ ներկայացնել վերջնական խմբագրումներից, որտեղ բանաստեղծը, ըստ մեզ, վրիպել է կամ որոշ դեպքերում դժվար է լինում հստակեցնել **փոփոխության պատճառը**: Քննվող բանաստեղծության հինգերորդ տողում կարդում ենք. «Ես լսում եմ **հիացումի** մի շշուկ» (ՄԱ) => «Ես լսում եմ **հիացմունքի** մի շշուկ» (Բ): Ի դեպ, ոտանավորի նախնական տեքստում նույնպես եղել է **հիացմունք**: Հիացում-հիացմունք, նախապաշարում-նախապաշարմունք գուգահեռ ձևերից առաջինները առավել բանաստեղծական են, երկրորդները՝ առարկայական: **Հիացում** բարեհունչ բառը փոխարինվել է **ն, ք** հնչյուններով ծանրաբեռնված բառով, և առաջին հայացքից դժվար է ասել՝ ինչով է պայմանավորված ուղղումը: Մակայն համեմատելով արդի հայերենի բացատրական բառարանների տվյալները Էդ. Աղայանի բառարանում նկատեցինք **հիացմունք** բառի իմաստային մի նրբերանգ, որը չունի **հիացում**-ը, այն է՝ հիանալու զգացումը՝ որպես հոգեվիճակ¹: Գուցե Վ. Տերյանը հենց այս նրբերանգն է փորձել շեշտել սույն խմբագրմամբ:

Եվ, ինչպես երևում է, վերացրել է անբարեհնչունությունը՝ «**հիացումի մի շշուկ**»: Առհասարակ, «Անուրջներ»-ում հաճախադեպ են **ում** ածանցով կազմված բայանունները, որոնք, մեր կարծիքով, հիմնականում ունեն բանաստեղծականությունը ընդգծելու դերակատարում:

Մեկ այլ՝ «**Իմ մուրր ճամփին դու անկարծ իջար**» սկսվածքով ոտանավորի վերջնական տարբերակում **լուսաշունչ** բառը փոխարինված է **մեղմաշունչ** մակդիրով. «Քո գիշերային **լուսաշունչ** մութով» => «Քո գիշերային **մեղմաշունչ** մութով»:

Մեր կարծիքով, սակայն, վերջինս արտահայտչականությամբ զիջում է նախորդին. **լուսաշունչ** մութ կապակցությամբ հակադրական պատկեր է ստեղծվում, որը ավելի է զորեղացնում խոսքի ուժը:

Շատ են հեղինակային այն ճշգրտումները, որոնք **թախձի, ցավի, երազի** անհատական ակունքներն են պարզ դարձնում: Անեզր **թախձի** գեղարվեստական արտահայտություն է «**Մոռանալ**» բանաստեղծությունը: Այն գրեթե

¹ **Աղայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, հ, 1, Ա-Ձ, Երևան, 1976, էջ 869:

ամբողջությամբ կառուցված է դերբայական անդեմ նախադասություններով. միայն մեկն է դիմավոր. «Արդյոք **կա**՝ իրիկվա մոռացման ոսկե շող»: Առհասարակ իր գեղարվեստական մշակումներում բանաստեղծը հաճախ է **դիմավոր** նախադասությունները փոխարինում **անդեմներով**՝ պայմանավորված ոճի սեղմությամբ և խոսքի զգացմունքայնությունը ընդգծելու միտումով: Մրանք նաև շարքին բնորոշ **թախծի** տրամադրությունն են ընդգծում:

«**Մոռանալ**» բանաստեղծության մեջ մենանալու ձգտումը բացառիկ ուժով է արտահայտված: Ոտանավորի հիմքում ընկած փիլիսոփայական խոհը բանաստեղծի զգայական ներընկալման տեսանկյունից է ներկայացվում: Կատարված խմբագրումները (**բառի կրճատում, բառի հավելում, տողատում**) գեղարվեստական ճշտությամբ են արտահայտում հոգեբանական նրբավորումները, նաև բանաստեղծական չափը պահելու ու մեղեդայնությունը զորացնելու նպատակ ունեն: Այսպես՝ «**Չափսոսալ, չըսիրել, չըխուկալ-հեռանալ** 1» (ՄԱ) => «**Չըսիրել, չըխորհել, չափսոսալ-Հեռանալ**» (Բ) (2), «Արդյոք կա՝ իրիկվա մոռացման ոսկե շող» (ՄԱ) => «Արդյոք կա՝ իրիկվա մոռացման, **Մոռացման** ոսկե շող» (Բ) (4), «Մի վայրկյան հեռանալ ամենից, ամենին մոռանալ **մի վայրկյան**» (ՄԱ) => «Մի վայրկյան ամենից հեռանալ, Ամենին մոռանալ» (Բ) (5), «**Չըկանչել, չըսիրել, չըտանջվել-հեռանալ** 1» (ՄԱ) => «**Չըսիրել, չըտենչալ, չըկանչել-Հեռանալ** 1» (Բ) (8): Նկատելի է նաև **չըսիրել** բառի նպատակադիր նախադաս կիրառությունը, որով շեշտվում է դառնացած հոգու մեկուսացումը:

Վ. Տերյանը որոշ դեպքերում նաև **կրճատումների** ճանապարհով է բանաստեղծական պատկերը կատարյալ դարձրել: Այսպես՝ «**Մթնշաղ**» ոտանավորը 1908 թ. հրատարակված տեքստում ունի հետևյալ սկիզբը. «Վերջալուսի վերջին շողը մեղմ հանգավ. Խաղաղության քնքույշ քողը ցած ընկավ» (ՄԱ): Մշակված տարբերակում կրճատվել են վերոհիշյալ երկու տողերը, և մուտքի համար գտնվել է ոճական նոր լուծում՝ համահունչ մթնշաղային տրամադրությանը. «**Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ, Երբ ամեն ինչ երագու՛մ է հոգու հետ**» (Բ): **Մթնշաղ**, նաև **երեկո, իրիկուն, գիշեր** բառերը շարքում ամենաշատ գործածվողներից են և շեշտում են երգաշարին բնորոշ մեղմ տխրությունը: Կատարված է նաև երկու մասնակի փոփոխություն ութերորդ և 10-րդ տողերում՝ «Որպես **հրաշք** մոռացումի անձավում» (ՄԱ) => «Որպես **երագ** մոռացումի անձավում» (Բ), «Ու ողջ կյանքդ-մի անսահման քաղցր նինջ...» (ՄԱ) => «Ու ողջ կյանքդ է մի անսահման քաղցր նինջ» (Բ), որոնցից առաջինը՝ **երագ-ը**, ավելի է պատշաճում «նրբակերտ մթնշաղին», իսկ **է-ի** հավելմամբ բանատողի չափն է կարգավորվել. միաժամանակ շրջադասությամբ **կյանք** բառի իմաստային շեշտադրումն է ուժեղացել:

«**Աշնան մեղեդի**» բանաստեղծությունը առաջին անգամ տպագրվել է «Նոր կյանք»-ում 1906 թ. «**Աշնան մեղեդիներից**» վերնագրով: Նախնական և խմբագրված տեքստերը խիստ տարբեր են: Մշակվածում կրճատվել են առաջին տարբերակի նախավերջին երկու տողերը.

Աշուն է... Անձրն՝ **Մշուշներն** անձն

Սողում են դանդաղ - ու միապաղաղ:

Սրանք առաջին երկու տողերի կրկնությունն են նախնական տարբերակում և փոխարինվել են զգացական մեծ լիցք ունեցող գեղարվեստական պատկերով.

Դու կյանքն ես տեսել, դու կյանքն ես հիշում -

ոսկե տեսիլն է ր, անուրջների լույս -

ես պաղ մշուշում:

Իմ հոգու համար չրկա արշալույս -

անձրն է, աշու ն... (ՄԱ)

Ինչպես երևում է համեմատությունից, գաղափարական առումով շատ ավելի հագեցած է նոր պատկերը. սրանում ընդգծված է տառապող մարդու կարոտի մորմոքը:

Ուշագրավ է նաև հետևյալ խմբագրումը. առաջին տարբերակում եղել է. «**Դու այնտեղ հեռվում, այն աղմկաբեր Կյանքի դաշտերում...**»: Երկրորդ տարբերակում դարձրել է. «**Դու այնտեղ էիր, այն աղմկահեր Կյանքի մշուշում**» (ՄԱ): Փոխվել է բանաստեղծական պատկերը. **աղմկաբեր դաշտեր** առարկայական արտահայտությունը փոխարինվել է սիմվոլիկ պատկերով՝ **աղմկահեր Կյանքի մշուշ-ով**: **Աղմկահեր** հեղինակային նորաբանությունը, կարծում ենք, գեղարվեստորեն ճիշտ է ներկայացնում ասելիքը. բառը նտրությունը ներդաշնակ է խոսքի ընդհանուր ոճական ուղղվածությանը:

«Անուրջներ»-ի տեքստը շատ քիչ փոփոխությունների է ենթարկվել երրորդ տարբերակում. տեքստական խոսքն էլ ավելի է բյուրեղացել, գեղարվեստորեն ճշգրտվել. «**Շուկներն անձն**» (ՄԱ) => «**...ստվերներն անձն**» (Բ) (1), «**Մեռնում են դանդաղ**» (ՄԱ) => «**Դողում են դանդաղ**» (Բ) (2), «**Ես պաղ մշուշում**» (ՄԱ) => «**Ես ցուրտ մշուշում**» (Բ) (11):

Տարբերակային քննությունը պարզ է դարձնում նաև, որ Վ. Տերյանը մանրակրկիտ և նուրբ աշխատանք է կատարել բառը **փոխաբերական** իմաստով գործածելիս: Դիպուկ բառը նտրությամբ գրողը հաճախ է ծավալում փոխաբերությունը՝ ծառայեցնելով գաղափարի ուժեղացմանը: Զուգադրենք «**Ինձ թաղեք...**» սկսվածքով բանաստեղծության առաջին («Մուրճ»-ում 1906 թ. տպագրված), երկրորդ ու երրորդ տարբերակները:

<i>Նախնական տարբերակ</i>	<i>Մշակված տարբերակ</i>
Ինձ թաղեք, երբ կարմիր վերջալույսն է մարում, Երբ վերջին գգվանքով արեգակը մեռնող Սարերի արծաթյա կատարին է փարվում Երբ փարվում են ծաղկանց հով ու ցող...	Ինձ թաղեք, երբ կարմիր վերջալույսն է մարում, Երբ տխուր գգվանքով արեգակը մեռնող Սարերի արծաթե կատարներն է վառում, Երբ մթնում կորչում են Օով ու Հող... (ՄԱ)

Հաջորդ հատվածներում կատարված փոփոխությունները ներդաշնակում են սրանց, և տող առ տող ասես հյուսվում է մահվան մռայլ շղարշը. «Երբ փարվում են ծաղկանց հով ու ցող...» => «Երբ մթնում կորչում են Օով ու

Հող...» (ՄԱ) => «Երբ մթնում կորչում են **ծով ու հող**» (Բ), «Ինձ թաղեք, երբ **խաղաղ** երեկոն է իջնում» => «..., երբ **տխուր մթնշաղն** է իջնում» (ՄԱ,Բ) (5), «Երբ **տրտում խոկում** են լեռ ու արտ» => «Երբ **մթնում կորչում** են **Լեռ ու Արտ**» (ՄԱ) => «...**լեռ ու արտ**» (Բ) (8), «**Իրիկվա խավարում դուք** ինձ **լուռ** թաղեցեք» => «**Ինձ անլազ թաղեցեք, ինձ անխոս** թաղեցեք» (ՄԱ, Բ) (11): Վ. Տերյանը «**Վերջին => տխուր**», «**խաղաղ երեկո => տխուր մթնշաղ**» փոփոխություններով, կարծում ենք, 1906 թ. գրված բանաստեղծությունը մոտեցրել է «Մթնշաղի անուրջների» տխուր, մելամաղձոտ տրամադրությանը: Ինչպես նկատելի է, չորրորդ, ութերորդ, 11-րդ տողերում խմբագրումները կատարվել են ի նպաստ խոսքի հուզագագացական կողմի. կարծես սգո սրտահույզ մեղեդի է հնչեցնում պոետը, մեղեդի, որի մեջ կա կյանքի կարոտ: Վերջին տողի փոփոխությամբ ամբողջանում է բանաստեղծական կտավը, առարկայական է դառնում մարդկանցից հեռանալու և լռությանը տրվելու հոգեվիճակը. «**Որ կյանքի հմայիչ շրջուկները չըզգամ**» => «**Լռությու՛ն, Լռությու՛ն, Լռությու՛ն անսահման...**» (ՄԱ, Բ):

Գրողի վարպետությունը **բառն իր տեղում դնելու** հմտությամբ է պայմանավորված. այս դեպքում է, որ բառերը նոր իմաստ ու կարևորություն են ստանում: Ուշագրավ է «**Էստոնական երգ**» (նախապես ունեցել է «**Երգ**» (էստոներենից) վերնագիրը) բանաստեղծության «Մուրճ»-ում և «Բանաստեղծություններ»-ի առաջին հատորում լույս տեսած տարբերակների համեմատական քննությունը: Երկրորդ ու երրորդ մշակումները տարբերվում են միայն 12-րդ տողով. «**Ինձ կը տանջե պաղ կսկիծը քո ցավի**» (ՄԱ) => «**Անմխիթար մորմոքումից քո ցավի...**» (Բ): Տառապող մարդու հոգու դրաման գեղարվեստական ճշգրիտ արտահայտություն է ստանում երրորդ տան մեջ կատարված խմբագրումների շնորհիվ:

Նախնական տարբերակ

Մշակված տարբերակ

Եթե հեռվում ճակատագիրն անհոգի
Միրտդ մատնե **ձմեռնաշունչ** տանջանքի,
Օ, **գիտցիր այնժամ սիրոս** կցավի
Ինձ կը տանջե լուռ կսկիծը քո ցավի:

Եթե հեռվում ճակատագիրն անհոգի
Միրտդ մատնե **անկարեկից** տանջանքի,
Օ, **գիտցիր, իմ հոգին էլ կըցավի**
Անմխիթար մորմոքումից քո ցավի... (Բ)

Ակնառու է **ան** նախածանցով կազմված (**անկարեկից, անմխիթար, անհոգի**) մակդիրների դերը. սրանք մեղմում են համապատասխան իմաստները, իսկ **մեղմությունը**, ինչպես նշել ենք, «Անուրջներ»-ին բնորոշ տերյանական նրբերանգ է: Մյուս ճշտումները կարգավորում են բանատողերի չափը, խոսքը դարձնում մեղեդային:

Ոտանավորի հուզագագացական շեշտադրմանն են ծառայում երկրորդ և ութերորդ տողերում կատարված փոփոխությունները. «**Եկ իմ մոտս, դարձիք մոտս** դու նորից» => «**Դարձի՛ր իմ մոտ, վերադարձի՛ր** դու նորից» (Բ), «Սակայն **դարձիք, դարձիք մոտս** դու կրկին» => «Սակայն **դարձի՛ր, վերադարձի՛ր** դու կրկին» (Բ): Ինչպես տեսնում ենք, Վ. Տերյանը խոսքը մաքրել է նաև անհարկի կրկնությունից (**մոտս**) և խոսակցական իրողու-

թյունից (**իմ մոտս**): Առաջին տան առաջին տողում կարդում ենք. «Երբ կը հոգնես, կը գազագես դու **կյանքից**»: Մշակելիս բանաստեղծը նրբիմաստային ճշգրտում է կատարել **կյանքից** բառը փոխարինելով **աշխարհից** բառով, որը լավագույնս արտահայտում է գրողի մտահղացումը և հրաշալիորեն ներդաշնակում բանաստեղծության ընդհանուր տրամադրությանը, խոսքային միջավայրին: Կարծում ենք՝ **աշխարհը** այն ճշգրիտ սկիզբն է, որի շարունակությունը պետք է լինեին հաջորդ տների հետևյալ տողերը՝ «Եթե բախտն ու վայելքները քեզ ժըպտան, Օտարները քեզ գգվանքով ողջուն տան», «Եթե հեռվում ճակատագիրն անհոգի...»:

Վ. Տերյանի գեղարվեստական խոսքին բնորոշ է նաև **անորոշությունը**, որը **խորհրդանշային** պոեզիայի հատկանիշներից է: Բանաստեղծությունները մշակելիս նա հաճախ մարդու և բնության որոշակի պատկերացումները փոխարինում է մեղմ անորոշով, վերացականով՝ տուրք չտալով, իհարկե, խորհրդապաշտական ոճին: Այսպես՝ վերոնշյալ քերթվածում **կյանքից => աշխարհից** խմբագրմամբ նաև կոնկրետն է փոխարինվել վերացականով:

«**Ինձ թաղեք...**» սկսվածքով ոտանավորի նախնական տարբերակի իններորդ տողում կարդում ենք. «Իմ շիրմին դակացող **հորոտներ** ցանեցեք»: Մշակելիս **հորոտներ**-ը փոխարինվել է **ծաղիկներ**-ով. մասնավորից անցում է կատարվել ընդհանուրին. էական չէ ծաղկի տեսակը (տվյալ դեպքում՝ **սգո**), այլ պատկերի ամբողջացումը: Գուցե նաև անհասկանալի լինելու պատճառով է հանվել: Կամ՝ «**Տխրություն**» քերթվածում **համբույր** բառի փոխարինումը **ստվեր**-ով մեղմել է անորոշությունը, և ամբողջացել է «**գունատ աղջկա**» խորհրդանշական պատկերը: Այսօրինակ խմբագրումները բնորոշ են գրողի ստեղծագործական աշխատանքին առհասարակ:

Չոգեբանական բազում նրբերանգների՝ այրող ցավի, սիրո սպասման, կարոտի գեղարվեստական շքեղ պատկեր է «**FATUM**» բանաստեղծությունը: Այն կառուցված է մարդու և տիեզերքի զուգահեռի ձևով. կատարված խմբագրումները հիմնականում այս զուգադրությունը գեղարվեստորեն ճիշտ մարմնավորելու և պատկերը վերաձևելու ուղղվածություն ունեն: Ասվածը հիմնավորենք՝ համեմատելով ոտանավորի առաջին («Չուշարար» երկշաբաթաթերթում 1907 թ. տպագրված) և «Բանաստեղծություններ»-ի առաջին հատորում լույս տեսած տարբերակները:

Նախնական տարբերակ

- 3 Նա իջնում է, քնքու յը, որպես իրիկուն
- 5 Հեզ գիշերի գեղագանգուր երագում
- 6 Այն աստղե ըր որպես մոմեր երկնարժան
- 7 Այն աստղերը, որ անհնչուն են խոսում
- 8 Միշտ իրար հետ, իրար կապված ու բաժան.
- 9 Այդպես և մենք շղթայված ենք իրարու,
- 10 Կարոտագին երագում ենք միշտ իրար.
- 11 Միշտ իրար հետ, բայց միշտ բաժան ու հեռու:

Մշակված տարբերակ

- 3 Իջնում է նա հուշիկ, որպես իրիկուն,
- 5 Մեղմ գիշերի գեղագանգուր երագում՝
- 6 Այն աստղերը, որպես մոմեր սրբագան,
- 7 Առկայծում են կարոտագին, երագում՝
- 8 Հավերժաբար իրար կապված և բաժան:
- 9 Ես ու դու էլ շղթայված ենք իրարու,
- 10 Կարոտավառ երագում ենք միշտ իրար,
- 11 Միշտ իրար հետ, բայց միշտ բաժան
և հեռու...

Ուշագրավ է **մենք**-ի փոխարինումը **ես ու դու**-ով: Կարծում ենք՝ խմբա-

գրմամբ շեշտվում է տարածությամբ և ժամանակով բաժանված լինելու փաստը, առանցքային մի նրբերանգ, որը շեշտադրված չէ առաջին տարբերակում: Քիչ են տարբերվում երկրորդ և երրորդ հրատարակությունների տեքստերը. վերջնական մշակման ժամանակ կատարվել է բառային մեկ փոփոխություն. «Այն աստղերը, որպես մոմեր **երկնարժան**» (ՄԱ)=> «.....որպես մոմեր **սրբազան**» (Բ) (6): Շարադասական խմբագրում է արվել երրորդ, յոթերորդ տողերում, իսկ ութերորդ և 11-րդ տողերում **ու** շաղկապը փոխարինվել է **և**-ով:

Եւշենք, որ Վ. Տերյանի ստեղծագործական աշխատանքին բնորոշ է սովորական շարադասությունը հաճախ **շրջադասությամբ** փոխարինելը. հատկապես բայերի նախադաս կիրառությունը, որն ուժեղացնում է հուզական լարվածությունը, շեշտում քնարական հերոսի հոգու դրամատիզմը: Առհասարակ **դիմավոր բայերի** մեծ չափով **նախադաս** գործածությամբ տերյանական խոսքում շեշտադրվում են բնության շարժումը, երկնքի և երկրի հավերժական շրջապտույտը: **Հավերժության** մոտիվը նույնպես հատկանշական է տերյանական խոսքին:

Ինչպես երևում է նաև վերը քննված շատ ու շատ օրինակներից, Վ. Տերյանը ստեղծագործական մշակումներում մեծ աշխատանք է կատարել **հոմանիշների** արտահայտչական հնարավորությունները բացահայտելու նպատակով:

Դիտարկենք «**Քո այքերի դեմ իմ այքերը ` կույր**» բանաստեղծության երրորդ տողը.

Եղել է՝ *Դարձրել է՝*

Քո **սև** հայացքում կա մի քնքույշ սուտ: (ՄԱ) Քո **մութ** հայացքում կա մի քնքույշ սուտ: (Բ)

Սույն խմբագրմամբ վերոնշյալ տողը, ներդաշնակելով նախորդ տողին՝ «**Կա քո հոգու մեջ անթափանց մի մութ**», ապահովում է բանաստեղծի գեղարվեստական ճշտությունը: **Մութ**-ը, ըստ մեզ, դրական իմաստ ունի այս համատեքստում. խորհրդավորն է, հանելուկայինը և մյուս փոփոխությունների հետ պատշաճում է նաև տերյանական խառնվածքի նրբությանը: Կրկնությունից խուսափելու նպատակով նույն բառը ոտանավորի հաջորդ հատվածում խմբագրվել է. «Փակ են քո սրտի **մութերը** իմ դեմ» (ՄԱ) => «Փակ են քո սրտի **հեռուներն** իմ դեմ» (Բ) (5), որը նույնությամբ կրկնել է իններորդ տողում՝ «Փակ են քո հոգու **վիհերը** իմ դեմ» նախադասության փոխարեն: **Հեռուներ** բառի կրկնությամբ շեշտվում է տերյանական խոսքին այնքան բնորոշ անհայտության, անորոշության գիծը, ընդ որում, այս բառը Վ. Տերյանի բանարվեստին հատկանշական բառ-պատկերներից է: Իսկ տողի կրկնությամբ ընդգծվել է քնարական հերոսի հոգու ցավը:

Հեղինակային խմբագրումները զգալիորեն փոխել են «**Գարուն**» բանաստեղծության պատկերային աշխարհը. քայլ առ քայլ տողերի մեջ են խուժում գարնան շունչը և հոգու թմբիկից արթնացած մարդու հույզերը: Համե-

մատենք նշյալ քերթվածի նախնական (տպագրվել է «Գարնան երեկո» վերնագրով 1908 թ. «Երկրի ձայնը» շաբաթաթերթում), երկրորդ և երրորդ տարբերակների յոթերորդ տողերը. «Շուրջս **դողում** է մի անուշ տազնապ» => «Շուրջս **վառվում** է մի անուշ տազնապ» (ՄԱ) => «Շուրջս **վառված** է մի անուշ տազնապ» (Բ): Ինչպես նկատելի է, բառային խմբագրմամբ փոխաբերական պատկերն ավելի կատարյալ է դարձել, որի արդյունքում բանաստեղծական մտահղացումն արտահայտվել է մեծ ուժով, իսկ զգացմունքը՝ խտացված ձևով: **Վառվում է-վառված է** փոփոխությամբ նրբիմաստային ճշգրտում է կատարվել. ընթացքի մեջ գտնվող գործողությունից անցում է կատարվել առարկայի դրության, վիճակի, որը ավարտված գործողության հետևանք է:

Վերջնական տեքստում ամբողջությամբ փոխվել է նախնական տարբերակի ութերորդ տողը (երկրորդ մշակման ժամանակ նույնությամբ պահպանվել է). «— **Սրտիս դռները մի բախտ է թակում...**» => «**Մի նոր հուզում է սիրտըս մրրկում...**» (Բ), որը իմաստով սերտորեն կապվել է յոթերորդ տողին և ամբողջացրել գեղարվեստական պատկերը: Ուշագրավ են 10-րդ տողում կատարված խմբագրումները. «Իմ տխուր **գանկում** հնչում է մի երգ» => «Իմ տխուր **սրտում** հնչում է մի երգ» (ՄԱ) => «Իմ **բացված սրտում** հնչում է մի երգ» (Բ): Գրողը նախ հրաժարվել է իր խոսքարվեստին խիստ անհարիր **գանկում** հնացած բառից, ապա նախապատվությունը տվել «Անուրջներ»-ին այնքան բնորոշ **սիրտ** բառին: Գեղարվեստորեն ճիշտ է գարնան երգերի՝ **բացված** սրտում հնչելը:

Սիրտ-հոգի բառերն այս շարքում ամենաշատ գործածվողներից են և ունեն խոհրդանշական իմաստ. մեծավ մասամբ առնչվում են քնարական հերոսին: Ըստ Ռ. Իշխանյանի հաշվումների՝ «Անուրջներ»-ում **սիրտ** և սրա համանիշ **հոգի** բառերի գործածությունը 127 անգամ է ու կապված է Վ. Տերյանի անհատական քնարերգության բնույթի հետ¹:

Տարբերակային քննությունից երևում է, որ Վ. Տերյանի համար խիստ կարևոր են եղել նաև **տաղաչափության** հարցերը՝ բանատողերի չափը, մեղեդայնությունը, հանգը:

Նրա ոճամտածողությանը բնորոշ է **տողատումը**, և հեղինակը սրբագրելիս հաճախ է այս հնարքից օգտվել՝ բանաստեղծությունը հասցնելով ոճական կատարելության: «**Աշնան երգերից**» ոտանավորը «Բանաստեղծություններ»-ի առաջին հատոր է մուտք գործել և՛ վերնագրային («**Աշնան սրտմություն**»), և՛ կառուցվածքային փոփոխությամբ: Թե որքան ուշադիր է եղել Վ. Տերյանը իր բանաստեղծությունների տողատման նկատմամբ, պարզ դարձնենք՝ զուգադրելով ոտանավորի ինքնագիրը (երկրորդ տարբերակում նույն տողատումն է, ինչ ինքնագրում) վերջնական տարբերակի հետ: Նախնական տարբերակի համեմատությամբ, որն ունի 15/5 բաժանումով տողեր,

¹ Տե՛ս **Իշխանյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 312:

նտանավորը տողատվել է հինգ, ապա տասը, այնուհետև հաջորդաբար երկու հինգ, տասը, իսկ վերջում՝ հինգ, տասը, հինգվանկանի տողերով, որն արվել է միօրինակությունից խուսափելու և բանատողերն առավել ռիթմիկ դարձնելու համար:

~~Նորմա~~
 Այլուսու երգերից .
 Կրկին թե հոգուն իջաւ ճշուշտ, արցունք արջընող
 Արքուն՝ իրկուն .-
 Թե արքուն անպաւ ճիւղնայ ճաղկունայ ^{Բնող} Բայր ցաւ
 Հանձնոր իտնաւ :
 Կրկին պող ճիւղն անպաւ իրկուն ճարսն լայտի
 Թաղանձն է պղուն .
 Հողն արարչաւ թե տղա անպաւ ճաղկունայտի
 Թիթիւ արաւ :
 Անգամնա ցաւոս ճաղկուն ճաղկուն ^{Գաւայուն} Եւ ճիւղ
 Հիւսուն անձաւոթ
 Կրկին իրկուն անգամնա լայտ անպաւ թիւղն ^{Ճաւ} անսաւ
 Դաւայուն, անպաւ...
 Անկրկուն անգամնա ճաղն և ճաւ-ճաւ ^{Հոնոլ} ճաղուն
 Արքուն, յաւանաւ .-
 Թե տղա թղ իրուն և վճաւ արցունքի Թե ճաղ
 Արքուն և իրկուն...
 Իտնաւ Թե Թե...
 Վաւաւ Թե Թե

Կրկին իմ հոգում իջավ մշուշոտ, արցունք անձրևող
Տրտում իրիկուն.–
Իմ սրտում անցավ **մեռնող ծաղկունաց** բույրը ցավ
բերող,
Համբույրը խոնավ:
Կրկին պաղ միգում ամպոտ երկինքը **մարած**
լույսերի
Թաղումն է սգում.
Հողմը սրարշավ **իմ հոգու անցած** ծաղիկ հույսերի
Թերթերը տարավ:
Անջատման ցավոտ ձայներ դողացին ու հեզ
չալկացան
Հեռվում անձանոթ
Կրակներն անձայն լացող ամպերի **մեզում**
անսահման
Դալկացա՛ն, անցա՛ն...
Անձրևն անընդհատ մաղում է **կաթ-կաթ** թաղումի
լոծով
Տխու ք, հուսահատ.– (հանվել է այս տողը)
Իմ հոգու մեջ էլ **եռում է վհատ արցունքի մի ծով՝**–
Աջուն է իջել....

Կրկին իմ հոգում
Իջավ մշուշոտ, արցունք անձրևող,
Տրտում իրիկուն.
Իմ սրտում անցավ
Մահացող ծաղկանց բույրը ցավ բերող,
Համբույրը խոնավ.
Կրկին պաղ միգում
Ամպոտ երկինքը **մեռած** լույսերի
Թաղումն է սգում:
Հողմը սրարշավ
Հոգու դալկացած ծաղիկ հույսերի
Թերթերը տարավ...
Անջատման ցավոտ
Ձայներ դողացին ու հեզ դալկացան
Հեռվում անձանոթ.
Կրրակներն անձայն
Լացող ամպերի **միգում** անսահման
Թռչնեցի՛ն ն, անցա՛ն...
Անձրևն անընդհատ
Մաղում է **վհատ** թաղումի կոծով,–
Իմ հոգու մեջ է՛լ
Աջուն է իջել անանոթ ցավով,
Իմ հոգու մեջ է՛լ... (Բ)

Ընդգծված բառերի, կապակցությունների, նախադասությունների համեմատությունից պարզ է դառնում նաև, որ փոփոխությունները խոսքն ավելի տերյանականացնելու, փոխաբերությունը գորացնելու և սեղմության նպատակներով են արվել: Վերջին երկու տողերի խմբագրմամբ նկատելիորեն փոխվել է ոտանավորի իմաստային շեշտադրումը:

Հեղինակային հետևյալ սրբագրումները չափածո խոսքի **նվազայնությունն** ուժեղացնելու դեր ունեն: Ձուգադրենք «Գարնանամուտ» բանաստեղծության («Անուրջներ»-ում վերնագրված է «Գարուն») առաջին և երկրորդ հրատարակությունների հետևյալ տողերը. «**Ահա ես** կրկին զվարթ ու ջահել» (ՄԱ) => «**Եվ ահա** կրկին զվարթ ու ջահել» (Բ) (9), «**Ձուգել ես հոգուս դաշտերը տրտում**» (ՄԱ) => «**Ծաղկել ես սարու՛մ, անտառու՛մ, արտու՛մ...**» (Բ) (14): Բանաստեղծը իններորդ տողի խմբագրմամբ վերացրել է անբարեհնչունությունը, իսկ **ա** և **ու** ձայնավորներով ստեղծել **առձայնույթ** 14-րդ տողում, որը կատարյալ ներդաշնակել է ոտանավորի վերջին տան մնացած երեք տողերին՝ չափածո խոսքը վերածելով նուրբ մեղեդու: Նկատենք, որ Վ. Տերյանը խուսափել է նաև **հոգուս դաշտերը** անհաջող փոխաբերությունից:

Բացել ես իմ դեմ ոսկեղեն հեռուն,
Ծաղկել ես սարու՛մ, անտառու՛մ, արտու՛մ...
Ուրիշ երգեր են հնչում իմ սրտում –
Ողջու՛ յն քեզ, արև, ողջու՛ յն քեզ, գարուն... (Բ)

Ձուգադրական քննությունից պարզ է դառնում նաև, որ Վ. Տերյանը և շաղկապը որոշ դեպքերում փոխարինում է **ու**-ով՝ խոսքի նվազայնությունն

ուժեղացնելու, առձայնույթ ստեղծելու միտումով: Ինչպես՝ «**Եվ** գունատ հույսի քայլերով տարտամ» (ՄԱ) => «**Ու** գունատ հույսի...» (Բ), «Նստիք մահճիս մոտ **և** տխուր երգիր» (ՄԱ) => «... **ու** տխուր երգիր» (Բ): Իսկ երբեմն էլ **ու-ն** է փոխարինում **և**-ով՝ վերացնելով անբարեհնչունությունը. «**Ու** մութ սրտիս նոր խնդության լույս բերես» (ՄԱ) => «**Եվ** մութ սրտիս ...» (Բ), «Միշտ իրար հետ, բայց միշտ բաժան **ու** հեռու» (ՄԱ) => « ...բայց միշտ բաժան **և** հեռու» (Բ):

Բարեհնչունության նպատակով են արվել «**Աղոթք**» ոտանավորի հետևյալ փոփոխությունները. «— **Օ՛**, հիշի՛ր **պաղ մթնում** տանջվողին» (ՄԱ) => «Հիշի՛ր դու **խավարում** տանջվողին» (Բ)(6), «— **Փարոսիք** սև կյանքիս մութ ուղին...» (ՄԱ) => «**Արևիք** սև կյանքիս մութ ուղին» (Բ) (8): Կարծում ենք՝ **փարոսիք** բառի համեմատությամբ հաջողված է **արևիք** նորակազմությունը. մանավանդ որ խոսքաշարում հակադրվել է **մութ-խավար-սև** բառերին՝ ամբողջացնելով պատկերային հակադրությունը:

Բանաստղերի ռիթմը ապահովելու համար գրողը հաճախ է խմբագրում խոսքը՝ հոգուտ **կրկնության**: Ասվածը հաստատենք՝ զուգադրելով «**Քո աչքերի դեմ իմ աչքերը կույր**» քերթվածի առաջին և երկրորդ տարբերակների հինգերորդ, իններորդ և 12-րդ տողերը. «Փակ են քո սրտի **մութերը** իմ դեմ» (ՄԱ) => «Փակ են քո սրտի **հեռուներն** իմ դեմ» (Բ), «Փակ են քո **հոգու վիհերը** իմ դեմ» (ՄԱ) => «Փակ են քո **սրտի հեռուներն** իմ դեմ» (Բ), «**Արդյոք ո՞վ ես դու**, բնավ չգիտեմ...» (ՄԱ) => «**Ո՞վ ես դու, ո՞վ ես**, բնավ չըզգիտեմ...» (Բ): **Կրկնությունը** խտացնում է զգացմունքը, չափածո խոսքը նմանեցնում երաժշտության:

Իսկ բոլոր այն դեպքերում, երբ կրկնությունը անհարկի է, չունի խոսքի **հոգեբանական** կողմը ուժեղացնելու, հեղինակի զգացական վերաբերմունքը ընդգծելու նպատակ, գրողը հրաժարվում է դրանից: Նման խմբագրումներ է կատարել Վ. Տերյանը «Անուրջներ»-ի շատ ոտանավորներ «Բանաստեղծություններ»-ի առաջին հատոր գետեղելուց առաջ: «**Եվ մոռացված և անմոռաց հեքիաթներ**» սկսվածքով բանաստեղծության երրորդ տողում կարդում ենք. «**Կյա նքրս, կյա նքրս** մի լուսեղեն հեքիաթ էր ...» (ՄԱ) => «— **Կյա նքս, նա էլ** մի լուսեղեն հեքիաթ էր» (Բ): Կամ՝ «**Ես չգիտեմ՝ ու՛ր են տանում հեռավոր**» սկիզբն ունեցող ոտանավորի 11-րդ, 12-րդ տողերում կատարված փոփոխությունները նույն նպատակին են ծառայում:

<i>Եղել է՝</i>	<i>Դարձրել է՝</i>
Արդյոք ու՛ր ես, խորհրդավոր բախտի կույս ,	Արդյոք ու՛ր ես, խորհրդավոր արջալույս ,
Արդյոք ու՛ր ես , հանդիպումի պայծառ օր ... (ՄԱ)	Հանդիպումի երջանկության պայծառ օր ... (Բ)

Մշակված տարբերակում բանաստեղծը խուսափել է անհարկի կրկնությունից և «**բախտի կույս**» խոսքային ընդհանուր միջավայրին ոչ համապատասխան փոխաբերությունից:

Բանաստղերի մեղեդայնությունը զորացնելու համար Վ. Տերյանը խմբա-

գրական աշխատանք կատարելիս հաճախ է նախապատվությունը տալիս **համահունչ** բառերին: Հատկապես կարևոր է սրանց դերը **ներքին հանգ** ստեղծելիս: Գտնվելով նույն տողում կամ հանդես գալով կից գործածությամբ՝ համահունչ բառերը նպաստում են խոսքի գեղագիտական բովանդակության ուժեղացմանը: «**Լուսնոտ**» քերթվածի նախնական տարբերակի յոթերորդ և ութերորդ տողերում կարդում ենք.

Եղել է՝

Ես **դալուկ հիվանդ**, ես մի խենթ լուսնոտ-
Դու, **բախտի** ցնորք-հավիտյան խաբող... (ՄՄ)

Դարձրել է՝

Ես մի **լուսնահա՛ր**, ես մի խենթ **լուսնո՛տ**,
Դու **ցո՛լք**, դու **ցնո՛րք** հավիտյան խաբող: (Բ)

Նույնիսկ **քերականական** բնույթի փոփոխություններում է նկատվում, որ Վ. Տերյանը խոսքը խմբագրում է երաժշտականությունը ուժեղացնելու նպատակով: «**Իրիկնաժամ**» բանաստեղծության «Անուրջներ»-ի տարբերակի վերջին քառատողում բայերը գործածված են սահմանականի անկատար ներկա ժամանակաձևով: Վերամշակելիս գրողը դրանք փոխարինել է ենթադրական ապառնիով՝ շեշտելով իր անձնական, կամային վերաբերմունքը, իր ցանկությունն ու երազանքը. միաժամանակ ոտանավորի վերջին տունը, ստանալով ժամանակային նույն ձևավորումը, ինչ առաջին երկու քառատողերում է, դառնում է նույնքան մեղմասահ, զգայական, որքան ամբողջ գործը:

Նախնական տարբերակ

Նստում եմ մենակ քո ըստվերի տակ,
Դու **փարվում ես** ինձ թներով ճրկուն,
Քնքույշ **զգվում ես** Հույս ու Հիշատակ
Ցնորքների մա՛յր, պայծառ իրիկուն... (ՄՄ)

Մշակված տարբերակ

Կրնաստեմ անվերջ, **կրնաստեմ** մենակ.
Դու **կըփարվես** ինձ թներով ճկուն,
Քնքույշ **կըզգվես** հույս ու հիշատակ,
Կըպարզես մեղմիկ ցուլքդ իմ հոգուն: (Բ)

Մենք փորձեցինք ընդհանուր գծերով ներկայացնել Վ. Տերյանի տարաբնույթ ու տարատեսակ խմբագրումները, որոնք պարզ են դարձնում արվեստագետի՝ գեղարվեստորեն կատարյալը գտնելու ուղիները: Կարելի է հիշատակել նաև այլ ուղղումներ և բարեփոխումներ, բայց կատարված քննությունից երևում են գրողի ստեղծագործական աշխատանքի հիմնական սկզբունքները, և, անշուշտ, տերյանական անըստզուտ խոսքը միշտ էլ ուսումնասիրողին նոր շերտեր բացահայտելու հնարավորություն կարող է տալ:

Վ. Տերյանի ստեղծագործական աշխատանոցի քննությունից պարզ է դառնում, որ մինչև 1908 թվականը բանաստեղծի համար եղել է ստեղծագործական որոնումների ժամանակաշրջան: Տարբեր թերթերում լույս տեսած բանաստեղծությունների մի մասը «Անուրջներ» է մուտք գործել հիմնովին փոխված, իսկ մյուս մասը՝ տարատեսակ շտկումներով՝ իմաստային, բառային, պատկերային: Իր առաջին գրքով՝ «Մթնշաղի անուրջներ»-ով, քերթողը գրական հասարակությանն արդեն ներկայանում է որպես սեփական ոճն ու ձայնը ունեցող հեղինակ: «Անուրջները»-ը «Բանաստեղծություններ»-ի առաջին հատոր գետեղելուց առաջ գրողը դարձյալ խմբագրական տքնաջան աշխատանք է կատարել, բայց այս անգամ ոսկերչական ճշգրտությամբ հասնելով բառի ու պատկերի կատարելության, չափածո խոսքի արտակարգ հնչե-

դության ու զգացմութայնության:

Տերյանի ստեղծագործական մշակումների ընթացքը պայմանավորված է այնպիսի գործոններով, ինչպիսիք են՝ գրողի բանաստեղծական խառնվածքը, խորհրդանշային ուղղության ազդեցությունը, գեղարվեստական (մասնավորապես չափածոյի) լեզվի զարգացման տվյալ ժամանակի միտումներն առհասարակ, շարքի թեմատիկ և բովանդակային առանձնահատկությունները:

Եվ դրանց արդյունքում փոփոխությունները հիմնականում կատարվել են հետևյալ ուղղություններով՝ փոխաբերության զորացում, գեղարվեստական ճշտություն, սեղմություն, նվազայնություն, գրական լեզվի տարրերի բանաստեղծականացում-տերյանականացում, խոսքի հոգեբանական կողմի զորացում, շարքի ընդհանուր տրամադրության շեշտում:

Ուսումնասիրելով Վ. Տերյանի ստեղծագործական աշխատանոցը՝ մեկ անգամ ևս համոզվում ենք, որ լեզվական իրողությունների՝ հնչյունի, բառի, բառակապակցության, նախադասության **գեղագիտությունը** համատեքստային իրողություն է: Հատկապես բառընտրությունը ենթարկվել է **մթնշաղային** տրամադրությանը: Ստեղծագործական ընտրության արդյունքում ծնվել են գեղարվեստական խոսքի ճշմարիտ արժեքներ. մեծագույն պոետն անսխալ զգացողությամբ խմբագրել է իր խոսքը՝ բացահայտելով երևույթի էությունը:

Նարինե Ներսիսյան – Վահան Տերյանի «Մթնշաղի անուրջներ» շարքի ստեղծագործական մշակումների լեզվաոճական քննություն

Հոդվածում առաջին անգամ կատարվել է Վ. Տերյանի «Մթնշաղի անուրջներ» շարքի ստեղծագործական աշխատանոցի լեզվաոճական համակողմանի քննություն: Տերյան քնարերգուի ստեղծագործական մշակումների ընթացքը պայմանավորված է այնպիսի գործոններով, ինչպիսիք են՝ բանաստեղծական խառնվածքը, խորհրդանշային ուղղության ազդեցությունը, գեղարվեստական (մասնավորապես չափածոյի) լեզվի զարգացման տվյալ ժամանակի միտումները, ինչպես նաև շարքի թեմատիկ ու բովանդակային առանձնահատկությունները: Եվ դրանց արդյունքում փոփոխությունները հիմնականում կատարվել են հետևյալ ուղղություններով՝ փոխաբերության զորացում, գեղարվեստական ճշտություն, սեղմություն, նվազայնություն, գրական լեզվի տարրերի բանաստեղծականացում-տերյանականացում, խոսքի հոգեբանական կողմի զորացում, շարքի ընդհանուր տրամադրության շեշտում: Հատկապես բառընտրությունը ենթարկվել է **մթնշաղային** տրամադրությանը: Ստեղծագործական ընտրության արդյունքում ծնվել են գեղարվեստական խոսքի ճշմարիտ արժեքներ: Մեծանուն պոետն անսխալ զգացողությամբ խմբագրել է իր խոսքը՝ բացահայտելով երևույթի էությունը:

**Нарине Нерсисян – Лингвостилистический анализ творческих обработок стихов
Вагана Теряна из цикла «Грезы сумерек»**

Ключевые слова – творческая обработка, вариативный анализ, стилистический анализ, лексическое редактирование, описательное редактирование, художественная подлинность, семантико-стилистические изменения, усиление метафоры, сжатость (лаконизм), мелодичность языка, поэтизация элементов литературного языка

В статье впервые был проведен всесторонний лингвостилистический анализ произведений В. Теряна из цикла «Грезы сумерек». Процесс творческих обработок произведений поэта обусловлен такими факторами, как поэтическая натура писателя, влияние символизма, тенденции развития художественного (в частности – стихотворного) языка данного времени в целом, а также тематические и содержательные особенности цикла. В итоге изменения в основном осуществлялись по следующим направлениям: усиление метафоры, художественная точность, сжатость (лаконизм), мелодичность, поэтизация-терьянизация элементов художественного языка, усиление психологической стороны речи, акцентирование общего настроения цикла. Сумеречному настроению подвергся в особенности отбор слов. В результате творческого отбора родились подлинные ценности художественной речи: гениальный поэт с безошибочным чутьем редактировал свою речь, раскрывая сущность явления.

**Narine Nersisyan – Linguistic-stylistic Study of the Creative Elaborations of Vahan
Teryan’s “Twilight Dreams” Series**

Key Words – creative elaboration, study of versions, stylistic analysis, word editing, image editing, fictional accuracy, linguistic-stylistic change, metaphor strengthening, compression, melodiousness of the speech, poeticization of the elements of literary language

A comprehensive linguistic-stylistic examination of the creative work of Teryan’s “Twilight Dreams” series was carried out for the first time in the article. The process of Teryan’s creative elaboration is conditioned by such factors as the poetic temperament of the writer, the effect of the symbolic direction, and the trends in the development of fiction (especially verse) language at that time in general. As a result, the changes were mainly made in the following directions: metaphor strengthening, fiction accuracy, compression, melodiousness, poeticization – teryanization of the elements of literary language, strengthening the psychological side of speech, emphasizing the overall mood of the series. Especially the choice of words was subjected to the twilight mood. As a result of creative choice, true values of fictional speech were born; the genius poet edited his speech with an unmistakable feeling, revealing the essence of the phenomenon.

Ներկայացվել է 21.02.2022

Գրախոսվել է 08.03. 2022

Շնորհանվել է տպագրության 29.03.2022

Նարինե Ներսիսյան – ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու (narinenersisyan2017@mail.ru)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Լուսինե Սահակյան

Երուսաղեմի Հայոց պատրիարքարանում պահվող «Տեղեկատու դիվանի»՝ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության արխիվի պատմությունը և «Բովանդակությունը».....3

Արտաշես Շահնագարյան

Տավուշ բերդը.....33

Արման Եղիազարյան

Գագիկ Ա Բագրատունին և նրա տիտղոսները43

Աշոտ Հայրունի

«Գերմանական արևելյան առաքելության» հիմնադրումը և նրա հայօգնության աշխատանքների սկզբնավորումը (գերմաներեն)59

Անի Ոսկանյան

Աքսորյալ հայերի վերադարձը հետպատերազմյան Ադանայի նահանգ. բռնագրավյալ գույքերի խնդիրը.....82

Ռեզինա Գալուստյան

Հայ երեխաների բռնի տեղափոխումը Հայոց ցեղասպանության ընթացքում. ընտրություն, ոչնչացում, ձուլում95

Վազգեն Հախոյան

Կարսի հայության կոտորածը 1920-1921 թթ.109

Հրանուշ Սահակյան

Արցախյան հիմնախնդիրը, երկրաշարժը, հայերի հետապնդումները Թուրքիայում և Գերմանա-հայկական ընկերությունը (1988-1991 թթ.).....126

Ռուբեն Մելքոնյան

Հայաստանի ու Ադրբեջանի խնդիրները ԽՍՀՄ-ում (ըստ խորհրդահայ պաշտոնյաների հուշերի).....139

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արման Նալբանդյան

Նորահայտ տապանագրեր Սանահնից.....161

Տիգրան Ալեքսանյան, Դիաննա Միրիջանյան

Գեղարքունիքի մարզի Ս. Վարդան հուշարձանները Վարդանանց սրբավայրերի ուսումնասիրության համատեքստում178

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Վարդան Պետրոսյան

Հ.-Ե. կոկորդայինների տեսությունը և հին հայերենի խուլ շփական
Հ(Կ)-ի հնչարանական քննադրերը (ապաժամանակյա և
տարաժամանակյա հայեցակետեր) 189

Նարինե Դիլբարյան

«Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցույ պատմութիւն
Հայոց»-ի գրաբարյան դարձվածքների իմաստաբանությունը 209

Նարինե Ներսիսյան

Վահան Տերյանի «Մթնշաղի անուրջներ» շարքի ստեղծագործական
մշակումների լեզվաոճական քննություն 220

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

Лусине Саакян	
История и «Содержание» архива Армянского вопроса и Геноцида армян «Информационного бюро», хранящегося в Армянском патриархате Иерусалима.....	3
Арташес Шахназарян	
Крепость Тавуш.....	33
Арман Егиазарян	
Гагик I Багратид и его титулы	43
Ашот Айруни	
Основание н Немецкой восточной миссии и начало работ по помощи армянам (на немецком языке)	59
Ани Восканян	
Возвращение депортированных армян в послевоенную провинцию Адана: проблема конфискованного имущества.....	82
Регина Галустян	
Насильственная передача армянских детей во время Геноцида армян: отбор, уничтожение, ассимиляция	95
Вазген Ахоян	
Резня армян Карса в 1920-1921 гг.....	109
Грануш Саакян	
Арцахский вопрос, землетрясение, преследование армян в Турции и Немецко-армянское общество (1988-1991 гг.)	126
Рубен Мелконян	
Проблемы Армении и Азербайджана в СССР (на основе мемуаров советских армянских должностных лиц).....	139

АРХЕОЛОГИЯ

Арман Налбандян	
Новые надгробные надписи Санаина	161
Тигран Алексанян, Дианна Мириджанян	
Памятники Св. Вардана в Гегаркуникской области в контексте исследования святыниц Вардананца.....	178

ЯЗЫКОЗНАНИЕ

Вардан Петросян	
Теория и.-е. ларингалов и фонематические характеристики древнеармянского глухого фрикативного h (h) (ахронические и диахронические аспекты)	189
Нарине Дилбарян	
Семантика древнеармянских фразеологизмов «Истории Армении» католикоса Ованеса Драсханакертци	209
Нарине Нерсисян	
Семантико-стилистический анализ творческих обработок стихов Вагана Теряна из цикла «Грезы сумерек»	220

COTENTS

HISTORY

Lusine Sahakyan	
History and “Content” of the Armenian Question and Armenian Genocide Archive of the “Information Bureau”, Stored at the Armenian Patriarchate of Jerusalem	3
Artashes Shahnazaryan	
Tavush Fortress	33
Arman Yeghiazaryan	
Gagik I Bagratid and His Titles.....	43
Ashot Hayruni	
Establishment of the German Eastern Mission and Initiation of Armenian Relief Work (in German)	59
Ani Voskanyan	
The Return of Exiled Armenians to Post-War Adana Province: the Problem of Confiscated Property	82
Regina Galustyan	
Forced Transfer of Armenian Children during the Armenian Genocide: Selection, Destruction, Assimilation	95
Vazgen Hakhoyan	
Massacres of Armenians in Kars in 1920-1921	109
Hranush Sahakyan	
The Artsakh Problem, the Earthquake, Persecution of Armenians in Turkey and the German-Armenian Society (1988-1991).....	126
Ruben Melkonyan	
The Problems of Armenia and Azerbaijan in the Soviet Union (Based on the Memoirs of the Soviet Armenian Statesmen)	139

ARCHEOLOGY

Arman Nalbandyan	
Newly Discovered Epitaphs from Sanahin	161
Tigran Aleksanyan, Dianna Mirijanyan	
St. Vardan Monuments of Gegharkunik Province in the Context of Vardanants Sanctuaries	178

LINGUISTICS

Vardan Petrosyan	
The Theory of IE Laryngeal Sounds and Phonemic Characteristics of Old Armenian Voiceless Fricative (H) (Anachronistic and Diachronic Aspects).....	189
Narine Dilbaryan	
The Semantics of Old Armenian Phraseologisms in the “History of Armenia” by Hovhannes Catholicos Draskhanakertsy	209
Narine Nersisyan	
Linguistic-stylistic Study of the Creative Elaborations of Vahan Teryan’s “Twilight Dreams” Series	220

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՆԴԵՍ

1 (25)

Համ. ձևավորումը՝ Ա. Աղուզումցյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Ստեփանյանի

Չափսը՝ 70x100 1/16:
Տպագրությունը՝ օֆսեթ: Թուղթը՝ օֆսեթ:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային կրիչով (տեքստը՝ Word, նկարները՝ TIFF կամ բարձրորակ JPG): Հիմնական լեզուն հայերենն է, ընդունվում են նաև ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն հոդվածներ, որոնք պետք է ունենան ամփոփում (հայերեն տեքստի դեպքում՝ անգլերեն և ռուսերեն, այլ լեզուների դեպքում՝ հայերեն և ռուսերեն, շուրջ 300 բառ):

Չափանիշներն են՝

1. Տառատեսակը հայերեն՝ Sylfaen, այլ լեզուներինը՝ Times New Roman:

2. Տառաչափը՝ 12, միջտողային բացատը՝ 1.5:

3. Հոդվածի սկզբում դրվում է հեղինակի անուն, ազգանունը (զլխատառերով), վերնագիրը (զլխատառերով), հոդվածի վերջում նշվում է հեղինակի գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի անվանումը (հեռախոսահամարը և էլփոստի անվանումը տպագրվում են հեղինակի համաձայնությամբ):

4. Հղումները տրվում են տողատակում՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը, վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջը:

5. Տալ բանալի բառեր:

Հոդվածները ներկայացնել՝

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ 2-րդ մասնաշենք, 5-րդ հարկ, 511 սենյակ, «Հայագիտության հարցեր» հանդեսի խմբագրություն (handes@armin.am), հեռ. +374 60 710092

NOTICE FOR THE AUTHORS

The articles should be represented in USB flash drive (text should be in Microsoft Word Document, pictures – TIFF or JPG). The main language of the article is Armenian (with summary in English and in Russian, about 300 words), if the articles are in Russian, English, French, German there should be a summary in Armenian and in Russian (about 300 word).

The criteria are the following:

1. Theme font – Sylfaen (in Armenian), Times New Roman (in other languages)

2. Font Size – 12, Line Space – 1.5

3. At the beginning of the article there should be the name and surname of the author (uppercase), the title (uppercase), at the end of the article there should be the academic degree of the author, workplace, position, telephone number and E-mail (telephone number and e-mail are published according the author’s agreement)

4. The references should be footnoted; font size- 10, the author, the title, volume, place and date of publication (also the number, if the article was published in magazine) and the page should be mentioned.

5. To write key words.

The articles are accepted in the Institute for Armenian studies of YSU, Alex Manoogian 1, YSU 2nd annex, 5th floor, room N 511, the editorial office of the bulletin “Armenological Issues” (handes@armin.am), tel.: +374 60 710092

К СВЕДЕНИЮ АВТОРОВ

Статьи необходимо представлять на электронном **флеш-накопителе** (текст – Word, фотографии – TIFF или JPG в высоком качестве). Основной язык – армянский, принимаются также статьи на русском, английском, французском и немецком языках, которые должны иметь резюме (в случае армянского текста – на английском и русском языках, в случае других языков – на армянском и русском, около 300 слов).

Параметры

1. Шрифт армянского языка - Sylfaen, других языков - Times New Roman.

2. Размер шрифта – 12, межстрочный пробел - 1.5.

3. В начале статьи дается имя и фамилия автора (заглавными буквами), заголовок (заглавными буквами), в конце статьи отмечается ученая степень автора, место работы, должность, номер телефона и адрес электронной почты (номер телефона и адрес электронной почты печатается с согласия автора).

4. Ссылки даются под строкой в порядке возрастания, размер шрифта - 10, дается автор источника, заголовков, том, место и год издательства (в случае прессы также и номер) и страница.

5. Дать ключевые слова.

Статьи принимаются в

Институте арменоведческих исследований ЕГУ,

Алека Манукяна 1, 2 корпус ЕГУ, 5-й этаж, комната 511, редакция журнала «Вопросы арменоведения» (handes@armin.am), тел.: +374 60 710092

